

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Բ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ՎԵՊ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

ՄԱՆՈՒԿԱԲԵԳՅԱՆԻ

ԹԻ

1944

ՅԵՐԵՎԱՆ

19 NOV 2011





ԱՍՆԱ ԾՌԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԽՄԲԱԳՐԵՑ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՆՌԿԱԲԵՂՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՊՐՈՖԵՍՈՐ

ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՈՀԱՆՋԱՆՅԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Կազմը և տիտղոսաթերթերը
ժողովրդական նկարիչ՝ Հ. Կոջոյան
Գլխազարդեր և ծմուց-տիտուլներ
Նկարիչ Տարագրոսի

ՊԵՏ. ԼԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм ССР
Ա. Ա. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀՈՎԱՆ
821
46



ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ցերկրորդ հատորի բարբառների քերականական գիտելիքները կազմելիս կարևոր համարեցինք մեջ բերել «Սասնա ծռերի» Ա հատորի «Քերական. գիտելիքների» առաջին երկու պարագրաֆը։

1.

«Մեր նպատակը չե այս հրատարակության մեջ լրիվ և ամբողջությամբ ուսումնասիրել և բերել բարբառների քերականությունը, այլ միայն համառոտ լուսարանությամբ այդ բարբառները մատչելի դարձնել ընթերցողներին, վորպեսզի սրանք մեծ դժվարությունների չհանդիպեն հատորումս ամփոփված պատումները կարգալիս։ Բայց և այնպես, վորովհետև քերականական համառոտ վերլուծությունն ել հազիվ թե կարոգանա բացատրել քերականական բոլոր նրբությունները ու դժվարին բառաձևերը, ուստի անհրաժեշտ գտանք բացի դրանից՝ հատորների վերջում դնել նաև դժվար հասկանալի բարբառային բառաձևերի այբբենական ցուցակը, ինչպես նաև այնպիսի բառեր, վորոնք իրենց փոփոխության պատճառով դյուրությամբ չեն հասկացվում, որինակ՝ անվոր (անունավոր, անունով), ասպած (աստված), խաք (հավք), խե (հեռի), խենք (նայենք, հայենք), հըստան (այստեղ) և այլն»։

2.

«Ճիշտ քերականություն կազմելը դժվարանում և նրանով, վոր բանահավաքները առհասարակ գրի առնելու ժամանակ չեն հետևել գիտական ճշտությամբ արտահայտելու բարբառային հնչյուններն ու քերականական ձևերը։

Բացի այդ՝ նրանցից յուրաքանչյուրը հետևել և առանձին գրության յեղանակների, վոր ստիպված ենք յեղել հաճախ պահելու։

Ցառերի համապատասխան հնչյունների համար պահել ենք բնականաբար արեվելահայ գրական լեզվի սովորական արտասանությունը։ Գրական լեզվի մեջ չեղած կարեվոր բարբառային հնչյունների համար գործ ենք ածել հետևյալ պայմանական նշանները.

ա) «ա» բերանի առաջակողմյան «ա»-յի արտասանության համար, ինչպես, որինակ՝ ախպուր, ավալ, Տավիթ, ասից և այլն։

բ) «ո», ինչպես գերմաներեն «ō», ֆրանսերեն «eu», որինակ՝ լոս, յոդկնալ, պոլոր, Հովան և այլն։

գ) «ու», ինչպես գերմաներեն «ū», ֆրանսերեն «u», որինակ՝ երուն, տու, բալբալուսիկ, տուս, հուրիշ, գլխուն, լուսցավ և այլն։

դ) «Ժ» ձայնեղ «հ», այսինքն՝ «հ» հնչյունը հետը միացած ձայնը, ձայ-

նալաբերի հնչյունը, մինչդեռ գրական սովորական «հ»-ն անձայն է, լոկ շփական ազմուկ, որինակ՝ Յակոբ, Յարձակ և այլն։

Ֆմայնացած կամ փափուկ «գ», «կ», «ք» հնչյունների համար տպագրության տեխնիկական դժվարությունները նկատի ունենալով՝ առանձին նշան չենք ընդունել, սակայն նույնությամբ պահել ենք բանահավաքներից մի յերկուսի դրության մեջ այդ տառերի քմայնացման արտահայտությունը դրանց յետևից ավելացրած «յ» կամ «ի» տառով, որինակ՝ «գյընաց», «գինաց» և այլն։

Բացի այդ՝ մեր առաջաբանների և քերականական գիտելիքների մեջ ցույց ենք տվել, թե այդ հնչյունները վոր դեպքերում և վոր բառերի մեջ են փափուկ արտասանվում»։

3.

Այս յերկրորդ հատորի պատումներից ըստ լեզվի մի խումբ են կազմում Ա, Բ, Գ, Դ, Է, Ը, Թ, Ժ, ԺԲ, վորոնք պատկանում են մեր բարբառների արևմտյան խմբի, այսպես կոչված Մշու բարբառին։

Արևմտյան խմբի մեջ է մտնում և Սասունի բարբառը։ Այս բարբառով տպագրվում են յերկու պատում՝ Ե և Զ, վոր նոր են գրի առնված։ Դրանց լեզուն բառերի և բառաձևերի նկատմամբ հեշտ հասկանալի յե, բայց կարդալիս թվում է, թե դա մի խրթին բարբառ է։ Դժվարությունը նրանից և առաջանում, վոր ձայնեղ բ, գ, դ, ձ, ջ հնչյունները դարձել են անձայն պ, կ, ռ, ծ, ճ և ընդհակառակը՝ պ, կ, ռ, ծ, ճ հնչյունները՝ բ, գ, դ, ձ, ջ։ Ընթերցողներն այս հնչյունական փոփոխությունն անպայման պիտի նկատի ունենան այդ պատումների լեզուն հասկանալու համար։

Ըստ իր լեզվի մի առանձին տեղ է բռնում Նոր Բայազիդի Ղելազ գյուղում գրի առնված ԺԱ պատումը։ Այդ գյուղի տեղական բարբառը պատկանում է Հին Բայազիդի յենթարարբառին։ Դրա բնակիչները Նոր Բայազիդի և շրջակա ուրիշ գյուղերի բնակիչների հետ միասին գաղթած են Հին Բայազիդի կողմերից։ Այդ «շրջանը բոլորովին նույն բարբառը կը խոսի, ինչ վոր Պայազիտի մեջ»*)։ Սակայն այս, ինչպես և մյուս պատումների լեզուն միակերպ չե։ Նույնիսկ մի և նույն ասացողը հաճախ տարբեր բարբառային հնչյուններ ու ձևեր է գործածում։

«Արարատյան բարբառով» հիշվող ԺԳ և ԺԴ պատումներն իսկապես մաքուր Արարատյան բարբառով չեն։ Դրանց լեզուն խառնուրդ է արևմտյան (Մոկաց և Մշու) և արևելյան բարբառների, ավելի արևելյան գույնով։ Դրա պատճառն այն է, վոր ԺԳ պատումի ասացողի գյուղացիները շատ տարիներ առաջ գաղթած են արևմուտքից և յուրացրել են արևելյան բարբառը վոչ կատարելապես, իսկ ԺԴ պատումի ասացողը, Մուղանջուղցի Մուրադ Հովսեփյանը, յեղել է Մոկացի (տես այդ պատումների առաջաբանները)։

Բարբառի տեսակետից առանձին արժեք չունին ԺԵ և ԺԶ պատումները, վորոնք գրի յեն առնվել Պարսկաստանի Թագեոս առաքյալի վանքի գյուղում։ Դրանց լեզուն հեշտ հասկանալի մի խառնուրդ է մի քանի բարբառների։

---

*) Հր. Աճառյան, «Հայ բարբառագիտություն», Եմինյան Ազգագրական ժողովածու, հատոր Ը, 1911, յերես 37։

Այսպես կոչված «Պարսկահայ բարբառով» և մի պատում, վոր պիտի մտնի Ցերարդ հատորի մեջ։ Դրա ասացողը յեղել և Ուրմիա քաղաքի շրջանի Ռահվա գյուղի մի բնակիչ։ Նա յերեսուն տարեկան ժամանակից ի վեր մինչեվ յոթանասուն տարեկան հասակը բնակվել և Ղամարլու գյուղում, վորի բնակիչները, գաղթած լինելով Սալմաստի կողմերից՝ խոսում են Պարսկահայ բարբառով։

Վերոհիշյալ հինգ խմբի բարբառները, վորոնք, հինգն ել, կարելի յե տսել, անխառն ու մաքուր չեն, ընդհանրապես ավելի հեշտ հասկանալի յեն, բան Ա. հատորի բարբառները։ Ուստի դրանց յուրաքանչյուրի առանձին քերականական ուսումնասիրությունն այստեղ անելու կարիք չկա։ Ներքևում ուշադրության են առնվում միայն սակավաթիվ այնպիսի ձևերը, վորոնք չկան կամ սովորական չեն մեր արեվելյան կամ արեվմտյան գրական լեզուների և արեվելյան ծանոթ բարբառների մեջ և յերևան են գալիս այս և Գ. հատորի պատումների բարբառներից մեկի կամ մյուսի, կամ բոլորի մեջ ևս։ Այդ տարբեր ձևերը մեծ մասամբ կարելի յե գտնել նաև «Սասնա ծռերի» Ա. հատորի «Քերականական դիտելիքների» համապատասխան պարագրաֆների մեջ։

4.

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«Բոլոր հնչյունական փոփոխությունները բերում ենք այստեղ գրաբարի համեմատությամբ, ինչպես ընդունված և սովորաբար։

Անփոփոխ մնացած հնչյունները, ինչպես և բանահավաքների գրական ձևով գրածները, նկատի չենք առնում»։

Մշու բարբառին պատկանող պատումների (ավելի Ապարանի շրջանում գրի առնվածների) մեջ յերևվում են ձայնավորների հետևյալ փոփոխությունները, վորոնք գրեթե բոլորը կան նաև Ա. հատորի պատումների մեջ։

ա>ա̈

Սասունի բարբառի մեջ, որինակ՝ ա̈սից, գա̈րգից. Պարսկահայ բարբառի մեջ՝ թագա̈վեր, խա̈դա̈ր, ա̈նգա̈ճ, պա̈ն (բան), խա̈յիր (հարյուր), Տա̈վիթ.

ա>ե

Ենել (անել), կ'ենե, երեց, երե̈ (արա̈), երաց (արեց), եռաջ (առաջ), հեռեցուց (հեռացոյց), նե (=«նա» շաղկապը Խաստուրի յենթաբարբառի մեջ)։ Այսպես նաև Սասունի բարբառի մեջ, որինակ՝ ենեցիք (արեցիք), ենը՛ (արա)։

ա>ը

Կ'ընցնի, հիվընդցի (հիվանդացել), ըսել, հըմա (համա), հրրիսա, Բաղդըդու, ջանավրներ, խանջըլի, արտըսունք, Ժանըգան, Ժըմեն։ Նաև Սասունի բարբառի մեջ, որինակ՝ ա̈սը՛ (ասա̈), կընը՛ (գնա̈)։

ե>ը, է>ը

Մըր, ձըր, վըր (վեր), քրգի, մըգի, ձրգի, չընք կըռնա, չըմ եկեր ի, չըս ուգի, չըմ ա̈վդընա, թը (թե)։ Նաև Սասունի բարբառի մեջ, որինակ՝

մըր, մըք (մեք, մենք), չըս մո՛դանա, դանչիր ըմ, չըր (չեր<չէր), գ՚ուզը՚ (կ՚ուզե<կ՚ուզէ).

ե>ի, է>ե>ի

Բի (բեր), կի (կեր), տեսնիս, չուտիս, բերիս, փորձիս, գարկին, դա՛ր-գին, մինակ,—իմ, իս, ի, ինք, իք, ին (=եմ, ես, ե<է, ենք, եք<էք, են). «Յորի՞ իս հիվընդցի», «ենոնք մարդ ին, մենք կնիկ ինք». Նույնպես Սասունի բարբառի մեջ, որինակ՝ միք (մեք, մենք), միր (մեր,—կան նաև՝ մըք, մըր), հիդ (հետ), ախճըգնիր, կելիր (գայլեր), մարտիր, «պարով իք եդի», եգիր ինք, թալից, ժողվից, ուզիք (ուզեք<ուզէք), գը ճարդիք (կը ջարդեք <կը ջարդէք).

է>ա, է>ա՛, է>ը, ե>ա՛

Կ՚ըսա (կ՚ասէ), կը թալա, թը, թա՛ (թե>թէ), «եդ հայ ծուռ ա՛, Յընդ-նավոր ա՛» (ընկնավոր է), մը, մըջ (մէջ), բա՛ռին.

ի>ը

Սասունի բարբառի մեջ, որինակ՝ մը (մի), մը մո՛դըգնա (մի մոտիկնա).

ո>ը

Թը, թըդ, թըխ (թոդ), «թըդ գոմե», «թըխ Մ՚հեր... ճնա», «թըխ երթա», գըմեշ (գոմեշ).

ո>ու, ո՛ւ

Զուրու մեջ (ձորի մեջ), գո՛ւրդ. Նաև Սասունի բարբառի մեջ, որինակ՝ ծուր (ձոր), թակավուր, կուրծ (գործ), շուրիր, լուրիր (լորեր).

ու>ո

Գլոխ.

Սասունի բարբառով պատումների մեջ բառասկզբի «ե» և «ո» տառերի հնչյունները ճնում են անփոփոխ իբրև լատիներեն e և o (ոսուսերեն э, о), որինակ՝ ոսգի. Հարաբերական «որ» (վոր) դերանունն արտասանվում է իբրև որ, յերբեմն ըր, բայց հարցական «ո՞ր» (վո՞ր) բառն՝ իբրև ուոր (յերկ-բարբառով). «Մի» անորոշը դարձել է «մը» կամ «ըմ», որինակ՝ տխճիգ մը, կուրծ ըմ (մի գործ).

5.

ՅԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

այ>ա>ա՛

Այսպես Սասունում, որինակ՝ ա՛սդիին, ա՛սգիխ.

այ>է>ե, այ>է՚>ե՚>ի

Եդ, են, ես, եդիկ, ենիկ, եսիկ, հեր, խեր, մեր (մայր) հերական, մե-թական, ձեն, կը դառներ, կը գեր (=կը գայր), կը տեր, կը տեր, բոխչեն, ջառեն, խալիֆեն, «տգե մ՚իս», Զինով Հովան.

այ>ը

Այսպես Սասունում, որինակ՝ գ՛իլը՛ (կը լա), գ՛իկը (կը գա), չգերը (չկերա), ըսդիխ, ընդիխ։

աւ>ո>ը, եաւ>եօ>յո

Մրտ (մաւտ, մոտ), յոթ (եաւթն, եօթն)։

եա>ե, եւ>իւ>ե>ի, եւ>իւ>ու>ո

Թանկուտեն, կարոդուտեն, պատմութեն, նեղութեն, գավաղութեն,— մարտութին, թակավորութին,—առուծ (առեւծ>առիւծ), ախպուր (ագրեւր> ագրիւր), արուն (արեւն>արիւն), ուր (իւր), ուրան (իւրեան), տիրութոն։

ոյ>ու, ոյ>ու>ո

Լուս, հուս (յոյս), բոթ (բոյթ>բութ=բութ մատ)։

6.

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՅԵՐԿԲԱՐԲԱՌԱՑՈՒՄ

Ե և Ո ձայնավորները, շեշտված ժամանակ, բառամիջում դառնում են հաճախ յե (ie) և ուո (uo), ըո յերկբարբառներ։ Միավանկ բառերի սկզբում ո ձայնավորը դառնում և նաև վո։ Որինակ՝ մյեղ, մյեր, ձուոր, ձըոր, ուոր, նաև՝ վուոր, վըոր, վոր։

Այս յերկու նոր առաջացած յերկբարբառները պատումների բնագիրների մեջ ընդհանրապես չեն նշանակված, վորովհետև բանահավաքները, բացի Ը և Թ պատումից, չեն արձանագրել այդ։

7.

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բաղաձայնների համար պետք և նկատել, վոր այս հատորի բարբառների մեջ կան նաև հագագավոր ձայնեղ հընչյուններ՝ բհ, գհ, դհ, ձհ, ջհ։

Բնագիրների մեջ այդ հնչյունները նշանակված չկան, բացի Խաստուրի յենթաբարբառով նոր գրի առնված Ը և Թ պատումներից։ Այս վերջինների մեջ ել, սակայն, ընթերցանությունը չդժվարացնելու համար, չենք պահել բհ, գհ, դհ և այլն պայմանական գրությունները։ Փոփոխությունն ընդհանուր և հաստատուն ե. ուստի այդ պատումների հնչյուններով հետաքրքրվողները պետք է նկատի ունենան, վոր բառասկզբի բ, գ, դ, ձ, ջ հընչյունները դառնում են՝ բհ, գհ, դհ, ձհ, ջհ, որինակ՝ բհան (բան), բհերեց, դհութան, գհլոխ, գհնալ, գհեղացի, գհեղական, դհուռ (դուռ), գհուս, գհարցավ, դհու, ձհեռ (ձեռ), ձհեն (ձայն), ձհի, ձհոր, ջհուր (ջուր), ջհորի (ջորի), ջհան, ջհարդեց, ջհրբեց։

Բացառություն են կազմում նոր ընդունված ոտար բառերը, վորոնք պահում են բառասկզբի բ, գ, դ, ջ հնչյունները։

Մի քանի պատումների բանահավաքներ այս հագագավոր հնչյունները տառադարձել և տպագրել են վորպես պ, կ, տ, ծ, ճ և. ընդհակառակը, այս վերջին տառերի հնչյունները՝ վորպես բ, գ, դ, ձ, ջ։ Այսպիսի գրությունները մեր այս նոր տպագրության մեջ չեն փոխված։

Կան նաև հետևյալ փոփոխությունները.

հ>խ

Ձայնի պատուոմի յերբեմն և ուրիշների մէջ, որինակ՝ խաւսավ. խաբցըրնց. խան, խաց, խաես ի (հես ա, հրես ե).

հ>յ

Ձաստուրի պատուոմի մէջ, որինակ՝ պայել (պահել), սայմանե (սահմանե), այ (ահ), իսկ ահու (=ահից) արտասանվուոմ է՝ այ ու (հորանջով—հխատուսով).

յ>0 (գերո)

Ձաստունի բարբառուոմ այդ հնչյունը յերբեմն դուրս է բնկնուոմ. հայոց՝ արտասանվուոմ է հորանջով իբրև հաուց.

ւ>ը

Գացեր ինք ւգնացել ենք. ւմեցեր եր (խմացել եր). ւբու տղեն մեռոեր ա, ւշինեք ենք ու քամամե, քաղեր իմ. հորեր իմ. ասեր իմ. դարձեր իմ.

կ>գ. կ>խ. գ>խ

Ղանչել. խանչել (կանչել). մեխկ (մեղք). քրխ (քրգ, քոգ). ուեխ. (ուեղ), ետեխ (այգուեղ), դաղրդավ (կատաղեց).

գ. կ. ք>յ. հ

Գարսկահայ բարբառուոմ՝ խիյ (հինգ), ամալիյն (ամպիրն), օգնհնան. ասվածս (ինքն ու աստված), տուհ (դրանք), մհհ (մեք. մենք). ետուհ տեսիլ. եր... տու չհհ տսես (դուք տեսել եք... դուք չեք տեսել), ամհհ իմացանք՝ օգտագհն ելի, յերեկ (յերեկ), ադեյ չի (ադեկ չե), կողնիյ (կողնիկ—գագաթ), մեյմհկ, կհնիյ (կհնիկ).

«Արարատյան» բարբառով ԺԴ և ԺԴ պատուհաների մէջ նաև հետևյալները.

հ>ֆ

Ձորք (հորք), ֆորքարած. ֆոր. ֆորել (հոր. հորել).

ա>ո

Ձևոավ (տեսավ).

խ>հ

Հաղ (խաղ). հաղալ (խաղալ).

ու>ն

Այսպես միայն հաջորդ «ն» հնչյունից առաջ. որինակ՝ վոնձեր. ինձել (վոտներ. մտնել).

Բ, Գ, Դ, Զ դառնում են համապես պ, կ. տ, ձ: ԺԴ պատուհի բառապաշարը յերբեմն գրում է նաև այս վերջին տառատարբերությամբ. վոր և քոգել ենք այս հրատարակության մեջ, որինակ՝ ոչ. պեր (բեր), կա. կան (գա. գան). կհնաց. կեղ (գեղ. դյուղ). ձեր (ձեր); ձեո (ձեռ), աու (դու).

Դան նաև ուրիշ փոփոխություններ, ինչպես՝ պասավալ (բացվել). կորդ (գործ). ձղալ (=ձիձղալ>ձձղալ>ձղձալ>ձղալ). գարմանակը (գարմացքը). անեսկր (անեծքը). տասնել (ծամկել), էլա (էլի. գարձյալ) և այլն.

Այսպիսի փոփոխություններով սակավաթիվ բառերը բերված են բառարանի մեջ։

8.

ՔՄԱՅՆԱՑՈՒՄ

Խլաթի յենթաբարբառով գրված Է պատումի մեջ գ, կ, ք բաղաձայնները քմայնանում կամ փափկանում են։ Այդ փոփոխությունն արտահայտված է գ, կ, ք տառերից հետո յեկող ա, ո, ա, ի, ե տառերով։ Այս մասին մանրամասնությունները «Սասնա ծռեր» Ա. հատորի մեջ, եջ ԿԵ—65, § 8 «Քմայնացում»։

9.

ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Բառասկզբի ձայնավորների առաջ հաճախ ավելանում է ձայնեղ Յ հաղագը (=ձայնեղ հ)։ որինակ՝ Յառեջ, Յաշք, Յերես, Յելավ, Յըմեն, Յըսոր, Յիջավ, Յիրկուն, Յինք, Յիրար, «Յինք լե Յիջավ» (ինքն ել իջավ)։

Բանահավաքները, բացառությամբ նորերս գրի առնված Խաստուրի Ը և Թ պատումների, այդ հնչյունը նշանակել են ընդհանրապես յ տառով, կամ խառն և յ և հ տառերով։ Որինակ՝ Գ. Որվանձայանցը (Ա պատումի մեջ) թե յ և թե հ տառերով է գրում հետևյալ բառերը՝ Յանդ ե, Յորի, Յետև, Յար (հանդ ե, հորի, հետև, հար կամ յանդ ե, յորի, յետև, յար)։ Այդպես խառն թե յ և թե հ տառերով են արտահայտում նաև ուրիշ բանահավաքներ, ինչպես Յերվ. Լալայանը, որինակ, Նոր Բայագիզի Ղալաղ գյուղում գրի առած ԺԱ պատումի մեջ։ Այդ հնչյունի մասին հարցրել ենք Ղշլաղցիներից, բայց նրանցից մի քանիսը հայտնել են, թե այդ ավելացած հագագային հնչյունն արտասանում են իբրև ձայնեղ Յ, իսկ ուրիշները, թե անձայն հ են արտասանում։ Թողնելով, վոր մեր յերիտասարդ լեզվաբանները ճշտեն այդ յենթաբարբառի մեջ ավելացած հնչյունի ձայնեղ թե անձայն լինելը, մենք ներկա տպագրության մեջ պահում ենք հ տառով գրությունը, ինչպես մեծ մասամբ գրել և ազգագրագետ Յերվ. Լալայանը, վորի մայրենի բարբառի մեջ կա ձայնեղ Յ հաղագը, վոր և շատ լավ լսում և արտասանում եր այդ հնչյունը։

Այս մասին տես և «Սասնա ծռեր», Ա. հատոր, եջ ԿԵ—65, § 9 «Հնչյունների ավելացում»։

«Արարատյան» բարբառով ԺԳ պատումների մեջ վերջի «ս» հնչյունից հետո յերբեմն ավելանում է «տ», որինակ՝ եսպեստ, վերջապեստ և այլն։

10

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՀԱՊԱՎՈՒՄ

Կե, կի (կեր), բե, պե (բեր), «շիներ ենք ու թամամե», «շիներ են, կանգնցե», «անուն չենք դրե», ճնացե, գնացե, եկե (եկել), գացին, մացին, մանցին (գնացին, ճնացին), եդի, կ'եդի, կ'եդինք (եդնի, կ'եդնի, կ'եդնինք), խասեր (հասներ), փախիմ, փախիս (փախչիմ, փախչիս), «չըն թողի» (չեն նում), չըմ ավդընա, ավտալ, քե, մե, ձե (քեզ, մեզ, ձեզ)։

11.

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՂՈՒՄ

Այս հատորի պատուճների մեջ ևս կան ձայնավորների նույնպիսի պատճեներ, ինչ որ Ա. հատորի մեջ (յեր. ԿՉ—66), որինակ՝ ավտալ, չըմ ավգրնա (հավատալ, չեմ հավատալ. միչին հայերենի՝ չեմ ի հաւատանալ), իմցավ, անլի, երգի (երագի), քրնի մ՝, բանի մ՝ (բանի մի). Բազդրդու, աչխըջքի, գարմջցան, գարծըքիներ, հորքըրած, խըտրա (խարաբա), կենդրնուն, «կապ քալնց կարսին», չալկնց», տի (պիտի) պահե», տը տիրապատեմ. տ'ենեմ, տ'առեմ, «թ'որ ըգի Ջեաց» (քե որ դա Ջեաց), թ'իմ (քե իմ), թ'երքամ (քե երքամ). գ'առեք (դե առեք), ըն վ' արի (ըներ և արի), հեգ մ' լե (մի անգամ ել), քանե բմ ջորի. մ'ասի (մի ասիլ»

12.

ԲԱՂԱՋԱՒՆԵՐԻ ՑԵՏԵՎԱՌԱՋՈՒԹՅՈՒՆ

Ախչար, ոխչար (վոչխար), խչան (իշնան)։

13.

ՇԵՇՏ

Շեշտը պրվում է սովորաբար բառերի վերջին վանկերի վրա. Վորոչ բարբառների մեջ, բացառական խոնարհման ժամանակ ընդհանրապես շեշտվում են բացառական բառի կամ մասնիկից հետո յեկող առաջին վանկերը, որինակ՝ չըմ ասի, մ'ասի, չըմ գինա, չը հավատա, չըմ ավգրնա, մ'երքամ, մը գնրնի, չըս իտա, չըմ փախի, «բան մը չը քնդիցե, «յես չըմ Երքա պննե։

«Արարատյան» բարբառով ԺԴ և ԺԴ պատուճների մեջ ևս, վորովհետև դրանք շեշտի տեղափոխություն ունեցող բարբառներով չեն, շեշտվում են ընդհանրապես բառերի վերջին վանկերը, յերբեմն մեկայն վերջընքիր վանկերն քան բուն արևմելյան բարբառների (Ակրնանի, Լոռու, Ջանգիգուրի և այլն).

14.

ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Հոլովական ձևերը նման են ընդհանրապես արևմտյան, յերբեմն և արևմելյան գրական լեզուներին, այլ և գրաբարին. Ձևերը շեշտն անցնում և հաջորդ վանկին. Նախորդ վանկի ձայնավորը սովորաբար կամ դուրս և ընկնում, կամ պահպանում է ը, որինակ՝ կուշով (կոտոշով), հուպուց (հոտապից), գըմնչ, գրմշու (գոմեշի), Բազդրդու, տոխտրկի, մրչկրներ (մշակներ).

Ա. ՅԵԶԱԿԻ

Անոանիսեւ-տուկասեի համար Մշու բարբառի մեջ հանախված է ու վերջավորությունը, որինակ՝ գլխու, պապու, փորու, աստղու, երեկու (յերեկվա), բարու, հորու, տկու (տակի), կարապետու։

Դերձածական ձևերից են նաև՝ նեգուտենի, կատպաշտութենի, գավագութենի, կարդդուտենի և նմանները։

Քիչ պատահող ձևերից են՝ որմկա (ոսմկի). հորքկա. կոքան (կուռքի), վաչոյ—Մարջոյ (վաչոյի—Մարջոյի), ամիրի (ամիրայի), խըռըի (խարաբայի).

Ցեղակի նշանակությամբ գործածվում է նաև յերկակի ձևը. որինակ՝ ձեովի, վոտովի (ոտվի). «ուր ձեովս մեջն եր» (իր ձեռի մեջ եր). «վոտք դրեց վըր մեկ վոտովուն».

Բացառականը կազմվում է նաև «ից» վերջավորություններով, այլ և «մոտից», «մոտանն» բառով. որինակ՝ դինուց, յեգդինուց, քնուց, գըլխուց, կնգուց, պապս մոտեն (պապից. վոր ե՝ հորից), հորքկանից.

Վոռոշյալ հայցականի համար հաճախ գործածվում է «ը» նախդիրը. որինակ՝ «առեց դրնկեր ու գնացած հորքեր», «ուր տղեկներս երես պագեց», «կանչեց գլևդրլքերիմ».

Կոչականի հատուկ ձևեր կան մի քանի բառի համար՝ մարե. նանե. լաո.

Բ. ՀՈԳՆԱԿԻ

Հոգնակիի համար սովորական եր. ևեր վերջավորությունների հետ՝ պատահում են և հետևյալ ձևերը.

Առե.—քեռիստան, ջորեստան, դեվեստան, (բեռիներ. ջորիներ, գեվեր)։

Տան, տաներ, տոնք, վրտաներ.— գոմըշտան, գյխրտան, ախպըրտան (յեղբայրներ), ընգերտանք. գոմըշտանք, տերվըտանք. մրկրյաոնք (մեկալոնք—մեկներները)։

Տիր.— կնկրտիք, մանկրտիք, աղջրկտիք։

Վանք.—տեղվանք։

Բան.— գեղրան.

Եր. վեր. ք.— ջորնք (= ջորեայք), ջորիք. մեչնք (= մեչայք, մեչաներ), տիրացվնք։

Հոգն. սեռ.-տաց—տալկանի համար պատահում են նաև հետևյալ ձևերը՝ դեվեցներուն, քեռեցներուն. ջորեցներուն, մրկրյատանց. կնկրտոց, կնկրտոնց. կնկրտաց, մարդրկոց (մարդկանց) դուշմանքտեկաց. փաչեքտեկաց. խորանրտեկաց և այլն։ Գարսկահայ պատումների մեջ՝ քեռիքի. քեռիրու. քեռիքանց (քեռիների).

Հոգն. բացառական.—Գեղրանուց. ջանավրներուց. դուշմրներաց և այլն. «Հրաբատյանց» բարբառով հիշվող ԺԳ և ԺԴ պատումների մեջ նս. վերևում (§ 3) բերված պատճառով. յերևում են այսպիսի հոլովական ձևեր՝ անկրնջներ (արևելյան՝ անկաջներ) ձնկվեր. խորոխըրտանք (հորեղբայրներ). խորոխըրտանց. գոմըշտանք, կնատվուր (կնատրվա). խալիֆու. կոքերուն, տղերուն, տղերրու. Իրանքուն, ձիանքուց. այլ և՝ ձիանքի, ձիանքոց. Կան նաև արևելյան բարբառներին հատուկ հետևյալ ձևը. Ներգոյականի նշանակությամբ՝ Մովսասրին. բաղաքին, չաղրրներին (Մովսասրում, բաղաքում, չաղրրներում).

13

ՀՈԳԻ

Մ, Դ, Ն հոգերից հետո հաճախ ավելանում են «ի» կամ «ր» անլսելի հնչյունները, որինակ՝ «հետս ի տանիմ», «ետցնելս ի խըրսեր ա», «բերհես

դուցեր ա՝ «վորի՞ ի տգեն ես», «արձիւ հալի, լեր վրեղ իմ», «ամեկդ ի ձեր ձարոգաւանի գորա», «գլխուցդ ի վերևով կ՚ընցնի», «չիրիդ բի՝ հետդ իմ», «հրեն ի կենդանին», «ձաչրն ը պատարագին», «քուրն ը կենդակին», «գկոզդալն ի ճգից»։

Ղլյագ գյուղի ԺՁ պատումի մեջ հաճախված և վորոշոդ հոգի կրկնակի գործածություններ, որինակ՝ կաշինը, այլ և այդ հոգի կիրառություններ հատուկ անուններից հետո այնպիսի գեպքերում, յերբ գրական լեզվի մեջ քառն անհոդ է ձևում, որինակ՝ «եքձում եմ Սասունը»։ Այսպես և դերանուններների վրա՝ իրանը։

«Գարսկահայ» բարբառի մեջ վորոշոդ «ը» հոդը դործել է «ա» կամ «ո», որինակ՝ ձամե՛ր, աչկե՛ր (աչքերը), վի՛գ, Մևհրա՛ք, ձո՛ռա (ձառը)։ Այսպիսի փոփոխություն կրում և «ու» շաղկապը՝ գառնալով նաև «ը», որինակ՝ «ժուկ ա ժամանակ» (ժուկ ու ժամանակ), «ձին գանգուլից ը խոռվ», «բինգա՛վ սար ա ձոր» (սար ու ձոր), «քեսգար մե նար ա նամաքի», «սև՛ վ ովսակ» (սև ու սպիտակ)։ Այս բարբառի մեջ վորոշ. հոդը գրվում և նաև դերանուններների վրա, որինակ վի՛րը, վի՛րա (ում)։

Տե՛ս «Սասնա ձռներ», Ա. հատոր, եջ ԿԲ—69, § 15 «Վորոշյալ հոդ»։

16

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄ

Դերանուններն հոլովման մեջ նկատելի են հետևյալ ձևերը։

Ցես

Ցեզական.—քնձի, քնձիկ, գիս, գընձի, ընձնից, ընձնե, իսնը՛ (=ինձնից,—Սասունում),—իմիկ գլուխ։

Հոգնական.— մընը, մըք, միք, մըր, մե, մըգի, գմըգի, մըգնե, միևս (=մեզնից,—Սասունում)։

Դու

Ցեզական.— քե, քըգի, քեգի, քեգիկ, գըըգի, քեգանե, քինա (=քեզնից,—Սասունում)։

Հոգնական.— Դու (=դուք), ձե, ձըր, ձրգի, ըգձրգի, գձրգի, ձեգնե, ձեգանե։

Ինքը

Ցեզական.— ինը, յինը, գինը, ուր, ուրան, ուրին, ուրնե, իրնե, իր, ուրուն, ուրնը (իր, իրան, իրենից,—Սասունում)։

Հոգնական.— ուրանը, ուրանց, ուրիոց, գուրանը։

Այս

«Աբրահամյան» բարբառով պատումների մեջ՝ ըտրա, ըտուն, ըտրանց, ըտանը, ըտրանց և այլն։ Ուրիշների մեջ՝ նսա, նսիկ։

Այդ

Ցեզական.— իդ, նդա, նատ, իդա, իդի, նատիկ, ըտոր, ըդուր, իդուրա, իդրա, իդրան, գնրա (դրան), գիդ, գիդա, գնդա, իդուրա մոտեն, իդուրա մոտից (դրանից), գնրամե, դարևն։

Հոգնակի.— ըդոնք. ըդուն, տա՛ն (դրանք), խդուն, ըդուն, ջդոնք, ըդուն ցնեն, ըդոնց մոտեն։

«Ձրարաբայան» բարբառով պատուհաններ մեջ՝ ըտու, ըտուր, քաան, ըտուն, ըտրանք։

Այն

Ցեղական՝— նա, ըն, ընի, ննիկ, ննոր, ընուր, ընդուր, ընդրա, ընդրնին, ննով, իննդուրից, ընդուրինն, ընդրա մոտեն։

Հոգնական.— ննոնք, ընոնք, ննդոնք, ընդոնք, գանք (նրանք), ծնոնք, անդոնք, գննոնք, ննոնց մոտեն, ընդոնցեն, ընդուք (նրանք.—Սասունցի)։

Հոլովական ձևերի համար տե՛ս նաև «Սասնա ծռեր» Ա. հատոր, եջ ՆԲ—67, ՀԱ—71, §§ 14, 16։

17

ԵՌՆԱՐՀՈՒՄ

Առնաբնման ձևերն ընդհանրապես աբևմտյան կամ արևելյան գրական լեզուներինն են։ Մի առանձին տեղ են բռնում այդ ձևերը ջղարսկահայ բարբառի մեջ։ Այստեղ ուշադրության ենք առնում մի քանի տարբերություններ միայն։

Մշու բարբառի մեջ պատճառական բայերը, բուն այնմ և սահմանական ներկայի ձևերը կազմվում են նաև ուղ յոթրդ ձայնավորով, որինակ՝ կը դարձնում, կը հասում, հասում (կը հացնեմ հասցնեմ), կպում (կպցնեմ), կը վերջացում (կը վերջացնեմ), կը հագուս, կը խարուս, կերցուս, (կերցնես), կը նվաղցու, կը վերցու, կը վերու (կը վերցնի), կը վերցուն, կը հերքվցու (կ՚երցվեցնի), կը ցածցու, ընցու (անցկացնի)։

Նույն բարբառի մեջ ես, էի՝ յոթրդները, առանձնապես ներկա ժամանակի 3-րդ դեմքի համար, հաճախ փոխվում են ես՝ յոթրդի, որինակ՝ ընցնա (անցնի), տանա, ավիրա. այլ և՝ տանե. ավիրի,—յա. կ՚ելնա, կը տեսնա, ննա (անի)։—Այսպես նաև Ղշլաղ գյուղի պատումի մեջ. որինակ՝ կը ջարդա, կը բրդա. կը կտրա, կ՚ասա, անա (անի). հաղթա, քցա (քցի). կը քելա, քելա։

Պատահում են՝ նաև գրաբարի ձևով սահմանական ներկաներ, կամ իրար հաջորդող բայերից մեկի վրա չի դրվում երբ ժամանիկը որինակ՝ չհանկընան (չեն հասկանում), երբ բռնե տանեն, երբ ժողվե բերեն։

Ղշլաղի պատումի մեջ սահմ. ներկան կազմվում և սովորաբար արևելյան գրական լեզվի ձևով, միայն ոժանդակ բայերի սկզբից ավելանում է էյ հնչյունը, վոր քանահավաքը չի նշանակել որինակ՝ գնում (յ) եմ. գնում (յ) ես։ Նկատելի են հետևյալ կազմություններըն՝ տալում ա, տալը՚մ ա, տալում ենք, տալը՚մ են, անում ա. անը՚մ ա. գալում ա։ գալը՚մ ա։— Ոժանդակ բայը կարող է նաև կրկնվել, որինակ՝ երբնչի խամար եմ տալը՚մ եմ։, երբնչ եր անում եր։, երկուզ են անում են։, երկուվ ա անըմ ա։, չեմ կանում եմ (չեմ կարողանում), չի կանում ա։, չեմ գնում եմ։, ամպրուստը չըլնում ա (չի ըլնում ա)։ Այսպես նաև անցյալ անկատարի մեջ՝ չէին գինում ինք (չեմ իմանում), չէին տալըմ ինք (չեմ տալիս)։

Մշու բարբառի պատումների մեջ անցյալ անկատար ժամանակի ձևերն

«ի» վերջավորությունները սղումով դառնում են՝ «ե», «ի»։ Այդպիսով յեզակի 2-րդ և 3-րդ դեմքերը հաճախ նույնանում են վերջավորությամբ. բացի այդ՝ յեզակի 1-ին դեմքի համար գործածվում և հոգնակի 1-ին դեմքի վերջավորությունը. որինակ՝ յես կ՚ուզենք (յես կ՚ուզեյի), յես չավդընենք (յես չեյի հավատում), ունենք (ունեյինք), գենք (գայինք), չընք գինե (չգիտեյինք), դու վախեննը (վախենայիր), դու քանդեր (քանդեյիր), են դիներ, ըսեր, կըսեր, կասեր, այլև դու դիներ, ըսեր, կ՚ըսեր, դառնիք, կը դարկիք, սպաննիք (դառնայիք, կը զարկեյիք, սպանեյիք), խառնին, ջարդին (խառնեյին, ջարդեյին), կը սպաննին, կը ջարդին (կը սպանեյին, կը ջարդեյին), կը տանեն (կը տանեյին, տանում եյին), կը քնեն (քնում եյին), կը խաղեն, կ՚ասեն, կը դարկեն (կը խաղային, կասեյին, կը դարկեյին), չի գեն (չգային, չեյին գալիս)։

Նման սղումներ կան նաև մյուս բարբառներով պատումներում։ Ղշլաղի պատումի մեջ՝ կը գի (կը գայի)՝ կը գին (կը գային) տի, տին (տայի, տային), սպանի (սպանեյի), կ՚անին (կ՚անեյին), կը վերցնի (կը վերցնեյի), խարցնիր (հարցնեյիր), տեսիր (տեսնեյիր)։ Սասունի պատումների մեջ՝ տու գը զարգեր (դու կը զարկեյիր), տու գը զգրեր, տու գը քաշեր, գիդեք (կը տայիք)։

«Արարատյան» կոչված բարբառով պատումների մեջ սովորական «գալիս եմ», «գալիս եր» ձևերի հետ կան նաև՝ գալըմ ա, գալում եր, տալում եր։ Անցյալ անկատարը սղումով՝ իմանի (իմանայի), ունիր (ունեյիր), տին (տային), եթին (երթային), չինք գա (չեյինք գալ)։ Յեզակի 1-ին դեմքի վերջից ավելանում և «մ», որինակ՝ եթիմ (երթայի), յես ի կամ յես իմ (յես եյի)։ Այսպես և կատարյալի 1-ին դեմքի վերջից, որինակ՝ արիմ, մնացիմ, կորցրիմ։ Բարբառային խառնուրդով պատահում են և ուրիշ ձևեր սղումով, որինակ՝ իմանենք (իմանայինք) «յես ել սաղբանջ կը խաղանք» (կը խաղամ)։

Պարսկահայ բարբառի մեջ սահմ. ներկա և անկատար անցյալ ժամանակները ունին ուրույն կազմություն։

Ներկա.— յես եմ, դու յես, են ի, մենք ենք, դուք եք, դանք են։ Նստես եմ, նստես ես, նստելի՛, նստես ենք, նստես եք, նստես են։ Տաս եմ, տաս ես, տալի՛, տաս ենք, տաս եք, տաս են։ Բացասականը՝ չեմ խավնելի՛ (չեմ հավանում), չես խավնելի, չի խավնելի, չենք խավնելի, չեք խավնելի, չեն խավնելի։ Որինակ՝ գինաս եք (գիտեք), ասես եմ, «հենց գինաս են՝ ծղգալի՛» (հենց են իմանում, թե ծիծաղում ե), հնձես ես մեզի պես խասկնալի՛ (հասկանում ե), չի խավնելի՛, խելքը չի կռելի՛ (չի կտրում), ձեռ չեն քաշելի՛, չի երևալի՛, չի կալի, չես նա (չես իմանալ, չես կարող), չեհ նալի՛ (չեք իմանում)։ Ոժանդակ բայը շեշտված բառից հետո հախադաս՝ բեզ ի ուզելի, ի՛նչ եմ ուտելի, ի՛նչ ես ուտելի, ի՛նչ անելի (ի՛նչ և անում), «խարջ ա խարաջն են ժողվելի», «ոսկին են չափելի», «լոր ես թռցուցելի», «լոր ա դազալ ի թռցուցելի», «տունն են քանդելի», «վա՛վ ի տանելի (ո՛վ և տանում), «զահլա՛ յ տանելի» (=զահլա ի տանելի), «թոփ ի խաղալի», «ջիգարն ի փրթվելի», «հակառ ի ենելի»։

Անցյալ անկատար՝— յես եմ եր, դու յես եր, են եր, մենք ենք եր, դուք եք եր, դանք են եր։ Ասես եմ եր, ասես ես եր, ասես եր, ասես ենք եր, ասես եք եր, ասես են եր։

Բացասականը՝ չեմ եր խավնելի՛, չես եր խավնելի՛, չեր խավնելի՛, չենք եր խավնելի, չեք եր խավնելի, չեն եր խավնելի։

Որինակ՝ խոդ եմ եր, խոդ ես եր, «վերցես եր չփրտես եր» (վերցնում շպրտում եր), նստես եր, բոռաս եր, խասնես եր, «պռնես քամես եր», երթաս եր, կռես են եր (կարում ելին), գինաս եր (գիտեր), «ծիծ եր ծծելի», «թոփ են եր խաղալի», «դիմանց են եր եթալի» (դիմացն ելին գնում), չեր ըշկալի (չեր նայում), չեմ վտխենալի, «ինչքան տղեներ կան եր» (տղաներ կային)։

Ազձական և յենթադրական.— յես ինեմ եր (յես լինելի), գու ինես եր, են իներ, մենք ինենք եր, գուք ինեք եր, գանք ինեն եր, կ՛ասեմ եր, կ՛ասես եր, (կասելի, կ՛ասելիր), կ՛ասեր, կ՛ասենք եր, կ՛ասեք եր, կ՛ասեն եր. որինակ՝ «յես ինեմ եր, ի՛նչ կ՛ասեք եր», կը բաշլայեն ե՛ր (կը սկսելին), կ՛առնեն եր, զա՛րկեր եր, կը զա՛րկվեն եր (զարկելին, կը զարկվելին)։

Որինակներն առնված են Ուրմիա—Ղամարլուի պատումից, վոր տպագրվելու յե Գ. հատորի մեջ։

ԺԵ պատումի մեջ կան այսպիսի ձևեր՝ չեր գիտելին (չգիտելին), յես չեմ ի գիտեր (չգիտեմ), չեմ ի տա, չես ի երթա։

18
ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

Անցյալ կատարյալի ձևերից ուշադրություն պիտի դարձնել հետևյալների վրա՝ հալի (հալեցի), խմի (խմեցի), ուղի (ուղեցի), ավիրիր (ավերեցիր), շինիր, հոդիր (հոդեցիր), փաթթին (փաթաթեցին), կապին, պահին (կապեցին, պահեցին), հեծրցըցուց, պրծուց, վերուց (վերցրեց),—երիր, եդիր, ետուր, եհարց, առ (առավ), առեց, լաց (լաց յեղավ)։ «Արարատյան» բարբառի մեջ նաև՝ կռվա (կռվեցի), շրջան (շրջվեցին), եկամ, տեսամ (եկա, տեսա)։

Տե՛ս նաև «Սասնա ծռեր», Ա. հատոր, եջ ՀԴ—74, § 18.

19
ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Հրամայականի ձևերից նկատելի յեն հետևյալները՝ կե՛, բե՛, երե՛ (արա՛), իշե՛, վերու (վերցրու), ընցու (անցրու), զա՛ր, պա՛ռ։ Ղշլաղի պատումից՝ մա՛ց, մացա՛, մացի՛ (մնա), մացեք (մնացե՛ք), լվա՛ց (լվա), քելա՛։ «Արարատյան» պատումների մեջ՝ կանչա՛, վերցրա՛ կամ վե՛րց, թա՛լ (ձգիր), լուսավորա՛, լսա՛, զարկա՛, խա՛ն (հանի՛ր)։

20
«ԵՄ» ԲԱՅԸ

Այս ոժանդակ բայը նույնպես բազմազան ձևերով և յերեվան գալիս, ինչպես Ա. հատորում տպված պատումների մեջ (տե՛ս եջ ՀԵ—75)։ Սասունի պատումների մեջ՝ րմ, իս, ը, ինք, իք, ին (յես, ըս կամ իս, րմ, տու, իս, նա կամ ենի ը, միք կամ մրք ինք, առ, իք)։

21
ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅ

Գործածվում և ոժանդակ բայի հետ՝ կազմելով բազադրյալ ժամանակներ։

Վաղահաստ ժամանակի ձևեր՝ առևեր իմ. պարմացեր իմ. «մորն և սպաձեր», «աղջիկն և ապառն». գացեր ա. «իմ տավրից ա մանցին», «մորի իք ակի».—շեմ բերերի. չես առևեր ես, չերը մոռցի, չերը նատի (չեր մոռարել. չեր նատել), չերը գրներ ի, չերը մոռցեր ի (չեր գրել. չեր մոռացել).

Ղշլաղի պատուհից՝ հելեր եմ. գարեր եմ. չեմ գացեր եմ. չեկեր ա. չեմ հկե, չեմ եկեր եմ. են ա տաե.

«Արարատյան» պատուհներից՝ «զարկեր. քոդեր. սպաներ. հկեր ենք. չեր ելե. առեր ա. առեր ի (առել եյի կամ առնելի), փորձվեր ի (փորձվել եյի. փորձվելի), ախտեր ին. «ողու չագն ա քաղա ազատվե. երեխա պերե». «չես ուզի տաներ ի, վոր խորի խոդի մրչի» (չես ուզում եյի տանելի. վոր հորեքի հոդի մեջ).

Անցյալ դերբայը կազմվում է նաև «ուկ» մասնիկով. որինակ՝ մեռուկ. լքցուկ. նատուկ. դրուկ. փաքուկ. խփուկ. կապուկ. գարկուկ. հալուկ. պատկուկ. կաշուկ. հախուկ. տնկուկ. շինուկ.

22
ՆԱԽԴԻՐՆԵՐ

Մշու բարբառի մեջ հին նախդիրներից ծնում են «ը» և «ի» նախդիրները. վորոնք, սակայն, գործածվում են վոչ միշտ.

«Ը» նախդիրը գործ և ածվում վորոշյալ հարցականի համար (տե՛ս § 14), յերբեմն նաև տարրեր կիրառություն ունի. որինակ՝ «հորի քանդեցիր գնովատար», «կը դարձում գմբկըլտոնք», «զրդ աղջիկ կառնե», «գմբրը ազգ կը նվագցու», «գմամ մըր ազգին տարավ», «բարկոծինք գնենի», «բոնին գմհեր տարան», «հեծուկ գքուսակ». «զրն ցասման հաչից գդալ ըմ լե չկնբա».

«Ի» նախդիր.— «Ծոռն ի Բաղդադ հանեց», «հանած են. դրած ի կայ», «եկավ ի Մասուն», «դնաց ի Մարը», «Բագեն ի Ձեռք», «զարկից. ընկավ ի որմիկ», «առեց գկքխնեն ի ձեռ». ի փողանեն. ի բազրեն.

23
ՆԱԽԱԴՐԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Մշու բարբառի մեջ նախադրական բառերը դրվում են սովորաբար իրենց խնդրից առաջ, որինակ՝ «վրը ուրան». «վրը իդա ջրին բերդ ըմ շինեցին», «վրը ըդ ական». «վրը Մասունա բազրին», «վրը իդա խոսքին». «վրը մըր գլխուն», «ետեվ անցմանը» (մեռնելուց հետո), «մեջ կոքներուն», «մեջ կովու դաշտին». «մըջ մըր տան», «մըջ մեր քազրին». «մըջ երկինք, մըջ դետինք». «նկավ մոտ Դավիթ». «մրտ ձեր բեռիք». «գետին վե ինջուց». «մերքան ու վե». «գլուխն ը վե».

Տե՛ս նաև «Մասնա ծռեր». Ա. հատոր, էջ 77, §§ 24 և 25.

24
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

«Կալենալ» և «սկսել» բայերի խնդիրն անորոշ դերբայի փոխանակ՝ դրվում է «կալենալ», «սկսել» բայերի դեմքով և ժամանակով. որինակ՝ «չկոցան շիդկեցին» (չկարողացան շտկել), «չկոցավ վերուց», «սա անիծեց» (սկսեց անիծել), «բաշչան գրերդ շինեցին» (սկսեցին բերդը շինել). «կաոնա պահե» (կարող է պահել).

Նկատելի յեն նաև հետևյալները՝ «ձեն գնաց, խասավ թագավոր» (փոխանակ՝ ի թագավոր, թագավորին), «փոր ժրմենուն», «աչքով քո տեսնիս, բերանով քո չուտիս», «եգ զորք մտավ եդոր մեչն ու Գուոկու Ջալլադին», «եդոնք ձիու մեչն ու Մհերին կտրեցին»։

Ղշլաղի պատումի մեջ կա հետևյալ ոտարարանությունը՝ «գնաց Կաղզվանա դուս եկավ», «գնաց Ղլաթա դուրս եկավ», «գնացին Բաղդըգու դուս հելան», փոխանակ ասելու՝ գնաց դուրս եկավ Կաղզվան, Խլաթ, Բաղդադ, կամ՝ գնաց ի Կաղզվան դուրս եկավ, գնացին ի Բաղդադ դուրս եկան, գնաց ի Խլաթ դուրս եկավ։

Խմբագրություն



ԳԱՐԵԳԻՆ_ՍԱՐՎԱՆԶՏՅԱՆՑ





Սասունցի Դավիթ
կամ
Մհերի դուռը

պատմեց
Տարոնցի Կրպոն

գրի առավ 1873թ.
Գաբրիէլ Սրվանձտյանց



ԱՌԱՋԱԲԱՆ

Այս պատումը տպված է 1874 թ. Կ.–Պոլսում Գ. Սրվանձտյանցի «Դրոց ու Բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքի յերկրորդ մասում։ Առաջին մասի վերջում տրված է հետեվյալը.

«Այժմ իբրեվ բուն նյութ այս գրքույկիս պիտի կցորդեմ «Դավիթ Սասունցի կամ Մհերի դուռ» վեպը, զոր յերեք տարի հետամուտ յեղա ձեռք բերելու, և վոչոք գտա վոր ամբողջապես գիտենար. մինչեվ 1873 թ. հունիս ամսույն՝ Մշո գաշտի Առնիստ գեղի յերեսփոխան պ. Կրպոն ներկայացավ ինձ արժ. Ոհան վարդապետի մինջոցավ։ Սա կը պատմեր քե՝ յուր վարպետը շատ ընդարձակն դիտեր այս պատմութեյան, և քե մեջ ընդ մեջ շատ տեղեր վոտանավոր խազեր կային, վոր ձայնով կ'երգեր։ Քե՝ այդ վարպետն յերկու վոըշիկ աշակերտ ուներ, վորոնք շատ կատարյալ սորված եյին, և քե ինքն՝ բավական ժամանակ պատմած չլինելով, շատ կտորները մոռացած եր։ Այսու ամենայնիվ յերեք որ գինքը պահեցի, խնդրեցի, պատվեցի, պարգեվատրեցի, և նա ինքը գինքը կազդուրելով, պատրաստելով, պատմեց բերանացի, զոր իբեն բարբառով ի գիր անցուցի։ պատմիչի լեզվին մեջ Բաղիշեցոց բառեր կան գործածված. պատճառն այն է, վոր պատմիչի գեղը Թեպետ Մշո կը պատկանի, բայց Բաղիշո մոտակա յե. ընդհանրապես Խոյթա և Զուխուրա գեղերու հայոց լեզուն այս տիպն ունի։*

Գատմածին Նյութը Արծրունյաց Նախարարություն և Սասնո գավառի շինություն ու սկզբնավորությունն եւ Աստվածաշունչն և մեր ազգի պատմությունն հայտնի յե, վոր Ասորոց Սենեքերիմ արքայն յուր Աղրամելեք և Սանասար վորդիքը կուռքին զոհ պիտի մատուցաներ, ասոնք ալ իրենց հայրը զոհեցին, և փախստյա յեկան ի Հայս՝ մեր Սկայորդույ ժամանակը։ Սանասարը բնակեցավ ի Սասուն, և Ադրամելեք՝ վանա ծովու կողմերը, կապուտկոդա մոտերը։ Ասոնց պատմությունը քե Խորենացին, քե Թովմա Արծրունին և քե այլ պատմիչներ բնդարձակ կը գրեն։

---

* Ըստ Գ. Սրվանձտյանցի «վոըշիկ» կոչվում են ոչտունցիները, տես «Մանանա», Կ.–Պոլիս 1876, եջ 287, «Ծերգ վրոըշիկներու, այսինքն՝ Ոչտունցուց»։

Ներմիածնում առաջ վոըշիկ կոչում եյին Գավաշի, այսինքն՝ Ոչտունիքի պանդուխտներին, բայց այժմ Մոկացիներն ու Շատախցիները հայտնում են, վոր իրենց եվ վոըշիկ են անվանում։ —«Վոըշիկ» անունն, ամենայն հավանականությամբ, Ոչտունի բառի առաջին վանկն և ազգի անուն ցույց տվող «իկ» մասնիկով, սկզբից «ո» ավելացած, «ոըշիկ»—«վոըշիկ»։ Խ մ բ.

Կը տեսնվին այս ասացվածքին մեջ այնպիսի կտորներ, վոր պատմագրությանց կը համաձայնի. բայց և կտորներ ալ կան, վոր բոլորովին ժամանակագրության, տեղագրության և ամեն հանգամանաց հակառակ են։ Դեպքեր՝ վոր առաջ քան զՔրիստոսն եր, քրիստոնեյաբար կը զրուցվին, և Սանասարի ու Ադրամելեքի ժամանակը Մշո ս. Կարապետի վանքն ու Հայերը խաչապաշտ կը ներկայացվին։ Ասոր մեջ հիշած Մրսըր՝ գուցե Մուսլ կամ Մուսուլ լինի, վոր հավանականություն կը վերցնե, և Սասնո տիրապետության ստհմանեն շատ հեռու չե։ Բաղդագն Բաղդադ ե, Խլաթն՝ Խլաթ, Կապուտկողն՝ Կապուտկող. նույնպես և մյուս ամբողջ հատուկ անունով տեղերը ուղիղ են։ Իսկ Կաղզվանը Կարսա մերձ ե, և հայտնի յե, վոր Վրաց իշխանության տակ գտնվեր ե այն գավառը։ Խանդուդ խանում և Շըբըգան Խոռասական, Հրմգա Լոռա փեհլիվանները—ըմբշամարտները—վոր այս խոսքերուն մեջ կ'երեվնան, գուցե վիպասանից ծանոթ լինեն և ավելի Վրաստանի բնակչաց, Ադրամելեքի, կամ,—պատմողի բառովն ըսենք,—Աբամելեքի վորդոց անուններեն յերեքը բոլորովին բանաստեղծական անուն կը թվին. Ճնճղափոքրիկ, Ցռանվեգին և Խորգուսանն։ Գուսանը յերգիչ կը նշանակե. իսկ առաջին յերկու անունները չեն բացատրվիր։ Ջենով Ոհան և Դավիթ Հայոցս ծանուցյալ և հաստրակացյալ անուններ են, բայց քրիստոնեյության դարուն մեջ։ Արդեն Դավիթի կյանքը և գործերը միջին դարուն կը վերաբերին, բայց անմիջական գավակ լինել Ադրամելեքին, այդ հավիտենական առասպել ե։

Ամբողջ այս զրույցքը նկարագիր ե քաջության, ընտանության, բարեպաշտության և պարզ ու անխորամանկ հարաբերության Դավիթին՝ յուր սիրուհվույն հետ, յուր ախոյանին հետ։ Այս գրվածքը յուր բոլոր անկանոնությամբ հանդերձ՝ հիանալի վոճեր ունի ասացվածքի։ Դյուցազնի բազկի ուժը անհամեմատ ցույց տալու համար՝ յերբ Դավիթին խլել կու տա Ջորջիզի ձեռքեն գուրզը, նետել կու տա այնպես ուժգին, վոր տակավին մինչեվ ցայսոր կ'երթա նետելու թափեն, Դավթի ուժո անսահմանությունը և տիեզերաց անհունությունը ցուցընելով։ Այս գրվածքի մեջ կը տեսնե հետաքրքիրն՝ գեղջկական կյանքի հանգամանքները. Աբամելեքի մահվան համար Սասունցոց սուգը. Քեռի Թորոսի ուխտը. «Հացն ու գինի, տերն կենդանի» յերդումն. հպատակեցընելու համար թուրի տակեն անցընելու սովորությունը, Դավթի և յուր հորթարած ընկերին մտերմությունը։ Խանդուդ խանըմին աշուղ դրկելը՝ Դավիթը իրեն վրա սիրեցընելու։ Դավիթի անվեհերություն և վեհանձնությունը, յերբ Մորամելեքի հետ կը զարնվին։ Խանդուդի քաջությունը և փեհլիվաններուն ճիվաղական նկարագրի ահագնությունը։ Ջենով Ոհանի ձայնի ույժն և ահավորությունը. և Մհերի զորությունը, վոր իսպառ անհամեմատ մարդկանց կը կացուցանե, և յերկրագունդն ալ զայն կրելու անբավական։

Այս գործիս հրատարակությունը հասկացողին համար արժեք կ'ունենա. բայց կարծեմ արհամարհողներ ավելի պիտի լինին և այպանողներ, վոչ միայն այս գրվածին կտորը, այլ ամբողջ սույն գրքույկը, ընգոր և իմ անձը։ Ասոնք չհասկացողներն են։ Բայց մեր փույթը չե։ Քաջալերված կը համարիմ զիս, յեթե համրանքով քսան հոգի յեվեթ լինին հավանող այս գործույն, և կը շարունակեմ, խրախույս տալով այլոց, վոր հետեվին, աշխատասիրեն ձեռք բերել, ի լույս ածել այսպիսի գրվածքները։

Մի քանի խոսք ալ Մհերի դռան վրա։

Վանա բերդեն դեպ յարեվելս նայելով Այգեստաննեայց Հյուսիսակողմը փորրիկ լեռնագոտի մը կա, վոր արեվելյան գլուխը կ'ըսվի Զրմփզրմփ մաղարա. արեվմտյան ծայրը՝ Ագրփի. և մեջտեղը Մհերի դուռը։ Լեռան այս յերեսն են անվանածներս, վոր կը նային Այգեստաննեայց վրա։ Զրմփզրմփ մաղարան քարայր մի յե բնգարձակ. վորուն մեջ կ'երթան մարդիկ շրջելու. ուր ձայն արձակած ժամանակ զրմփ-զրմփ արձագանք կու տա։ Այն քարայրին դեպի արեվմուտքը, ամենամուտ անկյունը, քարե փորված բաց դուռ մը և անկից ներս ճանապարհ մը կը ցուցընեն, յորմէ սաստիկ քամի կը փչե։ կը պատմեն, թե այդ լեռնափոր ուղին կը տանի մինչեվ Վանայ-քերդի մեջ. դուռն հավանական կամ ստույգ լինի։ Արդեն Զրմփզրմփ մաղարայի լեռնագագաթը բերդաձեվ է, և այս քանի տարիե հետե այն տեղերեն փորելով շենքի համար քար կը հանեն. հողակույտներու տակ յերեվցան կոփածո քարերով շենքեր, հողե կարասներ և կուժեր, վորոց մեկ քանիին մեջ ցորենի չոր հատիկներ լցված եյին. վոսկեզոծ պղնձե շինված արհեստական աքիոռի կտորներ և մեկ խոյ, ու խոյի վրա հեծած մարդ՝ նույն պղնձեն թափծուն՝ արձանի կերպով։ Այս վերջինն կտորը Ցեղեսյան գեր. սրբազանը այն ժամանակ Վան գտնվելով յուր հետն առած Գոլիս բերած է։ Տակավին քար հանել կը շարունակեն, և շենքեր կը բացվին, ու կը պատմեն, վոր յերկաթե նետեր ալ կը գտնվին։

Մհերի դուռը ամենալերջ քար է, դոր տաշեր և կոկեր են մեծ դռան ձեվով, և վրան բեվեռագիրեր գրած են, խիստ հատակ...

Մհերի դռան վերեն սեվ ջուր մը կաթ-կաթ կը ծորի։ Ցեվ կ'ըսեն. «Մհերն և յուր ձին Աստուծո հրամանով փակվեր են այն տեղը։ Այն սեվ ջուրն Մհերի ձիու շեռն է։ Այդ դռնով ներսը ճախրի ֆալակ կը դառնա, այսինքն՝ աշխարհի մարդկանց կամ յերկրագնդին ճախրը, անիվը։ Մհերը շարունակ անոր վրա կը նայի. յերբ այդ ճախրը դադարի, այն որ Մհերը կ'ազատի, դուրս կ'ելլե ու աշխարհը կ'ավրե»։ Ցեվ թե՝ «Ամեն տարի Համբարձման գիշերը երկինք գետին իրար կը համբուրեն. և այդ րոպեյին Մհերի դուռը կը բացվի. ով վոր արթուն ինացեր և այդ վայրկյանը տեսեր, ինչ վոր սիրտն ուզեր, այնպես յեղեր է։ Ցեվ վորովհետեվ Մհերի դուռը բաց է այն րոպեյին, ով վոր ներս մտնե, վորքան վոսկի ուզե, կ'առնե, դուրս կ'ելլե, վասն զի հոն աշխարհի վոսկին կուտված է։ Թե՝ քանի մը մարդիկ փորձեր են, և ազահ լինելով շատ վերցնելու համար ուշացեր, դուռը գոցվեր, ներսը ինացեր են»։

Ուրեմն այս կերպով Մհեր կը լինի աշխարհի բախտը դարձընող ու վոսկի բաշխող չաստված մը. դուռն Մհերն ինքն Միհր Մեծն լինի, և յուր դուռը ուղղակի հարավո հանդես կամ արեվու լինելով՝ պաշտելու պատշաճ։ Բայց ներկա վեպը այլապես կը պատմե։

Տողատումը, բացի 623—629, 657—674 տողերից, ամբողջապես նոր և կատարված։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

II

ԱԲԱՄԵԼԻՓ ՅԵՎ ՕԱՆԱՕԱՐ

1. Բաղդագի խալիճայի յեվ հայուհու վարդիներր՝ Աբամեղիք յեվ Սաճառար

Բաղդըդու խալիֆեն շատ զոր ու զորընդեղ կ'եղնի.
Ազգար կ'ենե, կ'իգա վըր ժըր սուրբ կարապետու.
Շատ գ'ժըր ազգ կը նվազցու,
Ու շատ հեսիր կը բռնե, տանե։
Աղջիկ մի ուրնե՝ շատ խորոտիկ կ'եղնի.
Բաղդըդու խալիֆեն զըդ աղջիկ կ'առնե,
Կը քեքնե վրը ուրան։
Մեկ ժուկ մ' ու ժամանակ մեջ կ'ընցնի,
Երկու տղա ուրնե կ'եղնի.
Մեկի անուն կը դնեն Աբամելիք,
Ու մեկին՝ Սանասար։
Պապ կռապաշտ ե ու ժամ՝ խաչապաշտ,
Ջունքի գ'ժամ ժըր ազգեն տարավ։

2. Խալիֆայի յերկրորդ արշավանքը հայերի վրա յեվ վորդիներին մատաղ անելու խոսումը

Ըդ խալիֆեն հեղ մ' լե ազգար երեց
Ու եկավ վըր մըր ազգին.
Մըր ազգ,—մեռնիմ ուր սուրբ հրաշքին, սուրբ Կարապետ,—
Ըդ անգամ զինք շատ նեղ լծեց։
Ու ըդ նեղութենի մեջ՝
Խալիֆեն կանչեց զուր կուռք ու ասեց.
— Յա՛ ճոչ կուռք,
Դու զիս ազատ ենես եգա ազգից,
Ու Յեբոր լես սալամաթ իգամ,
Զիմ երկու տղեն լե քըզի մատաղ տ'ենեմ։

3. Մոր յերազը յեվ վորդիների փախուսը

Ուրանց մամ քնավ, տեսավ երած։
Տեսավ որ* ուրան երկու ճրագ կեր,**
Կ'իգեր առջեվ ընցնելուն որ ընցներ,
Ու կը դառներ հեղ մ' լե լուս կ'իտեր։
Ելավ առվըտուն, Յեբոր ախլավ,
Զուր երզի եղելութեն
Խսա երեց ուր աղեկներուն, ու ասեց.
— Ես գիշեր սըբ Կարապետ ընձի երած եկավ,
Ասեց որ՝ ձրբ պապ ընկեր ե նեղութենի մեջ,
Ու զձրզի մատաղ ե կանչե ուր կոքերուն.
Յեբոր եկավ, զձրզի կը մատղե։
Դուք ձըր ճարեն գտեք։
Երկու աղբեր կանչեցին զուրանց Աստված,
Ելան վերցին զուրանց զավատեն
Ու լցեցին Յագուբե մի փարա,
Ու ընկան ճամբահ։

---

* Որ = վոր։ «Որ» (հին ուղղագրությամբ «օր») և «վոր» շաղկապը նման են արտասանվում։ Խ մ բ.

** Կեր — կար։ Խ մ բ.

4. Աբամելիքն ու Սանասարն աղբյուրի վրա իրենց համար բերդ են օիմում

Ընկան, ու շատ պըտըտվան.
Զարկեցին, եկան զարիպ երկիր։
Եկան, գացին նեղ ձոր մի։
Տեստն որ՝ գետ մի կ'իգեր, կ'ընցեր.
Առու մի ընդիեն կ'իգեր,
Կը զարկեր մըջ ըդ գետին,
Կը կտրեր զըգ գետ ու կը շերտեր չուր ի մեջ տեղ,
Ու հրպա մ' լե կը խառնվեր մեջ ըդ գետին ու կ'երթեր։
Սանասարն Աբամելիքին ասեց,
Թը.—Որն որ զըդա ջրի ակ գտնե
Ու զուր տուն լե սուկե վրը իգա ջրին,
Ընդրա ավլադ լե որ եղնի՝
Հըմլա զոբեղ կ'եղնի։

Ելան, առան զառուն,
Ու գացին երկու աղբեր։
Գացին ու գտան զաղբուր։
Ըդ աղբրի ջուր՝ լուլե մի ջուր ե.
Կ'իգա, կը կտրե թըմամ զուր տըկու առուն,
Ու հեղ մ' լե կը դառնա,
Հեղ մ' լե կը խառնվի առուն։
Կը նստին վրը ըդ ական,
Ու զուրանց բերդի հիմ կը թապլեն։
Սանասար կ'երթեր նեջիր,
Ու Աբամելիք կը դատեր վրը բերդին։
Շենլիք ըդ վերքեր չկեր։

5. Յեղբայրները դիմում են Արզրում յեվ Կարս նոսող ամիրաներին, վոր իրենց տեր դառնան, բայց մերժում են ստանում

Մեկ տաս-քսան որ բանան վրը ըդ քոշկին։
Աբամելիք եկավ ըն մեկ որ,
Տեսավ որ՝ Սանասար թաշկեր եր
Ու քուն ընցեր եր վրեն.

Արընդոտ նեջիրներ հըմալ անեփել
Թալեր եր ի գեաին ու քներ եր։
Շատ կսկծաց ընդուր ողուրին,
Ու ասեց.—Աղբեր, ելի երթանք.
Յար ի՛ Յեբ պիտի մնանք մենք հուդա
Ու անլի միս ուտենք։
Աստված՝ որ իտեր մըզի,
Մըր պապու քոշկն ու սարեն կ՛իտեր։

Երկու աղբեր հեծան,
Ու խրստ երեցին Արդրոմա նստողին ու եկան։
Եկան, գացին, ըդ մարդուն երկու աղբեր
Թամանա երեցին, ու կայնան եռաջ։—
Ահագին ու քու քեֆով՝
Զրորըդըսդ մարդ են ըդ երկու աղբեր։—
Արդրոմ նստող Ամիրեն
Շատ հըղ երեց ըդունց մոտեն.
Հարցուց զուրանց ինս ու ջինս,
Ու ասեց.—Դուք ի՞նչ մարդ եք։
Սանասարն ասեց.
— Մենք Բաղդըդու խալիֆի տղեկներն ենք։
Ըդ Ամիրեն ասեց.
— Հա՛յ, հա՛յ, հա՛յ...
Ու թոթվեց զուր փողպատ ըդունց մոտեն։—
Մենք ըդունց մեռըլներուց կը փախնինք,
Ըդունց կենդընուն ռաստ կ՛իգանք։
Մենք ձըզի տեր չընք կըռնա եղնի,
Յուր վե կ՛երթաք, գացեք։
Սանասարն ասեց Աբամելիքին.
— Աղբեր, մենք ըդ պապու մոտեն կը փախնինք.
Զըդոր անուն մըր վրեն հորի՞ յենք դրի։
Ըստիր Յուր որ գացինք, որն որ հարցուց,
Տ՛ասինք՝ Մըզի բան չկա՝
Նը պապ, նը մամ, նը տուն, նը վաթան
Բրլքե մ՛ խըլխ զմըզի տիրեն։
Հոնկուց դարձան ետեվանց,
Զարկին, գացին մոտ Ղարսա նստող Ամիրեն.
Են լե զըդ պաաճառ տվեց ըդ տղեկներուն։

6. Ծեգբայրները ծառայության են բնդունվում Կապուտկոզի թագավորի մոտ յնվ նրանից ստանում են իրենց բերդի համար բառատուն տուն բնակիչ

Ու ընոնք ըդ տեղեն դարձան,
Աբաս երեցին իդա հեղ
Կապուտկոդի թագավորին, ու գացին։
Կապուտկոդի թագավոր ղրդ մարդիկ տեսավ,
Շատ հրդ երեց ըդունց մոտեն։
Աբամելիք թամանա եղավ
Ու կայնավ ըդուր առջեվ.
Շատ դուր եկավ ըդ թագավորին։
Հարում երեց ըդունց մոտեն
Թե.— Ո՛ղուլ, դուք յուստա յնք.
Ի՞նչ ունիք, ինչ չունիք։
— Թուլ, բան մ՛ լե չունինք, ասեցին.
Նը մամ, նը պապ, թու թաբա չունինք։
Ասնասարն եղավ չըբուխչի,
Ու Աբամելիքն եղավ դայվաչի։
Մեկ ժամանակ ըդունք հրմլա կեցան։
Որերուց մեկ՝ Սանասար Աբամելիքին ասեց.
— Ըդխըդար ամադ կերանք
Ու մըր խրոբեն հրմալ մնաց։
Լուսուն, ասեց, ոչ դուն դալվա եփե,
Ոչ յես չըբուխ կպում, իտամ.
Առվրտուն չերթանք ուրան երեվան։
Կապուտկոդու ըդ թագավոր քնուց իմցավ.
Նը են կա, նը են։
Ըդ հաղ կանչեց ղրդ մարդիկ,
Առեց, եկավ թագավորն,
Ու ասեց.— Ո՛ղուլ,
Ախըր յես եոաչ ասեցի ձրդի,
Թե՝ Ձրդի ինչ կա, մամ, պապ.
Ու դուք պատմութեն երիք,
Թե՝ Մրդի բան չկա։
Դուք գձըր մադեն ինչի՞ վրա յնք երե։
Ասեցին.— Թագավորն ապրած կենա,
Մենք՝ ողորթմա յն, մամ ու պապ չունինք,
Մա քենե պահենք, Աստծուց ինչ պահենք.

Ամագ մեկ խորի մի տվեր ենք մե քիչ,
Ու թորկեր ենք, եկե։
Իդա որինակ աղբուր մի։
Ու նաղլ երեցին ուրան։
Թագավորի սիրտ կրռչաց վրը ըդունց,
Ասեց.—Ո՛զուլ, չընքի հըմալ ե,
Առվոտուն ձըզի քանի մի տուն կ՚իտամ,
Ու գացեք, զձրը բերդ շինեք։
Ըդ Թագավորն ելավ ավեց ըգունց քառասուն տուն։
— Հե՛յ գըտի տուն...
Ամեկուն մեկ ե՛շ ու մեկ ճախրակ։

7. Յեղբայրները շինում են աղբատների տները, ապա ավարտում իրենց բերդի շինությունը

Առավտուն ելան բարձան զուրանց տներ,
Ու երկու աղբեր խըստ երեցին
Ուրանց խըռբին ու գացին։
Գացին, ելան վրը ուրանց աղբրին
Ու վրը ուրանց հիման։
Սանասարն ասեց Արամելիքին.
— Ավալ զիդա բե՛րդ շինենք,
Թե չե զիգա ֆախիր-ֆուխարի ավահիք։
Աբամելիք ասեց.
— Առաջ շինենք զեդոնց ավահիք,
Ու նոր շինենք զմըր բերդ.
Ըդ ֆուխարեք չըն կռնա
Արեվուն առջեվ կենա։

Ու բաշլայեցին զավահիք։
Աբամելիք ընդար զորեղ եր,
Որ որ* տա՛սն տան աեղ կը փորեր,
Ու տա՛սն տուն կը շիներ.
Ըն մեկել լե զփետեր կը բերեր,
Ու բանվածքը երկուսով կը շինեն։
Չորս ավուր մեջ լման
Չքառսուն ավահիք շինեցին երկու աղբեր։

---

* Որ որ — վոր որը։ Խ մ բ.

Սորա կրկին բաշլան,
Զբերդ շինեցին, ու Թամամ երեցին,
Ընքան գորեզ են՝
Որ քարե սան քարե սուն զարկեցին,
Զաք Թալեցին, Թամամեցին զբերդ։

8. Կապուտկոզի թագավորն իր ազջիկը տալիս և Աբամելիքին յիվ բերդի աճուկը դնում և Սասուն. Պետի Թորոսը մնում և Սասունում

Աբամելիք ելավ,
եկավ մոտ ուր Կապուտկոզի Թագավոր,
Ասեց.—Մենք քո ավլադն ենք,
Ու շիներ ենք ու Թամամե գ'ըր բերդ.
եկեր ենք քու մոտ ու խնդիրք կ'ենենք քեզանե,
Որ իդաս ու մըր բերդին անուն դնեա։
Ըդ Կապուտկոզու Թագավոր
Շատ սիրեց ու ընդունեց զԱբամելիք,
Ու ասեց.—Գալ որ դիս չըք մոռցեր ի...
Ու ելավ, գուր աղջիկ տվեց,
Աբամելիքին չըրաղ երեց։
Զաղջիկ որ պսակեցին վրեն,
ելան Թագավորն, աղջիկն ու տղեն,
Ու քեռի Թորոս ել ուրանց հետ գնաց,
Հեծան ու գացին։
Ընկավ ուրանց առջեվ Աբամելիք,
Ու գացին, ելան վրը բերդին։
Հոնկուց Թագավոր տվեց ձիու գլուխ,
Որ պրտի դառներ, ասեց.
— Դուք ձըր բերդին անուն դրե՛ր եք,
Ու խաստի դիս կը կանչեք, ու կը փոլձաք։
Աբամելիքն ասեց.
— Թագավորն ապրած կենա,
Իտխաթ երա, որ մենք ըդ բերդին անուն չենք դրե.
Զեն կինանք որ բերդ մի շիներ ենք կանչենցե։
— Ելա իսա, չընքի որ անուն չըք դրեր ի,

Քարե սան սուն եք զարկե,
Ըդրա անուն տ'եղնի Սանսուն, Սասուն։

Մեկ ժամանակ մանցին հոդի,
Քեռի Թորոս լե կարգեցին,
Ու են լե մնաց հոնի.
Ու թագավոր դարձավ ուրան տեղը։

9. Սասունի իշխանության յերկիրը

Աբամելիք շատ զորընդեղ մարդ եր.
Սեվ սարի բոլոր ու չուրի Ծծմակաքիթ՝
Մշու վերեվով բաղան քաշած, ելած եր*
Չուրի Սեզանսըրու գոտեն ըվի Ճապաղջրու գուրան։
Ու զըդ բիթուն լե զավթեց։
Չորս դարգահ լե թողեց.
Ու միշտ հանապազ կը զարկեր զուր դարգահ,
Ու կը հեծներ զուր ձին,
Ու ինչ խդար ջին ու ջանավար եղներ, կը բռներ։

10. Աբամելիքը նվաճում ե Մսըրը. նրա սիրականը յեվ վորդին Մսրամելիք

Որերուց որ մ' լե զարկեց, գնաց չուրի Մըսըր,
Ու Մըսըր լե զավթեց։
Գնաց, գիշեր ըդ Մսրա կեցողի կնկան խեչ պառկավ,
Ու եղավ իրնե ավլադ մի։
Ու Մսրա թագավոր լե իմցավ,
Որ ըդ տղեն Արամելիքիցն ե։
Չրնքի ընդրա անուն Աբամելիք եր,
Զտղի անուն լե դրեցին Մսրամելիք։
Ու Աբամելիք լե սպանեց զՄսրա թագավոր,
Առավ զընդրա կնիկ,
Ու նստավ Մըսըր, եղավ թագավոր։
Ըդի թող մնա ըդ տեղ նստուկ։

---

* Տպված եր՝ «եղած են», ուղղում ենք՝ «ելած եր»։ Խմբ.

11. Բաղդադի խալիֆան փորձում և մտաղ անել Սանասարին. Ետ սպանում և խալիֆային յեվ նստում հոր տեղ Բաղդադում

Սանասար նստուկ եր Սասուն։
Ուր պապու կռքեր չըն թողի, որ ըզի սըթրեր.
Ու ելավ, խըստ երեց ուր պապուն ու մամուն,
Ու գնաց Բաղդադ։
Ուր պապ նըստուկ եր փանջարեն.
Տեսավ որ՝ ուր տղեն Սանասար կ'իգեր,
Ու ճանչցավ, ու ասեց.
— Ե՛յ, մեռնիմ քըզի, մեծ կուռք,
Ի՛մալ զքո մատաղ քաշիր, ըերիր.
Յար Յեբ ե մանցե՝
Զմըկել լե կը քաշես, բերես։

Մամ, չընքի խաչապաշտ եր, նստավ,
Ուր տղեկներն ապով արսունք թափեց։
Պապ առեց թուր ու սուր ու գնաց.
Կանչեց ու ասեց.—Արի՛ երթանք, վո՛րգի,
Երկրպագութեն արա մեծ կռքին,
Որ զքըզի մատղեմ։
Ասեց տղեն.—Արո՛,
Քո ճոչ կուռք շատ զորավոր կուռք ե.
Գիշեր լե չըր թողնե,
Որ մենք ընտեղ սըթրրվենք.
Յար Յեբ ե մանցե՝
Զուր մեկել մատաղ լե կը քաշե ու կը բեբե։
Առավ զտղեն, ու մտան կռքատուն։
Տղեն պապուն ասեց.
— Արո՛, չե՞ գու գինաս,
Որ մենք գացինք՝ մենք պստիկ ելինք.
Մենք զքո կռքի զորութեն չընք գինե.
Դե՞ գու կզի, քո կռքին երկրպագութեն տուր,
Իշեմ՝ ի՛մալ կ'իտաս, ուսնեմ։
Պապն ասեց.—Հըմլա՛, լա՛ս։
Ու կզավ, երկրպագութեն տվեց։
Տղեն ասեց.—Արո՛,
Քո կուռք ի՛նչ զորավոր կուռք եր,

Որ դու Յերոր կզար, իմ աչքեր մթնեց,
Չտեսա՝ իմալ երեցիր։—
Չընքի չհասավ, որ առջի դրբին զարկեր,
Մալութի կոճկներ չարձկվավ։—
Ասեց.— Արո՛, աբո՛,
Իդա հաղ լե երկրպագութեն երե,
Տեսնենք՝ իմալ կենես, որ յես լե ենեմ։
Ու հեղ մ՛ լե Յերոր կճավ պապ, տզեն ասեց.
«Յա հացն ու գինի, տերն կենդանի»...
Ու գուրզ մի իջավ,
Ու զուր պապ խալիֆեն՝
Յոթն զազ գետին վե իջուց։
Առեց զգուրզն ու ինկավ մեջ կոքերուն,
Զըմեն լե ջարդեց,
Ու առավ զարծըթներ, լցեց ուր մալութի փեշ,
Ու բերեց, տվեց ուր մամուն, ու ասեց.
— Մամո՛, իդոնք երե քըզի զենաթ։
Մամ լե կղավ վրր քիթ ու բերնին,
Երկրպագութեն երեց ու ասեց.
— Գոհանամ քենե երկնի ու երկրի ստեղծող,
Գա՛յ որ զմըզի ազատ երեցիր են զալըմի ձեռնեն։
Բերեց, զՍանասար փսակեց,
Ու պապու տեզ դրեց վրր թախթին։
Ընի ընտեղ մնաց։
Դառնանք Աբամելիքի վրեն։

Բ

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱՄԵԼԻՔԻ ՀԵՏ

12. Մսրամելիքն Աբամելիքի պատվերով Դավթին ու մյուս յեզբայրներին տանում և պահելու

Աբամելիք, որ նստուկ եր Մըսըր,
Զուր մոտից եղող տզեն՝
ԶՄսրամելիք թողեց ուր տեղ,
Ու ինքն եկավ ի Սասուն։
Մեկ ժուկ ըմ ու ժամանակ ըդ մեջ ընցավ.

Քընի մ' տղա ըդուրա մոտից եղան.
Մեկի անուն դրեց Ճնճղափոքրիկ,
Ճոչ տղի անուն դրեց Ցռան Վեգի,
Մեկին՝ Զենով Ոհան,
Մեկի անուն լե՝ Խոր Գուսան,
Ու Յրմնու պստկի անուն լե՝ Դավիթ։
Եդ տղեկներու մեջ Ճնճղափոքրիկն ու Ցռան Վեգին
Իսկի բանի պետք չիզեն։
Ըմա Զենով Ոհան հրմլա ձենով եր որ...
Ցոթն զրմշու կաշի կը թալեր արեվ, չորցներ,
Ու կը փաթթեր զինք, ու կը բոռեր,
Որ չեղներ պատռվեր։
Դավիթ քընց զրմեն լե հընարով եր,
Ուր զորութեն՝ ել լեզվով թարիֆ չեղնի։

Իդա անդամ մեկ ժուկ ու ժամանակ մնաց,
Հալվորավ Արամելիք։
Որ մի որերուց, ինք ու Յինք նստավ
Ու դուշուրմիշ եղավ, ասեց.
«Զորս կոզմ եղավ ընձի դուշման.
Ետեվ իմ անցման
Ել որ իմ ճժերուն տիրութեն տ'ենե.
Թե որ ենե, պաի Մսրամելիքն ենե.
Ել բաշխա մարդ չկռնա դիմանա իմ դուշմներաց»։
Ելավ խըստ երեց Մսրամելիքին ու գնաց։
Ծեր ժամանակն եր։ Ասեց.
— Մսրամելիք, ոզուլ, դու լե իմ ավլադն ես։
Թե յես շուտ մեռա,
Իմ ճժեր ամանաթ քըզի.
Թե դու շուտ մեռար,
Քու ճժեր ամանաթ ընձի. յես կը պահեմ։
Դարձավ ու եկավ, մնաց ուր բերդ։
Մահու որն եկավ, մեռավ։
Մսրամելիքն եկավ, զրդըա ճժերն առավ ու գնաց.
Զունքի զուր պապու թամբիհ չըր մոռցի։

Ա. Տ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Г. С. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм. ССР
Ա. Ա. ՄԱՍՈՒՆՅԱՆ

13. Սասունի սուգն Աբամելիքի մահվան առթիվ յեվ սգահանությունը

Յոթն տարի Սասուն սուգ մնաց
Աբամելիքի մեռնելուց ետեվ։
Որերուց մեկ նստան ու դրեցին գինեխում
Քեռի Թորոսն ու դեղացիք։
Գեղացիքն ասեցին.—Քեռի Թորոս,
Մըր աղեկներ հալվորան,
Ու մըր աղջըկտիք պառվան.
Թը դու գինաս, թը մըր յոթ տարի սուգ պահելով
Մըր Աբամելիք կը սաղնա,
Յոթ լե ավլի կը պահենք։
Քեռի Թորոս իզին տվեց
Դուրդրկըցներուն ու ասեց.
— Կարգեք ղձըր աղեկներ ու աղջըկտիք,
Սուգ պահելով բան չեղնի։
Դրեցին զուրանց գինուխում ու քեֆ երեցին։
Քեռի Թորոսն առեց ղկթխեն ի ձեռք,
Կայնավ ու միտք արեց.
Նը կը խմե, նր կը դնե։
Թորոսի տղեն ի փոգանեն
Ձեն տվեց պապուն ու ասեց.
— Արո, ըդունք Սասնու ծռերն են,
Մկա մեկ քամ խոսք քե կ'ասեն.
Յա խմե, յա դիր գետին, քելե։
Պապ վերուց տզին ասեց.
— Հեյ շան որդի,
Յես նստիմ հոդա, կերուխում ենեմ,
Մսրամելիքն իգա, տանի զմըր ճժեր.
ՉԱաբամելիքի աղեկները գըրթրփե,
Յես նստիմ հոդա, կերուխում ենեմ,
Ամոթ չե՞ մըզի...
Հաց գինի ու աեր կենգանի,
Քրն զըդ կըթխեն եվել խմած չեզնիմ.
Ելնեմ երթամ, իմ ճժերուն երեվան։

14. Քեռի Թորոսը վերադյուցից ազատում է Աբամելիքի որդիներին. Դավիթը չի ուզում Մարամելիի բրի տակով Մարամելիի վախը Դավթից

Քեռի Թորոս Սասնու գարկեց
Ու գնաց ի Մըսըր.
Ղոնըշմիշ եղան ինք ու Մսրամելիք,
Ու նստան, ասեց.
— Հայգե, լես ու դու Աստծու դատաստաուն,
Ղորդ ե, դու ու Աբամելիք
Իրար հետ սանսալաշմիշ եղեր եք,
Ամա գերին գին եղնի, տիրուն կը հասնի։
Ելան ու գացին շարիաթ.
Ճժեր հասավ Քեռի Թորոսին,
Մսրամելիքի աչք շատ կը վախենա ըդ ճժերուց.
Քեռի Թորոսին ասեց.
— Բե վ'արի գրդ ճժեր
Ընցու իմ Թրի տակն, ու առ ու գնա։
Եկավ ու Թարիֆ երեց տղեկներուն Քեռի Թորոսն։
Ցոան վեգին ասեց.
— Երթանք, ընցնինք ուր Թրի տակն ու երթանք։
Մըկել երկուս լե հըմալ ասեցին։
Ըմա՝ Դավիթն ասեց.
— Կը սպանե, Թող բսոր սպանե,
Որ խըլխ ասեն՝ ճիժ ըմ սպանեց.
Ցես ընդրա Թրի տակով չըմ ընցնա.
Հըմալ կ'ենե, որ վազ յես մեծնամ,
Սուր չքաշե՞մ ուր վրեն։
Ուր ահուն Քեռի Թորոս զըդոնք Թոփ եըեց,
Ար տանի, ընցու Թրի աըկով.
Դավիթ գընկոաւ ու կայնաւ,
Ու չերթա Թրի աըկով։
Քեռի Թորոս բռնեց գԴավիթի պառեկն
Ու հլոտեց, որ ընցնա Թրի աըկով։
Դավիթ չգնաց Թրի տըկով, կշտով ընցավ.
Ուր ճոչ բոթ քիսաւ ի ջարդու քար՝
Կրակ ելավ ժոտեն։
Յերբոր Մսրամելիք տեսավ,

Շատ վախեցավ ու ասեց.
— Իդա պզտիկ ե, եսքան ե,
Որ մեծցավ, ի՞նչ տ'եղնի։
Թե որ ընձի զավալ մի եղնի՝ ըդրա մոտեն ե։
Քեռի Թորոս առավ զճժեր
Ու եկավ ի Սասուն.
Ցռան Վեգին դրեց բերդի մեջ ուր պապու տեղ.
Ու Դավիթ՝ որ ըմնու պստիկն եր,
Դրեց հորթերու առեջ։

15. Դավիթը հորթարած, ընկեր հորթարածը, ցասման ժամի հարիսան յեվ ավազակ դեվերը

Դավիթն եր, որ կոպալ մի կը զարկեր հորթերուն,
Քառսուն հորթիկ լե հետ կը գլորտվեը։
Որերուց որ ըմ լե քշեց,
Զհորթեր հանեց սարի գլուխ.
Տեսավ, որ հորթրածի մեկ լե
Ուր հորթերուն կը քըֆրտեր.
Ու ընդիեն եկավ։
Դավիթն ասեց.—Ո՞ մարդ,
Դու ընձի կը քըֆրրտես.
Դու կայնի որ յես իգամ,
Կոպալ մի զարկեմ, որ դու սասանես։
Ըդի ասեց Դավիթին.
— Գլխուդ արեվուդ մեռնիմ,
Յես լե քո պապու գեղի հորթրածն եմ.
Ու իդա՝ ռըմկա հորթերն են։
Դավիթն ասեց.—Ելա իսա,
Յես հորթերու վախտ չըմ գինա.
Զիմ հորթեր լե դու պահե.
Յերոր երթլու վախտ կ'եղնի,
Տուր իմ առեջ, տանիմ։
Ու ըդ որ առեց զհորթեր
Վախտի հետ ու եկավ ի գեղ։
Խնդացավ Քեռի Թորոս ու ասեց.
— Ո՛րդի, հըմլա ֆասալով եղի,
Ըմըն որ վախտի հետ արի, գնա։

Դավիթն ասեց.—Քեռի, իմ հրնար չեր եդ.
Ընձի ազբեր մի բռներ եմ.
Ըմնոր տի պահե զիմ հորթեր.
Ըսդիր աղեկ աը տիրապրաեմ։

Որերուց մեկ ուր ընկեր անգըցավ.
Դավիթ շատ վիրավորավ։
Ըդ տղեն լե, մ՛ ասի,
Ըդոնց գեղ ցասման ժամ ե, պատարագ ե,
Տղեն եդ ապով անգցեր ե. եկավ։
Դավիթ բդրան ասեց.
— Ըսոր դու իմ ձեռնեն ի՞մալ պտի ազատվիս։
Տղեն ասեց.—Դավիթ,
Գլխուգ արեվուդ մեռնիմ,
Յես քո ահուն հեզ ըմ լե չկայնա,
Ու զըն ցասման ճաշից գդալ ըմ լե չկերա,
Քշեցի զհորթերն ու եկա.
Ընուր ապով քիչ ըմ անգցեր եմ։
Դավիթն ասեց.—Դու նստի հոդա,
Յես երթամ, քե ճաշ առնեմ, իգամ։
Դրեց զկոպալ վրր թեվին ու գնաց.
Զարկեց, ինկավ ի ռըմիկ,
Տեսավ, որ զհերիսեք զրմեն
Հանած են դրած ի կալ.
Երեցներ եկած են, կ՛որհնեն։
Գնաց, զկոպալնի եձգեց
Ի չորս կանթեն պզինձ մի՝ հըմալ լքցուկ,
Ու դրեց վրր թեվին։
Զարմցան բդ երեցներ
Ու բդ մարդեր, որ հոդ են։
Մարդու մեկ կանչեց,
Թե.—Ըդի ախրը զպզինձ աարա՞վ, հե՞։
Երեց կանչեց.—Քո Աստծու սե՞ր, ձեն մ՛ենե.
Ըդի Սասնու ծռերուցն ե.
Կը դառնա, զմրզի ջարդ ու բուրդ կ՛ենե.
Զուր գլուխն ուտի, թըղ տանի։
Դավիթ լե առեց զպզինձ լքցուկ ճաշով,
Եկավ մոտ ուր ընկեր։

Նստեր ե ընկեր ու կ'իլա։
— Հե, հե, ասեց, գինամ դու Յորի՞ կ'իլաս.
Զճաշ բերեր եմ, զազ ու զեղ չըմ բերեր ի.
Են ապով կ'իլաս։ Կե հըմկա զճաշ,
Իրկուն գնա, զեղ ու զաղ կե վրեն։
Ասեց տղեն.— Դավիթ,
Գլխուդ արեվուդ մեռնիմ,
Զեղ ու զազն յես ի՞նչ ենեմ
Դեռ ելան քառսուն հաբամի* դեվ,
Զարկեցին, զմըր հորթեր տարան, ու գացին։
Դավիթն ասեց.— Դու հոդա կեցի,
Իդա տեղու հորթերուն իշե.
Յես կ'երթամ, զմըկըլտոնք կը դարձում։
Ու ընկավ հորթերու ետեվն, ու գնաց.
Առեց զըռեջք, գնաց երի մի դուռ ու կայնավ։
Դավիթ հոդի մեկ ձենով բոռաց.
Սարսափ թափավ վբր ըդ դեվերուն.
Իմալ որ Քրիստոսի ձեն ընկավ դժոխք,
Ու սատանեք խըռգլան։
Եդ հրամիներու մեծ Յեբոր լսեց, ասեց.
— Գիդի՞, ըդի Դավիթ՝ Աբամելիքի տղեն ե.
Ելեք, խզմաթ երեք, որ չսպանե զմրզի։
Մեկ-մեկ դուրս ելան,
Ու Դավիթ մեկ-մեկ կոպալ զարկեց,
Ու քառսունի գլուխ լե գնաց, ու ջանդակ ցնաց.
Զրգ քառսունի ականջ լե կտրեց,
Ու տարավ, երի մոտ քարու մի տակ պահեց։

16. Դավիթը դեվերի քարայրում ձեռք ե բերում քուռակը յեվ մեծ գանձ. նա հոգ ե տանում ընկերի համար

Դավիթ զկոպալ ոզմրցուց ի դուռ, ու մտավ երի մեջ։
Տեսավ, որ գոլոն մի ոսկի յե, մեկ՝ արծաթ.
Աշխըրքի մալ ու դոլվաթ։
Քանի որ ուր պապ մեռեր ե,
Ընդունք ավերութեն երած են, ու լցած եգ եր։

---

* Այս բառից հետո փակագծի մեջ ունի «խարամանի»։ Խ մ բ.

Դուռ մի բացեց, որ ձիու քուռակ մի կապուկ եր Յինք։
Յինք ու Յինք դուշուրմիշ եղավ, ու ասեց.
«Քեռի, իդա մալ ըմեն քըզի,
Ու իդա ջանավար ընձի.
Կ'իտաս՝ տուր, չըս իտա՝
Ջքըզի լե կը հասում իդունց»։
Հեղ մ' լե Ինք ուր գլխուն կ'ասե.
«Լաո, մալ լե քըզի, ջանավար լե քըզի.
Յես ինչ կ'ենեմ»։
Դարձավ, իշեց, որ քառասուն կանթեն պղինձ մի
Դրուկ եը ոջախի վրեն,
Քառասուն հորթիկ լե մեջ։
Ջկոպալ կը մոու կանթներ ու կը վերցու.
Ջուր կը դարտկե ու հորթերու վոտքեր լե կը լըլա մեջ.
Կը շալկե ու կ'երթա։
Ան ու եկավ մոտ ուր ընկեր.
Առեց գընկեր ու գնացած հորթեր,
Ու դարձավ եկավ ի ոըմիկ։
Կանչեց գհորթերու տերվըտանք,
Ու բերեց, ասեց.
— Թե որ իմ աղրոր ճանկ մի հախ կտրեք,
Վայ վավլեր ձըր ջանին։
Ջըդա պղինձ լե ծախեք,
Թող եղնի ձըր հորթերու տեղ։
Ինք լե ջոկեց գուր հորթեր,
Ու կեսորին եկավ տուն,
Քեռի Թորոսին ասեց.
— Քելե, առ քսան ըմ ջորի,
Ու երթանք մալ բերենք,
Որ դու լե ուտես ու քո յոթը պորտ լե.
Յար Յեր յես ա'եղնիմ հորթրած։

Ու առան ղջորեք ու գացին.
Գացին, մոտեցան Երին։
Քեռի Թորոս տեսավ,
Որ ղեվեր փիծած են երի դուռ,
Ուռած են, յեղած ամեկ քրնց Պող բլուր։
Քեռի Թորոս վախենալուն

Պրծուց զուր ջորին մըկել ջորեցներուց ու փախավ։
Դավիթն ասեց.—Տնավեր,
Յես ըդունց սաղերուց չըմ փախի,
Դու ըդունց մեռըլներուց հորի՞ կը փախիս։
Ասեց, թե չըս ավատա,
Դարձի քո ետեվ, պալի տակ իշե.
Զրմընու ակընջներ լրլեր եմ հոդի։
Քեռի Թորոս տեսավ,
Ու դարձավ, առ զջորեստան ու մտավ Յեր,
Ինչ կեր չկեր ժողվեցին, զբեռներ բռնեցին։
Ասեց.—Քեռի՞ Թորոս,
Իդա մալ բմեն քրզի,
Ու իդա ջանավար ընձի.
Կ'իտաս, տուր. չըս իտա,
Զքրզի լե կը հասում իդունց։
Ասեց.—Լա՛ո, մալ լե քրզի,
Ու ջանավար լե քրզի.
Յես ի՞նչ կ'ենիմ։
Թախրիր առեց քեռու բերնից,
Ու ելավ հեծավ զքուռակ, խառ կ'իտա.
Մեկ կ'երթա դինա, մեկ կ'երթա դիտա։
Քուռակ չե, դիլ իլան թարիֆ ոլմազ, քուռակի զորութեն։
Հըմլա մալով-թամալով եկան ի Սասուն։

17. Վորսորդություն յեվ Ալեվորը

Դավիթ գտավ աղեկ բազե մի,
Ու ընկավ արտեր, նեջիր կ'եներ։
Ել հորթեր թորկեց։
Որերուց մեկ եկավ,
Ազքըտի մ' արտի հանպըտավ,
Որ յոթ նրֆս քուլֆաթ ունի,
Ու յոթ կորի կորեկ.
Զչորսն ավրեց, մնաց երեք։
Մեկ եկավ, ջուար բերեց աղքատ Հալվորուն,
Ասեց.—Քո տուն ավրի՞,
Ելի գնա արտուդ երեվան.
Գիշեր կ'իգա, զեն երեք կորին լե կ'ավրե։

Հալվորն եր, առավտուն ըն գլխուց չուր աղոթք կ'ենե,
Ու կ'ելնա կ'իշե՝ զարտն ավրեր ե։
Մեկել կը աեսնա, որ Դավիթ՝
Բագեն ի ձեռք, հեծուկ զքուռակն, եկան։
Հալվորն ըգ տեղ անիծեց Դավիթին, ու ասեց.
— Դու Աստրծուց ըսկի չը՞ս վախենա.
Դու վրը իմ կորեկի՞ն ես կարիճ.
Յոթ նրֆս ունիմ, յոթ կորի կորեկ.
Չորսն ավրեր ես, մացեր ե երեք։
Կտրիճ ես, գնա, զքո պապու մուլքն առ,
Որ Ծծմակա գլխեն կ'երթա,
Հար ի Սեղան սարու գոաին.
Չավթեր ե Մսրամելիք ու կ'ուտե։
Գնա, զեն առ։
Վրը ընձի՞ յես կտրիճ։
Ասեց.—Հալվոր, մ'անիծի ընձիկ.
Առ բուռ մի վոսկի, զքո իգարեն երե։
Ու զարկեց զբազեն։

18. Դավիթն ստանում ե հոր զենքերը

Խոջա Դավիթն եր, ասեց.—Քեռի Թորոս,
Ելի զիմ պապու գուրզն ու քեմալ տուր ընձի,
Որ կ'երթամ կռիվ։
Զիմ պապու մուլք խըլխ կ'ուտեն,
Դուք ընձի չը՞ք ասե։
Ելավ, Քեռի Թորոս գնաց մոտ Ցռան Վեգին,
Ուզեց զուր պապու գուրզն ու քեմալ։
Ցռան Վեգին չավեց։
Հեղ բմ լե գարձուց ու ասեց.*
— Կ'իտաս՝ տուր. չը՞ս իտա՝ կ'իգամ, կը մարմնեմ,
Գլուխդ կ'երթա, ջանդակդ կը՞ մնա։
Ցռան Վեգին վախուն տվեց
Ուր պապու գուրզ ու քեմալ.
Ու Քեռի Թորոս բերեց, տվեց Դավիթին։

---

* Դավիթը։ Խմբ.

19. Դավթի մատաղը Մարաթուկում յեվ սուրբ Նշանն ու սանդրը

Ըդ գիշեր Դավիթ քնավ, տեսավ երած.
Առավ քառսուն երինջ
Ու գնաց վըր սըր Բանձրիկ Մարաթուկա։
Մատղեց զերրնջներն ու լողգցավ մըջ արունին.
Շատ լաց ու աղաչաց Աստծու երեսնու վե։
Իջավ Աստծուց ուրան սուրբ Նշան մի ու սանդր մի.—
Ու հըմկա լե րն սուրբ Նշան՝
Հանգե ի Գավառ՝ Զորկա տուն.—
Համբուրեց զսուրբ Նշան,
Դրեց աջ ծոցքի թարաֆ,
Ու սանդր լե դրեց ձախ ծոցք։

20. Խոլբաշու հարձակումը Մարաթուկի վրա յեվ խաղ ու պարով գովող կանայք

Ըդ Մսրամելիք լսեց,
Որ Արամելիքի տղեն հասեր ե,
Ու ելե կ'իգա ուր վրեն կռիվ.
Ուրան թարաֆից լե Խոլբաշին ելավ, առավ զուր ազգար,
Եկավ, որ տի գեր ի Մարաթուկ, Դավիթի վրեն,
Տեսավ, որ կընկտիք կայնած են ճամբու վրեն, ասեց ըդունց.
— Զրզի պար, ասեք, խաղցեք, չուրի յես իգամ։
Ասեցին.—Մենք զի՞նչ ասենք ու խաղանք.
Չե՛, չր՛նք գինա, թե զի՞նչ ասենք։
Խոլբաշին ուրանց ասեց.

«Կարճ կընկտիք երկանք ազան,
Երկեն կընկտիք զուղաեր բառնան.
Մեր Խոլբաշին գացեր Սասուն ի բան,
Մուղալ եզներ բերե լրծան.
Զկարմիր կովեր բերե կրթան,
Գարուն բոլ կր շինենք եզ ու չորթան»։

Մեկ լե կ'իշե, որ կնկաիք
Ուրանց զըդի կ'ասեն ու կը խաղան։

Հդոնք լե կ'առնեն գասգար, կ'իգան
Ու կը լցվին Մարաթուկա բակ։

21. Երեցի աղչիկը լուր և բերում Դավիթեն. սա մարմնում և բռնամիներին յնվ պատուհասում Խոլրաշուն

Հդ Մարաթուկա երիցու աղջկան լե
Աչք կա Դավիթի հետ.
Երիցու աղջիկ եկավ,
Խաբար բերեց Դավիթին, ու ասեց.
— Դավիթ, խուրբան գլխուդ ու արեվուդ,
Ելի տես՝ ինչ խզբը ասգար և եկե բակի մեջ,
Անթիվ ասգար են...
Երեցու աղջիկն ասեց, գնաց եռեվանց,
Ու դռան դրկափակ քաշեց։
Դավիթ Թրոավ ելավ, ու ասեց.
«Ցա հաց գինի, տեր կենդանի»,
Ու բռնեց գասգրի մարդերու հրման զգլխներ,
Մարծնեց, ջանդակ գնաց բադնից դուրս,
Ու գլուխ ծնաց բակի մեջ։
Բռնեց գԽոլրաշին լե,
Ջակեց գակոնք ու շարեց ի ճակատ.
Ու գմգրաղ լե երեց քընց շան խառան,
Կախեց վրից ու ասեց.
— Դե գնա, ջուար տար Մարամելիքին.
Ուրան մարդ կա՝ Թրդ գոմե, չուրի յես իգամ։

22. Խոլրաշուն խաղ ու պատով ծաղրող կանայք

Խոլրաշին հեղ բմ լե եկավ մեջ դդ կնկտոնց.
Հեղ բմ լե կ'ասեն ու կը խաղեն։
Կնկան մեկն ասեց.

«Խոլրաշի ջան, Խոլրաշի.
Իգա դիեն գացիր քընց գել գազան,
Լեն դիեն եկար քընց շուն վագան.
Մգրաղդ և վիգդ քընց շան խառան,

Բերանդ ե բաց քընց պատուհան.
Բերնեդ կ՚երթա քընց չորկի տըկի թան,
Ճանճեր վրրեն կապած քարվան»։

Խոլբաշին ասեց.

«Տո՛ շընացած, դել անզգամ,
Յես գիցա, թե Սասուն գաշտ ու դուրան եր.
Չգիցա, թե քար ու կապան եր։
Ըն ճըժեր, որ նոր են ելած, դիվանական են.
Ուրանց նետ կա քընց ձիթխըցի գերան,
Որ կը զարկեն, բերան կը բացվեր քընց պատուհան։
Ըն մանկտիք որ հետս եր, ժողվան, լցվան 'ի խարաման։
Գարուն որ ջուրն ելավ,
Կը ժողվե, բերե ճուճ ու պըլոր արմաղան,
Ըն ժամանակ ձըգի բոլ շինեք եղ ու չորթան»։

23. Դավթի հյուրասիրվելը Մսրամելիքի բանակում. Դավթի հարձակումը յեվ Վեռի Թորոսի ոգնությունը

Իդա անգամ Դավիթ ելավ,
Խրստ երեց, գնաց Մսրամելիքի վրեն.
Եկավ որ՝ ահագին ասգար ժողվեր են
Ու նստեր Սեղան սրբու գոտին։
Դավիթ ասեց. «Ուխտ եղնի,
Չուրի յես կանանչ կարմիր չագրի տակ
Յոթն որ բրրընձ-փլավ չուտեմ, կռիվ չենեմ»։
Ես անգամ ըդ աեղեն Դավիթ զարկեց, գնաց,
Արեվպաոց դիեն ֆըթլավ, եկավ,
Եկավ ու չագրի դեմ կայնավ։
Յեբոր ըդ ասգար տեսավ զրդ ձիավոր,
Զանգա բռնեց ու վախեցավ։
Մելիք հարցուց.—Դու ինչ մարդ ես։
Ասեց Դավիթ.
— Յես Արեվպտոց թագավորի տղեն եմ,
Եկեր եմ ձըգի ժոգ։
Մելիք չագը՛ր զարկեց.
Յոթն որ հըտ իրաց հաց կերան։

Վըր ուքնին նլավ, գուբ ձին հեծավ,
Երկու մնլդան դնաց, եկավ, ասեց.
— Ելի, որ յես եկեր եմ քո վրեն կռիվ.
Յար Յեր դու ուռես դիմ պապու մուլը
Կռիվ կցեցին. Դավիթ կանչեց՝
«Հացն ու գինին, աեր կենդանին»...

Ադա, Քեռի Թորոս լսեր և զրդունց կռիվ,
Քաշեր և մեկ բարդի ծառ,
Դրեր և վրը փիչին, ու եկավ։
Ինք կայներ և ձուրու դլխուն,
Ու ըդունք ձուրու մեչ կռիվ կ'ենեն։
Որն որ կը փախնի, վեր կ'ելնե.
Դավիթ կը բոռա. — Քեռի Թորոս,
Դու ծորե, յես ծորթփեմ։

24. Չարի գվգահությունը. Դավթի յեվ Մարամելիի մենամարտը։ Դավիթը սպանում է Մարամելիին յեվ տիրում է Մարին

Ապար կայնան ու դավա երեցին,
Թև.— լագըմ ե, որ մինակ դուք երկուս կըռվեք,
Որն որ դոռ կ'եղնի,
Թող կըտիվ ենոր եղնի։
Ինն կ'ասե՝ դու նստի, յես դարկեմ. են կ'ասի՝ դու։
Շուրուտ կապեցին, որ պատիկ ազրեր Դավիթ նստի։
Դավիթ քաշեց գխալխան ի գլուխ.
Բոնեց գսուրը նշան խալխընի տակ ու նստավ։
Մարամելիք երեք ահաթի ճամբա մեկնավ
Ու իշտապով եկավ գուրդ մի գարկեց, ու ասեց.
— Հող ես, հող դառնաս։
Դավիթն ասեց.
— Հավատամ խոստովանիմ
Բանձրիկ Մարաթուկ սուրբ Նշան,
Յես հրմալ եմ՝ քրնց կանաչ կարմիր չադրի տակ,
Բրընձ-փիլավ կ'ուտեմ։
Իրեք անգամ ըդ ավա
Դնաց, եկավ, գարկեց ու ասեց.
— Հող ես, հող դառնաս։

Դավիթ լե իրեք անգամ՝
«Հավատամ խոստովանիմ» ասեց։
Իդա անգամ դոր եկավ նստելուն Մսրամելիքին։
Մսրամելիք հընգռավ, կայնավ, չըր նստի։
Ասգար մեղդրեցին զինք։
Եկավ, առավ զխալխան վըր գլխուն ու նստավ։
Իգա անգամ Մսրամելիքի մամ մեղդրեց ու ասեց.
— Դավիթ, զուրբան գլխուգ արեվուդ,
Չե՞ եդ լե քու աղբերն ե. մը՛ զարկի, խեղճ ե։
Ասեց Դավիթ.—Հե՞յ անղգամ,
Չուրի հըմկա որ եդ կը զարկեր,
Հորի՞ չըր ասի՝ քու աղբերն ե։
Բըլե՛, ըդ ավա թրդ եղնի։
Մեկ դըրբ՝ թրդ եղնի Աստծու խաթըր. մեկ լե՝ քու խաթըր.
Ըմա զիմ ետի դըրբ կը զարկեմ,
Յա կը մեռնի, յա կը մնա։
Գնաց, եկավ, գուրզ մի զարկեց.
Յոթ գազ ի գետին տարավ զՄսրամելիք։
Ու գնաց, զավթեց զՄըսրը,
Ու նստավ թագավորի թախտ։
Ըդի հոդ մնաց։

Գ

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԽԱՆԴՈՒԹ

25. Դավիթը լսելով աշուղի գովքը՝ վորոշում ե գնալ Խանդութին առնելու

Գազզվանու Ամիրին աղջիկ մի կա,
Անուն Խանդուդ խանրմ։
Ըդի լսեց Դավիթի զորեղութեն.
Հախ տվեց աշողի մ՛ ու ասեց.
— Գնա, զիմ գովասանք երա Դավիթին.
Բըլքըմ իգա հոդա, գիրար առնենք։
Աշողն ել ելավ գնաց ի Սասուն,
Գիներ խր՛յ Դավիթն ի Սասուն եր։
Եկավ ու ելավ Ցռան Վեգու բերդ.

Գիներ, թը Դավիթն ե ընտեղ նստուկ։
Նստավ, դամ երեց Ցռան Վեգուն։
Ցռանվեգին ասեց.
— Գիդի, ելեք զրդի ծեծեք, երեք դուրս.
Եդի եկեր ե՝ զիմ աղբեր խարե, տանի։
Ծեծեցին ու տարան ձոր մի,
Զրդ աշող վրը ճամբուն թալեցին։
Իրիկվան հոտրղներ զուրանց եգներ հեծած են, կ՚իգան գեղ.
Մեկի եզ խրտավ, հոտաղ պատավ վրավեն.
Ոլրրդան, գտան զաշող։
Աշող լաց ու աղաչաց ըդ հոտրղներուց, ու հարցուց.
— Ըդ ո՞րն ե նստուկ մեջ եղա բերդին։
Հոտրղներ ասեցին, թե.—Ըդի Ցռան Վեգին ե.
Դավիթ հանդե Մրսբը։
Ելավ, աշող ոսկի մի տվեց հոտրղներուն.
Հոտրղներ գոմեցին զուր դամբուռի կտորտանք,
Տվեցին ուրան, ճամբեն ցրցուցին.
Ու աշող դեմ երեց ի Մրսբը։
Գնաց, զխանրմի հիմաթն երեց Դավիթին.
Դավիթ շատ փեշքեշ-բաշխիշ տվեց ըդ աշողին,
Ու ասեց.—Դու գնա, յես կ՚իգամ։
Աշողն եկավ, Խանդուդ խանրմին ասեց։

26. Դավթի գութան անելը յեվ օտակերությունը

Դավիթ լե Մրսրա ելավ, շիտակ եկավ ի Սասուն։
Սասնու եկավ, հասավ ի Ծրծմակա քիթ.
Տեսավ, որ գութան մի վրը ճամբուն եր,
Արձկեց զտավար, երեց դեն.
Բռնեց զզընջիլ, հեծավ զձին,
Իտա դիեն կը քաշեր,
Զգութան կը հաներ սարու գլո՞խ,
Ու ընդիեն քաշեր, բերեր ցած,
Ու ըդ հրմալ Սեվ սարու գլուխն ը վե
Գլխվրավ, եկավ վրը Մառնիկ գեղի հնին։
Եկավ, տեսավ, որ գրմեշ մի պրծեր ե,
Եկե ճամբու վրեն ու թրքեր ե։
Ըդուր թրիք կը տեսնա, կ՚ասե.

«Ընձի թ'որ գավալ ա' եղնի՝ ըդուր Թրքոդիցն և.
Զեղնի՝ ըդուր Թրքոդիցն եմ։
Տեսավ՝ գրմեշ մի տըլի մեջեն ելավ։
Դավիթ՝ որ հրմլա բան ըսկի չըր տեսե,
Քաշեց զգուրզն ու կայնավ, որ գրմշուն զարկեր։
Մեկ հոտաղ ընդիեն եկավ,
Ու գրմշուն կը քրֆրեր։
Դավիթ գիցավ խը՛յ ուրան կը քրֆրե, ասեց.
— Լաո, յես քեզ ինչ եմ երե,
Որ ընձի կը քրֆրես։
Հոտաղն ասեց.
— Հըդ քըզի որն և, աղբեր.
Դու Սասնու ծռուն ես.
Դու դունյա չը՞ս տեսեր ես.
Յես իմ գրմշուն կ'ասեմ։
Ասեց.—Լաո, հորի՛ կը ոըգես.
Ամոթ բան և, յես հրմլա բան չըմ տեսե.
Ընդուրինն շատ կա ձըր երկիր։
Հոտաղն ասեց.—Արի, քըզի նշանց տամ։
Գացին Ավզուտա դաշտ,
Որ ընտեղ գութան մի գոմըշներով
Լծեր են ու կը քշեն։
Եկավ, տեսավ, որ գոմըշտան
Շոքուց գուրանց լեզուն թալեր են դուրս
Ու գութան կը քաշեն։
Դավիթի խեղճ եկավ ըդունց վրեն,
Աբձկեց զգոմշտանք ու տարավ գոլ.
Ու մանճկալն առ անիծեց ըդուր։
Ասեց Դավիթ.—Մանճկալ, մ'անիծե դիս.
Զըդ գութանի զրնչիլ տուր իմ ձեռք։
Բռնեց զզրնչիլ ու քաշեց.
Մանճկալ կայնավ վրեն՝
Ինն փութ զըվըրցուց զգութան։
Հոտաղն ասեց Դավիթին.
— Ըդի քո հրնար չե.
Իչի ձիու վրավեն, քաշե, տեսնենք,
Քո հրնարն և, քեն չե քո ձիուն։
Իչավ, տասն փութ լե առանց ձիու քաշեց։

Ըս անգամ մանճկալն ասեց.
— Դավիթ, դուրբան քըզի.
կես որ ե, նստի հաց կե ու նոր գնա։
Դավիթն ասեց.—Չե, յես կ'երթամ,
Թըզ հաց ձըր ճժեր ուտեն.
Յես ուտեմ՝ ուրանց բան չմնա։
Ախբր նստավ։
Ու յերոր հաց դրնցին,
Ինչ զըդըր հաց կեր,* ժողվեց,
Ու մեկ հաղ սրրեց ղբասեք ու դրեց բերան։
Հոտաղն ասեց.—Յրմանն, ելեք փախեք,
Եդի մարդ կ'ուտե հպա։
Դավիթն ասեց.—Լաո,
Հրլբաթ գութան քաշող հաց կ'ուտե, ինչ կ'ենե։
Ու ելավ բա տեղեն,
Խրստ երեց Խանդուդ խանրմն ու գնաց։

27. Դավիթն ու դռնապան Գորգիզը

Գնաց Խանդուդ խանրմի խանի դուռ.
Ընաեղն ե, որ բմեն ուզրնկներ կ'իգան, կ'իջնեն։
Եդ լե գնաց որ մարդու մեկ՝
Թոփուզ մի ձեռք՝ կայներ ե դուռ։
Դավիթ հարցուց ըդուր.
— Տո տրղա, քու անուն ինչ պտի եղնի։
Ասեց.—Իմ անուն Գորգիզ ե։
Դավիթն ասեց.
— Գորգիզ, յես Դավիթն եմ.
Յերոր յես Խանդուդ խանրմն առա,
Զքըզի կ'ենեմ ընձի քավոր։
Իգա անգամ ասեց.
— Քավոր Գորգիզ, որ կա ներս։
Ասեց.—Շըրրդան Խորասական,
Հրմգա Լոռա փահլեվըներու ուզրնկներն են եկե։
Ասեց.—Չիմ ձին քաշե, կապե դու։

* Կեր — կար։ Խ մ բ։

Քաշեց, կապեց։ Հարցուց.
— Իդա ի՞նչ թոփուզ ե զրած են քո ձեռք. հրմ իշեմ։
Ու ձեռքեն առեց զթոփուզ ու թալեց.
Ու դրռ հր՛լա կ'երթա...
Ու ասեց.—Քավոր Գորդիզ,
Ներս երթանք, ենենք կեր ու խում։

28. Դավիթն յեվ Շբրգան Խորասական ու Հրմզա Լոռու փահլեվանների ուզբեկանները

Դավիթ նսաավ, թաշկուկ ու անոթի յե.
Մեկ-մեկ կթխա գինի
Կը վերուն ըն մարդեր ու կ'իտան Դավիթին։
Դավիթ լե չկըռնա համբերե,
Հրմա կը վերու զգինու տաշտն
Ու զըմեն լե կը խմե ու կ'ասե.
— Դե, ասեք՝ Անո՛ւշ եղավ։
Գինին զԴավիթ վերուց, ու զԴավիթ տարավ։
Յերոր Դավիթ հրմլա կ'եղնի,
Ու գինուց գլուխ կը ցածցու գետնի վրրեն,
Ըն մարդեր զուրանց թրեր կը քաշեն, որ զարկեն.
Ու Յերոր գլուխ վի կը վերու,
Զթրրեր կը դնեն ուրանց չոգի տակ։
Հեզ ըմ լե որ հրմալ եղավ,
Քավոր Գորգիզ կանչեց.—Սանհե՛ր Դավիթ,
Հոդի ֆնաստուն ե, Վրաստուն չե։
Դավիթ Յերոր լսեց, ասեց.
— Գի՞դի, զդուռ բռնե՛։
Հրմա բդ մարդեր ելան ու փախան.
Ամեկ ճլոթ մի զարկեցին Գորգիզին ու փախան։

29. Դավթի յեվ Խանդուրի առաջին հանդիպումը

Ու Դավիթ նոր կանչեց զԳորգիզ.
Հարցուց զԽանդուդ խանըմ, թե.—Յո՞ւր տեսնանք։
Գորգիզն ասեց.— Խաս բաղչեն։
Ըսոր ուրբաթ ե,

Քսան ջառյա ուր առջևից ե, ու քսան լե՝ ետևից ե.
Ըսոր կ'երթանք, տեսնանք։

Գացին ոդման բազչի պատին,
Ու կայնան Դավիթն ու Գորգիզ։
Ջառեք մեկ-մեկ ընցան.
Եկավ Խանդուդ խանըմ։
Ձեռք թալեց Դավիթ Խանդուդ խանըմի վիզ՝
Ու երեք պագ առեց խանըմից։
Խանըմ չխոսաց։
Հեղ ըմ լե, ու Խանդուդ բռնեց գ'Դավթի փողպատ,
Ջարկեց ի պատ, արուն թալեց քթենն։
Հերսոտավ Դավիթ։
Ու ըդ տեղեն դարձավ,
Խոստ ուր սուրբ Նշանին, ու ձիուն, որ հեծնի։
Ու ասեց.—Քավոր Գորգիզ, քաշե գիմ ձին,
Որ ավրեմ գիդա քաղաք։
Գորգիզ ազաչանք երեց, թե.—կր խնդրեմ քենե,
Իդա վախտ թըզ Աստ. մութն ե, լուսուն.
Լուսուն ելի, ավրե ու դնա։
Դավիթ լե իր հերսից պատկեր ե վրր մահճքին.
Ել քուն լե չտանի, թե. «Ջեր կ'եղնի որ լուսնա,
Յես ելնեմ, ավրեմ գիդա քաղաք ու երթամ»։

Խանդուդ խանըմ լե բազչի մեջ սեյրան կ'ենե։
Թոփալ ջառեն եկավ, ասեց.
— Սեվ սեյրան եկե քո վրեն.
Դավիթ հանդե մրկա գքո պապու քաղաք կ'ավրե ու կ'երթա։
Կապեցին գուրանց բոզչեն ու դարձան.
Ու շիտակ եկան, խանի դուռ գարկեցին, որ բանան։
Դավիթն ասեց.—Ուհա, ուհա,
Ըդ ինչ արսըդ են իդա քաղքցիք.
Սրբըր չըն ենե Ժար առվրտուն,
Կ'ասեն՝ ըմկա ելի, ավրե ու գնա։
Գորգիզն ելավ աեսավ,
Դարձավ, Դավիթին ասեց.
— Ըդուննք քոլ են, կոտշով չենե։
Դուռ բացեցին. Խանդուդն եկավ մոտ Դավիթ։
Խանդուդն ասեց.—Դավիթ,

Դու պագ մի առար քո ճամբու խաթըր համար.
Մեկ լե առար քո խաթրի համար.
Մեկ լե առար Աստըծու խաթրու համար.
Զեվելի պազն հորի՞ առար։
Դու քո պապու կտրիճն ես, յես իմ պապուն։
Ասած են՝ Զաղջիկն ա՛ռ յեզդինուց,
Որ տըզեն եղնի քեռիսաան։
Խըյ Շըրըզան Խորասական,
Լորա Հըմզա փահլեվներու գլո՞ւխն ես բերե ընձի,
Որ եվելի պագ կ՚առնես իմ մոտեն։
Իդա անգամ Դավիթ կակղցավ, ու ասեց.
— Չունքի հրմալ ե, լուսուն յես կ՚երթամ,
Զընոնց գլուխ կը բերեմ քըզի։
Ու ասեց.—Յես հանդե կ՚երթամ.
Եղավ որ ընդոնք իմ վրեն զոռ եղան,
Թե զիս սպանեցին, թր դու զքո Աստված կը սիրես,
Արի զիմ ջանդակ ճանչցի.
Վըր իմ աջ թեվին Մսե խաչ մի կա,
Ճանչցի, վերու, բի, արի, պահե։

30. Դավիթն սպանում ե Շըրըզան Խորասական յեվ Լոռա Հըմզա փահլեվաններին

Դավիթն եր, ելավ ընկավ ճամբեն.
Փեհլիվաններ տեսան,
Որ ձիավոր մի ընդիուց կ՚իգա.
Ձիու թոզ երկինք կ՚ելնի։
Ասեցին.—Ըդ ձիավոր կռվի համար կ՚իգա.
Չդինանք բդի Սրգոյի* ճորտերո՞ւցն ե։
Կանչեցին, հարցուցին.—Ա՛յ մարդ, դու ի՞նչ մարդ ես,
Յո՞ւստա կ՚իգաս։
Չընք զինա՝ դու զԽանդուդ խանրմ կը ճանչնա՞ս.
Զըդա մատնիկ չը՞ս կռնա հասու ուրան։
Դավիթն ասեց.—Ազեկ կը ճանչնամ,
Ըմա յես եկեր եմ, որ ձըր գլուխ տանիմ Խանդուդին.

---

* «Սրգոյի» բառից հետո փակագծերի մեջ կա «սուրբ Սարգսի»։ Խմբ.

Յես չըմ եկի մատնիկ տանելու։
Ըդ Շրբըդան Խորասականի վերին ունք
Ենքան եր կախվի, որ եկեր եր, հասե վրը սրտին,
Ու չանգալով կապեր եր,
Ու զարկե ետեվանց վրը պառեկին։
Ըն մրկել Լոռա Հրմզա փահլիվանի ներքեվի մռութ՝
Զգետին կ'ավլեր ու կ'երթեր։
Առան իրար Դավիթն ու եդ երկու փահլիվան՝
Գուրզ ու քեմալով որ մի Յար իրիկուն։
Դավիթ կանչեց.

«Յա՛ հավատամ խոստովանիմ,
Բանձրիկ Մարաթուկ սուրբ Նշան,
Հիսուս վորդի, գու ոգնական»...

Ու զարկեց գերկուսի գլուխ լե կտրեց,
Ու գերկուսի բրչամ լե կապեց Յիրար,
Ու խուռջինի ավա թալեց վրը թարքին.
Ու ընգունց լեզուն կախված՝
Զգետին գութնի ակոսի ավա կը վարեր։

31. Դավթի յեվ Խանգուրի մենամարտը

Բերեց զըդունց գլխներ,
Եկավ ճամբու կես, տեսավ, որ մեկ ձիավոր
Մեջ երկինք մեջ գետին խառ կ'իգա ընդիեն,
Կանչեց վրը Դավթին.
— Հո՛, զքըզի քո վախտին հազրը պահե.
Շրբըդան Խորասական, Լոռա Հրմզա
Փահլիվընին ես ռաստ եկե։
Պառեկի թարաֆն առավ Դավիթից,
Գուրզ մի զարկեց։
Դավիթ զթամք դարտկեց։
Գուրզն առավ ձիու զանգուն, տարավ գետին։
Դավիթ մեկ լե շիտկավ վրը թամքին, ասեց՝
«Յա՛ հացն ու գինի, տեր կենդանի»,
Զգուրզ տարավ, որ զարկեր գլխուն,
Ըդի դճավ, ծամեր թափավ առջեվու։
Դավիթ տեսավ ու ճանչցավ, որ Խանգուդ խանըմն եր,

Ուր խըլըխ փոխեր եր, եկե Դավիթի առեջ։
Դավիթ ասեց.—Դել անզգամ, գլուխս կ'իգա,
Որ գուրզ մի զարկեմ, զքըզի իտամ գետնի տակ.
Ըդի լե երկու հեղ եղավ, որ բենամուս կ'ենես զիս։

32. Դավթի յեվ Խանդուրի ամուսնությունը

Առան զիրար ու դարձան Խանդուդի քաղաք.
Ու եկան, իջան։
Իդա անգամ կանչեցին զԽանդուդ խանրմի պապ.
Դավիթն ասեց.—Քու աղջիկ չը՞ս իտար ընձի։
Պապն ասեց.—Չը՛մ իաար.
Թե կ'առնես ու կը մնաս հոդա, կ'իտամ.
Թե կ'երթաս՝ չըմ իաար։
Հորի՞, իմ դուշման շատ են, կ'ավրեն զիմ քաղաք։
Դավիթ լե ասեց.
— Կ'առնեմ, մնամ հոդա. չըմ տանի, երթա։
Ըդրա վրեն՝ բերեցին, տվեցին,
Զուրանց պսակն երեցին.
Ու յոթն որ յոթ գիշեր հարսնիք եր։

33. Նորածին Մհերը ճոճում. նրա ձեռքի արյունը յեվ Դավթի դուշակությունը

Մեկ ժամանակ Յինք ընցավ.
Ինն ամիս, ինն որ, ինն սըհաթ որ թըմավ,
Ասաված ուրանց տղե մի ավեց։
Դավիթն ասեց Խանդուդ խանըմին.
— Թե որ ըդ տղեն ընձնից ե,
Ուր վրեն նշան մի, զորութեն մի տ'եզնի։
Բերեցին, զտըղեն խոնդախ երեցին,
Ու բերեցին զգութնի զընջիլ,
Բընդի տեղ փաթթեցին վրը տրղին։
Տղեն եր՝ Յեբոր լաց ու ճմլտկաց մեջ ճզորին,
Ըդուր վրավու փաթուկ զընջիլ կտոր-կտոր եղավ։
Զուղաբ գնաց Դավիթին,
Թե.—Տղեն լավ տըղա յե, զզընջիլ կտըրաեց,

Ըմա ուր մնկ ձեռք սազատ ե, խըփուկ և,
Ու մարդ չկըռնա բանա դուր ձեռք։
Ելավ Դավիթ, նատավ,
Ու զմանուկի ձեռք մաժնց, ու լացեց.
Տեսավ, որ գուլանթ մի արուն ուր ձեռվու մեջն ե.
Ասեց.—Հայ-հայ... գաշխարք արեր ե կաթ մի արուն,
Դրեր ե ուր ձեռվու մեջ։
Թ' որ ըզի ծնաց, ըդուր մոտեն գարմանալի բան տ'եղնի։
Բերեցին, գտըզեն լե կնըքեցին
Ու գանուն գրեցին Մհեր։

35. Դավթի վերադարձը Սասուն, խլաթցիների դիմադրությունն յեվ Դավթի յերդումը

Մնաց ժուկ մ' ու ժամանակ մի, տըղեն մեծցավ.
Դավիթ ելավ, գտըղեն թողեց ի Գաղզվան
Մոտ ուր մեծ պապ ու ճոչիկ,
Ու առավ գԽանդուդ խանըմն, ու խըսա երեց ի Սասուն։
Խլաթցիք լե ազգար ժողվեցին,
Ու բազան կապեցին ուր դեմ,
Ու սելերով մադարիս շինեցին, կռիվ կցեցին։
Խանդուդ խանըմ զմըզրըղի սուրուզը կը գարկեր՝
Զբազան կը քակեր,
Ու զսելեր կը թալեր երկու սհաթվան ճամբա։
Դավիթ լե կը ջարդեր զազգար ու կ'երթեր։
Դարձավ Դավիթն ասեց.
— Խլաթցիք, դուք ինչ բենամուս մարդ եք,
Որ արզի դեմ կռիվ կ'ենեք.
Թողեք, գիմ արզ տանիմ Սասուն,
Ու հըպա մ' լե իգամ կռվինք։
Ու ըդուենք չհավտըցան։
— Որ հըմալ ե, ասեցին,
Դե երդըվցի քո ծոցի սուրը նշան, որ ավտանք։
Դավիթ լե ձեռք գարկեց վըր սանդրին՝
Որ ուր խելքով գսանդը տ'երդվեր,
Ձեռք առ սուրը նշանին։
Ու սուրը նշանի հունար լե են եր,
Որ գինք պիտի չերդվըններ։

35. Աբամելիքի չեվ Շերմշրմի աղջիկը Դավիթն մահացու վերք և հասցնում. չեղբայրներն ոգնության են հասնում. Դավիթն ապաքում և իրեն վիրավորողին

Ու Դավիթ առավ գնանդուդ,
Ու տարավ ի Սասնու բերդ։
Ջեռք մտուց ի ծոցք, տեսավ,
Որ սուրբ նշան եր բնկի ըն Թարաֆի ծոցք.
Ու ինք զեն եր երդվըցե։
Ասեց. «Ե՛լ իմ բան բաթալ ե,
Երթամ լե բոշ, չերթամ լե.
Հմա ախըր տ'երթամ»։
Զարկեց, եկավ ի կռիվ։
Ու Խրլաթցիք գըդի նեղ լծեցին։
Ձին լորխավ ի Ջըդուբա շամր, մեջ տըլին.
Վար հասըլ ըդ տըլի միջեն իրլասավ,
Եկավ Լոխորա ջրի վրեն։

Ըդ վախտին որ Աբամելիք սաղ եր,
Աբամելիք նկեր եր Իբրահիմ աղի տուն,
Ու զորով գացեր եր եդ աղի կնկա մոտ.
Ու եդ կնկա անուն լե՝ Շերմշրմ խանըմ եր.
Ու բդուր մուեն եղեր եր աղջիկ մի,
Որ են լե բդունց ազգեն եր.
Եգ լե շատ հունարով եր։
Հա, ըդ աղջիկն եր առեր մեկ նետ ու աղեղ,
Նկեր եր բդ տեղու փրլերու մեջ Թախըլտվեր եր։
Դավիթ ըդ Լոխորա ջրի մեջ կը լողներ.
Ըդ աղջիկ գողտուկ նետ մի զարկեց Դավիթի պառկ.
Դավիթ ելավ կայնավ ու բոռաց.
Որ բոռաց՝ ձեն գնաց ի Սասուն.
Ջենով Ովան, Խոր Գուսան, Քնոի Թորոս,
Ճնճղափոքրիկ ու Ծուան Վնգին ժողվին դիրար։
Ջենով Ովան լե Սասնու բոռաց.
— Դավիթ, մրնք եկանք։
Ու եկան Դավիթի հավարին։
Դավիթ լե ըդ ջրի մեջ գուբ աղբոր ձեն լսեց։
Ըդունք լե եկան եդ ջրի խնչ, հասան Դավիթին։
Դավիթն ասեց.

— Զնում ոման, մենք որ բոռացեր ենք,
Էլի ահու հրմկա չորցեր ե.
Դաշնք, զրդի գանք
Դաշնցին, գոան, որ մնկ չինի աչքեր աղջիկ մի.
Բոնեց Դավիթ, գոտք դրեց վրը մնկ ոտվուն,
Ու քաշեց ճրվանց, թռնեց սարու տրկու գեղ.
Ու զրդ գեղի անուն դրեց Ճրվտիս-Ճապկիս
Ու եղ գեղ լե Հար հրմկա,
Յանդե Զրդուբա բնրան,
Ու անուն լե՝ Ճապկիս

36. Դավթից հետո Խանդութն իմմնապան ե լինում

Ու բդունք առին դԴավթի, ելան ի Սասուն.
Զորս ավուր լրման՝ Դավիթ մեռավ։
Ելան բդոր աղբրտանք, շեվր երեցին,
Որ գլխմրնի իտան Խանդուդին,
Ու բնդուր սաղութեն ասեցին.
Խանրմ լե ասեց.— Հը՛յ-հա՛ե...
Դավթիթից եսեվ լես տ՛եղնիմ իդոնց հավջա...
Ընճդափոքրիկն ասեց.
— Խանդո՛ւդ խանրմ, բը մըշ, բը մըշ,
Դավթիթ մրը, սարեմըն խոշ։
Իդա անգամ Խանդուդն ելավ բերդի գլխուն,
Ու յոնգցա դինք թալեց.
Ուր գլուխն առավ վրը քարին.
Ուր գլուխ ծակեց գքար.
Ու գլխու աեղ՝ Սասնու կես շնիկ կորեկ,
Կը լրլեն յինք ու ծեծեն, սանդի աեղ։
Ուր յոթ ճաղ ծամի աեղ լե՝ հրմկա կ՛երեվա,
Ու մկա լե բդ սանդ յանդ և բերդի առնջ։

37. Հուհղրայրենրը գալիս են Տարվոն. Մհներ Ջևնով Ախանի կանչով չեղնում և ներմնասենից, առնում և խրաբցիներից հոր մահվան վրեժը, ապա փոխվում և Ծոպաց բյուռ

Դոման Դավթի աղբբրտանք,
Ու եկան վրը Խանդուդ խանրմին։
Զեռ տվեցին խանրմի ձիձք,

Որ կաթ կեր, չընքլի որ ճիժ կեր։
Ելան ժողվեցին զիրար, ասեցին.
— Բրլքեմ ինչ որ եղեր ե, ըն աեղն ե։
Ու գացին, հասան ի Գազզրվան.
Ու տեղու նստողին ասեցին.
— Մըր ազրոր ու հարսին ըդ տեղ ճիժ կա. ուր ե։
Ըդոնք լե ասեցին.—Բան չկա։
Ըդ մարդիկ ասեցին,
Թը.—Մըզի նշան կա.
Մըր հարսի ծիծ կաթ կեր։
Մըկըլոնք ասեցին սորա,
Թր.—Աղջիկ մի ուր մոտից եզեր ե, ու մեռեր ե։
Ըդոնք լե ասեցին.
— Մրր մեռելնուն նշան կա.
Մրր մեկ տարեկան՝ մեկ շենքով ե.
Երկու տարեկան՝ մըր երկու շենքով ե.
Ու հըմլա...
Ելան գացին գերեզմըններ՝
Որ ուրանց շենքով գերեզման չկեր։
Ձենով Ովան ասեց.
— Բերեք, զկաշիք փաթեք Ժիս, որ յես բոռամ։

ԶՄհեր՝ մազազա յե շինած ի դետնի տակ.
Պահապան ե դրած վրր ուրան,
Ու զընի դրած ի ներս։
Ձենով Ովան փաթեցին կաշով, ու բոռաց։
Մհեր զուր ձեն հասկրցավ։
Մհեր երեց, որ պըտի ելներ, ճոչիկն ասեց.
— Ըդի ձըր ջընսի ձեն չե.
Ճրժերն են ու դահոլներն են. ընդոնց ձենն ե։
Մհեր երեք հաղ որ զձեն հասկրցավ,
Զարկեց, զդարգեն կոտրեց, ելավ դուրս.
Դարգեն զդարգեն կոտրեց.
Լանդեն որ զարկեց առջի դարգին,
Ընի առավ մրկելին, մրկել՝ մրկելին,
Զյոթ լե ջարգեց, ելավ դուրս։
Տեսավ, որ ուր հողբրտանք հոդ են, ու պապ հոդ չե։
Հարցուց հողբրտանց,

Որ խլաթցիք զուր պապ սպանած են։
Լաց, ու վըր քիթ ու բերնին ընկավ գուճ։
Որ ընկավ վըր գետնին,
Ըդուր հողբրաանք թափան վրեն՝
Իմալ երեցին, չկոցան շիտկեցին։
Մհերի արասուք զգեաին երեց հանդակ ու գնաց։

Իրեք որն որ թըմավ, Մհեր նոր շիտկավ։
Հեծավ զպապու քուռակ,
Ու գնաց ի Խլաթ, քար ու քանդ երեց։
Հըմլա կ'ավրե՛...
Ու կ'ելնե Նրմրութա գլուխ,
Կ'իշկե, որ ծուխ կ'ելներ. հաղ ըմ լե կը դառներ։
Տեսավ, որ պառվուկ մ' եր մանցի,
Զեն լե բռնեց, զամեկ ոտք կապեց մեկ ծառ,
Ու զծառեր թողեց. զեդ լե հրմալ սպանեց.
Խլաթա ծուխ ու մուխ կտրեց։
Ու ըդ տեղեն իզին տվեց հողբրաանց.
Գացին ուրանց տեղ.
Ու ինք գնաց Տոսպան բլուր։
Ու Յարի մկա լե կ'ասեն՝ են տեղն ե.
Ու ոմյա լե զուր ձին կը տեսնան.
Ու ըդուր ձիու շեռ ոմյա լե քարուց կ'իգա։

38. Վերջաբան

Համբարձման գիշեր Մհերի երի դուռ կը բացվի,
Ու հրամանք չկա, որ ելնա։
Գետին զինք չվերու.
Ոաքեր ի գետին կը ճըկի։
Որ ըմ լե նախրորդ մի Համբարձման գիշեր
Կը տեսնա, որ Մհերի դուռ կը բացվի.
Նախրորդ կը մտնե ներս։
Մհեր ըդուրից կը հարցու,
Թե.—Ի՞մալ դուք զաշխար կ'ուտեք։
Են լե կ'ասե.—Խելքով։
Կը վերու Մհեր ու կ'ասե.—Զըր խելքն ի՞մալ ե.

Դե գըդա ձիու տոպրակ վերու, գար գլուխ։
Նախրորդ իմալ երևց, չկոցավ վերուց.
Բերեց գձին տոպրկին մոտ,
Բերան բացեց, գձիու գլուխ մտուց ի՛նք.
Ու գթել թալեց վըր ձիու վգին,
Ու ձին բանձրցուց գգլուխ,
Ու նախրորդ քաշեց, տարավ, ուր տնղ կապեց,
Ու ասեց.—Մըր խելք հըմլա յե.
Մենք հըմլա կ'ուտենք գաշխար։
Ու նախրորդ հարցուց.
— Մհեր, դու ի՞ր տ'ելնես դդ տեղեն։
Էն լե ասեց.
— Ներոր ցորեն եղավ քընց ալուճ,
Ու գարին եղավ քընց մասուր մի.
Հրպա մ' լե հրամանք կա, որ ելնանք իդա տեղեն։

Իրևք խնձոր իջավ ներկնուց.
Մեկն աստղին, մեկ լսողին,
Մեկն լե ալամ աշխարին։



Սասնա Ծռեր

պատմեց

Վարդան Մուրադ

գրի առավ

Գարեգին Հովսեփյան



ԱՌԱՋԱԲԱՆ

Այս պատումը տպված և 1892 թ. Թիֆլիսում սույն հրատարակության Ա. հատոր Գ=Ե պատումների հետ։ (Տես գրանց առաջաբանը)։ Պատմողը Ապարանի Զամբլու գյուղից և։

Ծանոթությունների մեջ հիշված Ա պատումը Ապարանի Ափնա գյուղումն և գրի առնված, իսկ Բ պատումը՝ նույն շրջանի Ղազանֆար գյուղում։

Տողատումը նոր և կատարված։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա

ՍԱՆԱՍԱՐ ՅԵՎ ԱՍԼԻՄԵԼԻՔ

1. Սենեքերիմը պաշարում և Յերուսաղեմը, պարտվում և յեվ խոստանում իր Ասլիմելիք վորդուն մատաղ անել մեծ կուռքին

Ժամանակով մեկ թագավոր կ'եղնի, անուն Սենեքերիմ։
Սենեքերիմին երկու տղա կ'եղնի՝
Մեկի անուն Սանասար, մեկին՝ Ասլիմելիք։
Սենեքերիմ ինք կռապաշտ եր, տղեկներ աստվածապաշտ։
Խոշուն երեց ու գնաց Երուսաղամա վրեն կռիվ։
Յոթ տարի քաղքի բոլոր խոշուն չափրռնեց, նստավ։
Թանգուտեն ընկավ քաղքի մեջ։
Թագավորն, ուր* վազիր դավրեշ-խըլըզի եղան
Ու ընկան քաղքի մեջ, երկու** պառվու ռաստ եկան.
Տեսան, որ իրարու հետ կռիվ կ'ենին։
Հարցուցին թե.—Յորի կը կռվիք։
Մեկ պառավ վերցուց թե.—Դավրեշ բաբա,
Թանգուտեն ընկեր ա երկիր, հացներս ի խլըսեր ա.
Ընձի տղե մ՝ ունենք, բերեցի, մորթինք, կերանք։
Մկա ենի ուր տղեն չբերա, մորթինք, ուտինք։
Վերցուց թագավոր ուր վազիրին ըսեց.
Մեր թագավորուտեն իսկի մեկ թագավորուտեն ի չե։

---

* Այս բարբառում «յու» յերկբարբառը «ու»-ի յե փոխվում, որինակ՝ ուր, սուն, ձուն, առուծ, երկուղ, ալուր, ախպուր, արուն։ Գ. Ս.

** Բառի սկզբում «յե» միշտ «ե» յե դառնում, որինակ՝ երկու, երկիր, երդիկ, երկեն, եկեղեցի, երեխա, երկանք, Երուսաղեմ, եզ, երես։ Գ. Ս.

— Ըրա,* ըսեց, ինչ ենինք, վազիր։
— Յետ դառնանք, նստինք մեր թախտի վրեն։
Ու սկսեցին խեր ու խերլաթ ենել ու պատարագ ենել։
Պատարագն որ երեցին, պրծան,
Հրեշտակներ սրով, թրով իջան
Սենեքերիմի ասքարի մեջ.
Ո՛ւ ջարդեցին, ու սպանեցին, ու կոտորեցին։
Մնաց Սենեքերիմ մինակ.
Ու հեծավ մեծ դեվեն, ու փախավ։
Փախավ ու ճամբան ըսեց.
«Ո՛վ Ջոջ կուռք, Ասլիմելիք քրզի մատաղ»։

2. Սանասարն ու Ասլիմելիքն իրենց մոր խորհուրդով փախչում են

Ու եկավ, իջավ, ուր թախտին նստավ։
Ու խանչեց ուր ժողովուրդ, առավ, եկավ ու ըսեց.
— Բերեք, մեկ-մեկ տղա Ջոջ կոքին մատաղ ենինք։
Վազիր, վաքիլ, սինոդնիր ըսեցին.
— Ըսոր մըր** որ չե, ըրա մը՛ր՝ շաբաթ որ ե.
Պըղի շաբաթ որ մատաղ ենինք։
Մնաց չուրի գիշեր։
Մնաց չուրի գիշեր՝
Մեր*** Սանասարն ու Ասլիմելիք խանչեց,
Տարավ ուր կուշտ, ըսեց.
— Ո՛րտի, ձրզի մեկ խուրջին ոսկի վերցնք ու փախնք։
Ձրզի մատաղ կ՛ենա, փախնք։

3. Ծերբայրենին ապավինում են Ծուռատաղեմի չիվ Մուռ Բոզաճի բազավորենիին, բայց մնում են սպանում

Առան ու փախան. փախան չուրի լուսցավ։
Լուսն**** որ բացվավ, գացին Երուսաղեմ։

---

* «Ը» ձայնավորը յերբեմն «ը»-ի յե փոխվում, որինակ՝ ըրա (ապա), ընա-ըղուրդ (ուրիշ բարբառներում՝ աղուրդ), ըմեն, ըրնց, Ժըր (Յար, մինչեվ)։ Գ. Ս.

** «ը» ձայնավորը շատ բառերում «ը» յե դառնում, որինակ՝ մըր, ձըր, վըր (վրա), կրպտոտել, չընք (չենք), ըղուննգ։ Գ. Ս.

*** «Ա» յերկկաբարբառը դառնում է «ե», որինակ՝ «մայրը»—«մերը»։ Խ մ բ.

**** «Ոյ» (ուշ նոր ուղղագրությամբ՝ Ույ մ բ.) յերկկաբարբառը բառի մեջ միշտ ու յե դառնում, որինակ՝ լուս, քուր, ճկուռ, անուշ, բուն (բոյն)։ Գ. Ս.

Գացին Երուսաղեմա թագավորին,
Գլոխ իջուցին, թամանդա եղան ու կայնան առեչ։
Ու թագավոր հարցուց ըդոնց թե.—Ի՞նչ պըդի ձրզի։
Դարձան տղեկներն, ըսեցին.—Թագավոր,
Վերի դեն Աստված խասա ենք երի, ներքի գեն՝ քըզի.
Մըզի պահիս, պահպանիս,
Եդեվ* անցըման Աստված իրարուց չամչրցու։
Վերցուց թե.—Գուք վի՞ր տղեկներն իք։
Ըսեց.—Մենք Սենեքերիմ թագավորի տղեկներն ինք։
— Որ հըմալ ե, ըսեց, մենք չընք կրնա ձըզի պահե, գացեք։
Եդ տեղեն յետ դարձան, գացին, ճամբխու վրեն կայնան.
Ու միտք երին թե.—Դո՞ր երթանք։
Ըսեց.—Երթանք Մուշ՝ Մուշեղ թագավորի կուշտ։

Ու գացին, հասան եդ քաղաք։
Գացին, գացին, թագավորի առեչ** կայնան,
Գլոխ իջուցին, յոթ տեղով թամանդա եղան։
Ըսաց.—Ի՞նչ պակասուտեն ունիք, ո՞րտի։
Ըսեց.—Պակասուտեն չունինք, ըսեց.
Վերի դեն Աստվածն ենք ապավինի, ներքին դեն՝ քըզի.
Որ մըզի պահիս ու պահպանիս,
Քու աչք հովայի մըզի վրա եղնի.
Աստված իրարուց չամչրցու։
Ըսաց.—Ո՛րտիք, վի՞ր տղեկներն իք։
Թե.—Սենեքերիմ թագավորի տղեկներն ինք։
Ըսեց.—Մենք չընք իշխընա պահի,
Ենի զորընդեղ թագավոր ա,
Կ՛իգա, մեր առ՝ու հեսիր կը տանա։
Յետ դարձեք գացեք, չընք կա՛ընա պահե։

---

* Նախադրությունները շատ անգամ գրաբարի նման են դրվում, որինակ՝ եդեվ անցման, կ՛իգան Յառեջ ձըզի, Աստված խըտ քըզի եղնի, տղեն գնաց մըչ քաղքին ժուռ գալու, վրը իմ գլխուն, վրը իմ երեսին և այլն։ Գ. Ս.

** «Ա»-ի «ե» փոխվելը սովորական յերեվույթներից մեկն ե այս բարբառում, որինակ՝ Յառեչ, եվել (ավելի), ենել, կեր (կայր, կար)։ Գ. Ս.

4. Ծեղբայրներն ազբյուրի վրա իրենց բերդի հիմն են դնում

Ընկան ճամբախ ու գացին, ջրի մ' ատտ եկան.*
Տեսան, որ մեկ բարակ առու սարից կ'իգա,
Կը կտրի են ահագին գետ, կ'ընցնի
Ու կը խառվի հետ, կ'երթա։
Եդ երկու ախպեր մեկ-մեկու հարցուցին.
— Իգա բարակ առվի ղորուտեն ինչ ա, որ կ'իգա,
Կը կտրի, կ'ընցնի, կը խառվի հետ, կ'երթա։
Ստնատար վերուց, Ասլիմելիքին ըսեց,
Թե.— Որն որ իդոր ական ջուր խմե, հըմալ կտրիճ կ'եղնի։
Ու բռնեցին առուն ու գացին, դացին գլոխ առան.
Ու բերեցին, բերգի հիմ թալին, պրծան։

5. Ծեղբայրներն բնդունվում են Խլաթի Մնլոմոն թագավորի մոտ

Եդ տեղեն ելան ու գացին։
Ճամբախ մաշվարաթ երին,
Թե.— Արի մենք եդ շան անուն չիտանք.
*Քանի** որ մենք եդոր անուն տանք, մըզի պահող չկա։*
Գացին Խլաթա երկիր՝ Խլաթա քաղաք։
*Եդ Խլաթա թագավորի անուն լե Մելքոն*** թագավոր ա։*
Գացին, թագավորի առեչ կայնան,
Գլոխ իջուցին, յոթ տեղով թամանգա եղան,
Ութ դիանդա ձեռ կապին, կայնան։
Ու թագավոր հարցուց Թե.— Մրտի, ինչ պըդի ձըզի։
Ու տղեկներ ըսին Թե.— Թագավոր,
Վերի դեն Աստված ենք խաստ երի, ներքին գեն՝ քըզի.

---

* Ա. (Ափնա) վարիանտի մեջ այդ գետը վորոշված է. Մուրադ գետի մեջ և թափվում բարակ առուն։ Գ. Ս.

** «Ան» ձայնավորը յերբեմն փափկանում է և «էան» յերկբարբառին մոտենում, որինակ՝ քանի, կաբնամ։ Գ. Ս.

Մենք տառադարձում ենք այդ հնչյունը «ա», որինակ՝ քանի, կաբնամ։ Խ մ բ.

*** Ա. վարիանտով Ասլիմելիք, Սանասար ապաստանարան են գտնում Մխիթար Թագավորի մոտ։ Վարիանտի մեջ հայտնի չե, թե Մխիթարը վո՞ր յերկրի թագավորն եր։ Գ. Ս.

Մըզի պահիս ու պահպանիս,
Ֆու աչք հովալի վրա մըզի եղնի,
Ետեվ անցըման Ասաված իրարուց չամչըցու։
Ու թագավոր հարցուց եղ տղեկներուն.—Վ՚ի՞ր տղեկներն իք։
Տղեկներ ըսեցին Թե.—Մենք ըլեր ինք,
Վոչ հեր ինք տեսի, վոչ մեր ինք տեսի,*
Մըզի հրմլա բուդալա տղայ ինք տեսի։
Թագավոր ըսեց Թե.— Տարեք եղ տղեկներ,
Դրեք մեկ ոթախի մեջ։
Տարան, դրին մեկ ոթախի մեջ։
*Ու եղոնց դանեց-դան հաց կը տանեն։***

Ճ. Մեղոճ թագավորը վազիրի խորհրդով փորձում է յեղբայրների ուժը

Տարի մի քամամ պահին։
Տարին որ քըմավ, վազիր թագավորին ըսեց.
Թե.—Թագավոր, բեհդին յոր քու հաց կը կերցուս ըդոնց։
Ըսեց.—Ըրա ինչ ենինք, վազիր։
Ըսեց.—Որ մի բերիս, մեկ փորձիս ըդոնց,
Տեսնաս՝ մեջ հունար կա, թե չկա։
Թագավոր լե ըսեց.—Աղեկ կ՚ըսիս։
Ու խանչեցին տղեկներ, բերին թագավորին դիվան։
Ու թագավոր ըդոնց ըսեց,
Թե.—Ո՛րտի, լուսուն պըղի կոխվ երթանք։
Եդ աեղեն տղեկներ ելան
Ու գացին, նստան ուրանց ոթախի մեջ։

Մանցին, յարի լուսցավ։
Լուսուն բերեցին ամեկին
Մեկ-մեկ ձի տվին, մեկ-մեկ ձեռք սիլահ։
Ձիանք հեծան ու գացին մեյդան։

---

* «Այս» յերկբարբառ բառի մեջ և բառի վերջը, յերեք դիմորոշ հոդ ունի, «եր» յե դառնում, որինակ՝ հեր, մեր, ախպեր, սել, փեթ, ձեն, վերու (վայրենի), վրեն, տղեն, երեխեն, փեսեն։ Գ. Ս.

** Անցյալ անկատարի մեջ «ի» ձայնավորը գեղչված և բոլոր դեմքերում։ Գ. Ս.

Թագավոր լե ուր խոշունով եկավ։
Թագավոր վերցուց թե.—Սա՛նասար, ըսեց,
Խոշուն ա՛ռ, դու մեկ դեն կայնի.
Յես, Ասլիմելիք ու վազիր մեկ դեն կայնինք։
Սանասար վերցուց թե.—Եգմալ չե, Թա՛գավոր։
Ըսեց.—Ըբա ի՞մալ ա։
Ըսեց.—Յես, իմ ախպեր մեկ դեն կը կայնինք,
Դու, խոշուն՝ մեկ դեն։
Ըսեց թե.—Ֆու խոսքն եղնի։

Ու եկան, առան իրար կռիվ։
Թագավոր իշկեց, աեսավ,
Որ* ել խոշուն չկա, ըմեն ջարդած են։
Թագավոր վերցուց թե.—Վա՛զիր, քու տուն ավիրի՞,
Իմալ որ դու իմ տուն ավիրիր.
Աստված քու տուն ավիրա, ըսեց.
Չուր մկա եդոնք գինեն՝ մեր մեջ որց մարդ կա,
Մկա իդոնք մարդ ին, մենք կնիկ ինք։
Վազիր վերուց թե.—Որ հըմալ ե,
Քաղքից դուս երա, թըղ երթան։

7. Յեղբայրները Մելքոն թագավորից ոտանում են իրենց բերդի համար հիսուն տուն բնակիչ յեվ գնում, ավարտում են բերդի շինությունը

Ընդոց ընկեր տղեկներուց մեկ գնաց, ըսեց.
— Թագավոր ձեր վրեն հերսոտեր ա,
Չըզի քաղքից դուրս կ՚ենա։
Ընդոնք լե ուրանց տեղից ելան
Ու եկան թագավորի կուշտ,
Ու գլոխ իջուցին յոթ տեղով.
Ութ դիանդա կայնան առեչ, ըսին.
— Թա՛գավոր, մեր մեխքն ի՞նչ ա,
Որ դու մըզի քաղքից դուս կ՚ենիս։
Ըսեց.— Ո՛րտի, խոսք ե, բերնես ի դացիր ա,

---

* Բառի սկզբում «ո»-ն միշտ «օ» յե դառնում, օր (որ), օսկի, օտ, օխչար, օղորմուտեն։ Գ. Ս.

Ձըզի պըդի դուս ենիմ.
Յուցկա գացեք ձեր ոթախ ու միտք երեք,
Տեսնանք՝ որ կողմ կ'ուզիք, տամ ձըզի,
Գացեք, հոնի նստեք։*
Տղեկներ լե միտք երեցին,
Թե.— Երթանք ենգեղ, որ նշանգահ թալեր ինք,
Երթանք, ենգեղ շինենք։

Մանցին Յարի լուսցավ։
Լուսն որ բացվավ, եկան, թագավորի առեչ կայնան։
Ու թագավոր ըսեց.— Ո՞րտի,
Ո՞ր կողմ ուզեցիք, որ նստեք։
Ըսեցին թե.— Թագավոր,
Ֆլան տեղ, ֆլան ախպրի կուշտ հիմք ենք թալի,
Կը խնդրինք, որ տաս մըզի.
Մեկ քառսուն-իցցուն տուն լե տուր խըտ մըզի,
Երթանք, տընըվորվինք։
Թագավոր վազիրին ճամբեց քաղքի մեջ.
Իցցուն տուն տվեց քոչել։
Ու տղեկներ լե հետ ուրենց քոչին գացին.
Գացին, ենգեղ հասան։
Քոչեր ուրանց տուն շինին, նստան.
Տղեկներ լե ուրանց բերդ կը շինեն։
Տղեկներ որեն մեկի տուն հաց կ'ուտեն.
Վիր տուն որ հաց կ'ուտեն,
Ընդոր տաշտ ու մաղ կը կախեն։
Տարին թըմավ, բերդ եկավ գլոխ։

8. Մելքոն թագավորը Սանասարին պսակում և մի քաղաքացի աղջկա հետ յեվ բերդի անունը դնում և Սասուն

Սանասար վերուց, Ասլիմելիքին ըսեց.
— Կ'երթաս Մելքոն թագավորի կուշտ,
Քաղքի միջեն մեկ ախչիկ առնե, գա.
Ու տերտեր մի լե հետ վերցու, գա,

* Ա. վարիանտով յերկու յեղբայրներն իրանք են թագավորին առաջարկում գնալու համար։ Գ. Ս.

Ու բերե ախչիկ, պսակե իմ վրեն։
Ախչիկ մեկ տեղեն վերցուցին ու եկան։
Սանասար ըսեց.—Մելքոն թագավոր,
Մեր բերդի անուն դիր, նոր մտի բերդի մեջ։
Վերուց թագավոր թե.—Ձեր բերդի անուն՝
Սուն վըր սան—Սասուն։
Ու են բերդի անուն մնաց Սասուն։
Ախչիկ լե պսակեց Սանասարի վրեն։
Եդ տեղեն յետ դարձավ Մելքոն թագավոր ու գնաց ուր տուն։

9. Ասլիմելիքը յերազներից տանջվելով գնում և հոր քաղաքը

Սանասարն որ պսակվավ,
Ասլիմելիք ոկավ, ջոկ քնավ.
Յար եդ որ երկու ախպեր մեկ տեղ կը քնեն։
Ասլիմելիք քնուկ եր. մեկ լե տեսավ՝
Ջոջ Կուռք եղավ մեկ իծու որինակ,
Եկավ գլխու վերեվ ու մըկմըկաց,
Յարի լուս չթողեց քներ։
Մեկ ամիս թամամ եդմալ կ'եներ։
Ամիսն որ թըմավ,
Դեղնուտեն թափավ Ասլիմելիքի վրեն, հիվընդցավ։
Սանասար հարցուց թե.—Յորի իս հիվընդցե։
Ասլիմելիք լե վերուց թե.—Եդ մեկ ամիս
Ջոջ Կուռք չթողի՝ յես գիշեր քնիմ.
Կ'եղնի իծու պես, գիշեր կ'իգա,
Իմ գլխու վերեվ կը մըկմըկա, չթողի՝ յես քնիմ։
Յես կ'երթամ.
Յա իմ հեր ընձի պրդի մատաղ ենե Ջոջ Կռքին,
Յա յես իմ հոր։
Ելավ, ընկավ ճամբախ.
Գնաց, հասավ ուր հոր քաղաք։

10. Հեճիրեիմ թագավորը վտռնում և մտատպ անել Աալիմելիքից. սա սպանում և հորը յնվ նստում նրա տեղ թագավոր

*Որ գնաց, հասավ ի քաղաք,**
Ու ջվար տարան հոր, թե՝ Աալիմելիքն եկավ,
Են լե մարդ ճամբեց առնչ ու առավ, գնաց։
Տարան հոր դիվան. հեր բոռաց ու ըսեց.
— Բերենք, մեկ-մեկ տղա Ջոջ կոքին մատաղ ենինք։
Բերին մեկ-մեկ տղա Ջոջ կոքին մատաղ։
Ու Աալիմելիքին ըսեց.—Դո՛ր գացիր.
Դու չգիցա՞ր, որ գոր երթեր, Ջոջ կուռք քըզի կը բերեր։
Դե արի, ըսեց, Ջոջ կոքին երկրպագուտեն տուր,
Որ քըզի մատաղ ենիմ։
Առավ ու գնաց կոքի տուն։
Աալիմելիքն ըսեց.—Թագավոր,
Յես եգոր երկրպագուտեն չըմ տվի, չըմ գինա.
Դու արի երկրպագուտեն տու,
Տեսնամ՝ ի՞մալ կ՝իտաս,
Յես լե քըզնե սովրիմ ու տամ։
Թագավոր կղավ ու երկրպագուտեն տվեց,
Թե.—Իդա քավուր տուր։
Աալիմելիք լե քաշեց Թուր,
Ջարկեց, գլոխ կտրեց.
Գլոխ կտրեց ու քալեց դուս,
Ու մտավ կոքերու մեջ, ու ջարտեց։
Ջարտեց, ելավ դուս, ըսեց.
— Որն որ իմ Աստված կը պաշտա,
Թրդ գա, իմ Թրի տակով ընցնի։
Ֆաղաք քաղքով թափան ու եկան.
Եկան, ըսեցին Թե.—Դու ո՛ր Աստվածն որ կը պաշտիս,
Մենք լե են Աստված կը պաշտինք։
Բերեցին, Աալիմելիք գրին Թագավոր.
Նստավ թախտի վրեն։
Եղի Ճաց եղ տեղ.
Ճետ դառնանք, երթանք Մանասարի կուշտ։

---

* Նախգիրների գործածությունը գրաբարի նման՝ սովորական և այս բարբառում, որինակ՝ «գնաց հասավ ի քաղաք», «նախիր քշեց ի սար», «գացին

Ի

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱՄԵԼԻ ՀԵՏ*

11. Սանասարի վոդի Միհրն սպանում և առյուծին

Սանասարին եղավ մեկ տղա,
*Անուն դրին Մհեր։***
Մհեր որը դավուր ջոջըցավ,
Եղավ տըսնուհինդ տարեկան տղա.
Ուրեն ձի մ' սարքեց ու կ'երթեր ավրդուշ ենելու։
Ցերեկ կ'երթեր ավրդուշ ենելու,
Գիշեր կ'իգեր, ուր տեղ կը քներ։
Եղավ որ մեկ առուծ փայդա եղավ ճամբրներու վրեն.
Երթըցող, գալացող բիրադի կտրեց,
Մարդ չըր կ'ըրնա ճամբու հետ երթեր։
Սանասար, ուր իշխաններ նստան,
Միտք երեցին, թե.—Ի՞մալ պրդի մենք ապրինք,
Թանգուտեն ընկավ Սասունա մեջ։
Մհեր հարցուց ուր հոր,
Թե.—Յորի՞ թանգուտեն կ'ընկնի։
Հեր լե ըսեց թե.—Առուծ մի փայդա եղի ճամբու վրեն,
Ճամբորդ կարեց, երթըցող-գալացող չկա.
Ըսեց.—Ի՞մալ առուծ. առուծն ինչ ա, ըսեց։
Ըսեց.—Ջանավար ե, մարդ կ'ուտե։
Ըսեց.—Հեռվանց մարդ կ'ուտե, չե՞ մոտանաս՝ նոր։
Հեր լե վերցուց.—Ջե՛, որ մոտեցար, կ'ուտե։
Ըսեց.—Հրմալ ե, յես լուսուն կ'երթամ,
Ընձի թող ենի ջարտե։
Հերն ըսեց.—Ո՛րտի մ'երթա, քրգի կը ջարտե։

Ականջ չերեց ու գնաց.

Ի Ղարս. մինչեվ իսկ պահպանվել և նախդրի փոփոխության կանոնը, որինակ՝ «գեղ խոսքն ըսեց», «գրիագավորի աչչիկ կ'ուղիմ իմ տղին», «գիմ աեր հը սաղ-ցում»։ Գ. Ս.

* Բանահավաքն այստեղ ունի «Առուծաձև Մհեր» վերնագիրը։ Խ մ բ.

** Ա. վարիանտով Մհերը Ալիմելիքի վոդին և և վոչ Սանասարի. հորը սպանողն էլ Սանասարն է։ Գ. Ս.

Գնաց ու մոտեցավ առուծին։
Առուծ լե տեսավ, որ մարդ մի եկավ,
Ելավ եկավ ընդուր առեչ։
Երկու մարդ լե տղի հետ գացած են.
Են երկու մարդ հեռու կայնան,
Տղեն մինակ գնաց։
Գնաց, ու առան իրար։
Մհեր առուծին սպանեց,
Քաշեց, երկու կտոր երեց.
Մեկ դրեց ճամբու են խրաղ, մեկ են խրաղ։
Են երկու մարդն, որ հետ գացած են,
Եկան, կայնան Մհերի կուշտ։
Մեկ մարդ ջվաբ բերեց Սասուն Մհերի հոր,
Թե.—Քու աչք լուս եղնի,
Քու տղեն առուծին սպանեց։
Չուր մկա Մհեր եր,
Մկավնե յետ եղավ Առուծաձեվ Մհեր։

12. Առյուծաձեվ Մհերի ոիրականը յեվ նրանց վորդի Մորամելիքը

Ե մեկ մարդ լե Մհերի հետ գացին Ասլիմելիքի կուշտ.
Ասլիմելիք բեռներ կապեց, ճամբեց Սասուն։
Մհեր մնաց հոնի։
Որբեվերի կնիկ մի կեր հոն, եդ կնիկ սիրեց.
Եղավ մեկ տղա եդ կնկաց,
Անուն դրին Մորամելիք։

13. Առյուծաձեվ Մհերի ամուսնությունը Թեվա-Թորոսի աղջկա հետ յեվ նրանց վորդիները՝ Վեգոն, Ճնճղիկն ու Դավիթ

Եդ տեղեն Մհեր ելավ, եկավ Սասուն ուր հոր կուշտ։
Սանասար, ուր իշխաներ քոման ու նստան.
Սանասարին ըսին.—Քու տղեն Յոր չըս կարգի։
Մնաց լուսուն. լուսուն ելավ Սանասար
Ու գնաց Մելքոն Թագավորի կուշտ։

Սանասար ըսեց.—Թագավոր,
Մեկ ախչիկ քաղքից եղնի, գեղրանուց եղնի,
Գոնիս, տանինք, պսակինք Մհերի վրեն։
Մելքոն Թագավորն, ու վազիրն, ու Սանասար՝
Ամեկ մեկ ձի հնձան, ու ընկան ճամբախ, ու գացին.
Գացին Մանձկերտու բերդ։
Մանձկերտու բերդ Թեվա-Թորոս կա.
Գացին Թեվա-Թորոսի կուշտ,
Հարցուցին Թե.—Թեվա-Թորոս տո՞ւն ա։
Ըսեցին.—Թեվա-Թորոս գացեր ա վ՚ան։
Ագռաւգահ գացին վ՚ան,
Հարցին Թե.—Թեվա-Թորոս յո՞ղ ե։
Ընդոնք լե ըսին.—Ջե, բերդի հիմ քալեց,
Ագռաւ կերավ ու գնաց Արզրում։
Գացին կեսավուր Արզրում
Ու ենդեղ հարցուցին.—Թեվա-Թորոս յո՞ղ ե։
Ըսեցին.—Բերդի հիմ քալեց,
կեսոր կերավ ու գնաց Ղարս։
Ու գացին ի Ղարս։
Հարցուցին Թե.—Թեվա-Թորոս յո՞ղ ե։
Ըսեցին.—Բերդի հիմ քալեց,
Հրամեն կերավ ու գնաց Մանձկերտու բերդ։
Եկան, եկան, հասան Մանձկերտու բերդ։

Ջվաբ տարան, Թե.—Մելքոն Թագավոր,
Վազիրն ու Սանասար եկան քըղի կոնախ։
Են լե մարդ ճամբեց առնչ ուրանց, առավ ու գնաց։
Թագավորի տեղ ջոկ սարքեց,
Վազիրին ջոկ ու Սանասարին ջոկ։
Բերեցին, չայ իցկին ու բերին, խմին.
Ջալ խմին, պրծավ, հաց տվեցին.
Հաց լե կերան, պրծան, հաց վերցուցին։
Ու Թեվա-Թորոս հարցուց Մելքոն Թագավորին,
Թե.—Յո՞ր իք եկի։
Ըսեց.—Եկեր ինք,
Որ բարեկամուտեն ենինք իրարու հետ։
— Ի՞նչ բարեկամուտեն, բսեց։
Ըսեց.—Ջու աղջիկ պըդի տաս մեր տղին՝ Մհերին։

Ըսեց.—Մհեր որի՞դ ի աղեն ե։
Ըսեց.—Սանասարի տղեն ե։
Ըսեց.—Մելքոն Թագավոր,
Ցերոր եկեր իս, ախչիկ մի փեշքեշ երի ձրգի։
Ու բերեցին, գինի արագ դրեցին, խմեցին.
Ուրախուտեն երին.
Ուրախուտեն որ երին,
Ելան, պառկան, քնան։

Մնաց, լուսցավ։
Լուսուն բերին ախչիկ, հեծուցին ձին ու կալնան։
Ըսեցին Թե.—Ո՞ր դնենք հետ հարսնախպեր։
Ըսեցին Թե.—Քեռի Թորոսիկ
Բերեք, դնենք հետ հարսնախպեր։
Շնորհակալուտեն առան, բնկան ճամբախ.
Ու եկան, եկան, հասան Սասուն։
Ու բերին, պսակեցին Մհերի վրեն։
Պսակեցին, պըրծան, Մելքոն Թագավոր, վազիր
Յետ դարձան, գացին ուրանց տեղ։

Մհերին եղավ իրեք տղա.
Մեկի անուն դրեցին Ծոռան Վեդո,
*Մեկի անուն՝ Փոքրիկ Ձնձղիկ,**
Պստիկ տղի անուն լե դրեցին Դավիթ։

15. Աւյուծանել Մհերց իր վոշխիներին հանձնուտ և Մասումկիին պահելու. Մհերի կռակը

Սանասար մեռավ։
*Բերեցին, Մհեր գրեցին ուրանց մեծ։***
Տղեկներ եղան յոթ-ուրթ տարեկան։

---

* Ա. վարիանտով Քեռի Թորոսն ե հարսնախպերը, բայց հայտնի չե, Թե ո՞ւմ վորդին ե։ Գ. Ս.

** Ա. վարիանտով Մհերի յերրորդ վորդին Ձենով Հովանն ե, իսկ Բ. վարիանտով Ձենով Հովանը Դավթի քեռին և Քյաթա տերն ե։ Գ. Ս.

*** Ա. վարիանտով Մհեր վորսորդությամբ և աշխարհակալությամբ եր պարապում. «Ցեր որ ջոջցավ (Մհեր), ավ ու դուշ կ'ններ, կը բերեր Սասունցոց վրեն կը ցրվրեր. յոթ տարի պահեց»։

Մհեր գնում է Մովսասարն ու ձախըղջուկ քոդեն նվաճում և ժողովրդից հարկ է առնում։ Գ. Ս.

Մհերին քաֆիրուտեն փակեց.
Ելավ, իրեք տղեն վերցուց ու գնաց ի Մրսր։
Զուր մկա Մրսր Աելիմելիքն եր նստուկ։
Մհերի խորթ տղեն ելավ,
Աելիմելիքին սպանեց ու նստավ Մրսր,
Եղավ Մսրամելիք։
Մհեր առավ ուր իրեք տղեն
Ու գնաց Մսրամելիքի կուշտ։
Ջվար տարան Մսրամելիքին, թե.—Մհերն եկավ։
Մսրամելիք լե ելավ,
Մեկ թուփ կտավ գարկեց դոլթուդ,
Ու թուր լե թալեց վիզ,
Ու գնաց Մհերի առեչ։
Ըսեց.—Մհեր, իմ քաղքին դագմիշ մ'եղնի.
Իգա իմ թուր, իդա իմ վիզ գարկ, ըսեց.
Իդա թուփ կտավ լե փաթու ընձի։
Մհեր ըսեց.—Ջե, քո քաղքին դագմիշ չըմ եղնի,
Ցես եղ հաշվին չըմ եկեր ի։
— Ըրա ինչ հաշվին ես եկի։
— Եկեր իմ, ըսեց, իմ իրեք տղեն
Տամ քրգի, պահիս, պահպանիս։
Մսրամելիք լե ըսեց.
— Ճապաղջուրն ու Քոդեն* տուր,
Քու իրեք տղեն պահեմ։
Ըսեց.—Տվեցի։
Մսրամելիք տղեկներ իրեք լե առավ, գնաց։

Մհեր դարձավ, գնաց ուր տուն։**
Կսկըծվորավ, կսկուծ տվեց ուր սիրտ ու ենդեղ մեռավ։***

---

* Ա. վարիանտով Մսրամելիքը պահելու վարձ Մովսարն ու Ճապաղջուկ Քոդեն և ուզում։ Գ. Ս.

** Այս տողից առաջ բանահավաքն ունի «Դավիթ» վերնագիրը։ Խմբ.

*** Ա. վարիանտով Մհեր մեռնելուց առաջ՝ «Տարավ ուր ձեռնով թուր գարկեց կպրե կարսի մեջ, թե՝ իմ գինդի բադանի տղեկ կ'եղնին, ուրանց պետք կ'իցա։ Գեստեր լե դրին մնդկի մեջ, ու մեռավ։

Բ. վարիանտի մեջ Մհերի մահվան մասին այլ տեսակ և պատմվում։ Մհեր յերկու վորդի ուներ՝ Մսրամելիք՝ կռապաշտ և Դավիթ խաչապաշտ կնոջից։ մահվան րոպեյին Մհեր ամեն ինչ կտակում է Մսրամելիքին կռապաշտ

15. Սասունի սուգը Առյուծաձեվ Մհերի մահվան առթիվ

Սասունցիք Քեռի Թորոսկին
Բերեցին, դրեցին ուրանց մեծ։
Յոթ տարի սուգ կապեցին Մհերի Յեգեվ։
Քեռի Թորոսկին լե եղավ երկու տղա.
Մեկի անուն Խոր Մանուկ,
Մեկի անուն Զինով Ովան։

Սասունա իշխաներ ու տերտեր քոման
Ու եկան Քեռի Թորոսկի կուշտ.
Եկան, սեղան պատրաստին ու նստան։
Բերեցին, գինի դրեցին, տերտրրոջ ըսեց .
— Տերտեր, Մհերին մեկ «հոգոց» ըսե։
Հոգոցն որ ըսեց, պրծավ ու գինին սկսեցին ըլնալ,
Ու տվեցին Քեռի Թորոսկին.— Դե խմե։
Ու Քեռի Թորոսիկ առավ սաքան ձեռ ու միտք երեց.
«Իմ եթըմներ չուրի չերթամ, բերեմ,
Իդա բաժակ իմ բերան չառնիմ»։
Խոր Մանուկ ըսեց.— Քեռի Թորոսիկ,
Խմիս՝ խմե. չը՞ս խմի՝
Իզին տու, թըզ մարդիկ երթան։
Քեռի Թորոսիկ լե ըսեց.
— Հացն ու գինին, տեր կենդանին,
Չուրի յես իմ հեթըմներ չբերիմ,
Յես բաժակ իմ բերան չառնիմ։
Իզին երեց, մարդիկ ելան, գացին։

կնոջ ազգեցությամբ։ Դավթի մայրը, իմանալով այդ բանը, վազում և մեռնող ամուսնու մոտ և ազաչում և յուր վորդուն ել մի բան տալ.

«Քուռկիկ Ջալալին
Խաչ Պատարագին,
Թուրն ի Կեծակին,
Խուդեն Անդաբին,
Ծանրիկ Գուրզին,
Են լե փեշքեշ պարոն Դավթին»,—ասում և
Մհեր ու ավանդում հոգին։ Գ. Ս.

16. Քեռի Թորոսիկը գերությունից ազատում և Մհերի վորդիներին. Դավիթը չի անցնում Մսրամելքի թրի տակով. Մսրամելքի վախը Դավթից

Մնաց, Յարի լուսցավ։
Ու Քեռի Թորոսիկ ելավ, ընկավ ճամբախ.
Ու գնաց Մսրամելիքի կուշտ, ըսեց.
— Մսրամելիք, տուր իմ տղեկներ, տանիմ,
Ինչ որ պահեցիր, բոլ ե։
Ըսեց.—Քեռի Թորոսիկ, ըսեց,
Քու աղեկներ գան իմ թրի տկով ընցնին, ա՛ռ, գնա՛։
Քեռի Թորոսիկ լե ըսեց.
— Թըղ գան, ընցնին։
Մսրամելիք թուր քաշեց, կայնավ դուռ.
Տղեկներ լե եկան, որ պըդի ընցնեն,
Մեծ տղան Ցռան Վեգոն ե, յոթ գըմշու ղվաթ ունի,
Եկավ, խառ ընցավ.
Փոքրիկ Ճնճղիկ* յոթ գըմշու ղվաթ ունի,
Են լե վազավ, ընցավ։
Նորաթն եկավ Դավթին։
Քեռի Թորոսիկն ըսեց.—Դա՛վիթ,
Արի ընցի՛ Մսրամելիքի թրի տկով։
Ըսեց.—Չըմ ընցնի։
Քեռի Թորոսիկ հարցուց.—Յորի՛ չըս ընցընի։
Ըսեց.—Եղավ որ ժամանակ ընցավ,
Յես ու եդիկ հող ու ջրի շիրիգ ինք,
Մեր մեջ վեճ բացվավ ու կռիվ երեցինք.
Եդ ընձի թրով զարկեց, ըբա յես չզարկի՛մ։
Ըսեց՝ չըմ ընցընի յես ըդոր թրի տկով։
Քեռի Թորոսիկ քաշեց, որ զոռով տաներ, ընցուցեր։
Ու թոթվեց Քեռի Թորոսկին,
Քեռի Թորոսիկ գնաց, դեն ընկավ.
Ու Դավթի ըղունգ առավ քարին, ու կրակ տվեց։
Մսրամելիք կրակն որ տեսավ, վախեցավ, ըսեց.
— Ա՛ռ եդ խադալուն, ընձնե հեռըցի։

---

* Ա. վարիանտում միշտ Ճնճղիկ Փոքրիկ։ Գ. Ս.

Առավ իրեք տղեն, եկավ։
Բերեցին, վիճակ թալին,
Թե.—Ո՞ր մեկ թագավոր դնինք։
Վիճակ ընկավ Ցռան Վեգոյի վրեն.
Ու Ցռան Վեգոն բերին, գրին թագավոր։*
Դավթին լե բերին, երին նախրչի։

17. Դավիթը նախրորդ, տերտերի մոտ կարդալը, ընկեր նախրորդը, ժամի հարիսան յեվ ավազակ դեվերը

Դավիթ գնաց մեշեն,
Ուրան կոպալ մի փրցուց,
Ու դրեց վըր փիջին,
Եկավ, նախրի առեչ կայնավ,
Ու քշեց նախիր, հանեց սար։
Որն եջավ կեսոր, նախիր ժողվեց,
Բերեց, լցեց քաղքի մեջ։
Քեռի Թորոսիկ լարեց Յեդեվ.
Փախավ, մտավ տերտըրոջ տուն.
Սաղմոց վերուց, սաղմոց կ'ըսեր։

Մնաց Յարի լուսուն.
Լուսուն ելի եկավ, կայնավ նախրի առեչ.
Նախիր քոմեց ու քշեց ի սար։
Մեկ լե տեսավ, որ նախիր մի
Մեկ ուրիշ գեղից եկավ եդ սար։
Գնաց, են նախրի տավար ըմեն քոմեց,
Բերեց, խառնեց ուր տավրի հետ։
Նախրչին եկավ, ըսեց.—Դա՛վիթ, են տավար իմն եր,
Յո՞րի քոմեցիր, բերիր, խառնեցիր քու նախբին։
Ըսեց.—Չե՛, եդ իմ երեկվա տավրից ա մանցի եդ տեղ։
Ըսեց.—Չե՛, Դա՛վիթ ջան, իմ տավարն ե, քու տավար չե։
Երկուս եղան ախպեր։

---

* Բ. վարիանտով վոչ թե վիճակով ե Ցռան Վեգոն թագավոր դառնում, այլ Սասուն գալուն պես՝ «շուտ ելավ (Ցռան Վեգոն) բերդի գլոխ — յերեվի անդրանկության իրավունքով — Ճնճղիկ Փոքրիկ եղավ դարգավանչի, Ջինով Հովան լե մնաց տուն»։ Իսկ Դավիթ սկզբում տերտերի մոտ կարդում եր, հետո նախրչի յե դառնում։ Գ. Ս.

— Արի, ըսեց, Դավիթ, հով մի շինեմ՝ դու քնի,
Յես բմեն որ չուր իրկուն քու տավար կը պահիմ։
Հով մի շինեց, ու Դավիթ մտավ մեջ, քնավ։
Պահեց չուր Իրկուն.
Իրկուն տավար ջոկեց, տվեց Դավթին, բերեց քաղաք։
Քեռի Թորոսիկն եկավ, թե.— Դավիթ, արտի,
Յբմեն որ իդա վախտի բի։
— Թ'աղեկ կ'եղնի. բմեն որ իդա վախտ կը բերիմ։
Ու Դավիթ գնաց տերտերոջ տուն,
Ու ելի սաղմոց ըսեց։
Մնաց չուրի լուսուն.
Լուսուն ելի նախիր տվեց առեչ, քշեց ի սար.
Ուր ախպեր լե են դեն բերեց ու խառնեց իրար։
Նախրչին ըսեց.— Ա՛խպեր,
Ըսոր մեր գեղ պատարագ ե,
Դնա մեր գեղ, հրիսա կի,
Ա՛ո ընձի հրիսա, արի։
Դավիթ ելավ գնաց գեղ. են վախտ գնաց,
Որ ժամուց դուս են ելած ու եկած են, նստած։
Տերտերներ ու տիրացուք հրլա չեն եկած։
Ըսեց.— Հրիսա լյեք, յես ուտիմ,
Առնիմ իմ ախպորն ու երթամ։
Մարդու մեկն ըսեց.— Սաբր ըրե,
Ջուրի տերտերներ ու տիրացվեք իգան,
Նստին, հաց քաշին ու հաց որհնին,
Դու լե ուտիս ու քու քառասուն պապ լե, չխլըսի։
Եդ ել ինադ երեց,
Կոպալ իցկեց պղնձի կանթ,
Ու թալեց շալակ, ու տարավ սար։
Եկավ, տեսավ, որ ախպիր
Լնկեր ա քիթ ու բերնի վրեն, ու կ'իլա։
Ըսեց.— Ա՛խպեր, յոր կ'իլաս,
Ըոբկեր իս, որ աղն ու եղ չըմ բերի։
Ըսեց.— Արի, հրիսեն կի,
Իրկուն աղն ու եղ վրեն կի։
Ըսեց.— Ա՛խպեր, ինչ ենիմ հրիսեն.
Դու որ իդա տեղեն գացիր մեր գեղ,
Քառասուն դեվ եկան,

Քառսուն կով իմ նախրի միջեն ջոկեցին ու տարան.
Տարան, շրջին սարի են դեն։
— Դե՛, ախպեր, ըսեց, ելի՛, հրիսա կի, յես կ'երթամ։
Ախպերն ելավ նսաավ։

Եգի կոպալ դրեց թեվին
Ու ճամբախ տվեց առեչ,
Շրջավ սարի են ժերես։
Դեվեր տեսան, որ Դավիթն եկավ,
Փախան, մտան ժերի մեջ
Ու ջաղչի քար տվին դեմ ուրանց։
Դավիթ գնաց, տեսավ,
Որ քառսուն կով լե մորթած են,
Լցած են քառսուն կանթեն պղնձի մեջ
Ու ոջախ շինած են, դրած ոջխի վրեն,
Քլքլան կ'եփի։
Դավիթ վերցուց քառսուն կանթեն պզինձ,
Շրջեց կրակի վրեն,
Քառսուն կաշին լե ժողվեց, լցեց մրչ պղնձին,
Ու գնաց, կայնավ երի դուռ,
Քար քաշեց, թալեց մեկ դեն,
Ու — Դեվեր, ըսեց, մեկ-մեկ դուս արեք։
Դեվեր մեկ-մեկ դուս եկան.
Մեկ-մեկ կոպալ զարկեց ու շրջեց։

18. Դավիթը դեվերի քարայրում ձեռք և բերում Քուռկե Ջալին ու մեծ գանձ. նա հոգ և տանում ընկերի համար

Քառսուն լե սպանեց ու մտավ մրչ երին.
Գնաց, տեսավ, որ ըդոնց գոմ
Քառսուն հատ ձի յեր կապուկ։
Որ մեկի քամկի վրեն ձեռ կը ճխտեր,
Կը աղզեր ձեռաց տակ։
Գնաց վերեվ, մեկ քուռակ մ'եր կապուկ իրեք մինագ,
Ձեռ ճխտեց, ձեռաց հետ ըանձըրցավ։*

---

* Ա. վարիանտում Դավիթ ինքն իրան խոսում և. «Քեռի Թորոս, բիրադի քըզի, Քուռկե Ջալլաթին տաս ընձի»։ Գ. Ս.

— Ըհա, ըսեց, իդա իմ ձին և։
Եկավ, տեսավ, որ ուրանց նստվածք՝
Դուռնյի մալ-խաղինեն բերած են, լըցած.
Դարձավ ու դուս ելավ,
Ջաղչի քար տվեց դռան դեմ ու դարձավ։
Եկավ, կոպալն իցկեց պղնձի կանթ,
Ու թալեց փիջի վրեն,
Ու առավ, եկավ են գեղն, որ հրիսա յեր տարի.
Եկավ, որ հացկերուտեն երած են, պրծած,
Տերտըրներ հաց կ՚որհնեն։
Ըսեց.— Ձեն մ՚ենեք, ձրդի մեկ բան կ՚ըսիմ։
Կաշիք հանեց, թափեց.
Ամեկ եկավ, ուր տավրի կաշին ճանչըցավ։
— Դե, ըսեց, իդա պղինձ լե տարեք, ծախեք,
Բաժին երեք ձեր տավրի մսի տեղ.
Վաչ և եկի ձեր դլխուն, ըսեց,
Որ ճանգ մի կորեք իմ ախպոր հախից կտրիք,
Ձեր գեղ կ՚ենիմ Դավթի ավիրած։
Ըսին.— Ջհնրմ, առ քու խաղեն մրգնե հեռըցի,
Մենք քու ախպոր հախ չընք կտրի։

Եկավ, հասավ ախպոր կուշտ.
Եկավ, տեսավ՝ հրլա ախպեր կ՚իլա։
Ըսեց.— Ախպեր, յըր յե՞ք իլաս,
Դարդ կ՚ենիս, թե աղն ու եղ չըմ բերի,
Ելի հրիսեն կի,
Իրկուն դնա, աղն ու եղ լե վրեն կի։
Ըսեց.— Ախպեր, ինչ ենիմ,
Իմ նախրի միջեն քառսուն կով և տարած,
Յես չիլամ՝ ձր պըդի լա։
Ըսեց.— Տարեր իմ, կովերու կաշին տերըրտեր երերիմ։
Ըսեց, թամբի իմ երի՝
Մեկ ճանգ կորեկ քու հախից պըդի չկտրին.
Որ կտրին՝ ընձի բսե,
Կ՚երթամ, գեղ կ՚ենիմ Դավթի ավիրած։
Ըսեց.— Ելի իմ տավար ջոկե, յես երթամ։
Ըսեց.— Դըռ կեսոր ա,

Ես վախտ դո՞ր կը տանիս նախիր։
Ըսեց.—Չե՛, պըդի իմ նախիր ջոկիս, յես երթամ։

Ջոկեց նախիր, տվեց առէչ.
Ջշեց նախիր, լցեց Սասունա ձեջ։
Քեռի Թորոսիկն եկավ առէչ,
Թե.—Շուն-շան որտի, պլեճկերի տղա,
Իդա նախրի վա՞խա ա, որ դու բերեր իս։
Դավիթ լե վերցուց Թե.—Քեռի Թորոսիկ,
Մունաթ կ'ենիմ՝ րնձի նախրորդուտենից ազատ ենիս։
Երթանք, քըզի դուն յալըդի ձալ-խազինեն տամ,
Ընձի ազատ երա։*
Քեռի Թորոսիկ ըսեց.—Դե քելե, տեսնիմ։
Ու Դավիթ րնկավ առէչ,
Քեռի Թորոսիկ լե յեդեվ,
Գացին, ելան սար, հասան դեվերու յերին.
Մտան յերի ձեջ, քառսուն ձի կար հոնի։
Ու ձիան դուս քաշեցին,
Երսուն ու ին բարձան։
Ու Դավիթ Քեռի Թորոսկին ըսեց.
— Իդա մեկ ձին կ'իտաս րնձի։
Ջիու անուն լե Քուռկե Ջալին։
Երսուն ու ին ձին բարձան,
Դավիթ հեծավ Քուռկե Ջալին, ընկան ճամբեխ։
Եկան, հասան Սասուն.
Ու բերեցին, լցեցին թագավորի խազինեն.
Ու Դավիթ գնաց տերտրոջ տուն.
Սաղմոց առավ ձեռ, սաղմոց ըսեց։

19. Վ̇որսորդությունն յեվ իրաստատու Պատասվը

Մնաց յարի լուսուն.
Ուրին համար մեկ բազա բոնեց,

---

* Ա. վարիանտում Դավիթ շարունակ Քեռի Թորոսի հետ խոսելիս միա՛ն այս խոսքերն և կրկնում. «Քեռի՛ Թորոս, բիրազի՛ քըզի, Քուռկե Ջալլաթին տաս րնձի՛». իսկ Քեռի Թորոսը ոչինչ չի հասկանում և միայն քուռակը տ – նելուց հետո՝ գլխի յե ընկնում։ Գ. Ս.

Քուռկե Ջալին դուս քաշեց,
Ու հեծավ, ու գնաց ավըղուշ ենելու։
Գնաց արտ մի կորկի ռաստ եկավ,
Ու բազեն թոզեց մրչ կորկին,
Ու բավականի լոր բռնեց։
Առավ լորեր ու յեա դարձավ, եկավ տերտըրոջ տուն.
Լորեր իստըկեցին, եփին ու կերան։
Մնաց Ժարի լուսուն.
Ու Քուռքե Ջալին գուրս քաշեց,
Հեծավ ու գնաց կորկի արտնուվե։
Կորեկ Պառվուն եր. Պառավ ըսեց.
— Երթամ, իմ կորեկ տեսնիմ՝ լավ եղեր ա։
Եկավ, տեսավ, որ իրեք կորին տրորած, երած գետին։
Ըսեց. — Աստծու մեկիկ բարով,
Կորկի տրորող ընձի ռաստ կեր։
Դավիթ գնաց ձիով։
Տեսավ, որ են դեն Դավիթն եկավ, ըսեց.
— Գրողս քրզի տանի, Դավիթ,
Դու Ժորի՞, իրեք կորին տրորեցիր, երիր գետին.
Յոթ ջան ենք, յոթ կորի կորեկ եր ցանուկ։
Ըսեց, որ խոչաղ իս, Ժո՞րի չրս երթա,
Քու հոր ճապաղջուրն ու Քոդեն չրս ավիրի։
Ըսեց. — Վի՞ր ձեռն ա իմ հոր ճապաղջուրն ու Քոդեն։
Ըսեց. — Մսրամելիքի ձեռն ա։
Ձեռ տարավ ջեր, մեկ ճանգ ոսկի տվեց Պառվուն, ըսեց.
— Տա՛ր, քու երեխեք պահա, ընձի չանիծիս։
Պառավ որշնեց ու գնաց։

20. Դավիթը ճապաղջրում տիրաբար հարկ ե պահանջում Մսրամելքի ելից յեվ նրա ապրանքը քշում, բերում ե Սասուն

Դավիթ ձին քշեց, գնաց Քոդեն.
Գնաց, ելաղասու դուռն իջավ։
Ելաղասին կանչեց ուր ժողովուրդ,
Ու առավ, եկավ եդ տեղ։
Ու ժողովրդին ըսեց,
Թե. — Իդա մեր հին աղի տղեն ա, եկեր ա, ըսեց.
Ամեկդ ի ձեր կարողուտենի դորա,

Փնշքեշ բերեք մեր հին աղի տղին,
Ամեկ ուր կարոդուաենի գորա,
Փնշքեշ բերեցին Դավթին։
Դավիթ հարցուց Թե.—Եդ ինչ ե կ'իտաք ընձի։
Ելադասին բսեց Թե.—Դու մեր հին աղի աղեն իս,
Եկեր իս, քըզի փնշքեշ կ'իտանք։
Ըսեց.—Յես եկեր իմ,
Յոթ տարվան խարջ ու խարաջ կ'ուզիմ։
Որ յոթ տարվան խարջ ու խարաջ ուզեց,
Ալաչըզի փետեր քաշին ու զարկին Դավթին։
Ու Դավիթ հնծավ ուր ձին,
Մալն ու ոխշարն ու գեվեն քշեց, տարավ, լցեց Սասուն։

Որ բերեց լցեց Սասուն մալն ու ոխշար։
Քեռի Թորոսիկն եկավ առեչ, բսեց.
— Շուն-շան որտի, սլեճկերի տղա. եդ ինչ երեցիր։
Ըսեց.—Ի՞նչ իմ երի։
Ըսեց.—Յորի գացիր դու, ճապաղջուրն ավիրեցիր։
Ըսեց.—Ավիրեցի՝ իմ հոր մուլքն ա։
— Որ քու հոր մուլքն ա՝ ավիրեցիր,
Պիրաբադի ջվարն ու Խոզբադուն
Ի՞մալ պրդի տաս, բսեց.
Յես կ'երթամ Բանձրիկ Մարաթուկ աղոթք եննելու։
Դավիթ լև գնաց տերտրոջ տուն,
*Սաղմոց առավ ձեռ, սաղմոց բսեց։**

---

* Վարսարդությունը, Մերուժին, վարսահեղը, վանքի վերաշինությունը, տգա վանքի ավերումը յեվ տվերազների պատճառումը

Բ. վարիանտում Դավթի Ծովասար դնալը և Պիրաբադի ու Խոզբադնի (վարիանտում միայն Ղոզբադնի) գալն այսպես է պատմված։

*Դավիթ թռչնորսությամբ և պարապում և տրորում է Մերուժնու արտը։ Մերուժնին Դավթին հանդիմանելուց հետո ցույց է տալիս վորսորդության իսկական տեղը՝ Ծովասար (Մհերը վորսորդության տեղը)։ Դավիթ գնում է Ծովասար. չորս կողմը պատ է քաշած և վորսը կենդանիներով լիքն է. բայց քաջությանը գեմ համարելով պարապապատ սարի վերա վորս անելը, քանդում է պարիսպը և բնկնում մի վայրենի էխոչի (խոյի) հետեվից։ Խոյն անցնում է Ծովասարի մյուս կողմը, Մսրամելիքի ռեյ-ի (ժողովրդի) վրաններրի մեջ։ Դավիթ թողնում է խոյը և հարձակվում վրաններրի վրա։ Մեկի աչքն է հանում, մյուսի ծամն է կտրում, մեկելի ծիծը կտրում է և պատվիրում է Մսրամելիքին առել։ «Ուր կնկա լաչին ուր գլխուն եղնի, քրխ գա, կոխվ եննինք»։

Դավիթ վերադառնալիս մի էխանըրած» (ավերակ) վանք է տեսնում։

21. Պիրաբադին ու Խոզրադին հարձակվում են Սասունի վրա. Գևոի Թորոսիկն հանգիմանում է Դավիթին. Դավիթը ջարդում է զորքը, պատռհատում է Պիրաբադուն ու Խոզրադուն

Պիրաբադին ու Խոզրադին խոշուն երեցին,
Ու եկան Սասունա վրեն կռիվ.
*Ու Սասունա չորս կողմ փաթեց խոշուն, ու նստավ։**
Լուսուն Ցուան Վեգոն ելավ լվացվելու.
Տեսավ՝ աստղին հրաար կա, խոշունին հրաար չկա։
Ու փախավ, մտավ ներս, ու դարգահներ տվեց հողել։
Գևոի Թորոսիկ ելավ լվացվելու, իշկեց,
Տեսավ՝ աստղին հրաար կա, խոշունին հրաար չկա։
Գևոի Թորոսիկ եկավ ու տերտրոջ տուռ կալնավ,
Դավթին խանչեց, գուս հանեց ու ըսեց.— Շուն-չան որտի,
Յոթի գացիր, ճապաղջուրն ու Գոգեն ավիրեցիր։
Դավիթ լե ըսեց.— Իմ հոր մուլքն ե, ավիրեցի։
Ըսեց.— Քու հոր մուլքն ե՝ ավիրեցիր,
Ըմա Պիրաբադին ու Խոզրադին
Խոշուն երած, եկած ին քու վրեն։
Դավիթ ըսեց.— Ցես լե կ'երթամ, եդոնց կռիվ կ'ենիմ.
Ցա Աստված բնձի կ'իտա, յա ենոնց կ'իտա.

«Հացն ու գինին, տեր կենդանինն յերդվում ե տուն չգնալ, մինչեվ վանքը չշինեն վանքը նորոգելուց հետո քառասուն յերեց, քառասուն վարդապետ և քառասուն սարկավագ միաբան ե նշանակում, իսկ Ոհան Աղբակեցուն վանքի պահապան, վերակացու։

Մարամելիք իմանում ե Դավթի արարմունքը և Ղոզրադնին ուղարկում ե վրեժ առնելու։ Ոհան Աղբակեցին՝ խաբվելով Ղոզրադնի խոստումներով՝ անցնում ե նրա կողմը։ Ղոզրադինը վանքը կողոպտում ե և միաբաններին կոտորում ե. միայն մի սարկավագ ազատվելով՝ փախչում ե Դավթին պատմելու յեղելությունը։ Դավիթը կեր ու խում ուներ, յերբ սարկավագը ներս ե մտնում։

«Դավիթ նստի հացն ու գինին,
Եկան խաբին Ոհան Աղբակեցին,
Քառասուն երեց սպանեցին,
Քառասուն վարդապետ, քառասուն սարգավաք»։

Դավիթ, լսելով սարկավագի խոսքերը, խնկույն վազում ե թշնամիների հետեվից, Ոհան Աղբակեցուն յերկու կտոր ե անում, իսկ Ղոզրադնին, առաջներ ճակատին շարելով, ուղարկում ե Մարամելիքին... Գ. Ս.

* Ա. վարիանտով յեկողը միայն Պիրհաշն ե տաս մարդով։ Դավիթ նրա մարդկանց սպանելուց հետո, առաջները ճակատին շարած՝ Մարամելիքին և ուղարկում։ Գ. Ս.

Ու Բեռի Թորոսիկ գնաց
Աղոթք եղնելու Բանձրիկ Մարաթուկ։
Դավիթ Քուռիկ Ջալին դուս քաշեց ու հեծավ.
Բշեց խոշունի մեջ, խոշուն ջարտեց,
Պիրաբադին ու Խոզրադին բռնեց,
Ակռեք քանդեց ու շարեց ի ճակատ ուրանց,*
Ու հեծրցրցուց ձիանք ու ըսեց.
— Ջուար տարեք ձեր աղին։

Ջուար տարան Մարամելիքին։
Մարամելիք հարցուց թե.— Եդ ինչ որի իք ընդի։
Ըսեց.— Դավիթն և մըզի իդրմլա երի։
Ըսեց.— Դավիթ երեկու երեխեն ե,
Եդ իմալ ձըզի իդրմլայ ի երի։
Ըսեց.— Գինաս՝ իդա տեղի Դավիթն ե,
Մեկ անձնահուր մ' ե գարձի Դավիթ։

22. Մարամելիքը պաշարում և Սասուցը. Բեռի Թորոսիկը Դավթի համար բերում և մեկ սուրբ Նշան յեվ գնում և Մարաթուկ աղոթելու

Մարամելիք խոշուն երեց ու քոմեց։
Յոթ տարի խոշուն Երեց.
Հինխրդըր խոշուն երեց,
Որ աստղին հադին-հրսաբ կեր, խոշունին չկեր։
Խոշուն գիշեր քաշեց ու եկավ.
Մերն ու քուր լե հետն եկան։
Գիշեր եկան, հասան Սասուն,
Ու Սասունա չորս կողմ փաթեց խոշուն.
Հըմալ փաթեց, որ խոշուն եկավ, առավ իրար։

Լուսուն Ցռան վեկոն ելավ լվացվելու.
Տեսավ, որ աստղին հրսաբ կեր, խոշունին չկեր։
Յետ դարձավ, փախավ, մտավ ներս։
Բեռի Թորոսիկ ելավ լվացվելու։

---

* Յերբեմն հատկացուցիչը հատկացյալից հետ և դրվում գրաբարի նման, որինակ՝ շարեց ի ճակատ ուրանց, հաց ուրանց կերան։ Գ. Ս.

Քեռի Թորոսիկ եկավ, տեսավ,
Որ աստղին հադին-հրսաբ կա, խոշոռնին չկա։
Քեռի Թորոսիկ եկավ, կայնավ տերտրոջ դուռ,
Ու Դավիթ խանչեց, հաննեց դուս։
Դավիթ դուս եկավ։
Ու ըսեց.—Տո տղա,
Եդ ինչ ոյին եր, հանիր մըր գլոխ։
Ըսեց.—Ինչ իմ երի, Քեռի Թորոսիկ։
Ըսեց.—Գացիր ձա աղջուրն ու Քոդեն ավիրեցիր,
Հըլա ինչ իս երի։
Ինաս եդի Պիրաբադին ու Խոզրադին ա, ըսեց.
Եդի Մսրամելիքն և, Հընդա ամիրեն և,
Ու Բաղդըդու խալիֆեն և ու քու մեծ ախպերն և.
Դու բդոր չուար իմալ պըդի տաս։
Ըսեց.—Քեռի Թորոսիկ, եղածն եղեր և,
Բան և, պատահեր և, իմալ ենինք։
Քեռի Թորոսիկ ըսեց.
— Յես կ'երթամ Բանձրիկ Մարաթուկ,
Մեկ սրփ նշան մի կա հոնի, հանիմ ու բերիմ։
Սրփ նշան են տեղեն հաննեց ու բերեց.
Բերեց, տվեց Դավթին։*
Դավիթ համբուրեց, դրեց ծոց։
Քեռի Թորոսիկ հարցուց թե.—Դավիթ,
Ի՞մալ կ'երթաս կռիվ Մսրամելիքի հետ։
Ըսեց.—Քեռի Թորոսիկ,
Յոթ որ գառու միս, բրընձ-փլավ չուտիմ,
Մսրամելիքի հետ կռիվ չըմ ենի։
Ու Քուռկե Ջալին դուս քաշեց Դավիթ,
Հնձավ Քուռկե Ջալին։
Քեռի Թորոսիկ ըսեց.
— Մեկ թեթեվ բարդի ծառ մի ունիմ,
Դնիմ վըր փիչիս ու երթամ Բանձրիկ Մարաթուկ։
Ու գնաց Բանձրիկ Մարաթուկ,
Ծառ դրեց կշտի հետ, ու ադոթք երեց։

---

* Ա. վարիանտով Դավիթն ինքն է ստանում սուրբ նշանը, իբրև շնորհ. «Դավիթ ձին հնձավ, ուր գուրզ ու քաման վերուց, եկավ, եկեղեցին համբուրեց շիտակավ. պատ բլավ, մեկ հատ սրփ նշան դուս եկավ։ Դավիթ համբուրեց, դրավ ծոց»։ Գ. Ս.

23. Դավիթը վտանգը զգուշանում և Մարամելիի վրանի կտոհն ինվ յոթն որ հյուսուածովում Մարամելիից

Դավիթ ձին քշեց, գնաց խոշունի մեջ։
Իրեք որ շուռ եկավ խոշունի մեջ,
Մարամելիքի չադրը չըր գանի.
Գնաց, ու պտավ, ու տեսավ,
Որ չադրը կը բանձրնա, կը ցածրնա.
Լսեց. «կ'եղնի՝ իդա եղնի Մարամելիքի չադրը»։
Եկավ, ընդոր չադրի կշտի հետ ձիուց իջավ։
Ուրին մեկ ալգաի չադրը մի կեր,
Զարկեց Մարամելիքի չադրի կուշտ.
Ձին կապեց ուր չադրի դուռ,
Ու մտավ չադրի մեջ, քնավ։

Մարամելիք քնուկ տեղեն իմցավ.
Ուր քուրջ ճամբեց ջրի։
Քուր տեսավ, որ մեկ չադրը մի
Ուրանց չադրի կուշտ զարկուկ եր։
Լսեց. «եղ ինչ չադրը պրդի եղնի»։
Գնաց, տեսավ, որ չադրի մեջ մեկ մարդ կեր պառկուկ։
Գնաց, մոտեցավ, տեսավ, որ շատ խորոտ եր։
Ուր ջուր տանել մտրհան երեց,
Իրրուղ դարդակ տարավ Մարամելիքին։
Մարամելիք հարցուց թե.— Ա՛խչի,
Յոր ջուր չբերեցիր, դարդակ իրրուղ բերիր։
Լսեց.— Մարամելիք, մեկ մարդ եկեր ե,
Մեր չադրի կուշտ ուր չադրը զարկեր ա.
Դացի, են մարդ տեսա,
Ու մտեհան երեցի, ջուր չբերեցի։
— Որ հրմալ ե, բսեց, գնա, են մարդ խանչա, բի։
Մարամելիքի քուր գնաց
Ու Դավթին խանչեց, բերեց։
Ու եկավ, եդտեզ նստավ.
Յոթն որ բրընձ-փլավ ու գառու միս
Կերավ Մարամելիքի հետ։

24. Դավթի յեվ Մսրամելիքի մենամարտը. Դավիթն սպանում և Մսրամելիքին

Յոթն որ որ թմավ, ելավ, հեծավ ուր ձին,
Չադըր վերուց, եկավ տերտրոջ տուն։
Ուր շորեր փոխեց, ուրիշ շոր հագավ
Ու ուրիշ ձի մի հեծավ,
Եկավ, կայնավ Մսրամելիքի չադըրի դուռ
Ու ըսեց.—Յարո՛, քու վախտին հազըր կեցի։
Մսրամելիք հարցուց թե.—Ո՞րն իս դու։
Թե.—Յես Դավթի չիրուխչին իմ։

Դարձավ, եկավ Դավիթ.
Եկավ Քուոկե Ջալին դուս քաշեց, թամքեց ու գամեց,
Ուր շորեր հագավ, սրփ Նշան համբուրեց, ծոց դրեց
Ու ձին քշեց, եկավ Մսրամելիքի չադըրի դուռ։
— Յարո՛, քու վախտին հազրր կեցի։
Ըսեց.—Դու ո՞րն իս։
Ըսեց.—Յես Դավիթն իմ, Մսրա՛մելիք.
Ըսեց՝ Ելի՛, իդա տեղ կռիվ ենինք,
Յա՛ Աստված ընձի կ'իտա, յա՛ քըզի։
Ու Մսրամելիք սիլահվորավ, ու չադրից դուս եկավ։
Մսրամելիք Դավթին ըսեց թե.—Արի՛ կռիվ չենինք։
Ըսեց.—Չե՛, չե՛զնի, պըդի կռիվ ենինք։
Մսրամելիքն ըսեց.—Դա՛վիթ, ի՞մալ կռիվ ենինք։
Ըսեց.—Յես կը չոքիմ, դու թրով ընձի զարկ։
Դավիթ չոքավ։
Մսրամելիք ըսեց.—Դա՛վիթ,
Արի՛, յես քըզի կ'եղնիմ խուլ, կռիվ չենինք։
Դավիթ ըսեց.—Չեղնելոց բան ե,
Ընձի որ չոքրցուցիր՝ քու դըրբ զարկ։
Մսրամելիք մեկ թուր թալեց Դավթին,
Ու հարցուց.—Ի՞մալ իս, Դա՛վիթ։
Ըսեց.—Սրփ Նշանի զորուտենով
Ինչ որ ընձի լու մի խածե։
Ըսեց.—Արի՛, դըրբ մը լե զարկ։
Ըսեց.—Դա՛վիթ, քըզի կ'եղնիմ փոշեհան, կռիվ չենինք։
Ըսեց.—Չե՛, չեղնելոց բան ե,

Դըրդ մի զարկեր իս, մեկ լե զարկ։
Եկավ, մեկ դըրբ լե զարկեց,
Ըսեց.—Ի՞մալ իս, Դա՛վիթ։
Ըսեց.—Սըփ Նշանի զորուտենով
Ինչ որ մեկ լու խածե։
Արի՛, արի՛ են մեկ դըրբ լե զարկ ու պրծի։
Են մեկել դրբ լե եկավ, զարկեց։
Դավիթ թռավ, ելավ, կայնավ։
Ըսեց.—Դոր քո՛ւնն ե, արի՛ չոքի։
Բերեց ու չոքրցուց։
Դավիթ քաշեց ուր թուրն, որ պըդի զարկեր,
Մսրամելիքի մերն եկավ, թե.—Դա՛վիթ,
Եդ մեկ դըրբ բախշե ընձի։
— Ըհա՛, ըսեց, իդա մեկ դըրբ բախշեցի քրզի։
Ու թուր քաշեց, ելի պըդի զարկեր,
Քուրն եկավ, թե.—Դա՛վիթ,
Իդա մեկ դըրբ լե բախշե ընձի։
— Ըհա՛, ըսեց, քո՛ւրիկ,
Իդա մեկ դըրբ լե բախշեցի քրզի։
Ըսեց.—Բերեք, Մսրամելիք պառկրցունք,
Ինչ խրդրբ ձրզի թաղիս, կարպետ, փալաս կա,
Լցեք վրեն, ու ես իմ մեկ դըրբ պրդի զարկիմ։
Բերին, լցին վրեն։
Ու սըփ Նշան խանչեց, ու եկավ, զարկեց.
Զարկելուն՝ կտրեց, մեկ գազ լե իջավ գետին։*

---

* Բ. վարիանտի մեջ Մսրամելիքի կռիվն ու մահը այսպես ե պատմված. Մսրամելիք անձամբ գալիս ե Ղոզբադնու վրեժն առնելու և հարկը տանելու, բայց վոչ թե Սասունից..., այլ Խլաթից, ուր գտնվում ե Դավիթ և յուր քեռի Ձինով Հովան։ Մսրամելիքն ասում ե.

«Քառսուն կնիկ կ'ուզիմ մեկ բաժի, մեկ սըֆաթի.
Քառսուն ախչիկ կ'ուզիմ մեկ բաժի, մեկ սըֆաթի.
Քառսուն ձի կ'ուզիմ մեկ բաժ, մեկ ռանգ».

և ոգտվելով Դավթի բացակայությունից, ստանում ե պահանջները։ Դավիթ իմանալով յեղելությունը, գնում ե վրեժ առնելու, ճանապարհին յուր ուժը Պողպատե ծառի (փոխանակ սյան) վերա փորձելով։ Դավիթ հաղթում ե Մսրամելիքին, բայց ներում ե, զիջանելով Մսրամելիքի իշխանների խնդրին։

Դավիթ գնում ե «Գիլ գետա ջրի վրեն» լողանալու։ Մսրամելիքի մար-

25. Դավթի յնվ Ուրհվեղոց Պաղիկ թագավորի ուխտն իրենց ապագա զավակների ամուսնության մասին. Դավիթը Սիրում և Մարին

Ու հեծավ ձին, ընկավ խոշունի մեջ,
Խոշուն ջարտեց ու գնաց.
Գնաց, տեսավ, որ մեկ մարդ կայներ ա խոշունի առեչ՝
Ձին հեծուկ, մզրախ լե ձեռ։
Ջշեց ընդոր խոշունի վրեն։
Ըսեց.—Դավիթ, իմ խոշունին դագմիշ մ'եղնի։
Դավիթ հարցուց թե.—Դու որ կողմի մարգն իս։
Ըսեց.—Յես Արեվելոց կողմի մարդն իմ։
Ըսեց.—Դավիթ, իմ խոշունին դագմիշ մ'եղնի,
Արի, յես դու ահտ ու շարթ ենինք։
Ըսեց.—Ի՞նչ ահտ ու շարթ ենինք։
Ըսեց.—Մկա յես լե ազար, դու լե աղար,
Մենք որ կարգվանք՝ քրդի տղա եղավ, րնձի ախչիկ,
Իմ ախչիկ տամ քու տղին.
Ջրդի ախչիկ եղավ, րնձի տղա,
Ջու ախչիկ տուր իմ տղին։
Վերի գեն Աստված վկա բռնին,
Ներքի դեն լե Դավթի տկի ձին։
Ու ենի քաշեց ուր խոշուն, գնաց։
Դավիթ լե գնաց Մըսր, նստավ թագավոր։
Դավթի ձեն րնկավ ախշարք,
Թե իդըմլա մեկ խոչազուտեն երեց։

դիկը խարդախությամբ բռնում են Դավթին։ Ձինով հովան, մատանուց իմանալով Դավթին հասած վտանգը, փաթաթվում, և յոթ գոմշի կաշով և բոռալով հիշեցնում և նորան ազոթքը։

«Հիշամ քեզ հերն ի կենդանին,
Մարութա բանձր Աստվածածին,
Քաչն ը Գատարագին,
Դու պահապան եղնիս պարոն Դավթինց,

ասում և Դավիթ, և իսկույն շղթաները կտրատում, և ամեն մի ոդը մի մարդ և սպանում թշնամուց։ Դավիթ Մսրամելիքին յերկու մաս և անում, վորոնցից մեկը ձայն և տալիս՝ «Ձախով տեղ փորիր, աջով թաղիր», բայց Դավիթ աջով փորում, ձախով թաղում և։ Գ. Ո.

Խաբար ո՞րտեղեն տանք։
— Խաբար Կապուտկողից* տանք,
Խանդութ խանումից տանք։

Գ

ԴԱՎԹԻ ՄԱՀԸ

26. Դավիթը Խանդութի նամակի վրա ճանապարհ և ընկնում դեպի Կապուտկող

Խանդութ խանում խանչեց ուր Ջառին,
Գիր գրեց, թե.—Իգա գիր տար Դավթին։
Ջառի անուն լե ի՞նչ ե։—Ախչախըզ։
Ախչախըզ գիր գրեց ուր ծոց,
Ու ելավ, ընկավ ճամբախ։
Հարցուցելով եկավ, հասավ Մըսրը.
Ու բերեց, գիր տվեց Դավթին։**
Դավիթ գիրն առավ ձեռնեն ու կարդաց,
Գիր պագեց, գրեց իր գլխուն։
— Ա՛խչախըզ, արի նստի։
Ախչախըզին պատիվ ելեց,
Ու ելան պառկան, քնան։
Մնաց Յարի լուսուն.
Լուսուն Ախչախըզին ըսեց.—Դու գնա, յես կ՚իգամ։
Ախչախըզ գնաց, հասավ ուր տեղ։
Ախչախըզն որ հասավ ուր ՝տեղ,
Դավիթ Ֆուռկե Ջալին թամքեց, գամեց,
Ու գուս քաշեց, հեծավ, ընկավ ճամբախ։

27. Դավթի խաբվելը Չմըլկերից յեվ սրա բենը

Չմըլկեր սուլթան ուր շորեր հագավ, գլոխ կապեց,
Ու եկավ Դավթի առեչ։

---

* Մի պանդուխտ Սպարկերտցու ասելով՝ Խանդութի հայրենիքը «Բերդ Կապոտին» եր կոչվում։ Կապույտ անունով մի բերդ գտնվում և Կաղզվանի մոտերքը։ Գ. Ս.

** Ա. վարիանտով Դավիթ Մըսրում թագավորություն չի անում. Մըսրամելիքին սպանելուց հետո՝ նա վերադառնում և Սասուն և Սասունից գնում և Կապուտկող։ Գ. Ս.

— Դավիթ, ըսեց, արի երթանք, ըսոր ընձի խոնաղ եղի։
Ըսեց.— Ջե, կ'երթամ, ընձի ճամբուց յետ մ'իցկի։
Ըսեց.— Յես գինամ, դու Ջանդուխ խանումի արով կ'երթաս.
Հըմա Ջանդուխ խանում իմ ճրկըթի բարա չեղնի։
Ու Դավթին խարեց, տարավ ուր տուն.
կերան, խմեցին ու ելան, մեկ տեղ քնան։

Մնաց. լուսուն Դավիթ փոշմրնավ ուր բռնած բանից.
«Եդ ինչ բան եր յես բռնեցի,
Պըդի մըր ազգ չխարվեր.
Յես յոր խարվա մեկ ոլուշադի արով»։
Ու ձին քաշեց, ու հեծավ.
Ջշեց ուր ձին ու գնաց։
Ջմըլկեր սուլթան ըսեց.— Դու յավաշ,
Եկար, ընձի խարեցիր ու թողիր, գացիր։
Ու ինադ ընկավ։

28. Դավթի գութան աճելը յեվ շահակերությունը

Դավիթ գնաց, գութնի մի ռաստ եկավ.* բարեվ տվեց։
Հնդոնք լե Դավթի բարեվն առան։
Ըսեց.— Ա՛խպրտան, իդա տավար յարձըկեք, մեխք ին։
Ու յարձըկեցին տավար, երեցին դեն։
Մանջկալին ըսեց թե.— Արի, դու գութնի մանջ բռնե։
Մանջկալ եկավ, բռնեց մանջ։
Դավիթ լե բռնեց գութնի խարզնի գլոխ՝
Յոթ փաթ ձիով պտոտեց։
Եդ գութնի մարդկանց մոտեն մեկն ըսեց՝ ուր հունարն ե.
Մեկելն ըսեց՝ ուր հունար չե, ձիու հունարն ե։
Դավիթ ձիուց իջավ,
Յոթ փաթ լե ինք մինակ պտոտեց.
Դարձավ, հեծավ ուր ձին,
Ու շնորակալ եզավ ըդընցնե, ու պըդի երթեր,

---

* Ա. վարիանտով Դավիթ գութանին պատահելուց առաջ՝ պատահում ե բաղդըդու խալֆին, վոր Դավթի նման յուր նշանածը բերելու եր գնում. պայման են կապում, յերեք մեկին տղա լինի, մյուսին աղջիկ՝ տան միմյանց։ Գ. Ս.

Մանչկալն ըսեց.—Մ'երթա, գուբինի հացն եկավ,
Հաց ուտինք, նոր, Աստված քու բան աջոզա, գնա։

Ու Դավիթ ձիուց իջավ մեկ ել,
Ու ձին թողկեց արածելու.
Ինք եկավ, նստավ եզտնդ.
Հացն եկավ ու բերին, դրին Դավթի առնչ։
Զորս դարանոց քուլագ փլավ դրեցին Դավթի առնչ։
Երկու լոշ խաչ թալեց,
Ու աման սրբեց, մեկ բրգուջ ևրեց.
Ինչխըդդր որ հաց կեր, բիրադի կերավ.
Ու հեծավ ձին։
Եր մաքի մեջ խորուրդ ևրեց,
Ու հարցուց, թե.—Իրիկուն որ կ'երթաք,
Ի՞մալ կը սարքիք, առն կ'երթաք։
Բերեցին, գուբինի ակներ կանգըցուցին,
Ու գուբան վերցին, դրին ակներու վրեն,
Ճամբարակ, լծներ, բնադեն, խոփ, ձեվիչ՝
Բիրադի ուր թախտումով դրին վրեն ու կապին։
— Իդըմլա կը սարքինք,
Կը լծինք տավար, կը առնինք տուն, ըսին։
Դավիթ թուր քաշեց ու կայնավ գուբինի վրեն, ըսեց.
«Յես իմ թուր կը գարկիմ,
Թե կտրեց, կ'երթամ Խանդութ խանումին.
Թե չկտրեց, չըմ երթա»։
Ուր թուր գարկեց, մեկ գաղ լե գետին գնաց թուր։
Գուբինի տեր ըսեց.—Ա՛խպեր,
Յորի՛ իմ գուբան թըրբևցիր. յես ի՞մալ ենիմ։
Չևո տարավ ջևր, մեկ ճանգ ոսկի հաննեց,
Թե.—Տարեք, ձեր գուբան սարքեք։
Ու Դավիթ շնորհակալուտեն արավ,
Ու քշեց, գնաց Կապուտկող։*

* Ա. վարիանտով Դավիթ Ալաթից գալիս և գուբանավորների մոտ և այնտեղից գնում քաղաքը, Խանդութի հայրենական քաղաքը։ Քաղաքի գոները փակ էին, Դավիթ ասպանդակում և ձին և Խանդութի պարտեզը թռչում։ Մուրթան Գրմիժ հանդիմանում և Դավթին պարտեզը փչացնելու համար և պատժվում և իր հանդգնության համար։ Գ. Ս.

29. Դավիթն ու դռնապան Գորգին

Գնաց, հասավ կապուտկող։
Գնաց, մեկ խանի դուռ իջավ.
Խանչուն խանչեց ու դուս հանեց։
Խանչին ձին տարավ, կապեց ներս։
Ու խանչուն հարցուց, բսեց.
— Դո՛ր երթամ, իմ գլոխ պահիմ։
Ըսեց.—Յուգա մեր թագավորին մեկ խերիաթխանա կա
Գնա՛ հոնի, գլոխ պահա՛։
Գնաց եդ խերիաթխանի դուռ։
Մեկ դարգվանչի կեր դուռ կայնուկ.
Դարգվանչուն ըսեց.—Ճամբաս տուր, յես լե երթամ։
Ըսեց.—Զըմ թո՛ղի, անկարին կործ ե։
Որ բսեց չըմ թողի, երթաս ներս,
Հերսոտավ Դավիթ, չափալեխ մի գարկեց.
Զարկելուն՝ վիզ ծռվավ։
Ըսեց.—Դու ո՞րն իս, որ գարկիր չափալեխով՝ իմ վիզ ծռվավ։
Ըսեց.—Յես Մհերի տղա Դավիթն իմ։
Ըսեց.—Դավիթ դո՞ւ իս։
Ըսեց.—Հա՛, յես իմ։
Ըսեց.—Որ Դավիթն իս, Յո՞րի իս եկի։
— Խանդութ խանումի արով իմ եկի, ըսեց։
— Որ Խանդութ խանում առար,
Ընձի կ'ենի՞ս քավոր քրդի։
Ըսեց.—Ջու անուն ինչ ե,
Որ քրդի ենիմ ընձի քավոր։
Թե.—Իմ անուն Գորգի յե։
Ըսեց.—Որ եդ՞ալ ե, սան'եր Դավիթ, քավոր Գորգի։

30. Դավիթն ու թագավորի վոդիները

Քավոր Գորգին կայնավ դուռ.
Դավիթ ներս մտավ. մտավ ներս,
Տեսավ, որ յոթ թագավորի տղա նստուկ են ներս.
Սեղան դրած են ու կեր ու խում կ'ենեն։
Գնաց, յոթ թագավորի տղին բարեվ տվեց Դավիթ։
Տեղ տվեցին, նստավ։

Ու բերեցին սաքըները, զարկին գինու մեջ,
Մեկ-մեկ տվին Դավթին։—
Յոթ կանթեն պղինձ լցած, գրած են մեջ տեղ,
Մեկ-մեկ սաքան զարկին, տվին Դավթին.
Թե.—Խանդութ խանումի կենաց խմե։
— Դեվեն գրգլով կը ջրվե։
Ջեռ մեկնեց ու պղինձ վերուց,
Վերուց, գրեց բերնի վրեն.
Խմեց ու պղինձ գրեց մեջ տեղ։
Դինովցավ Դավիթ։
Յոթ թագավորի աղեկներ
Թրեր քաշին ու կայնան,
Ու պըդի զարկեն Քրով Դավթին։
Քավոր Գորգին գոնից խանչեց.
— Սան'եր Դավիթ, սան'եր Դավիթ,
Եդի հարանքի աուն չե, մահաուն ե.
Ճանճ գլխուցդի վերեվով կ'ընցնի, գլոխ Քռա։
Դավիթ հեշրցավ, Քուր քաշեց ու Քռավ, կայնավ.
Ու իդոնք Դավթի ահուց փախան,
Մեկ-մեկ դուս եկան,
Մեկ-մեկ չափալեխ զարկին Քավոր Գորգուն.
Քավոր Գորգու վիզ չվիզ ծռեցին։
Ու խանչեց Դավիթ.
— Քավոր Գորգի, արի մտի ներս.
Տուն Քնաց մըդի, բակ Քնաց հավերուն։

31. Դավթի նավ հասնելը առաջին հանգիպումը

Ըսեց.— Քավոր Գորգի,
Յես իմալ տեսնիմ Խանդութ խանումին։
Ըսեց.— Ուրրաքե ուրրաք Խանդութ խանում
Քառասուն ջառիով կ'իգա Խաս բախչեն։
Կ'երթանք հոնի, կը տեսնինք։
Մանցին չուրի ուրրաք.
Ուրրաք որ ելան, գացին Խաս բախչեն.
Ելան, գացին Խաս բախչեն, արեվ նոր տաքցավ։
Խանդութ խանում քառասուն ջառիով եկավ։
Քավոր Գորգուն հարցուց Դավիթ.

— Խանդութ խաթուն ո՞ր մեկն ա ըդոնց մեջ։
Ըսեց.— Խանդութ խանում ե՞ն ե,
Որ ըմ՞ի վըեն երկու թիզ բանձր ե։
Տվեց նշանք։
Դավիթ ելավ, գնաց ժառեջ ուրանց.
Գնաց, հասավ Խանդութ խանումին,
Գրկվավ, ոչ մեկ, ոչ երկու, ոչ իրեք,
Հարիր մի վրը իրար պագեց։
Խանգութ խանում ամչըցավ.
Հերսոտավ ու ձեռ զարկեց Դավթի դոշ ու զարկեց պատ։
Փնչներուց արուն թալեց։
Ու Խանդութ խանում ընցավ,
Գնաց Խաս բախչեն, մարմար հավուզի վրեն։
Դավիթ մ՞նաց հոնի։

Խանդութ խանում տկլոզցավ
Ու պըդի մտներ ջրի մեջ լողկներ.
Ըսեց.—Ա՛խչախըզ, տկլոզցի՛, արի՛ լոզկըցի։
Ըսեց.—Չըմ լողկնա։
Ըսեց.—Ժո՞րի չըս լողկնա։
Ըսեց.—Չըմ լոզկնա.
Մկա Դավիթ քու հոր քաղաք կ՚ենի Դավթի ավիրած։
Ըսեց.—Ա՛խչախըզ, վազի, գնա Դավթի կուշա,
Չուր յես իմ շորեր հագնիմ ու գամ։
Խանդութ խանում հագավ շորեր ու գնաց։
Երեսի արուն-մարուն լվացին,
Ու առան հետ ուրանց, գացին.
Տարան ուրանց ոթախ,
Հաց կերան, սիրտն առան։

Խաբար Ժո՞ւստից տանք։
— Խարար Լոռվա Համզից տանք։

32. Դավիթը սուրբ Սարգսի ու Քեռի Թորոսկի ոգնությամբ ազանում և ուզնկան փահլեվաններին

Լոռվա Համզեն դիր գրեց,
Ու ճամբխեց Խանդութ խաթունի հոր,
Ու ըսեց, թե. «Խանգութ խանում կը հագուս, կը խբուս,

Ու կը ճամբխես՝ գա ընձի հաճարը։
Թագավոր լե կանչեց ուր վաքիլ, վազիր ու ըսեց.
— Ի՞նչ կ'ըսեք իգա գրին, որ եկեր ա։
Ըսեցին.— Թագավոր, դու դինաս.
Իմալ գինաս, հրմալ երե,
Թագավոր ըսեց.— Բերեք ախչիկ,
Հագունք, խրունք, ճամբինք՝ երթա։
Թագավորի պոտիկ տգեն ըսեց.
— Թագավոր, ըսեց, երոր քու ախչիկ
Ճամբիս՝ երթա Համգա փահլեվին,
Հըրա Մհերի աղա Դավթի ջուգար իմալ կ'իտաս։
Թագավորն ըսեց.— Իմալ Մհերի տղա Դավթի։
Դացին ու խանչին բերին։
Եկավ, թամանդա եղավ,
Ու Թագավորի առեչ կայնավ։
Թագավոր ուր վաքիլ, վագիր շիվարան.
Թե՝ իգամլա լե մարդ կ'եզնի։
Ու բերեցին եդ գիր կարտըցին Դավթի առեչ.
Ըսեց.— Դավթի, լսեցի՞ր իգա գիր։
Ըսեց.— Լսեցի։
Ըսեց.— Կերնաս երթաս,
Համգա փահլեվի հետ կռիվ ենիս։
Ըսեց.— Կ'երթամ։
Ըսեց.— Որ ընդոր սպանեցիր, իմ ախչիկ քունն ե.
Թե դու սպանվար՝ կ'իտանք ընդոր։

Դավթի եդ տեղեն յետ դարձավ ու գնաց.
Գնաց ձիու կուշտ, ձին թամբեց, գամեց,
Ու դուս քաշեց, հեծավ,
Եկավ, կայնավ Խանդութ խանումի փանջարի առեչ.
Ու Խանդութ խանումին ըսեց.
— Խանդութ խանում, յես կ'երթամ կռիվ։
Թե.— Վի՞ր հետ կռիվ կ'երթաս։
Թե.— Համգա փահլեվանի* վրեն պըդի երթամ կռիվ։
Ըսեց.— Խանում, ուր կռիվ քառասուն որ կը քաշա,

---

* Ա. վարիանտում Դավիթ Խանդութի առաջարկությամբ և գնում «Լուռա Համգի, Շապոնց Խորասանուն» գլուխը բերելու։ Գ. Մ.

Քառսուն որն որ թըմավ,
Թե եկա, յես կ'իգամ.
Թե չեկա, դու կը հագնիս մարդանակ շոր,
Ու կ'առնիս քու պզտիկ ախպեր հետ,
Կ'իգաս իմ ջամդակ ջամդկներու մեջեն
Կը ջոկիս ու թազել կ'իաաս։*
Դավիթ ձին հեծավ ու քշեց.
Քշեց, գնաց, շատ քիչ Աստված գինա,
Մեկել տեսավ Յառջեվանց
Մեկ հըմալ թոզ ու դուման կ'իգա,
Որ Աստված ազատա։
Եկավ, տեսավ, որ սըփ Սարգիսն ե։**
Դավիթ գնաց, որ սրփ Սարգսին համբուրեր։
Սըփ Սարգիս ըսեց.
— Հանե՛ քու սըփ Նշան յես համբուրեմ,
Նոը դու ընձի համբուրե։
Հանեց սըփ Նշան, համբուրեց սըփ Սարգիս.
Են լե սըփ Սարգսին համբուրեց։
— Դե՛ գնա, ըսեց, Աստված խրտ քըզի եղնի։
Ու Դավիթ ուր ձին քշեց, գնաց.
Գնաց, տեսավ, որ առջեվանց
Մեկ թոզ ու դուման լե կ'իգա։
Եկավ, որ Քեռի Թորոսիկն ե։
Ըսեց.— Շուն-շան որաի, պլեճկերի տզա,
Մըկըր Սասուն ախչիկ չիկե՞ր,
Որ դու եկար Կապուակող մեկ ախչկա արով.
Գինաս՝ եդի Պիրբա՞գն ե, Խոզրադի՞ն ե,
Մսրամելիքն ե, Հնդա Ամիրեն ե,
Բաղգըդու խալիֆե՞ն ե ու քու մեծ ախպե՞րն ե,
Ըսեց՝ եդի Համզա փահլեվա՞ն ե,

---

* Բ. վարիանտում Խանդութ խաթունը Դավթին ճանապարհ դնելիս, պատվիրում ե Քարա դաշտը չգնալ կռվելու, այլ Զիմանին, վորովհետեվ Ողան-Տողան-Զանջլխռանը (ըստ վարիանտի), վորի հետ պիտի կռվեր Դավիթ, սեհրական ե. յերկնքի յերեսով գալիս, հարվածում ե հակառակորդին և դետին գլորում։ Դավիթը չի կատարում նրա պատվերն ու վտանգից միայն Զինով Հովանի ազդարարությամբ ե ազատվում, հիշելով Աստծու անունը։ Գ. Ս.

** Ա. վարիանտով սուրբ Սարգիսը Դավթին պատահում ե «Ջանգռվա դուրան»-ում, վոր մի սարահարթ ե Աբարանի և Լոռու մեջ։ Գ. Ս.

Ըդոր ճրկրթի մատնիք կ'եղնի քրզի ձեռաց բլազուկ։
Ըսեց.— Քեռի Թորոսիկ,
Եղեր ա բան ու պրծեր ա.
Պրդի երթամ կռիվ,
Յա՜ Աստված ընձի կ'իտա, յա Համզա փահլեվնին։

Ու քշեց ձին։
Քշեց, հասավ Համզա փահլեվնի քաղքի վերեվ։
Քեռի Թորոսիկ մնաց ազոթք ենելու։
Ձին թորկեց Քեռի Թորոսկի կուշտ
Ու ինք դնաց քաղքի մեջ.
Գնաց ու հարցուց Համզա փահլեվնի քոշկ ու սարեք։
Նշանց տվեցին։
Գնաց, մտավ ի ներս. մտավ ներս,
Տեսավ, որ Համզա փահլեվան նստուկ եր աթոռքի վրեն.
Գնաց, բարեվ տվեց. բարեվ առավ են լե։
Ու Համզա փահլեվան հարցուց, թե.— Ի՞նչ մարդ իս.
Թե.— Յես Խանդութ խանումի մարդն իմ։
Թե.— Յո՞րի իս եկի։
Թե.— Եկեր իմ, ըսեց, մեկ նշանարան մի տաս,
Տանիմ Խանդութ խանումի համար։
Համզա փահլեվան ճրկրթի մատնիք հանեց, թալեց,
Թե.— Ա՛ռ, տար Խանդութ խանումի համար։
Դավիթն առավ, եցկեց, ելավ, եկավ Յընթե տակ։
Հանեց, թալեց, թե.— Ա՛ռ, իդա ի՞նչ ենիմ։
— Ըրա՜ ի՞նչ կ'ուզիս, որ տամ, տանիս
Խանդութ խանումի համար նշանարան։
Ըսեց.— Քու գլոխ կ'ուզիմ, որ տանիմ
Խանդութ խանումի համար նշանարան.
Ուրիշ բան չըմ ուզի։*
Համզա փահլեվան հերսոտավ,
Ու ելավ, հասավ Դավթին։

---

* Դավթի այդ խոսքերին Ա. վարիանտով Համզան նկատում է Դավթին. «Դու Ծուռ Սրգո փոկերուց իս»,— դու Ծուռ Սարգսի սերնդից (՞) ես։ Գ. Ս.

«Փոկերուց» պետք է ուղղել «փոքրերուց», վորովհետեվ, ինչպես բանահավաք Ս. Հայկունուց լսել ենք, Սասնա ծռերը կոչվում են սուրբ Սարգսի փոքրեր, այսինքն՝ փոքրավորներ։ Խ մ բ.

Երկուս լե զվատով մարգ—
Հասան, առին իրար, բիրադի ջարտավ։
Դավիթ հերսլամիշ եզավ,
Ու քաշեց Համզա փահլեվնին զարկեց գետին,
Ու թուր քաշեց, գլոխ կտրեց,*
Թուր զարկեց մըչ գլխուն,
Ու դրեց փիջի վրեն, ու գնաց։
Գնաց, հասավ Քեռի Թորոսկի կուշտ.**
Հեծավ ուր ձին, մզրախ զարկեց գլխու մեջ,
Դրեց վըր փիջին, ու գնաց։

33. Դավթի ու Խանդութի մենամարտը յեվ ամուսնությունը

Զուրի երթալն ու գալն քառսուն որ թրմավ.
Քառսուն որն որ թրմավ,
Խանդութ խանում հագավ մարդանակ շոր,
Հեծավ մեկ ձի, սիլահ-ասրաբ վրեն կապեց,
Ուր ախպեր լե հետ վերցուց ու եկավ.
Եկավ Դավթի առեչ։***
Որ եկավ Դավթի առեչ,
Գլոխ ավեց Քեռի Թորոսկին։
Խանդութ խանում քաշեց ուր զուրզ
Ու Դավթին զուրզ մի զարկեց։
Դավիթ մարտալ տվեց գրզի գեմ.
Զարկեց Խանդութ խանում
Ու յետ դարձավ, փախավ։
Դավիթ ձին քշեց վրեն,

---

* Ըստ Ա. վարիանտի Լոռա Համզի գլոխն ու Շապգոնց Խորտսանու գլոխ կտրեց,—ուրեմն յերկուսի դեմ եր կռվում Դավիթ։ Գ. Ս.

** Ա. վարիանտով Քեռի Թորոսն ել ոգնում ե Դավթին այս կռվի մեջ-ահա վարիանտի իսկական բառերը. «Եկավ (Դավիթ), տեսավ, որ Քեռի Թորոս մեկ բանձր տեխ կայներ ա. ըսեց.—Քեռի Թորոս, Ժուդա մարդ տեսար փախնող։

Թե.—Զըմ տեսեր ի, հըմա քանի մի ժժմունք իդա ձորու մեջ լցուկ ա։

Եկավ, տեսավ, որ Քեռի Թորոս ուրնե շատ արունք երեր ա։

Ըսեց.—Քեռի Թորոս, կռիվ յես իմ երի, արունք զու շատ իս երի ընձնեց։ Գ. Ս.

*** Ա. վարիանտով Դավիթ Խանդութին պատահում ե Զանգռվա դուրանում։ Գ. Ս.

Ու գուրզ քաշեց, որ զարկեր.
Հասավ, որ զարկեր, Յեդրվանց ծամեր թողեց։
Դավիթ բսեց.— Հե՛ գիդի, ֆոզ,
Իգա լե երկու դագ կր բերիս իմ գլոխ.
Իգա գուրգ պըդի մնա իմ կշտես ի կախ,
Չուրի երթամ, զարկիմ քու հոր քոշկ ու սարին։
Գնաց, հասավ Կապուտկող.
Որ հասավ, գուրզ թալեց, քոշկ ու սարի բաղան բլուց։
Տարավ գլոխ, դրեց թագավորի առեչ։
Ու թագավոր բերեց դհոլչի, զուռնաչի,
Ու Խանգութ խանում իցկեց Դավթի եդեվ,
Տարան ժամ ու պսակեցին։

34. Դավթի վերադարձը Սասուն. Չմըլկեր սուլթանի աղջկա հրավերն ի կռիվ

Տարի մի ընցավ, մեկ տղա եղավ,
Անուն դրին Մհեր։*
Մհերն եղավ արսնուհինգ տաբեկան։
Դավիթ ելավ գնաց, թագավորին խնդրվավ,
Թե.— Ընձի իզին տաս, յես երթամ իմ քաղաք։
Ըսեց.— Որ կ՚երթաս, Աստված հետ քրդի եղնի, գնա.
Ըմա, բսեց, Մհերին չըմ իտա տանիս.
Մհեր մնա իմ կուշտ։
Դավիթ առավ ուր կնիկ ու գնաց։

Գնաց, հասավ Չմըլկեր սուլթանի հողի մեջ։
Չմըլկեր սուլթանի ախչիկ խոշուն երեց**

---

* Ա. վարիանտով այս Մհերի մականունը «Գզտիկ» և «աղի անուն դրեցին Գզտիկ Մհեր»։ Այսպես և կոչվում, յերեվի, Առուծաձեվ Մհերից զանազանվելու համար։ Յերեխայի ձեռքը խուփ եր, և յերբ հայրը սղմելով բաց արեց, մեջը լերդ-լերդ արյուն տեսավ.— «Իգա ընձնե շատ արունք պըդի ենա»,— դուշակեց Դավիթ։ Գ. Ս.

Գրի առնողն այստեղ «Գզտիկ Մհեր» վերնագիրն ուներ։ Խ մ բ.

** Ա. վարիանտով խլաթցիք են Դավթի առաջը կարում իրենց անպատվության վրեժը հանելու համար. Դավիթ Խանգութի մոտ գնալու ժամանակ սիրային հարաբերություն և ունեցել խլաթցոց սոֆու (իշխանի, աղայի) այրի կնոջ հետ։ «Սասունա ծուռ Դավիթն եղնես, դաս մըր աղի կնիկ սիրին. մըր կռիվ— կռիվ ա»,— ասում ելին խլաթցիք։ Գ. Ս.

Ու եկավ Դավթի առնչ.
— Յուգա կռիվ պըգի ենինք։
Դավիթ վերցուց ֆե.— Իմ հետ ոլուշաղ կա.
Իմ ոլուշաղ տանիմ, հասում ուր տեղ,
Ու յետ գառնամ, գամ, քու հետ կռիվ ենիմ։

35. Ամրկեր սուլթանի սղջիկը մահացու վերք է հասցնում Դավթին. Աստված ծուռեն օգնության են հասնում

Տարավ Խանդութ խանումին, հասուց ուր տեղ.
Իրկուն մտավ մրնչ տեղին, քնավ։
Մնաց Յարի լուսուն։
Լուսուն հեծավ ուր ձին,
Ու եկավ Ամրկեր սուլթանի քավշան,
Որ պրդի կռիվ եներ։
Եկավ, տեսավ, որ խոշուն հոն չեր.
Որ խոշուն հոն չեր, ձիուց իջավ,
Ձին թորկեց մեկ աեղ ջրի վրեն,
Ու Յինք շորեր հանեց, որ լողկնա,
Ու ուրին թալեց մըչ ջրին։
Ինք որ լողկնալու հետն եր,—
Եդ ջրի պռուկ խամբշլրդ եր,—
*Զարկին մդրբխով ուրին։**
Բռռաց Դավիթ, ձեն գնաց Սասուն։
Քեռի Թորոսիկ, Փոքրիկ Ճնճղիկ,
*Ծոան Վեգոն, Խոր Մանուկ, Զինով Հովան,***
Բիրադի քոման ու եկան եդ տեղ, կայնան,
Ու բսեցին.— Դավիթ, եդ ո՞ր զարկեց քրգի։

---

* Ա. վարիանտով Դավիթ փախչում է պատերազմից, վորովհետև չեր կարողանում կռվել, խլաթցոց յերդվելիս պատահմամբ ձեռքը «համայլի» (նրա ծոցում համայիլ և սանր կար) վերա դնելու պատճառով։ Նա կամենում է անցնել կամուրջով, բայց իմաստուն ձին չի անցնում (սիրոդի աղջիկը կարմրնջի տակն եր)։ Դավիթ ձին գետի միջով քշում է, ձին խրվում է ցեխի մեջ և յուր շորերն էլ ցեխոտվում են. մինչդեռ, ձիուց իջնելով, մաքրում եր յուր հագուստը, սիրոդի աղջիկը նետ ու աղեղով սպանում է Դավթին։ Գ. Ս.

** Ա. վարիանտով Դավթին ոգնության են գնում Քեռի Թորոս, Ծոան Վեգոն, Ճնճղիկ Փոքրիկ, Զինով Հովան, Ճոո Վիրապ, Խոր Վիրապ, Խոզրադին (*)։ Գ. Ս.

Ըսեց.— Զըմ դինա, որ զարկեց.
Խամբշներու միջեն մեկ ելավ ու զարկեց։
Գացին խամբշներու մեջ.
Գացին, գտան, տեսան՝
Դավիթն որ բոռացեր եր, մեռեր եր ահու։
Եդ ախչիկ Զմըլկեր սուլթանի ախչիկն եր.
Դավիթն որ իմացավ՝ Զմըլկեր սուլթանի ախչիկն եր,
Ըսեց.— Եդ իմ սերմն եր, որ ինձ սպանեց։*

36. Դավթից հետո Խանդութի ինքնասպան և լինում. թաղումն ու սուգը

Դավթին վերցուցին ու եկան։
Ցռան Վեգոն առեչ եկավ.
Եկավ, Խանդութ խանումին ըսեց,
Թե.— Խանդութ խանում, Դավիթ մեռավ, լես քըզի անուշ։
Խանդութ խանում որ սպանելու ձեն լսեց,
(Զ)ինք լե վերեվանց թալեց ցած ու ընկավ, մեռավ։
Դավթին առան, եկան, բերին, հասուցին եդ տեզ.
Եկան, տեսան, որ Խանդութ խաթուն ընկեր ե ու մեռեր։
Քեռի Թորոսիկ ըսեց.
— Եդ ո՞րն ըսեց, որ զինք թալեց ցած, մեռավ։
Ըսին, թե.— Ցռան Վեգոն ըսեց։
Ըսեց.— Յո՞րի չսըբրար, չուր գենք հարցուցենք՝
Երեխա եղե՞ր ա, չեղե՞ր ա։
Գացին, տեսան, որ ծծերուց կաթ կ՚իգա.
Ըսին.— Որ հըմալ ե, եղե՞ր ա։
Բերին, երկուս լե պատընքեցին,
Ու տարան, հորեցին։
Յոթն որ սուգ կապեցին։

---

* Բ. վարիանտի մեջ Դավթի մահն այսպես ե պատմված՝ «Դավիթ յուր քեռու՝ Զինով Հովանի վորդու հարսանիքն եր գնացել, յերդվելով կնոջը՝ քառասուն որից հետո անպատճառ վերադառնալ։ Յերդվելիս սխալմամբ ձեռքը, փոխանակ սանրի, Խաչ Պատարագի վերա յեր դրել։ Սուլթան Գըմիժ թունավորված նետ ու անեղով սպանում ե Դավթին, յերբ վերադարձին պիտի անցներ Մեդրագետի կամրջով։ Քուռկե Ջալալին Դավթի դիակը բերանով մինչեվ Սասուն ե տանում։ Գ. Ս.

Դ

ՊՈՏԻԿ ՄՀԵՐ

37. Մհերը կապուտկող չեկած ձուների կանչով յոլաում ճերմակացից, գալիս Սասուն չիվ ապա Ձմբլկերից առնում հոր մահվան վրեժը

Բեռի Թորոսիկ խանչեց ուր տղեկներ.
— Երթանք, առնենք մեր տղեն, գանք։
Ու Բեռի Թորոսիկ, Ծոան Վեգոն, Փոքրիկ Ճնճղիկ,
Ֆոր Մանուկ, Ձինով Հովան գացին, հասան կապուտկող։*
Գացին Թագավորի կուշտ ու բսին.— Թագավոր,
Մեր աղեն տուր, առնինք. Դավթին սպանեցին։
Թե.— Ո՞ր սպանեց։
— Ձմբլկեր սուլթանի ախչիկն, բսեցին, սպանեց։
Թագավորն բսեց, Թե.— Տղա չեղեր ա Դավթին։
Ընգոնք բսեցին, Թե.— Եղեր աւ
— Հա, բսեց, եղեր ա, բմա մեռեր աւ
Բեռի Թորոսիկն բսեց.— Որ մեռեր ա,
Մենք մեր ջնսի գերեզման կը ճանչնանք.
Յոթ շենք և երկենք։
Ըսեց.— Բելեք, երթանք, տեսնանք։
Գացին, տեսան, որ երկու շենք չեր եղնի,
Ու բսեցին.— Թագավոր,
Մեր տղեն գո՞ր ա, տուր, տանինք.
Եդիկ մեր ջնսի գերեզման չե։
Թագավորն բսեց, Թե.— Չկա։
Բեռի Թորոսիկն բսեց.
— Բռռա, Ձինով Հովան։
Ձինով Հովան բռռաց մեկ.
Որ բռռաց, ձեն գնաց, հասավ Մհերին։
Մհեր տարած են, յոթ գարգրհով ներս են կոխած,
Դհոլ-զուռնա կը գարկեն,

---

* Ա. վարիանտով կապուտկող գնացողներն են՝ Բեռի Թորոս, Ձինով Հովան, Ճնճղիկ Փոքրիկ, Ծոան Վեգոն, Ճոռ Վիրապ, Ֆոր Վիրապ և Ֆոզ-Բաղինե Ֆոզ-Բաղնի այստեղ հանդես գալը Սասունցիների հետ, մենք պատմողի հիշողության սխալն ենք համարում, քանի յերկու անգամ կրկնվում և նույն անունը։ Գ. Ս.

Որ Մհեր չլսեր եդոնց ձեն։
Ըսեց.— Ջինով Հովան, մեկ լե բոռա։
Ձեն եկավ, Մհերի անկաջ բնկավ։
Դհոլ, զուռնեն դհա գըլեցին։
Դհոլչուն, զուռնաչուն ըսեց.
— Ըդոնց ձեն կտրեք, իդա իմ ջնսի ձեն եր՝ եկավ։
Դհոլչին, զուռնաչին դհա գիլ գարկեցին դհոլ ու զուռնեն։
Հոլնդեց Մհեր, ու տվեց գրմեն մեկդեն, ու գնաց դուս։
Գնաց, հասավ ուր հրոխպերներու կուշտ։
Որ գնաց, հասավ հրոխպերներու կուշտ,
Ըսեց.— Յոր իք եկի։
Ըսեցին.— Քու հեր սպանեցին,
Եկեր ինք քրգի տանինք։
Հարցուց, թե.— Ո՞րն ե սպանե իմ պապուն։
Ընդունք լե բսեցին,
Թե.— Ջմբլկեր սուլթանի ախչիկն ե սպանի։

Առան Մհերին ու գացին։*
Տարան, Դավթի շորեր հագուցին,
Ու Դավթի սիլահ կապեց վրեն.
Ջին լե քաշին, բերին եդ տեղ,
Ու սրփ Նշան համբուրեց, դրեց ծոց,
Ու բնկավ երկրներ ջարտել.
Ել թաց ու չոր չհարցուց։
Քշեց Ջմբլկեր սուլթանի քաղքի վրեն։
Խոր Մանուկ** լե հետ առավ,
Ջմբլկեր սուլթանի քաղաք ավիրեցին։***

---

* Ա. վարիանտով Մհեր լսելով հոր մահը, էլաց ու քիթ ու բերնի վրեն ընգավ. յոթ որից հետո միայն տեղից վեր կացավ և գնաց Սասուն։ Գ. Ս.

** Ա. վարիանտով՝ Մհերին միանում է Ճոռ Վիրապ կամ Խոր Վիրապ. պատմողը չփոթում եր այստեղ այդ յերկու անունները։ Խոր Մանուկը Քեռի Թորոսի վորդին է, այդ Խոր Վիրապի ու Ճոռ Վիրապի ծագումը հայանի չե վարիանտի մեջ։ Գ. Ս.

*** Բ. վարիանտով Մհերը յուր հոր հոդին հոգալուց հետո, աերտների հագուստով ծպտված՝ գնում է Քլաթ, պատահում է Սուլթան Գրմիժին, վոր ջրաղացի քարը «քարմանը» (իլիկ) եր շինել և թել եր մանում։ Մհեր ճանաչում է նորան և տեղեկանալով, վոր. հորն սպանելուց հետո, իրեն ել է ուզում սպանել, խորամանկությամբ յուր մոտ է կանչում և յերկու կտոր անում։ Ավերում է Քլաթը։ մի կատու եր ձնացել, նրան ել Ջինով Հովանի ոգնությամբ «թունդրան ակից» հանելով՝ սպանում է։ Գ. Ս.

38. Մհերը Խոր Մանուկին ամուսնացնում է Փիրմուսի աղջիկ Դեղձոնի հետ

Ու եդ տեղեն առան, գացին ուրիշ քաղքի* մի վերա.
Գացին, տեսան, որ եդ քաղաք իսկի մարդ չկեր.
Մհերի ախուց բիրադի փախած են սարեր։
Տեսան՝ եդ քաղքի մեջ մեկ բուխերկից ծուխ կ'ելներ։
Գնեց ձին, եկավ, Յոդի դուռ կայնավ.
Ու ձիուց իջավ, ու ձին կապեց դուռ,
եկավ, մտավ ներս։
եկավ, տեսավ մեկ հալիվոր մարդ,
Մեկ լե ուր ախչիկ նստուկ են եդ Յոդեն։
Բարեվ տվեց հալիվորուն։
Բարեվ առավ, ըսեց.
— Բարով, հազար բարով, Մհեր։
Ըսեց.— Դու ինչ գինաս, որ չես Մհերն իմ։
Ու նստավ։ Ախչիկ ելավ, գնաց,
Մհերի ձին քաշեց ներս, կապեց։
Հալիվորու անուն լե Փիրմուս ե,
Ախչկա անուն լե Դեղձոն։
Ըսեց.— Փիրմուս, իդա քաղաք յոր մարդ չկա։
Ըսեց.— Եդոնք բմեն քո յախուն փախած, ելած սարեր։
— Ախչի, ելի տես, ճամբով ձիավոր կ'իդա։
Ախչիկն ելավ, տեսավ, որ մեկ ձիավոր կ'իդա։
եկավ, որ Խոր Մանուկն ե.
եկավ, ձիուց իջավ։
Քաշեցին ձին ու ներս կապեցին։
Ու Խոր Մանուկ եկավ, հոն նստավ։
Մնաց եդ տեղ յարի լուս։
Ըսեց.— Փիրմուս, Դեղձոն տուր Խոր Մանուկին։
Տվեց Խոր Մանուկին Դեղձոն։

---

* Ա. վարիանտով Մհեր միայն մի քաղաք՝ Խլաթն և ավերում, և այստեղ են լինում մի տերտեր յուր կնոջ և դստեր հետ (Փիրմուս, Դեղձոն)։ Գ. Ս.

39. Մհերն ամուսնանում և Պաճիկ թագավորի աղջիկ Գոհարի հետ

Մհեր Խոր Մանուկին թողեց եդ տեղ,
Ու քաշեց ուր ձին, հեծավ, ընկավ ճամբախ։*
Քշեց Պաճիկ թագավորի քաղքի վրեն
Քշեց քաղքի վրեն,
Ու քաղաք առավ ձեռ ջարտել։
Ջուար տարան Պաճիկ թագավորին,
Թե.— Մհեր մկա քու քաղաք կ'ավիրա։
Պաճիկ թագավոր լե առավ
Ուր վաքիլ, վազիր ու սինոդներ,
Ու եկավ Մհերի առեչ, ըսեց.
— Մհեր, իմ քաղքին դագմիշ մ'եղնի։
Ըսեց.— Ի՞նչ արով դագմիշ չեղնիմ։
Ըսեց.— Են ժամանակ, ինչ քո հեր
Մսրամելիքի հետ կռիվ երեց,
Յես ու քու հեր ախտ ու շարթ ենք երի։
Թե.— Ի՞նչ ախտ ու շարթ եք երի։
Ըսեց.— Ախտ ու շարթ ենք երի քու հոր հետ՝
Որ ընձի ախչիկ եղնի, քըզի տղա,
Իմ ախչիկ տամ քու տղին.
Որ քըզի ախչիկ եղավ, ընձի տղա,
Քու ախչիկ տաս իմ տղին։
Ըսեց.— Մկա Աստված քըզի քու հորն ե ավի,
Ընձի լե Աստված ախչիկ ե տվի.
Տենանք՝ դու կ'առնի՞ս իմ ախչկան։
Ըսեց.— Տեսնամ, որ քու ախչկան հավնա, կ'առնիմ.
Թե չհավնա, չըմ առնի.
Որ չհավնա՝ քաղաքդ կ'ավիրիմ։
Ու առավ Մհեր, գացին ախչկա կուշտ.
Ախչկա անուն լե Գոհար խանում ե։
Որ տեսավ, հավնավ. ախչիկ լե տղին հավնավ։

---

* Ա. վարիանտով Քուռկե Ջալլաթիկ սանձը Մհերից խլելով՝ նորան Բաղդադ տարավ։ Մհեր առնում ե խալիֆայի աղջիկը, բայց առանց կռվի։ Գ. Ս.

40. Գոհարի ասողագուշակությունը. Մհերի կռիվը Դեղձոնի նշանած Աստղիկ Երզնկանցու հետ յավ նրան սպանելը

Մեկ ժամանակ մացին հոնի։
Գոհար խանում աստղապաշտ եր։
Են մեկ որ իրիկուն Մհերն ըսեց Գոհար խանումին,
Թե.— Ելի՛ իմ աստղ իշկե, տես ի՞մալ ե իմ աստղ։
Ելավ Գոհար խանում եդոր աստղ իշկեց, ըսեց.
— Քու աստղ շատ զվարթ ե,
Ըմա քու ազգի մեջ մեկ շատ նեղած ե,
Ըհա՛ լուսուն ե, յա՛ իրկուն ե՝ գլոխ կը զարկին։
Մհերն ըսեց.— Խոր Մանուկն ե։
Ըսեց՝ Գոհար, իմ ձին քաշե հեծնիմ։
Գոհար խանում քաշեց դուս.
Չի մ՛ լե ուրին դուս քաշեց.
Երկուս լե ձիան հեծան, քշեցին,
Գացին, հասան Փիրմուս հալիվորու կուշտ։
Որ հասան հալիվորու կուշտ,
Դեղձոն ելավ, եկավ,
Երկու ձին լե քաշեց, տարավ, կապեց ներս։
Ու Մհերն ու Գոհար խանում գացին ներս, նստան։

Մնաց Յարի լուսուն։
Որ լուսցավ, մեկ լե տեսան՝
Աստղիկ Երզնկանցին* եկավ Մհերի վրեն կռիվ։
Արեվ նոր եր ծաղկի, եկավ, հասավ եգ տեղ։
Մհերի ձին լե թամքին, գամին ու դուս քաշին։
Մհեր ելավ, ուր ձին հեծավ,
Սիլահ-ասբաբ վրեն կապեց,
Ու եկավ եդ տեղ մըլդան։
Երկուս առան իրար,
Իրարու գուրզ կը զարկին.
Յարի կեսորին գուրզ կը զարկեն իրարու.
Մեկ-մեկու չըն ախտի։

---

* Ա. վարիանտով՝ Աստղիկ Երզնկանցի և յերբեմն պատմողը ասում եր՝ Երկրանցի, բայց յերբ ուշադրություն եյի դարձնում այդ տարբերության վերա, իսկույն ուղղում եր։ Գ. Ս.

Գոհար խանում տեսավ,
Որ Աստղիկ* Երզնկանցին շատ կը զոռե Մհերին,
Զըմքի ենի վերեվանց կը կռվեր, Մհեր ներքեվանց.
Մհեր գուրզ կը զարկեր,
Զըր քիսնի Աստղիկ Երզնկանցուն.
Են լե կը զարկեր՝
Սըփ Նշան չրը թողի, ընդոր վնաս եղնի։
Գոհար խանում ըսեց.— Աստղիկ Երզնկանցի,
Մհեր խամ տղա յե, շատ մը՛ զոռի Մհերին,
Հըլա իսկի կռիվ չերի, նոր կռիվ կ՚ենի։
Սիվտակ ծծեր գուս թալեց Գոհար խանում, ըսեց.
— Քըզի իդա սիվտակ ծծերու մեջ կը պահիմ.
Մհերին շատ մը՛ զոռի։
Աստղիկ Երզնկանցին, որ տեսավ սիվտակ ծծեր, կայնավ.
Որ կայնավ, Մհեր տրկեվանց գուրզ զարկեց.
Որ զարկեց, առավ սիրա, պառեկից դուս տվեց։
Մհեր գիցավ, թե չկպավ, ըսեց.
— Անջախ եր եկի իմ դըրը, որ զարկենք, դու չթողեցիր.
Ցոթ տարի, ըսեց, դու ընձի եղնիս մեր ու քուր։
Մեկ լե տեսավ, որ Աստղիկ Երզնկանցին
Վերի դեն պադավ գետին,
Եղավ մեկ մեյիդ ու եդ տեղ երկնցավ։

Մհեր յետ գարձավ, եկավ,
Փիրմուս հալիվորու կուշտ նստավ.
Ու հարցուց, թե.— Իդա Աստղիկ Երզնկանցին
Յոր ի եկի մըր վրեն կռիվ։
Ըսեց, թե.— Դեղձոն՝ իմ ախչիկ,
Աստղիկ Երզնկանցու նշանածն ե.
Ընդոր արով եկեր ե կռիվ։

Գիշեր մնաց եդ տեղ։
Լուսուն ելավ, վերցուց Գոհար խանում,
Դեղձոն, Խոր Մանուկ ու Փիրմուս,
Ելան, գացին Պաճիկ թագավորի քաղաք.
Տարավ, գրեց Գոհար խանումի ոթախներու մեջ։

* Ոպարկերտցին «Զար Աստղիկ» եր անվանում։ Գ. Ս.

41. Մհերը կռվում է Շաբի-արքան թագավորի հետ յավ բռնվում, ձգվում է հորի մեջ

Ու Մհեր հեծավ ուր ձին.
Կռիվ պրդի եներ, Յարի յոթ տարին թըմեր։
Քշեց Լոռվա Շաբի-արքան թագավորի քաղքի վրեն.
Քաղքի ճոթն առավ, առավ ջարտել։
Շաբի-արքան խոշուն երեց
Ու ըդոր հետ կռիվ երեց։
Ինչխըդրը խոշուն բերեց, Մհեր ջարտեց։
Շարի-արքան թագավոր հարցուց Մհերին,
Թե.— Քու հունար ի՞նչ ե, գու իդըմլա կռիվ կ'ենիս։
Ըսեց.— Իմ հունար իմ թեվերն ե։— Հպարտացավ։
Ըսեցին.— Բերեք, քաման թալինք, բռնինք։
Քաման թալեցին, բռնեցին։
Որ բռնեցին՝ տարան, թալին հորու մեջ։
Ուր ձին թուր խլեց ու դնաց, ճամբախ կտրեց,
Որ մարդ երթեր՝ ձին կը սպաներ։
Մհերին լե տարան, քառսուն զազական հոր թալին։

42. Մհերը հորից դուրս ե գալիս մի պառավի օգնությամբ

Մեկ պառավ կեր քաղքի մեջ.
Եդ պառվուն յոթ ախչիկ կեր.
Պստիկ ախչիկ հարիր տարեկան եր։
Եդ պառավ դանեց դան հաց կը տաներ,
Որեն երկու դան կը թալեր հորու մեջ։
Շաբի-արքան յոթն որ իրարու վրեն
Արճիճ քոմեց ու հալեց։
Պառավն եկավ, Մհերին ըսեց.
— Արճիճ ե քոմած, կը հալին, որ լնան վրեդ։
Ըսեց.— Ըբա՛ ի՞նչ ենիմ, պա՛ռավ,
Գնա՛, ընձի մեկ հատ բահ բի։
Բերեց բահն ու թալեց հորու մեջ։
Պառավ ըսեց.— Եդ հորու կշտի հետ
Մեկ խարաբա հոր մի կա.
Ծակե, ընցի են մեկել հորու մեջ։
Ըսեց.— Յոթ զիտր անլվա բուրդ բի, մեկ զիտր կուպր։
Գնաց. ու պառավ առավ, եկավ, թալեց հորու մեջ։

Մհեր զարկեց անլվա բուրդ ծակի վրեն,
Կուպր լե վրեն, պառեկ տվեց դեմ։
Շարի-արքան* հալեց արճիճ ու լցեց հորու մեջ։
Մնաց, Յարի արճիճ պաղավ,
Ընդոնք թողին, գացին։
Պառավն եկավ, կայնավ հորու վրեն,
Թե.— Մհեր, արճիճ լցին հորու մեջ.
Արճիճ պաղավ, արի քրզի հանիմ։
Ըսեց.— Ի՞մալ ընձի կը հանիս,
Չըս կա՞րնա ընձի մինակ հանի։
Ըսեց.— Իմ ախչիկներ կ'առնի՞ս,
Որ բերիմ իմ ախչիկներ, քըզի հանիմ։
Ըսեց.— Կ'առնիմ. գնա՞, քու ախչիկներ բի,
Մեկ լե շիրիդ բի հետդ ի։
Պառավ գնաց, առավ ուր յոթ ախչիկ, շիրիդ հետ, եկավ։
Եկան, կայնան հորու վրեն.
Ու շիրիդ կախին հորու մեջ։
Մհեր կապեց շիրիդ ուր մեջք, քաշին, հանին։
Ու ժողվեց ախչիկներն ու պառավ, լցեց հորու մեջ։
Եկավ, են արճիճի վրեն մեկ սադրինջ խաղցավ։

43. Մհերի համար օգացող Սասունցի ջուլհակը

Եդ տեղեն ելավ, եկավ քաղքի մեջ։
Եկավ, տեսավ, որ մեկ ջուլա՞կ հինած կ'ներ.
Հինած կ'ներ ու կ'իլեր։
Հինածի կես սեվ եր, կես սիվտակ եր։
Ու հարցուց թե.— Յո՞րի մեկ սեվ կր հինիս, մեկ սիվտակ
Ու կ'իլաս հետ։
Գործըրար ըսեց.— Յես Սասունայ իմ.
Մհերին բռնեցին, թալին հորու մեջ,
Են արով մեկ սեվ կր հինիմ, մեկ սիվտակ
Ու կ'իլամ։

---

* Ա. վարիանտով Մհերը կռիվ և գնում վոչ թե Լոռա Շարի-արքանի վերա, այլ Հալաբու խալիֆայի վերա, վորը նշանված եր Մհերի կնոջ վերա, և Մհեր ամուսնանալով՝ հափշտակել եր նորա ձեռքից։ Հալաբու խալիֆան խորամանկությամբ Մհերին բռնում, հորի մեջ և ձգում, պառավը հանում և, ինչպես և այստեղ։ Գ. Ս.

44. Մհերը ջարդում և Շաբի-արքանի զորքը, սպանում և նրան յեվ տեղը թագավոր և դնում Սասունցի ջուլհակին

Եդ տեղեն Մհեր գնաց Շարի-արքանի կուշտ ու ըսեց.
— Շարի-արքան, ըսեց, յես Սասունայ իմ,
Յես Մհերի ձիուն շատ սայիսուտեն երեր իմ.
Մհերի շորեր տու հագնիմ,
Մհերի սիլահ տու կապիմ,
Երթամ, ձին բռնեմ ու բերիմ քըզի.
Բավականի խոշուն լե տու հետսի տանիմ,
Որ ձին բռնեմ, բերիմ։
Խոշուն տվեց, ու առավ հետ, գնաց.
Տարավ, իցկեց խոշուն մեկ ձորու մեջ.
Ինք կայնավ խոշունի ժեդեվ ու ձիուն ձեն տվեց։
Ձին ճանչրցավ Մհերին.
Ձին խոշունի առեչն առավ, ինք լե ժեդեվանց։
Ջարտեցին, երկուս եկան իրարու կուշտ,
Մանցին ինք ու ձին մինակ։
Գնաց ձիու կուշտ, ձիու աչքեր պագեց,
Թուրն առավ ձեռ ու հեծավ ձին,
Եկավ, կայնավ Շարի-արքանի քոշկ ու սարի ժառեչ։
Ըսեց.— Շարի-արքան,
Քու վախտին հազր կեցի, յես եկա։
Շաբի-արքան դուս ելավ, թե.— Գու ո՞րն իս։
— Յես, ըսեց, Մհերն իմ։
— Չե՞, ըսեց, արճիճ հալի, լցի վրեդի՞։
— Արճիճ ծակի, դուս եկա, ըսեց։
Ու զարկեց, Շաբի-արքանի գլոխ կտրեց։
Եդ տեղեն գնաց, հորու վրեն կայնավ.
Պառավն ու ուր յոթ ախչիկ հորու միջեն հանեց,
Բերեց գործրրարի կուշտ.
Առավ գործրրար լե հետ,
Եկավ Շարի-արքանի գիվան։
Պառվու պղտիկ ախչիկ տվեց ջուլա՞կին,
Ու ջուլա՞կ դրեց թագավոր Շարի-արքանի տեղ։
Եդի մնաց եդ տեղ։

45. Միհրն ու իրայիճները գալիս են Սասուն

Մհեր հեծավ ուր ձին,
Ու դարկեց, եկավ Պաճիկ թագավորի կուշտ,
Ու Պաճիկ թագավորին խնդրվավ,
Թե.— կը խնդրիմ իմ նշանած տաս,
Ցես երթամ, հասնիմ իմ թախտին։
Պաճիկ թագավոր ըսեց,
Թե.— Ո՛րտի, երոր կ'երթաս,
Աստված քու բան աչողա, գնա.
Պաճիկ թագավոր բերեց,
Մհկ ձի լե հագրեց Գոհար խանումին.
Գոհար խանում հեծավ ձին.
Իոր Մանուկ լե, Դեղձոն լե հետ վերուց,
Ու շնորհակըլավ թագավորի մոտեն,
Ու ընկան ճամբախ, եկան, հասան Սասուն։

46. Ծնեցի թուլացումը Միհրի առաջ յեվ նրա փակվելը հարույրի մեջ

Մհկ ժամանակ մեջ տեղ ընցավ։
Մհեր կը հեծներ ուր ձին,
Որ երթեր ավրդուշ ենելու։
Ձին գետին չըր վերցընե,
Ջուրի չոքեր կը չքվեր հողի մեջ։
Մհերն ըսեց.— Ցես ի՞մալ ենիմ,
Գետին իմ ձին չվերցու։
Ջեց ձին ու եկավ,
Մհկ ջոջ քարի մի կուշտ կայնավ, ըսեց.
— Ո՛վ Աստված, յես էլ ինչ ենիմ, ի՞մալ ենիմ։
Որ եդ թավուր ըսեց, աղաչանք երեց,
Աստված ըդոր ձեն լսեց.
Քար բացվավ ու Մհերին մեջն առավ։
Ձեն եկավ, թե.— Մհե՛ր,
Գու պըդի ծնաս քարի մեջ,
Ջուրի ցորնի հատ եղնի մասրի բարա,
Նոր քարից դուս գաս։

87. Վերջաբան

Մկա իդա սհաթին լե մըչ քարին և Մհեր,
*Ու կ'ըսեն՝ ձին որ կը չըռե, քարից դուս կ'իդա։**

---

* Բ. վարկանաի վերջաբանը.

«Մկա Մհերն ու ուր ձին
Կենդանի մըչ են քարին ին։
Տարին հինդ ամաք կաթիկ (նամակաթիկ)
Մհեր են քարից դուս կ'ելա,
Ախշար կ'աչքե, մանա են քար։
Հրաման չկա, որ քելե ախշար։
Երոր ցորնի հատն եգավ մեկ մանաուր,
Գետին կը խայիձա.
Մհերն ու ուր ձին կը դան ախշար.
Նոր Մհեր կուտուրում կ'ենի.
Վերջ կը մարտիրոսվիա։ Գ. Ս.



Գ

պատում

Դավիթ և Մհեր

պատմեց

Դատկու Մոճկոնց գյուղացի

Ավետիս Մարտիրոսյան

գրի առավ 1910 թ

Հայրապետ Համամճյան





ԱՌԱՋԱԲԱՆ

Այս պատումը տպված և «Հայրենիք» ամսագրի 1933 թ. № 3։ Բերում ենք այս պատումի հրատարակչի նախաբանից հետևյալը.

«Դավիթ և Մհեր»-ի այս պատմվածքը կը գտնվեր Մշո Գեզամ Տեր-Կարապետյանի ձեռագիր աշխատություններուն մեջ։ Պատմվածքը Գեզամն ինք անձամբ գրի առած չե։ Այդ աշխատանքը կատարած և Հայրապետ Հ. Համամճյան, Մուշ, 1910-ի ապրիլի 12-ին, ու յերկու փոքրիկ տետրակները դրկված և Գեզամին, Պոլիս։

Հ. Հ. Համամճյան իր յերկտող նամակին մեջ, վոր ուղղված և Գեզամին և զետեղված տետրակին առաջին եջին վրա, կը հայտնե, թե՝ «Այս առաջին հեքյաթն և Դավիթ-Մհերին»։ Յեվ, յեթե քաջալերվի, խոսք կու տա յերկրորդ հեքյաթն ալ գրի առնել։ Դժբախտաբար, այդ յերկրորդ հեքյաթի հետքը չկա Գեզամի գործերուն մեջ։

Ամենեն վերջը Հ. Համամճյան ծանոթություն մը դրած և, ուր կ'ըսե. «Տեղ-տեղ հեքյաթի խոսքերը, բառերը, վոճերը նույնությամբ գործածված են»։ Դժբախտաբար, այո, միայն տեղ-տեղ պատմողի հարազատ վոճը և բարբառը պահված և։ Ընդհանրապես գրի առնողի լեզուն և, վոր մեզ կը ներկայանա,— բան մը, վորով հեքյաթի գեղեցկությունը կը կորսվի։

Հեքյաթի պատմողը յեղած և Ավետիս Մարտիրոսյանը, Դատկու Մոճկոնց գյուղացի։ Ավետիս Մարտիրոսյանը հեքյաթը սովրած և Պոլսո մեջ իր բեռնակիր ընկերներեն մեկե մը (Յերեզարկ գավառի=Կուզալտերե) Կարբ գյուղացի Բղդոյեն։

Նույնությամբ ընդորինակելով Հ. Հ. Համամճյանի գրի առած հեքյաթը։ միայն սրբագրած եմ տառասխալները, կետադրած եմ (գրվածքը գրեթե կետագրություն չուներ), և հատվածները սկսած եմ նոր տողով (վորովհետեվ գրրվածքը նոր տող բնավ չուներ)...

... Հեքյաթի առաջին և վերջին մասերը մինչեվ հիմա հրատարակված փոփոխակներեն կը տարբերին, և հետեվաբար, առանձնապես ուշագրավ կը դարձնեն ներկա հրատարակությունը։ Կ. Ս.»

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա

ԴԱՎԹԻ ԿՈՒՎԸ ՄՈՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

1. Նախերգանք

Ախ, կու տամ դողորմին, կու տամ դողորմին,
Ա՛խ, Դավիթ թագավորին, ախ, Դավիթ թագավորին։
Ա՛խ, կը դառնամ կու տամ Բաղտասարին,
Ա՛խ, կը դառնամ կու տամ, այ, այ, ալ, են Բաղտասարին։
Ա՛խ, կու տամ դողորմին, կու տամ դողորմին,
Ա՛խ, Զենով Հովանին, ախ, Զենով Հովանին։*
Ա՛խ, կու տամ դողորմին, կու տամ դողորմին, են Զոլջ Մհերին։
Ա՛խ, կու տամ դողորմին, ախ, կու տամ դողորմին, են Թլոֆ Դավիթին։
Ա՛խ, կու տամ դողորմին, կու տամ դողորմին,
են Խանտուտ Խանումին, ախ, Խանտուտ Խանումին։
Ա՛խ, կու տամ դողորմին, կու տամ դողորմին,
են Մարա Մելիքին, ախ, Մարա Մելիքին։
Ա՛խ, կու տամ դողորմին, դառնամ կու տամ
Ականջ դնողին՝ հայրին ու մայրին։

---

* Ինչպես առաջաբանից կարելի է տեսնել, դրի առնող Համամճյանը գրական լեզվի է վերածել այս պատումը· դրա համար էլ ուներ թե «Հովհան» և թե «Հովանն»։ Պահում ենք յերկրորդ ձևը, ինչպես ժողովրդական մյուս պատումների մեջ է։ Խ մ բ.

2. Մսրա Մելիքը հաղթում և Բաղդասարին, առնում և նրա կին՝ Խանդութին յեվ հարկաւու յե դարձնում Սասունը

Դավիթ, Մհեր, Բաղտասար և Զենով Հովան յեղբայրներ ելին։

Դավիթ թագավորը վախճանեցավ։ Մնաց Մհեր, Բաղտասար և Զենով Հովան։ Բաղտասար նստավ թագավոր։ Վախտով, ժամանակով անցավ։ Բաղտասար թագավորի կին Խանտուտ Խանումն եր. հղի մնաց։ Բաղտասար կ՚երթար Սեղնասար նեճրության։ Մսրա Մելիք անոր դիմաց ելավ։ Կրռվան։ Բաղտասար հաղթվավ։ Մսրա Մելիքն անոր գլուխը կտրեց, Սեղնասարն ու Խանտուտ Խանումն առավ իրեն. խարճ ու խարաճն ալ թալեց Սասնո քաղաքին։

3. Դավթի մանկական չարությունները. Մսրա Մելիքը փորձում և նրան կրակով յեվ վոսկով

Ինն ամիս, ինն որ, ինր սհաթ թմավ, Թլոֆ Դավիթն աշխարհն եկավ։ Անուն Դավիթ դրին։ Աշխարհը որե ջոջնար, Դավիթ՝ սհաթեն. աշխարհը ամիսեն ջոջնար, Դավիթ՝ շաբաթեն։

Կու գա տղոց հետ ուփ լողալու։ Տղաքներուն կը բռնե, ուփ կը ձգե. վորը կ՚ազատվին, վորը կը խեղգվին։

Ազատվողները կը բողոքին Մսրա Մելիքին ու կը խնդրեն, վոր իր տղան կորսնցնե քաղաքեն և կամ մեռցնե։

Բերավ վոր վիզն առնու։ Խանտուտ Խանում արգիլեց։

— Թե վոր չբս հավատա, բի կրակն ու վոսկին թեփսիի մեջ դիր, տեսնենք՝ վորը կը վերցնե։

Բերին։ Յեվ Դավիթ ձեռքը յերկնցուց դեպի վոսկին։ Աստծո հրեշաակ անոր մատը դեպի կրակ տարավ։ Ան ալ ձեռք քաշած ատեն՝ կրակ մաաին կպած՝ բերան տարավ, լեզուն այրեցավ։ Այդ պատճառավ ըսվեցավ՝ Թլոֆ Դավիթ։ Մելիք տղան անեն քշեց։

4. Խանդութը Դավթին տալիս և մի պառավի պահելու. նրա չարությունները. նրան ճանապարհ են դնում հորեղբայրների մոտ

Խանտուտ զայն իրեն հետ առած՝ քաղքի մեջեն անցած ատեն, պառավ կին մը պատճառն հարցուց։ Խանտուտն բսավ.

— Կ'ուզեմ այս տղան պահել տամ, թե վոչ Մելիք գլուխն պիտի առնե։

Պառավ հանձն առավ տղան պահելու։ Ճանկ մը վոսկի առավ։

Տղան իր ընկերներու հետ խաղալու գնաց։ Տղաք բարտի տերեվ սկսան ժողվել։ Դավիթ բարտի ճղեր բռնելով՝ ծառը պատկրցուց և ընկերներուն բսավ.

— Ձեկեք, վորչափ կ'ուզեք, ժողովեք ու վրան նստեք։

Տղաք ծառին վրա ժողվեցան։ Դավիթ ճյուղերեն քաշուց, ծառը ցնցումով կալնավ։ Տղաք ծառի վրայեն հետու ինկան և ցնավեցան։

Մնողք Մելիքին բողոքեցին, վոր այդ տղան իրենց քաղը չքաշու։

Մսրա Մելիք տղան իր նախարարաց առջեվ կանչելով՝ կ'ուզեր սպաննել։

Խանտուտ Խանում կը ներկայանա և համարձակությամբ կ'բսե.

— Մսրա փաշա,— չըսեր քագավոր,— դուն իմ գլխավորն ես, չեմ ուզեր բան բսել. յեթե կ'ուզես, քուլլ տուր աղաս քաշ իր հորեղբայրներուն քով երթա։ Յեթե վոչ՝ ձեռքս քու յերկու վոտք կը ձգեմ, ղքեղ յերկու կաոր կ'ընեմ։

Ան ալ յերկու ֆերիզ մարդոց կը հանձնե, կ'բսե.

— Տարեք, ձամբա մը, գետե մը անցած տաեն՝ անոր կամուրջն վար ձգեցեք։ Հագուստները գաղտնի ինձ բերեք. մայրը քաշ չլսե։

3. Դավիթը հաղթում և իրեն սպանել ուզող Ֆերիզներից յեվ գնում և Սասուց

Այդ յերկու ֆերիզները գետեն անցած ժամանակ, մին կամուրջի այս, մյուսը այն ծայրը կը կայնի, Դավիթ մեջերնին կ'առնուն։

Դավիթ անոնց միտքը կը հասկնա։ Անոնք իրեց յեղած հանձնարարությունը կը խոստովանին։

Դավիթ կ'բսե.

— Ջեմ ուզեր ձեզի վնասել, քանի վոր ճիշտը խոստովանեցաք։ Դացեք, բսեք Մելիքին, վոր Խանտուտին դուա ընե, թե վոչ՝ իր քաղաքը տակն ու վրա պիտի ավրեյի։

Անոնք յետ կը դառնան։ Դավիթն ալ Սասուն կու գա.

Սասունցիք, յերբ լսեցին Դավիթի գալը, Ձենով Հովանին գացին, ավետիք աարին։ Ան ալ մեծ հանդեսով դիմավորելու յեկավ և զայն իր հոր սարեն տարավ։

6. Դավիթը նախրորդ յեվ հովիվ. հաց տանող Պառավը

Սասնո մեջ նախրորդ յեղավ։ Իրեն յերկաթե կոշիկ և յերկաթե գավազան մը հանձնեցին։

Դավիթ տավարներ ու վոչխարներ լեռ տարավ արածելու։ Ու յերբոր իրկուն գեզ դարձավ, լեռան մեջ գտնվող վայրենի գազաններն ալ հավաքելով նախիրին խառնեց՝ հետը բերավ։

Գեղացիք, վոր զայդ կը տեսնան, կը սկսին սարսափիլ. մինչ Դավիթ բնավ չեր վախնար. ընտանի անասնոց նման անոնց յետեվեն կը վազնե, կը զարնե, կը հալածե և մեկտեղ կը հավաքե։

Հաջորդ որը, կեսորին ճաշի ժամանակ, Պառավ մը Դավիթին հաց տարավ և տեսավ, վոր Դավիթ ինկեր ե անտառի մեջ՝ հոգնած ու քրտնած և այդ տեղի գազանները կը հալածե։ Պառավը կը ձայնե.

— Դավիթ, արի հաց կեր, անոնք կը հանգստանան։

Դավիթ պատասխանեց.

— Մամի, սարի պլպստանները չեն դադրեր։

Դավիթ յերբ յեկավ, հացին մոտեցավ, գազաններն ալ հոգնած՝ նստեցան։ Դավիթ, ճաշը լրացնելեն հետո, վերստին գազաններն սկսավ հալածել, մինչեվ յերեկոյին գազաններ հավաքելու աշխատության մեջ յեղավ։

Պառավ յերբ յետ դարձավ, քաղաքացվոց պատմեց Դավիթի արարքը, ու յերբոր յերեկոյին անիկա քաղաք յեկավ, գազաններն հետ բերած, ժողովուրդ ահեն ու սարսափեն բռնված՝ իրենց տուներու դռները դոցեցին։ Յերեկոյին յերբ Դավիթ տուն յեկավ, դռները գոց գտավ։ Խրոխտ ձայնով կանչեց.

— Բացեք դռները, ձեր մեկ քոռ կով, ըրած եմ տաս ու քսան ընտիր կովեր։ Բացեք, ներս ընդունեցեք ձեր անասունները։

Բայց վոչոք համարձակեցավ։

Դավիթի կոշիկներն ու գավազանը բոլորովին մաշած ու կտրտած ելին։

Հաջորդ որը նորեն հագավ և այս անդամ հովիվ յեղավ։ Միեվնույն բանը հովվության ատեն ըրավ։

Ժողովուրդը գինք այդ պաշտոնեն ալ հանեց։

7. Դավիթը վորսորդ. Նա Պառավի խորհրդով գնում և Սեվ սար — Սեղնասար վորսի

Այս անդամ Դավիթ առավ իր դերգավան, գնաց Պառավի մը կորեկի արտին մեջ թռչուն վորսալու։ Պառավը՝ յերբ զայն տեսավ, ձայնեց.

— Դավիթ, քթեդ արյուն առնեմ, յեթե քեզ վորս պետք ե, գնա՛ Սև սար, վոր կ'ըսվի Սեզնասար։ Հորդ մեռնելեն և մորդ Մրսըր տարվելեն ի վեր, վոր յոթ տարի յե, Մսրա Մելիք բադան քաշեր ե բոլորտիքն։ Հոն բնավ վորս չե յեզած. գնա՛ հոն, և վորչափ գազան կ'ուզես՝ վորսացիր։

Դավիթ գնաց մոտ իր բաբեր և ըսավ.

— Յեկեք, ինձ Սեզնասար ցուց տվեք, թե վոչ ձեր վիզը կը կտրեմ։

Ձենով Հովան հետեվեցավ իրեն։ Գնացին անտառին պարիսպները։ Իր կա՛րզով պատռեց մի քանի տեղեր։ Գազաններ փախան։ Ինք հալածեց զանոնք։ Գիշերը վրա հասավ։ Յետ դարձավ։

8. Դավթի յերազը, վանք շինելը, շենքի փուլ գալը, վերաշինելն ու վանքի միաբանությունը

Գիշերը վրա հասած ըլլալով, ճամբուն վրա պառկեցավ, յերազ մը տեսավ։ Մեկը իրեն կ'ըսեր.

— Դավիթ, յել, հոս Մայր Աստըծո հիշատակին համար վանք մը շինե. որե շինե, պատրաստե, ոծե, պատարագե։ Ասով այլևս հավիտյան քեզ բան չըլլար։

Դավիթ արթնցավ։ Տեսավ՝ իրմե քառորդ ժամ հեռավորությամբ լույս մը յելեվեջ կ'ընե։ Գնաց դաշույնը հոն մխեց։ Յեկավ, կրկին քնավ։

Առավոտ Ջենով Հովաննէն պահանջնց, վոր հոն վանք մի շինվի։

Հովան ըսավ.

— կանչել վեր ձի, սուքել վեր քի։

Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառսուն հազար թամալճի,
Ա՛խ, քառսուն հազար թամալճի։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառսուն հազար ուստա,
Ա՛խ, քառսուն հազար ուստա։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառսուն հազար չամուրճի,
Ա՛խ, քառսուն հազար չամուրճի։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառսուն հազար թեքննճի,
Ա՛խ, քառսուն հազար թեքննճի։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառսուն հազար քար տվող,
Ա՛խ, քառսուն հազար քար տվող։

Բոլորն յեկան իրենց գործիններով և մինչեվ յերեկոյին շինեցին յեկեղեցին։ Միայն ծեփը մնաց։ Այգ պատճառավ փլեցավ։

Ցերազն կրկնվեցավ Դավիթին։

Դավիթ Հովանին ըսավ.

— Բարեր, չե՞ վոր յես ուզեցի ամեն բան որե լրանա. ինչու ծեփ պակաս թողուցիք, վոր փլեցավ։

Հովան ըսավ, թե ուրեմն կրկին կանչիմ, վոր գան լրացնեն, այս անգամ փոխանակ քառսուն հազարի, քառասունական։

Այսպես.

Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,

Ա՛խ, քառասուն խման թամալճի,
Ա՛խ, քառասուն խման թամալճի։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն հազար ուստա,
Ա՛խ, քառասուն հազար ուստա։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն հազար չամուրճի,
Ա՛խ, քառասուն հազար չամուրճի։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն հազար թեքնեճի,
Ա՛խ, քառասուն հազար թեքնեճի։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն հազար քար տվող,
Ա՛խ, քառասուն հազար քար տվող։

Բոլորն ալ յեկան և յեկեղեցի շինեցին։
Յերբ լրացավ, Ջենով Հովան կանչեց։

Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն յեպիսկոպոս,
Ա՛խ, քառասուն յեպիսկոպոս։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն վարդապետ,
Ա՛խ, քառասուն վարդապետ։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն յերեց,
Ա՛խ, քառասուն յերեց։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն սարկավագ,
Ա՛խ, քառասուն սարկավագ։

Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն լուսարար,
Ա՛խ, քառասուն լուսարար։*
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, քառասուն նոպատար,
Ա՛խ, քառասուն նոպատար...

Իրիկուն, ժամու ատեն, ամեն բան լրացավ։
Յեկեղեցին Մայր Աստվածածին անվանեցին։
Միաբանները վանք թողուցին, իրենք դարձան, յեկան Սասուն քազաք։ Դավիթ սկսավ իր վորսորդության։

Գ. Հարկահանություն, խրատատու Պառավը. Դավիթը պատուհասում և հարկահաններին. Կուզբագնին ծաղրող կանայք

Ժամանակե մը վերջ, Մսրա Մելիք Սեղնասար վորսորդության յեկավ։ Յերբ զայն ավերված կը տեսնե, բարկացած յետ կը դառնա իր նախարարներուն կը պատմե։ Անոնք ալ խորհուրդ կու տան, վոր ղրկեն, Սասունեն վերկի պահանջեն։ Յեթե տան, արդեն իրենք չեն.** յեթե չտան, իրենք են,*** և Դավիթ ալ վողջ ե։

Ան ալ Կուզբատին քառասուն զորքով կը ղրկե, վոր կու գա, Զենով Հովանեն տուրք կը պահանջե։

Զենով Հովան միրու կոտով վոսկի կը չափե։

Այդ ատեն, Դավիթ Պառավի մը արտեն շողգամ կը քաշե, կլորները կ'ուտե, և մյուսներ վերստին իրենց տեղ կը տնկե։

Պառավ դուրս կու գա, անիծելով՝ կ'ըսե.

— Դավիթ, փոխանակ իմ խեղճիս շողգամները քաշելու, գնա, Կուզբատին արգիլե, վոր յեկած ե, վոսկին շնիկով կը չափե, կը տանի։

Դավիթ տուն կու գա, չափը Զենով Հովանեն կ'առնե, վոր

---

* Տպված եր «նոպատար», ուղղում ենք «լուսարար», ինչպես պահանջում և ամբողջի կրկնակ ձևվը։ Խմբ.

** Պետք և հասկանալ՝ իրենք չեն արել։ Խմբ.

*** Պետք և հասկանալ՝ իրենք են արել։ Խմբ.

ինք չափե. զայն յերեսի վրա կը դարձնե, վոսկիները վրան կը լեցնե. հավասարաչափ փայտով՝ զանոնք վրայեն սրբելով՝ կ'ըսե. «Մեկ, յերկու»...

Կուզբատին զայն տեսնելով՝ կը բարկանա և Դավիթին կ'ապտակե։ Դավիթ անոր հետ յեկող քառասուն անձինք կը սպաննե։ Կուզբատինի ակռաները քաշելով՝ ճակատը կը շարե, յետ կը զըրկե, և կ'ըսե.

— Գնա, Մելիքին ըսե, ինչ վոր տեսար։ Յեվ հայտնե, վոր վորչափ ուժ ունի, իր հետ առնելով՝ կռվի թող գա։

Կուզբատին դատարկ գարձավ։

Կնիկները զայն հեռվեն տեսան և ուրախանալով՝ պոռացին.

«Կուզբատին, երան լերան նազելով,
Ուստի՞ կու գաս, քաքոտ բերան, ետ հրմյա»։

Կուզբատին կը պատասխանե.

«Ետ հրմյա, վաղ արուն հեղեղ կ'ելնե,
Ձեր եբիկներու ճուճ ու պլոր հետ կը բերե,
Ըրեք ձեզի շիշ ու քաբաբ»։

10. Մսրա Մելիքի զորահավաքը. հարկահաններ, վանքի ավերումն ու կոտորածը

Կուզբատին այդ վիճակով կը ներկայանա Մելիքին, իր վիճակը կը պատմե։

Մսրա Մելիք կը սկսի ձայնով իր զորքերը կանչել,

Ա՜խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՜խ, տի կանչիմ՝ տի գան,
Չորս հարյուր հազար կարմիր ձիավոր,
Ա՜խ, կարմիր ձիավոր։
Ա՜խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՜խ, տի կանչիմ՝ տի գան,
Չորս հարյուր հազար բոզ ձիավոր,
Ա՜խ, բոզ ձիավոր։
Ա՜խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՜խ, տի կանչիմ՝ տի գան,

Զորս հարյուր հազար սեվ ձիավոր,
Ա՛խ, սեվ ձիավոր։
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Ա՛խ, տի կանչիմ՝ տի գան,
Բյուր-բյուր հազար պայավոր,
Ա՛խ, պայավոր։

Բոլոր յերկրածինները հավաքվեցան։ Մարդ մը միջերնին յելնելով՝ ըսավ Մելիքին.

— Ի՞նչ հարկ այսքան մարդ մեկ մարդու վրա տանիլ։ Թույլ տուր, վոր այս զորքերեն քառասուն անձ ընտրեն, յերթան, Դավիթի գլուխը բերեն։

Ընդունեց Մելիք այդ առաջարկը։ Ղրկեց զանոնք Սասուն։ Յերբ անոնք Մսրեն կը մեկնեյին, աղբյուրի քով կայնող կանայք կը հարցնեն.—Ո՞ւր կ՚երթաք։

Զորապետը կը պատասխանե.

— Կ՚երթանք Սասուն, կը բերենք այնտեղի յերկար կնիկներ՝ ուղտ բեռցնելու, կարճ կնիկներ՝ երկանք աղալու։

Մեկնեցավ, յեկավ, Սասնո հողը հասավ։

Նախ հողագործի մը հանդիպեցավ, հարցուց.

— Դավիթ վանք ե, թե չե քաղաքը։

Ըսավ.— Քաղաքն ե։

Զորապետը քաշեց անոր ականջները, յերկուքն ալ դրպանը դրավ ե գնաց վանք։ Պահապաններն ընդդիմացան, բայց վերջը խաբվելով կտրված ականջներեն, կարծելով, թե անոնք Դավիթին են, ներս առին։

Բոլոր միաբանությունը ջարդվեցավ, միայն մի լուսարար ազատվեցավ և յեկավ Դավիթին իմաց տալու։

11. Դավթի ուրախությունը. սարկավագը բոթ և բերում. Ոտ կոտորում և հարկահաններին յեվ պատուհասում հազարապետին

Նա այդ միջոցին նստած եր, Ջենով Հովանին հետ ուրախություն կ՚ըներ։

— Ա՛խ, Դավիթ, ա՛խ, գուն կը խմես նռան գինին,
Ա՛խ, յես կ՚ասիմ՝ անուշ.
Ա՛խ, զարկին, կտրեցին քառասուն յեպիսկոպոս։

Դավիթ ըսավ.

— Բաբե՛ր, ձայն մ՛ ինկավ իմ ականջ,

Յել, տես՝ ո՞վ ե, ի՞նչ պակաս ե.

Տվե՛ք, թող տանին։

Զենով Հովան կ՛ըսե.

— Խմե, ի՞նչ պակաս ե, մենք կու տանք, թող տանին։

Դավիթ նոան յոթ տարվա գինիեն գավաթ մ՛ ալ խմեց։

Սարկավագ դուրսեն վերստին կանչեց՝ վանքի կոտորածն հայտնելով։ Այդ ձայնը Դավիթին ականջը միշտ կը հասներ։

Զենով Հովան զայն խարելով՝ կ՛ըսեր.

— Խունկ ու մոմ պակաս ե, տվինք, զրկեցինք։

Սարկավագը, հուսահատ, վարդապետի արյունաթաթախ վերարկուն յերդիսեն վար ձգեց։

Դավիթ զայրանալով մեկնեցավ անմիջապես, և բարտի յերկար ծառ մը արմատեն քաշելով՝ գնաց, հասավ հազարապետին և անոր քառասուն ընկերաց. ջարդեց զանոնք, միայն հազարապետը վոզջ թողուց, ակռաներ ճակատ շարեց, Մսրա Մելիքին զրկեց, վոր նորեն զորք բերե։

12. Մելիքի հարձակումը. Դավիթը Պառավի խորհրդով Զենով Հովանից ոտանում և Քուռկիկ Ջալալին յեվ սարքը

Մելիք իր առաջին զորքերը զրկեց Դավիթի վրա, վոր նույն ատեններ Պառավի արտի մեջ թռչուններ կը հալածեր։

Պառավը դուրս յեկավ, անիծելով՝ հայտնեց Մելիքի գալը և ըսավ.

— Կրնա՞ս, գնա՛, անոր վնասե։

Դավիթ Պառավին խորհուրդ կը հարցնե.

— Ի՞նչպես երթամ։

Պառավ կ՛ըսե.

— Գնա՛, քու հորեղբոր ըսե.

«Բաբե՛ր, տո՛ւր Խաչ Պատերազմին,

Վըր իմ աջ թեվին.

Տո՛ւր զիմ հոր Թուր Կեծակին,

Վըր իմ աջ կշտին.

Տո՛ւր ցիմ հոր Ճզմեն Սլեմանին.

Տո՛ւր զիմ հոր Քոլոսն Թավարին.

Տուր զիմ հոր Գայիշ Կուրուֆին.*
Տուր զիմ հոր Քուռիկ Ջալային»։

Ձենով Հովան ըսավ.

— Խաչ Պատերազմին տալով չե. ծնրադիր խնդրե, լաց, վողբա, յեթե արժանի յես, կր ստանաս այդ լուսեղեն խաչը. մյուսներ բոլորն ալ պատրաստ են։

Դավիթ խնդրեց։ Խաչ Պատերազմին յեկավ, թեվին թառեցավ։

13. Դավթի զինավառումը յեվ հորեղբոր ափսոսանքը

Դավիթ քոլոսին մեջ քառասուն լիտր բամբակ դրավ. քառասուն լիտր ալ ճզմաներուն յուրաքանչյուր ֆուրի մեջ դրավ, վոր իրեն հարմարին։ Գայիշ Կուրուֆին կապեց քառասուն փաթ, հեծավ ձին և յեկավ, դռան քով պահվեցավ։

Բարերն կարծեց, թե գնացեր ե, սկսավ լալ և յերդել.

«Ա՛խ, կողկմամ հրեղեն Խաչ Պատերազմին,
Ելավ Սասուն քաղաքեն։
Ա՛խ, կողկմամ զեն Թուր Կեծակին,
Ելավ Սասուն քաղաքեն։
Ա՛խ, կողկմամ զեն հրեղեն Քոլոս Թավարին,
Ելավ Սասուն քաղաքեն։
Ա՛խ, կողկմամ զեն Ճզմեն Սլեմանին,
Ելավ Սասուն քաղաքեն։
Ա՛խ, կողկմամ զեն Գայիշ Կուրուֆին,
Ելավ Սասուն քաղաքեն։
Ա՛խ, կողկմամ զեն հրեղեն Քուռակ Ջալային,
Ելավ Սասուն քաղաքեն։
Ա՛խ, չեմ կողկմար զեն հրմեն...
Կը կողկմամ Թառլան Դավիթին,
Վոր ելավ Սասուն քաղաքեն...»

Դավիթ պահվրտած տեղեն դուրս ելավ և ըսավ.

— Բարեր, յեթե այդ վերջի խոսքը չըսեյիր, զքեզ յերկու կտոր պիտի ընելի ու վերջ կ՚երթայի։

---

* ... «Գայիշ Կուրուֆին» բառերից հետո փակագծերի մեջ դրված ե՝ «վոր քառասուն փաթ եր, բայց իր հոր մեկ փաթ կը լիներ»։ Խմբ.

14. Պառավի խրատը. Մանուկ Դավիթը խմելով աղբյուրի ջուրը՝ դառնում է հզոր

Մնաս բարով ըսելով՝ մեկնեցավ։ Հասավ Պառավի կորեկի արտի քով։ Պառավ կանչեց անոր.

— Կեցիր, բան մը ըսեմ քեզ և հետո գնա։

Դավիթ կայնեցավ։

Պառավ ըսավ.

— Քուռկիկ Ջալալին վոր ուղղությամբ կամ ճամբայով վոր երթա, գլուխն ազաա թող՝ իր ուզած կողմեն թող երթա։

Շատ գնաց թե քիչ, վերջապես հասավ մի նեղ ճանապարհի, վոր կը բաժնվեր լայն ճանապարհեն և կ՚երթար դեպի լեռ։ Արահետը կանաչներով ծածկված եր և հազիվ կը նշմարվեր։ Դավիթ չուզեց յերթալ այդ կողմեն։ Ստիպեց ձին վոր յետ դառնա։ Ձին համառեցավ։ Դավիթ ասպանդակներով անոր կողի մի վոսկոր կոտրեց։ Ձին բարկանալով Դավիթին վար ձգեց և գնաց մի լեռնադաշտի վրա, վոր ծաղիկներով և մարգերով ծածկված եր։ Հոն աղբյուր մը կար, վորո ջուրն հիանալի անուշություն մը ուներ և վեր կը բարձրանար և ինքնին ցած կ՚իջներ և ավազներու մեջ կը կորսվեր։

Դավիթ սթափեցավ, գնաց այդ աղբյուրի վրա։ Ձին այդ ջրեն լողացուց, ջուր խմցուց, ձին սկսավ հոն արածել։ Ինքն ալ լողացավ, ջուր խմեց, քնացավ։ Քոլոսն ու ճզմաներ իրմե հեռու ինկան։ Գայիշն սկսավ դինք նեղել։ Արթնցավ. զայիշի առզոկ բացեց, հազիվ մի քանի փաթ յեղավ այս անգամ։ Քոլոսի և ճզմաներու բամբակները թափեց, և հազիվ հարմարեցան։

15. Դավթի վախը Մարա Մելիքի բանակից, հարձակումը յեվ վտանգվելը

Գնաց, բարձր լեռան գլուխ ելավ։ Տեսավ, վոր ընդարձակ հովիտի մը մեջ անթիվ ու անհամար զորքեր լեցված են։ Յերկյուղեն շփոթած՝ մոռցավ Խաչ Պատերազմին և իր պատերազմային պատրաստություններն առնել։ Ձին ալ իր ֆարասաթ կորսնցուց։

Դավիթն ինքն իրեն ըսավ.

«Ո՛վ տեր,

Յեթե ասոնք բամպակ ըլլան ու յես կրակ,

Չպիտի կրնամ այրել.
Յեթե դարնան վոնիկ գառներ ըլլան,
Ու յես սարի արրնխում գայլ,
Չպիտի կրնամ անոնց վրա.
Ու անոնք փոշի ըլլան,
Ու յես գարնան հորդ գետ,
Չպիտի կրնամ տանիլ.
Տեր, դուն ինձ ոգնե...»

Ըսավ, ու սկսավ պատերազմիլ.
Յերկար պատերազմելեն հետո, հաղթվեցավ. իր աստղը յերկինք սկսավ նոժորիլ.

16. Չենով Հովանի գուշակությունը. ևրա իսմը ձիերի հետ յեվ Դավիթի հասցրած ոգնությունը

Չենով Հովանի մատանիի ակը մատին վրա լերտվավ խաղարող արեվի պես. ձին դուրս հաննց ու հեծնելեն առաջ հարցուց ձիուն.

— Յերբ կրնաս գիս Դավիթին հասցնիլ.

Ձին ըսավ.— վեց ժամեն.

Հովան ապտակ մը գարկավ ձիուն և ըսավ.

— Չի, Դավիթ ձեռքե դնաց. ինչ դամ կր հասցնես գիս Դավիթին.

Ձին ըսավ.— Յերեք ժամեն.

Հովան վերստին ապտակեց և միևնույն հարցը ըրավ ձիուն.

Ձին պատասխանեց.

— Աչ վոտքդ դիր զանկուն, աչքդ գոցե, դեռ մյուս վոտքդ զանկուն չդրած, կր հասցնեմ.

Չենով Հովան հասավ Դավիթին, տեսավ վոր քիչ մնացած և՝ Դավիթ թշնամիներու ձեռք իյնար կանչեց բարձրեն.

— Ե՛յ, Դավիթ, կոտրե՛ր և քու բերան, կանչե.

«Հացն ու գինին,
Մարաթի Բարձր Աստվածածին,
Ինչ Պատերազմին վեր իմ աչ թեվին.
Գաշեմ Թուրն ի կեծակին,
Բերեմ բյուրն հազարին»:

Դավիթ պատասխանեց.

— Բաբեր, դարձի գնա. վերադարձիս քու բարությունդ չպիտի մոռնամ. գիտցա՝ ինչ կ'ըսես.

Դավիթ ինքն իրեն ըսավ.

«Յա, հացն ու գինին,
Մարաթի Բարձր Ասավարածին,
Խաչ Պատերազմին վեր իմ աջ թեվին.
Քաշեմ Թուրն ի Կեծակին,
Բերեմ բյուրն հազարին»։

17. Ձիու քաջալերքը յեվ Դավթի կատարած ջարդը

Ձիու ֆերասաթն ալ յեկավ իր վրա, լեզու ելնելով, ըսավ.

«Վորչափ կը կտրե քու Թուրն Կեծակին,
Յերեք հարուր վաթսուն և վեց հազար եմալ՝ կոտրե իմ պոչ։
Ինչ խտար կոտրե քու Թուր Կեծակին,
Յերեք հարուր վաթսուն և վեց հազար եմալ՝ կոտրե իմ ականջներ
Ինչ խտար կոտրե քու Թուր Կեծակին,
Յերեք հարուր վաթսուն և վեց հազար եմալ՝ իմ բերնի շորան։
Ինչ խտար կոտրե քու Թուր Կեծակին,
Յերեք հարուր վաթսուն և վեց հազար եմալ՝ իմ վոտաց նալեր»։

Դավիթ ինկավ մեջտեզ և սկսավ աջու ծորել, ձախով ծորթփել, և զորաց յետքը եբեր։

18. Դավիթն ու ալեվորը. Մարա Մելիքը Դավթին արբեցնում յեվ ողթայում ե. Ջենով Հովանի ոգնությունը

Կոտորածի ժամանակ, ալեվոր մը կը կոչե.

— Դավիթ, փոստ, փոստ, փոստ...

Դավիթ զայրացավ և ըսավ.

— Դու ինձ փուշտ կ'ըսես, կաց, վոր քեզ ալ սպաննեմ։

Ալեվորն ըսավ.

— Փուշտ չեմ ըսեր, փայտոստ, փայտոսա կ'ըսեմ։

Այդ ձայնը յերբ Մսրա Մելիք լսեց, վրանեն դուրս ելավ և տեսավ արյան հեզեզի մեջ իր զորաց դիակները պկլորի պես կը ծփծփան։

Թուրը թեվեն, խաչ մը վզեն կախած՝ յեկավ հաշտվելու։ Հաշտվեցան։ Մելիք զԴավիթ հրավիրեց իր վրանի տակ։ Կերակուրիատեն պատվիրած եր, վոր նուռան յոթ տարվա գինին Դավիթին տան, նորը իրեն։ Իրեն փոքր ամանով, Թլոլ Դավիթին՝ մեծ քասով տան, վոր արբենա և սպաննենն։

Յերբ Դավիթ արբեցավ, գութանի գնճլով քառասուն փաթ կապեցին։

Ջենով Հովան մատանիի լերտվելեն իմացավ, վոր Դավիթ նեզուքլան մեջ ե։ Հեծավ ձին և անմիջապես ոգնուքյան հասավ և բարձր ձայնով կանչեց.

— Դավիթ, ըսե՝

«Հացն ու գինին Մարաթին
Ու սուրը Աստվածածին...»

Դավիթ ըսավ.

— Բարեր, հեռու գնա, հիմա շղթայի կտորները Սասնո յերկիր կը հասցնեմ։

Ջենով Հովան յետ դարձավ։

Թլոլ Դավիթ շղթան փշուր-փշուր ըրավ ու ազատվեցավ։

19. Դավթի յեվ Մելիքի մենամարտը. Դավիթը սպանում և ետեն

Հետո Մելիքի հետ վեճի բռնվելով՝ քառասուն ջաղացի քար, քառասուն գոմեշի կաշի, քառասուն կանգուն փոսի մը վրա դրին։ Մելիք մեջը մտավ և ըսավ.

— Դավիթ, յերեք անգամ Թրովդ զարկ. յեթե կրցար քարերը կոտրելով գիս սպաննել, լավ. յեթե չկրցար՝ յես կ'ելնեմ, կը փորձեմ։

Դավիթ չընդունեց, ըսավ.— Նախ, յես կը մտնեմ։

Մտավ։ Մելիք չկրցավ ելլասել։ Դավիթ ելավ։ Մելիք մտած ատեն, Դավիթ կոչեց.

«Ցա հացն ու գինին,
Մարաթի սուրը Աստվածածին,

Այլ Պատերազմին.
Բաշեմ Թուր կեծակին,
Այնպես զարկեմ, կտրեմ,
Բառսուն ջաղցի քար,
Բառսուն գոմշու կաշին,
Այնպես կտրեմ Մսրա Մելիքին,
Վոր մազ վեր մազի եվել, պակաս չգա»...

Զարկավ, կտրեց. յերկու կտոր յեղավ։ Զատ-զատ կշռեց։ Կտորներեն մին ծանր յեկավ մյուսեն քառասուն լիտր։ Նայեցավ, վոր պլորի ձախ ձուն պակաս եր։ Մեկալը բերավ կշռեց, քառասուն լիտր յեղավ, ասով յերկու կտորները հավասարեցան։

Վեգոն գինք ծաղրած ըլլալուն, վերադարձին Մելիքի ձուն հետ բերավ, և դիտմամբ ձգեց Վեգոյի տանիքին, վոր գայն փլցուց և վար իջավ։ Վեգոն, վոր կտավագործ եր, յերկյուղեն դուրս փախավ, փորհարութենե բռնվելով, բավեցավ Ծոան Վեգո։

Բ

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԽԱՆԴՈՒԻԹ

20. Դավիթը յանելով ասուղների գովը՝ պճում և հանգուցին ուսենալու

Դավիթ վերադարձավ Սասուն և սկսավ վորսորդության։

Անոր քաջ վորսորդի և անվեհեր պատերազմողի համբավը հասավ Կապույտ Կողի Թագավորի աղջիկ Չլկագի (քառասուն հյուսվածք) Խանտուտի ականջ։ Ան ալ յերկու աշուղներ ղրկեց Դավիթին, վոր գինք գովեն։

Ենոնք յերբ հոն կ'երթան, Զենով Հովանին քով կը հասնին։ Զայն Դավիթ կարծելով, կը սկսին Խանտուտի վրայով շինված Ծուլիստի յերգերն յերգել։

Հովան գանոնք ծեծելով կը վռնտե տուներն։ Աշուղները սրտաբեկ՝ ճանապարհին Դավիթին հայհոյելով կ'երթան։

Դավիթ վորսեն վերադարձին, անոնց կը հանդիպի, կը լսե այդ հայհոյությունը, պատճառը կը հարցնե և յերբ կը տեղեկանա, կրկին Չլկագին գովել կու տան։ Յերբ կը լսե յերգված յերգերը, խոսք կու տան յերգիչներուն, վոր յոթ որեն հետո տեսնվի Խանտուտին հետ։

21. Ուղեցույց պապը

Վորոշված որն ճամբա կ'իյնա, կը հասնի յերեք ճանապարհի միացման կետի վրա, ուր ալեվոր պապ մը նստած՝ վիճակ կը բանա ճանապարհորդներուն։

Դավիթ կը հարցնե.

— Պապե, հե՞ր նստած ես եստա։

Կը պատասխանե.

— Նստած եմ, վոր ճանապարհորդներուն իրենց ճամբան ցուցնեմ։

Վանա ծովն այն ժամանակ այդ կողմեր գոյություն չուներ։

Դավիթ հարցուց.

— Կը խնդրեմ՝ ըսե ինձ, վո՞ր կողմեն յերթամ Կապույտ Կողն։

Պապեն կը պատասխանե.

— Այս յերկու ճամբայով յերթաս՝ հեռու յե. բայց յերրորդ ճամբայով թեյեվ մոտ ե, անոր մեջտեղն ալ Պողպատյա հաստ գերան մը կա կայնած, վորո վրա գրված ե, վո՞ր ճամբորդ վոր անցնի այստեզեն, պետք ե անպատճառ սուր մը զարնե։ Յեթե կրցավ կտրել, ճամբաներ իրեն առջեվ կը բացվին։ Յեթե չկրցավ կտրել, գետին պիտի բացվի, և ինքն անդունդն պիտի իջնե։ Այդ ճամբայով գնա։

22. Դավիթը կտրում ե Պողպատե գերանը. Նա ախլաթցիներին խոստանում ե վերադարձին կռվել Սրանց հետ

Դավիթ գնաց և հասավ Պողպատե գերանին քով։ Զարկավ անոր։ Թեյեվ կտրեցավ, բայց վար չիյնալուն համար կարծեց, թե չկրցավ կտրել։ Սկսավ պապեյին անիծել։ Պապեյի վոտքերն ու ձեռքերը անկ յեղան, թուլացան, լեզուն լալցավ, աչք կուրացավ։ Ապա իրեն անիծեց. ինքն ալ միևնույն արկածներ ստացավ։ Ինք դեռ չկուրացած, քամի մը յելավ, կտրված գերանը վար տապալեց։ Անմիջապես սկսավ որհնել իրեն և պապեյին, վոր իսկույն վերստին առողջացան Խաչ Պատերազմի շնորհիվ։

Անկե անցավ, գնաց Ախլաթ։ Այնտեղի՞ բնակիչները Դավիթի քաջությունները լսած ըլլալով, պահանջեցին անկե, վոր իրենց հետ կռվի բռնվի։

Անոնց բսավ.

— Այժմ ժամանակ չունիմ. յոթ որեն հետո, յերբ վերադառնամ, ձեզ հետ պիտի կռվիմ։

23. Դավթի յեվ Խանդութի ամուսնությունը. Դավիթը գնում և ախլաթցիների դեմ կռվելու յեվ սպանվում և

Դավիթ գնաց, Խանտուար տեսավ։ Յոթ որյա հարսանիքեն հետո՝ անոր հետ ամուսնացավ։ Յոթ տարի մնաց Կապույտ Կոզ։ Ունեցավ յերկու զավակ՝ Մհեր և Միհրան։

Որին մեկը, իր ուսին վրա նայեցավ և տեսավ, վոր Խաչ Պատերազմին աղատեր և։ Չլկազիին բսավ.

— Խանտուտ, զիս լոզացուր, բայց իմ վրա յեթե նշան կը տեսնես, ինձ բան մի հայաներ։

Սակայն, յերբ Խանտուտ սեվ նշան մը տեսավ Դավիթի մարմնույն վրա, սկսավ հարցնել։

Խաչ Պատերազմին անմիջապես վերացավ։ Դավիթ զգաց վոր այլևս ուժ ու զորություն իրմե խույս տվին։ Հիշեց նաև ախլաթցիներու հետ դրած իր պայմանը։ Յեկավ, անոնց դեմ պատերազմեցավ։

Դավիթ յերբ Կապույտ Կոզեն ձիու վրա նստած՝ սկսավ հառաջանալ, ձին չեր կրնար քաշել, վորովհետեվ ձիու և Դավիթի ծանրությունն այնքան շաացեր և, վոր այլևս գետին չեր կրնար դիմանալ, կը խրեյին, մինչ Խաչ Պատերազմին զանոնք թեթեվ կը պահեր։

Կռվի տաքցած ժամանակ, գութանի խոփ մը զարկին Դավիթին ու զայն սպաննեցին։

24. Չենով Հովանը յեվ Դավթի վորդի՝ Մհերն առնում են Դավթի մահվան վրեժը

Չենով Հովան աստղին մարելեն, մատանիի խանգարելեն գուշակեց, վոր Դավիթ մեռած և։ Կապույտ Կոզն յեկավ, անկե Մհեր հետն առած Ախլաթ վերադարձավ և զայն բոլորովին ավերեց։ Միայն մեկ պառավ մնացած եր, վոր քաշված անկյուն մը ծուխ կ՚ըներ։

Չենով Հովան և Մհեր անոր քով յեկան՝ հարցուցին.

— Ինչո՞ւ ծուխ կ՚ընես։

Պառավ պատասխանեց.

— Անոր համար, վոր Մհեր և Հովան չըսեն, թե այնպես ավերեցինք Ախլաթ, վոր այլևս մի տեղե իսկ ծուխ չպիտի յելնե։

Զայն ալ սպաննեցին ու անցան։

Այն ժամանակ բոլոր Ախլաթ ընդարձակ և բաղմամարդ քաղաքներ ուներ, բայց Զենով Հովան զանոնք բոլորն ալ ավրեց։

Այն որեն ցարդ կը հիշվի «Դավիթի ավերն» առածը։

Անկե վերջ դարձան յեկան Սասուն, այդ կողմերուն սկսան տիրել և շինություններ ընել։

Գ

ԲԱՂԴԱՍԱՐ ՅԵՎ ՍԱՂՆԱՍԱՐ

25. Դավթի յերկրորդ վորդին՝ Միհրանը դառնում և Պըտըրխանա թագավոր. Կռապաշտ թագավորն առնում և Միհրանի գեղեցիկ աղջկանը

Իսկ Միհրան իր մայրն սպաննելով Հովանի թելադրությամբ, գնաց Պըտըրխանա քաղաքը։ Այդ միջոցին Պըտըրխանա թագավորը կը մեռնի. իշխանները Տեվլաթ զուշին թող կու տան յերեք անգամ. յերեքն ալ Միհրանի գլխուն կը նստի։ Զայն թագավոր կ'ընեն։ Կ'ամուսնանա, կ'ունենա սքանչելի գեղեցկությամբ ոժտված աղջիկ մը։

Կռապաշտներու դրացի յերկրի թագավորն հարկ կը պահանջե։ Հարկահաններն յերբ կու գան և կը տեսնան այդ որիորդը, առանց հարկ պահանջելու յետ կ'երթան և անոր գեղեցկությունը թագավորին կը պատմեն։ Թագավորը յերեք անգամ պատգամավորներ կը ղրկե և կը պահանջե, վոր աղջիկն իրեն տան։ Իր կռապաշտության համար՝ Միհրան կը մերժե։ Վերջի անգամ, յերբ պատերազմելու սպառնալիք կ'ընե, իրեն հոգեվոր դուստր ընելու պայմանով, Միհրան աղջիկն անոր կու տա։ Կռապաշտից թագավոր կը հիանա անոր գեղեցկության։ Քառասուն հարճ անոր տրամադրության տակ կը թողու և կը պատվիրե՝ անոր ամեն մեկ հրամանն անմիջապես կատարեն։

26. Բաղդասարի յեվ Սեղնասարի ջրային ծնունդը

Որ մը կը փափաքի պտույտի յերթալ։ Հրաման կը ստանա։ Մարգերով և ծաղիկներով զարդարված մի ըլրակի վրա կ'ելնե իր ընկերներով, վորոնք անտառին մեջ առանձին վայրեր կը քաշվին։ Իսկ ինք առանձին ձիու վրա նստած՝ բարակ ճամբայե մը պուրակին խորը կը հառաջանա։ Կը հասնի քառակուսի ավազանի մը, ուրկե ջուրը մարգու մը հասակին չափ կը բարձրանա և վերստին իր մեջ կ'անհայտանա։ Յերկու ափի չափ այդ ավազանի ջրեն կը խմե, ասկե արգանդին մեջ հղացում մը տեղի կ'ունենա։ Հղությունը հետզհետե կը հայտնվի։ Նախարարները իրողությունը թագավորին կը հայտնեն։ Թագավորն պատճառը կ'ուղե հասկնալ, քանի վոր ինք զայն իր զավակի պես պահած եր։ Աղջիկը կը պատասխանե.

— Յես իմ հղացումը բերանես ընդունած եմ, ուստի պետք ե բերանես ծնիմ։ Յեթե այգպես ըլլա, գիտցիր, վոր շնության պտուղ չե. ուրեմն սպասելու յեմ ինն ամիս, ինն որ և ինր ժամ։

Թագավորը հավանեցավ, սպասեց։ Յեվ իրոք Միհրանի դուստրը բերանեն ծնավ յերկու արու զավակ, վորոնց ճկույթը ե մազերը վոսկի ելին։ Մեկուն անունը Բաղտասար, մյուսինը՝ Սեղնասար դրին։

27. Յեղբայրների զբազմունքը, ասավածապաշտ դառնալը յեվ թագավորի վերաբերմունքը

Ասոնք իրենց մոր խորհուրդին միշտ կ'անսային, և առերես կը պաշտեյին իրենց հոր անասունի պոչը և կրակը։ Որ ավուր վրա տղայք յերթալով՝ կը զորանային։ Հայրը տեսնելով զայդ և դուշակելով մի վտանգ, ուղեց զանոնք սպաննել. այդ պատճառով միշտ չարաչար կը նեղեր զանոնք։ Ամառ ատեն, հասունցած ցորենի և պարտեզներու պտուղները թռչուններեն զերծ պահելու համար՝ Սեղնասար ե Բաղտասար միասին կ'երթային մերկ և բոկոտն։ Որ մը Սեղնասար թռչուններ հալածելով՝ շատ նեղացավ։ Աչքերը յերկինք հառած՝ ըսավ.

— Ո՛վ Աստված, ազատե զմեզ այս նեղութենեն։

Բացվեցան յերկնքի դռները, յերեվեցավ Աստված։ Այնորեն այլևս թռչուններն անոնց արտերուն և պտուղներուն չեյին մոտենար։

Սեղնասարն այդ բանը պատմեց Բաղտասարին, վոր կռապաշտութենեն ձեռք քաշելով՝ սկսավ Աստծո ապավինել։

Կռապաշտները, յերբ լսեցին այդ բանը, թագավորին պատմեցին։ Ան ալ կանչեց յերկու յեղբայրներն ու պատվիրեց, վոր կրակին ու հայվանի պոչին յերկրպագեն։ Անոնք առերես հավանություն ցույց տվին։

28. Յեղբայրներբ մոր խորհրդով լողանալով ավազանի ջրի մեջ՝ դառնում են հզոր

Մայրերնին անոնց ապագա վտանգը նշմարելով, խորհուրդ տվավ, վոր յերթան, իր տեսած ավազանին մեջ լողանան։

Անոնք գնացին։ Բաղտասար քիչ, Սեղնասար շատ լողացավ, վորովհետեվ մայրերնին յերբ յերկու ափ ջուր խմեր եր, վերջին ափն մի քիչ պակաս եր։ Սեղնասարբ այդ պակաս ջրի պտուղն եր, հետեվաբար՝ տկար մնացած եր։ Լողանալեն հետո յերկուքն ալ համահավասար ուժ ունեցան, և որ ավուր վրա ես առավել սկսան զորանալ։

29. Թագավորը հարբեցնելով Բաղդասարին՝ ուզում և նրան սպանել. Սեղնասարն օգնության հասնելով՝ ազատում և յեղբորը յեվ սպանում՝ թագավորին

Թագավորը զայն տեսնելով՝ վորոշեց Սեղնասարը դրկել յուր պապուն՝ Միհրանին քով, Բաղտասարն ալ սպաննել։ Յեվ վորովհետեվ հայտնի չեր կրնար, որ մը քաղաքեն դուրս գնացին, լեռան մը վրա խնճույք ընելու։

Թագավորի և նախարարաց խորհրդով՝ Բաղտասարն արբեցուցին։ Յերը անզգայացավ, շղթաներով կապեցին և պիտի ըսպաննեյին։

Սեղնասարը մատանիի ակի խանգարիլը տեսավ, հրաման առավ և շուտով մեկնեցավ։ Հասավ խնճույքի վայրը, հոն գտնվող նախարարները և անոնց հետ յեղող քառասուն զորքերը բոլորն ալ սպաննեց և միայն Թագավորն ողջ պահեց, մինչեվ վոր պաղ ջուր սրսկելով սթափեցուց Բաղտասարին. Թագավորն ալ Բաղտասարի ներկայության սպաննեց։

30. Յեղբայրների կռիվը յեվ հաշտվելը. Միհրանը տիրում և կռապաշտ թագավորի յերկրին

Բաղտասար այդ վոճրագործության չհանդուրժելով, յերկար ժամանակ Սեղնասարի դեմ կռվի բռնվեցավ, բայց և վոչ մեկերնին ընկճվեցավ։ Մինչեվ վոր իրենց մայրը հասավ և հաշտեցուց զանոնք, դիտել տալով, վոր սպաննված թագավորն իրենց հայրը չե։

Այս կերպով Միհրանն յեկավ, այդ յերկրին ալ տիրեց։ Իսկ Ջենով Հովան և Մհերն ալ՝ Սասունին։

ՄԻ ՄԻՋԱԴԵՊ ԴԱՎԹԻ ԿՅԱՆՔԻՑ

Հովիվ Դավիթը ձեռքը դեմ տալով բռնում, կանգնեցնում և Սեվ սարից վայր գլորվող հսկա ժայռը

Սասունցի Դավիթ հովիվ յեղած ժամանակ՝ Սեվ սարեն (Սեղնասար) վոչխարները վար կ'իջեցնե լեռան ստորոտը — Մշո դաշտ։

Ճաշկիթին, յերբ վոչխարները համախմբված ելին և կանայք կթելով զբաղված, լեռան կողերեն հսկա ժայռ մը կը փրթի և վար կը գլորվի դեպի վոչխարներն ու այնտեղ հավաքված ժողովուրդը։

Դավիթ տեսնելով՝ վոր ժայռը պիտի գա և ճզմե թե՛ ժողովուրդը և թե՛ վոչխարները, արագ շարժումով մը կը ցատկե ժայռին առջեվ և իր աջ ձեռքն անոր դեմ կու տա։ Ժայռը տեղն ու տեղը կը կենա, իսկ Դավիթի ձեռքը կը դրոշմվի ժայռին վրա։

*Այդ ժայռը մինչեվ հիմա կը մնա և կը կոչվի «Դավիթի քար»։**

---

* *«Դավիթ և Մհեր»-ի այս հրատարակութենեն ոգտվելով, Սասունցի Դավիթի հովվական կյանքեն դրվագ մը կ'ավելցնեմ հոս, վորպես հավելված։ Այդ դրվագը ինձի պատմած են Մշո դաշտի Խաս գյուղացիները, ինչ վոր սաուգած եմ ուրիշ գյուղացիներե ալ... Կ. Ս.*


Դ
պատում

Սանոյ թագավորներ

պատմեց
Քավառցի Դանիել Ղազարյան

գրի առավ 1892 թ
Վահան Ք. Տեր-Գրիգորյան



ԱՌԱՋԱԲԱՆ

Այս պատումի ձեռագիրը գտնվում է Յեր. Լալայանի բանահ. գիտարշավների հարուստ ժողովածուի մեջ, վոր այժմ պահվում է ՀՍԽՀ Պատմության և Գրականության ինստիտուտում։

Ձեռագիրը հանված է մի մատյանի 71—80 եջերից։

Առաջին եջի վերեվում գրված է՝ «Թուսդյալու Վահան անարժան քահանա Տեր-Գրիգորյան». ապա ունի հետեվյալ վերնագիրը՝ «Սասունցի Մհերի հեքաթը», 1892 ամի դրեցաւ 5 մարտի. գրեցի Դանիէլ Ղազարովի ասելով Զօլախաչ գեղջ»։

Պատումը կիսատ է մնում 79-րդ եջում, իսկ այնուհետեվ եջ 80 քահանայի ձեռքով գրված է մի «արձանագրութիւն Խրիմեան Հայրիկի գալստեանն. Ի 1898 ամի, 2 օրն օգոստոսի»։

Արձանագրությունը վերջանում է այսպես՝ «Գրեցի ես ինքս Վահան քհնյ տր Գրիգորեանց ի գիւղն Զօլախաչ»։

Պատումը գրված է մեծ մասամբ հատ-հատ տառերով, ըստ յերեվույթին ուրիշի ձեռքով, բայց մեջ ընդ մեջ նույն գրությունն է, ինչ վոր արձանագրությանն է։ Պատումի մեջ կետադրություն գրեթե չկա. տեղ-տեղ պակասում են նաև տառեր։

Բառասկզբի ձայնավորներից առաջ ավելացած հագագը մերթ գրված է «յ», մերթ՝ «հ»։ «Հ»-ով գրածները պահում ենք այստեղ անփոփոխ, իսկ «յ»-ով գրածները նշանակում ենք «Յ» տառով։ Ըստ Հր. Աճառյանի՝ Զոլախաչի յենթաբարբառը պատկանում է Մշու բարբառին և ունի սկզբից «Յ» հնչյունը։*

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

---

* Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Եմին. Ազգ. Ժող. հատ. Ը., 1911, յերես 116, 118, (138)։

II

ՍԱՆԱՍԱՐ ՅԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

1. Կաղ Դոգեն վախցնում և Գորգիկ թագավորի հայր Ծովինարին Սինամքարի կռապաշտ թագավորի կնության համար

Ժամանակով կ'եղնի մեկ թագավոր, անուն էլ Գորգիկ կ'եղնի։ Աղբոր անուն էլ Թորոս կ'եղնի։ Գորգիկ թագավորի քուրոչ անուն՝ Ծովինար խանում։

Ընդրա քուրոչ ջաուի անուն Թուխալ Դոգե։ Ետ Դոգեն շատ ավազակ ու գող եր։ Քաղաքի մեջ որը մեկ՝ գանգատ խազար ու մեկ եր։ Ծովինար խանումի մոտ գանգատ կ'ենին բոլոր ելլըկով։

Էն մեկ որ բերեց, լավ ձեծեց, Թուխալ Դոգեյին ջարթեց, տվեց երկու յասաղուլի ձեռն, ուր խողից խանեցին, տաբան ուբիշ խոզ։

Գնաց Սինամքար թագավորի խողի մեջն, քաղքի մեջն դուրս եկավ։ Գնաց, մեկ ժամանակ ճնաց քաղքի մեջն։ Գնաց են Սինամքարի թագավորին ծանոթացավ. գնաց ընդրա յաուեջն դուլուղդար եղավ։

Ջի.— Թագավոր, թագավորն ինքն առանց կին չի նստի։

Ջի.— Վերդի, յես կռապաշտ եմ, խաչապաշտ թագավորներն էլ ընձի աղջիկ չիտան. յես էլ իմ ելլըկից աղջիկ չառնիմ. հընչի որ մեղք ա, ընձի չի պատկանի իմ ելլըկից աղջիկ առնել։

Ջի.— Թագավոր, ինչ կը տաս ընձի, որ յես երթամ, խաչապաշտ Գորգիկ թագավորի քուրը բերեմ քեզի։

— Կշրոքի մեկ թայն ոսկի գնեմ, մեկն ե՝ քեզի։ Ջու կրշ-

ոանովգ ոսկի տամ քեզի. իմ քաղաքն ել Թասլիմ ննեմ քեզի։ Անուն ընձի, ուտել-խմել քեզի եղնի։

— Տասնուհինգ ձիավոր կը տաս քեզ[ա]վով, յես երթամ բերեմ, են տամ քեզի։

Գնաց գիշերվան Գորգիգ Թագավորի քաղքի մեջն, մեկ քարվասարի մեջ իջավ։ Մնաց։ Են լուսուն ելավ գնաց են Թագավորի Ժաղրրի կուշտ, տեսավ, որ մեկ Թոփալ կնիկ գուգում ձեռն, եկավ, որ ջուր տանի։

Ետ Գոգեն են գալող Թոփլու ձեռնեն գուգումն առավ, գարկեց ենտրա գլխուն, սպանեց, տարավ, Թալեց դատ. ուր շորերն ետրա վրայեն խանեց, ինքն խաքավ, առավ գուգումն, ջուր լցեց, տարավ, գնաց, Ծովինար խանումի Ժառեջ կայնավ։

Ասաց.— Ա՛ղջիկներ, ես գիշերն վեր պիտի պախպանա ընձի։

Աղջիկներ ասացին.

— Գոգեն պտի պախպանա քեզի ես գիշեր։

Բերեց, ետոր շորեր խանեց, ոտներ մաժեց, բերեց տեղ ու բարցի մեջն քնցրեց։ Ելավ ջուղապ տարավ քարվանսարեն.

— Շուտ արեք, երթանք, որ քնցրեր եմ։

Առան քեզ[ա]ն ուրանց խետ, տասնուհինգ ձիավորով գնացին, խանումի հարամխանի դուշ կայնան։ Տեղ ու բարցով վերցին, դրին քեզ[ա]վի մեջն, քշեցին ձիանքն ու գնացին։

Գիշերվան մեջ մեկ ել աչքեր բացեց, տեսավ, որ ամեկ աստղ եղած ին մեկ-մեկ չորթանի չափ։

Առավոտուն Գորգիգ Թագավորն ելավ տեսավ, որ Ծովինար խանում չկա։ Ջաո եցկեց քաղաքի մեջ։ Վիրնից խարցուց, մեկն ըսկի սալուխ տվող չեղավ։

Վորն ասաց.— Վիշապն տարավ։

Վորն ասին.— Ծովի մեջն ընգավ. վեր գիդա, Թե իմալ եղավ։

Կորավ, գնաց. ձեո քաշին մոտեն։

Տարավ Սինամքեր Թագավորի մոտն։

Ելավ Թագավորն տեսավ, որ ողորդ քրց հինգն հախ չաԹրնդա խորոա ա ու պատվելի։ Բերեց, Գոգեն կիշեոքի մեկ Թայդրեց, մեկն ել ոսկի կիշոեց. ոսկին տվեց Թոփալ Գողեյին, Ծովինար խանումն առավ իրան, ուր քաղաքն ել Թասլիմ երեց Գոգեյին ու ասաց.

— Անուն ընձի, ուտել-խմել քեզի, վահելել քեզի եղնի, իմ խոքրա քույր, Գոգե Ջան։

Ուրանց որենքի պես պսակեցին Ծովինար խանումն Սինամքըր Թագավորի վրեն։

2. Սինամքար պատառում է Գեղուազեմը, պարզվում է նրա կուռիերի խոսակցում է իր վոլիներ՝ Սանասարին նրա Բաղդասարին մասաղ անել

Եղավ որ երկու խոքով մնաց։ Ինն ամիս, ինն սաաթ, ինն դամ թամամավ, պառկավ բերեց մեկ տղա։ Անուն դրին Սանասար։

Մնաց մեկ ժամանակ ել, պառկավ, բերեց մեկ տղայ ել. Ենդոր անուն ել դրեցին Բաղդասար։

Մնաց. մեկ ժամանակ ել մնաց, Սանասարն կարգեց։

Ելավ որ Սինամքըր Թագավորն Ծովինար խանումին ասաց.

— Քանի որ իմ ջահել ժասանակն ա, պըդի երթամ Յերուսաղամա վրեն, կռիվ անեմ։

Են ել ասաց.— Ձու կամքին կապված ա. կ'երթաս, դու պիդես. կու մնաս՝ դու պիդես, Թագավոր։

Ասկար ժողվեց, մավջուք երեց, Յրմեն ուր պատրաստություն տեսավ ասկարի խամար, գնաց Յերուսաղամա վրեն կռիվ։

Ոխտ տարի սղնաղ տվեց, քաղքի վրեն կռիվ երեց։ Ենպես Թանգություն եղավ, Յերուսաղեմ քաղաքն, որ մեկ խաց մեկ ոսկու չեն տար։ Մարդիք լցված ին ոթաղներն, առհասարակ, իրար հետ կ'ասին.

— Ա՛ստված, եղնի՛ որ մեկ ել մենք Յեժնություն տեսնանք, կուշտ փորով մեկ ել խաց ուտենք։

Ենդոց մեջն բարի մարտ կար, ասաց.

— Վաղ ևսա վախտ մեկ խալվար խացն տաս մանեք առնող չեղնի։

Ինդոց մեջ անավոդ մարդ կար, ասաց.

— Ա՛ռ ես մեկ ճանդ ոսկին, խաց առ, տանիմ տամ, իմ երեխեքն ուտեն։ Ախար, Յո՛ւստ կու տաս։

Էն բարի մարդն ասաց.

— Որ չես ավատս ասելուն, տեսնես ու չուտես։

Լուսուն ելան տեսան, որ ասկարն ընաջինջ եղած։ Են ա-

նավոդ բերին, երին չափրար կամ ամրարդար, որ են տեղի մնացած խացն ու խորակ մարդուն ուր զորայի ատ, որ ատանին, ուտեն։

Մեկ մարդուն իր ըռսխից պակաս տվեց։ Ուր ձեռի չափն վերցին, զարկին ուր գլխուն. են անավոդ ամրարդարն մեռավ։

Ողորդ որ՝ տեսավ ու չկերավ են խացիցն։ Են արդար մարդու խոսքն կատարավ։

Գիշերվան մեկ վախտն ամուդամն որ խախնդավ, Աստուծուց կրակ թափավ, Սինամքա՛ր թագավորի ասկարն ջարթեց։

Սինամքա՛ր զանչեց.

«Յա՛ կռքեր, յա՛ կռքեր, Սանասարն ու Բաղդասար ձեզի մատաղ կ'ենեմ, որ դուք խասնիք, որ դուք խասնիք, ինձի աղատ ենեք»։

Ելավ դեվեն* խեծավ։ Ենդոր Շամա ուղդ կ'ասեն։ Գիվանք մտան դեվի* փորտակ, փախցուցին Սինամքա՛ր թագավորին, տարան։

Ելավ գնաց ուր շահրի մեջ։

Ծովինար խանումն ելավ ուր դիվանխանի տանիսն, տեսավ որ՝ առանց զորք, առանց զորապետ, խեծել ա Շամա ուղտն ու գու քա. թագավոր սեվցեր ա, եղե կուպր։

Ասաց.— Թա՛գավոր, ո՞ւր ա քու զորքն, ո՞ւր ա քու զորապետ։

Թագավորն ասաց.— Ես վերին դեխի Աստված կրակ թափեց վերեվից, իմ զորքն ու զորապետն Յըմեն ջարթեց, երեցեց։ Սանասարն ու Բաղդասարն մեր կռքերին մատաղ եմ զանչե, անջախ որ ինձի խըլըսցրած ին։

3. Սանասարն ու Բաղդասարը մոր խորհրդով փախչում են. Հաբեղան վերադարձնում և նրանց։ Նրանք սպանում են Սինամքարին յեվ կործանում կռքերը

Մնաց. իրիկուն Ծովինար խանումն զանչեց ուր երկու տղին՝ Սանասարին ու Բաղդասարին, ասաց.

— Վո՛րդիք, փախե՛ք, գացեք Գորգիգ թագավորի քաղաքն, որ ձեր խեր ձեզի չմատղա կռքերին։ Գիշեր պայծառ աստղն բռնե՛ք նշան ձեզի, ցերեկն ել արեվելք։

---

* «Դեվեն», «դեվի»—ուղտը, ուղտի։ Խ մ ք.

Շատ գնացին, թե քիչ, Աստված գիդա. գնացին մեկ խափեղի բռաստ եկան։

Խափեղեն ասաց.— Թագավորի՛ վորդիք, բարո՛վ եկաք, վրր իմ գլխուն, վրր իմ երեսին. դո՞ր եք եկե, դո՞ր կ'երթաք։

Ասեցին.— Մեր խեր մեզի կը մատղեր կռքերուն. մենք ենդոր խամար փախեր ենք։

Քի.— Վո՛րդի, մարդ ել ուր ջիգարն կը մորթա՞. ձեր մերն ձեզի խափեր ա. Յեգ գարձեք, երթանք ենդրա մոան։ Յա ուր խերն ա ընկե ուր միտն, յա ուր մերն. կը խափա ձեզի, կը ճամփա իր խոր քաղաքն։

Յեդ դարձան, եկան ուրանց խոր քաղաքն, տեսան, որ խերն ելեր ա գիվանխանի տանիսն, թեվերն կանթե, կ'երթա ու գու քա։

— Դո՛ւք շուն, ձեր ..., շո՛ւն-շան վորդի, փո՛ւշտ. ո՞ւր անցիք։ Համեցե՛ք, երթանք կռոց առուն։

— Խերի՛կ, քե մեռնիմ, խերի՛կ, քե մեռնիմ. արեվելք փախանք, չպրծանք, արեվմուտք փախանք, չպրծանք քու կռոց ձեռնեն։

— Համեցե՛ք, երթանք կռոց տուն, ձեզի մատղեմ կըռքերուն։

Են ինչ որ Սանասարն եր, ասաց ուր աղբորն.

— Որ կ'երթանք կռոց տուն, չեղնի որ մեկեց մեկ պառկիս, մեր խերն քեզի՞ մատղա։ Տեսնանք, կանանք մեկ ֆանդով մեր խորն սպանենք։

Ուրանց գրգերն դրին ուրանց դափուդի տակն ու գնացին թըխ կռոց տուն։

— Դե՛, համեցե՛ք, ձե մատղեմ։

Ջոջ տզեն՝ Սանասարն ասաց.

— Թագավոր, մենք չե գիդե, թե ինչ թավուր կը պառկին կռոց Յառեջն, որ հաճո եզնի։ Յառեջ դու պառկի կռոց Յառեջն, որ մենք ել սովրինք, ենպես ենենք։

Թագավորն վերուց ոսկի թագն, դրեց գլոխն, մեկ երեսն տրորեց վրր ոսկի սալին, երեց որ մեկել երեսն ել տրորեց, Սանասարն ուր գուրդն զարկեց վրր խոր գլխուն, փարչմեց վրր ոսկի սալին, սպանեց ուր խորն։ Ուրանք գրգերն առան փրցան կռքերի վրեն, որ ոսկուց, արծաթից կամ ուրիշ բաներից շինած եյին, զըմեն ջարթեցին։ Ել շան ձեն, ել իշու ձեն,— տո՛, յես իմ, ի՛նչ ձեն ասես, կ'ելներ են կռքերու միջեն։

վերցին են ոսկի, արծաթ, որ են տեղն եր, կոքերի բերնի մարգրիտ, ջավահիր կեր, զրմեն առան ու դուրս ելան։

Ա. Սանասարը, Բաղդասարը յնվ նրանց մայրն ուղևորվում են գնալի հետ ոսկեր։ Հանապարհին Բաղդասարն առնում է նրանց հարսնացուների բայր Թևդուն Ծամից

Առան, եկան ուրանց մոր մոտն, ուրանց բավականին փող, ասպաս ու չադրը։ Համա Սանասարն կարգվուկ եր, Բաղդասարն ազաք եր։

Դեմ երեցին դեխ Գորգիդ թագավորի քաղաքն։ Ներիկվորև որ գու քեր չուրմի կես գիշեր, Սանասարն նորագարութուն կ'եներ։ Ենդոց յեդն եվ Բաղդասարն գ'ելներ չուրմի լուսուն կը մոտներ. ազոթրընի մոտն եվ՝ մերն կ'ելներ, եկեցի կ'եներ չուրմի լուր մի լուսունան կը մոտներ, շիտակ լուս կու բացվեր։ Լուսն որ կը բացվեր, արեվն կ'առներ, կ'ելնին ուրանց գաթարդութուր կը բառնին, կ'երթին ուրանց ճամբուն։

Մեկ տասն ավուր կամ քսան ավուր ճամբա ես թավուր գնացին։ Չուրմի կես գիշերն Սանասարն կը քաշեր։ Եկավ Բաղդասարի դորն։ Թիթեռնիկն եր, փոթորիկ գարկեց, շամդան ընցուց։ Ձեռ տարավ չերն, նա կրակ կեր, նա չախմախ կեր. ախորրն եվ ամոթու չիմցուց։

Ելավ տեսավ՝ ուր* չադրի տակ կրակ վըր կրակի կը վառեր։ Ելավ առավ ուր** թուրն ու գուրզն գնաց։ Գնաց, կրակն վերցրեց, պտի բերեր, դարցավ փոշմնավ, գնաց, ետ կրակ ենողին խարցուց,

Թե.— Ի՞նչ մարգ եք։

Են կրակ ենող մարդն ասաց,

Թե.— Կրակ Խափուշիկն եմ։

Ասաց.— Որ դու կրակ Խափուշիկն ես, յոնստ գու քաս, յա դո՞ր կ'երթաս։

Են եվ ասաց.— Մեր թագավորին Սանասարն ու դու, Բաղդասարն, սպանած ան, կ'երթամ, ենդոց կը սպանեմ, քանի որ երեխա յեն, մեր թագավորի հայիվն առնիմ։

Են վերուց, քի.

---

* «Ուր»—մի տեղ։ Խմբ.

** «Ուր»—իր։ Խմբ

«Որշնյալ կամ արարոզին,
Վոր քնուկ ա, զարթուն կենա.
Վոր զարթուն ա, ուր թատրիր տեսնի.
Չասա՝ գա՛վուր ղավիլ բե ղավիլ բռնեց մեզի.
Յես Բաղդասարն եմ, կա՛մ,
Սանասարն ել ենտեղն ա»։

Քաշեց դուրզն, ընկավ ենդոց մեջն ու ջարթեց։
Կրակ Խափուշիկն փախավ։
— Բա՛ղդասար, քե մեռնիմ, Բա՛ղդասար, քե մեռնիմ, շատ
10 աբրանք, շատ անգին քար, ջավահիր չամչրաղ ունիմ ընձի, մի
ղիմիշիր։
Ասաց Բաղդասար.
— Դու կու տաս քու խաթրով, յես կ՚առիմ իմ թրով։
Ասաց.— Աղջիկ մ՚ ունիմ, անուն Դեղծուն Ծամ։
Արեգական կ՚ասա՝ դու մի՛ ելնի, յես կ՚ելնիմ ու կամ։
Ասաց.— Գնա՛, խաքո՛ւ, զարդրա, ա՛ռ ու արի։ Ոխտ ղաթար
ջհեղ կը դնես խետ, կը խաքցնես, կ՚առնիս գու քաս իմ։ Թե որ
չի խաֆնա, քո մոր արկանդն ել մտնիս, կը խանեմ կը սպա-
նեմ. թե որ խաֆնա, գնա՛, քեղի իզին ա։
20 Խաքցրեց-խփցրեց, բերեց Բաղդասարի մոտն։ Տեսավ, խա-
վանավ, իզին տվեց Կրակ Խափուշիկին, գնաց։

Առավ, եկավ, ուր չադրի մեջն գլուխ դրեց, պառկավ։ Լուս
բացվավ. ինքն քնած, Ծովինար խանում ելավ իմցավ, տեսավ
որ՝ ղաթար-ղութուր, մեկ խանում ել չադրի մեջն կայնուկ ա։
Սանասարին իմցրեց, քի.
— Ելի՛, վորդի՛, ես ի՛նչ ղաթար-ղութուր ա, ես ի՛նչ խա-
նըմ ա։
Սանասարն ասաց.
— Յես խաբար չունիմ, Բաղդասար գիդա։
Մերն Բաղգասարին հանեց վեր քնուց, ասաց.
— Ետ ի՛նչ խանում ա, ետ ի՛նչ ղաթար-ղութուր ա։
Բաղդասարն ասաց.
— Կրակ Խափուշիկ մի քանի մարտ ժողվեր եր, եկեր եր
մեր Յառեչ, որ մեզի սպաներ, մեր խոր հալիվն առներ մեզնե,
ու ենդոր համար փոթորիկ մեր կրակն ընցուց։ Յես ել տեսա
որ՝ մեզնից ցածր կրակ կը վառեր, գնացի են կրակիցն կրակ

բերելու. ուզի, որ բերի ու կրակ չի բերի, գարձա, խարցուցի.— լավ չե առանց խարցուցելու կրակ տանել,— ու խարցուցի են կրակի մոտի մարգերից, ասացի՝ ինչ մարտ եք։ Են տեղեն մեկն ասեց՝ Ցես Կրակ Խափուշիկն եմ. եկեր եմ, մեր թագավորի սպանողներին սպանեմ։ Ցես ասացի՝ յես եմ։ Ցես, ետի կռվանք, ետոր Յախթեցի, Կրակ Խափուշկին։ Ենի ասաց՝ Աման քե՛ մեռիմ, քե՛ մեռիմ, Բաղդասար. շաա մալ ունիմ, ջավահիր, անգին քար կու տամ քեզի, ինձի մի՛ զիմիշիր։ Ասացի՝ դու կու տաս քու խաթրով, յես կ՚առիմ իմ թրով։ Կրակ Խափուշիկ գնաց, բերեց, ավեց ընձի, որ նրան չսպանի յես։

Մերն ասաց.— Տղե՛րք, ելե՛ք բառնանք մեր բեռներն, երթանք։

Բարձան ու գացին։

5. Եղբայրները հանդիպում են իրենց բեռիներին։ Մոր խորհրդով նրանք բեռիներից ստանում են՝ Ծովասար, Մարաթուկ յեվ Ճապաղջուր

Գնացին, Գորգիգ թագավորի քաղքին մոտրցան. մեկ Յաղբրի վրան դրին։ Տեսան, որ մեկ մարդ ենդեխեն գու քա. զանչեցին, ասացին.

— Գնա՛ Գորգիգ թագավորին, շատ բարեվ տար ենդրան, ու ասա՛ Թորոսին՝ ձեր քուր Ծովինար խանումն, ուր երկու տղեն, ուրանց կնթերով եկած ան սաղ-սալամաթ Յաղբրի մոտն. աչք ձե լո՛ւս եղնի։

Են մարդ որ գնաց, հրմա մերն ուր երկու տղին ես խրատ տվեց, ասաց.

— Վորդիք, որ թագավոր գու քա, ձեղի կր բարեվա, դուք թագավորից ես բան ուզե՛ք, ասեք, թե՝ Ծովասար — Մարաթկա ջուր, Ճապաղջրի բաժնու քոդեն աուր մեզի, գանք, իջնենք։ Թե ենի որ «Խացն ու գինին, տեր կենդանին» երդվավ, կու տա. որ տվեց, դուք ել իջեք. Թե որ չե՝ մի՛ իջեք, դորվե եկեր ենք, գեն կ՚երթանք։

Եստուց Յեդ երկու քեռին ել եկան։ Եկան, ընդան իրարու վզովն. պագեցին իրար, լացին ու խնդացին, հեառ կերան ու խմեցին։

Քեռիքն՝ Գորգիգ թագավորն ու Թորոս ասեցին.

— Դե՛հ, ելե՛ք երթանք։

Ասեցին.— Քեռի ջան, եկանք ձեզի տեսնանք, սաղ-սալամաթ եք. իրարուց խավասն առանք ու կ'երթանք։

— Վո՛րդիք, ասեցին քեռիք, մեր խոգուց սավայի ի՞նչ ժուզեք, «Խացն ու գինին, տեր կենդանին» կ'իտանք. արե՛ք, երթանք։

Ասեցին.— Ծովասար, Մարաթկա ջուր, Ճապաղջրի բաժնու քոդեն տուր, որ գանք։

Ասացին.— Տվեցինք, վո՛րդիք. արե՛ք, երթանք։

Խոսք մեկ երեցին ու գնացին քաղաքն, իջան թագավորի մոտն։

6. Յեղբայրները շինում են իրեց համար տուն. Քեռի Թորոսն ամունը դնում է Ասսուն. թագավորն յերկու հարյուր տուն բնակիչ է տալիս նրանց

Մնացին մեկ ժամանակ ես քաղաքի մեջն։ Են մե որն գնացին թագավորի մոտն, խնդրեցին թագավորից.

Թե.— Թա՛գավոր, եստուց ժեդ մենք չենք կառնա եսմալ ես քաղաքի մեջ մնալ. կը խնդրենք, որ քո ձեռաց տակ մեկ տեղ տաս, որ մենք ել մեղի տուն-ոթեվան շինենք, բնակվենք։ Մենք ել թագավորի վորգի յենք։ Ասացին՝ մենք ել շատ տեղ չուզենք։ Մեկ գոմշի կաշի կը թրչենք, կը քաշենք սրիմ, ու ենդով կը չափենք։ Ինչքան տեղ որ բռնեց, ենքան տեղ կ'առնինք, մեզի մեկ քոշկ կը շինենք։

Թագավորն ասաց.

— Վո՛րդի, յե՛ս կը շինեմ։

Ու թագավորն ուր փողով ենդոց խամար քոշկն շինեց, գլոխ բերեց։

Որ փրծավ, թագավորին գացին, թագավորին խնդրին,

Թե.— Արի՛, քոշկին անուն դիր։

Ղանչեցին, բերեցին,

Թե.— Թա՛գավոր, կը խնդրենք, որ մեր քոշկին գաս, մեկ անուն գնես։

Գորգիդ թագավորն ուր աղբոր Թորոսին ասաց.

— Դու գնա՛, տղերքի քոշկին մեկ անուն դիր, յես չեմ կառնա երթա, ծերացեր եմ։

Գնաց, տեսավ, որ քոշկն շինել ին, պրծել ին, ամա քոշկի մեջտեղ մեծ ղայաքար կեր. որ փետն եկեր եր, են ղայի գլխին ժընկեր եր, եղեր եր տան պես։

Ասաց.— Վո՛րդի, Աստված անուն դրեր ե. Սասուն ե ետոր անուն։

Անուն դրին Սասուն. դարձան, եկան Թագավորի մոտն.

Ասին.

— Քեռի, մենք մինակ չենք կառնա ենտեղ նստի. կը խնդրենք քեզնե՝ մեկ քանի տուն քասիր, մեկ քանի տուն հարուստ որ տաս, գան մեզի մոտ, աուն շինեն, որ իրիկնեց ժողվինք մեկաեղ, ժըղլինք մեզի մեր քաղքի մեջ։

Թագավոր մեկ խարիր տուն դոլվաթվոր տվեց, մեկ խարիր տուն քասիր տվեց ուր քաղքից. գնացին ենդոց մոտն, շինեցին, որ բնակվան մեկաեղ։

Ես աեղի մարդոց նա՛ խարջ կ՚առնին, նա՛ խարաջ։ Սասուն շատացավ։ Մեկ ժամանակից հետո եղավ խազար տուն։

Եղավ որ՝ Սանասարից աղջիկ եղավ, համա տղա չեղավ։ Բաղդասարից մեկ տղա եղավ. անուն դրին Մհեր։

Բ

ԱՌՅՈՒԾԱՁԵՎ ՄՀԵՐ

7. Սանասարի յեվ Բաղդասարի մահը. Մհերը թագավոր. սովը Սասունում. Մհերը սպանում ե առյուծը

Ես Մհեր ջոջցավ, եղավ ոխտ տարեկան տղա։

Եղավ որ՝ Սանասարն ու Բաղդասարն ուրանց մախն ուրանց աչկով տեսան։ Եկան գացին, ուրանց ձեռնով ուրանց տեղրանք փորեցին, գնացին, ուրանց քահանին խոստովանան, խաղորդվան, եկան, մեռան։ Երկուսն ել տարան, խորեցին։

Եստուց Յեդ ժողվան, եկան Մհերի մոտն, ասեցին.

— Ձեր խերերն մեռան, ողորմի ուրանց. Աստված ուրանց խոգին լուսավորա՛։

Քիչ մ՚ լացին, դարձան, Մհերին սիրա տվեցին, ասեցին.

— Քո խոր տեղ դո՛ւ մնաս։

Ու ելլրկով խավսար Մհերին ասացին.

Եստուց Յեդ մեր տեր-Թագավոր դո՛ւ յես. դու մեղի կառավորա։

Մեկ ժամանակից յեզ խացի Թանգութուն եզավ։ Մհեր ինքն ել աասնուխինգ տարեկան անջախ որ եզներ։

Ելլերկն եկան, լցվան Մհերի դիվանխանեն, ասեցին.

— Քու Աստուձո սիրուն եղնի, մենք սովամախ կը մեռնինք. ասեցին՝ մեզի մեկ չարա երա։

Մհերն ել ասաց.

— Ձես չեմ գիդե, երթամ իմ խոր Դորդիկ Թագավորի մոտ. ենի թե գիդա, յես չեմ գիդե, թե Թանգութուն ինչիցն ա։

Գնաց Թագավորի մոտն, ասաց.

— Վէրդի, յրնչէ՞ գախ-գախ չի գաս իմ մոտ։

Ասաց.— Քեռի, Թանգութուն ա։

Թագավորն ասաց.

— Վէրդի, յես ինչ ենեմ, ընձի մոտ րսկի խաց չգրտվի, ելի քո խոր դիվանխանեն կը գրտվի։

Մհերն ասաց.

— Թագավոր, ես յինչից ա, որ խաց չկա. կարկուտն ա գարկե, քամին ա քաշեր ա, տոթն ա տվեր ա։

Թագավորն ասաց.

— Ջե, ենգուց չե. մեր երկիրն վարուցանք չունինք, մենք ենձ, ու եշ, ու ջորի կը պախենք. մեր հաց Հալապա ու Շամա գու քա։

Թագավորն ասաց.

— Ջե, մեկ առյուծ ա յելեր ա, ես ոխտը տարի ճամրախ կտեր ա. վոչ գալող կա, վոչ երթըցող Շամա, եստեգեն ել Շամ։ Ետոր խամար Թանգութենն ա եզեր մեր աշխարն։

Մհեր ասաց.— Թագավոր ապրած կենա, առուձն ինչ ա։

Ասաց.— Ջանավարներու գլխավորն ա։

Մհեր ասաց.— Ինացն ու գինին, տեր կենգանին. վիր վոտն որ խասավ գանգուն, որ չխեծավ, գլոխ կը գանիմ։

Յրմեն, ինչքան որ ձի խեծնող կա մարթ, խեծան ու Մհերի խետն, ու գնացին։

Գնացին, խասան առուձուն։

Են գեխեն պոչ տվելով գետին, թոզ ու դուման եննելով՝ եկավ։

Մհերն ասաց ուր զորքին.

— Ետ ինչ ա, որ գու քա։

Ասին.— Առուձն, որ կ՝ասեն, ետ ա։

Ասաց.— Խացն ու գինին, տեր կենդանին, ով որ առուծուն թրով-սրով զարկեց, կը թորկեմ առուծն, կը գառնամ ենդոր վրեն, կը սպանեմ ենդոր։

Մհերն ասաց.— Առուծի մերն ել Աստված ղանչելով ա ծնե, իմ մերն ել ինձի յա բերե։ Յես իմ ասպապն պիտի դնեմ գեաին, գուլաշ կպնիմ առուծի խետն։

Ղանչեց Բանցրիկ Մարաթուկ, ձեռ թալեց վերի չանգեն, ներքի չանգեն, որթալախեն ճղեց, երեց երկու կտոր, մեկ թալեց ճամբխու ե՛ն դեխ, մեկն ել ճամբխու ե՛ն դեխ։ Անուն գրեցին Առուծքեսան Մհեր։

8. Մհերը Մբսրա Մելիքի կնոջից ունենում և մի տղա ու մի աղջիկ. Նա իր վորդի Մելիքին դնում և մյուս վեց մելիքների վրա գլխավոր

Մհերն ել խեծավ ուր ձինը, պտոտեց մեկ ժամանակ ու ուր ձիու անուն դրեց Լակզի։

Մըսըր ոխտ մելիք կը նստեր։ Ոխտ մելիքից են մեկի կնիկն չբեր եր, որ ինքն ել են մեկել վեց մելիքի գլխավորն եր։

Են տեղեն են չբեր կնիկն գիր գրեց Մհերին.

«Եատեղ գլոխտ թրչես, եստեղ վեր ենես, Մհեր ջան»։

Մհերն ել ելավ ուր Լակզին ու գնաց.

— Ի՞նչի ես զանչե, Մըսրա Մելիքի կնիկ։

Են ել ասաց, թե.— Յես չբեր եմ, պտի ճնաս ընձի մոտ, չուրմի մեկ տղա եղնի, նոր կը թորկեմ, երթաս։

Ոխաը տարի ճնաց Մըսրա Մելիքի կնկա մոտ։

Մհերիցն մեկ տղա ու մեկ աղջիկ եղավ, նոր թորկեց, են տեղիցն խեծավ ուր Լակզին, եկավ։

Գնաց ենդուց Յեդ, Փառափառ թագավորի աղջիկն առավ, որ ենդոր անուն Զարմանալի խանում եր։ Երեց ուրին կնիկ, պսակվավ։

Եստուց Յեդ Մրսրա գլխավոր Մելիքն մեռավ։ Մկա են վեց մելիքն ես գլխավոր Մելիքի տղին զաբուլ չենեն, որ մելիքութուն ենա։

Են Մելիքի կնիկ ելի գիր գրեց, ճամբխեց Մհերին, ասաց.

«Մհեր, ետեղ գլոխտ թրչես, եստեղ վեր ենես՝ հարկավոր գործի համար»։

Մհերն խեծավ ուր Լակզին ու դնաց Մելիքի կնկա մոտն։ Գնաց, քի.

— Կնիկ, ի՞նչի խամար ես ղանչե։

Կնիկն ասաց.

— Մհեր, դուն ել գինաս, Աստվածն ել գինա, որ տղեն ու աղջիկ քեզնից ա եղած։ Մկա ես վեց մելիքն ղաբուլ չըն ենե, որ ես տղեն մելիքություն ենա։

Մհերն ասաց.

— Կնիկ, ելի խաց-խորակ շինա, ուտեմ, չուրմի լուսնա, ենդոք գու քան։ Որ եկան իմ մոտ, յես գիդեմ ու ենդոք. քու բան չե։

Մնաց, չուրմի լուսցավ։

Մելիքներ եկան Մհերի մոտն, ղափուդներ հագած, կայնան դիվանխանի ճարն. ել հախու Յառեչ չեկան։

Մհերն իրիշկեց ու ասաց.

— Հա՛յ մելիքներ, եկե՞ր եք։

Ոխտ տեղով թամանգար եղան ու քաշվան Յեդ, կայնան։

Ասաց.— Մելիքնե՞ր, յես ի՞նչպես մարդ եմ։

Են մելիքներ ասացին.

— Թա՛գավոր, վերին դեխ Աստված գիդենք, ներքին գեխ գժղի գիդենք։

Ասաց.— Որ գու ընձի գիդեք, յես ել ես տղեն գիդեմ։

Ու չոքեչոք վեցն ել եկան, ձեռն պաչեցին։

Դրեց ելի են վեցի վրեն գլխավոր Մելիք։

Ենտեղեն խեծավ ուր Լակզին, ելի եկավ Սասուն։

Գ

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

Ց. Մհերի յեվ Զարմանալի խանումի վորդիները՝ Վեգո, Ճնճղիկ յեվ Դավիթ։ Մհերի վորդի Մսրա Մելիքը Սասունից հոդամասեր յեվ հարկ սոանալու պայմանով՝ ընդունում ե Մհերի վորդիներին պահելու

Մհերիցն ուր Զարմանալի խանումից եղավ իրեք տղա. ջոջ տղի անուն Վեկո, միջնեկի՝ Ճնճղիկ, պստկի անուն դրեցին Դավիթ։

Մնաց մեկ ժամանակ. ջոջ տղեն եղավ մինչի հինգ-վեց տարեկան. են պստիկներն ել ենդուց ցածր ին։

Մհերի մեռնելն ընկավ միտն, խեճավ ուր լակդին, գնաց են ուր տղի մոտն, որ Մսրա Մելիքի կնկնից եր եղեր։ Գնաց, բարեվ տվեց ու իջավ. գնաց ներս ու ասաց.

— Ընչի՞ ըսկի չխարցուք ընձի, թե ընչի համար ես եկեր։

Մելիքն ասաց.— Ձես քու տղեն եմ, ին ել քու կնիկն ա. ընկեր ա միտդ, եկեր ես։

— Ջե՛, վ՛որդի, ասաց Մհերն, կը մեռիմ. իմ մախն մոտ-ցեր աւ Ձես որ մեռա, իմ եթիներ չԹողես չոլերն, բերես, պախես, ջոջցուս, չուրմի ուրանց խելքի ինին. մելիքն ուրանց տիրուԹուն ենա։

Իրեք խետ ասաց, տղեն ձեն չերեց։

Հետո ասաց.— Մհե՛ր, կը պախեմ, կը ջոջցում, համա քու դալմով կը գրես Ծովասար, Մարաթկա ջուր, Ճապաղջրի բաժնու քոգեն, որ տաս ընձի ենդոց պախելեն. Թե որ ենդոր դարուլ չենես, քանի տարի որ պախեցի, տարեն գլոխ երեսուն սոմար ոսկի, երեսուն ազար աղջիկ՝ տարեն գլոխ տաս ընձի, քանի որ կենան։

Ես երկու բանին ել սանադ տվեց, ասաց.

— Որ մեկին որ տղեկներն դարուլ ենեն, ենի տան քեզի, ուրանց պախելեն։

Ելավ խեճավ ուր լակդին, եկավ Սասուն, առավ ուր երեխեքն, տարավ Թասլիմ երեց ուր տղին, որ Մըսրա Մելիք եր, դարցավ Սասուն, խոսավ, խոստովանավ, մեռավ, ու խորեցին Սասունի մեջ։

10. Դավիթը բռնում է Մսրա Մելիքի հոլը. Նա չի ուցցնում Մսրա Մելիքի բրի տակով

Մըսրա Մելիքն Ինքն շատ զորընդեխ եր. ոսկի հոլ, ոսկի կոպալ որ կը գարկեր յոԹ բադան կը ծակեր, կը Ինցուցեր։

Ելած ին Վնկոն, Ճնճղիկ, Դավիթ կը խաղին իրարու խետն։ Ինը գարկելուն Վնկոյին ու Ճնճղկա ուշկն գնաց, հըմա Դավիթն ձեռ Թալեց, են հոլն բռնեց, առավ ու բռնեց. ու Ինքն ել յա հինգ, յա վեց տարեկան եր։

Մելիք քաշեց ուր Թուրն, ընկավ, Դավիթի Ետեվեն լարեց։ Գնաց, ընկավ Մելիքի մոր գիրկն։

Ասաց.— Գրող ու մախ քե տանի, Ժի՞նչի կը լարես, վախեցուս. չե՞, լուսուն չե, կ'եղին քեզի թիկնապախ. ետ քու աղբրութեն տեղն ա։

Են լուսուն ելի իրեք աղբրով դիվանխանի տանիս կը լարին իրար Ժետեվ։ Համա Դավիթի ոտներու տակեն եռման կրակ կու տեր դուս։

Մելիք Ժընկավ Դավթի Ժետեվ, ելի լարեց, բերեց, ելի ուր մոր գիրկն եցկեց։

Մերն ասաց.— Ժընչի՞ կը լարես, չե Մսրա մելիքներ քեզի քոլի տեղ ել չդնին, որ ետոր խեր չեղներ։

Ասաց.— Դե՛, թըխ գա, իմ թրի տկով Ժընցի, որ ետոր չսպանեմ։

Գավիթն ասաց.— Երեսուն քու պես Մելիք մեռնի՝ ես մեկ չարսու լաչիկ ա, ես լաչկի տկով կը Ժընցնիմ, ամա քու թրի տկով չեմ Ժընցնի. ինչ ձեռնետ գու քա, ե՞ն երա։

11. Քեռի Թորոսը յերեխաներին յեռ և բերում Սասուն. Դավիթը նախրորդ

Ելավ, ես խետ մերն գիր դրեց Գորգիգ թագավորի աղբոր՝ Թորոսին, թե՝

«Արի քու եթմներ տար. Մելիքն լազաթ չիտա քու եթըմներուն։

Քեռի Թորոսն ել հըմալ մարդ եր, որ քսան ավուր ճամրախ եղներ, մեկ ծառ քոքախան կ'ներ, կը դներ թեվին, կ'երթեր ու կը խասներ ենտեղ։

Ես թավուր մեկ գիշերվա մեջ եկավ, խասավ Մըսըր ուր եթմներու մոտն, առավ ու տարավ Սասուն։ Վեկոն երեց թագավոր. Ճնճղիկ դրեց վըր ոխչրի չորներուն պախապան. նախրներու վրեն ել Դավիթ դրեց վրակացու։

Դավիթ կը խեծներ ուր խոր Լակզին, կ'երթեր Սասունա սարի կողն, կը պախպաներ նախրներն։

Չումքի Մհեր մեռեր եր, ես երեխեքն ել որ գնացած ին, ախն վերցվեր եր, գող ու հաըամիք շատցեր եր ես տեղրանքն։

12. Դավթի ընկեր նախրորդները. ցասման ժամի հարիսան յեվ ավազակ դեվերը. Դավիթը հոգ և տանում ընկերների համար

Են մեկ որ Դավիթն տեսավ՝ մեկ նախրչին գեղիցն Յանգան եկավ, ասաց.

— Վո՛րդի, Յեսոր Յընչի՞ Յանգան եկար։

Ասաց.— Թագավոր ապրած կենա, Յեսոր մեր գեղն սասման ժամ եր, մացի որ խիրիսա ուտի, են ել չեղավ։

Ասաց.— Դե՛հ, վո՛րդիք, որ խիրիսա ուտի ընկե ձեր միտ ու աղքատ եք, չունիք, դուք նախրներին մուղտթ կեցեք, չուր յես երթամ, ձեղի խամար խիրիսա բերեմ։

Գնաց, առավ մեկ ղազան յեղ, մեկ կարաս խիրիսա բերեց։ Եկավ, որ նախրրչիք չկեն։

Դու ես ասա, որ յոթր դեվ Յելան եկան՝ նախրչոց վորին թեվն կոտրած, վորին գլոխ, խուլասա, վորին կապած ին, յոթ եղ տարած ին։

— Տո՛, ասաց, տղե՛ք, ես ի՞նչ բան, ես ի՞նչ հալ ե։

Ասեցին.— Թա՛գավոր, կո եսմալ եկավ մեր գլոխն։

Բերեց, նախրչոց Յարցկեց, ասաց.

— Գուք խիրիսեն կերեք, համա ընձի ասեք, թե վո՞ր դեխով տարան եզներն։

Նախրչիք նշանց տվին վո՛ր դեխով որ տարած ին եզներ։

Դավիթ գնաց եղներու Յեդեվն։ Գնաց, խասավ մեկ Յերի մեչ. տեսավ որ՝ ոխտ դեվ, ոխտ եզն ել մորթած ին, ոխտ կանթնեն ղազան՝ գեռ չի լցած ին ղազն՝ մեջն։

Դավիթն խասավ ոխտ դեվի գլխներն ել ոխտի անկճներն ել կտրեց, լցեց ջերն, ղազան կապեց ուր քամակն, իրեք եզ, չորս գլուխ առավ մեկ ղոլթուխն, չորս եզ, իրեք գլոխն՝ մեկ ղոլթուխն, եկավ, բերեց շհարն, եզների տիրոչն ասաց.

— Տարին մեկ եզ կը մորթեք* ու ես նախրրչոց հախն ել չկտրեք։ Թե որ եստոնց հախն կը կտրեք, ձեր մեջքն կը կոտրեմ։

13. Վորսորդություն, Պառավը, հարկահանություն. Դավիթը պատուհասում և հարկահաններին

Եկավ, ասաց.— Քեռի Թորոս, ել յես չեմ երթա. գողություն կտրավ երկրից։

---

* Այսպես և ձեռագրի մեջ։ Խ մ բ.

Խեծավ ուր Լակգին, գնաց ավուղուշ եննելու։
Պառաձն են դհեն եկավ, ասաց.
— Դավիթ, դու Յրնչի՞ նոմալ գարտակ դու քաս։
Դավիթն ասաց.
— Ապա ինչ եննեմ, բան չկպնի ձեռս։
Պառաձն ասաց.
— Ծո, վերդի, չե՞ Մովասար, Մարաթկա ջուրն, Ճապաղջրի բաժնու քոդեն ձերն ա. ձեր խերն տվե Մրսրա Մելիքին ձեր պահելեն։
Դավիթն ասաց.
— Ենդոր Մելիք խերն անիծած կենա, ընձի ինչ ա պախե, որ իմ մուլքը տամ ենդոր։
Էն մեկել որն ելավ, ելի գնաց Մովասարն ավուղուշ եննելու Էնքան ավ բերնց, որ աձն եղավ Թոնադա մըջ Սասունա։
Ելավ Պառաձն, գնաց դրխ Մրսրա Մելիքն, ասաց.
— Մելիք, քու տուն ավիրի, չե որ Դավիթն քու Մովասար, Մարաթկա ջուր, Ճապաղջրի բաժնու քոդեն ավուղուշն ղըմեն գարկեց, տարավ ուր խամար Սասունա մեջն։
Մելիքն ասաց.— Պնռավ, ուր խոր մուլքն չի՞ տա. ենդոր խերն ընձի երկու տեղով գիր ա տվե. ինչ կա, Թե որ ենի չի տա, քանի տարի որ պախեր եմ, տարին՝ երեսուն սոմար ոսկի, յա երեսուն ազար աղջիկ. ենի չի տա, Թող եստուն տա. Յրնչի՞ որ, յես ուր խոր գալմով գիր ունիմ։
Մելիքն ուր յասադուլներ Ճամփեց վրր Վենկոյին ու ասաց.
— Գու աղրեր Դավիթն Մովասարն, Մարաթկա ջուրն, Ճապաղջրի բաժնու քոդեն, որ չի տա, յեռսուն սոմար ոսկին, յա ազար աղջիկն Թող տա, իմ յասադուլներն բերին։
Վենկոն ելավ, առավ, քաղքի միջիցն ժողվեց, յեռսուն ազար աղջիկ, ժողվեց բերնց, կոխեց ուր յոդեն։
Դավիթն ննդեխեն ավուղուշիցն եկավ։
Մեկ կնիկ կ'երթեր ջրի, Դավիթին ըռաստ եկավ, ասաց.
— Գու տուն ավիրի, Դավիթ, քու թամքը դարտկվի։
Դավիթն ասաց.
— Յրնչի՞ խամար ընձի կ'անիծես, յես քեզի ինչ եմ երե։
Կնիկն ասաց.
— Ապա են Թաղթի վրայի նստողն վռրն ա։
Դավիթն ասաց.

— Իմ ջոջ աղբեր Վեկոն ա. բանջի, ընձի իրնչի կ'անիծես։ Կնիկն ասաց.

— Հալա չանիծեմ, ինչ ջափով, ինչ չարչարանքով մեր աղջիկները պախեր ենք, մկա Վեկո Թագավորն մեր աղջիկները ժողվեր, լցե ուր Ժոդեն, որ տա, յասաղուլներն տանին Մբսրա Մելիքին ձեր իրեք աղբեր պախելեն։

Դավիթն ննգեխ հերսոտ-հերսոտ եկավ, գնաց առանց Թագավորի Իմաց տալու, աղջիկներն հանեց Ժոդից դուրս, ասաց.

— Իմ աղջիկներ, դուք գնացեք ձեր բանին, յես գիդեմ, Թե ինչ կ'ենեմ։

Դավիթ գնաց, տեսավ, որ Թագավորն ոսկին կը չափեր։ Դավիթն ասաց հերսոտ.— Վեկո, Վեկո, ետ ինչ կ'ենես։ Ասաց.— Ես քու մեղքն կը չափեմ, ինչ կ'ենիմ։ Դավիթն ասաց.— Իմ մեղքն քու ոխտ պապեն ել չկառնա քաշա։

Բռնեց Վեկոյի ձեռն, ոսկին առավ, դարտկեց, Ձետո երկու յասաղուլին դրեց գետին, երկսի Ձեռսուն երկու ատաՃներն ել քաշեց, շարեց Թեվն, կապեց ճակտներն, Թեվեր կապեց Ձետեվանց ու ասաց.

— Գնացեք, ասեք ձեր Մելիքին՝ ինչ գլոխ քարին կու տա, Թող տա։

Ես յասաղուլներն խասան Մելիքի մոտն. Մելիքն կըրկին երկու յասաղուլ ել սաստիկ համփեց, եկան, Դավիթին ասին,

Թե.— Դավիթ, մեր Մելիքն սաստիկ ուր ոսկիքն կ'ուզա, աղջիկներն կ'ուզա։

Դավիթն ուզեց ետոնց ատաՃներն ել քաշեր, ես մարգիկն ասին.

— Թագավոր, իրնչի մեր մեղքի տակն կը մտնես, մեզի կ'ենես կիսամախ. մենք ինչ ենենք, Մելիքն մեզի զոռով կը ճամխա. դու գիդես Մելիքն։

Ետոնց անՃնաս Թողեց, ասաց.

— Գնացեք։...*

---

* Ձեռագիրն ընդհատվում է։ Խմբ.



Ե

Պատում

Սպանա Տուն

պատմեց
Սասունցի
Թամո Դավթյան

գրիառավ 1932 թ
Կարապետ Մելիք Ոհանջանյան



ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՍՀՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի Ֆոլկլորիստիկ գիտարշավի ժամանակ, 1932 թ. հուլիսի 24-ին, գրի առանք Թալինի շրջանի Իրինդ (Ռինդ) գյուղում «Սասնա ծռերի» այս պատումը — «Տավթի բազմությունը»։

Ասացող Թամոն (Թրսո — Թոմաս) Հարությունի Դավթյանը (պապի անուն) բնիկ Սասունցի է։ Նա 85 տարեկան է։

Քեռի Թամոն ծնվել է Ճախրական (Ջախրջան) գյուղում։ Ճախրականի մասին ասացողը պատմում է հետեվյալ ավանդությունը. «Դավիթը հարկահանների (կոզբադինի) ձեռքից ազատելով Սասունցի կանանց և աղջիկներին՝ չինում է նրանց համար Քաղաքի արվարձաններում մի տուն, պատրաստել և տալիս մի քանի տասնյակ ճախարակներ և դաղգահներ, ապա գործի չի գնում չքավորներին։ Տարիների ընթացքում աճում և այդ վայրը, բնակիչներն ավելանում են և միանալով Քաղաքին, վորպես վերջինիս մի թաղ, կոչվում Ճախրական»։

Թամո Դավթյանը հայրենիքում գրաղվել է գլխավորապես այգեգործությամբ։ Տարիներ շարունակ ջրաղացպանություն է արել իրենց սեփական ջրաղացում։ Նա հավատացնում էր, վոր իրենց ջրաղացի քարը Դավթին է բերել. վոր այդ քարը յերկնային է, հազար տարի ծառայել է և կը ծառայի հավիտյան...

Հայրենակիցների հետ նա էլ է գաղթել Այարկովկաս համաշխարհային պատերազմի ժամանակ։

Սասունցիների հետ յերկար տեղից տեղ թափառելուց հետո՝ նա 1920 թվին հաստատվել է Թալինի շրջանի Վերին-Ղարադոյմագ գյուղում։ Այստեղ նա զբաղվում է հողագործությամբ։ Ջքավոր տնտեսություն ունի և. աշխատող ձեռքեր չունի։

Թամոն անգրագետ է։ Նահապետական կյանքի և հասկացությունների ձեռ վողջ ծագած սակավաթիվ ներկայացուցիչներից մեկն է նա։ Նոր կենցաղն ու նոր գաղափարները աննշան ազդեցություն են թողել նրա վրա. մի քանի նոր տերմին, հիմնարկությունների, կազմակերպությունների անուններ, ապա Սասունի տարածի փոխարեն՝ այն ամենը, ինչ վոր գտել է գյուղում, — ուրիշ վոչինչ։ Քաղաք չի գնում. քաղաքացիներից իրեն հեռու է պահում։ Ինքնամփոփ է և ուսուցներից խուսափող։ Ներուժնական համատեղությունն էլ իր դերն է կատարում։ Ասում են՝ հայրենիքում էլ այդպես է յեղել։ Հեռու էյերկրներ չի գնացել, չի պանդխտել։ Կարճ ժամանակով՝ հեռանալով իր համագյուղացիների որինակին՝ ասերից իջել է Միջագետք, գնացել Հալեպ բանվորության, ապա վերադարձել և մինչեվ գաղթը տեղից չի շարժվել։

Ձնայած իր պատկառելի հասակին, աշխատունակ ե։ Ինքն ու իր պառավն են հոգում իրենց որվա պարենը։

Այս «բագմությունը» լսել ե հայրենիքում։ Շատ ե լսել։ Դեռ թեթեվ յերեխա, հազիվ 8—10 տարեկան, լսել ե գյուղի ծերերից. «Մուրատ ձեր մարտ մ'եր,—ասում ե նա,—Հոնին, Մուխսի գոն, ըմ պապ զը ժողովվին ու գ'ըսեյին»։ Ինքը նրանց պատմածի 10-ից մեկն ե ասում։

Ասացողը համարում ե այս «բագմությունը» յեղելություն։ «Դավթի մասին պատմածները «գրքից ե քաղած»,—ավելացնում ե նա։ «Դավթի գիրքը» գոյություն ե ունեցել, «ինքը տեսել ե»,—մեկ լիտր կը քաշեր և պահվում եր Գոմաց վանքում («Մագին առաքյալի» վանք—Փսանաց գավառում)։ Հետագայում կռիվների ժամանակ քրգերը գիրքն այրել են։

Թամոն Սասունցիների մեջ ասացողի մեծ հռչակ ունի։ Նրանց կարծիքով «Սասնա ծռերի» ստույգ պատմությունը միայն Թամոն գիտե, մյուսներն աղճատում են։

Թամոն, ինչպես ասացինք, համառ ե, ինքնամփոփ և «ոտաքների» հետ սակավախոս։ Շատերն են դիմել նրան, բայց քչերին ե հաջողվել հատ ու կտոր հատվածներ գրի առնել (բանահավաք Ս. Տեր-Հակոբյան, Ղուկաս Հովհաննիսյան)։ Մեզ հաջողվեց գրի առնել այս պատումը միայն ու միայն Հավատորիկցի Յեղիազար Կարապետյանի (Վարպետ, Ուստա Յեղիազար) շնորհիվ, վորը մեծ հարգանք ե վայելում ընդհանրապես Սասունցիների և մասնավորապես Քեռի Թամոյի կողմից։ Ընկ. Յեղիազարը բանահավաք ե։ Նա գրի յե առել «Սասունի հարսանիքը» և ներկայումս գրում ե նրանց նիստ ու կացը։ Սա յե, վոր ասացողին Վերին-Ղարաղոյմազից բերել տվեց Իրինդ և ստիպեց մի որ մնալ ու պատմել։

Թամոն պատմում ե դանդաղ ու մտածված։ Տեղ-տեղ ավելի մտածկոտ ու դանդաղ, կարծես, ուզում ե վերհիշել պատմության ընթացքը. տեղ-տեղ վոգեվորվում ե, սրախոսում և մեծ արագությամբ մի ամբողջ հատված «ասում»։ Արտասանությունը ծերության պատճառով վատ ե. շատ հնչյուններ աղոտ են լսվում. իսկ արագ ասելու ժամանակ վոչինչ չեյինք հասկանալ, յեթե ընկեր Յեղիազարը մեզ հետ չլիներ և բառ առ բառ չթելադրեր մեզ նրա ասածները։

Յերգով չի լսել և չի «ասում»։

Թամոն մոռացկոտ ե դարձել. տեղ-տեղ շփոթում եր պատմվածքը ե մեր հարցերի հետեվանքով կամ անկախ մեզնից՝ հիշում և ուղղում։

Նա համբերություն չունեցավ մեզ համար Դավթի բոլոր ճյուղերը «ասելու». շտապում եր իր գարու արտը քաղելու։ «Խանդութի ճյուղը» ստիպված յեղանք գրանցել գրական լեզվով. վորպեսզի գոնե բովանդակությունը փրկենք։ Նա «ասում» եր, ընկ. Յեղիազարը թարգմանում. իսկ մենք գրում։ Այս ձևով գրի առանք նաև «Մուշեղի պատմությունը»։

1933 թվին մեր հանձնարարությամբ Սասունցի բանահավաք Վարդան Պետոյանը նորից գնում ե Թամոյի մոտ, պատմել տալիս նրան «Խանդութի ճյուղն» ու «Մուշեղի պատմությունը» և գրի առնում։ Վ. Պետոյանի գրի առած հատվածն ել՝ համեմատելով մեր գրանցածի հետ, միացրինք մերին ե այդպիսով ամբողջացրինք Թամոյի պատումը։ Ծանոթությունների մեջ ցույց ենք տալիս այն հատվածը, վոր կրկին գրի յե առել ընկ. Վ. Պետոյանը։

Թամոյի «լեզուն»—Սասունի այդ բարբառը ստուգել ու ճշտել ենք դարձյալ ընկ. Յեզիազար Կարապետյանի միջոցով։

Գրի առնելու ժամանակ հերթով ոգնում ելին մեզ գիտարշավի անգամներ՝ վաստակավոր յերաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանն և Հովհաննես Մանվելյանը, վորոնք՝ հատուկ ուշագրություն չդարձնելով լեզվական յուրահատկությունների վրա, գլխավորապես գրանցում ելին բովանդակությունը։ Սպ. Մելիքյանը նոտագրել և նաև ռեչիտատիվներն ու ասացողի զանազան բացականչությունները։

Կ. ՄԵԼԻՔ-ՈՀԱՆՋԱՆՅԱՆ

Տողատումը վերանայել ենք։ Այս պատումի հեաեվից տպագրում ենք նաև «Մուշեղի պատմությունը», վոր մի մնացորդ և Մուշեղ Մամիկոնյանի հին վեպի և կապված և «Սասնա ծռերի» հետ։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա

ՍԱՆԱՍԱՐ ՅԵՎ ԲԱՂԴԱՍԱՐ

1. Բաղդասարի յեվ Սանասարի ջրային ծնունգը. Մհերի վորդի Մելիքը Մորա թագավոր

Սինամ թակավուր Հաուց թակավուր եր.
Բզնձի քազքի թակավուր գռաբաշդ եր,
Սինամ թակավուրի ախճգան աչք թալեց.
Գռաբաշդ թակավուր զորք ժողվից, եգավ՝
Գոդորեցին, ճարտեցին ցիրար։
Սինամ թակավուրի ախճիգ ա՛սից,
— Հայրիկ, ինչու գը ճարտիք զիրար,
Դուր զիս ուրուն, յես գ՚երթամ։
Սինամ թակավուր ելավ, զախճիգ դվից ուրուն,
Ասից.— Թակավուր, առանց մեռուն չեզնի։
Զդերդեր գընդից, տրից հըդ ըր ախճգան։
Գռաբաշդ թակավուը զախճիգ դարավ, կնաց։
Ախճիգ ա՛սից.— Ընծի բայման գա.
Քառսուն որ ընծի չըս մոդա՛նա։

Ախճիգ գանչից զախճըգնիր, ա՛սից.
— Երթանք ձովի քնարնիր, ման իկանք։
Գընդուկ դերգեր իպրեվ հաբսնքուր,
Դաս հադ ախճիգ-մախճիգ ըր հիդ, գ՚երթան։
Ելան կացին ձովի քնար։

Ախճիգ լվաց գուր քիթ, պերան,
Շաք ըմ երգու ճուր լը խըմից,
Ասդըձու հրամանով երգուհոքովցավ.
Տարցան, եգան ուրանց գուն։
Մնաց. ժամանագ ընցավ, քառսուն որ լըմընցավ։
Ախճիգ ասից.— Թակավուր, գ'իգաս, եգի,
Ընձի մը մոդըգնա, յես երգուհոքով ըմ։
Ասից.— Ի՞մալ տու երգուհոքով իս։
Ասից.— Ջու հանգ եգավ ըմ վրեն, երգուհոքովցա։
Ասից.— Զարար չկը։
Մնաց. ինն ամիս, ինն որ Թըմմավ,
Եգավ ուրին, երգու դըղա՝
Մեգ Պաղտասար, մեգ Սանասար։
Ըդ երգու դըգեն որ եգան,
Դերդեր դուրանք գընքից,
Երգու դըղեն լը Թըմամցան։

Գուռք ին չինաձ, գը բաշդին։
Թակավուր ասից.
— Գուռք գ'ուզը՝ գմըը մեգ դղեն մադդինք։
Մըք ուր, մըը երգու դըղեն ուր,
Ընաուց ձեռքիր, մադնիր ուր։
Դդանիր գորհեցին, որ հայը գը մադդա,
Ելան փախան, կացին ուրիշ երգիր։
Ելան, քաղքնիր շադ շուռ եգան.
Մարտ դիրանք չըը հա՛վա։
Փախան, եգան Մրսրա քաղաք։
Մեգ գարքվավ. գըը դըղի անուն տրից Մհեր։
Մհեր մեձըցավ, ընդիխ խաւիվավ ախճգա մ' հիդ.
Երգուհոքըվցավ, ելավ գըղա մ',
Անուն տըրից Մելիք։
Մհեր խաւից գախճիգ, չառավ։

Ժամանագ ըմ վրեն ընցավ.
Մելիք մեձըցավ, մեձ դըղա եղավ։
Որ մ' լը գ՚ըրգեցին գուրար Սանասար ու Մելիք։
Մելիք գ՚ըրգից, սպանից գՍանասար,
Մսրը գավԹից, եղավ Մըսրա Թակավուր։
Մհեր Թողից, եգավ Սասուն։

Բ

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

2. Մհերի ամուսնությունը Քեռի Թորոսի աղջիկ Գոհարի հետ. Սասնա բերդի շինությունը. Դավթի ծնունդը

Մելքոն թակավուր գ'արրեր Ախլաթ.
Քեռի Թորոս գ'աբրեր Մանզգիրդ.
Մհեր եգավ, նսդավ Սասուն։
Քառսուն դարի Սասուն երից իշխանութին։
Մհեր ելավ, մարտ ջամփից,
Կնաց Մելքոն թակավուրի մոդ Ախլաթ։
Մելքոն թակավուր ելավ եգավ Սասուն ըր խիջ։
— Աբա՜ ի՞նչ իս գանչիր ընծի։
— Գանչիր ըմ քըզի, ըր կուրծ ըմ աճողցուս ընծի։
— Ի՞նչ կուրծ ը։
Ասից.— Թա՛կավուր, երթանք Մանզգիրդ,
ԶԳոհար խանըմ ուզիք ընծի։
Երգուս լը ելան եգան.
Եգան խրչ Քեռի Թորոսին։
— Ե՛ թա՛կավուրնիր, տուք պարո՛վ իք եգի,
Ի՞նչ կուրծ ը բադահի, ըր եգիր իք։
— Արա՜ եգիր ինք, գ'ուզինք, քու հիդ մարտութին ենինք։
— Տուք երգու թակավուր եգիր իք ա՜սդիխ,
Ախճիկ մ' գ'ուզիք, խաթրր կըց' զոր, ել զոր ը,
Ախճիկ մ' գվեցի ծըզի, կնաց։
Ու ախճիկ դվից Մհերին։

Առան զախճիկ, Թորոս լը ուրանց հիդ,
Կացին, հասան Մրսրա քազաք։
Ժամանագ ըմ մացին ա՜նդիխ, եզավ խլայի։
Թորոս ա՜սից.— Մհե՜ր, եդրես չե՜զնի,
Ելի երթանք, մըզի երգիր ըմ կաշինք։
Ելան եգան, հասան Սասուն։
Բըդըդեցին, ճրիր կիշըռեցին,
Ծովասըրու ճրրին հավնան։
Զարգեցին, շինեցին ա՜տ ճրի գոխկին զուրանց պիրթ։
Ատդիխ Տավիթ եզավ։

3. Մսրա Մելիքը նվաճում ու հարկաւոր յե դարձնում Սասունը. նա գերի յե տանում Ձենով Ոհանին, Վեգենին ու Դավթին յեվ ամուսնանում ե Դոհարի հետ

Մըսրա Մելիք յոթ դարին հաղ ըմ գ'իկը,
Յոթ գոդ ոսգի Մհերից վերգի գը դանը։
Որ մ' լը Մհեր գը մեռնի։
Գը մնան Ծենով Ոհան ու Վեքեն։
Մըսրա Մելիք գ'իկը, գը ժոզովըրտը զիրանք,
Գ'առնը կերի, գը դանը Մսըր։
Որ գը դանը Մսըր, ժամանագ ըմ գը մնան ոնի,
Աբրուսդ չըն ենը ոնի։
Ծենով Ոհան Մելիքին գ'ասը.
— Իզին դուը մըզի, երթանք մըը երգիը։
Մելիք իզին գ'իդը, զիրանք գը գանչը,
Զուը ծեռի գորալ գը պըռնը,
Ըր թեվի գրկեն գ'ընցու։
Իզին դըվից, թողից. ուրանք եգան։
Մելիք զՄհերի գին զավթից ըը համար։
Տավիթ ելեխա եր, մնաց մոր քով։

4. Դավիթը բռնում ե Մելիքի միրուքը. Մելիքի վախը. նա Դավթին փորձում ե վոսկով յեվ կրակով

Մնաց. ժամանագ ըմ ընցավ.
Որ մ' լը Մելիք գանչից, ասից.
— Գնիկ, ելի քաղ ըմ դըըստա մըզի,
Սովաձ ինք, անոթի ինք։
Գնիկ ասից.— Իդա դզեն գ'իլը,
Յես չըմ գըռնա, չթոզը, գ'իլը։
Տու առ զդըզեն, խազցու,
Յես երթամ, քաղ եփիմ։
Մելիք զդըզեն տրից ուր կիըգ, խաղցուց.
Տավիթ զծեռք սարից, զՄելիքի մուրուս պռնից։*

---

* «Մուրուք չկար. ծնոտի տակից կպցնում եյին մի քանի յերկար մազեր»։ Ծանոթություն ասացողի։ Կ. Մ.-Ո.

Տավիթ մուրուք պռնից, ուժեզ պռնից։
Մելիք ըր սրդի մեջ վախրցավ։

Գնիկ հաց պերից, տրից Մելիքի առճիվ։
Մելիք ա՛սից.— Ա՛յ գնիկ,
Արի ըզքու դղեն դար, հեռացու։
Գանչից զուր սինոդնին, զուր մարտիգ,
Ասից.— Զիդա դղեն գորցըցեք։
Են սինոդնին ա՛սրցին.— Ջա՛նըմ,
Տավիթ երեխա յը, ի՞նչ գորցնել, ի՞նչ պան։
Ասից.— Ցավկլխանք ը, բեդք ը գորցունք։
Սինոդնին ա՛սին.— Մելիք, ա՛դի չեզնի.
Տավիթ թակավուրի դզա յը.
Արեք, ուրիշ պան մը ենինք։
Մելիք ա՛սից.— Ի՞նչ պան ենինք։
— Պերեք, զոսգին ու զդրագ տրեք սեղնի վրեն.
Որ թը դղեն զոսգին վերուց,
Ժըխո երեխա չե, զինք գորցունք.
Որ թը զգրագ վերուց,
Զաթի երեխա յը, ել ի՞նչ գորցունք։

Պերեցին, սեղան տրեցին,
Բըղոթ ըմ գրագ ու զոսգին տրեցին սեզնի վրեն.
Գանչեցին զՏավիթ, թը.— Արի՛, խաղցի՛։
Տավիթ եգավ, զուր ծեռվին սա՛րից ոսգին,
Հրիշգագ զուր ծեռվին տրից վըր գրագին։
Որ տրից վըր գրագին, Տավիթ ծեռ սա՛րից,
Զգրագ վերուց, տրից ուր պերտն.
Պերան իրվավ, լեզուն իրվավ։
Անդիխից Տավթին գը գանչին Թլոր Տավիթ։
Սինոդնին ա՛սին.— Ալ ի՞նչ խելոք. երեխա՛ յը։

5. Դավիթը բռնում և Մարա Մելիքի գուրզը. Մելիքի վախը Դավթից

Ութ որ հաղ ըմ Մելիք գ՚երթա, կուրզ գը խաղա՛.
Քազքըցիք գնիկ, մարտ, ջիժ՝
Որ իմցան դուքրնին փակեցին,

Ելան կացին ա՛նդիխ թա՛մա՛շա ենելու։
Մելիք գերավ ուրուն հաց, քա՛դ,
Վերուց զուր կուրզ, կնաց։
Որ տուրս ելավ կնաց,
Դղան խրժժաց, լաց եղավ,
Ասից.— Յե՛ս լե գ'իկամ։
Մելիք գանչից, ա՛սից.— Գնի՛կ,
Ելի պըռնր՛ զիդը դղեն.
Գ'իկա ա՛նդիխ, գր վախընա։
Ուր մեր ելավ պըռնից ըզդըզան։
Տավիթ ըր մորից փըրծավ, փախավ,
Կնաց, հասավ խաղի դիխ, գանավ։
Մելիք վերուց զուր կուրզ, կնաց մա՛գընի կլուխ,
Որ ա՛նդեխից ըզկուրզ սա՛րը՛։
Ժողովուրթ պաժնըվիր եր երգու դիխ, գ'իշեր։
Մելիք ըզկուրզ սա՛րի՛ց, սա՛րի՛ց,
Կուրզ պարցըրցավ ոտի մեչ։
Որ Մելիք ըզկուրզ սա՛րից,
Տավիթ վազից, թռավ առճիվ,
Ըզկուրզ պըռնից, տրից կեդին։
Մելիք որ զա՛տ պան դեսավ,
Ուշիկ-ուշիկ եգավ,
Զուր կուրզ վերուց, եգավ ըր դուն։
Սարսափ թափավ վըր Մելիքին, վրր ժողովըրթին։

6. Մելիքն ուզում և ոպանել Դավթին. Նրան ճանապարհ են դնում դեպի Սասուն իբր ոպանելու նպատակով. Նրա զգեստը նապաստակի արյունի մեջ թաթախած բերում են, ներկայացնում Մելիքին

Տավիթ փախավ, եգավ դուն։
Մելիք, ըր մարտիգ եգան դուն։
Գնիկ լը հաց, զերագուր պերից.
Մելիք ա՛սից.— Դար քու հաց լը, քա՛դ լը, ըե՛դք չը։
Քու դղեն ըսոր զընծի ամչրցուց մեչ ժողովըրթին։
Ասից.— Ի՞նչ ամչրցուց ըզքըզի։
Ասից.— Զըմ կուրզ պըռնից, տրից կեդին։
Ասից.— Ջա՛նըմ, երեխա յը, ի՞նչ գ'ուզիս իրնը՛։
Մելիք ջամփցուց, գանչից զսինոդնին,

Ասից.— Գորցըցեք գիդա դղեն։
Սինոդնիր եվ պան չկրդան,
Ասին.— Աբրած գինա Թակավուր,
Սուր վրը Թակավուրի դղին չպանը։
Սինոդնին ասիցին.— Ելինք, գինք ջամփինք ուր երգիր։
Ելան, երգու ասքար տրին ըր հիդ,
Վրը դանին, ըզՏավիթ գորցուն։
Թակավուրի առճիվ սինոդնին ասըցին.
— Գարեք, գրդա գղեն հեռացեք, սրպաննեք,
Ջուր շորիր արընդուտ առեք, պերեք,
Մրը Թաքավուրի առէչ տրեք։
Սինոդնին ասքըրնուն կաղդուգ ասիր ին.
— ՉՏավիթ գը դանիք, չսպաննեք։
Տավիթի մեր մըղգըդաց։

Ասքըրնին գրդա դղեն առան, կացին.
Կացին, գարան Դիգրանագիրդ.
Գարմընջի վրեն պըռնեցին,
Գ'ուզին գինք սաբրին մըչ ճրին։
Շուշուդ Տավիթ պրռնից դուրանց Թևվիր։
— Մկա յես գծըգի գը սաբրըմ մըչ ճրին։
Հասան դգարմունճ, ընտին նսդան։
Ասքըրնիր ասըցին.— Նա մինա, նա քինա.
Գը խնարինք՝ Թումբե մ', եյագ մ' իգաս,
Դանինք, ջամփեն ջանավար մ' սպանինք,
Թաքխինք ընդուր արնի մեչ,
Դանինք, Թակավուրին ցուցունք։
Տավիթ դվից եյագ ըմ, Թումբե մ'։
Ու ասքըրնին ասիցին.— Գրգի ողու եղնի,
Տու կնա քու ջամփու հիդ, մըք լը գ'երքանք մըր դուն։
Ասքըրնին առան շուրիր ու տառցան։
Ջամփու հիդ գարգեցին լարըսգրակ, ջանավար,
Շուրիր լավ ըմ Թաքխեցին արնի մեչ,
Առան, եգան Թակավուրին։
Թակավուր գանչից ըզսինոդնին.
Ժողվան, եգան, գանան, ասիցին.
— Աբրած գինա Թակավուր, քու սիրդ հանգըստավ.
Տու հրաման դվեցիր, մըք քու խոսք գադարեցինք։

7. Դավթի վորսորդությունն ու արտասեր Պառավի գանգատը

Տավիթ եգավ, հասավ Սասուն։
Սասուն քաջ Բառավ ըմ գա նը.
Բառավ գորիգ եր ցանի։
Լուրիր գ'իկեն, մրդնեն գորեգի մեչ.
Տավիթ ու Բառվու երգու դզեն
Մըն որ գ'երթեն, երգու-իրեք լա՛ր գը սպաննեն,
Գը պերին դուն, գը խաշխըրդեն, ուդեն։
Բառավ մըն որ գ'անիձե Տավթին.
— Թլոր Տավի՞թ, տու որ չեղներ,
Մըր երեխեք չըն երթը, զարգ ավրը՛։
Գ'երթա կանկադ մըդ Ծենով Ոհան,—
Ծենով Ոհան Տավթի ապոն եր,—
Գ'ա՛սը.— Կուրձի մ' աիր զրդա դզեն.
Եգավ, ավրից զրմ դուն, զըմ դիխ։
Ըմ ումուդ լը ըդ գորիգն ը։
Ծենով Ոհան գ'ա՛սը.— Բառա՛վ, կուրձ չգա նը,
Ի՞նչ ենըմ. սպանի՞ք, ի՞նչ ենիք։

Բառավ կնաց, շախկամ ցանից։
Զեն լը շըխփեցին, ավրեցին։
Բառավ եմ լը կնաց Ոհանի մոդ կանկադ։
Ծենով Ոհան գանչից ըզկեղացիք, ա՛սից.
— Աբեք, ենինք ըզինք հովիվ կամ կառնարաձ։

8. Դավիթը գառնարած

Պերեցին, ուրին բոզբըգի սոլ զարեցին,
Ժողվեցին զկեղի ուլիր ու կառնիր,
Պերեցին, դվեցին Տավթի առճիվ։
Տավիթ առավ, կնաց սար՝
Ասվարաձին, Մարաթուք, Զովասար։
Տավիթ գ'ընկնի սարիր, ծուրիր,
Կելիր ու արճիր, ու աղվրսնուն գը ժողվա՛,
Գը պերը, խառնը՛ կառնիրու հիդ։
Տավիթ զըմմեն ժոզովըրտից,

Իրընգուն առավ, եզավ կեղ,
Գանչից.— Կեղացիք, յես չըմ ջանչընա,
Եգեք, ըզծըր ուլիր, կառնիր, ջոգեք, դարեք։
Կեղացիք եգան, դեսան զջանավրընին.
Փախան, կացին ուրանց դնիր,
Մդան նիրս, փագեցին զտրռնիր։
Ինք լը թողից, կնաց, բառգավ ուրանց դուն.
Բողբրդե սոլ,— հարամ եզնի,—
Թը սրթար մնացիր եր,
Եղեր եր գրդուր-գրդուր։
Սաբատան ելան՝ նա հովիվ, նա պան։
Ջանավրընին փախիր են սարիր-չուլիր,
Ուլ ու կառ լը կացիր են ուրանց դիրվրդանց տուռ։

Թ. Դավթի մանկական չարությունները

Առդուն Տավիթ ելավ դեսավ՝
Ջրժիր երգեն փեդ ըմ տրիր ին վրը պադին,
Նըսդիր ին տրրընգուզի գը խաղան։
Կնաց, ասից.— Յես լը խաղամ։
Ջրժիր ասին.— Տու լը խաղցի։
Քիչ ըմ խաղցան, Տավիթ ասից.— Ադի չեղնի։
Տավիթ ելավ, ծիռք սարից,
Պարդի ծառ ըմ ոզցուց, պերից ցաձ,
Ջրժերուն ասից.— Արեք, նսդեք վերեն։
Երեխեք նսդան պարդու ձիրուն,
Ինք զպարդին թողից, կնաց։
Հար մեգ երեխա աշխարհ ըմ քցից...
Եգան երեխեսնու դիրվրդանք,
Շադ լացին, մաղգրդացին,
Նա ջանդակ կդան, նա պան,
Կացին Ոհանի մոդ կանկադ։
Ոհան ասից.— Յես ինչ ենըմ,
Նա ըսպանելու յա, նա թողելու յա...
Ելեք, ենինք զինք հորթերաձ։

10. Դավիթը հորթարած. ընկեր հորթարածը յեվ ավազակ դեվերը. Դավիթը դեվերի քարայրում ձեռք և բերում Մուրտա ձին յեվ մեծ գանձ

Ելան ընգիր մ՛ կգան ուրուն,
Ենեցին ըզՏավիթ հորթերաձ։
Սաբատան որ Տավիթ ելավ,
Քշից զհորթիր, կնաց սար, Սութեն սար։
Տավթի ընգիր լսիր եր որ՝
Շուգի թաղ հըրիսա՛ յին տրի,
Ելավ կնաց ա՛նդիխ, հըրիսա՛ գերավ,
Ու շուդ վաղից, կնաց Տավթի մոդ։
Տավիթ նեղեցավ վրեն, թե.— Ո՞ւր իս մացի։
Ընգիր ա՛սից.—Շուգի թաղ հըրիսա՛ յին տրի,
Կացի, քու վախից գուշտ չգե՛րը,
Թողի, գիսափոր եգը՛ սար։
Տավիթ ա՛սից.— Դե՛, տու զհորթիր բահը,
Յես գ՛երթամ, զհերիսա՛ն պերիմ։
Ելավ շուդ ըմ կնաց Շուգի թաղ,
Ուխալ ըմ յեղ գեր, վերուց,
Շըրճից, լցից ըղընծի ջաշի մեչ,
Շալգից ըղրղինծ, եգավ սար հորթերու մոդ։
Ճըրդընքվորնիր, ջամփորդնիր եգան, գերան.
Ուրանք լր գուշտ գերան.
Գերան, գերա՛ն, հա՛ գերան, բառգան, քնան։
Մեգ լը իմցան, դեսան որ՝
Մեգ հորթիգ չկը, պոլուր լը գորիր են։

Տավիթ ելավ սար-ծուր կաշից, չկդավ.
Իչավ Արքըկու դագ, Փա՛րկսար, Սրպղանաց մոդ,
Կնաց մեչ ծորիրուն, քարափնիրուն, կաշից՝
Մըչ զընարնիրուն դեսավ՝ պարակ ձուխ ըմ գ՛ելեր
Շուդ ըմ կնաց խեչ ա՛ն ձխուն։
Մեզից՝ ըղինծ ըմ հանդը ոդի տրրուգ,
Գրագ դագ գը վառը, գերազուր գ՛եփի։
Մեզից՝ քառսուն հորթիգ լր մորթուգ,
Հանգը ըղընծը՛ մեչ գ՛եփի։
Տավիթ գեսավ՝ ա՛նդիխ մարթ-մուրթ չկը.
Վերուց, ըզբղինծ շա՛լգից, սոտրկ մ՛ գրագ վերուց.

Դարավ, քիչ ըմ հեռու տրից,
Գրապ վառից բզընձի դագ,
Ինք բահվավ մոդիր դիխ ըմ,
Մնաց, ճնաց, ճաց,
Բզընձի գերիր եգան,
Եգան, գեսան՝ բդինձ չկը՛,
Ուրանք հինգ ախպեր գեվ ին.
Գեսան՝ հեռուն, վերին դիխ ձուխ մ՛ գ՛ելի,
Ընդբցնե մեգ կնաց, գեսավ՝
Բդինձ անդիխ տրուդ՝ գ՛եփի,
Տավիթ ըրի մ՛ գրդուր ուներ ըր մոդ,
Զարգից գդեվի կլուխ կըդրից,
Ընի ճեաց անդիխ,
Մեգել ախպոր ասից ին.
— Անկըցավ, քիչ ըմ աղ աս, կնա,
Առեք բզրդինձ, եգեք դուն,
Են լը ելավ կնաց անդիխ.
Զրնդրա կլուխ լը գարգից Տավիթ,
Մեգել ախպեր լը կնաց անդիխ.
Զրնդրա կլուխ լը գարգից Տավիթ,
Մացին երգու ախպեր,
Միձ ախպեր ասից.— Ա՛յ մարտ,
Տու լը կնա, մեդր՛ ինչ եգավ,
Են լը կնաց, զրնդրա կլուխ լը գարգից,
Վերճին ախպեր լը կնաց անդիխ,
Զրնդրա կլուխ լը գարգից, նսդավ,
Մնաց, ճեաց ու ճեաց, ալ մարտ չեգավ,
Տավիթ տարցավ, ձեն գվից,
Մեգել սարից գանչից ուր ընգերին,
Ասից.— Տու արի նսդի ասգիխ, միս գիր,
Ձես գ՛երթամ, զրդ մարտգանց դուն կաշիմ։

Տավիթ ելավ կնաց.
Ելավ կնաց, կնաց, մեգից, գեսավ՝
Անդիխ մըդարե մ՛ գար, մդավ նիրա,
Հինգ-վեց տուռ ընցավ, կնաց նիրա,
Գեսավ՝ ինչ որ մարտու բեդք դ՛իկը,
Մըդարե մ՛ լիք ատգիխ գա նը.

Դեսավ ոսգի երգանք մ՛ ա՛տգիխ.
Դեսավ հրեղեն քուռիգ րմ.
Մացաձ աբրանքին հաշիվ չգա՛ նը։
Տավիթ կնաց, գանչից զընգիր,
Դվից զհինգ դեվի անգըճնիր, ա՛սից.
— Կնա՛, Քեռի Թորոսին, Ապո Ոհանին ա՛սը՝
Թրխ ըզճորիք առնին, իկան,
Զըդա աբրանք առնին, գանին։
Դզան վազից, եգավ, ա՛սից.
— Քե՛ռի Թորո՛ս, Ա՛պո Ոհա՛ն,
Զքառսուն հորթիգ լը մորթի՛ր ին,
Տավիթ հինգ մարտ սպանի՛ր ր.
Գ՛ա՛սը՝ թրխ իկան, աբրանք դանի՛ն։
Դղին ա՛սին.— Տու սո՛ւդ գ՛ենիս։
Դղեն ա՛սից.— Թը սուդ եղավ, զըմ անգաճ գդրեք։

Քեռի Թորոս, Ծենով Ոհան
Ելան առան զճորիք, եգան։
Տավիթ հանդը մըչ մա՛ղզա՛նին նսդուգ։
Տավիթ ա՛սից.— Քեռի՛ Թորոս, Ապո՛ Ոհան,
Զըդա պոլուր աբրանք ծըզիկ,
Զըդա քուռիգ մինագ դվեք ընծիկ։
Քեռի Թորոս, Ծենով Ոհան
Զհրեղեն քուռիգ դվին Տավթին,
Զոսգի երգանք, զրմեն աբրանք՝
Պարցին ճորիք, առան, դարան դուն,
Զրմեն լցին Սասնու մուզա՛զեք։
Տավիթ զքուռգի անուն տրից Մուրատ։

11. Արտաքեր Պառավը յեվ վորստեղ

Որ րմ երգու ընցավ ժամանագ.
Տավիթ թողուց, կնաց Բառվու շախգամ։
Բառավ եմ լը եգավ կանկադ մըդ Ծենով Ոհան։
Ծենով Ոհան ա՛սից.— Բա՛ռավ, կուրձ չգա՛ նը.
Մարտ զինք չբա՛հա՛, ի՛նչ ենրմ։
Ով մ՛ լը Ծենով Ոհան կնաց Մարաթուգ նեչիրի։
Բառավ ա՛սից.— Տա՛վիթ, տու լը կնա նեչիրի։

Շուտ իմ Տավիթ եկավ ու կնաց,
Ոհան ասից.— Լաո, տու մի կը, սար ը, ցուրդ ը.
Ջնարնուց գ'ընգնիս, գը մեռնիս,
Տավիթ ասից..— Չե, ապո, յես լը գ'իկամ.
Տավիթ կնաց Ոհանի հիդ Մարաթուգ,
կացին Մարաթուգ, նեչիր արին.
Ատ իրընգուն մացին անդիխ,
Նադան ուրանց, թամաշեցին գաշխարք.
Տուրան տաշդ չուրի Դիարբաքըր գ'երեվար,
Մեզեցին, մեզեցին, դեսան որ՝
Իմալ ասգրիս գա նը երգինք,
Տաշդի մեչ ատ ղրդրը գրագ գը վաոի,
Տավիթ գանչից, ասից.— Ա՛պո ջան,
Ըդ գրագնիր ինչ գրագ ը՝ գը վաոի,
Ասից.— Տավիթ, լաո,
կեզրանք ին, յայլա յին, հովիվ ին, ջամփուրդ ին,
Ուրանց համար գրագ գը վաոին,
Երգուս լե բառգան, քնան,
Ծենով Ոհան առավ, պերից,
ՉՏավիթ գոխից ուր արու դագ,
Ըր չփըրձնի, քարից ընգնի.
Ինք իմաց ը, գը մեզը,
Տավիթ ասից.— Ջըմ կլուխ պաց թուխ,

12. Մարաթուկա վանքի շինումը

Տավիթ մեզից, մեզից, դեսավ՝
Գրագնիր փավվա իչան դագ.
Մեզ գրագ հանդը գը վաոի,
Տավիթ թռավ, եկավ ըր դիխեն,—
Տաննագ դա ուր մոդին,—
Շուտ իմ հանից ըր ձոցից,
կողդուգ գարին գըդրից, ըր Ոհան չիմանը,
Եկավ ու կնաց, եկավ ու կնաց...
Կնաց, կնաց, հասավ ըդ գրագի մոդ.
Մեզից, ըր ատդիխ կերեզման մը գը.
Լուս մը գը բոստա ըդ կերեզմընից.
Ջափից՝ վեց ոդվի ուր ոդով—լենուքին ը,

Դասերգու ոդվի երգնութին ը։
Ու տարցավ, եգավ, մդավ աբու դագ ու քնավ։

Սարատան Տավիթ ելավ, ա՛սից.— Ապո՛, կինա՛ս՝
Յես կիշիր իմաց ըմ եղի, յես չըմ քնի.
Մեղիր ըմ, մեզիր ըմ, վըր ի՞դը գրագին.
Գրագնին փըվվը իչան դագ,
Ատ մեգ գրագ մնաց ու մնա՛ց։
Ա՛պո, ա՛դ ի՞նչ գրագ ը։
Ասից.— Գրա՛գ ը։
Ասից.— Ապո՛, հայրան եղնըմ քըղի,
Ատ ի՞նչ գրագ ը, ջի՞շտն ասը։
Ասից.— Տա՛վիթ, լա՛ո, կինա՛ս.
Ատի քու հոր կերեզման ը։
— Ողո՛ւրթ գ՚ա՛սիս,— հարցուց Տավիթ.
Ըր ըմա՛լ ը, յես գ՚երթամ ա՛նդիխ։
Ապո՛ ջան, ա՛սից, տու ելի կընը՛ քաղաք,
Գանչը՝ քառսուն հադ իրղաթ,
Քառսուն հադ քար գըդրող, չամուռ շինող վարբիդ.
Գանչը՛, ջամփցո՛ւ, թըղ իկան.
Յես վանք ըմ բըգի շինըմ,
Միձ վանք մ՛ ըմ հոր կերեզմընի վըրեն։
Ոհան ելավ կնաց քաղաք.
Ջամփցուց իրղաթնիր, վարբիդնիր.
Եգան սար, շինեցին ղվանք Տավթի։
Տավիթ գանչից, պերից, մըչ վանքին տրից՝
Քառսուն հադ վարտաբիգ,
Քառսուն հադ գերդեր ու սարգավարգ,
Ինք տարցավ, եգավ քաղաք.
Ըմեն պան, ուդելիք դվից, դարան վանք։
Եգավ հոնիգ, ուր նիդ-անիղ վերցուց,
Եմ լը կնաց, ընգավ Բառվու գորեգի մեչ։

13. Սարկավագը բոթ և բերում վանքի ավերման մասին. Դավիթը վերաճորոգում և վանքը

Որ ըմ Տավիթ ջրժիրու հիդ գը խազեր.
Դեսավ՝ սարգավարգ ըմ վանքի գողմից եգավ։

Տավիթ տարցավ, ա՛սից.
— Ե՛ սարգավա՛րգ, ընչո՞ւ եգար.
Ա՞ղն եր բազաս, մա՞զն եր բազաս.
Քու ըմմեն ուդելիք ա՛նգիխ դեր.
Ընչո՞ւ ելար, փախար, եդար։
Սարգավարգ զանչից.— Տա՛վիթ, Տա՛վի՛թ,
Եզան, Մրսրա եգան,
Թափան վըր մրր վանքին.
Զա՛րգին, թալնին ըզվանք,
Զմըզի ըմմեն զոդըրեցին.
Ըմմեն փախան մեգ զողմ,
Յես լը փախա, եգա քու խիչ։
Տավիթ վազից, կնաց ուր վանք.
Դեսավ, մեգ լը ժոգովըրտից, պերից՝
Քառսուն վարտարիդ, դեըդեր, սարգավարգ,
Պերից, տրից մըչ ուր վանքին.
Ըմմեն ուդելիք, հաց-մաց, ըմմեն պան,
Պերից, դվից, ինք եդավ դուն։

14. Հարկահանություն յեվ խրատատու Պառավը

Մնաց. եգավ վերգու ժամանագր։
Կոզբադին ելավ Մըսրա, եդավ,—
Մըսրա Մելիքի . . . . ա.—
Որ զյոթ դարվան վերգին չափը՛, գանը՛.
Որ զյոթ գոդ ոսգին չափը՛, գանը՛։
Տավիթ լը ա՛նդիխ Բառվու գորեգի մրչ զը խազեր։
Բառավ եգավ, ըր արդ. դեսավ, ա՛սից.
— Ո՛ւ-ո՛ւ, Թլոր Տավի՛թ, քու դո՛ւն ավրի՛,
Եզիր իս, ընգի շախգրմի արգի մեչ,
Զրմ դուն գ՛ավրիս. ի՞նչ ը Թլո՛ր.
Ելի կընը՛, դիս՝ Կոզբադին եգեր ը,
Գր հավաքը զյոթ դարվան վերգին,
Գը հավաքը զյոթ գոդ ոսգին.
Ելի կընը՛, ելի կընը՛...
Տավիթ ա՛սից.— Բա՛ռավ, Բա՛ռավ,
Կոզբադին հը՞վ ը, ի՞նչ տա՛բա՛ յը։
Բառավ ա՛սից.— Հը՛, Կոզբադին հը՞վ ը...

Մըսրա Մելիքն ը ջամփըցը,
Ջյոթ դարվան վերդին գը դանը.
Ջյոթ գոգ ոսգին գը ժոգվը։

15. Դավիթը հարկ չի տալիս յնվ պատուհասում և հարկահան Կոզրադնին

Տավիթ կնաց դուն, դեսավ՝
Կոզրադին նստուգ ը վըր քուռուն,
Երկու ասքար պլոնիր ին զրարգերու պերան,
Ծենով Ոհան գոգով գոսգին գը չափը։
Կոզրադին մեգ-մեգ թիզ բոգրնիր ունը,
Սուր-սուը ցըցած պնխնր ունը,
Որ մարտ դեսնը, գը սարսըփը։
Տավիթ եգավ, մգավ գուն, ասից.
— Ապո, թուխ, յես գը չափըմ գոսգին։
Ոհան ասից.— Տավիթ, լաո,
Վազ ընցի, աուն երեխա յիս,
Ըմլը պանից կուրձ չունիս։
Ասից.— Ջե՛, ապո, դուրբան քըզի,
Թուխ, մինաղ գոգ ըմ չափըմ։
Ոհան ըզգոգ դվից Տավթին։
Զգոգի պերան ոլըրից կեգին,
Վերուց գոսգին, ւցից գոգի ոռի վրեն.
Զարգուց սիլաջախ, ոսգիք թափան կեգին.
Երկու հադ ճնաց գոգի ոռի ջեխքին։
Կոզրադին ասից.— Ո՛հաճն, ինչ պան ը.
Ես երեխեն պերիր իս, տրի ասգիդ,
Մըգի ինչ ը խաղալիք գ՛ենիս.
Ի՞նչ պան ը, Ո՛հաճն։
Ծենով Ոհան նեգացավ Տավթին.
— Ի՞մալ ը գը չափիս, Տավիթ։
Ըզգոգ շըդգից, արից առճիվ,
Ասից.— Տավիթ, հրմլը՛ գը չափին։
Տավիթ ըզգոգ ոսգի ւցից.
Վերուց, ծիոք տրից վրեն,
Դարավ-պերից, դարավ-պերից,
Ջըրգից Կոզրադինի քիթ ու պերան,

Ճարտից ընուր քիթ ու պերան.
Քանի մ՛ չոփլակ գվից երեսին,
Տրից կեդին, հասավ վերեն.
Զանգաճ գըդրից, զբըռգընիր գըդրից,
Երկու ագոա քաշից, զա̈րգից ջագդին։
Կոզբադինի պերան մնաց պաց.
Ելավ ու փախավ, ու կնաց Մսըր։
Տոդուն ընզավ Ծենով Ոհանի, Քեռի Թորոսի
Ու քաղքըցներու ըմմընու սիրգ։

16. Կոզբադնի վերադարձը. Մսրա Մելքի զայրույթը, զորահավաքն ու արշավանքը Սասունի վրա

Կոզբագին եգավ, հասավ Մսրը.
Քաղքըցիք եգան Կոզբադնի առճիվ.
Եգան, դեսան՝ ագռնին գը սրիդըգդը.
Ասին.— Կոզբադին ուըախ գ՛իկը.
Գը ձիձղը, ուր կուրձ հաճուղ ը։
Կոզբագին մոգիգցավ քաղքին.
Դեսան՝ ագռնին զա̈րգուգ ը ջագագ,
Բրռգընին գըդրուգ ը, չգա̈ նը։
Խարար կնաց, հասավ թակավուրին։
Ասից.— Ո՞ւվ ենր զետ պան, ո՞ւվ չենր։
Ասիցին.— Տավիթն ենը։
Թակավուր մրմռաց՝ հր՛մ, հր՛մ, հր՛մ...
Ասից.— Տավիթ սա̈զ ը, հա̈՛...
Բըրձավ ուր դեխից ու կնաց.
Կնաց, գանչից ըզսինոդնին.
— Ե՛հ, ա̈սից, ի՞նչ եր ենեցիք ըմ կլուխ.
Են երգու ասքար չգա̈ նը.
Գանչեցեք զերգուս լը, թըխ իկան։
Ասըցին.— Երգուս լը մեռիր ին։
Սինոդնին ա̈սըցին.— Մըք ի՞նչ ենինք.
Ասքըրնին ըզՏավիթ սպանիր ին,
Զշուրիը արնուդ պերիր, արիր ին մըր առճիվ։
Մըք ի՞նչ մեղավուր ինք, թա̈կավուր։
Ասից.— Սինոդնի՛ր, ասքար ժողվեք։

«Հարիր հազար դասն ութ գարեգան.
Հարիր հազար քսան երգու գարեգան.
Հարիր հազար երսուն դարեգան.
Հարիր հազար երսուն հինգ դարեգան.
Հարիր հազար քառսուն հինգ դարեգան.
Հարիր հազար հիցուն դարեգան.
Հարիր հազար սրիգագ մուրքով»։

Սինոդնին ընգան մըչ քաղքին, մըչ երգրին,
Ժողովեցին հազար-հազար զորք, եգան։
Խաբար եգավ Քեռի Թորոսին, Ծենով Ոհանին.
Տող ընգավ ընգուց ըմմընու սիրդ։

Մելիք բոռաց, գանչից, ա՛սից.
— Գ'երթամ Սասուն, գ'ավրըմ,
Զհուղ ու ճուր, զժողովուրթ գը վերում.
Քանդըմ, դանըմ Մըսրա գուշդ,
Նոր քաղաք ըմ շինըմ,
Ալ Սասուն անուն չեղնի աշխըրքի մեչ։
Մելիք ուր ասքար ժողվից, եգավ,
Սասնու չուրս պոլուր տրից, նսդավ։

17. Դավիթը Պառավի խրատով հորեղբորից օտանում և հոր սարքը, գիճավառվում և յեվ քնելով հսկա յև դառնում

Տավիթ եմ լը կնաց Բառվու գորեգի մեչ։
Բառավ եգավ, դեսավ՝ Տավիթ մեչ ուր արդին,
Գանչից, ա՛սից.— Թլոր, ի՞նչ ը գ'ենիս.
Ի՞նչ եգիր իս տու՝ զը՛մ արդ գ'ավրիս։
Մելիք գռիվ եդի Սասնու վրեն.
Հանդա եգիր ին, զչուրս պոլուր պըռնիր, նսդիր ին.
Քսան որ վերճ Սասուն քանդին, գր դանին։
Ասից.— Բառավ, ի՞նչ պան ը եգի։
Ասից.— Չըս գի՞նա՝ ինչն ը եգի։
Տու ըզԿոզբադնի կլուխ գր զա՛րգեր,
Տու ըզԿոզբադնի ագռեք գը քաշեր,
Տու ըզԿոզբադնի բըռգընիր գը գըդրեր,

Մըք սուս ու փուս մըր վերդին գ'իդինք.
Տու սարիր եղար, Թլոր Տավիթ,
Մըսրա Մելիք ասքար ենը, իկը,
ԶՍասուն զա՞րդը, քանգը, դանը։
Տավիթ լսից, հասգըցավ,
Քաշից պարդի մ' ձառ, տրից թեվին, կնաց։
Բառավ ա՞սից.— Տա՞վի՞թ, ո՞ւր գ'երթաս։
Ասից.— Գ'երթամ գռիվ։
Ասից.— Ինչո՞վ գ'երթաս գռիվ։
Ասից.— Պարդի ձառով զա՞րգիմ,
Ճարտիմ Մըսրա Մելքի զորքին։
Ասից.— Ըզքու բագան գարրմ, Թլոր,
Պարդո՞վ գ'երթաս, գռիվ ենիս.
Կնա՛ քո Ապո Ոհանի մոդ, ուզը՝
Ըզգորեգի ամբրի պալլիք.
Թը չդվից, գ'երթաս, գը զա՞րգիս,
Տուռ գը ճարտիս, գը մդնիս նիրս.
Քու հոր շուրիր ընդիխն ը՝
Գեծգի Թուր, Զըրեխլի Շաբիգ գը վերուս,
Զըրեխլի Քա՞մար, Զըրեխլի Կտագ գը վերուս,
Գը հակնիս ու յոթ որ գը քնիս.
Յես գ'իկամ քու խիչ, Տա՛վիթ։

Տավիթ կնաց Ապո Ոհանի մոդ,
Ըզգորեգի ամբրի պալլիք ուզից։
Ծենով Ոհան զպալլիք չդվից։
Ասից.— Չի՞գաս, ըզտուռ գը ճարարմ։
Ծենով Ոհան գանչից.— Տա՛վիթ, լա՛ո,
Առ ըզպալլիք, կնա՛, տուռ պաց։
Ոհան դվից զամբրի պալլիք։
Տավիթ կնաց, ըզտուռ պացից.
Կնաց, սանդուխ պացից.
Հանից, զըմմեն պան վերուց։
Զըրեխլի Շաբիգ հաքավ,
Յոթ փաթ զշարիգ փաթից ուր վրեն.
Զըրեխլի Քա՞մար գաբից,
Յոթ փաթ զքա՞մար փաթից ուր մեչք.
Զըրեխլի Կտագ տրից ուր կլուխ,—չեղավ.

Քառասուն խիտր պամպագ լցից կտագի մնչ-
Տրից ուր կլուխ, նոր նագից ուր կլուխ.
Չգեծգի Թուր գարից ուր վրեն. .
կլուխ ըմ Քրին Ճնաց կեդին,
Մեգ լր հասավ, տիրավ չանին,
Տավիթ ելավ տուրս. Ւառավ հգավ,
Ասից.— Գեհ, Թլոր, բառգի, քնի,
Տավիթ կնաց, բառգավ, քնավ լոթ որ.
Քնավ, յոթ որ Քրմմավ,
Զրնգրոդուն բնգավ ըր չանդաք.
կտագ, պամպագ Թռավ կլխուց.
կացին, պերեցին գկտագ, տրեցին կլուխ.
կլուխ լցից գկտագ,
Բառավ ասից.— Թլոր, գ'ելը, գանի,
Շարիգ, ըր յոթ փաթ հավքիր եր ուր վրեն,
Չոռովեն մեգ փաթ եգավ ուր վրեն,
Չըրեխլի Քամար, ըր յոթ դաթ եր ուր վրեն,
Չոռովեն ձեր ձիրուն հասավ.
Գեձգի Թուր գարից ուր վրեն,
Չոռովեն հասավ ուր չոքին.

18. Դավիթ սպանում է Քուռիկ Ջալալին. Ջեռով Հովանի ափսոսանքը

Ոհան բադ եր տրի Քուռիգ Ջալալի տեմ.
Ընդրը գիր երթքի ձագից գը Քափեր ասճիվ-
Ծենով Ոհան ըզրադ քաղդից.
Տավիթ կնաց, նիրս մդավ.
Քուռիգ Ջալալին աքցի մ' գվից բադին.
Բադ քանդվավ, կնաց, Թափավ մրչ ծուրուն.
Գե, լավելով, քորթելով'
Տավիթ կնաց, հասավ Քուռիգ Ջալալին.
Քուռիգ ասից.— Տու րմ հնձնող չիս.
կնա, կնա, չրմ ուղը, կնա.
Տավիթ լինդ պոնից ծիու կլուխ.
Քուռիգ Ջալալին ասից.— Տավիթ, Տավիթ,
Թր տու իմ խուսքով գ'ելիս, գը նագնս,
Ին չանփով գ'երթաս, գը քշիս,

Ինչ ջանփեն քըզի նշանց գ'իդամ.
Թը տու քու հոր բես դը նսդիս ըմ վրեն.
Ելի նսդի, տու ըմ դեր՛ն իս։
Տավիթ ա՛սից.— Իմալ աու ենի՛ս,
Յես լը ընբես գը նսդիմ, գ'ելնիմ։
Պերից ճուր, սաբուն, լվաց զընի։
Ինք ու ծին միացան, ելան տուրս, գանան։
Ծենով Ոհան եգավ, ա՛սից.

«Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ, հազար ափսո՛ւս,
Հազա՛ր ափսո՛ւս մըր Սասնու քաղքին,
Ըր քանդվավ, կնաց Մըսրա երգիր.
Հազա՛ր ափսո՛ւս մըր ոլուխ-չոջուխին,
Ըր գոգըրվավ, կնաց Սասնու քաղքից.
Հազա՛ր ափսո՛ւս մըր Զրըխլի Կտագ,
Ըր կնաց, հասավ Մըսրա Մելքին.
Հազա՛ր ափսո՛ւս մըր Զրըխլի Շարիգ,
Ըր կնաց, հասավ Մըսրա Մելքին.
Հազա՛ր ափսո՛ւս մըր Զրըխլի Ֆա՛մար,
Ըր կնաց, հասավ Մըսրա Մելքին.
Հազա՛ր ափսո՛ւս մըր Գեձգի Թուը,
Ըր կնաց, հասավ Մըսրա Մելքին։
Հազա՛ր ափսո՛ւս, ա՛խ-վա՛խ, հազա՛ր ափսո՛ւս»...

Տավիթ գանիր եր քուռգի գուշտ,
Ուը ծեռվին հանդր վըր թրին,
Ըր զա՛րգա, զՈհանի կլուխ թռու։
Ծենով Ոհան ա՛սից.
«Ա՛խ-վա՛խ, ա՛խ-վա՛խ.
Հազա՛ր ափսո՛ւս, ա՛խ-վա՛խ, հազա՛ր ափսո՛ւս,
Ափսուս մըր թա՛զա՛ մանուգին,
Ըր կնաց, գորավ Սասնու դնեն»։

19. Դավթի հրաժեշտը յեվ ձիու խրատը Կաթնով ազբյուրի յեվ Յերկաթե ոյունի մասին. Դավիթը կտրում և Յերկաթե ոյունը

Ծին ա՛սից.— Գը՛ հեձի։
Տավիթ առավ խաթրը կեզացոց.
Առավ խաթրը Ֆեռի Թորոսից.

Առաւ խաթըր Ապո Ոհանից.
Առաւ խաթըր մարտ ու գրնգըդից.
Ասից.— Ախպըրդիք, քուրիր, մը վախճնեք,
Ասձու գամքով գ'երթամ, հաճուդ գ'իկամ։
Տավիթ քշից, կնաց։

Մին ճսից.— Տավիթ,
Գ'երթաս Գաթնով ախպուր գը.
Անգիխ բնձի յեմ գ'իդաս,
Տու լը գր բառգիս, հանկըսդիս,
Հրբամ գ'ելլինք, գ'երթանք մըր ջանփան։
Մին ճսից.— Տավիթ, ըր հանկըսդանք, ելլանք,
Ջամփեն երգրթե սուն գ'իկա մրգի ռասդ։
Տավիթ կնաց, մոռցավ զԳաթնով ախպուր։
Մին գանավ ըր դիխ, չկնաց։
Տավիթ գանգուն զճրգից,
Միու երգու գուղք գոդրավ։
Տավիթ իմցավ, ելավ հանից գուր խաչ,
Ջճրգից վրր ծիու գողերուն, սաղցավ։

Ընդան ջանփեն, կացին, երգրթե սուն ռասդ եգավ։
Ջճրգից գթուր, գրդրավ, սուն գանավ։
Մին ճսից.— ե՞, բարագա կուրձ երեցիր։
Տավթի թեվիր թուլցավ։
Ըր թուլցավ, Ասգրձու հրամանքով՝
Հարավ քամին ելավ, սուն շրճվավ։
— Մը վախճնը, ճսից, քու թեվիր ամուր գ'ինը,
Եմ լը առչին ուժ, եմ լը առչին թեվիր։

20. Դավթի վախը բճամիճներից. ձիու բաջալերը. բճամիճների բանակին իմաց տալը յեվ հարձակումը

կացին, ելան սարի մ' կլուխ։
Իրընգուն եր. Տավիթ մեզից՝
Ինչքան ասդրզ գրեր երգինք,
Ընքան չագըր, ջրաք Սրուջա տաշդ։
Տավիթ ելավ դեսավ խոշուն,
վախճցավ, ճնդադար ճսքար գրեր։

Ծին, ըր դեսավ, տարցավ, ա՛սից.
— Մը վա՛խա՛նը, Տա՛վի՛թ.
Ինչդադար տու քու թրով ճարտիս,
Ա՛նղադար յես ըմ բոչով գը ճարտըմ.
Ա՛նղադար յես ըմ ոդվով գը ճարտըմ.
Ա՛նզադար յես ըմ կլխով, պերնով գը ճարտըմ։

Տավիթ քշից, կնաց, գռվու տաշդ.
Գանչից, բոռաց, բոռա՛ց, ա՛սից.

«Ե՛.. ե՛, ուվ ըր քնո՛ւդ ը, իմցե՛ք.
Ուվ ըր իմա՛ց ը, զենքիր վերցե՛ք.
Հազը՛ր եղեք, ծիանք հեձե՛ք.
Չա՛սիք՝ Տավիթ կուղ եգավ, կուղ կնաց.
Ե՛—ե՛, դե՛հա՛, քաշվե՛ք մայդան։
Եգիր ըմ գռիվ, գռի՛վ գ՛ուզըմ»։

Գովան, զա՛րգեցին, զա՛րգեցին, պոտեցին,
Արուն ելավ ծիու զանգուն։
Տավիթ դասնութ դարեգան երեխա յը։

21. Զորականի խրատը

Ասքըրի մըչ մեգ կլխավոր ըմ գըեր.
Եգավ առճիվ, ա՛սից.— Տա՛վի՛թ, ա՛յ Տավի՛թ,
Խիդջ ին ըդուք. բաբ, մամ գա՛ նը ընդուց.
Ինչո՛ւ գը գոդըրիս, քըզի գ՛անիձին։
Զըդուք Մըսրա Մելիք զոռով պերիր ը,
Ըդուք տաշդ-հող թողիր ին, եգիր ին.
Ասձու խաթըր, ինչո՛ւ գը գոդըրիս։
Ասից.— Չըմ գո՛դըրի զուրանք.
Բա՛, վի՛ը հիդ գռիվ ենըմ։
Ասից.— Քու դուշման Մըսրա Մելիքն ը։
Ասից.— Բա՛, ո՛ւը ը Մըսրա Մելիք։
Ասից.— Ե՛նա՛ գարմիը չադրը զա՛րգուգ։
Ասից.— Կնա՛, ինչդրդրը երիտասարդ զա՛ նը.
Ասը՝ թրխ երթան ուրանց դնիր։

Հարիը հազար ըրձան, չգոդըրից։

22. Մսրա Մելիքը Դավթին խարում, ձգում և հորի մեջ

Զա՛րգից, կնաց Մրսրա Մելքի չադրը։
Մըսրա Մելիք քնի՛ր ը.
Են լր յոթ որ քնի՛ր ը։
Տավիթ բոռաց, գանչից, ա՛սից.
— Ե՛, Մըսրա՛ Մելիք, արթընցի՛,
Եգիր ըմ գռիվ. գռի՛վ գ'ուզըմ։
Մելիք չիմցավ։
Դաքցին շիշ, զա՛րգին ոդաց գագ.
Մելիք չիմցավ։
Պերեցին, զկութնի խուփ գարմըրցին.
Գարմըրցին, զա՛րգըցին ոդաց դադ։
Մելիք իմցավ, բոռաց.
— Ո՛ւ... ո՛ւ, զրմ դիխ լավ չրն շի՛նի,
Ջանավար, պան գ'ուդը զիս։
Դեսավ զՏավիթ, թրշշա՛ց, փրշշա՛ց,
Ըր ուր հանքից, ըր հեվքից,
Տավիթ թռնի ըր դիխից։
Տավիթ ըր դիխ գանուգ մնաց։
Մըսրա Մելիք մըրմռաց, ա՛սից.
— Տա՛վիթ, կնա, մըգ 'լ որ արի, գռվինք։
Տավիթ կնաց սարի ձեր.
ԶՔուռիգ Ջալալին թողից ա՛նդիխ,
Ինք լր բառգավ ոնի, հանկրսդավ։
Ուր ժամանագ ըր եգավ,
ԶՔուռիգ Ջալալին թողից ոնի,
Ինք ելավ կնաց դրր Մելիքի չադրը։

Մըսրա Մելիք քառսուն կազ հուր ը շինի,
Խալի յը փռի հուրու վրեն,
Խալի յը փռի ջամփու վրեն,
Ըր Տավիթ իկա, ուդեն, խմեն, գռվին։
Մելիք մարտ ջամփից Տավթի առճիվ,
Ասից.— Թըղ իկա՛, ուգինք, խմինք, նուր գռվինք։
Տավիթ զուր ոդվին տրից վըր խալուն,
Եգավ, ըր մդնի չադրրի մեչ,
Ըր հաց ուդեն, խմեն, նուր գռվին.

Եգավ, զոգվին գոխից հորու վրրեն,
Ընգավ, կնաց մրչ հուրուն։
Մելիք պերից ճաղցի քարիր,
Քաշից հորու պերնի վրրեն, թողից։
— Հա՛... հա՛, Տավիթ Սասնու եգիր ը,
Մրսրա Մելիքի հիդ գռիվ գ'ենը.
Թլոր Տավիթ Սասնու եգի՛ր ը,
Գ'ուզը, Մրսրա Մելիքի հիդ գռիվ ենը... Հա՛... հա՛...
Տավիթ մնաց մրչ հուրուն։

23. Ջենով Ոհանի յերազը յեվ խոսքը ձիերի ենս

Ծենով Ոհան ելավ Սասուն, մեղից, դեսավ
Մրսրա ասդրխ ենա գը ֆրոֆրոր՛,
Սասնու ասդրխ խավա՛ր ը։
Եգավ դուն, բառգավ, քնավ։
Մեդ լը երազ գեսավ, ելավ տուրս,
Եգավ դուն, ա՛սից.— Ա՛յ գնիգ,
Մրսրա Մելքի ասդրխ գը ֆրոֆրոր՛,
Սասնու Տավթի ասդրխ խավա՛ր ը։
Մրը աբրանք լը կնաց մրը ծեռից,
Մրը Տավիթ լը կնաց մրը ծեռից։
Եմ՛ լը բառգավ. քուն չի՛գա։
Եմ՛ լը ելավ կնաց տուրս։
Շուդ դուն եգավ, գանչից.— Գնի՛գ, ա՛յ գնիգ.
Մելքի ասդրխ եմ՛ լը գը խաղա,
Տավթի աստրխ խավա՛ր ը։
Գնիգ ա՛սից.— Քու գուն չավրի, Ոհա՛ն.
Գը բառգիս քրզի, երազ գը գեսնաս ուրրշի
Ուվ գինը՝ Տավիթ վիր ձուցն ը քնի։
Տարցավ եմ՛ լը ելավ տուրս.
Դեսավ՝ Տավթի ասդրխ փչացավ։
Բոռաց.— Գնի՛գ, ելը՛, ջրաքնիր վառը՛...
Կնաց Տավիթ մրը ծեռից.
Հազա՛ր ափսուս մրը նորելուգ մանուգին։

Ջրաքնիր վառրցին, կնաց կում.
Ծեռք սա՛րից վրը Գարմիր ծիուն.

Ծին զբառիգ իչուց կեդին։
Ծեռք սա՛րից վըր Սեվ ծիուն,
Ասից.— Յե՞փ գը հասցուս գռվու տաշդ։
Ասից.— Վախթոց վախթ գը հասում։
Ասից.— Ե՛դ լը չեզա՛վ։
Կնաց վըր Մուրատին, ա՛սից.
— Մ՛ուրա՛տ, յե՞փ գը հասցուս գռվու դիխ։
Ասից.— Հըր զքու ոդվին հասցուս զանգուն,
Քըզի գը հասցում գռվու տաշդ։
Ասից.— Սաբըր ենը՛, հարի զըմ ճակիր գարիմ։

24. Դավիթը Ջենով Ոհանի խրատով յելնում և հորից

Եգավ յոթ կոմշու գաշի փաթից ուր վրեն.
Յոթ կոմշու զընջիլ փաթից ուր վրեն,
Ըը բոռա, գանչը՛, չբադռը՛,
Հեձավ ըզծին, ելավ սարի կլուխ։—
Ուր գռիվ լը բոռալն ը.
Ուր ճակիր լը եդ ը։—
Գանավ սարի կլուխ, բոռաց.— Տա՛վի՛թ,

«Հացն ու կինի, դեր գենտանի,
Խաչ վըր քու աչ թիվին»։

Բոռաց, Տավիթ հասգրցավ մեչ ուր հուրուն.
Ըր հասգրցավ, զուր երիս ֆըտլից վըր խաչին, ա՛սից-

«Հացն ու կինի, դեր գենտանի,
Սուըփ խաչ վըր ըմ աչ թիվին»։

Ասից ու զինք թափ դվից, թոթվից.
Ճաղցի քարիր բրձավ, ինք թռավ, ելավ տուրս։
Ծենով Ոհան եգավ, հասավ ընդիխ.
Քուռիգ Ջալալին չիկը ծեռվին։

25. Դավթի յեվ Մսրա Մելիքի մենամարտը. Դավիթն ոպանում և Մելիքին յեվ նստում Մսըր թագավոր

Քորթելով, լավելով պռնեցին զՔուռիգ Ջալալին։
Տավիթ հեձավ ուրոծին, եգավ Մելքի չադրի առճիվ,

Գանչից.— Մելիք, ելի գանի, գռիվ ենինք։
Մելիք ասից.— Հա, ենինք. հրմա նոբթով։
Իրեք կուրզ տու զարգ, իրեք յես.
Առեչ ուվ զարգը՛, տու թե՝ յես։
Ասից.— Առեչ մեձ ախպեր բրգի զարգը։
Մելիք, տու մեձ իս, զարգ քու կուրզ։
Գանան ուրարուց հեռու։
Տավիթ ասից.— Մելիք, տու գը զարգիս։
Մելիք ասից.— Հա, հա...
Մելիք զարգուց կուրզ ըմ ուրուն.
Մելիք ըր գուրզ զարգուց Տավթին,
Հրիշտագ կրգից Տավթին, հանից մըչ ամբերուն։
Եղավ ձուխ, մուխ ու մուժ, պռնից գերգիր։
Ձուխ, մուխ ըր վերճացավ, մեզից,
Դեսավ՝ Տավիթ հանգը ուր գիխ։
Ասից.— Հեյ, Տավիթ, տու եմ՛ լը սախ իս։
Ասից.— Սախ ըմ, սախ ըմ։
Մելիք կնաց, եգավ, զարգուց։
Եմ՛ լը վերցին զՏավիթ, զարան։
Թոզ վերճացավ, ձուխ, մուխ իչավ,
Եմ՛ լը Տավիթ հանգը ուր դիխ։
Մելիք մեգ լը զարգուց ուր կուրզ։
Եմ՛ լը ձուխ, մուխ գես ժամ վերճացավ.
Տավիթ հանդը ուր գիխ, ուր դիխ։

Մելիք սարքից քառսուն կազ հուր.
Ինք կնաց, մգավ մըչ հուրուն.
Քառսուն ճաղցի քար տրից վըր հուրուն։
Տավիթ եգավ, գանավ, ըր զարգա,
Տավիթի մեր եգավ, խընտրվավ.
— Իմ ձըձի գաթ հալալ եզնի վրեդ.
Տու գարբ մ՛ իդաս ըմ խաթըր։
Տավիթ ասից.— Մամո, դարր ըմ դվեցի քու խաթըր։
Եգավ ախճիկ ըմ Տավթի մորից ու Մըսրա Մելքից,
Խընտրվավ, ասից.— Դարր ըմ լը իդաս ըմ խաթըր։
Տավիթ բոռաց.— Հեռու կնա, խանջուխ։
Եմ՛ լը մեր եգավ, խընտրվավ.
— Տավիթ, գըրբ ըմ իդաս Ասձու խաթըր։

Տավիթ ա՞սից.— Մեգ լը գ'իդամ Ասձու խաթրը։
Մացի յես ու մեգ դարը։
Տավիթ մեգ կուրդ զա՞րգուց Մելքին.
Կնաց, առավ ճաղցու քարիր,
Ճարտից քարիր, ընգավ մըչ հուրուն,
ԶրՄելիք լըխփրցուց ընդիխ, կնաց դագ։
Եգավ, կնաց վրը հուրուն,
Դեսավ՝ Մելիք հոքով ը մըչ հուրուն.
Ասից.— Մե՞լի՞ք, տու սա՞խ իս.
Թափ դուր զքըզի, ելի՞ գանի՞։
Մելիք թափ դվից զինք,
Լըխփավ, ուր դիխ Ֆնաց։
Ըր Ֆնաց, տարցավ, եգավ ուր դիխ,
Հեձավ ուր Քուռիգ Ջալալին,
Ծենով Ոհան լը ուր Մուրատ,
Քեռի Թորոս լը ուր ծին՝,
Ասից.— Ապո՛ Ոհան, Քեռի՞ Թորոս,
Տուք կացեք մրը գուն, Սասուն.
Յես գ'երթամ, նսգիմ Մսըր.
Ալ չրմ ի՞կը Սասուն։
Ապո Ոհան, Քեռի Թորոս կացին Սասուն.
Տավիթ կնաց Մըսրա երգիր։
Մըսրա ժողովուրթ եգան Տավթի առճիվ.
Եգան դըհոլ-զուռնով, գուսնով։
Տավիթ կնաց, նսդավ Մսըր։
Մնաց ոնի, եգավ թակավուր։

Գ

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԽԱՆԴՈՒԹ

26. Դավիթն աշուղներից ստանալով Խանդութի թուղթը՝ Մսրից գնում և Կաղզվան Խանդութի մոտ

Աշխարք լսից Տավթի գովի ծեն։
Ծեն կնաց, հասավ Գաղրզվան.
Կնաց, հասավ Մելքուն թակավուրին։
Խանդութ խանրմ Մելքուն թակավուրի ախճիգն ը։

Խանդութ խանըմ լսիր ը Տավթի ձեն։
Որ իմ լե աշըղնին դտամբուրեք առան,
Կացին Խանդութ խանըմի խիչ։
Զուրգին դուրանց տամբուրեք, բսին,
Կովացին, կովացին Սասնա Տավթին։
Խանդութ խանըմ երգու դուզ* թուղթ կրիա,
Դվից աշըղնց ձեռ, ասից.
— Ելեք կացեք Սասուն, դվեք Տավթին.
Ի՞նչ դաս-դաս փարա գը ժողվեք։
Տավիթ ծըղի շադ պան գ՚իդը։
Ուրիշ մարտու չիդաք, գ՚իդաք Տավթին։
Աշըղնին Խանդութ խանըմի թուղթ առան,
Առան, գարեցին ուրանց քնջին,
«Տը՛մբ, տը՛մբ... դտամբուրեք զուրգին,
Ելան եգան, հասան Սասուն։
Կացին չարսուն, հարցուն, զուրգին,
Խաղցան դիսա-դինա, հարցուն Տավթին։
Ասցին.— Մըր դուն ավրի,
Տավիթ կացիր ը, ասիր ը Մսըր,
Զուրգիլ ը դՄրսրա Մելիք սպանիր ը,
Ինք նսաիր ը թակավուր Մսըր։

Աշըղնիր հլան ընգան ջամփան.
Ուշիկ-ուշիկ որ մ՚ կեղ խոնաղ եղան,
Կեղ-կեղ ընցան, ուրանց փարան հավաքեցին,
Կացին, հասան Հալաբ քաղաք.
Հալաբից ընցան, կացին Բելանգ.
Բելանգից ընցան Իսկալան,
Նգան գամին, կացին Մսըր։
Ելան չարսուն, զուրգան, խաղցան,
Բաշխիշ, փարա շադ հավաքեցին։
Աշըղնին չըն գո՛նա լըրդի փարուց։
Աշըղնին գնսան Սասնու ժողովուրթ,—
Եգիր ին Տավթի հիգ, լցվիր Մսըր,—
Եմ՛ լը զուրգին դուրենց տամբուրեք,
Սասնու բարիր, խաղիր ասին։

* Տող։ Խ մ բ.

Մարտ ըմ կնաց խիչ Տավիթ, ասից.
— Տավիթ, աշըղնիր եգիր ին Մըսրա քաղաք.
Զատ խաղիր, զատ բարիր ըր գ'ասին,*
Մըր Սասնու խաղիրն ին, բարիրն ին։
Ասից.— կացեք, գանչեք՝ ԹԸխ իկա ոգա։
Կացին, գաշըղնիր գանչըցին, պերեցին։
Աշըղնիր զԱրգըցին զՄշու տաշդի խազիր,
ԶԱրգըցին զՍասնու խաղիր, բարիր.
Հաց-պան գերան, գերան, խմանւ
Մնաց. իրընգուն Տավիթ ասից.
— Լավ ոգե մ' գաշեք, գվեք ուրանց,
Թրխ երթան բառգին, որհաթին։

ՄուԹն ա. աշըղ քանդըռդից գուր շուրիր,
Հանից զատ ԹուղԹ, տրից վըր Թևբսուն,
ՄարԹ ըմ գարավ, գվից ՏավԹին։
Ուրանք կացին ուրանց ոգեն։
Մնաց Տավիթ ու ուր վագիր։
Տավիթ հանից, քանդից զԹուղԹ, մեզաց վարեն,
Ասից.— Թռհռ.. հռ.. հռ ետա Ջանդուխ խանըմի ԹուղԹն լ։
Գաղըզվանա Թակավուրի ախճգա ԹուղԹն ը։
Սաբախտան գանչից, պերից աշրղնիր,
Գանչից, գվից ուրանց ոգի-մոգի,
Ջամփա տրից ԹԸխ Գաղըզվան, ասից.
— կացեք ծըր գուն, յես գ'իկամ։
Գերից, գվագիր տրից ուր գիխ, ասից։
— Մարտու չասիս, ըր Տավիթ հոգա չե։
Տավիթ Մըսրա հեձավ, եգավ Հալար,
Հալըս մեգ 'լ որ եգավ Սասուն, ուր գուն.
Սասնա մեգ 'լ որ կնաց, հասավ Գաղըզվան։

27. Դավթի յեվ խանդութի առաջին հանդիպումը

Գաղըզվանա ջամփու առեչ հոգի բադ եր.
Ջանդուխ խանըմ լը դաս ախճիգ բաղը՝ մեչ ին.
Հար մեգ ախճիգ բդուղ ըմ գը պերին՝

---

* Զայդ — այդ։ Խմբ.

Թա՛ խնծուր, թա՛ սալուր, թա՛ դա՛նծ գը պերին,
Գ՚իդան ուրանց Խանդութ խանըմին։
Խանգութ խանըմ շամսեն վրը կլխին՝
Հանդը գ՚երթա, գ՚իկա մեչ բաղին։
Մեգաց ծիավուր ըմ ա՛նդիխեն եգավ.
Ջամփեն լը բաղից տեն գ՚երթա։
Խանըմ լը առճիվ բագին գ՚իկա, գ՚երթա։
Տավիթ գանաձ եր վրը ջամփին։
— Ա՛խճի, ա՛սից, տու վի՞ր ախճիգն իս։
Ասից.— Յես Մելքուն թակավուրի ախճիգն ըմ։
Ասից.— Ա՛խճի, ի՞նչ ը քու անուն։
Ասից.— Խանգութ ը. հա՛պա ի՞նչ ը քու անուն։
Ասից.— Տավիթ ըմ յես։
Ասից.— Վըռ՞ր Տավիթն իս։
Ասից.— Սասնա Տավիթն ըմ։
Հոնի ջանչըցան գիրար։
Բաղի բաղ մրչ ուրանց եր։
Տավիթ հաղ ըմ երգու կնաց Խանդութի երիս.
Հաղ ըմ լը կնաց Խանգութի երիս.
Խանդութ չափալաղ ըմ դա՛րգից ուր երիս։
Փլավ ուր քիթ, արուն եգավ ուր քիթ, պերնից։
Տավիթ ելավ ուշիկ, քշից ըզծին,
Ելավ կնաց ա՛ռճիվ ճրին։
Լվացուց ղուր քիթ, պերան, ղուր երիս,
Նսգավ հոնիկ, գերավ ուր հաց,
Տարցավ, դվից յեմ ուր ծիուն։
Խանդութ խանըմ, ուր ախճըգդիք կացին։

28. Դավիթն ու դռնապան Բողեն

Խանդութ խանըմին մեգ խարախոլ գրեր.
Խաբախոլին անուն Բողե եր.
Հանդը նսդուգ վրը քուրսուն, ա՛ռճիվ դարգահին։
Շադ մարտ ա՛ն ժա՛մանագ դեվ ին եզի.
Եգիր ին զԽանգութ խանըմ փախցնին։
Ատ մարտիգ հանդ, ին պռնուկ։
Մելքուն թակավո՛ւրն ը, Գագըզվա՛ն ը.

Ո՞ւվ գա՞ռնա՞ փախցու զԽանդութ խանըմ։—
Տավիթ հեձավ ըզծին, կնաց վըր խարախոլ.
Հանդը նսդուգ տռան ա՞ռճիվ վըր քուրսուն։
Ուվ եգիր ը, չդա՞ռցի պարիվ դվի խարախոլին։
Տավիթ դեսավ զԲոզե խարախոլ, վա՞խա՞ցավ։
Խարախոլ ըր դեսավ զՏավիթ,
Քառսուն ա՞նխա՞դար վա՞խա՞ցավ։
Տավիթ ուր վա՞խա՞նալուն պարիվ դվից։
Բոզեն ուր վա՞խա՞նալուն ա՞սից.
— Ասձ՞ու պարին, Ասձ՞ու պարին։
Ասից.— Ա՞նխա՞դար մարտ ըր եգիր ը,
Չդա՞ռցի ընծի պարիվ դվի.
Հա՞մա՞ ըր տու եգիր իս, պարիվ դվի.
Ազադ իս, կնա՞ նիրս, բըդըդի։
Տավիթ կնաց, մգավ նիրս։

29. Դավիթը Խանդութի պահանջով բերում և դեվերի գլուխները. Դավթի յեվ Խանդութի մենամարտը*

Որ ըմ լր Խանդութ խանըմ ու Տավիթ ժըղլան հա՞դ իրար.
Խանդութ խանըմ ա՞սից.— Ընծի մա՞րախ գա.
Թա՞ զըմ մա՞րախ պերեցիր դիխ,
Յես քըզի, տու ընծի, Տա՞վիթ.
Թա՞ զըմ մա՞րախ չպերեցիր դիխ,
Իմա՞լ եգիր իս, ա՞մա՞լ կնա՞։
Ասից.— Քու մա՞րախ ի՞նչ ը։
Ասից.— Չուրս մարտ գա մեգ դիխ ըմ.
Ատ չուրս մարտ վազ չրն ի՞կա իսնը.
Գ՞ուզին կալ, ընծի փախցուն։

Սա՞բա՞թան Տավիթ ելավ, հեձավ ըզծին, կնաց.
Կնաց, զա՞տ չուրս մարտ կդավ Ախլա՞թա՞ սարիր։
Ան ժա՞մա՞նադ իսան ձամիրով եր եզի։
Զկըլխնին գըդրից, զուրանց ձամիր
Գաբից ուրար հիդ, սա՞րից ծիու թա՞րքին։

---

* Այստեղից սկսած կրկին գրի յե առել Սասունի բարբառով Վարդան Գեառյանը. տես առաջաբան։ Կ. Մ.-Ռ.

Ուրանց լեզուն գռացիր ի հա՛դ կեդնին,
Կըց կութնով զարդ հերգիս, գր հերգի։
Տավիթ պերից զկըլխրդիք, եգավ Գազըզվան։

Խանդութ խանըմ մարտու շուրիր հաքավ,
Հեձավ զուր ծին, կնաց ա՛ռճիվ Տավթին։
Դռվու տաշդին մեչ չջանչըցան զիրար։
Երգուք զա՛րգըցին զիրար, զա՛ըգըցին,
Դարան, պերին զիրաը,—չեղավ։
Մեգ լր Տավիթ զա՛նի զա՛րգից կեգին,
Թուր հանից, ըր փըրցրներ ըզկլուխ,
Խանդութ խանըմ շուդ ըմ պացուց զուր ձրձվընին։
Հա՛րամլա՛ ջանչըցան զիրար, ուրախցան,
Վերցրցին զիրար, հեձան ծիեր, եգան քաղաք։
Զա՛տ կլխրդանք, ըր պերից, դվից,
Մելքուն թակավուրի քեֆ լը եգավ։
Տավիթ շադ երիս ելավ խըչ թակավուր։
Ժա՛մա՛նադ ըմ Տավիթ մ՛նաց խըչ թակավուր։

30. Դավիթն սպանում և ուզնկան Համզա դեվին յեվ ամուսնանում և Խանդութի հետ

Ախլա՛թա՛ սարիրու մեչ դեվ ըմ գըեր.
Դեվի անուն լը Համզա յեր։
Ելավ, թուղթ ըմ ջամփից Մելքուն թակավուրին,
Թա՛. «ԶԽանդութ խանըմ թըխ հաքցու,
Տրը թաբուր ըմ ա՛սքա՛ր հիդ, ջամփը՛ ընծի»։—
Ե՛, դա՛ռնա՛, ըր չջամփի.
Համզան գ՚իկը, զքազաք գր վերճացու,
Զուր թակավորութին լը մև հազ գը վերճացու։—
Զխա՛բար պերեցին, դվեցին խարախոլ Բողեյին.
Խարախոլ լր դարավ, գվից Մելքուն թակավուրին.
Մելքուն թակավուր լը գանչից զԽանդութ խանըմին,
Ասից.— Քու շուրիր լվա՛,
Քու սանդուխ-մանդուխնին վերու,
Քու թա՛դա՛րուք ենը՛,* Խանդութ։
Վաղ չե մեգ ՚լ որ թաբուր ա՛սքար տրիմ հիդիվ,
Քու բարխանով դանին քրզի Համզա դեվին։

* Ենը՛—արա։ Խ ա բ.

Խարախոլ Բոգեն դանչից գՏավիթ, ասից.
— Տավիթ, ինչ իս եգի, նագի ոդա.
Կնա քու դուն, կնա Սասուն,
Համզա դեվ թուղթ ը ջամփի,
Ջամփի Մելքուն թակավուրին. կրուզ ը.
«Ջհանդուխ խանըմ ջամփի, իդաց,
Ախճիգ մ' ը, թըխ դանը', Տավիթ,
Հեսաը արը, մեռավ, կնաց,
Ալ տու ինչ իս նագի ոդա,
Տավիթ ասից.—Բոգե խարախոլ,
Ցես դ'երթամ վըր Համզա դեվին,
Բոգե խարախոլ ասից.
— Տավիթ, որ գ'երթաս, ափսոս իս.
Կնա քու դուն. ադի կազան ը.
Տու ինչ գ'ենիս ուրուն, Համզա դեվին,
Տավիթ ասից.— Բոգե խարախոլ,
Գ'երթամ, յա գը սպանիմ, յա գը սպանվիմ,

Տավիթ ելավ հեձավ գուր ծին, քշից.
Կնաց, գՀամզա դեվի դուն հարցուց.
Գտնավ ասճիվ տուան, ասից.
— Համզա դեվ դուն ը,
Ասըցին.— Հա, դուննն ը,
Տավիթ մգավ դուն նիրս, պարիվ դվից,
Համզան ըր դեսավ գՏավիթ, մագիր փշրուավ,
Համզա դեվն ասից.— Տու վըռր իս,
Ասից.— Տավիթն ըմ,
Ասից.— Ի՞նչ իս եգի, ինչ կուրձ ունիս,
Տավիթ ասից.— Գիխ ըմ ախճիգ մ' ուզի ընծի.
Եգիր ըմ, ըր տու բլազուդ մ' իդաս ընծի.
Ոսգի մադնիք մ' իդաս ընծի,
Դանըմ, արըմ նշան, երթամ,
— Վի՞ր ախճիգն իս ուզը,—ասից Համզան,
— Զգաղրգվանա Մելքուն թակավուրի ախճիգ՝
Ջհանդուխ խանըմ ըմ ուզի,— ասից Տավիթ,
Համզա դեվ հանից գուր ոսգի մադնիք,
Հանից ուր բզդիգ ջգուխից, դվից Տավթին,
Տավիթ առից գմադնիք, եցգից ուր թիվ,

Եգավ, հասավ ուր խաղբլիգ։
Համզա դեվ գանչից զՏավիթ գռիվ։
Ելան գռվի. քաշրցին զիրար մայդան դիխ.
Զարգեցին զիրար, զարգեցին,
Նա մարա գ'իխշրներ ընդնեն մեչ ուրանց,
Նա գը գրդրվին իրարուց, գը հեռանան։
Քրդինք ելավ, կեդին ելավ չամուռ։
Դարան, պերին զիրար, դարան, պերին,— չեղավ։
Տավիթ գարը ըմ զարգից, փրթուց ըզկլուխ,
Համզա դեվ լարվավ կեդին։
Տավիթ վերցուց ըզկլուխ, սարից ծիու թարքին,
Քշից, եգավ, հասավ Գաղըզվան,
Սարից ըզկլուխ առճիվ Մելքուն թակավուրին։
— Տավիթ, ատ ինչ կլուխ ը,— ասից։
— Համզա դեվի կլուխն ը,— ասից։
Մելքուն թակավուր չավդրցավ.
— Չե, ջանըմ,— ասից թակավուր,
Վըռը գառնա պերի զՀամզա դեվի կլուխ.
Վըռը գառնա անդուր վրբեն։
Ելան, մարտ ջամփցին, կնաց անգիխ։
Եգան, դեսան, ըր ողուրդ ը.
Տավիթ սպանիր ը զՀամզան, ըզկլուխ պերիր ը։

Ելան, զԽանգութ խանըմ դվին Տավթին.
Քաըուր եղավ խարախոլ Բողեն.
Հոնի բսադվավ դըհոլ-զուռնով, գուսնով քեֆ արին։
Վերուց զԽանգութ խանըմ, պերից, եգավ Սասուն։

Դ

ՄՀԵՐ

31. Մհերի ծնունդը, չարությունները, հոր յեվ վորդու կռիվը, հոր անեծքը

Շաղ ժամանագ չընցավ,
Ասաձ ուրանց դվից դղա մ',
Արուն հանդ' եր մըչ լափին։
Զանուն տրեցին Մհեր։

Մհեր իրըգվնե լուս գը մեձնեը։
Սասնու ճրի վրրեն Տավիթ գարմունջ շինից։
Մհեր չըր թո՛ղը վըրավով մաըտ ընցներ, տառներ.
Ճրից լը չըր թո՛ղը մարտ ընցներ, տառներ։
Քաղքըցիք կանկագ արեցին մըդ Տավիթ։
Տավիթ ելավ եգավ, չափալախ ըմ զա՛րգից Մհերին։
Մհեր ու Տավիթ զա՛րգեցին զիրար։
Քաղքրցիք փա՛վվա փախան, կնացին։
Ուվ գ'իխշներ մոդըգներ ուրանց։
Ասըցին.— Խա՛բար իդանք Խանգութ խանըմին։
Խանդութ խանըմ հա՛նչ ուա՛ր եգավ,
Դղեն զուր պապ զա՛րգից կեդին, բառգըցուց։
Եգավ Խանդութ խանըմ, պռնից զդղի թիվ.
Պռնից, հանից վրր պապուց։
Ելավ Տավիթ, անըձից զՄհեր, ա՛սից.

«Ժառանգ չեգնի քու եդիվ.
Ըր եղնի, զախշար գ'ուդիս»։

32. Զմըշկիկ Սուլթանի աղջիկն սպանում և Դավթին. Խանդութն ինքնասպան և լինում

Տավիթ ջա՛նա՛վար գը սպաներ, նեճիր գ'եներ,
Գ'իկը, Սա՛րե գոլե գը լողգըներ.
Դասնիրեք խաչ վըրավուց գը հաներ, գը լողգըներ.
Դասնիրեք խաչ լը հանգա՛ բահուգ՝
Մարաթկու սարի ձեր դաբանի քարու գագ։
Զմըշկիկ Սուլթանի ախճիգ, ըր Տավթից եր,
Գ'իկը՛ Սա՛րե գոլեն, գը զա՛րգի,
Նեգ ու աղեղով զՏավիթ գը զա՛րգի, գը սբանը՛։
«Ա՛խ, ա՛տ ըմ ջնսի գարբն եր»,— ա՛սից Տավիթ։
Ծեն գ'իկը՛, գը հասնի Սասուն։
ԶըՏավթի ջանդաք գը պերին Սասուն։
Խա՛բար գ'իկը Խանդութ խանըմին։
Խանդութ խանըմ գը դեսնը՛, գ'իլը՛։
— Խանդո՛ւթ խանըմ, բը մա՛շ, բը մա՛շ,
Տավիթ մըր, Վեկիկ խուա՛շ,—
Գ'ասի, սիրդ գ'իդր Խանգութ խանըմին։

Խանդութ խանըմ զինք սա՛րից* պերաից։
Ուր ձըձվընու դիխ մրգա՛ լը, երգու ախպուր զը սա՛րը՛։
Պերտի վերեն ուր ձամիրն ին քսվի.
Ձամիրու դիխ կըց երգու սուն գր սեվգըդը։

33. Դեսինը չի գիմանում Մհերի առաջ. նա փակվում և խորխորատում

Մհեր գը հեձներ վըր ծիուն, գը քշեր.
Ծին չըր դա՛յախը, գը լորխեր մեչ կեղին։
Տավիթ ըր անրձից, ծին դա՛յախ չըր ա՛նի։
ԶըՄհեր ջամփից Հա՛լբու քաղաք.—
ԶրՀա՛լբու քաղաք Տավիթն եր շինի։—
Մհեր ելավ կնաց ոնի։
Անդիխ լը ծին դա՛յախ չերից, չտա՛տրավ։
Մհեր վառից զքաղքրցիք։
Որ մ՛ լը ըզծին հեձավ, գ՛երթեր.
Ելավ ընգավ մեչ զուզրին,
Քարիր իրար եգան, տուռ փագվավ։
Մհեր մնաց զուզրի մեչին։**
Հա՛ր գորիգն չեզնի մասրի խա՛դար,
Հա՛ր ցորին չեզնի ընգուզի խա՛դար,
Մհեր տուրս չեզնի զուզրի մեչեն։

34. Վերջաբան

Հա՛ր մրդա՛ ըր մարտ գեսիր ը զինք՝
Ցոթ դարու հարս ըմ, ըր հաց դարը լըձվուրնուն։
Քաֆու տուռ պացվիր ը,
Նոր հարս յոթ դարվա յը եղի.
Ըր նշանաձ լը գաբուգ ը եղի,

---

* Ձգել, ցայտել։ Խ մ բ.

** Կրկին պատմելիս՝ տալիս և յերկրորդ վարիանտը, այն և՝

Մհեր ոլըրդավ թա՛ չե, կեդին զինք չվերուց.
Կնաց Ախլաթա սարիր, ծուրիր, ելավ քարիր.
Քար ըմ գըեր, ըր հարներ.
Քար եգավ իրար, ինք մդավ մեչին։ Կ. Մ.-Ռ.

Մարտու լը բա̈հս չա̈րի։
Քաֆու տուռ ուա̈ր կը պացվի,
Մհեր գը հազրրվի, ըր տուրս ելնի,
Քաֆու տուռ եմ՝ լը գ'իկա̈ իրար։
Հրաման չգը ելնա̈ տուրս հա̈րի տադասդան։
Հա̈ր գորիգն գ'եղնի կրց մասուր,
Հա̈ր կարին գ'ըղնի կրց շըգլուր։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՈՒՇԵՂԻ ՎԵՊԸ *

Մուշեղ Թորոսի դղեն եր.
Թորոս Տավթի աներն** եր.
Գոհար խանըմը՝ ախպերն եր.
Գոհար խանըմ Տավթի պապ*** Մհերի գնիգն եր։

Բարսիգ զա̈րգուց զհայիր.
Զհայիր ճարտ ու պուրտ արից,
Պերից, կոխից Չարբուհր Խնուսնիր։
Խա̈բար եգավ Արտոնաց սար,
Ըր քառսուն որ արիվ չա̈ռնը վերեն։
Մուշեղ Սասնու պերտ գ'եղնի.
Արտոնաց ռես լը հեռու գ'եղնի։
Ատ ռեսի խրսուրնին շա̈գ են։
Մուշեղ խա̈բար գը ջամփը՝ մըդ ռես.
«Ի՞նչ գ'ասիս, բարսիկ եգավ հա̈ր Սուլուխ.
Ինչ ըր քու խա̈դանը ա̈սքար ենեք,
Յես լը գը գանչիմ զըմ շըխան»։

Հասան իրար դուրան դիխ ըմ, ժաժ գ'ասին։
Երգու ա̈սքար ա̈տ դիխաց լա̈խաց, ելավ,
Զանուն տրեցին ժաժան։
Եզան, եգա̈ն, հասան Խասկեղ.

---

* Ասացող Թա̈մոն այս հատվածի անունը «Մուշեղի բազմութին» և ասում։ Կ. Մ.-Ռ.

** Պետք և լինի՝ քեռի, մեծ քեռի։ Խ մ բ.

*** Պապ—մեծ հայր։ Խ մ բ.

Հարան Մկրա՛կում, Քրդա՛կում։
Պռնեցին զՄկրա՛կում, Քրդա՛կում։
Մուշեղ ա՛սից ռեսին.
— Ռե՛ս, մըք իմա՛՞լ ենինք.
Բարսիգ լցվավ Սուլուխ.
Բարսիգ լցվավ Մկրա՛կում, Քրդա՛կում։
Ելան գըղրըցին ճրի առեչ։
Ելան գԽասկեղու, զՄկրա՛կումու նախիր թողեցին.
Հա՛ր մեգ դավրի գոդշին մում ըմ արեցին, գբըցին։
Իրընգուն մթան զերգու կեղի նախիր շիդգեցին.
Քրդա՛կումու ծուրն ու Դրվնըգա չոլ տաշդի մեչ։
Թաբուր ըմ ա՛սքար հա՛դ նախրին տրեցին.
Մնացաձ ա՛սքար եդվից կնաց, զբարսից եգիվ առան։
Բարսիգ մեզաց, ըր Մշու տաշդ ելավ լուս.
Բարսիգ հա՛նչի լուս զգռիվ արից վըր դավրին.
Լուսուն եդիվ ընցնող ա՛սքար գռվավ։
Բարսիգ գոդըրվավ, փախավ հա՛նչի Կուրաու։
Մուշեղի զուրքն ու Արտոնաց ռեսին
Դվեցին եդիվ բարսից հա՛նչի Ցըխաու.—
Ասդիխ բարսից ա՛սքար ցխաց.
Անուն մնաց հա՛րի մրգա՛ Ցըխաու։—
Մգա՛ բարսիգ լա՛ զհայու հաց չո՛ւգը ըն ավուրց պուն։

Մուշեղ լր Սասուն չկնաց.
Կնաց, նսդավ Մուշ։
Մուշեղի անունով եղավ Մուշ։
Տապեյ ծուրի քով սարի վերեն
Մուշեղի պերտ գը հա՛րի մրգա՛ լր։



Սասնա Ծռեր

պատմեց

Սասունցի Առաքել Սարուխանյան

գրի առավ 1938թ

Կարապետ Մելիք-Ոհանջանյան



ԱՌԱՋԱԲԱՆ

ՀԽՍՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի դիտարշավի ժամանակ, 1932 թ. հուլիսի 29-ին, Թալինի շրջանի Աշնակ գյուղում գրի առա «Սասնու Տավիթի» այս պատումը։

Պատումիս ասացող Առաքել Խաչատուրի Սարուխանյանը, 40 տարեկան, անգրագետ, բնիկ Սասունի Գոմրդեր գյուղից և։ Նրա հայրը՝ Խաչատուրը հայրենի գյուղում զբաղվում եր յերկրագործությամբ։ Հորը սպանել են թյուրքերը։ Վորբացած Առաքելին պահել և թյուրք աղան մինչեվ հասունանալը։ Հայրենիքում նա հոտաղ և յեղել։

Համաշխարհային պատերազմի որերին՝ 1916 թ. Առաքելը գաղթում և Այսրկովկաս, հաստատվում և Լենինականի գավառի Արթիկ գյուղում. այնտեղից վերադառնում և Խնուս, ապա կրկին արտագաղթում Այսրկովկաս, անցնում Ղարաբաղ և յերկար թափառելուց հետո՝ 1920 թվին սասունցիների հետ վերաբնակվում Թալինի շրջանի Աշնակ գյուղում։

Առաքելն ամուսնացած և և ընտանիքով ծանրաբեռնված։ Մենատնտես և. տնտեսությունը համարվում և թույլ—միջակ։

Սասունի հերոսական վեպի այս պատումը նա լսել և թե հայրենիքում և թե Այսրկովկասում, Թալինի շրջանի Գյոգլու գյուղում Ղազար անունով մի գյուղացուց։ Լսել և և գիտե միայն այս ճյուղը։ Յերգելով չի լսել, ինքն ել չի յերգում։ Այս «հեքաթը» հաճախ և պատմել։ Պատմում և դանդաղ և մտածված. առանձին վոգեվորություն և ստեղծագործական թափ չի ցուցաբերում։ Սակավախոս և և ինք իր մեջ ամփոփված։ Համագյուղացիների հետ քիչ և շփվում։ Համարվում և լավ ռանչպար։

Առաքելը գիտե մի քանի հեքաթներ։ Նրանից գրի յենք առել նաև «Արշակ Խանի հեքաթը»։ Հետաքրքրական մի «հեքաթ» և։ Հերոսները փոքր բացառությամբ հայեր են։

Ասացողի լեզուն աղճատված և, կրելով ուրիշ բարբառների, հատկապես յերլականների (տեղացիների) բարբառի ազդեցությունը։ Գրի առնելիս ինձ ոգնել և վաստակավոր յերաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը։

Կ. ՄԵԼԻՔ-ՈՀԱՆՋԱՆՅԱՆ

Բանահավաքի տողատումը վերանայել ենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

1. Մսրա Մելիքի յեվ Սասնա Մհերի մեծամարտն ու սրանց պայմանագիրը

Սասնու քաղքից մի մարտ կնաց Մըսըր,
Մըսրա Մելիքի տոան հիդիվ մդավ, նադավ։
Մըսրա Մելիքի մեճլիս սկսված եր։
Մըսրա Մելիք ըսավ.
— Ինձանից սավալի ուժեզ քաքավոր գա ախշըքի մեչ։
Չեդ մարտ, վոր Սասնու կնաց, ըսավ.
— Մըսրա Մելիք, յես քըզի բադասխանեմ՝
Ջեզանից ուժեզ՝ Սասնու Մհեր։
— Դե, ըսավ, տու ընչի՞ համար ես եգե՝
Աշխատելու, քը խոսք պերելու։
Ըսավ.— Աշխատելու։
Ըսավ.— Քը կնացիր, ըսը՝
Ուրին բադրասդուքուն դեսնի գովելու։

Մարտը տարցավ, եգավ Սասուն, բսավ Մհերին։
— Մըսրա Մելիք քեզանից գոիվ գ՛ուզը։
Սասնու Մհեր, ըսավ.
— Գոիվ գ՛ուզը, բադրասդ ըմ, քըխ գա.
Ի՞նչ գ՛ուզը մըզեն։
Մըսրա Մելիք եգավ, ըսավ.
— Գոիվ ըմ եգը՛. առավոգուն ուրարու խփինք։
Սասնու Մհեր գուր գորք քեշից,
կնաց, ինոր տեմ գայնավ։

Սասնու Մհեր ըսավ.
— Մըսրա Մելիք, գորքով կը գովիս,
Թը՞ յես, տու գովինք, ուրարու զարկինք։
— Զորք ինչ մեխք ունը, ըսավ,
Յես ու տուն գովինք։
Ելան Սասնու Մհեր, Մըսրա Մելիք,
Սկսան ուրար աեմ գովել։
Կնացին, կուլաշ դրան։
Հող իններց վոդքերու դաք կը հերկեր,
Գ'ըսրա՝ կուքանի բես գը հերգեր.
Իրեք որ կիշեր գովան,
Ուրարու չգրցան հախթեցին։
Մըսրա Մելիք ըսավ. — Սասնու Մհեր,
Քելա, մի բայմանակիր իրարու հիդ գնքինք.
Ըսավ՝ իմ գարծիքով ախշրի մեչ
Իրանանից ուժեղ թաքավոր չի գար։
Դե, յես ու տուն իրարու չգրցանք հախթեցինք։
Ըսավ՝ յես մեռա, զեն ժամանակ
Չիմ թաքավորութուն գը հանձնեմ քրգի,
Չըմ թաքուհուն ել գը հանձնեմ քրգի.
Տու մեռար, զքուն հանձնա մրգի։
Մըսրա Մելիք տաոցավ, ուր երկիր կնաց։

2. Դավիթը Մսրա Մելիքի տանը. նա բռնում է Մելիքի միուրը. Մելիքի վախը նրանից. նա փոռձում է Դավթին կրակով յեվ վոսկով

Մնաց, մի առ ժամանակ ընցավ։
Սասնու Մհեր մահացավ.
Խոսք ողորկեցին Մըսրա Մելիքին, ըսին.
— Տու քու բայմանին դե՞ր իս.
Եգե՛, Մհեր մահացե՞ր ա։
Մըսրա Մելիք եգավ ուր վըրկիր լե հիդ։
Մելիք առավ Մհերի թաքուհուն.
Տավիթ լե ուր մամու հիդ կնաց։
Տավիթ ձիձա գ'ուդեր։
Ժամանակին իրեք գարեգան եր Տավիթ։
Ավուր մեգին Մըսրա Մելիք

Վերուց գՏավիթ ուրա չոքին, գը խաղցներ,
Տավիթ Մրսրա Մելիքի մուրուք պոնեց, քնշեց,
Մրսրա Մելիք պոռաց, բսավ.
— Վրազիր, պանչիք զձալլադ,
ԶՏավիթի կլոխ գարգին,
Վրազիր ըսաց.— Թաքավոր,
Գարելի՛ յա սկի սուր քաշել Թաքավորի վրեն,
Թաքավորի դղի վրեն.
— Դե, բսավ, վրազիր, Տավիթ վոր մեձ եղնի,
Համբարութուն գ'ենը մըգի հիդ,
— Թաքավոր արրաձ գենաս,
Տավիթ՝ խելք չհասնը, խելք ճուր ա, դգա յա,
— Չե, բսավ, ուր խելք ինձնից, քըղնից շադ ավել ը,
Չե, անգարելի յը, յես Տավիթի կլուխ գը գարգիմ,
— Թաքավոր արրաձ գենաս, բսավ.
Տավիթ դգա յը, մը գարգի,
Գ'ուգիս, դե, քելե մե փորձ ենինք,
Թաքավոր, վոր դգա չելավ,
Ելնք գիմ կլուխ, զՏավիթի կլուխ գարգնք,
Ըսավ՝ մե սեղանի վրեն մե քիչ գրագ,
Մե քիչ վոսգի անինք,
Տավիթ ել անենք գրագի, վոսգու արանք,
Վոր գրագ վերցուց, կնա, դե,
Վոր խելք չհասնը, դգա յը.
Թը վոր վոսգին վերցուց, դգա չը.
Կնա, կլուխ գարգը՛,
Թը ինչ գ'ուգիս, արա՛,
Պերին, գՏավիթ տրին սեղանի վրեն.
Վոսգին մե գոխք լցին, գրագ՝ մե գոխք,
— Տավիթ, վոր գ'ուգիս, վերցու՛,
Տավիթ ձեռք գարավ մըչ գրագ,
Գրագ վերցուց, ձեռք վառավ.
Գարավ պերան, պերան լե վառավ,
— Դե, Թաքավոր արրաձ գենա,
Իմ խոսք ջի՛շդ ը, ջիշդ չե.
Տավիթ դգա՞ յը, թը՞ չե՛
— Հա, վրազիր, գու խոսք շադ ջիշդ եր, բսավ.
Անխելքութուն ըրավ դգան, խելք չհասնը՝

Վրազիր եկաւ զՏաւիթ վերցուց,
Դարաւ, տըխց ուը մամու կիրկ, ըսաւ.
— Թաքուհի, զՏաւիթ մը Թոդը՝ կա Մելիքի քով.
Մելիք զգդան գը սրանը՛։

3. Դաւիթը խաղում է Մսրա Մելիքի գուրգի հետ. Մելիքը վտռտում է նրան հետացնել իրենից. մայրը ձաճապարհ է դնում Դավթին Սասուն

Ավուր մեգին Տաւիթ եկաւ,
Կնաց Մելիքի մուղազի տուան վրեն։
Մուղազի տուռ պաց եր։
Դեսաւ՝ նարգըվան տրած եր եադեխ։
Նարգըվանով իճաւ, կնաց մուղազի դագ.
Դեսաւ՝ Մելիքի Թոփուզ բադեխն ը տրած։
Տաւիթ ըսաւ.
«Ես ինչ խաղալու լաւ պան ը արած»։
Ըսաւ, Թոփուզ վերցուց, ծեռնեն Թալեց վար։
Գըմփոց ընգաւ քաղքի մեչ.
Մարտ, գնիգ, ջիժ վախցան։
Մեգ լե Մըսրա Մելիք դեսաւ,
Քաղաք ժաժք ընգաւ, կորհեց, ըսաւ.
— Ես իմ Թոփուզի ծեն եր, ընգաւ քաղքի մեչ.
Դեսեք՝ ձվ ը, ինչ պան եգաւ քաղքը՛ վրեն։
Վրազիր իմցաւ. վոր Տաւիթն ա.
Շոդ րմ եկաւ, վազգալեն կնաց.
Եգաւ, մախազի տուան վրեն գալնաւ։
Տաւիթ գըմփոց րմ լե հանեց ետգեխ։
Վրազիր գանչեց, ըսաց.
— Տաւիթ, Տաւիթ, քու դուն չքանդվի,
Ինչ գ'ենիս ետգեխ,
Շուդ եննա, վեր եգու,
Թը չր Մըսրա Մելիք իկա,
Քու կլուխ դարգու։
Տաւիթ վերեվ եգաւ, գտուռ արեց։
Վրազիր ըսաց.— Տաւիթ,
Դե, շուդ կնա քու մամու մոդ,
Մելիք չիգա, գեսնի քրդի ետգեխ.

Զքու կլուխ զարգու։
Մրսրա Մելիք շուդ-շուդ եղավ,
Գայնավ տոան վրեն, պոոաց, գանչից.
Ըսաց.— Վրա՛զիր, ո՞վ ը ետդեխ։
— Տուռ պաց եր, չիմցա՝ ո՛վ ը։
— Չե՛, եղնի չեղնի Տավիթն ա, ըսեց.
Տավթի սավայ իմ Թոփուզ չի գա՛րնա մարտ վերցու։
Վրազիր սուզ գ՛ենը, չըսը՝ ո՛վ ը։
Մելիք գանչեց զՏավիթ, դարավ ուր քով,
Ըսավ.— Լա՛ո, Տա՛վիթ,
Տո՞ւ իր, գր խաղար զիմ Թոփուզի հիդ,
Գրմփոց ըմ ելավ մըչ քաղքին։
— Չե՛, ըսավ, Մըսրա՛ Մելիք,
Յես վո՞րդեխ ըմ խաղցե քու Թոփուզի հիդ։
Քու Թոփուզ չըմ դե՛սե յես։
— Դը՛, ըսավ, չե՛, սուդ գ՛ենիս։
Քու սիրդ գ՛ուզա խազալ Թոփուզի հիդ,
Կնա՛, ըմեն որ խաղցը՛։
— Չե՛, Մըսրա՛ Մելիք, Թոփուզ, հո խաղալու պան չե,
Վոր մարտ կնա, խազա ուր հիդ։
Վրազիր ըսավ.— Մըսրա՛ Մելիք,
Տու գ՛ուզիս զՏավիթ սբանիս, գորսընցուս.
Տավիթ գ՛ըսը՝ չըմ կա՛ցե,
Քու Թոփուզի հիդ խաղցե,
Տու զորակին գ՛ըսիս՝
Տու կնացե, խաղցե Թոփուզի հիդ։
Վոր տու, ըսավ, մե երեխա չես կըրցա բահե,
Որողգի, կնա ուր դիրու մոդ, Թըխ բահե։
Ա՛խր, դեր ունը Տավիթ։
— Ես ավուրնե սավայ, ըսավ,
Տավիթ չկը իմ աչքի տեմ։
Ուր գիրու մոդ գը խրգիս, ուր դը խրգիս,
Մե պան չե, զա՛դ չե, Թըխ ե՛րթա։

Վրազիր ելավ, Տավթի ծեռ պռնեց,
Կնաց ուր մամու քով։
— Գե՛, ըսավ, Թա՛քուհի,
Ընչո՞ւ զՏավիթ չըս զրրգի ուր դիրու քով.

Ջրս դրդի, կնա Սասուն։
Որ մ' ա, որ բմ չե, Մելիք գր զարդե գուր կլուխ։
Դե, վեր ելիր, հաց բադրասդա,
Թրխ Տավիթ երթա Սասուն, ուր դուն.
Հերիք ա մրր դեխ, մրր երգիր ճնա։
Մամ բսավ.— Տավիթ, լաո,
Գ'որոգկիմ քրգի քու հրոխպրդանց մոդ.
Սասնու քաղաք գ'երթամ։
— Հրոխպրդանք ունիմ, բսավ, բնչր՞ չբմ երթա։
Մամո, իմ հրոխպրդանք վորտե՞ն են։
— Տավիթ ճան, քու հրոխպրդանք Սասուն քաղաքն են։
— Ենոնց անուն ինչ ա։
— Ենոնց անուն, բսավ,
Մեգին Մինով Ոհան,
Մեգին Զրնճիլ Խրոան,
Մեգին Մուխսի Ջնջղուդ,
Մեգին լե Ցոան վեկո։
Նա չորս ել քու հրոխպրդանք են։
— Մամո, քու աչքեր քոռնար,
Ընչո՞ւ շոդ չբսիր բնձի։
Դե, բսավ, գաս ճուխդ պուճիկ, դաս ճուխտ չարուխ,
Դաս ավուր հաց բադրասդը՛,
Առնբմ, կնամ Սասուն։
Մամ բադրասդեց դաս ճուխդ պուճիկ,
Դաս ճուխդ չարուխ, դաս ավուր հաց,
Որոննեց ուր դդին, բսավ.
— կնա՛, կնա՛, լաո ճան,
Կնա՛ Սասնու քաղաք, քու հրոխպրդանց քով.
Ասած քրգի հիդ եգնի։

4. Դավիթը հասնում է Սասուն. հարեդրայրներն բնդունում են նրան

Տավիթ ելավ ուր մամուն պարով ճնաց,
Ջանարար բնկավ, կնաց տերը Սասուն։
Մրնչեվ ելավ Սասուն չարուխներ պդրան,
Պուճիկներ պդրան՝ անոթի ելավ։
Ջկիդեր՝ վորգևին ը եգե,

Շիվարաձ մնաց, ըսավ.
«Անոթի, ձաըավ ինչբե՞ս կնամ Սասուն»։
Տավիթ չկիդեր, որ Սասուն եր եգե։
Կնաց, ժամու տուռ բառգավ, մնաց։
Զընճիլ Խըռան եգավ ժամ.
Եգավ, զդղեն դեսավ,
Դղային քով գայնավ,
Զդղեն գր խոսացներ։
Կեղացիք եգան, ըսին.— Զընճիլ Խըռան,
Ի՞նչ ես դայնե, դղայի հիդ գր խոսցնես.
Ողորմութուն գ՚ուզը, ողորմութուն դուր ուրին, կնա՛։
— Դե՛, ըսավ, ըմ արուն հեռաց զդղայի վրեն։
Ըսավ՝ դղա, լա՛ո, տու վո՞ըդեխացի յես։
— Յես Սասնու քաղքից եմ, ըսավ։
— Սասնու քաղքի մեչ յես քըղի չըմ դեսեր։
Ե՛ս ը Սասնու քաղաք, եսդեխն ը։
Սասնու քաղաք մարտ ունի՞ս։
— Իմ մամու բագմելով՝ չորս հորոխպեր ունըմ։
— Ուրանց անուն ի՞նչ ա։
— Մեձ հորոխպոր անուն, ըսավ,
Զընճիլ Խռան ը,
Մեդ ել խորոխպոր՝ Մուխսի Ջնջղուգ,
Մեդ ել՝ Ծինով Ոհան,
Մեդ ել, ըսեց, Ցռան Վեկո։
Զընճիլ Խըռան դեխեն թռավ,
Զդղան կրգեց, բաքեց.
— Վա՛յ, ըսավ, չեղնի՞ Տավիթն ես տու։
— Հա՛, յես Տավիթն եմ։
— Վոր ետբես ը, Տավիթ ճան,
Յես լե քու մեծ հորոխպեր Զընճիլ Խըռան ըմ։
Հորոխպեր նոր բաքելով, առավ զՏավիթ,
Ուրախ-ուրախ կնաց ուրենց դուն։
Ծեն դվեց, դանչեց.— Ա՛խպրնե՛ր,
Եգեք ծըր աշք լուս, մըր աշք լե լուս,
Մրր Տավիթն ը եգե՛ր...
Չորս ախպեր հավաքվան ընդեխ,
Կրգեցին, բաքան զՏավիթ,
Քեֆ-ուրախութուն երեցին ուրանց համար։

5. Դավթի մանկական չարությունները

Տավիթ լե կնաց երեխաներու հիդ կը խաղա.
կնաց երեխաներու հիդ, գձաո պոնուց.
Զձաո ձրուցուց, գանչեց, բսեց.
— Ինլե՛, քելե՛, խաղանք։
Երեխեք եյլին ձաոու վրեն։
Հանգարձագի գձաո գը թողներ։
Զաո թողնելու ժամանագ՝
Ամեն մեգ մե գոդմ գ՛ինգներ, գը մահենան։
Եո դեսակով երեխա չթողուց Սասնու քաղքի մեչ։
Զրմեն Տավիթ ճարդեց, գոդորեց։
Ավուր մեգին հավաքվան կեղի խոճեք, քոխվեք,
կնացին Զրնճիլ Ղրռանի մոգ, բսրցին.
— Զրնճիլ Ղրռան, եսբես չեղնի,
Տավիթ մըր երեխեք ղրմեն փճացուց։
— Երեխա յը, բսավ, յես ինչ ենըմ։
Դե՛, չըմ սպանեն գՏավիթ։
Ըսրցին.— Զրնճիլ Ղրռան,
Մեգ կորձ գուր, որ երթա խառնվի կորձուն,
Զմըր երեխեք չփճացունու։
Ըսրցին.— Ինլե՛, արինք գինք հորթարած.
Քաղքի հորթեր դանու, արծուցու,
Քաղքեն հեռու եղնի։
— Լավ գ՛եղնի, բսավ.
Իրգուն ուրեն գը հարցունք,
Դեսնինք՝ ինչ գ՛ասը։

6. Դավիթը հորթարած յեվ ճախռոդ

Զրնճիլ Ղրռան ասից.— Տավիթ,
Ա՛խր եդրես բարար ման գալ չեղնի.
Մե կորձ պոնա քրգի, ախչադի՝
կերդասդան բահես մինչեվ կարուն։
— Դը՛, բսավ, հորեխպար, մե կորձ գուր,
Երթամ, գպագվըմ ենոր հիդ։
— Դը՛, բսավ, լուսուն գը տնինք քրգի հորթերուս հիդ։
— Լուսուն գը դանըմ հորթեր, իրգուն գը պերիմ։

Ելավ փեղն առավ, փողնի մէչ դեխ գաննավ,
Հորթեր հավաքեցին, առեչ կրցին։
Չհորթեր քշեց, կնաց սար։
Վոր հորթ որ գր հիդնար,
Գը գարգեր փեղով, գմհչք գը ճարտեր։
Տավիթ ելավ սար, դեսավ՝
Ինդեխից մե լապրսդրագ փախավ.
Ենդեխից մե աղվես փախավ...
Հավաքեց, պերեց, լցուց հորթերու մեչ։

Չրնճիլ Խրոան գեսորին ելավ, բսաց.
— Պերեք, հաց դանրմ, տեսնրմ՝ Տավիթ ինչ գ'ենր.
Հացն առավ, կնաց, դեսավ,
Որ Տավիթ գեխ չմնացե
Աղվես, լապրսդրագ, ջուն-ջանավար
Հավաքե, լցրե հորթերու մեչ.
Դեսավ, որ Տավիթ քրթինքի մեչ գորե.
Դեսավ, բսավ.— Տավիթ ճան, դուրբան,
Ի՞նչ ր գ'ենիս, ինչ ր գ'ենիս։
— Հերեխպար, հորթեր պոլոր խլուզ-բլուզ գը փախնին։
— Տավիթ ճան, եդոնք մրր հորթեր չեն.
Եդոնք ջուն-ջանավար են։
Ենվոր չրն փախնե, ենոնք մրր հորթերն են.
Իրիդուն գ'առնիս, գը պերիս մեչ քաղքուն։
Չրնճիլ Խրոան տառցավ, եգավ դուն, բսավ.
— Գնիդ, մրր դուն քանդավ, մրր չրաք խավրավ.
ՉՏավիթ ըսբաննըցինք մեք,
Սաղ լապրսդրագներ, աղվեսներ, ջուն-ջանավար
Հավաքե, լցրե հորթերու մեչ,
Չքողնե, որ փախնեն։
Չինք լե տատրե, քրտնե, ճարտվեր ր։
Իրդուն մեզ լե դեսան՝
Հորթեր, լապրսդրագ, աղվես, ջուն-ջանավար
Հավքաձ պերեց, լցրուց մեչ քաղքին։
Ճարտ, գնիդ, գդա, ախճիդ փախան, կացին, մգան դուն։
Տավիթ եգավ դուն, բոյզրոյ բառգավ, քնեց.
Հաց չգերավ, ճուր չխմավ։
Չրնճիլ Խրոան եգավ, գաննավ Տավթի կլխու վերեն.
Ըսավ.— Տավիթ, Տավիթ, ընչի՞ բառգար, քնար։

Տավիթ տառցավ, կանկդեց, բսավ.— Հոբեխպեր.
Հորթեր սաղ եղան խլուզ-բլուզ, գը փախնին.
Գը փախնին սարեր, ծորեր, գը գորչին։
— Հորթեր լավ չեն, Տավիթ, լաո,
Լուսուն քրզի գը դանեմ մալեր.
Մալեր չրն փախնի, հանգիստ գ'արաձգրնուս,
Իրգուն գ'առնիս, գը պերիս դուն։

Զրնճիլ Խրոան ելավ լուսուն, ծեն դվից.
— Հե՛յ, ելեք մալեր թողեք Տավիթի առէ.
Տավիթ հորթեր չդանր արաձրցնու.
Տավիթ մալեր գը դանր արաձգրնու։
Ելան, մալեր թողին առէ։
Տավիթ հավաքեց գրմեն մալեր,
կնաց, դարավ Զովասար արաձգրնու։
Դարավ Զովասար, մալեր պաց թողեց։
Դեսավ՝ խանգրքներուց կելեր, հարչեր փախան,
Ըսաց. «Անիձրմ քու դիրու հեր, ելի փախան»։
կնաց, հավքեց, պիրեց, լցեց մալերու մեչ։
Դեսոր Զրնճիլ Խրոան հաց գարավ Տավթին.
կնաց, դեսավ՝ Տավիթ հարչ ու կել,
Չուն-չանավար չձնաց սարերուն՝
Պոլոր հավաքեց, պիրեց, խառնեց մալերուն։
Զրնճիլ Խրոան գանչեց.
— Տավիթ ճան, Տավիթ, ինչ է գ'էնիս.
Լաո, ետ ինչ է գ'էնիս.
Զրմեն մալեր գը փճացուս.
— Հորոխպեր, քու դուն չավրվեր, աուն դիս գը սրաննիս.
Պերեցի մալեր ըստեխ, մալեր գը փախնին.
Դես ու դեն գը փախնին, չրմ գառնա հավաքե։
— Տավիթ, քու դուն քանդվի, եսոնք անպոդոշ՝
կել ու հարչ են, չուն-չանավար են։
Ընչո՞ւ չես հավաքե, լցե մըր մալերուն։
Ես գոդոշներով մըր մալեր են, հավաքե իրգուն պեր։
Անգոդոշներով կել ու հարչ են, չուն-չանավար են,
Թրդ ելլին, երթան սարեր, ծորեր։

Զրնճիլ Խրոան ես խոսք բսավ,
Տառցավ, եգավ գուն, բսավ.

— Քու դուն ավրվի, գնիգ, մենք ըզՏավիթ ըսրաննեցինք։
Սար կել ու հարչ չթողուց, ջուն-ջանավար չթողուց,
Զրմեն հավաքեց, խառնեց մըր մալերուն։
Մեգ լի դեսան՝ Տավիթ իրգուն հավաքեց՝
Ջմալեր, գկելեր, գհարչեր, գջուն-ջանավար
Պերեց, լցուց մըչ քաղքին։
Տավիթ եգավ, գաննավ քագքի մեչ,
Պանցր ծինով գանչեց, պոռաց, պոռաց,
Ըսավ.— Հե՛յ ժողովուրթ,
Ելլե՛ք, ջանչե՛ք, դարե՛ք ծըր մալեր.
Յես չըմ ջանչե ըզծըր մալեր։
Ելան դեսան մըչ քաղքին կելեր, հարչեր,
Վախցան, փախան, մգան ուրանց դներ,
Ըսըցին.— Մըզի բեգք չեն գետա մալեր։
Մգան ուրանց դներ, տոներ փագեցին։
Տավիթ լե կնաց դուն։
Կելեր, հարչեր, ջուն-ջանավար
Փախան սարեր, մալեր մնացին։
Մարա, գին եգան, ուրանց մալեր դարան դուն։
Զրնճիլ Քրոան գանչեց գժողովուրթ, ըսավ.
— Ելլե՛ք, գՏավիթ տնենք հովիվ ոխչարի վրեն.
Մալեր չջանչի, ոխչրներ չրն փախնի։
— Ել չրնք ուզի, չրնք ուզի՝
Տավիթ քաղքի ոխչար դանր՝, արաձցու։

7. Դավթի հերկ ածելն ու խրատատու Պատավր

Զրնճիլ Քրոան գանչեց գՏավիթ, ըսավ.
— Տավիթ, լուսուն կնա, հերկ արա.
Հերկ հանկիստ ը. բարար մի մնա։
Տավիթ ըսավ.— Լավ, հորոխպեր,
Կաս, ինձի ցուց դաս, ինչ դեսակ հերկ ո՛ենին։
Լուսուն ելան։
Զրնճիլ Քրոան ելավ, դեզներ լձեց,
Զկուբան լձեց, կնաց արդ։
Կնաց, քանի ագոս կնաց, եգավ, ըսավ.
— Տավիթ, լա՛ո, եգի՛, քշա՛, հերկա՛.
Դեսաը՝ ինչ դեսակ գը հերկին։

Տավիթ կնաց, կուբեանի մալ պոնեց,
Ենենց երեց, եզներ չոքան, չկնացին։
Ըսավ.— Հէրոխպեր, տու քշիս, եզներ գ'երթան.
Ցես քշիմ, եզներ չըն երթա. ես ինչ պան ը։
— Լաո, ըսեց, տու ուժեզ իս,
Գր թոզնիս քու ուժ վըր մալին, եզներ չըն երթա։
— Հէրեխպար, գաննի, հարծգիմ եզներ, յես վարիմ.
Դեսնիմ՝ մրնագ յես չըմ դառնա վարի առանց եզնանց։
Եզներ թողեց, պոնեց գկուբեան,
Դարեց ես կլուխ, դարեց են կլուխ,
Վարեց, քանի մ' ազոս կնաց, ըսավ.
— Հէրեխպար, յես գը վարըմ առանց եզներ.
Ես գեսագ հանկիսդ գը վարըմ։
Զրնճիլ Խրոան գեզներ հարծկեց, տառցավ, դարավ դուն։
Տավիթ առանց եզներ վարեց։
Տավիթ հերկեց, հերկեց,
Կնաց, ելավ Բառվու արդի մեչ։
Ելավ Բառվու արդի մեչ,— գորեզ և ցանվաձ։
Բառավ ելավ դանքի վրեն, դեսավ՝
Տավիթ գգորեզ գր հերկե, ըսավ.
— Տավիթ, լաո, քու բադան գարըմ,
Զըմ գորիզ ընչու գը հերկիս։
— Բառավ, ըսավ, գը հերկըմ, ցաննեք ցորեն,
Մեզ ել դարի ցորեն ուդինք։
— Ջու բադան գարըմ, ըստվ,
Մհերիս տու բադար, քրոնե ով գը բադը։
Մըսրա Մելիք ոխթ հոքի ողորգի,
Ոխտ դարու խարճ ու խարաճ գ'ուզը, գը հավաքի,
Տու գայներ իս, գըմ ճրդ գը հերկիս, գըմ գորեզ։
Տավիթ գկուբենի մալ թողուց, դուն կնաց։

8. Դավիթը սլաուհատում է հարկահաւճներին

Կնաց դուն, դեսավ, ինչ.—
Դեսավ ոխտը մարտ, Զրնճիլ Խրոան՝
Մդած մուգազի մեչ, գգոդով ոգի գը չափին։
Տավիթ ըսավ ետ ոխտը մարտուն.

— Ե՛, եդ դեսակով չըն չա՛փի։
— Բա՛, ի՞նչ դեսակով գը չափին։
— Դվեք զչափ, յես ցուց դամ զչափել։
Առավ զգոդ ուրանց ծեռքից,
Զարգեց գոդով զոխտի կլուխ լե յարալու երեց,
Ըսավ.— Ե՛ս դեսակ գը չափին։
Զընճիլ Խրռան հասավ, Տավթին պռնեց,
Տուս հանեց, որ դանի գուն։
Տավիթ ըսավ.— Հե՛յ, մարտիք,
Ելեք, կնացեք տուս. կնացեք ծըր Մըսրա երգիր,
Յես ծըգի խարճ ու խարաճ չըմ իդա։
Ելան մարտիք, թողին, կնացին.
Դարան, Մըսրա Մելիքին խոսք դվիցին,
Թե.—Տավիթ ետգեսակ ենեց մըր կլուխ։

9. Մսրա Մելիքն յերկրորդ անգամ հարկահաններ և ուղարկում Սասուն. Դավիթը Պառավի խորհրդով առնում և հոր ձին ու սարքը, ջարդում հարկահաններին յեվ ազատում ժողովրդին

Մըսրա Մելիք գադղա՛վ, գադղա՛վ, արուն ելավ աշքեր.
Ելավ, զորք հավաքեց, զորք ողորգեց,
Պոռա՛ց, պոռա՛ց, ըսավ.

«Գ՛երթեք թալան Սասնու քաղաք.
Զոխտը դարու զխարճ խարաճ գը պերեք.
Քառսուն հագ գարճ գնգդիք գը պերեք.
Քառսուն հադ երգեն գնգդիք գը պերեք.
Քառսուն հաղ աղապ ախճիգ գը պերեք.
Քառսուն հադ խամ քավեճ գը պերեք.
Ինչքան խոճա, մեձ մարտ գա Սասնու քաղաք՝
Գը պռնեք, գը պերեք Մըսրա քաղաք»։

Մըսրա զորքեր եգան, ելան Սասնու քաղաք.
Տրեցին զքաղաք պոլոր, գը վառին.
Թալան-թուլուն զքաղաք գ՛ենին.
Սասնու ախճիգ-մախճիգ գը բահանջին։

Տավիթ լե զուր հերկ գ՛ենը։
Մեգ լե Բառավ դեսավ, ի՞նչ.—

Տավիթ հանդա գը հերկի զուր գորեզ.
Բառավ վազեց, եգավ ուր արգ, ըսավ.
— Քու բաղան գարրմ, Տա̇վիթ.
Մըսրա Մելիք եգե, զքաղաք գը վառը,
Տու եգե, զգորե̇գ գր հերկիս։
Ըսավ.— Բա̇ռավ, ինչբե̇ս, ինչբե̇ս։
Ըսավ.— Չըս գի̇նա, գը հարցո̇ւս.
Մըսրա Մելիք եգե Սասնու քաղաք.
Քառսուն հագ գարճ գնգդիք գ'ուզը՛.
Քառսուն հադ երգեն գնգդիք գ'ուզը՛.
Քառսուն հադ ազապ ախճիգ գ'ուզը՛.
Մե հադ լը զըմ ախճիգ գը դանը՛.
Քառսուն հադ խամ քավեճ գը դանը՛.
Ոխտը դարու խարճ ու խարաճ դ'ուզը՛.
Ըմ խարճու դեխ զըմ յորղան գարա, գվը՛.
Ինչքան խոճա, մեձ մարտ գա Սասնու քաղաք.
Գը պռնը՛, գը դանը՛ Մըսրա քաղաք։
Շոդ ըմ եգի, խրազ իդամ քըգի,
Քրնի չպարցաձ ը, չկնացաձ։
Տավիթ եգավ Բառվու մոդ, ըսավ.
— Բա̇ռավ, ի̇նչ խրաղ գ'իդաս ընծի։
Ըսավ.— Որ Սասնու Մհերի զղան ըլես,
Քու հոր ծին ենդեխ, թավլի մեչ գաբուզ,
Ծիու անուն լե Քուռիգ ե Ջալլադին ը.
Քու հոր զենք ու զրահներ առնիս,
Քու հորոխպոր մոդ բահաձ են.
Քու դղամարտութուն ենդեխ ցուց իդուր,
Քու բաղան գարրմ, Տա̇վի̇թ,
Քու դղամարտութուն ընծի̇ ցուց գ'իդաս,
Զիմ գորեզ գը վարես, գ'ավրես։
Տավիթ թողեց զԲառավ, կնաց դուն։
Եգավ, գաննավ, ըսավ.— Հորեխպա̇ր,
Զըմ հոր զենք ու զրահներ դուր ընծի.
Զըմ հոր ծին թամքա, բադրասգա ընծի։
Ըսավ.— Լա̇ո, Տա̇վիթ, քու հոր ծի հո̇ւսդ ա։
Ըսավ.— Ըմ հոր ծին թավլի մեչ ա գաբուզ.
Անուն լե Քուռիգ ե Ջալլադին ը։
Ըմ հոր զենք ու զրահներ հան դուր.

Չրմ գինա, գաբաձ, բահաձ իս։
Ըսավ.— Լա՛ո, Տա՛վիթ, դուրբան քըզի,
Ըզքու հոր ծին, զենք ու զրահներ ի՞նչ գ'ենիս։
Ըսավ.— Գ'երթամ Մըսրա Մելիքի զորքի առեչ։
Յես մարտ չը՞մ, հո՛րոխպեր, ըսավ,
Որ եսքան խարճ ու խարաճ Սասնու,
Եսքան գնիգ ու մարտ Սասնու,
Պռնի, կերի գր դանը՛ Մըսրա երգիր։
Ինչ արեց, չարեց Զընճիլ Խըռան,
Չգըրցավ արդելք ենեց Տավիթին։
Ելավ, զՄհերի ծին պերեց, թամքեց.
Զենք ու զրահներ պերեց, դվեց Տավիթին։
Տավիթ հագավ զուր հոր զենք ու զրահներ.
Տավիթ պարագ եր, դեխ չի առեր։
Զուր հոր՝ Մհերի թաք արեց ուր կլուխ,
Փոքր եր ուր կլուխ, հոր թաք չելավ.
Ելավ հեձավ Քուռիգ ե Զալլադին,
Քշեց, կնաց զորքի առեչ։
Կնաց զորքի առեչ, գանչեց, ըսավ.
— Ես մարաիք ո՛ւր ա գր դանիք։
Ըսավ.— Մըսրա Մելիք ա բահանջե, գը դանինք։
Ըսավ.— Թողե՛ք, կնացե՛ք, քանի շուդ ա.
Խեղջ իք, մը թո՛ղեք ղծըր կլուխ գդրրմ։
Ըսին.— Մենք հազար մարտ ինք, տու մե՛գ,
Ինչբե՞ս գարաս տու հեդ մըզի։
Տավիթ զթուր քաշեց, ընգավ մեչ,
Զորք պոլոր ճարտ ու փշուր երեց,
Զորքի կլխավոր վոխճանց պռնեց.
Դեսավ՝ ուր հոր վրազիրն եր,
Ըսավ.— Վըա՛զիր, տու ըմ հոր վըազիրն ես,
Քըզի չըմ խո՛սա, քըզի չըմ սբա՛նը։
Ելի՛ կնա՛, Մըսրա Մելիքին ասր՛,
Զուր բադրասդութուն թըղ դե՛սնա.
Զըմ թաքավորութուն ուրան չըմ ի՛դար։
Վըազիր քշեց, կնաց Մըսրա քաղաք։
Տավիթ տարցուց Սասնու քաղաք՝
Զժողովուրթ, զգնիգ, զախճիգ.
Զոխտը տարվա խարճ ու խարաճ

Պերեց, հասավ Սասնու քաղաք,
Գանչեց զժողովուրթ, ըսավ.
— Ըմեն մարտ կա, զուր արրանք ջանչը՛, վերցնու։
Ուվ վոր աբրանք ա դվե,
Թը կա* զուր արրանք վերցնու։
Ուվ վոր ոսգի, փող ա դըվե,
Թը կա զուր փող, ոսդի վերցնու։
Ուվ վոր մեզ գորիգ եվել վերցնու,
Թուր գը զարգըմ, զկլուխ գդրըմ։
Ամենք զուր դված թը վերցնու։
Զաբրանք, զոսգիք, ըզփող՝
Պոլոր ցրվեց, դվեց ժողովրթին,
Զինք եգավ, ուր դուն նսգավ։

10. Դավիթը Պառավի խորհրդով ուխտ և գնում Ասովածածին յևվ մատաղ անում

Տավիթ ելավ, զուր կության վերուց,
Կնաց Բառվու արդ, վար գ՚ենա։
Բառավ ելավ, ուր դանքի վրեն, դեսավ՝
Տավիթ ե մ՚լե դը հերկա ուր արդ գորեզ։
Ըսավ.— Տավի՞թ, զքու բաղան դարրմ,
Ելի՞ եգար զրմ արդ գորիգ։
Քելե՛ եսդեխ, քըզի խրադ գ՚իդամ։
Մըսրա Մելիք բաղրասդութուն գը դեսնը՛,
Քու հիդ գռիվ ենա, քըզի զարգու։
Տավիթ եգավ, ելավ Բառվու մոդ.
Ըսավ.— Բառավ, տու ի՞նչ դ՚ըսիս ընծի։
Ըսավ.— Ասդվաձ քըզի բահը՛, լա՛ո,
Կնա քու հրոխպոր Զընճիլ Խրռանի մոդ.
Կնա, ուզը՛ քառսուն անձին քավեճ,
Կնա, ուզը՛ քառսուն հոդկա մոմեր.
Կնա, մըր Մայր Ասդվաձաձնի վըրեն։
Ես քառսուն քավեճ մադաղ ենա՛,
Ես քառսուն հոդկա մոմեր վառա՛.
Ըսա՝ Մայր Ասդվաձաձին զիս մուրադ իդա՛.

* Թը կա=թող գա։ Խմբ.

Մուրադ գ'իդա, դրռնաս Մելիքի հեդ գռվիս։
Քու հոր զենք ու զրահներ որ լցիս,
Քու հոր թաք որ տնիս, լցիս,
Տավիթ, ըզքու մուրադ գ'առնիս։
Տավիթ քառսուն անձին քավեճ առավ, կնաց.
Քառսուն հոդկա մոմեր առավ, կնաց.
Զուր հոր զենք ու զրահներ առավ, կնաց.
Կնաց Մայր Ասդվաձաձին, աղոթք երեց։
Տավիթ զմուրադ առավ, եգավ դուն։

11. Մսրա Մելիքն ավերում և վանքը. Դավիթը գոտեմարտում և Մելիքի հետ. Մելիքը խաբեյությամբ օդթայում և նրան

Ավուր մեգին Մըսրա Մելիք ուր զորք ժողվեց,
Եգավ Սասուն, զվանքի վրրեն պռնեց.
Քառսուն հադ վարտաբեդ ճարտին, սբաննին.
Քառսուն հադ դերդեր ճարտին, սբաննին.
Վարտաբեդ մի՝ ընդեր ջանդըքներու մեչ,
Չսբանվավ, ազադվավ, փախավ, եգավ.
Եգավ, Տավթին խոսք դվեց, ըսավ.
— Տավիթ ճան, Մըսրա Մելիք եգավ,
Վրա դվեց Սասնու վանքի վրրեն.
Զարգեց, սբաննավ քառսուն վարտաբեգ,
Զարգեց, սբաննավ քառսուն գերդեր.
Հանգարձ չի կա, մըդնի քաղքի մեչ,
Զարգը՛, գոդորը՛ զանմեղ ժողովուրթ։

Ելավ, զուր զենք ու զրահներ տրեց, հաքավ,
Զուր հոր ծին քեշեց, հեձավ,
Քշեց, Մըսրա Մելիքի առեչ կնաց։
Գանչեց, ըսավ.— Մըսրա Մելիք,
Զանմեղ ժողովութ ինչի՞ գր գոդորիս.
Ագա՞ր գռիվ գ'ենիս, յես տու գռիվ ենինք։
Ըսավ, թը յես հախթեցի, Մըսրա երգիր ընծի.
Թը տու հախթեցիր, Սասնու քաղաք քըզի.
Մըր ժողովուրթ մըզի անծնադուր ա։
Ծիաններուց իճան, գուլաշ գըբան.
Գուլաշ գրբան, զիրար չգը՛րցան հախթեցին,

Ելան կնացին Մրսրա Մելիքի չադըր։
— Տավիթ, ըսավ Մրսրա Մելիք,
Ետքան ուժեղ ըս, ինչ գը հախթա ըզքեզ։
— Մրսրա Մելիք, բերախտութուն գ'ենիս ըմ հեգ։
— Չե՛, ըսավ, ետբես պաճն գ'եղնի,
Գոխվ գդամարտու գոխվ ը, գովենք։
— Քառասուն հադ կուբենի գնճիլ փաթրթենք գիս,
Ըսավ, ետիգ գը պռնա գիս,
Ուրիշ պան, գադ չպռնա գիս։

Գերեցին քառասուն կուբենի գնճիլ.
Փաթրթին, տրին կեգնի վրեն, ըսավ.
— Տավիթ, ետ ը, քու գյանք վերճըցավ։
Տավիթ չգը՛ըցավ կուբենի գնճիլներ կդրե.
Մնաց ետդեղ կուբենի գնճիլներուն մեչ։
— Մենա մինչեվ լուսուն, ըսավ Մելիք,
Տանագով քրգի դիմադիմ գըդըրդըմ,
Ձիմ գյանք, գիմ սիրդ ոահաթի։

12. Զրնճիլ Խրոանի յերազը. Ձևեով Ոհանի ազգարարությամբ Դավիթը ազատում է ղրաճներից

Զրնճիլ Խրոան երածի մեչ գեսավ՝
Նեղ տրուբուն ը Տավիթ ընգի.
Ելավ հիմցուց ուր գնգան, ըսավ.
— Գնիգ, Տավիթ նեղն ընգի, գիմ դուն ավիրեց։
— Դը՛, ըսավ, մարտ, գը քնիս քրգի,
Երած գը գեսնիս ուրըշի։
Մեգ լե քնավ, մեգ լե երած գեսավ,
Մեգ լե Տավիթ նեզ տրուբուն ընգի.
Մեգ լե ելավ ուր գնգան ըսավ։
Գնիգ լե որգավ, պոռաց, ըսավ.
— Մարտ, երած հազար պան ը.
Երած, հո, ողորթ չե, սուգ ը.
Երած գեսար, բառգը՛, քրնը՛։
Մեգ լե ելավ բառգավ, քնավ,
Ելի երած գեսավ, հիմցավ,
Գանչից.— Գնիգ, Տավիթ լմընցավ.

Մըր դուն, Սասնու դուն ավեր ճնաց,
Ելավ, գՄինով Ոհանին գանչից,
Մինով Ոհան եգավ ուր մոդ,
Ըսավ.— Մինով Ոհան,
Տավիթ ձանր տրուքան մեչ ը,
կնա, պանցր սարեն գանչը՛.
Տավիթ կինա չկինա,
Ասդվաձաձնի անուն չկինա, գանչը՛,
Ասից.— Գեր ոխտը հադ կոմշու գաշի,
Գեր ոխտը հադ կուքնի զընճիլ,
Ելլեմ պանցր սարի կլուխ,
Փաքուքա գիս կոմշու գաշով,
Գարե գիս կուքնի զնճիլներով,
Որ գանչըմ Տավիթին, չգրաքըմ իրարուց,
Դը՛, հեռու յա Սասնուց Փրե-Բաքման, գանչըմ,
Ելավ սարքավ կոմշու գաշին վրեն.
Ոխտը կուքնի զնճիլ փաքըքնց վրեն.
Մինով Ոհան ելավ սարի կլուխ, գանչնց.
— Տավիթ ճան, ըմեն պան մոռացար,
Մայրամ Ասդվաձաձնի անուն լե մոռացար,
Նոր Տավիթ կլխու ընգավ.

«Ճա Մայրամ Ասդվաձաձին, ըսավ,
Տու գիս ես զնճիլներու մեչեն ազադիա,

Են ժամանակ զնճիլներ գդոր-գդոր եգան.
Մե զնճիլ կնաց զորքի մեչ, քառսուն մարտ սրաննեց.
Տավիթ ելավ գայնավ, ըսեց.
— Մըսրա Մելիք, ել բերախտութուն չենիս.
Լուսուն դդամարտու բես յես, տու զովինք։

13. Դավիթ յեվ Մսրա Մելիքի մեճամարտը. Դավիթը ազատում է Մելիքին յեվ փրկում է Մարիե

Լուսուն Տավիթ ելավ եգավ, ըսեց.
— Դե, բագրասդվի, զովինք քոփուզով։
Մըսրա Մելիք ըսավ.— Տավիթ, դորմվ։

Տավիթ ըսավ.— Հա, Մրսրա Մելիք, գորով.
Դոր քոնն ա, առ մեձ իս բնձանիցս
Մրսրա Մելիք Թոփուզ վերցուց, հեձավ ուր ձին,
Կնաց, հասավ Դիարբաքըր, եգավ,
Մե Թոփուզ պերեց, գարգեց Տավթին։
Տավիթ մինչեվ չոքեր խրվավ կեդին։
Մրսրա Մելիք գանչեց, հարցուց.
— Տավիթ, հլա գենտանի՞ իս։
Ըսավ.— Հա, գենտանի չըմ։
Մեգ լե մրնգիլ առավ, եգավ, Թոփուզ գարգեց.
Տավիթ մինչեվ կոդին խրվավ կեդին։
Գանչեց.— Տավիթ, գենտանի՞ իս։
Ըսավ. — Հա, գենտանի չըմ։
Մեգ լե կնաց, եգավ Մրսրա Մելիք.
Եգավ, մե Թոփուզ լե գարգեց,
Հավասարցուց գՏավիթ կեդնին։
Գանչեց, ըսավ. — Գենտանի՞ իս հալա։
Տավիթ հարցուց.— Գորով ա, յա գոռով։
Ըսավ.— Տավիթ ճան, գորով ա։
Ըսավ.— Ես գոր ը՛մ* գորն ա։
Տավիթ հեձավ ուր Քուռգիզ Ջալլադին։
Մելիք քառասուն գազագան հոր եր շինել.
Մելիք քառասուն գազագան հորու մեչ իճավ.
Մե ճազչի քար լե հորի վրա տարձուց։
Տավիթ հեձավ, կնաց Սասուն,
Տարցավ, եգավ Մելիքին գարգու,
Մայր գանչեց.— Տավիթ ճան,
Ես հերթին գաս վրազիրի խաթրին։
Մեգ լե տարցավ Սասուն, եգավ,
Ջթուր հաննեց, որ գարգու, ըսավ.
— Ես հերթին լե քու մոր ձրձի խաթրին։
— Ետ լե Թըխ եզնի մոր ձրձի խաթրին։
Մամո, ել հերիք ը, չկաս, ըսավ,
Մնաց մե գըրր, լա գը սրանըմ, յա գը Թոդում։
Կնաց Սասուն, եգավ, հորի պերան գայնեց,

* Ը՛մ = իմ։ Խ մ ք.

Թրով զարգեց, ճաղչի քար գդրեց,
Մըսրա Մելիքին լե գգրեց, վերճացուց,
Մըսրա Մելիքի զորք անծնադուր եզավ ուրին.
Եզավ, սրի դըգով Տավթի ընցավ.
Տավիթ լե Մըսըր թակավոր նսւ,ավ.
Մելիքի երգիր անծնադուր եզավ ուրին։

Է

պատում

Սասունա Դավիթ

Խլաթի բարբառով

Պատմողն անհայտ

գրի առնողն անհայտ

ԱՌԱՋԱԲԱՆ

Այս պատումն առաջին անգամ տպագրված է 1898 թվին «Արարատ» ամսագրի նոյեմբեր-դեկտեմբեր համարում «Սասունցոց Դավիթ» (Քաջ բարբառով) վերնագրի տակ առանց վրան ծանոթության։

Պատումը տպագրված է առանց ստորագրության, բայց, վրքան գիտենք, Մարգիս Հայկունու գրի առածն է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԲԴԸԼ ՔԵՐԻՄ ՅԵՎ ՍԻՆԱՄ ՔԵՐԻՄ

1. Հնդա Մելիքն ուզում և իր վորդիներ՝ Աբդրլ Քերիմին յևվ Սինամ Քերիմին զոհել կռքերին

Հընդա Մելիք կ'եղի. ինքն և կռապաշտ. ամա կնիկ աստվածապաշտ, Զենով Ովանի քուրն և։

Ժամանակ մը ճնաց, եղ Հընդա Մելիքին երկու տղա եղավ՝ մեկի անուն Աբդրլ Քերիմ, մեկին՝ Սինամ Քերիմ։

Ժողովուրդը եկան Հընդա Մելիքի մոտ ասին, թե.

— Ամեն որ մեր տղեկներ կը մորթես կռքան. Յես որ լե մեր ազիզ որն ա, Յես որ լե քու տղեն պտի բերես, մորթես։

Հընդա Մելիք եկավ, ուր կնկա մոտ, ասաց.

— Վաղը մեր տղեկներուց մեկը ենիմ մատաղ։

2. Յեզբայրները մոր խորհրդով գնում են Մոբր իրենց բեռիներ՝ Զենով Սարգսի յևվ Զենով Հովանի մոտ

Կնիկ կանչեց, երկու տղեն երիր. մեկ վրը մեկ չոքին եդիր, մեկել վրը մեկ չոքին եդիր, ելաց, բռնեց, զուր տղեկներու երես պագեց։

Տղեկներ խարցուցին.— Մերա, Յորին կու լաս։

Ասաց.— Յեսոր շաբաթ ա, վաղը կիրակի որ ա, ձեր խեր պտի տանի, մորթե ձրգի կռքերուն։

Լուսուն ելավ մեր, ամե տղին ձի մի ետուր. մեկ-մեկ խուրճի ոսկի ետուր, ասաց.

— Կ'երթաք մըտ Մսրա Մելիք, ձեր քեռիք ենտեղն ա— Ջենով Սարգիս, Ջենով Ովան։

Գացին, խասան Մսրը. իրիկուն գացին մըտ քեռեցներուն։

Ջենով Ովան ասաց.

— Սինամ Քերիմ, Աբդըլ Քերիմ, գու Յորին եկաք են երկրեն։

Ասին.— Մեր խեր մեզի տաներ, կոքերուն մատաղ պտի եներ. մեր մե ասեց՝ գացեք մըտ ձեր քեռիք— Ջենով Սարգիս, Ջենով Ովան։

Ասին.— Տեսնիք՝ իմաձլ կ'եղնի։

Ուբ որ մացին մըտ ուրանց քեռիք, ելան ասին քեռիք.

— Մենք ձեզի չենք կանա տիրե, գացեք վան։

3. Ծեղբայրներ Մսրից գնում են վաճ յեվ ծառայության են մտնում Փաշի մոտ

Ելան գարկին, գացին վան, փաշի դուռ կանան։ Փաշի մարդիկ եկան.

— Դու ինչ մարդ եք,— ասին։

Ասին.— Եկեր ինք, փաշին կ'եզինք մշակ։

Գացին, փաշին խաբար տվին. Փաշեն ելավ ասեց.

— Դու ինչ մարդ եք։

— Մենք Հրնդա երկրեն ենք։

Փաշին գուր եկան, ասաց.

— Դու ինչ կ'ասեք։

— Մենք եկեր ինք, կո կ'եզինք քե մշակ։

Փաշեն ասաց.

— Տարեք թեմիզ տեղ, յաթաղներ թալեք։

Մեկ տարի եզ տեղ նստան, մացին։

Սինամ Քերիմ Աբդըլ Քերիմին ասաց.

— Փաշեն մեզի բոնավոր բոներ ա ես մեկ տարի։ Յելի, երթանք, փաշին ասինք։

Ելան, եկան Փաշի մոտ, ասին.

— Փա՛շա, գու մեզի բռնավո՛ր բերեցիր։

— Չե՛, — ասաց, — Յորի՞ն բռնավոր բերեր իմ. Յելե՛ք գա՛ցեք, ձեզի պտոտեք։

4. Յեղբայրների զբոսանքն ու արարմունքները

Ելան գա՛ցին, պտոտեցին, տեսան՝ քրդեր մարդլոցի կը խաղան։

Սինամ Քերիմ ասաց.

— Աբդը՛լ Քերիմ, մենք ել երթանք, խըտ ենոնց խաղանք։

Գա՛ցին. վո՛ր մեկ ձեռ տվեցին, ուշաթափ եղան, ընկա՛ն։

Տեսան՝ մարդ չմնաց, առան բեռներ, տավար, եկան Փաշի դուռ։ Գա՛ցին, Փաշին խաբար տվին.

— Ելի՛ տե՛ս՝ ի՞նչ ա երած։

Փաշեն կանչեց զԱբդըլ Քերիմ, Սինամ Քերիմ, ասաց.

— Սինա՛մ Քերիմ, Աբդը՛լ Քերիմ, գու ես ի՞նչ կ՚ենեք։

Ասին. — Փաշեն անուշ մնա, մենք խաղցանք, Յըմլա՛ եղավ։

Ասաց. — Դու զոռեղ ազնավուր մարդ եք, ենոք ձեզի կանա՛ն դայախ տան։ Դիր մ՚ ել ամլա բան չենեք։ Թագավորն, ո լսա, տանա, իմ գլոխ կը զանի։

Ելան, թորկին, գա՛ցին պտոտելու։ Շաբաթ մի մացին, գա՛ցին, տեսան, ո բազիրկա՛նի մարդիկ մարդլոցի կը խաղան. փետ կը զանեն իրարու, հանաք կ՚ենեն ու կու զան։

Ասին. — Են բազիրկա՛նի մարդոց խետ մենք ել խաղանք։

Վո՛րն որ ձեռ տվեցին, խելըռան, ընկա՛ն. առան բազիրկա՛ն, եկան, Փաշի դիվան կանեցուցին։

— Սինա՛մ Քերիմ, վո՛րդի, — ասաց Փաշեն, — ես ձեր արած բան ի՞նչ ա։

Ասաց. — Ել չե՛նք եներ։

5. Թագավորը յերեք անգամ զորք և ուղարկում Վանի Փաշի վրա. յեղբայրները յերեք անգամն ել ջարդում են նրանց յեվ պատուհասում զորագլուխներին

Չեն գնաց, խասավ թագա՛վոր, թե՝ Վանա Փաշեն երթըցող, գալացող կը թալնե։

Թագա՛վոր ելավ, քառսուն խոգի ճանբեց.

— Գա՛ցե՛ք, են Փաշեն բռնե՛ք, բերե՛ք։

Սինամ Քերիմ, Արդըլ Քերիմ եկան, տեսան, ո Փաշեն ուր նիյաթ երեր ա։

Ասին.—Փաշեն անուշ մնա, դու Յորի՞ն քո նիյաթ երեր իս։

Ասաց.— Առեք եսա գիր, կարդացեք. չե՞ ասի թալանթուռան մ՛ անեք։

Գիր առան, կարդըցին, ասին.

— Մենք կ՛երթանք, բինբաշու ջուար կու տանք։

Եկան բինբաշու մոտ, ասին.

— Դու ես մարդ Յորի՞ն բռներ իս. մենք թալաներ ենք, Փաշեն խաբար չունի։

Ասաց.— Բռնե՞ք զեղոնք։

Ասացին.— Ի՞մալ թե բռնեք. բռնելն ի՞մալ ա, մենք չգինանք։

Ասաց.— Բռնե՞նք, տանենք մոտ թագա՞վոր։

Ասաց Սինամ Քերիմ Արդըլ Քերիմին.

— Արդը՛լ Քերիմ, դու են տեղեն արի, յես ես տեղեն, փչացուցենք զըմեն։

Փչացուցին զըմեն. իրեք մարդ բռնեցին, ատրմներ քակեցին, շարեցին ի ճակատ։

— Գա՞ցե՞ք, ասե՞ք ձեր թագա՞վորին՝ ել կա, ել ճանփե, իգա՞։

Գա՞ցին, խասան թագա՞վորին մոտ։ Թագա՞վոր տեսավ, ո բինբաշին ու երկու խատ՝ ատրմներ շարուկ ուրանց ճակատ՝ եկան։

Կանչեց, են իրեք մարդ տարավ, ասաց.

— Եդի ո՞վ ձեզի երաց։

Ասին.— Են Փաշի առջի մարդիկ, ո երկու զոռեղ, ազնավոր մարդ ին։

Թագա՞վոր ելավ, իրեք խազար խոդի ճամփեց, ասաց.

— Գա՞ցե՞ք, զերկուս լե, Փաշեն լե, սազ բռնեք, բերեք։

Եկան, որերու մեկ խասան ի Վան։ Թուղթ բերին, տվին Փաշին։ Փաշեն առավ զթուղթ, կարդաց, ել բմ նիյաթ երաց։

Սինամ Քերիմ, Արդըլ Քերիմ եկան, ասին.

— Յորի՞ քու նիյաթ երեր իս։

— Չե՞, յես ասի՝ գողութեն մ՛ ենեք։

Առան գիր, գա՞ցին ասկրի փաշին, ասին.

— Դու ես ի՞նչ գիր ա, ճամփեր իս Փաշին։

Ասաց.— Ես ի՞նչ գողութեն ա, կ՛ենեք։

Ասին։— Մենք դողուքեն չենք հնև։

Ասաց.— Դու բռնավոր ևք։

Ասին.— Բռնավոր ինչ ա, չգիննանք։

Ասաց.— Թագավոր ճամբեն, տանի, բռնա։

Ասաց Սինամ Քերիմ Աբդըլ Քերիմին.

— Աբդըլ Քերիմ, դու ես տեղեն արի, յես ևն տեղեն։

Զրմեն զարկին, սպանին, մնաց իրեք խոզի. աւրմներ քակեցին, շարեցին ճակատ, ասին.

— Գնացեք ձեր թագավորին՝ ել կա, ել թը ճամփեն։

Գնացին, իասան թագավորի քաղաք, ասին թագավորին, թը.— Դու մարդիկ եարմլա խայտառակ եկան։

Գնաց տեսավ՝ ոհո, խայտառակ, ո խայտառակ։

Թագավոր ժողվեց վեց խազար մարգ, ճամփեեց. գնցին, իասան վ'ան փաշին։

Փաշի մարդիկ լուսուն ելան դուս, տեսան՝ ասգին, քարին, թփին, խլին հաշիվը կա՝ չադրրին չկա։ Եկան, թուղթ բերին, տվին փաշին։ Փաշեն կարդաց, սևավորավ, թե. «Ես ինչ բան ա»։*

Սինամ Քերիմ, Աբդըլ Քերիմ եկան, ասին.

— Փաշեն անուշ մնա, յորին ես եարմլա եդեր։

Ասաց.— Ձեր երածն ա։

Սինամ Քերիմ, Աբդըլ Քերիմ թուղթն առան ու գնցին, տարան սերասկերի մոտ, ասին.

— Սերասկերր անուշ մնա, ես ինչ թուղթ ա։

Ասաց.— Եկեր իք Փաշեն ու դենու մարդիկ բըռնիք, տանիք։

Ասին.— Տանիք գոր։

— Թագավոր կա աշխարքը, տանիք թագավորի մոտ բռնավոր։

Ասին.— Բռնավոր ինչ ա։

— Թագավոր կա, պոի տանիք, ձեզի բռնա։

Ասաց.— Սինամ Քերիմ, դու վերեվուց արի, յես ներքեվուց։

Սպանեցին զրմեն ու կոտորեցին, մնաց իրեք խոզի. բըռնեցին, աւրմներ քակեցին, շարեցին ճակատ, ճամփեցին թագավորի մոտ։

---

* Ասգին։ Խմբ.

Թագա՛վոր տեսավ, որ խայտառակ եղան, եկան. ասաց.

— Դո՛ւնեն պտի ենիմ ասկա՛ր ու երթամ։

Իրեք մարդ սինոգապետներ եկան մըա թագա՛վոր, ասին.

— Թա՛գա՛վոր, ես մարդրկոց մոտեն վա՛զն արի, ես մարդրկոց մոտեն վնաս կու գա՛։

Ջուղար եկավ Վանի Փաշին.

«Եդ երկիր լավ տիրապետեն»։

Փաշեն խարճ ու խարաճ ժողվեց, լցեց ուր խազինեն։

6. Յեղբայրները վերադառնում են Հնդա Մելիքի մոտ, նա փորձում է մատաղ անել նրանց. նրանք սպանում են Մելիքին յեվ հավաքելով ամեն բան՝ գնում են Մըսր յեվ այս-եղից ել Սասուն

Հինգ տարի մնաց։

Սինամ Քերիմ, Արդըլ Քերիմ ասին.

— Ելեք, երթանք մեր խո՛րր աշխարք։

Փաշեն իզին չե՛տուր.

— Զեզի իզին չկա. կերեք, խմեք, թագա՛վորական ապրեք։

Ելան ասին.— Մեզի իզին ել տաս՝ կ՚երթանք. չտաս ել՝ կ՚երթանք, չկայնինք։

Զիանք խեծան, եկան Փաշի դուռ, կանչին Փաշին, ասին.

— Փաշեն սա՛ղ մնա, մենք չկայնինք. դե՛, Փաշա՛, մացի բարի։

Փաշեն երեր խազինի դուռ երաց. խուրճի մի ոսկի տվեց ու դրեց ճանփախ, ասաց.

— Դե՛, գա՛ցեք, Աստված ձեր բան Յաջողա։

Ելան եկան, խասան ուրանց երկիր։

Որ շաբաթ որ եր, գա՛ցին, Հընդա Մելիքին ասին.

— Մելիք, քո աչք ի լո՛ւս, տղեկներ եկան։

— Եսոր շաբաթ որ ա,— ասաց,— տեսա՛ր իմ կռքերու գորութեն։

Լո՛ւս կիրակի եկավ մրտ տղեկներ.

— Դու բարի յեք եկեր,— ասաց,— դու գիտցաք՝ իմ կըռքերու որն եր. ազիզ որ եր, որ տանիմ, ձեզի մատաղ ենիմ։

— Մենք գիտցանք քո կռքեր զոռ են. մենք եկանք՝ մեզի մատաղ ենես։

Լուսուն խեծան ձիանք, գա՞ցին կռքերու մոտ։ Տղեկներ խարցուցին.

— Մելիք անուշ մնա, դու մեզի Յորի՞ն իս բերի։

— Բերեր իմ՝ ձեզի մատաղ պտի ենիմ կռքերուն. մեր կռքեր զորավոր ին։

Ասին.— Որ զորավոր ին, արի, քե մորթենք. թե քեզի սաղցուցի՞ն, արի, մեզի մատղե։

Բերին, զխեր մորթեցին։

— Դե,—ասաց Սինամ Քերիմ Արդըլ Քերիմին,— դու ներքեվուց արի, յես վերեվուց։

Ինչ որ կուռք կեր, զըմեն կոտրտեցին։ Վըլվըլուն, ճըվ-ճըվուն ընկա՞վ մեջ կռքերուն. չար թշնամիք կռքերու միջեն Յելան, փախան։ Են, ինչ որ խաչապաշտ եր, ընկա՞վ աջակողմ. են, ինչ որ կռքապաշտ եր, ընկա՞վ ձախակողմ։ Զըմեն կտռեցին, ինչ որ կռապաշտ կեր։

Իրեք խարիր ջան թմավ վերեներ, ինչ որ աստվածապաշտ կեր։ Ելան, բարձին վրբ դեվեցներուն ինչ որ կեր Հընդա Մելիքին, առան ուրանց մեր, քա՞ր, եկան Մսըր, գա՞ցին ուրանց քեռու տուն — Ջենով Սարգիս, Ջենով Հովանի տուն։ Ելան, իրեք խարիր ջան ել Մըսրա բոնին, առան, եկան դըխ Սասուն։

7. Ցեղբայրները բարակ յեվ հզոր ջրի վրա տներ են շինում յեվ ամուսնանում. Սինամ Քերիմի վորդիները՝ Վեգոն ու Դավիթ

Եկան, տեսան, ո բարակիկ ջուր մի կը զանի, մեծ գետ մի կիսե, կ'ընցնի։ Ենտեղ ասաց.

— Մենք զորբա, ես ջուրը զորբա, ես ջրի վրեն մենք շենլրք շինենք։

Ուրանց տներ են քիչ ջրու վրեն շինին։

Մնաց ժուկ ու ժամանակ մի, Սինամ Քերիմ, Արդըլ Քերիմն ել կարգեցին։

Աստուծո խրամանքով Սինամ Քերիմի կնիկ մնաց երկու խոգով։ Եկավ ինը ամիս, ինը զաքիկա թմավ, պառկավ, եբեր՝ Վեգոն ու Դավիթ։

Բ

ԴԱՎԹԻ ԿԻԻՎԸ ՄՈՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

8. Դավթին ու Վեգոյին տանում են Մսըր. Բդեշն օպատնում են Ծասունցիք. Բնակիչներ գնում են Մսըր յնվ բերում Վեգոյին նուռնցից պաշտպանվելու համար

Յելան, վախենալուն տարին, թալին Մսըր, որ չկան ըսպանին։

Վեց տարի ծնացին Մսըր։ Տեսան՝ ինչկանդար քուրդ կա, պրտի Սասուն ավիրեն։

Ջենով Սարգիս, Ջենով Ովան Յելան ասին.

— Երթանք Մըսրա Մելիքի մոտ։

Գնացին Մըսրա Մելիքի մոտ։

Մելիք ասաց.— Ջենով Սարգիս, Ջենով Ովան, դու Յորին իք եկեր։

— Մենք եկեր ինք, քրդեր զԱսուն պըտի ավիրեն, եկեր ինք, որ չան Վեգոն, չան Դավիթ տաս, տանինք։

— Լուսուն ձեզի բան մի կ'անեմ։

Յելավ լուսուն Մըսրա Մելիք, կանչեց իրեք*... վոր մարդրկոց մոտին, երեր, երաց*... մեկ-մեկ վերու փոսի երեր, թալեց եգոնց թեվերուն. ամեկ մանին մեկ գանգուլակ կախեց, ասաց.

— Գնացեք, Վեգոյին ու Դավթին ջրորեք. տեսնինք՝ կը վախնան։

Առջին Յելան գնացին Վեգոյի ոդեն։ Վեգոյի աշքեր վոր առավ եննոնք, գինք լավոտեց։

Յելան գնացին մըտ Դավթի։ Դավթի քաշեց թուր, ընկավ տեսնելեր. որ խասեր, գիրեք լե պրտի բրդեր։ Փախան, գնացին մըտ Մելիք, ասին.

— Մելիք, Վեգոն գինք լավոտեց։ (Անուն ծնաց Ծոոտ Վեգո)։ Դավթի որ խասեր, գմեր իրեք լե բրդեր ոխշրի պես. ջորով փախանք, պրծանք։

Ասաց.— Խըլուսուն Վեգոն տանք, Քրխ տանին։

Լուսուն Յելան, Վեգոն տվին, առան, գնացին։ Եկան, Յելան Սասուն։

---

* Տպված և այսպես։ Խմբ.

9. Վեգոն չի կարողանում պաշտպանել Սասունը. Բեռիները նորից գնում են Մսրբ. Դավիթը Զենով Հովանի կանչով յելնում և ներքնատնից յեվ նրանց հետ վերադառնում Սասուն

Ոխչար՝ կա՛ն գա՛ն քրդեր, կը զանեն, տանին։ Կ՚ասեն.

— Վեգո՛, Յելի՛, քրդեր եկան, զթալան կը տանին։

Վեգոն իսկի տեղից ժաժ չի գա՛։

Յոթ աարի Յիմալ քա՛շեց։

Զենով Հովան, Զենով Սարգիս խոսքեր երին մեկ, հադիա՛լցին, տարան Մսրբա Մելիքին, ասին.

— Մսրբա Մելիք անո՛ւշ մնա, զԴավիթ տո՛ւր, տանենք։ Վեգոն ուր տակը կը լավոտե։

Ասաց.— Լուսուն կը տանիք քա՛ռսուն բասամաղ նարդիվան, Դավիթին կ՚իջուք մաղազի մեջ։

Կը տանեն Դավիթին, կ՚իջուցին մաղազին։

Զենով Հովան ու Սարգիս իրեք որ մացին, Յելան գա՛ցին, Մելիքի մոտ նստան, ասին.

— Մենք եկեր ինք, որ Դավիթ տաս, տանինք։

Ասաց.— Դավիթ եսա իրեք որ մեռեր ա։

Զենով Հովան ասաց.— Գա՛ցեք, իրեք խատ գո՛մշու կաշի բերեք, երկու խատ ել ճոպան բերեք։

Բերին. գո՛մշու կաշին կապեց մեջք, երկու խատ ճոպան ել փաթեց վերեն, ասաց Մելիքին.

— Յես պըտի բոռամ, բալքի մ՚ Դավթի ուշքն ա գա՛ցե, որ իմ ձեն, Յուր եղի, լսա, գ՚ելի կա՛ն գա՛։

Կայնավ, բոռաց, ձեն ընկա՛վ Դավիթի անկա՛ճ։ Դավիթ ձեռներ թալեց, առավ պատեր, լոխպըրաավ։

Զենով Հովան մեկ ել որ բոռաց, Դավիթ Յելավ կանավ, շփռտուն դրեց դռներ։

Եկան, Մելիքին ասին, թե.

— Դավիթ մկա դռներ Յրմեն պըտի կոտռտա։

Խանին ու առան, եկան զԴավիթ։

Մելիք բսեց.— Դ՚առեք, գա՛ցեք։

10. Դավիթը գառնարած

Առան, եկան Սասուն։

Բերին, գա՛ռներ տվին Դավիթին, որ տանա, արծա։

Դավիթ առավ գնոնները, գնաց չոլ։ Ինչխըղար լապրգտրակ, աղվես փախան, լարեց, բոնեց, բերաց, երաց մեջ գնոններուն։

Տեսավ՝ գելեր փախան, բերաց, երաց մեջ գնոններուն։

Արճերն ել բոնեց, բերեց։

Իրկուն գնցին յառջ. տեսան՝ որ, Քե մեկ խազար եր, երե իրեք խազար։ Առավ, եկավ։ Արուն յելեր Դավիթի յոտներուց, կ'երթեր։

Ջենով Հովան, Ջենով Սարգիս գնցին յառջ։

— Վըր մեր արեվուն գն. ես ինչ երեր, Դավիթ. ես ինչ ին։

Ասաց.— Յրմեն բաշ գնո ին, բալ ուլ ին. ետոնք ոչխար ին։

Առան, բերին, գոմեցին։

Լուսուն աղոթքրան որ բացվավ, Ջենով Հովան ըսեց.

— Քորբան եղնիմ իմ Դավիթին, Քոզ իդա ջանավարներ, Ք'երթան։

Ջանավարներ Քորկեցին, գառներ լե տարավ չոլ, գարձավ, եկավ։

Ջենով Հովան կանչեց ոսկերիչ, երեր, ասաց.

— Իմ Դավիթին ջուխտ մի պողպրտե սոլ շինես. մեկ խատ ել երկքե կեռ շինես։

Ոսկերիչ շինեց, բերեց, խագուց Դավիթին։

11. Հարկահանություն. Դավիթը պատուհասում է Մարա Մելիքի հարկահաններին

Դավիթին մեկ մեր, մեկ քուր կեր։ Իրկնե իրկուն որ կու գեր, կ'երթեր, մոր խետն ու քու րոջ կը զրուցեր, նոր կ'երթեր մըտ Ջենով Հովան, մըտ քեռիք։

Իրկուն մի Դավիթ եկավ մըտ մեր, խարցուց.

— Յուր ա իմ քեռին։

Ասաց.— Մարրա Մելիք ճամբխեր, խարաճ կ'ուզա. քեռքն գնցեր, խազինեն բացեր ա, որ խարաճ տա։

— Եդ մարգիկ յուր ին։

Ասաց.— Քու քեռու յոդեն ին։

Յելավ, գնաց յոդեն, ասաց.

— Դու ինչ մարդ եք։

— Մսրրա Մելիք ճամբեն, խարճ ու խարաճ կ'ուզինք քի քեռու մոտեն։

— Ինչ խարաճ. յես չըմ ճանչնա՝ ինչ ա խարաճ։

— Սասուն Մսրրա խարաճ պրոի տան։

Գնաց, չվան երեր. գերեք լե դրեց խրտ իրար, կապեց։

Քեռին նկավ, տեսավ, որ իրեք լե կապեր ա։ Գնաց Դավիթի մոտ, խնդրվավ, թե.

— Դավիթ, արի եդ մարդիկ յարձկա։

Դավիթ քեռու խոսքեն չելավ. եդ մարդիկ յարձկեց։

Յելան յըորգան, թորկին, գացին ի Մսըր. Մսրրա Մելիքին խարար տվին, թե.

— Դավիթ եսա սոսրրաթ խաներց մեր գլոխ։

Մսրրա Մելիքն յելավ, քաոսուն խուգի դրստեց, ասաց.

— Գացեք, յոթ տարվա խարճ խրտ իրար ժողվեք։

Յելան, խեծան, եկան Սասուն, Զենով Հովանի տուն իջան։

Յիրիկուն Դավիթ եկավ, ասաց.

— Մարե, քեռին դոր ա։

— Գացեր, խիզնին բացեր ա, որ Մսրրա Մելիքը յոթ տարվան խարաճ տա. ինադ ա երե, կ'ուզա։

Դավիթ յելավ գնաց, տեսավ՝ նստած ոսկին կը չափին։

Ասաց.— կոտ տվեք ձի։

կոտ մոտվըներուց առավ, շրջեց, շրջոն թարաֆ դարտակ կոտ կը չափեր, դարտակ կը լեցներ ջվալ։ Ոսկի չկաներ մեջ։

Մարդիկ քեռուն ասին.

— Ենա կոտ ան եդոր մոտեն, կը գըրկինք, կը սխտի։

Դավիթ կոտի սիլաջախ առավ, ընկավ մըջ մարդեկանց. երասունյոթը սպանեց, իրեք մարդ լե բռնեց, աորմներ քակեց, շարեց ճակաա։

— Դե, գացեք,—ասաց,—ձեր բռեյին։

Ճամբեց Մսրրա Մելիքին։

Ենոք յելան, յեմալ խայտառակ գացին մըտ Մսրրա Մելիք։

12. Դավիթը ճգնում և Մարանթում յեվ ձեռք և բերում Քուռիկ Ջալալին ու սարքը

Դավիթ Յելավ, քառսուն խատ չամիչ դրեց ծոց, գնաց Մարանթու Բանձրիկ սուրբ Աստվորածին, քառսուն որ ճրգնավ, Յոր մեկ խատ չամիչ կերավ։

Քառսուն որ թմավ, խրեշտակ Ասուն եկավ Դավթին երազ.

«Դավիթ,— ասաց,— քեզի Խաչ Պատրազին եկավ. եկավ Թուր Կեծակին, Քուռիկ Ջալալին, Բոզ Բեդավին»։

Դավիթ իրեք խետ իմցավ, որ երազ եր։

Յելավ Դավիթ—Ասու խրամանքով՝ մազազի դուռ եբաց, իշկեց, որ պատուխան դրուկ ա Խաչ Պատրազին, լուս չորեքդիմաց կամարակապ կապե, վերեն կայնե. իշկեց՝ Խրեղեն Թուր—Թուր Կեծակին, Քուռիկ Ջալալին, Բոզ Բեդավին։

Խրեշտակ Աստրծուն իջավ առեջ, ասաց.

«Դավիթ, վրբ Խաչ Պատրազին երդում չուտես. որ կերար, կր պատիճվիս. երդում վրբ թրի բալչդին կեր»։

Խրեշտակ ենդեն աներեվույթ եղավ։

Դավիթ առավ Խաչ Պատրազին, դրեց ծոց, Թուր Կեծակին կապեց վրեն. Քուռիկ Ջալալին խեծավ, եկավ, ել մ՝ ե ասաց*...

Գացին Զենով Ովանին՝ Դավիթ եկավ, ասին։

13. Կուզիկ Բատիկը գալիս և Սասուն հարկահանության. Դավիթը գինավառվում և

Են մարդիկ որ գացին Մսրբ, Մսրբա Մելիք որ տեսավ եսա խայտառակութեն, Յելավ, ասկաբ երաց, Կուզիկ Բատիկ ուր տղեն երաց սարասկաբ, դրեց խրտ ասկրին, ճամբխին Սասուն։

Եկան, ռաստ եկան սասունցի կընկտեկաց. կընկտիք ասին.

— Դոր կ՚երթաս։

Բատիկ ասաց.

— Կ՚երթամ Սասուն, բերիմ քառսուն կնիկ, քառսուն աղջիկ կր տանիմ շաղմաղին։

---

* Տպված և այսպես։ Խմբ.

Ընկաւ, եկաւ Սասուն չադրներ գանեց բոլոր։

Լուսացաւ. Յելան տեսան, որ չադրներ Սասունա բոլոր փաթեր ա։ Եկան, Դավիթին խաբար ավին։

Դավիթ բերաց, քեռսուն դիդր բամբակ եդիր մըջ խոր ջամեքներուն, նոր եդաւ ուր ոտներով, խագաւ։

Բերեց քսան դիդր բամբակ եդիր խոր քոլգի մեջ, նոր ելաւ, եդիր գլոխ։

Քուռիկ Ջալալին երիր, քեռսուն դիդր բամբակ փաթեց, նոր խոլան քաշեց վրեն։

Բերեց քեռսուն դիդր բամբակ փաթեց ուրին, զուր խոր քամար կապեց։

13. Ջենով Հովանի խրատը Սասնցիների մասին։ Դավիթը խմելով Սասնցիների ջուրը՝ զառնում է հզոր յեվ գնում է Սուլիկ Քաջիկի վրա կռիվ

Ջենով Հովան եկաւ, ասաց.

— Դավիթ, խորբան եղնիմ քեզի, կ'երթաս, քի խոր կաթնաղբուր կա։ Են քեզ որ կը սանիս զՔուռիկ Ջալալին, որ ջուր խմա, զրամբակ յըմեն թափա, նոր թող ջուր խմա, որ Ասու խրամանքով [կը լցվի, չեղի պատռի։ Քի ջամանեբուն՝ բամբակ կը թափես, քի միջաց բամբակներ կը թափես՝ նոր ջուր կը խմես։

Դավիթ յելաւ խեժաւ զՔուռիկ Ջալալին, ընկաւ ճամբախ, գնաց ի խոր կաթնաղբուր։

Դավիթ մոռցաւ քեռու թամբխին։

Քեռին քնաւ, երաժ տեսաւ, որ աստղ մը յելաւ, խավար եղաւ։ Կանչեց, Ջենով Սարգիս եկաւ։ Են վախթն որ քիչ եր մացե Դավիթն ու ուր ձին պատռեր, կանչեց, թե.

— Երկու զըմշու կաշի բեր ձի ու երկու ճոպան. մկա, իմ յաչքեր քեռնա, Դավիթն ու Քուռիկ Ջալալին կ'ուռին։

Յելաւ կապեց մեջքն ու բոռաց Սասունա սարի գլոխ.

— Դավիթ, սերն Ասուն, իդա բամբակներ թափա. մկա համ դու կը պատռիս, համ քուռակ։

Ջեն գնաց, իսասաւ, ընկաւ Դավիթի անկաճ, հըմա շոտակ չխասկըցաւ։

Մեկ ել բոռաց.— Դավի՛թ, թի գեժ իս, իմցի. թի քնած իս, լսի։

Դավիթ Յելավ, զբամրկրներ Յրմեն թափեց. Քուռիկ Զալալու խոլան պրծուց, թափեց, խոլան թալեց*... ծակ. բերեց ուր մեջք պրծուց. շորեր խագա՛վ, Ասու խրամանքով՝ լցվավ ու Յելավ խաչ հանեց Յերես.

«Յա՛ խացն ու գինի, Տեր կենդանի,
Մարութա Բանձրիկ Աստվածածին,
Խաչ Պատրազին»։

Խեծավ Քուռիկ Զալալին, գնաց Կուզիկ Բատիկի Յառեջ, կըպնա կռիվ։

15. Զենով Հովանի ազդարարությամբ Դավիթն ազատվում և պարանից ու պատուհասում և Բատիկին. Բատիկին ծաղրող կանայք

Բերեցին, քա՛ման թալեցին։ Դավիթ չկա՛րցավ քակեր ձիու վոտներուց։

Զենով Հովան քնավ, երազ տեսավ, որ Լուսու աստղ խավար ելավ։

— Յա՛ման, երկու գրմշու կաշի,—ասաց։

Բոռաց.— Դավի՛թ, ասա՝

«Խացն ու գինի, Տեր կենդանի,
Յա՛ Մարանթուկ Բանձրիկ Աստվածածին,
Խաչ Պատրազին»։

Զեն գնաց, ընկա՛վ Դավթի անկա՛ճ։

Ասու խրամանքով կանչեց, քա՛ման քակեց, զասկա՛ր Յրմեն ջարգեց, Կուզիկ Բատիկին սաղ բռնեց, ատրմներ քակեց, շարեց ճակատ։

— Դե՛, գնա Մսըրա Մելիքին ասա՝ ե՛լ կա, ճամբխա՛։

Կուզիկ Բատիկ գնաց, ելման կընկտոց բռաստ եկավ։

Կընկտիք ասին.

«Բատի՛կ, քաքոտ բերան,
Քա՛մին ելավ երան-երան,
Գնաց, լցվավ Բատկի բերան.
Ո՞ւր ա, ասին, քա՛ռսուն կնիկ
Քա՛ռսուն խարս, քառսուն ազջիկ կր բերիր»։

---

* Տպված և այսպես։ Խմբ.

16. Մարա Մելիքի արշավանքը Սասունի վրա. Դավթի յեվ Մելիքի մնձամարտը. Դավիթն սպանում ե Մելիքին յեվ հարկ ե դնում Մարա վրա

Բատիկ գնաց, խաւսավ Մսըր։

Գնացին, Մսըրա Մելիքին ասին.

— Բատիկ եղավ խայտառակ, եկավ։

Մսըրա Մելիք յելավ, աշխար յրմեն երաց ասկեր ու եկավ ի Սասուն։

Որ որերուց մեկ յելան, տեսան՝ քար ու քըփին հրսաբ կեր, Մսըրա Մելիքի ասկըրին չկեր։

Եկան, խարար տվին Դավիթին։

Դավիթ ու վեգոն ելան խեծան, գնացին, տեսան որ՝ Մսըրա Մելիք գլոխ գրե վըր մոր չոքին՝ քներ ա. մերն ել թիկն ե քնե։

Գնացին, մոր մեկ ծիծ Դավիթ բռնեց, ծծեց, մեկ լե՝ վեգոն։

Մսըրա Մելիք իմցավ։ Յելավ տեսավ, որ Դավիթ ու վեգոն ընկած մոր ծծեր կը ծծեն։ Յելավ, որ Դավիթն ու վեգոն բերախտութենով սպաներ, մեր խայիլ չեղավ։

Թե.— Բերախտութենով յորին կը սպանես։

Երկուսն ել իմցան, յելան, նստան։

Մսըրա Մելիք յելավ, գոըզ առավ ձեռ, իրեք պիր գոըզ զարկեց Դավթին։ Դավիթ զալար բոշթամիշ կ'եներ, գոըզ գետին բուռթեր, կ'ընցներ։ Իրեք դիր եզարկ՝ գոըզ ընցավ։ Դավիթ սալամաթ պրծավ։

Մերն եկավ Դավիթի մոա, ասաց.

— Դավիթ, մեկ կ'իտաս Աստըծուն խաթըր, մեկ կ'իտաս իմ ծծի կաթին խաթըր, մեկ դըրր զարկ։

Բերին, քոռսուն կաշզանոց խոր փորին, զՄսըրա Մելիք գրին ինե, քոռսուն ել գոմշու կաշի թալին վրեն, քոռսուն ել ձիու փալան բերին, լցին վրը Մելիքին։

Դավիթ եկավ, ասաց.— Յոըր ա Մելիք։

Ասին.— Ենա տեղն ա։

Դավիթ ասաց.

«Ցա խացն ու գինի, Տեր կենդանի,
Մարութա Բանցրիկ Աստվածածին,
Նաչ Պատրագինս։

Գոշեց Թուր կեծակին, թալեց.

Ասաց.—Խերիք ա, խոր քա̈կեք. յոթ դարաղա թուր իջավ գետին։

Քա̈կին, տեսան, որ Մելիք կայնուկ եր.

Ասին.— Մելիքին բան չե եղեր։

Որ պաղավ, կտոր ըմ դեն ընկա̈վ, կտոր ըմ՝ դեն։

Դավիթ Մսըրա խարճ ու խարաճ կապեց, որ տան Սասունա։

Կռիվ որ վերջանք գտավ, Դավիթ դարձավ, եկավ ուր տուն։

Գ

ԴԱՎԻԹՆ ՈՒ ԽԱՆԴՈՒԹ

17. Դավիթը լսելով աշուղների գովքը՝ գնում և Խանդութին առնելու. նրանց առաջին հանդիպումը

Կապուտկող կա, Խանդուդ խանըմ կա։ Կանչեց, երկու խատ աշըղ եբեր, Դավիթի անուն լսեր եր, ասաց.

— Առեք իդա ճանկ ոսկին, գա̈ցեք, Դավիթ կա, ենոր առաջ գիս գո̈վացեք։

Յելան երկու աշըղ, եկան ի Սասուն, Դավիթի մոտ։ Իրեք որ՝ խաղ ասին. Յոր դիր մի զԽանդուդ խանըմ կը գո̈վեն։

Դավիթ Յելավ, ասաց.

— Ել չըմ ուզի խաղ ասեք, գա̈ցեք։

Յելան եկան Խանդուդ խանըմի մոտ։

Խինգ որ մնաց, Յելավ Դավիթ, ձին խեծավ, գնաց Կապուտկող, Խանդուդ խանըմի մոտ։

Խանդուդ խանըմ իշկեց՝ ձիավոր ըմ եկավ։

Ասաց.— Եսի Դավիթն ա։

Իջավ, եկավ Դավիթի Յառեջ, առավ, ելավ վեր, նստավ։

Խանդուդ խանըմ իջավ, եկավ տակ։ Գավթի մեծ պարան թալեց ու Յելավ մըտ Դավիթ։

Ձեռ տարավ, պըտի խածար, պագեր Խանդուդ խանըմին, Խանդուդ խանըմ դըրբ մի զարկեց Դավիթի դոշ։

Դավիթ ասաց.— Վաղտա եղի՝ մեկ դըրբ պըտի քեզի զանիմ։

18. Դավիթը կորում է Պողպատե սյունը, սպանում է յոթ ուզնկան զորեղներին. Դավթի յեվ Խանդութի յերկրորդ հանդիպումը

Մնաց չուր լուսուն։

Խանդուդ խանըմ ճամբխեց, Պողպըտե սուն մի ճամբխու վրեն տնկեց։

Դավիթ Յելավ իշկեց, խարցուց.

— Եդ ինչ ա։

Խանդուդ խանըմ ասաց.

— Յոթ զոռեղ փայլեվան եկան խըտ ընձիկ կռիվ։

Ասաց.— Դու նստի, յես կ'ելթամ։

Յելավ եկավ ճամբխուն, տեսավ սուն տնկուկ. քաշեց Թուր Կեծակին, զարկեց սան, կտրեց։

Յեմալ կտրեց, են իմցավ չե կտրեր։ Մեկ ել թալեց, ելման կտրեց, չիմցավ։ Անիծեց ուրին.

«Թուլցի թեվիկ, որ չավիրի անուն կտրրճին»։

Ասու խրամանքով քամի մ' Յելավ, շնկշընկաց, Պողպտե ծառ եկավ, ութ կտոր ընկավ։

Դարձավ, որշնեց. Ասու խրամանքով՝ եղավ ավալքու Դավիթ։

Խեծավ ձին, գնաց են յոթ փահլիվանի մոտ, ասաց.

— Ա'խպրտիք, մենք գալաշ կպինք, վորն որ կոխեց, Խանդուդ խանըմ առնի։

Յոթնի խինգ Դավիթ դրեց գետին. Մնաց երկուս։ Են մեկն ել եկավ։

Խանդուդ խանըմ խեծավ ձին, շորեր փոխեց, եկավ Դավիթին ըռաստ։

Դավիթ են երկուս լե գրեց գետին։ Խանդուդ խանըմ խեծավ ձին, փախավ. Դավիթ ընկավ ետեվ. Խանդուդ խանըմ զինք թալեց ի ժամու մեջ. եկավ, Թուր թալեց, որթալըխու խորան բլուց։

Խանդուդ խանըմ ասաց.

— Խերիք ա, մեկ խետ ես երդում կերեր։

Գնացին սարեն, քնան։

19. Դավթի վերադարձը Սասուն. նա յերդվում է զորեղներին, վոր կը վերադառնա յեվ յոթ տարի հետո սպանվում է նրանց ձեռքով

Բարի լուս բացվավ. առավ գԽանդուդ խանըմ, խեծավ, եկավ վըր կարմընջին, տեսավ, որ իրեք զորեղ լե եդտեղ։

Զորեղներ ասին.— Դավիթ, եդտեղ կայնի։

Դավիթ ասաց.—Խըտ ընձի կնիկ կա, տանեմ տուն, դառնամ, գա՛մ։

Ասացին.— Յերդում կեր վըր ես Խաչ Պատրազին։

Երաց որ ձեռ զաներ վըր թրի բալչղին, ձեռ մոռցավ, զանեց վրր Խաչ Պատրազին։

— Դե, բսեցին, գնա։

Զորեղներ մացին եդտեղ։

Դավիթ Յելավ եկավ Սասուն։ Յոթ տարի մնաց։

Որ վըր ավուր բըթլավ, ուժ գնաց, եղավ, յոթ տարվան մեռելին խասավ։

Յոթ տարին որ թմավ, Յելավ առավ Ցռան Վեգոն, գնաց։ Եկավ վըր են կարմունջին, տեսավ, որ են իրեք զորեղ ուրանց խոստման վրեն դրռ իդա տեղ կայնուկ ին։

Գնաց մըտ ետ զորեղներուն։

Զորեղներ զարկին, սպանին զԴավիթ։

Ցռան Վեգոն առավ զԽաչ Պատրազին, Թուր Կեծակին, զՔուռիկ Ջալալին։

Դ

ԴԱՎԹԻ ՎՈՐԴԻ ԴԱՎԻԹ

20. Դավթի վորդի Դավիթը. Նա ավերում և Խլաթը յեվ փակվում Խըզըշ քարում

Խանդուդ խանրմ մնաց երկու խոդով։ Ին ամիս, ին դամ, ին դագագին զարկավ, հբեր Դավթի վորդի Դավիթը։

Դավիթ մոր մոտեն որ պրծավ, ընկա՛վ ի գետին. ձեռ խփուկ եր։ Աշխարք թափավ, չկա՛ոցան բացած են։ Մեր ձեռ ետուր ինե. Ասու խրամանքով ձեռ բացվավ։ Տեսան, որ մոր ջըգրրներուց արուն քակեր եր, բերեր եր։

Խասավ տասվերկու տարին, Խլաթ ավիրեց, ինչխըդար ջարտու քար կեր, երաց երկու կտոր։ Աշխար տակն ու վրա արեց, ավերեց ու գնաց, մտավ մըջ Խըզըշ քա՛րին։

Դեռ հալա ենտեղ ա, չուր ցորենի խատ եղի քանց մասուր ըմ, որ Յելնի, ելման աշխարք ավիրա։

Սասնա ծռեր

պատմեց

Ալաշկերտցի Մահակ Թորոյան

գրի առավ 1932 թ

Կարապետ Մելիք-Ոհանջանյան

ՈՒԱՋԱԲԱՆ

Մանուկ Հարությունի Թորոյանը (Թորոյենց Մանուկ) ծնվել է 1864 թ. Ալաշկերտի Քասաուր գյուղում։

Հայրը՝ Հարությունը (վախճ. 1875 թ.) բնիկ Քուլփիկցի չէ (Բիթլիսի շրջան)։ Մանուկի հորեղբայրը՝ Մուխսի Բիլրուլը Քուլփիկում սպանած է չեղել մի քուրդ։ Քրդերը վրիժառության նպատակով հարձակվում են նրանց վրա։ Ցեղրայրները դադիում են Ալաշկերտ և հաստատվում Քասաուր գյուղում։ Հարությունը դեռ Քուլփիկում եր ամուսնացել։ Նա ու իր չեղրայրները Քասաուրում բրուտությամբ սկսին զբաղվում։ Նա Քասաուրում 3 արտ ջրոշանց եր արել, սակայն հողագործությամբ զբաղվում սկսին միայն չերեխաները։ Հոր մահից հետո չերեխաները, նրանց թվում նաև Մանուկը հոտապուխրուն են արել ուրիշների մոտ։ Մանուկի չեղրայրներից միայն մեծն եր շարունակում հոր արհեստը՝ բրուտությունը։

Մանուկն ամուսնացել է 1898 թ. Քասաուր գյուղում Թելլու (մայրական անուն) Հովհաննեսի աղջկա հետ։ Կնոջ անունն է Ալթուն։ Մանուկն ու Ալթունն ունեցել են 3 տղա և 3 աղջիկ։ Վողջ է միայն մի տղան՝ Մկրտիչը, վոր բանվոր-փականագործ է Ցերեվանի Մեխանիկական գործարանում։

Համաշխարհային պատերազմ։ Ժամանակ 1915 թ. Ձմեռը Մանուկն իր համագյուղացիների հետ բնատնիքով գաղթում են Ցերեվան։ 1916 թ. Նորից վերադառնում են հայրենի գյուղը։ 1917 թ. Ձմեռը կրկին և ընդմիշտ գաղթում են Ռուսաստան։

Ակղրում խաստուրցիները հաստատվում են Կոտայքի շրջանի Զառ գյուղում։ Զառեցիները տրամադրում են խաստուրցիներին հարեվան քուրքերի հողերը, վոր քուրք բնակչության ջարդից ու գաղթից հետո լքված սկսին մնացել։ Այդ ծրագիրն անկատար է մնում, վորովհետև բաշտառնեցի Մարտիրոս խմբապետը ջոկվում և քաղում է քուրքերի արտերը, հայտարարելով այդ հողերը ազատության անփոխանության։ Քասաուրցիները հուսահատ հեռանում են Կոտայքից, ձախելով իրանց անասուններն մեծ մասը, և գնում են Սարդարաբատի շրջանի Ուղունորա գյուղը։ Կլիմայական աննպաստ պայմաններում շատերն այստեղ կոտորվում են գանագան հիվանդություններից։

Մանուկն իր չեղրայրներով վերադառնում է Ցերեվան։ Ցեղրայրներն աշխատում են Ցերեվանում ենկոնոմրաց փոում, իսկ ինքը մշակություն է անում։ Ցեղրայրների ոգնությամբ մի չեզ է գնում է մի ընկերոջ հետ ասյլ է բանացնում։ Հետագայում գնելով ևս մի չեզ, սայլը մենակ է բանացնում։

1922 թ. Մանուկը ծառայության է մտնում Գարժողկոմատի գումակը, որպես սայլապան։ 1923—1931 թթ. աշխատել է Ձերբվանի կայարանում որպես բեռնակիր։ 1931 թ. ոգոստոսից թողնում է ծառայությունը և որպես յերկրորդ կարգի ինվալիդ՝ կենսաթոշակ է ստանում ու միաժամանակ էկտորի հաշվով բեռնակրություն է անում։

Մինչև համաշխարհային պատերազմը Մանուկը 1901 թ. սկսած՝ մի քանի անգամ գաղտնի անցել է Ռուսաստան (Ղարս, Դանձակ և այլն), վորտեղ բանվորություն է արել մասնավոր ձեռնարկատերերի մոտ։

Ռուսահայաստանից հայրենի գյուղը վերադառնալիս մի անգամ մատրնվում է, ձերբակալվում թուրք վոստիկանության կողմից և սոսկալի տանջանքների յենթարկվում (1500 չիբուխ են զարկում, ֆալախկա, շղթայակապ 6 ամիս բանտ և նստում և այլն)։ Մանուկը վոստիկաններին 8 վոսկի կաշառք է տալիս և նորից փախչում Ղարսի շրջանը։

Մանուկը անգրագետ է։ 1931 թ. անգրագիտության վերացման գծով նրան էլ գրաճանաչ եյին դարձրել։ Սակայն ուսուցածն էլ մոռցեր եմ։

Մանուկը «Դավիթի պատմություններ» լսել է ոնց Գասպոյից, ոնց Գասպն կ'ըսեր, թե քուրդ Վարդանն Քոչեն յերկուսն էլ խաստուրցի ձեր մարդիկ են։ Քոչեն խանի կտրուճին սպանվավ. Գասպն առաջ եր մնռել։ Քոչեն և Գասպն 7 ձյուղն էլ գիտեյին։ Գիտեյին շատ հեքաթներ. հայտնի հեքաթ ըսողներ եյին։

Մանուկը հաղթանդամ, բարձրահասակ տղամարդ է. բացառիկ հիշողության տեր։ Մի անգամ պատմածը յերկրորդ անգամ պատմում է համարյա անփոփոխ։ «Մարդ որ մի բան սովրավ, եդպես էլ պետք ա պատմի. բան չի կարելի փոխել։ Մարդիկ կան, որ ասում են, թե մոռացել են, բան կը փոխեն։ Եդ լավ չե։»

Պատմում է դանդաղ, հանդիսավոր և վոգեվորված։ Պատմելիս հաճախ իր կարծիքն է հայտնում այս կամ այն դեպքի, միջադեպի մասին, համեմատում է իրեն և իր բարոյական ըմբռնումները հերոսներից մեկն ու մեկի կամ նրա աշխարհայացքի հետ։

Սասունի հերոսների գերբնական սխրագործությունները հիշելիս՝ նա մերթ ընդ մերթ կասկած եր հայտնում, բայց իսկույն ավելացնում եր, վոր կարող է այդպես յեղած լինել, քանի վոր ետուջվա մարդիկ մեղ պես չեյին։

Վերին աստիճանի բնորոշ է և իմաստալից Մանուկի տեսակետը Սասունի ծռերի մասին։ «Դավիթի պատմությունը հեքաթ-նադլ չե, պատմություն ա, եղելություն ա։ Հեքաթ ընդհուր կ'ըսենք, որ սուտ բան կա, եդիկ հեքաթ չե, եղելություն ա, պատմությունն. ժողովուրդը գրուցեր ա, մի քիչ բան ա եվելցրել, ամա եղելությունն ա։»

«Մարդիկ կ'ըսեն՝ Դավիթի պատմությունը ուղիղ ա, բայց եվելցրել են. հիմքը կա, ամա եվելցրել են, խոսքեր ճոխացրել են։ Մի բան, որ մարդ կ'ըսե, յեթե հիմք չկա, չի կրնա սուտ ըսել, եդպեստ ճոխացնել։ Իմ կարճ խելք եդպեստ կ'ըսե։»

Մանուկը շատ սիրով և պատմում Դավիթի պատմությունը։

«Կռիվներից առաջ շատ եմ պատմել,— ասում է նա,— կռվից ես կողմը քիչ եմ պատմել։ Ապրուստի հետ եմ բնկել։ Մի երկու անգամ երեխեք խրն-

դրվել են, ըսել եմ։ Հեքաթը մարդու գլխեն շուտ կ'երթա, բան մը վոր չըսես, մարդու գլխեն կ'երթա»։

Այս հայտարարությունը համեստության նշան և։ Նրա պատումը մինչ այժմ մեզ հայտնի պատումների մեջ ամենաընդարձակներից մեկն և։

Ինչպես վերը հիշեցինք՝ Մանուկը համաշխարհային պատերազմից առաջ և հետո վոտի տակ և տվել ամբողջ Այսրկովկասը և չնայած այդ հանգամանքին, խաստուրցիների վկայությամբ՝ նա շատ անազարտ և պահել իր հայրենի բարբառը։ Նա նման չե Թամոյան Կարապետին (Թ. պատումի ասացող), վորի լեզուն, ինչպես ինքն և բնորոշում՝ «բոշի քուլա յե դառել»։

Մանուկը «Դավթի պատմությունը» պատմում և իր բարբառով, իսկ ինձ հետ զրուցելիս կամ բացատրություններ տալիս, աշխատում եր «մեր» լեզվով խոսել։

Ալաշկերտի բարբառում հայարմատ բառերի «բ», «գ», «դ», «ձ» և «ջ» հնչյունները արտաբերվում են վորպես թավ, պարզ «բհ», «գհ», «դհ», «ձհ» և «ջհ» հնչյուններ մի շնչով արտասանված։ Ընթերցողների դյուրության համար հնչաբանական այդ, ինչպես և այլ նրբությունները հրատարակության մեջ անտեսված են։ Գրում ենք մերթ «բ», «գ», «դ», «ձ» և «ջ», մերթ ել «պ», «կ» «տ», «ծ», «ց», «ճ» և «չ»։

Կ. Մ.-ՈՀԱՆՋԱՆՅԱՆ

Բանահավաքի տողատումը վերանայված և։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա

ԱԴՆԱՄԵԼԻՔ ՅԵՎ ՍԱՆԱՍԱՐ

1. Մօտա կռապաշտ Սենեքերիմ թագավորն առնում և Փամբակ ձորի Տեր Խաչիկի աղջիկ Արմաղանին. խոստովանում Թորոս

Յառաջի ժամանակ աշխարք կռապաշտութեն շատ եր,
Աստվածապաշտ կային քանի մի գեղ Փամբըկու ձոր,
Ջանի մ' գեղ ել Յերուսաղեմ։
Փամբըկու ձոր կար Տեր Խաչիկ անվով տեր տեր ըմ։
Յինք ուներ մեղ տղա՝ անուն Թորոս.
Մեգ աղջիկ՝ անուն Արմաղան։
Զեն ի՞ձեն ընգավ, ձեն գնաց,
Հասավ Սենեքերիմ թագավորին մըրը,
Թե՝ Գավուրների մեչ աղճիկ ըմ կա,
Արեվու պես փել կ'իգա։
Սենեքերիմ թագավորն եր՝ յելավ,
Խանչեց ուր դորապետին, ըսեց.
— Գ'ելնիս, կ'երթաս Տեր Խաչիկի մոտ,
Իմոր ախճիկ Արմաղան գ'ուզիս,
կ'առնիս, գ'իկաս ընձի։
Թե կամքով տվեց, տվեց.
Թե չտվեց, ուր ազկ առ ու գերի կ'ենիս,
կ'առնիս ախճիկ, գ'իկաս ընձի։
Յելավ ենքան զորք դրեց ուրան հետ,
Թե ինչքան զորք,— յես ենաեխ չըմ,—

Մի քանի հազար զորքով Յելավ եգավ.
Յելավ եգավ Փամբրկու ձոր։

Եգավ առավոտ, Տեր Խաչիկ Յելավ, տեսավ որ՝
Ղարաքիլիսու չորս կողմ զորք Յկեր, փաթըթեր ա։
Խաբար խրկեց Տեր Խաչիկին,
Թե՝ Զորքով եգեր ա՝ ուր ախճիկ առնի,
Տանի Սեննեքերիմ Թաքավորին։
— Կ'իդա, Թըխ տա. Թե չե,
Ուր ազկ առ ու գերի կ'ենիմ,
Կ'առնիմ, կ'երթամ Սեննեքերիմ Թաքավորի մոտ։
Տեր Խաչիկ Յելավ ըսավ,
Թե.— Ընձի երգու որ ժամանակ տվեք։
Ժամանակ որ ուղեց,
Խանչեց չորս-հինգ գեղի ժողովուրդ,
Ժողով երեց, ըսավ,
Թե.— Ժողովուրդ, ինչ կ'ըսեք.
Սեննեքերիմ Թաքավոր զորք խրկեր ա,
Իմ ախճիկ՝ Արմազան գ'ուգա.
Կամքով տանք, Թե չե կովինք.
Ի՞նչ խորհուրդ կ'իգաք։
Մեգ ըսեց.— Ձե, կովով կ'ենինք.—
Դե ազկութեն ա, Թասիր կ'ենին։—
Մեգ լը ըսեց.— Զկը՛ռնանք կովով ենիք,
Ախճիկ ա, տանք, առնի, տանի։
Ետեխ Թորոս տասնըհինգ-տասնուՀ տարեկան ա.
Տեսավ որ՝ ժողովուրդ գ'ուգին պադիվ ենին տերտըրոջ,
Գ'ուգին կովով ենին, ախճիկ չիտան,
Ըսեց.— Տերտեր, չեա գինամ,
Ժողովուրդ գ'ուգա կովով ենա, ախճիկ չիտա.
Ազկ ա, ախճիկ մի վերճանա,
Գանց Թե ազկ մի վերճանա։
Տերտեր, որ դու ընձի յանգած ենիս,
Արի ախճիկ տանք, տանի.
Մենք չկը՛ռնանք կովով ենինք։
Հըմալ հաշվինք՝ եդ ախճիկ բսկի չեղեր ա քըզի։
Համաձայնված տերտեր, Յելավ, ուր ախճիկ տվեց.
Են լը առավ, գնաց Մսրի։

2. Արմաղանի յերազը. Սենեքերիմը պատարում և Յերուսաղեմը, պարտվում և յեվ խոստանում իր վորդիներին—Ադնամելիքին յեվ Սանասարին մատաղ անել կռքերին

Որ տարավ Մսըր, ճնաց յոթ-ութ տարի,
Երգու հատ տղա եղավ։
Մեզ տղի անուն Ադնամելիք գրեր եր,
Պզտիկ ազի անուն՝ Սանասար։
Եղավ որ Յելավ Սենեքերիմ թաքավոր,
Կ'երթար Յերուսաղմա վրրեն կռիվ։
Որ պատրաստութեն կը տեսներ,
Արմաղան երազ մ' տեսավ։
Յելավ առավոտ, պատմեց ուր երազ,
Ըսեց.— Սենեքերիմ թաքավոր,
Արի դու ընձի Յանգաճ երա,
Դու մի երթա գաւվուրներու վրրեն կռիվ։
Սենեքերիմ թաքավոր ըսավ.— Յորի։
Ըսեց.— Ես գիշեր երազ մ' եմ տեսե։
Ըսավ.— Ի՞նչ երազ իս տեսե։
Ըսավ.— Ես գիշեր տեսա՝ մանդր աստղեր
Հրմալ են բոլրրած մեկ աստղի բոլոր,
Եդ մանդր աստղեր բիրգան Յրմեն թափան.
Եդ մեծ աստղ ցոլրլաց, եգավ,
Եգավ, մրր դռան Յառեչ պադավ։
— Ե՞հ, ըսեց, Արմաղան, քրզի համար կր քնիս,
Ուրիշի համար երազ կր տեսնիս։
Ըսեց.— Կ'երթամ, զեդոնց ազկ կը վերճացում.
Եդոնց քոք բրդի կրդրիմ աշխըրքեն։
Յելավ, գնաց կռիվ։

Սենեքերիմ թաքավոր յոթ տարի կռիվ ելեց։
Զեդ քրիստոնեք Յախթեց,
Տարավ, լցեց Յերուսաղմա վանքի մեչ։
Զեդ վանքի բոլոր բաղան ա։—
Յես չգացերիմ, կ'ըսեն։—
Եդ մարդիկ Յաղթված ին.
Մհասարա երեր ին զեդ քրիստոնեք։
Եդ Յիրիգուն վարդապետ ըսեց.

— Ժողովո՛ւրդ, եգե՛ք, պադարաք ենինք,
Թե չե լուսուն եգ մարդիկ գ՚ելնին,
Մըր ազկ կը վերճացուն, մըր քոք կը բերին։
Վանքի մեչ վոչ հաց կաը, վոչ ճուր.
Սովամահ կը մեռնին եդ մարդիկ։
Յելավ, Կըրո անունով մարդ մի կար, ըսեց.
— Վա՛ըդապետ, յես իմ Յաչկով հաց տեսնիմ,
Իմ բերանով հաց ուտիմ,
Յես չըմ հա՛վդընա, յես չըմ հա՛վդընա։
Վարդապետ ըդոր անիձեց.
— Կըրո՛, հուս ունիմ իմ Աստու,
Որ լուսուն հաց կ՚եզնի փալասանք,
Որ Յաչկով քու տեսնիս,
Բերանով քու չուտիս, մեռնի՛ս։
Վարդապետ Յելավ, պադարաք երեց,
Եդոնք Աստվաձ աղաղագ երին,
Լացին, ոխպացին, մինչի աղոթրընի դեմ։
Հրեզեն սուր Ասծուց եր,
Յընգավ եդ զորքի մեչ.
Հըմա՛լ մի կըդրում Յընգավ զորքի մեչ,
Որ զորք զորքին չճա՛նչներ,
Զիրար կը սպանին, կը ջարդին։
Խապար տվեցին Սենեքերիմ թաքավորին,
Թե.— Ի՞նչ կ՚ենիս, զորք խլըսավ, կըդրելով։
Սենեքերիմ Յինք Յելավ տեսավ.
Տեսավ որ՝ զորք իրար կը ջարդա,
Եգավ, կը հասնի ուր մոտ։
Յինք Յելավ հեձավ դեվեն, փախավ։
Դեվեն որ հեձավ, փախավ, ըսավ.
— Կոքե՛ր, Յարե՛ք իմ ոքնության, ընձի ազադեք,
Քառսուն անծին երինջ ձըզի մատաղ կ՚ենիմ։—
Ե՛, կոքեր Յո՛ւր բրդի գան ոքնության։—
Ըսեց.— Կոքե՛ր, Յարեք իմ ոքնության,
Ձըզի մե փութ արձաթ կը բերիմ,
Ձըզի ոսկի ընձտ կը բերիմ։
Կոքեր չեգան ոքնության։—
Ա՛խր, կոքեր ի՞նչ ա՛, որ ոքնության գա։—
Ըսեց.— Կոքե՛ը, Յարեք ընձի ոքնության,

Ընձի երգու տղա կա, ձըզի մադաղ կ'ենիմ։
*Երգու սաղմնա մդան եդոր տակ ու փախան։**

3. Պատմած Սենեբերիմը պատմում է Արմաղանին յեղելությունը

Ադոթըրնին եր, լուս բացվեր եր։
Արմաղան յելավ դուրս, տեսավ՝
Սենեքերիմ Թաքավոր ապըլթաղ ուրին թալեց դուռ։
Արմաղան յելավ, տեսավ որ՝
Սենեքերիմ Թաքավոր փաչմուրդա ուրին թալեց դուռ։
Ըսեց.— Յա, Սենեքերիմ Թաքավոր, Ասվաձ խեր ենա.
Իդա յոթ տարի քու ձեն լավ գ'իկեր,
Եդ ինչ ա եղի քըզի։
Ըսեց.— Կնիկ, հրմալ երի զգավուրներ,
Լըցի յերուսաղեմա մեչ մըհասարա.
Վերչին ժամ եր, որ բրդի Թասլիմ եղներ,
Մեկը ադոթըրնին,— եդոնց Ասվաձն եր,—
Սուր յընգավ իմ զորքի մեչ, գիրար բըրթեցին.
Բրդի յես լը ընգնի մեչ, հեձա գեվեն, փախա։
Ինչ խըդըր իմ կոքերուն մադաղ բսի,
Ոսկի ու արձաթ ընձա բսի,
Ձեզան ընձի ոքնութան,
Ձեզան ընձի խըրսցուցեն։
Իմ երգու տղեն բսեր իմ մադաղ,
Որ ընձի աղաչած, բերած ա։

4. Ադեսուհլիրն ու Սանասարը Արմաղանի խոհերով ապաքում են Սենեքերիմին, կոծանում կուրերը յեվ մոր հետ վախչում Փամբակի ձորը

Արմաղան ետեխ ուր մեչ միտք երեց,
Ըսավ. «Վալլահ, իմ երգու տղեն բրդի տանի,
Ամեխ ետեխ բրդի մորթա»։—

---

* Պատմողն ավելացրեց՝ «Հիմարկե գեղի սուտ կ'եղնի։ Ըսենք՝ չար բառուն հակառակ ա, կարելի յա, կ'եղնիյ։ Կ. Մ.-Ռ.

Հըմա կուոք ինչ ա որ,
Կոքի համար բըդի տաներ,
Ամեխ տղեկներ մադաղ եններ.—
Ադնամելիք տըսնուվեց տաբեգան եր,
Սանասար տըսնուչորս տարեգան եր.
Մկա տղեկները ավդըցած ին,
Որ կոքեր չկան, որ Աստված կա.
Տղեկներ ավդրցած ին ասվաձպաշտութինն.
Մամ կանչեց տղեկներուն, ըսեց.
— Լաո, ձեր պար ձըդի կոքի համար մադաղ ա ըսի.
Ամեխ տեխ ձըդի կոքերու ժառեչ բըդի մորթա.
Ադնամելիք ըսեց.— Մարե, ինչ կ'ըսիս դու.
Ըսեց.— Լաո, իդատեխ որ մենք խելք մը չթափինք.
Դու ամեխ տեխ բըդի սպանվիք.
Ըսեց.— Ինչ եննինք.
Ըսեց.— Ձըդի որ կը խանչա, կ'ըսա՝
Խանչեք ֆըլան մարդու, ֆըլան մարդու.
Կ'ըսեք՝ Հայրիկ, ինչ կ'ենիս.
Բըդի ըսա՝ Լաո, ձըդի մադաղ իմ ըսի,
Բըդի տանիմ, ձըդի մադդիմ կոքերուն.
Դու ըսեք՝ Ախըը, դու հարսնիք չըս երթա,
Ախըը, քըդի պարծանք չե,
Որ դու ժողովուրդ կը խանչիս, տանիս.
Արի, մենք մինակ երթանք,
Ենտեխ մըդի մադդա, ինչ գ'ուզիս, երա,
Որ քու կոքերուն ընդունակ եղնի.
Մեր ըսավ Ադնամելիքին.
— Լաո, քըդի քեռիք կան.
Մե թոփուզ տվեց Ադնամելիքին,
Մե խաննջալ լր տվեց Սանասարին.
Ըսեց.— Կ'երթաք, կր մդնիք կուոց տուն.
Սենեքերիմ թաքվոր ձըդի կ'ըսա,
Թե՝ Պատկեք, յես ձըդի մադդիմ.
Կ'ըսեք՝ Դու ժերգիրպաքութենն երա,
Նոր մենք կը պատկինք, մըդի մադդա.
Ըսեց, որ են կըդի ժերգիրպաքութենն ենա,
Ադնամելիք, դու թոփուզով զարդ՝ խելք ժրնցնի.
Սանասար, դու լր խաննջլով զարդ, զվիզ կդրա.

Յես լը ձիանք հազրը կ'ենիմ,
Որ դու զա՛րգիք, սպտնիք, դառնաք,
Մենք կը հեձնինք, կ'երթանք ձըը քեռու մոդ։

Յելան, գացին կռոցտուն։
Որ զվիզ թաքավորին կդրեց,
Ադնամելիք ըսեց Սանասարին.
— Հրլա՛ արի՛, կոքեր ջարտինք,
Տեսնինք՝ ըդոնց մեչ հունար կա՛...
Ետեխ շինած ոսկուց, արձըթից
Կովու գլխներ, ճետեր կա։
Ջարտեցին զեգ կոքատուն,
Յրմեն խառնին Յիրար,
Ջարտ ու փըշուր երին։
Տեսան որ՝ ըսկի բա՛ն չկա.
Կոքերու մեչը սուա ա՛, բա՛ն չկա.
Յելան, գուռ փակին, եգան գեմի տուն։
Արմազան ըսեց.— Հը՞, լա՛ո, ի՞նչ երիք։
Ըսին.— Հա՛, նա՛նե, մորթեցինք զթաքավոր.
Նանե՛, հունար րմ ունիս, խարճա։
Նանեն պադրաստութեն տեսեր եր.
Իրեք ձի թամքե, գա՛մե, հազրը կայներ ա՛...
Հացից-բանից վերցուց, հեձան ո՛ւ...
Փամբրկու ձոր դո՞ր իս, եգանք քրզի։

5. Յեղբայրներն իրենց մոր յեվ Քեռի Թորոսի հետ գնում իջնում են Մեղրագետի վրա. նրանք լեռներից իջնող բարակ ուժեղ ջրի ակի վրա իրենց համար տուն են շինում յեվ անունը դնում Սասուն

Եզա՛ն, հասա՛ն Փամբրկու Ղարաքիլիսեն։
Արմազան գնաց ուր հոր տուն։
Տեր Խաչիկ լը վախճաներ եր։
Քեռի Թորոս Յելավ, տեսավ՝
Արմազան երկու տզով եգավ, Յիճավ դուռ։
Որ տեսավ— դե՛, քուրն եր— սիրտ մըրմըռաց,
Փաթթավ քրոչ վիզ, Յերեսներ պաքեց,
Դարցավ, հարցուց, ըսեց.

— Արմաղան, Ասվաձ խերն ենա,
Իմալ իս եկի, Յելեր իս Յուդա։
Ըսեց.— Թորոս, հալ ու հեքաթ հրմլա։
Որ պադմեց Թորոսին,
Թորոս միտք երեց, ըսեց.
«Որ մենք ենանք Յուդա,
Եդ մարդիկ բըդի զորք քաշա,
Իմ ազկի քոք բերա։
Ձես բըդի եդ երգրեն հեռենամ»։
Դարցավ, ըսեց.— Արմաղան,
Մենք իդա երգրին չրնք կրոնա ենա։
Յելնինք քոչինք, իդա երգրեն երթանք։
Յելան քոչին ու գացին։
Գացին, գացին Մշու դաշտ,
Մեղրագետի պռունկ թափեցին։
Թորոս ըսեց.— Արմաղան, յես երթամ,
Քանի մը հադ ավ զէրգինք,
Բադ գէրգինք, բերինք, եփինք.
Ձժեր անոթի ին, ուդին, երթանք։

Քեռի Թորոս որ գնաց հավքորենք զէրգա,
Ոանասար ու Ագնամելիք Յելան,
Եդ գետի հետ ցածրցան, կ'երթան։
Ջուկ կար գետի մեչ.
Ջկներու հետ ցածրցան ու կ'երթան։
Ագնամելիք տեսավ որ՝
Բարակ ջուր գ'իկա սարեն,
Կը զէրգա գեդ Մեղրագետ,
Կը կդրա, գ'ընցնի, կը դիպնի ես փլին,
Նոր կը դառնա, կ'երթա։
Ագնամելիք միտք փոխավ,
Կ'ըսա.— Եդ իմալ ջուր է,
Որ գ'իկա, կը զէրգա, ջուր կը կդրա,
Նոր կը խառնվի ջրին հետ, կ'երթա։
Ուրանք լը քէնի մ' հադ ձուկ են բռնած։
Ու դարցան, եգան ուրանց մամու մոդ։
Քեռի Թորոս եգեր եր.
Ագնամելիք ըսեց քեռուն.

— Քեռի, յես մի բան տեսեր իմ,
Զարմացեր իմ եդոր վըրեն.
Քեռին հարցուց.— Ադնամելիք,
Ի՞նչ իս տեսի, մեռնիմ քըղի։
Ըսեց.— Քեռի, բարակ ջուր մի գ'իկա,
Հըրե՜ն են սարու գլխեն գ'իկա.
Գ'իկա, կը զարնու գետին, կը կդրե,
Նոր կ'երթա են գետի հետ։
Եդ իմաձ ջուր ա։
Քեռի Թորոս վերցուց, ըսեց.
— Լա՛ո, եդ ջուր Ագնանցորդու ջուր ա,
Վորնոր եդ ջրեն խմա,
Ընդըրնե Ագնանցորդի գ'ելնի.
Ընդոր մեճկ գեղին դնող չեղնի։
Ետեխ Ադնամելիք Յերթում երեց.
— Հացն ու գինին, Տեր կենդանին,
Եդ ջրի յագ որտեխ եղավ,
Մըր տուն յոնի կը շինիա։

Քեռին տղի խոսք չկոդրեց.
Յելան, բարցան, բոնին բարակ ջուր
Ու գացին, գացի՜ն, գացի՜ն,
Յելան Սասունա լեռներ։
Եդ ջրի յախպըրի մոդ,
Ուր տուն շինեց Քեռի Թորոս։
Ադնամելիք վերուց ըսեց.
— Քեռի, մըզի տուն շինեցինք.
Մենք բըդի եղնինք, տուն, դեղ,
Հըրա՜ գեղի անուն ի՞նչ դնինք։
Քեռի Թորոս ըսեց.— Լա՛ո,
Քար քարի վրեն դրինք,
Սուն լը սան վրեն դրինք,
Գեղի անուն Սասուն դնինք։
Անուն դրեցին Սասուն։
Քեռի Թորոս ետեխ բնակուավ։

6. Մսրա Մելիքը հարկ և դնում Սասունի վրա

Սենեքերիմ թաքավորին մոդիկ մարդ կեր.
Մրսրա Մելիք անվով մարդ մի կեր.
Մրսրա Մելիք դրին ուրանց թաքավոր։
Մրսրա Մելիք Ծովասար* մի ուներ Մշու կողմ.
Տարին մեկ անքամ մի գ'իկեր ետեխ զոզան։
Տեսավ որ՝ Քեռի Թորոս Ժուդա գեղ մի շիներ ա՛,
Ժելավ, եգավ ետեխ, խարճ կապեց՝
Տարին քառսուն անծին երինճ,
Քառսուն թոփ լը անլվա կդավ։

Բ

ՋՈՋ ՄՀԵՐ

7. Ադնամելիքի յեվ Գորկիկի քրոջ վորդի Մհերը յեվ իր վորսորդությունը

Ադնամելիք որ մեծցավ, Ժելավ կարքվելու։
Քեռի Թորոս գնաց Բիթլիսու քաղաք.
Բիթլիսու քաղաք Գորկիկ իշխան կեր.
Գորկիկ իշխանի ախճիկ Ժուզեց,
Վերուց, բերեց Ադնամելիքին։
Ադնամելիքին եղավ մեկ տղա.
Անուն դրեցին Մհեր։
Քեռի Թորոսի խոսք ենտեխ ողորթավ։
Մհեր եղավ յոթ տարեկան,
Յոթ շենք եղավ իրա բոյր։
Եղավ տաս-տասվերգու տարեկան, լցվավ։
Մհեր իդահախ կ'երթեր չոլ նեճրութեն.
Ինք Ժոդկով կ'երթեր, գ'իկեր. ձի բան չկեր։
Հրմա ընդոք նետ ու անեղով կր զա՛րգին։
Են մեկ որ Մհեր շատ եր լարի,
Աղվրսներու Ժեդեվ շատ եր վազի,

* «Ծովասար հին հայերեն պախչի (բաղչա) կ'ըսեն». ծանոթություն ասացողի։ Կ. Մ.-Ո.

Ել չկըրցեր եր բան մի բռնի։
Յիրկուն եգավ հերսոդ, դադրած,
Ուր ձեռաց փեդ* թալեց գեդին։
Քեռին հարցուց.— Տղա՛, լա՛ռ, Յորի՞ իս հերսոդի։
Մհեր ըսեց.— Ե՛, քեռի, անտե՛ր մնա,
Ջանավար որ կա, կը փախնի,
Չըմ կր՛ռնա հասնի լարելով.
Հեռեվանց նեդ ու անեղ կը թալեմ,
Չհասնի, դարդակ կը դառնամ, գ՛իկամ։
Ինք որ ջանդըքեն ծանըրցեր եը, չկըռներ վա՛ղներ.
Որ կը վա՛ղներ, կը չըքվեր մրչ հողին։—
Քեռին ըսեց.— Դու, իմկնի՛ Սասունա ծռեր,
Սասունցիք ըրդի բոլոր ծո՛ւռ եղնին.
Ա՛խր, մարդ լը պայա, լարա, ջանավար բռնա՞...
— Հրբա՛, քեռի, ըսեց, ի՞նչ ենիմ։
— Քըզի, լա՛ռ, քեռի կա Բիթլիսու քաղաք։
Գորկիկ իշխան ունի քառսուն հադ ձի,
Հոքին չելնի, գնա՛, քեռուց ա՛ռ ձի մի,
Արի բե՛ր, հեձի՛, դնա՛ նեճրութեն։
Ըսեց.— Քըզնե ջոկ մա՛գա՛ր ընձի քեռի՞ կա,
Ասված քու տուն ավիրա, ըսկի չըս ր՛սի։

8. Մհերն իր Քեռի Գորկիկի մոտ. նա բեռուց նվեր և ոտանում Քուռկիկ Ջալլադը

Մհեր ըսեց.— Նանե՛, մեգ-երգու հաց ընձի պայա.
Յես լուսուն բրդի Յելնիմ, ելթամ Բիթլիսու քաղաք։
Լուսուն Մհեր Յելավ,
Առավ երգու կորեդի հաց, դրեց ուր գոտին,
Ու վերցուց ուր փեդ, դրեց ուր թեվին,
Ու Յընգավ ճանպա, գնաց Բիթլիսու քաղաք.
Հասավ թաղի գլուխ։**
Եդ ջահել երեխեք կը խաղան թաղի գլուխ։
Ջահել տղեկներ կը խաղան ետեխ.

---

* Պատմելու ժամանակ ձեռքով ցույց և տալիս փայտի հաստությունը՝ յերկու ձեռքի քլերը մեկ քլաչափ իրարից զատված։ Կ. Մ.-Ռ.

** Քաղաքի ծայրամասի թաղերից մեկը. ծանոթ. ասացողի։ Կ. Մ.-Ռ.

Տեսան որ՝ մարդ մի գ՚իկա, խոջա մարդ.
Խոջա փեդ մի, կերան մի,
Որ կը Թալեն տան վրեն,
Դրած ուբ փիճին, դ՚իկա։
Երեխեք, որ տեսան բսին.
— Իդա հրմլա մարդ կ՚եղնի,
Գերան մի դրեր ուբ փիճին, կ՚երթա.
Հարցուց.— Ճժեր, Գորկիկ իշխանի տուն վուր մնկն ա։
Ճժեր Թափան ուրին բոլոր, բսին.
— Արի տանինք քըզի Գորկիկ իշխանի տուն։
Ճժեր տարան Գորկիկ իշխանի տուն։
Մհեր ուբ փեդ դրեց խրախ, մդավ ներս.
Տեսավ՝ Գորկիկ իշխան նսած ուբ յոգեն,
Ուբ իշխաններ ուբ բոլոր, խըսսա կ՚ենեն։
Մհեր եդոր բարեվ տվեց։
Գորկիկ իշխան եդոր բարեվ չառավ։
Ինք տեսավ, որ վերեվ նստուկ ա, ըսեց.
— կ՚եղնի-չեղնի, եդ ա իմ քեռին։
Մհեր գնաց, բռնեց քեռու Թեվ,
վ՚երցուց ու կանգըցուց ուբ տեխեն,
Փշուբ մ՚ քեռու Թեվ քամեց,
Դիցավ, որ Թեվ կոդ-ավ յոԹ տեխ։
Դարցավ շուտ հարցուց.
— Տո, կդրիճ, յո՞ւսա իս։
Մհեր ըսեց.— Յես քու խարդեն իմ։
— Դու վ՚ի՞ր տղեն իս։
Ըսեց.— Ադնամելիքի։
Ըսեց.— Ա՜խ, դու բարով եգար,
Հազար բարին եգար։
Քեռին կեդծավորուԹեն երեց.
Տեսավ եդոր ուժը։
Մհեր ուբ ուժ նշանց տվեց։
Տղեն նստավ, հանգըստացավ.
Հաց բերել տվեց տղին.
Մհեր հաց կերավ, պրծավ.
Քեռին հարցուց.— Քու անուն ինչ ա.
Տղեն ըսեց.— Մհե՛ր ա։
— Մհեր, լաո, եգ իմալ եղավ,

Որ դու դեմ եգար ընձի։
Ըսեց.— Քեռի՛, հըմլա ջանդըքեն ծանդըրցեր իմ.
Յես որ կ՚երթամ նեճրութենի,
Չըմ կը՛ռնա ջին-ջանավարներու հասնիմ,
Կը փախին, կը պըրծընին ձեռքես։
Եգեր իմ, որ ձի մի տաս,
Առնիմ, տանիմ, հեձնիմ։
— Տղա՛, լա՛ո, մե ձին ի՛նչ ա՛ որ
Տաս ձի քըզի խուրբա եղնի։
Եդ.Յիրկուն քնան, սաբախտան Յելան.
Սաբախտան որ Յելան, հաց բերեցին.
Հաց որ բերեցին, կերան, խըլըսան։
Քեռին ըսեց.— Լա՛ո, Յելի գնա՛ թավլեն.
Քառսուն ձի կա Յոնի կապուկ,
Քառսունից վուոր մեկին հավնար,
Ջենի ա՛ռ, տալ քըզի, հեձի՛։

Յելավ Մհեր, գնաց թավլեն.
Հախիլա քառսուն ձին կապուկ ա՛՝
Քսան մեգ ջերգին, քսան մեգ ջերգին։
Վուորի պառեկին ձեռ ճըխտեց,
Փոր հասավ, քիսավ գետին։
Քառսուն ել ջըրբեց ետեխ։
Մհեր քուֆր մի ավեց, ըսեց.
«Եդոնց տիրու պաբը ....
Ընձի պետքական ձի մի չի կա.
Եդոնց յես տանիմ, ի՞նչ ենիմ։
Իմ ձեռ որ կը ճըխտիմ պառեկ,
Փոր Յրմենուն գ՚ընցնի գետին.
Իմ տակ ըսկի չդիմանա»։
Եգավ, գռնեն գ՚ելներ դուրս,
Երգու տարեկան քուռակ մի տեսավ,
Որ Յարցակ թավլին մեչ կը զըվրոներ։
Ըսեց. «Համին ընձի պետքական ձի մի չի կա.
Կայնի գո՞մփ մի զա՞րգիմ իդա քուռկին,
Քուռակ լը փիդնա, Յելնիմ, երթամ»։
Որ զա՞րգյեց գո՞մփ մի քուռկուն,
Քիսավ քուռկու սաղրուն.

Ֆուռակ թռավ գտաս ձին կդրեց,
Զուֆքեն գ՚ըրգլեց, քիսավ Թըրկնոցի քարին,
Թըրկնոցի քար կրակ տվեց, ըսեց.
«Վալլահ, ընձի վերցուցող որ կա, եդ քուռակն ա.
Վերցուցող որ չկա, եդ քուռակն ա։
Ախը՛ր, չես իմ ուժ գինամ.
Զ՚ըրգ որ գ՚ըրգի, բըդի քուռակ փիդներ։
Կ՚երթամ, գեդ քուռակ տվեց, կը տանիմ,
Չտվեց, գաթի կը թողնիմ, կ՚երթամ»։

Յելավ, եգավ Ղոդեն, նստավ։
Գորկիկ իշխան հարցուց.
— Մհեր, լաո, հալնաը ձիանուն։
Ըսեց.— Քեռի, քու ձիանք քըզի բունըարած եղնի.
Չխըմիշիմ քու ձիանու տեխ խոռիմ.
Են ծրատոտ քուռակ, որ թավլեն կը գրվըռնա յարցակ,
Ենի կ՚իդաս ընձի, տուր կը առնիմ.
Որ գեդ քուռակ չիդաս ընձի,
Գաթի կը թողիմ, կ՚երթամ տուն։
Ըսեց.— Մհեր, լաո, ախըր, ամոթ ա,
Յես Գորկիկ իշխանն իմ.
Եդ քուռակ ինչ ա, որ դու կը տանիս.
Ուրիշներ բըդի ըսին՝ խարգեն եգավ,
Գորկիկ իշխան չխըմիշավ,
Խորոտ ձի մի տար, տաներ տուն։
Ըսեց.— Քեռի, են քուռակն ա.
Կ՚իգաս ընձի, կը տանիմ.
Չիդաս, կը թողնիմ, կ՚երթամ։
Քեռի ըսեց.— Լաո, դու գինաս,
Հո զոռով չեղնի, դու գինաս.
Կը տանիս գեդ քուռակ, տար։

Յելավ Մհերը, թավլից քաշեց գքուռակ դուս.
Շըրիդ մի յուզեց,— բերեցին,
Բռնեց քուռկու չորս յոդ կապեց իրար,
Ու փեդ մըտուց յողներու մեչ,
Վերցուց, տրեց ուր փիճին, ըսեց.
— Քեռի, դե ծնաց բարով.
Ասված քու տուն չեն պայս։

Ու Յելավ, ընգավ ճամպա։
Ետ քաղքի ճժեր, Բիթլիսու մարդիկ սա՞տա՞նա յին.
Հավաքված վրեն, հո՞ւ երին, բո՞ւ կ'ենին,
Կը ծաղրին, որ մարդ շալկել ա՞ ձի մի, կը տանա։
Մհեր սկի տեր չեղավ։

Եգավ, Յելավ, հասավ Սասուն։
Քեռին տեսավ, որ Մհեր եգավ,
Քուռակ մի բերի, վըր ուր փիճին,
Ըսեց.— Լա՛ո, եդ քուռակ անջա՞խ առար քու քեռուց.
Խորոտ ձի մի չկը՞րցար առներ, բերեր։
Մհեր Քեռուն ըսեց.— Քե՞ռի,
Իմալ որ դու կ'ըսեր՝ աղորթ եր.
Գորկիկ իշխան քառսուն ձի ուներ կապուկ.
Եդ անտերներու վուոր մեգի պառեկին ձեռ կպուցի,
Որ ճրխտի, փոր զա՞րդավ գետին.
Իսկի մի պետքական ձի չկար մեչը։
Ըսեց.— Քեռի՛, գո՛փ մի զա՞րգեցի,
Իդա քուռկու սաղրուն քիսավ.
Թըռավ, տասը ձին կդրեց,
Զուֆթեն թալեց, քիսավ թըրկնոցի քարին,
Թըրկնոցի քար կրակ Յեդ տվեց։
Քեռին ըսեց.— Հա՛, լա՛ո, եդ քուռակ բեր,
Եդ քուռակ յես պայիմ.
Իրեք տարի որ թըմմավ,
Նոր հեձի, գնա նեճրութեն։—
Զունքի քեռին բայթար եր, ձին կր ճանչներ։—
Քեռին իրեք տարի պայեց,
Քուռակ ուր տեխն առավ,
Նոր տվեց, Մհեր հեձավ։
Քեռին քուռկան անուն դրեց Քուռկի Զալլադ։

9. Մհերը վորսորդության և գնում մերկ ձիով. Քեռի Թորոսի խորհուրդը

Մհերն արթըխ քուռակ կր հեձներ,
Գ'ելներ, կ'երթեր ուր նեճրութեն։
Թամք, գա՞մ չկար, աըկլոզ կը հեձներ

Շատ որ կը լարեր, ուրան փաճեք կը լըպոկեը։
Մեգ որ իրիկվան եգավ տուն։
Քեռին դուռ կայնած եր։
Ուր փեգ հըմլա թալեց, ըսեց.
— Ե՛, քեռի, եդ լը լա՛զա՛թ չունի։
Ըսեց.— Ընչի՞, լա՛ռ, ի՞նչ եզեր ա՛։
Ըսեց.— Քեռի՛, իմ վոռ ու մոռ հըմալ ա՛ լըպոկի,
Ըսկի չըմ կը՛ռնա նստի վըրեն։
Ըսեց.— Լա՛ռ, Մհե՛ր, Սասնա բըդի ծռե՞ր դուս գա.
Հըբա՛ մարդ լը ըսկի տըկլոզ ձիուն կը հեձնի՛։
Ըսեց.— Քեռի, հըբա՛ իմալ կը հեձնին ձիու։
— Լա՛ռ, ըսեց, թամք կա, գա՛մ կա.
Թամք կը զա՛րգին ձիու մեչքին,
Գա՛մ կը զա՛րգին ձիու բերան,
Գ՛ելնին, ըռհա՛թ կը հեձնին։
Նա՛ վոռ կը ցավա, նա՛ Յոդ կը ցավա,
Յուը գ՛ուզիս, գնա՛։
— Ե՛, քե՛ռի, Ասված քու տուն ավիբա,
Մենք չգի՛նանք, դու լը չըսիս։
Յո՞ւր կա, ըսեց, եդ թամք ու գա՛մ,
Որ յես զա՛բգիմ ձիու վըրեն։
Ըսեց.— Լա՛ռ, դու եզեը իս խոճա մարդ, խելքի հասած.
Հեձի, գնա՛ Մսըր՝ Մըսրա Մելիքի մոդ,
Դու լը մարդու ճանչըցի, մարդու հետ շըփվի։
Խրնգրվի՝ բա՛լքի բան մ՛ ել մըր խարջ պաքսըցուս.
Մրր խարճ շադ ա՛, մենք աղքատ ինք.
Կը տեսնի՞ս, մենք չկը՛ռնանք, տանք։
Ենդըրնե առ թամք մի, գա՛մ մի,
Զա՛րգ Քուռկի Ջալլադի վըրեն,
Հեձի՛, Յուր գ՛ուզիս, գնա։

10. Մհերը Մսրա Մելիքի տանը. Մսրա Մելիքը հյուրասիրում և Մհերին, ախպերանում և նրա հետ յեվ Սասունն ազատում հարկից

Սաբախտան Մհեր Յելավ
Արմաղանին ըսեց.— Նա՛նե,
Մեգ-երգու հաց ընձի բեր,

Դնեմ գոգիս, յելնիմ երթամ,
Երգու հաց դրեց ուր գոգին,
Քուռկի Ջալլադին հեծավ։
Սաբախտան հեծավ, յիրկուն հասավ Մրարր։
Մրարա Մելիք ուր գուռ բինակ դաշի վըրեն նստուկ եր։
Տեսավ որ՝ հեռվանց ձիավոր մի գ'իկա.
Ինք խոճա յամպրոց մ' եր նստուկ ձիու վրրեն,
Եդ ձին փոթորկի մ' պես գ'իկեր։
Եգավ, հասավ, որ բարեվ տվեց,
Մրարա Մելիք եդոր դեպքից գարդընդավ,
Ձկը՛ոցավ շիտակ բարեվ առներ ուր վախից.
Մելիք ուր մտկի մեչ ըսեց.
«Մըգա՛ր հըմլա մարդ կ'եղնի՞ աշխար».
Շուտ հրամայեց.— Ձին բռնե՛ք։
Ձին բռնին, Մհեր յիճավ։
Մհերին առավ Մրարա Մելիք, յելավ ուր պալատ.
Ետեխ նոր բարեվ ճիա եգավ,
Հարցուց.— Դու վո՞րտեխացի իս.
Ըսեց.— Յես սասունցի իմ,
Քեռի Թորոսի խարգեն իմ։
— Հա՜, ըսեց, իմ հոգի մեչ որ կը նստիք, դո՞ւ իք։
Մհեր ըսեց.— Մենք ինք։
Շատ սիրով ընդունեց Մհերին՝
Պադվեց, կերցուց, խըմցուց, միտկ երեց.
«Իդոր ջընսեն որ մըր ազկի մեչ չընգնի,
Եդոնք գ'ելնին, իմ ազկի քոք կը կըդրինն»։
Ջունքի Մրարա Մելիք գիներ,
Որ եդոնք խաչապաշտ ին, խաչ կը պաշտին։
Յելավ Մրարա Մելիք, գնաց դեմի ուր տուն։
Մրարա Մելիք ուր կնկան ըսեց.
— Կնի՛կ, դու քրգի կը գարդարիս՝
Լուն պադի քու քթեն, հազար կրդոր եղնի։
Ըսեց.— Յընչի՞, Մրարա Մելիք։
Ըսեց.— Եդ խոնախ որ եգեր ա՜,
Յոթն որ քրգի բրդի խոնախ եղնի,
Յոթն որ քու ոթախ բրդի պառկի։
Մհեր ճամպեց կնկա մոդ, պառկավ։
Մըշկըներուն կանչեց, ըսեց.

— Քուռկի Ջալլադին կը քաշէք խըսըրխներու վըրեն։
Մըսրա Մելիք որ եդպեստ ըսեց,
Քուռկի Ջալլադին քաշեցին խըսըրխներու վրեն։
Կնիկ Մհերից ճնաց երեխով.
Խըսըրխներն ել Քուռկի Ջալլադից բռնեցին։
Յոթն որ որ Թրմմավ, Մելիք ըսեց.
— Մհեր Ջան, յես դու ախպեր ինք.
Յես շուդ մեռա, իմ երեխեք դու տանիս, պալիս.
Դու շուտ մեռար, քու երեխեք յես բերիմ, պալիմ,
Որ ուրիշներ չըսին՝ ախպեր չունի,
Եթում ա մացած ինոնց ճժեր։
Մադներ կդրին, արուն արնին խառնեցին,
Ու խրմեցին, եղան ախպեր։
Ըսեց.— Մհեր Ջան, քըզի ինչ պակսութեն կա։
Ըսեց.— Վալլահ, թամք մի տաս,
Ջըրգիմ Քուռկի Ջալլադի վըրեն.
Դամ լը տաս, ջըրգիմ բերան, հեձնիմ,
Առանց թամքի լաձք չունի։
Հրամայեց՝ տվեցին թամք մի, գամ մի.
Ջըրգյեց Քուռկի Ջալլադի վըրեն։
Մհեր յելավ հեձավ ուր ձին,
Ըսեց.— Մըսրա Մելիք, ճնաց բարով։
Ըսեց.— Մհեր Ջան, ինչքան որ քըզի խարճ կա,
Յըմեն բաշխեցի քըզի։
Ես հողեր յըմեն քուշն ա,
Գնա քըզի համար՝ կիր, խմա, վայելա։

Մհեր ընգավ ճանապա.
Ընգավ ճանապա, եգավ, հասավ Սասուն.
Եգավ, հասավ Սասուն՝ քեռին դուռն ա։
Բարեվ տվեց քեռուն.
Քեռին բարեվ առավ։
Ըսեց.— Մհեր, լաո, իմալ ա։
Ըսեց.— Քեռի, ողրթ ա.
Իդա թամքի մեչ իմալ բոհաթ կը նատի,
Ըսկի մարդու վոռ չցավցու։
Քեռին ըսեց.— Մհեր, լաո,
Ըսկի մըր խարջ չպակսըցուցիր։

— Տո, քեռի, ինչ կ'ըսիս, ըսեց,
Շադ աղեկ մարդ ա Մըսրա Մելիք.
Խարջ իրմեն բաշխեր ա ընձի.
Եդ հոգերու տեր մենք ինք,
Ըսեց՝ Գնա, կիր, խմա, վայելա քըզի,
Ետեխ ըսեց.— Քեռի, գինաս,
Յես Մըսրա Մելիքի հետ ախպեր իմ եղի,
Մենք ուխտ երեցինք, արուն արնին խառնեցինք.
Որ յես շուդ մեռնիմ, ենի իմ երեխեք տանի, պայտ.
Ենի շուդ մեռնի, յես բերիմ ենու երեխեք, պայիմ,
Որ ուրիշներ չըսին՝ մացած ին եթումե

Գ.

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՈՐՔ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

11. Միհրի վոդիներ Դավիթն ու Մանուկը Մսրա Մելիքի տունը. Դավիթը բռնում, խոսում է Մելիքի միրուքը. Մելիքի վախը նրանից

Մհեր կը հեձներ, կ'երթեր ուրին նեհրութենեն.
Քեռին յելավ, միտկ գրեց Մհերին կարքելու,
Եգավ, Մանգկերտու բերգեն
Ախճիկ մ' յուզեց, տարավ Մհերին,*
Քեռին կարքեց Մհերին,
Չորս տարի ընցավ, չընցավ,
Մհեր ընգավ, մեռավ:**
Մհեր որ ընգավ, մեռավ,
Զեն ի ձեն յելավ, գնաց,
Հասավ Մըսրա Մելիքին.
«Զրսի՛ս, քու ախպեր մեռեր ա,
Երեխեք լը մացած ին անտեր»,
Յելավ ճամփեց ուր զավակներ.—

---

* «Ախճիկա հոր անուն մոռցեր իմ, Իշխան կ'ըսեն, ամա անուն մոռցեր իմ, Ախճիկա անուն լը մոռցեր իմ». Ծանոթ. ասացողի Կ. Մ.-Ո.

** «Մհեր սկի կռիվ չերեց, գինաս». Ծանոթ. ասացողի Կ. Մ.-Ո.

Երկու տղայ եր Մհերին՝
Մեգի անուն դրած ին Դավիթ,
Մեգին լը՝ Մանուկ,—
Առավ, տարավ Մըսրա Մելիքին։
Մըսրա Մելիք կը պալեր տղեկներուն։
Երգու-իրեք ամիս որ մրնաց,
Տղեկներ սովրան Մըսրա Մելիքի վըրեն.
Կ'առներ, կը դներ ուր չոքին,
Կը խաղցուցեր տղեկներուն։
Մելիք որ կը խաղցուցեր,
Դավիթ ձեռ կը թալեր իդոր մուրուք.
Որ եդոր բիլագ չըրոներ,
Կը քաշեր, չանգախաբ կը պոկեր, բերեր ցած։

12. Մըսրա Մելիքը փորձում է Դավթին յեվ Մանուկին կրակով յեվ ջոսկով

Թե հինգ որ, թե տասն որ յեգեվ՝
Յելավ, հայտնեց ուր իշխաններուն,
Ըսեց.— Իշխաններ, ինչ կ'ըսեք դուք.
Իդա տղեկներ յես բերեր իմ, կը պայիմ.
Եդոնք մկաուց ձեռ կը թալին իմ մուրուք.
Որ իդոր բիլագ չըրոնիմ,
Ջիմ մուրուք կը լոպկին, կը բերին ցած։
Յեգեվ իդոնք չելնին, ձեռ թալին իմ մուրուք։
Արեք, իդոնք սպանինք։
Բա, դու ինչ կ'ըսիք։
Մեգ ըսեց.— Երեխա յին չփա'մին։
Մեգ ըսեց.— Կը փա'մին։
Մեգ լե ըսեց.— Դու չգինաս,
Եդոնք հաբի յեփ եղնի,
Ձեռ կը թալին քու մուրուք։
Մարդու մեգ լը՝ բարեխիղճ եր, ըսեց.
— Ձանըմ, երեխայ ին, ինչ գինան եդոնք։
Երեխեն ձեռ կը թալա մարդու մուրուք, բեղեր.
Մուրքի, բեղի հետ կը խաղա։
Բերեք, փորձ ենենք, ըսեց.

Թա՛ փա՛մա՛ն, երեխա չին, կը սպանինք.
Թա՛ չփա՛մա՛ն, երեխայ ին,
Յընչի՞ կը սպանիք մարդու երեխեք։
Մելիք ըսեց.— Ի՞նչ փորձ ենինք։
Ըսեց.— Բերե՛ք, քանի մի բուռ ոսկի մի կողմ դնինք,
Քանի մի բուռ փալուգի քո՛զ շըռշրլան մեղել կողմ.
Թա՛ ոսկի՞ն վերուցին, երեխա չին.
Թա՛ կրա՛գ վերուցին, երեխայ ին.
Յընչի՞ սպանինք մարդու երեխեք։
Դրին ոսկի, փալուգ, Թողեցին Մանուկին.
Գնաց, կ՚երթեր դեմի ոսկին։
Հրեշտագ Ասծուն Յիչավ, ոլրրեց դեմի կրագին։
Գնաց, ձեռ զա՛րդեց կրագի մեչ,
Կրագ կպավ, մատ վառավ.
Մատ որ վառավ, մատ զա՛րդեց բերան։
Կրագ կպուկ եր մատին,
Իդոբ մռութն ել վառավ.
Հա՛րի Յընցուցին, մռութ վառավ, խոռվավ։
Ետեխ մնաց Խոր Մանուկ իդոր անուն։
Են մարդ վերցուց ըսեց.
— Ջա՛նըմ, մարդու մեգ տղեն երիք այիրլու,
Արեք, մեգելին մ՚ենեք.
Ճիժ ին, չփա՛մին. ի՞նչ գ՚ուզիք։
Եդմալ մընա՛ց։

13. Քեռի Թորոսը Մարա խաչապաշտների նամակով գնում և Մարր յեվ բերում յերեխաներին Սասուն

Քանի մը տուն ջուլյակ կար Մըսրա մեչ.
Ուրանք լր խաչապաշտ ին.
Յիրկնեց կը ժողվին մեդ տուն,
Գողտուկ ուրանց աղոթք կ՚ենին։
Եդոնք լսին եդ ձեն, ձուն,
Թե Քեռի Թորոսի ճժեր պրգի սպանին.
Յելան ուրանք ժողով երեցին,
Թուխտ մի գրեցին Քեռի Թորոսին,
Տվին ջահել տղի մի ձեռ, ըսին.

— Կ'երթաս Սասուն, կ'իդաս Քեռի Թորոսին.
Յիրկուն հասնիս, յիրկուն գա,
Լուսուն հասնիս, լուսուն գա։
Տղեն ընգավ ճանապա, գնաց դեմի Սասուն։
Գնաց, հասավ Սասուն,
Հարցուց.— Քեռի Թորոս վուռնրն ա։
Տարան եղ տղին Քեռի Թորոսի մոդ։
Տղեն բարեվ տվեց, կանգնավ.
Քեռի Թորոս բարեվ առավ։
Հանեց Թուխտ ուր ծոցեն, տվեց Քեռի Թորոսին։
Թըխտի մեչ գրուկ եր՝
«Քեռի Թորոս,
Քու գլուխ յոդի տըզկիս, յուդա կընտիս,
Քանի քու տղեկներ զայ չերթած ա,
Բաղքի պըրձուս, տանիս Սասուն»։
Քեռի Թորոս՝ որ նամակ կարդըցավ, ըսեց.
— Ա՛րմաղան, վեցոդնե լաջգին քաշա դուս։
Ըսեց.— Դու տղին կը պադվիս,
Հաջրի յես կը դառնամ։

Սարախտան սհաթի ուքին հեձավ,
Յիրկուն յիճավ Մըսըր։
Մըսրա Մելիք դուռ նստուկ եր։
Ըսեց.— վա՜յ, բարով, Քեռի Թորոս։
Ըսեց.— Աածու բարին, Մըսրա Մելիք։
Ըսեց.— Քեռի Թորոս, խե՞ր ա,
Հըմլա ապըլթախ եգեր իս Յուդա։
Ըսեց.— Փառք Աածուն խեր ա, բան չկա.
Մըսրա Մելիք, ըսեց, վալլահ,
Եղ տղեկներու մամ դիշեր-ցերեկ գ'իլա.
Եգեր իմ, տղեկներ տանիմ,
Վախտ մի ճնան ուրենց մամու մոդ,
Բաղքի մամու սիրտ լոհաքի,
Ելի կը ճամպիմ, գ'իկան, դու կը պայիս.
Վուռը կա ընձի, որ տանիմ, պայի։
Մըսրա Մելիք տվեց տղեկներ.
Քեռի Թորոս առավ, եգավ։

14. Դավիթը նախրորդ. Քեռի Թորոսի այցելությունը Դավթին

Բերեց, մեդ վախտ մի մացին։
Քեռի Թորոսի երեխեք շաղըցան։*
Դավիթ լը եղավ տրսվերգու տարեգան։
Դավիթ որ եղավ տրսվերգու տարեգան,
Եղավ յոթ շենք իդոր բոյ։
Իդահախ կը փա'մեր վըր ուրին.
«Որ ախկատ ինք, մըղի բան չկա»։

Եդ տարին գարուն թաժա բացվեր ա̈.
Դավիթ ըսեց.— Քեռի, գարուն ա̈.
Հոդախ, մըշկու վախտ ա̈, ըռընչպրրու վախտ ա̈։
Մենք քառսուն ճանով լըցվեր ինք իգա տուն,
Խո̇, դու պարտագան չի՞ս, մըղի զըմեն պայիս։
Յելի՛, մըղի տուր հորթարած, նախրորդ, հովիվ, մշակ,
Դատինք, աշունք բերինք մըր աշխատանք,
Քոմմինք վ՛իրարու, ուդինք, ապրինք։
— Հա̇, ըսեց, Դա̇վիթ, Ասվաձ քու արեվ սպանա,
Հըմալ դու եղար ընձի աշխատող...
Ըսեց՝ Դա̇վիթ, քըզի տանիմ Դաշտու Պադրիալ,
Տամ քըզի Յոդի նախրորդ, հոդախ,
Դու առնիս քու հախ՝ կոտ մի կորեկ.
Առնիս, բերիս մըր տուն,
Յես տանիմ ջաղաչ, աղամ,
Բերիմ քու մամ Արմաղան շաղա,
Թըխա, Թունդրեն հանա, քըզի տա,
Վերցուս, հաց մի տաս ընձի, ըսիս՝
Քեռի, եդ իմ աշխատանքն ա̈, ա̇ռ իդա հաց, կի՞ր,—
Ելի չըմ հա̇վդընա, ելի չըմ հա̇վդընա։
Ըսեց.— Քեռի, որ մա̈դա̈մ եդմալ ա̈,
Յելի, ընծի տար, տուր նախրորդ։—

---

* «Քեռի Թորոսը կը պահեր և Սանտսարի յերեխաներին։ Նահապետական տուն եր,— հաճախ 100-ներով եյին միասին մի տան մեջ ապրում. լինում եր մի տան մեջ մոտ 50 որորոց. մի տան մեջ ապրողների աղջիկն ու աղան կը հասնեյին իրար». ծանոթ. ասացողի։ Կ. Մ.-Ո.

Ե՛հ, Յինք խամ տղա յեր, դուս չելած են.
Քեռին պըդի տաներ, տար նախրորդ յա հոդախ։
Յելավ, առավ Դավիթին, գնաց Դաշտու Պադրիալ։
Տարավ, տվեց նախրորդ Դավիթին։
Քեռին Յելավ, թողեց Դավիթին,
Եգավ, հասավ Սասուն։

Դարուն եր. խըլղի մալ գրբուն եր...
Անձրեվ եր, թացութեն եր, ախլ եր...
Մալեր կը չըքվին տիլ, կը պաղին.
Որագան յոթ-ութ հաղ կը մնեն։
Դավիթ կը քաշեր, տլեն կը հաներ,
Ուր փեդ Յոդներ ուրանց կը կաբեր,
Փեդ կը մդուցեր մալերու Յոդներ,
Կը դներ փիճին, կը բերեր գեղ.
Կը բերեր տիրու տուն, կը Յարցըկեր,
Կընկտոց կ'ըսեր. — Նանե՛, ձըր կովեր ղըբուն ին,
Հա՛վեն ցուրտ ա՛, կը պաղին, կը տըլվին,
Չըն կը՛ռնա Յելնի, կը փիդնան, մե՛խկ ին։
Իդահախ կընկտիք կ'որշնին Դավիթին.
— Շատ դատի՛ս, շա՛տ ուդիս.
Քիչ դատի՛ս, շատ ուդիս։
Ասվաձ քու արեվ պայա.
Որ դու չեղներ Յըս տարի,
Մըր կովեր Յըմեն կը փիդնեն։
Իդահաղ Դավիթին կը պադվին,
Հաց կ'ենին, կ'իդեն, ձվաձեղ կ'ենին,
Հավդիթ կ'իդեն Դավիթին,
Շատ խորոտ մուղաթ կ'եղնին։
Դավիթ արծրցուց մալեր հա՛րի հունիս, հուլիս.
Մալեր Յըմեն խըլավցան։
Իդահաղ մալեր մող կ'ենին.
Ել Դավիթ չկը՛ռներ վաղներ,
Որ հասներ, կով դարցուցեր։
Քար կը վերցեր, զա՛րգեր կովուն.
Քար կը քիսներ, կով կը փիդներ.
Կը բըռներ, կը մորթեր.
Որագան երգու-իրեք հաղ կը մորթեր,

Կը դներ ուր թեվին, կը բերեր տիրու դուռ,
Կ'ըսեր.— Ձըր կով փախավ,
Քար թալեցի, քիսավ, փիծավ։
Իգահաղ կընկտիք ձեռքված են,
Կ'անիծեն Դավիթին, կ'ըսին.
— Լա՛ո, շա՛դ դատիս, քի՛չ ուդիս,
Քիչ դատիս, ըսկի՛ չուդիս,
Ասվաձ քու արեվ սպանա, գա՛նջ ու բուրջ եղնիս։—
Հըմը, ահու ջիխշընեն, բան մ' ըսեն Դավիթին։

Մեգ որ քեռին սաբախտան ժելավ.
Դավիթ հըմալ ընգավ քեռու միտկ։
Քեռին ըսեց.— Ա՛րմաղան,
Տղեն հըմալ ժընգեր ա՛ իմ միտկ ժըսոր,
Բըդի երթամ, տղեն տեսնիմ ժըսոր։
Արմաղան ըսեց.— Տնա՛շեն,
Իրեք ամիս ա՛՝ տղեն տարեր իս, տվեր իս նախրորդ,
Ըսկի չըս ե՛րթա թասալին.
Տեսնաս՝ բոբի՛կ ա՛, տըկլո՛ղ ա՛,
Ծարա՛վ ա՛, յա անոթի՛ յա։
Քեռին ժելավ, եգավ դեմի Դաշտու Պադրիալ։
Եգավ, տեսավ, որ նախիր են կողի տակ կ'արծա։
Ըսեց. «Ել գեղ ի՛նչ ենիմ, նախիր ետեխն ա՛.
Երթամ, տղեն տեսնամ,
Թողիմ, դառնամ, երթամ»։
Եգավ, մոգիկցավ նախրին։
Նախրից երինջ մի, մող երեց, փախավ։
Ամա՛ քեռին ել մոդիկ եր նախրին։
Դավիթ ժընգավ երինջի ժեդեվ.
«Հո՛, Ձա՛լե, հո՛, Ձա՛լե»...
Տեսավ որ՝ երինջ կը փախնի,
Ինք չկը՛ռնա հասնի, դարցու,
Կզավ, որ քար վերցու գետնեն, ղա՛րգա՛,
Քար թռավ գետնեն, ընգավ Դավիթի ձեռ.
Որ ղա՛րգեց, քիսավ կովու կըշտին,
Են կըշտեն դուս տվեց, գնա՛ց.
Գնաց, ընգավ քեռու ժառեչ, ինչ որ զուրղուշնի։
Քեռին կզավ եդ քար վերուց.

Վերուց, դրեց ուր ջեբ։
Դավիթ հասավ քեռու ձեռ բռնեց.
— Քեռի, ըսավ, եդ քար Յո՞րի վերցիը.
Յես քու հոքուն մեռնիմ, քեռի։
— Տո՛, տղա՛, լա՛ո, Ասվաձ քու արեվ սպանա.
Ա՛խր, դու կը զա՞րգիս, խըլղի մալեր կը փիծուս.
Ա՛խր, խեղճ ին, մեխկ ին, ռա՞նչպա՞ր ին։
Մարդ կա՛, կով մի ունի,
Մարդ կա՛, երդու կով ունի.
Ա՛խր, լուսուն քըզի կոդ մի հախ չիտան։
Քիչ ըմ խրադեց, լավա Յընգավ Դավիթին,
Թե.— Լա՛ո, մը ղա՞՛րգի, խըլղի մալեր մը փի՛ծու...
Ըսեց.— Քեռի, որ դու լավա Յընգար,
Ել չրմ զա՞րգի խըլղի մալեր.
Թըխ փախնին, երթան, կորին,
Անիձիմ տիրու պաբ...
Դարցավ, Յինք լավա Յընգավ Քեռի Թորոսին։
— Քեռի, ըսեց, յես քու հոքուն մեռնիմ,
Ողորմի՞ քու պաբուն, եդ քար Յո՞րի վերցիր։—
Որ դրեր եր ջեբ, Դավիթ կը կասկաձեր,
Թե՝ Յորի՞ վերուց եդ քար։—
Քեռին ըսեց.— Լա՛ո, Դա՛վիթ, եդի կեծկի քար ա՞.
Ինչ թրի բերան որ ջըրիս եդ քարով,
Թալիս ապառաժ քարեր, կը կըդրա.
Դավիթ դարցավ քեռուն, ըսեց.
— Քեռի, որ եդմալ ա՞,
Եդ քար պայա, մըզի պետկ գ՛իկա։—
Դավիթ շատ շառլաթ եր, Մհերի պես չեր։—
Քեռին Դավիթին տեսավ,
Դարցավ, գնաց դեմի Սասուն։

15. Ընկեր նախորդները, ժամի հարիսան յեվ ավազակ դեվերը

Մնաց. եգավ, Յելավ Ասվարաձին։
Ասվարաձնա կիրակին պադարակ կ՛ենին,
Պադարակ որ կ՛ենին, դեղ տեխ հա՞րիսա կը գնին.
Հա՞րիսա որ կը դնին, ժամուց որ դ՛ելնին,

Գ՛իկան պագարակի ախրու տուն, հա՛րիսա կ՛ուգին։
Յոթ գեղի նախրորդ քոմմած են, եգած են Դավիթի մոդ։
Նախրորդ ըսին Դավիթին.
— Ա՛խըր, ըսոր պագարակ ա՛ գեղ.
Վուո՛ր երթա, մըղի հա՛րիսա բերա,
Փշու մ՛ մի հա՛րիսա ուգինք։
Դավիթ վիրն որ ըսեց, չգա՛ցին։
Դավիթ ըսեց.— Որ հըմալ ա՛,
Դու մուղաթ կեցեք նախրին, յես կ՛երթամ.
Իմ գեղեն հըմալ հա՛րիսա բերիմ, որ կուշդ մ՛ ուգինք։
Հրմա մալ մի կորեր ա՛ իմ նախրեն,
Ձեր վեցնի գլուխ լը կը կըգրիմ։
Դավիթ որ եդոնց այ տվեց,
Եդոնք լը այու կը նստին։

Դավիթ որ եգավ դեմի գեղ,
Քառսուն հարամին եգավ, զա՛րգեց Դավիթի նախրին.
Քառսուն անծին երինջ ջոկին, տարան։
Եդ նախրորդներ լը չկը՛ռցան այու բտն ըսեցին,
Ուրանց լեզուն բերնի մեչ չորցեր ա՛։
Դավիթ գնաց գեղ, հարցուց.
— Վի՞ր տուն ա՛ պագարակ։
Սալրխ ավին Դավիթին,
Թե.— Շտե՛, Մելիքի* տուն պագարակ ա՛։
Գնաց Մելիքի տուն, մտավ ներս։
Հըլը ժամեն չելաձ ա՛։
Հարս մի կա Մելիքի տուն։
Դավիթ ըսեց.— Հա՛րս,
Մենք յոթ գեղի նախրորդ քոմմեր ինք մեդտեխ.
Դե՛, գեղի ախկատ որ կա,
Գեղի նախրորդն ա՛, հոդախն ա՛.
Ձեր հոր խերին՝ փշու մի հա՛րիսա լից,
Տանինք, քոմմինք, ուդինք։
— Թաո՛ւ, հըլա՛ ժամեն ժելնին,
Գան, հաց որշնին, հաց ուդին.
Մնացող ժըլնամ, տարե՛ք, կերեք։

* Անունն ասացողն ե դրել.— «Եսիկ յես իմ եվելցրել»։ Կ. Մ.-Ռ.

Ըսեց.— Հա՛րս, մնացող շան կ՚իդան։
Տեսավ, որ հարս չի՛դա,
Կղավ, կարաս քա՛շեց
Դրրեց թընդրա պըռկին.
Չըվան մի գդավ տուն,
Բերեց, թալեց կարսի վոռ,
Վերցուց զկարաս, շալգյեց.
Վերցուց տաշտ ըմ, դըրեց ուր գլուխ.
Վերցուց յոթ հադ շերեփ,
Ըսեց՝ իդալա մըզի գդալ,
Վերցուց գաստե մ՚ երգու հաց,
Զա՛րգեց ուր ընթի տագ.
Վերցուց փարխըջով յեղ,—
Դըուկ եր թունդրա պըռկին,—
Վերցուց ուր ձեռ, ըսեց.
— Ասված ձըր խեր խապուլ ենա՛։
Հարս դարձավ Դավիթին, ըսեց.
— Քաքիմ հրմալ խերի մեչ,
Ել ինչ մնաց, որ ինչ խեր խապուլ եղնի։

Դավիթ զա՛րգյեց գնաց չոլ։
Հասավ ընկեր նախրորդի մոդ,
Յիջուց կարաս, դրեց գետին,
Բերեց տաշտ, դրեց գետին,
Հա՛րիսեն լիք լցեց,
Յեղ լը շերփով լցեց,
Ու բոռաց ընկեր նախրորդին.
— Տղեկնե՛ր, արե՛ք, հա՛րիսա կերեք։
Ե՛յ, Յորի՞ չըք Յի՛գա։
Տղեկներ աու* ցամքած են Յոգաց վրրեն։
Եգան մոդիկ, ըսին Դավթին.
— Դա՛վիթ, քրզնե պայինք,
Աստըձուց ի՞նչ պայինք։
Դու որ Յելար գացիր դեղ,
Քառսուն հարամին եգավ, զա՛րգյեց,
Քառսուն հադ անծին երինջ՝

* Աու=ահու։ Մըջի «հ» դառնում է «յ» և յերբեմն դուրս է ընկնում։ Խմբ.

Ջոկեց քու նախրեն, առավ, տարավ։
Ըսեց.— Բան չեղնի, տղեկնե՛ր.
Արե՛ք, նստե՛ք, կուշտ ճաշ ուդինք։
Եդ նախրորդները առ չկր՛ըցան ճաշ կերան։
Դավիթ քաշեց եդ տաշտ ուր յառեչ,
Տաշտ ճաշ կերավ ու յելավ.
Ըսեց.— Տղեկնե՛ր, գինաք վո՛ր աեխով աարան։
Տղեկներ Դավիթին ըսեցին.
— Հա՛-ա՛, իդա սարով գա՛ըգին, ընցան։

Դավիթ բռնեց եդ մալի ուղն ու գնաց։
Դավիթ յելավ եդ սար, շրճավ,
Գնաց, մեդ գեղուգի մեչ յիճավ.
Երինջներ ետեխ կ'արծան սարի կող։
Երինջներ որ տեսավ, ճանչըցավ.
«Հա՛, ըսեց, վալլա՛հ, եատեխն ինն։
Դավիթ ուրախցավ, գնաց, մոդիկցավ,
Տեսավ, որ մի մեծ մըղարե մ' կա։
Մդավ ներս, տեսավ, ինչ տեսավ.—
Մեգ երինջ մորթած ին.
Վռւոր ուրան քա՛ըար կ'ենա,
Վռւոր ուրան խալի կ'ենա,
Վռւոր ուրան խաղ կ'ըսա,
Վռւոր ուրան քներ ա՛...
Քեֆ-ուրախութեն կ'ենին։
Դավիթ որ եդ տեսավ,
Դավիթի յաշքեր դարցան։
Դավիթ դարցավ յելավ դուս,
Մեգ գնար մի գրկեց,
Բերեց դրեց դռան դեմ,
Որ եդոնք չելնին, չփախչին.
Բռնեց եդոնց, մեգ-մեգ վիդ ոլըրեց,
Կդրեց, քալեց մղարեն դուս։
Դավիթ տեսավ. ինչ տեսավ.—
Եդ մղարեն հրմալ լիքն ա՛,
Ա՛ըգինա յա՛ եդ մղարեն։
Յելավ բերավ գընար մի, գեմ տվեց դռան,
Որ հիցուն մարդ դան, չկը՛ոնան շրճին դեա։

Յելավ խառնեց երինջներ ուր Յառեչ...
«Հո՛, հո՛, հո՛».—քշեց, առավ, եգավ։
Նախրորդներ որ տեսան՝
Դավիթ սարեն Յիճավ, եգավ,
Եդ երինջներ քշեց, բերավ,
Նոր եգոնց չանգեք բացվավ,
Որ կոցան ճաշ ուդեն։
Չանգեք Դավիթի աուն փակվեր են։
Յելավ, ուր նախիր խառնեց,
Արավ ուր Յառեչ, քշեց, եգավ ուր գեղ։
Հըլա երգու-իրեք սրհաթ կար,
Որ նախիր տուն բերին.
Երգու-իրեք սըհաթ Յառեչ բերեց։
— Առեք ձըր մալ, ձըր նախիր լե.
..... եդոնց ախրու պաբ։
Ել ձըր նախիր չըմ պա՛յի։
Յելավ թողեց, գնաց Սասուն։
Կընկտիք ձեռքվաձ են կ'անիծին Դավիթին.
«Շա՛տ դատիս, քի՛չ ուդիս,
Քի՛չ դատիս, ըսկի՛ չուդիս,
Գա՛նջ ու բուրջ մեռնիս»։
Դավթի ըսկի հոք չեր, ինչքան կ'անիծին։
Թողեց, գնաց Սասուն, ուր տուն։

16. Դավիթը Քեռի Թորոսի յեվ տանեցիների հետ տուն և կրում դեվերի մեծ գանձը

Եդավ, հասավ Սասուն,
Ըսեց.— Նա՛նե, մի ջուլ տուր, քնիմ։
Արմաղան ըսեց.— Լա՛ո, ձըր տուն ջուլ Յո՛ւստ ա՛.
Կդըրտուկ խարարի կտոր կա ետեխ,
Տա՛ր, թալ սրրախ, քնի։
Վերցուց Դավիթ խարար,
Տարավ, թալեց սրրախ,
Գլուխ զա՛րգյեց գետին, քնավ։
Իրեք որ Դավիթ քնավ.
Քնավ գիշեր-ցերեկ, քուն առավ.
Քուն առավ, սարախտան Յիմցավ.

Քեռին հրմալ ա հերսոգի,
Գ'ուզա, որ Դավիթին ձեձա,
Հրմա չխիմիշի ձեձա։
«Թա իդա չորս ամիս գնաց, աշխադավ,
Թողեց, ձելավ, եգավ եդ ծուռ,
Ըսկի կոդ մի հաց չիդան,
Որ գնանք, բերինք, ուդինք»։
Քեռին հերսոդեր ա, սրախի մեչ կ'երթա, դ'իկա...
Դավիթ ձիմցավ. հարց երեց քեռուն.
— Քեռի, մենք տնեն քանի՞ մարթ ինք։
Ըսեց.— Լա՛ո, Ասվաձ քըղի վերու,
Քրղնով քառասուն մարթ ինք։
Ըսեց.— Քեռի, ողորմի՞ քու պարուն.
Մըր տնեն քանի՞ տղամարթ ինք։
Ըսեց.— Տղա՛, լա՛ո, չե՞ կ'ըսիմ՝
Ասվաձ քըղի վերու,
Քրղնով քառասուն կը թըմմինք։
Ըսեց.— Քեռի, ձելեք, ձելեք,
Եդ ձերսուն ին մարթ հա՞դ ընձի երթանք.
Թը ձեր ձերսուն ին ջըվըլներ ոսկի, արծաթ լի՞,
Զաթի մըր մալն ա, կը բերինք, կ'ուդինք.
Թա չլըցի՞, դուք ձերսուն ին մարթ
Զընձի սպաննեք, ձելեք, արեք տուն։
Քեռին սուդ ըսելուց կը խըրդեր։
Ըսեց.— Լա՛ո, ձելեք երթանք.
Որ սուդ եղավ, զԴավիթ կը սպաննինք,
Կը դառնանք, գ'իկանք մըր տուն։

Ձելան, ձերսուն ին ել կանգնան,
Առան մեգ-մեգ խարար,
Ձընգան Դավթի ձեգեվ, գացին։
Գացին. Դավիթ գնաց, գնաց,
Գնաց, հասավ մըղարի դուռ։
Մըղարի բերնի քար վերուց, թալեց,
Առավ քեռին, մդավ մըղարին մեչ։
Քեռին որ տեսավ ետ ոսկի, արրանք,
Ուրախութենեն ձոդներ գետնեն կըդրավ։
Ետ քառասուն հոքին ոսկին կըրին,

Տարան, լըցին Սասուն, ուրանց առուն։
Քեռի Թորոս հարըստացավ,
Մալ առավ, ոչխար առավ.
Դավիթ լը ձի մի առավ...
Կը հեձներ, կ'երթեր նեճրութենի, գ'իկեր.
Ուրիշ աշխադանք չեներ։
Սասուն հըմալ եղավ, որ կը ճըճեր։

17. Դավթի վորսորդությունը յեվ գութան անելը

Քեռի Թորոս տեսավ որ՝
Դավիթ շատ շառլաթ եր,
Դավիթ արունխում եր.
Ինք հեռատես մարթ մ' եր, կ'ըսեր՝
«Տավիթ երթա, Մըսրա Մելքի Ծովասարին ռաստ գա,
Պրդի ենդոր Ծովասար քանդա.
Եդ մարթ լը գա ուրանց վրրեն կրռիվ»։—
Ինք քըչվոր եր, կը վախեներ.—
Եդոր համար կը խափեր, կ'ըսեր.
— Դավիթ, լա՛ո, արեվելք դնա՛,
Հուսիսային դնա, հարավային գնա՛,
Արեվմուդ չերթաս.—
Ծովասար արեվմդյան եր ուրանց դեղից։—

Դավիթ կ'երթեր իրեք կողմ, նեճրութեն կ'ներ.
Արչ, գել, աղվես չթողեց,
Ջա՛նա՛վարնուն Ժըմեն ջարդեց.
Բադ, կռունգ սպանեց, ել բան մը չթողեց։
Մեդ որ շադ լարեց դես-դեն, բան մի ձեռք չընդավ,
Դարցավ, տուն եգավ, ըսեց.
— Քե՛ռի, քու հոքուն մեռնիմ,
Եդ արեվմուդ ի՛նչ կա,
Որ դու կ'ըսիս, մ'երթա,
Որ քըզի չվնասա, չզա՛րգա՛։
Ըսեց.— Դա՛վիթ, լա՛ո, կոտշով բոլոճ կա.
Հեռեվանց կը քաշե, մարդու կը կըլու։
— Ջա՛նըմ, ըսեց, կը զա՛րդե՞ մարթու,
Կը ջարդե՞, Ժեդեվ կը կըլու։

— Չե՛, Դա՛վիթ, հեռեվանց կը քաշե մարդկանց, կը կլու։
Դավիթ առավոտ Յելավ, ըսեց.
«Վալլա՛հ, իմ քեռու խոսք չպա՛յիմ.
Յես բըդի երթամ արեվմուդ։
Տեսնենք՝ կոտշով բոլոջ ի՞նչ ա՛,
Որ ընձի՛ բրդի քաշե, կլու»։

Դավիթ եգավ, եգավ, մի խելի ցածըցավ,
Տեսավ՝ բուղա մի գըմեշ,
Ուր պոչ թալի պառեկին,
Կը կըռկըռա ու կը փախնի.
Հոդաղ լը Յընդեր ա՛ Յեդեվեն։
Դավիթ որ տեսավ՝ գըմեշ կը փախնի, 'սեց.
— Կա-չկա, քեռու ըսած կոտշով բոլոջ ե՛դ ա՛։
Դավիթ կայնավ, նետ ու անեղ Յիճուց,
Որ զգըմեշ զարգա՛, սպանա։
Հոդաղ բոռաց, ըսեց.
— Ո՛ւ իմկնի Սասնա ծուռ, եդ ի՞նչ կ'ենիս։
Դավիթ ըսեց.— Կայնի՛, զա՛րգիմ իդոր, որ մարթ չկլու.
Կ'ըսին՝ մարթ-մուրթ կը քաշա, կը կլու։
Ըսեց.— Տնա՛վեր, եդի գըմե՛շ ա՛.
Ի՞նչ կոտշով բոլոջ, ի՞նչ բան։
Եդի գըմե՛շ ա՛, լձա՛ծ ա՛,
Յոթ-ութ ջուխտ լձա՛ծ ա՛ գութան.
Գութա՛ն կը վարին, վա՛ր կ'ենին։
Դավիթ եգավ, Յիճավ ցած.
Տեսավ՝ ոդորթ որ, յոթ-ութ գըմեշ լձած՝ վար կ'ենին։
Բարեվ տվեց մանճկըլին, ըսեց.
— Բարե՛վ քըզի, մա՛նճկալ։
Մանճկալ բարեվ առավ, ըսեց.
— Ասծու բարին, բարո՛վ եգար, Դա՛վիթ ջան։
Ըսեց.— Մա՛նճկալ, գու չկը՞ռնաք գութան քաշիք,
Որ իդա հայվըններ շոքուն-կրակին լձեր իք.
Լիզու ուրանց թալաձ են գուս։
Ա՛խր, մե՛խկ ին, խե՛զճ ին։
Ըսեց.— Իմկնի՛ Սասնա ծուռ,
Իդոնք ծուռ ին Յըմեն,
Մարթ լը գութան քաշա՛...

Որ ըսեց՝ Դավիթ ըսեց. — Մանճկա՛լ,
Յարձկա եդ կոտշով բոլոջներ,
Փշու մ՛ մի թրխ ըռհա՛թին։
Գութնի բնատեն վերուց,
Թալեց ուր փիճին ու քաշեց։
Քաշեց, քաշե՛ց երգու փաթ.
Փաթ մ՛ ել գնաց, եգավ, ըսեց.
— Մանճկա՛լ, ել խորունթ կը կրդրա՛ գութան։
Մանճկալ ողեր թողեց՝ խոր յընդնի։
Փաթ մ՛ ել գնաց, եգավ.
Եգավ, հասավ յարտի գլուխ։
Դավիթ բռնեց բնատի ճոթ,
Հըմլա մարմնդեց ու թալեց զեգ գութան։
Գութնի յրմեն մի կտոր աշխարք մի յելավ։—
Փրո Մխեն* կ՛ըսեր.
«Հերու բնատի ող մի եգավ, եգա՛վ,
Յընգավ Բըրսոյի* ջախչի ջրի մեչ,
Յես տեսա»... ծաղրու համար կ՛ըսեն։—
Մանճկալ ձեռքվավ անիձեց Դավիթին.
— Դավիթ, գա՛նջ ու բուրջ մեռնի՛ս,
Ասվաձ քու արեվ սպանա.
Իմ գութան թըրբեցի՛բ։
Դավիթ ըսեց մանճկալին.
— Իգա կոտշով բոլոջներ թըխ վախտ մի ըռհա՛թին,
Իմ հոր խերուն երթան, արձան.
Իդա շոքին լիգուներ թալած դուս,
Հրբա՛ մե՛խկ չին, խե՛ղճ չին եդոնք։

Ու յելավ Դավիթ, հեձավ ուր ձին,
Գնաց դեմի Մրսրա Մելիքի Ծովասար։
Դավիթ գնաց, տեսավ որ՝
Չորս բոլոր բադան ա՛ ետեխ.
Ուր մեչ ծառ, ճուղ, բաղ-բաղչա, կանանչ,
Ուր մեչ մեծ հավուզ շինուկ ա՛,
Ախպուրի պես մեչ ջուր կը գլգրլա, կ՛երթա։
Զա՛րգեց, դուռ կոդրեց, մդավ ներս.

---

* «Խաստուրցիներ են». ծանոթ. ասացողի։ Կ. Մ.-Ո.

Տեսավ Յրմեն ջանապրուց կապուկ ա՝
Արջուց, գիլուց, աղվիսուց, լապրսարըկուց,
Յրմեն ջանապրից կապուկ ա նախ։
Քանի մի հադ բոնեց, բսեց.
«Ջանըմ, կապուկ տեխ իմ ջոջոն լը կը բոնա.
Տղամարթ են ա, որ յարցրկա, նոր գարգա, վերու։
Դավիթ յարցրկեց, դարցավ գարգեց,
Բոնեց ուր սըրբխ լիք լցեց,
Դրեց հաուզի կուշտ,
Յինք մդավ հաուզ լողկրցավ,
Յելավ, ծառներու հով պառկավ, քնավ։
Դավիթ քնավ հարի ժամու չորս։
Յելավ, ուր ձին քաշեց,
Յելավ, սրբրխ թեվին քաշեց,
Յելավ յրնգավ ճանապա,
Յելավ եգավ դեմի Սասուն։

Յիրկուն արեվ պադեր եր, հասավ տուն։
Քեռի Թորոս դուռ կայնուկ եր։
Տեսավ որ՝ Դավիթ արեվմըգյան թարաֆեն գ'իկա,
Ուր թեվին մալ-նեճիր ա բերի,
Որ բսկի են մալ-նեճիր չբերեր եր։
Քեռին հարցուց.— Դավիթ, լաո, եդ յուստ գ'իկաս։
Ըսեց.— Քեռի, քու պարու աուն շինվի,
Դու բնձի կը խափիր, թե արեվմդյան մ'երթա,
Կոտշով բոլոջ կա, մարթ կը կլու։
Քեռի, գացի, տեսա՝
Կոտշով բոլոջ լձած՝ գուքան կ'ենին...
Ենոնք հայվանն ին, գըմեշ ին։
Գացեր իմ, Մովսասար մի կա,
Յրմեն ջանավարից կապուկ եր ետեխ։
Յես հարի Յիրկուն կը վաղնեմ,
Մեզ նեճիր չրնգնի իմ ձեռ.
Ընդոք տարած մալի տեխ կապած ա։
Քեռին բսեց Դավիթին.
— Դավիթ, լաո, կ'եղնի-չեղնի,
Եդ հարիֆի Մովսասրն իս գացե, քանդե։
Ըսեց.— Քեռի, վի՞ր Մովսասր։

Ըսեց.— Լաւ, եդ Մըսրա Մելիքի Ծովասարն ա՝
Եդ հոգեր ընդոր իրավունքին ա՝
Ըսեց.— Հացն ու դինին, Տեր կենդանին,
Լուսուն կ'ենիմ Դավիթի ավեր դԾովասար՝
Միգա՛ր ենի գա իմ գոան յախպին
Ուր Ծովասար չինե՛...
Միգա՛ր Դավիթ մեռե՛ր ա՝
Ու Դավիթ պառկավ, քնավ յիրիկուն.

18. Դավիթն ավերում է Ծովասարը

Քնավ, համա Դավթի քուն չառնի՝
Ել չավդրնա՝ յերբ լուսնա, երթա, քանդա՝
Աղոթքան չբացված եր, յելավ,
Երկրթեղեն գաշեց դես ու դեն, չրնգավ ձեռ,
Թունգրա վրեճի խարջրկաթ գոդցավ,
Չաբգեց ուր գոտին, յելավ, գնաց.
Գնաց, հասավ Ծովասար՝
Հրմալ քանդեց բադան եդ խարջրկթով,
Բադնի քարեր յրմեն մեգ մի աշխարք թալեց.
Քանդեց, լորընդեց, յրմեն մեգ մի ձոր յրնգավ.
Ծառներ յրմեն բրռնեց, քոքեն հանեց, թալեց՝
Ծառներ որ պրրձավ, եգավ, հաուզի մեչ լոգկըցավ,
Պառգավ, քնավ, բռնաթավ, յելավ.
Յելավ գեդ հաուզն ել քանդեց,
Յելավ, գիմեց, եգավ Սասուն՝

19. Մարա Մելիքը պահանջում է Քեռի Թորոսից Դավթի գլուխը յեվ հարկը

Զեն ի ձեն յրնգավ,
Զեն գնաց, հասավ Մըսրա Մելիքին.
Թե. «Զըս ը՛սի Սասունա գաղուրն եր,
Քու Ծովասար հրմալ ա քանդած՝
Ըսկի անուն ծառ չկա՝
Մըսրա Մելիք յելավ, իրեք հազ խավազ խրկեց,
Ըսեց.— Գացեք, տեսեք՝ ըղձրթ ա, թը՛ սուդ ա՝

Խավազներ եգան, եդ Ծովասարի աեխ իշկին.—
Որ վո՛չ բա՛դա՛ն կա, վո՛չ ծառ կա, վո՛չ հաուզ կա։
Նախիր գ'իկա, կ'արձա, կ'արձա՛,
Եդ Յախպըրի վըրեն կը նստի.
Եզեր ա՛ նախրրգընա։
Տեսան որ՝ քանդած ա՛, ըսկի բան չկա,
Դարցան, գացին, հասան Մըսըր։
Մըսրա Մելիք հարցուց.
— Տղա՛, լա՛ո, սո՛ւդ ա՛, ըղո՛րթ ա՛։
— Մըսրա՛ Մելիք, վո՛չ բա՛դա՛ն կա, վո՛չ ծառ կա, վո՛չ հավուզ,
Եղեր ա՛ նախըրգընա.
Մալ կ'արձա, գ'իկա եդ ջըրի վըա, ջուր կը խմա։
Մըսրա Մելիք հերսոդավ, հերսոդա՛վ,
Յելավ, յոթ հադ խավազ ճամպեց,
Ըսեց.— Խավազնե՛ր, կ'երթա՛ք,
Յիրկուն հասնիք, Յիրկուն կ'առնիք,
Լուսուն հասնիք, լուսուն կ'առնիք,
Քեռի Թորոսից կ'առնիք, կը բերիք՝

«Դավիթի գլուխ,
Խոր Մանուկի աջ բազուկ,
Քառսուն տարվա վերգին՝
Տարեգան քառսուն երինջ,
Քառսուն թոփ անլվա կտավ»։

Իրեք սհաթվա մեչ կ'առնիք
Ու կը դառնաք. չկա՛յնիք Յոնի։

20. Քեռի Թորոսը հարբեցնում և Դավթին, վոր նա չխանգարի իրեն Ծովասարի դեպքը հարթելու

Քեռի Թորոս Յիմցեր ա՛,
Որ եդոր խավազներ բըդի գան։
Քեռի Թորոս լը ի՞նչ եր միդք երի.
Թե՝ «Դավիթին խրմցում,
Դավիթ քեֆովնա, Յընգնի,
Յես Յելնիմ երթամ, Մըսրա Մելիք խնդրրվիմ՝
Յա՛ Ծովասար շինիմ,

Յա՛ տեսակ մի եղ մարթու խաթըր առնիմ,
Որ չեղնի, թը կովինք»։—
Բովանդակ աշխարք կռապաշտ,
Յինք, քանի մի տուն խաչապաշտ.
Ի՞նչ բըդի ենա Յինք։—
Քեռի Թորոս յոթ կանթնեն բա՛րոշ մի ուներ.
Գինի լիք լցեց, դրեց ուրանց որթալախ։
Ընդոց ըստաքան հոխանոց մի թաս ա՛։
Խմին մեգ բա՛րոշ, եդ քառսուն հոքին պրծուցին։
Եդ Յերսուն ին կ'իդեր Դավիթին,
Դավիթ մենակ կ'իդեր եդ Յերսուն իննին։
Դավիթ քեֆովցա՛վ, պագավ, քնավ։

21. Հարկահաններին Դաշտու Պադրիալում ծաղրող կինը

Եդ սըրին խավազներ Մրսրա գ'իկան.
Գ'իկան եդ գեղեն Յընցնին,
Ուրտեխ Դավիթ նախրորդ ա՛ եղի.
Գացին Դաշտու Պադրիալ։
Դաշտի ժողովուրդ լսած եր որ՝
Դավիթ քանդեր ա՛ Մրսրա Մելիքի Ծովասար,
Խավազներ բըդի Յելնին գան։
Խավազներ որ եգան, հասան,
Եդ գեղով Յընցնելու վախըտ,—
Կնիկ մի Դավիթին ծանոթ եր,
Կնիկ տան դուռ կայնուկ եր,—
Կնիկ վերուց, եդոնց ըսեց.

«Հո՛ւ ո՛ւ, ալամենց փրոցլոտ բերան,
Ո՞ւր գ'իկաք քըց շուն վազան,
Կ'երթաք քրց գել-գազան»։

Են մեգ մարթ խոսքաշեն եր, ըսեց.

«Քաքե՛, քաքե՛, քաքոտ պարե՛ր,
Մդե՛ք տուն, երեք դիվան,
Յելեք դուս, երեք շիվան.
Կ'երթանք Սասուն առ ու թալան,

կը բերինք մըղալ յեղներ լման,
կը բերինք կեռիկ կռվեր կթան»։

կին վերցուց, եղոնց բսեց.
— Քաքիմ ձըր բերան՝ քե տան, քե տան...

22. Դավիթը պատուհասում է հարկահաւճներից

Խավաղներ եդան, հասան Մասուն։
Դավիթ որ քեֆովցեր եր, յընդեր եր։
կանչին Քեռի Թորոսին, հանին դուս.
Թր՛.— Քեռի Թորոս,
Մըր թաքավորին հրաման եդ ա՝

«Դավիթի գլուխ,
Որ Մանուկի աչ բաղուկ,
Քառասուն տարվա վերգին՝
Քառասուն անծին երինչ,
Քառասուն թոփ անլրվա կըդավ»։

Բրդի գումարիս իդա սըհաթին,
Տաս, առնինք, տանինք Մելիքին։
Քեռի Թորոս բսեց.
— Ջանըմ, հըլա արեք, յիմեք,
Յա չայ ըմ խմեք, յա խայվե մ՝ խմեք.
Յես հեդ ձըղի դ՝իկամ Մրսրա Մելիքին.
Յա ին մարթու մուրքի տըդով գ՝ընցնիմ,
Յա են մարթու խաթըր կը շայիմ։
Եդոնք բսկի խոսք չհանկընան։
— Ջե, իդա սըհաթին, բրդի առնինք, երթանք։
Եդոնց ողուշաղներ, ճժեր լացին, ողպացին,
Թը՝ քեռին երած սամախեղդ, մըկա կը խեղդին։

Եդոնք որ լացին, ողպացին,
Դավիթ խըրդավ, յելավ քնուց, բսեց.
— Յա, յա, եդ ինչ ա, նանե։
Արմաղան բսեց.— Ելիդ քոռնա, լաո,
Դացիր, հայրիքի Մովսասար քանդիր.
Խավաղներ եդած, բռնած, քեռիդ կը խեղդին։

Դավիթ յելավ, մոդիկցավ, դոնեն տեսավ որ՝
Յոթ հադ խավազ եգած, բոնած քեռուն կը խեղդին։
Դավիթ ըսեց.— Եդ ինչ բաս ա՝
Խավազ ըսեց.— Ելիդ քո՛ռ, իմկնի Սասունա ծուռ,
Դու չգիՙնաս՝ ինչ բաս ա.
Մըսրա Մելիքի Տովասար քանդեր իս.
Մըսրա Մելիք գ՛ուզե՝

«Դավիթի գլուխ,
Որ Մանուկի աչ բազուկ,
Ֆառսուն տարվա վերգին՝
Տարին քառսուն անծին երինչ,
Ֆառսուն Թուի անլըվա կըդավ»։

Իդա սրհաթին բըդի տանինք։
Ըսեց.— Յես կա՛ռ իմ, կա՛ռ, չը՛սիմ.
Մոդիկ արեք, ըսեք՝ հասկրնամ։
Մոդիկցուց, յոթնի ձիու չըմբուլն ել ժողվեց.
Բըռնեց՝ վորի յագռեք քաշեց, շարեց ճակատ.
Վորի մըռթներ կդրեց, յագռեք չալդըդած,
Վորին քիթ կդրեց,
Վորին յանգաճ կդրեց,
Վորին ել յաչքեր հանեց,
Երեց՝ յուզի գՙոզի բելլիսըզ,
Ըսեց.— Գացեք, ըսեք Մըսրա Մելիքին՝
Մըսրա Մելիքի Թուր կդրեր ա իմ ջեխ.
Ինչ որ գ՛իկա ձեռնեն, Թըխ յեդ չկա՛յնի։

23. Հարկահաւճներին ծաղրող կինը

Խավազներ դարցան, գացին։
Խավազներ որ եգան, հասան,
Դաշտու Պադրիալով բըդի յրնցնին,
Եդ կին կայնուկ եր դուս,
Եդոնց ճանպեն կ՛իշկեր։
Որ եգան, հասան կըննկա մոդ,
Կնիկ ըսեց եդոնց.

«Ո՛ւ... ռւ... Ուզրագենց փըրցլո՛տ բերան,
Մ՛ւր գացիք քըց գել-գազան,
Եգաք քըց շուն վազանց։
Են մարթու մըռթներ չկըգըրվեր եր, ըսեց.
«Քաքե՛, քաքե՛, քաքո՛տ պաբեր,
Մըդեք տուն, երեք դիվան,
Յելեք դուս, երեք շիվան...
Կարճ կրնկըտիք երկանք ազան,
Յերդեն կըննկըտիք արմազաններ, կ'երթան, գ'իկան։
Մենք գինինք՝ Սասուն դուզ եր մելդան,
Մենք չգինենք մարթ կար մինչ ուրանց գազանական,
Կր զա՛րգեր, բրին կը բաներ, քըց խաչ պազուհանց։
Ըսեց.
«Քա՛քիմ ձըր բերան,
Վազ գարնան չըրհեղեղին,
Ընգոց ճուճ ու պըլոր
Գ'իկեը ձըզի արմազանց։

28. Մսրա Մելիքի զորահավաքը յեվ արշավանքը Սասունի վրա. Ցրա բանակը Մշու դաշտում յեվ պատգամը Քեռի Թորոսին

Խավազներ գացին, հասան Մըսըր։
Որ եգան, հասան Մըսըր,
Մելիք բինակ դաշի վըրեն նստուկ եր.
Տեսավ՝ ուր խավազներ եգան.
Տեսավ՝ յագոնք շարած ճակատ.
Վորին յականճ չկա, վորին քիթ չկա,
Վորին մռութ չկա, վորին լիզուն ա կըդրած,
Գարցած են յըմեն յուզի գա՛զի բեպըսըզ։
Հարցուց.— Լա՛ռ, եգ ձըր հալ ի՞նչ ա.
Եգ ի՞նչ եք եղի, լա՛ռ։
Խավազ ըսեց Մըսրա Մելիքին.
— Գացինք, Քեռի Թորոսին խանչինք,
Հանինք դուս, սամախեղդ երինք.
Եգ մարթ մըդի լավա գ'ընգներ,
Թե՝ Արեք յա՛ չայ ըմ խըմեք,

Յա՛ խայվե մ՚ խըմեք, յես գ՚իկամ՝
Յա՛ Մըսրա Մելիքի մուրքի տըգով գ՚ընցնիմ,
Յա՛ բանով մի են մարթու սիրդ կ՚առնիմ։
Մենք ըսինք՝ չե՛, ոը չե՛։
Մըր թաքավորի հրաման եդ ա՛՝
Առնինք, դառնանք իգա սըհաթին մեչ։
Են Դավիթ անվոը անեն դուս եգավ.
Դուս եգավ, խափեց մըզի,
Թե՝ Յես կա՛ռ իմ, չլը՛սիմ.
Խանչեց մըզի, աարավ մոգիկ,
Մեր յոթնի ձիու չրմրուլներ բռնեց,
Մըգի երեց յուզի գո՛զի բելլըսըզ,
Ըսեց՝ Գացեք Մըսրա Մելիքին ըսեք՝
Ուր թուը կգրեր ա՛ իմ ջեխ,
Ինչ որ գ՚ուզի, թըխ ուը սըրեն Յեդ չընգնի։

Ետեխ Մըսրա Մելիք հերսոդավ,
Զա՛րգյեց դանակ ըմ, ուր սիրդ ձեվեց,
Գրիչ կը զա՛րգեր ուր արընի մեչ, կը գըրեր.

«Թըխտիկ գրիմ մսես, արնես,
Խըրկիմ արեվելք.
Թրխտիկ գրիմ մսես, արնես,
Խըրկիմ հարաֆային.
Թըխտիկ գրիմ մսես, արնես,
Խըրկիմ հուսուսային.
Թըխտիկ գրիմ մսես, արնես,
Խրրկիմ արեվմըդյան։
Արե՛ք, արե՛ք
Իմ՛ բեգլա՛ր բեգե՛ր,
Խաչ պարոնն՛ր,
Սակոի գրլխըգա՛ն,
Պալթա Յագոե՛ք,
Պայ ճագտրն՛ր,
Թիակ լիզվըն՛ր,
Արե՛ք գա՛վուրի վըրեն.
Սա՛ֆա՛ր ա՛, որ սա՛ֆա՛՛ր ա՛»։

Յոթ տարի սա՛ֆա՛ր երեց.
Յոթ տարի որ սա՛ֆա՛ր երեց,

Յելավ ժողվեց ուր զորքեր,
Եգավ Քեռի Թորոսի վըրեն կռիվ։
Ել չըմ գինա քանի հարիր հազար ջան եր,—
Եդավ Մշու դաշտ, զա̈րգյեց ուր չադըրներ,
Ջեվաբ երեց Քեռի Թորոսին.
«Թրխ ուր թա̈դա̈րուք տեսնի,
Որ իմ կռիվ կռիվ ա̈»։

25. Քեռի Թորոսը հարբեցնում է Դավթին յեվ ինքը ժողովելով մնացած տղեկներին՝ դուրս է գալիս Մսրա Մելիքի դեմ. նա բանակ է դնում բլրի գլխին

Քեռի Թորոս Յելավ, ի̈նչ երեց.—
Յելավ, կեր ու խում երեց։
Դավթին կուշդ-կուշդ գինի կը խըմցրներ։
Յոթ կանթնեն բա̈րոշ լցեց,
Բերեց, դրեց ուրանց մեչ։
Եդ Յերսուն ին լցրին, տվին Դավթին,
Դավիթ մեննակ ավեց Յերսուն ինին։
Խմին պղինձ մի, Դավիթ չսարխոշցավ։
Քեռի Թորոս ըսեց.— Դա̈վիթ, լա̈ո,
Իգա պղինձով մին թը գինի խմեցի̈ր,
Լա̈ո, դու Մհերի տղեն իս.
Թը չխըմեցի̈ր, դու ըիճ իս։
— Քե̈ռի, ըսեց, հրլա լից, տեսնինք իդա պղինձ։
Քեռին բերել տվեց գինին,
Եդ պղինձ լիք բերան լցեց։
Դավիթ վերուց, դրեց ուր բերնին,
Խը՛ըմեց, խը՛ըմեց, խըլըսցուց, թողեց,
Պղինձ Յընդտվ գետին, տագ ծադվավ։
Դավիթ հըմալ սարխոշցավ,
Եղավ շոխ շարգանց, սըմբուլ գդականց, պադավ։
Դավիթ որ պադավ, քնավ։
Քեռի Թորոս Յելավ, ուր արմրլիկ* չալեց, ըսեց.

---

* Վիպասանը Սասունի 39 ծռերի անունները գիտեր, բայց այժմ մոռացել է։ Կ. Մ.-Ո.

«Յելեք Քոթոթ Մոթոթ,
Անուշ Քոթոթ,
Ցռան Վեքո,
Խոր Մանուկ...
Յելեք, Յըսոր լավ ե, քըց ամեն որ,
Կ'երթանք շադեն շատ, քըչեն քիչ.
Յա՛ Աստըված կ'իգա են մարթուն,
Յա՛ Ասարված կ'իդա մըգի»։

Յելան հեձան, գացին.
Գացին մեգ բլուրի մ' գլոխ,
Ուրանց չադըրներ զա՛րգին։
Յերսուն ինը չադըր զա՛րգյեց Քեռի Թորոս։
Հըմա՛ տեսավ Մշու դաշտ,
Թը աստըգին հեսաբ-հաշիվ կա,
Եդոր չադրին-խեվաթին կա,
Հըմալ որ զորք ա՛ բերե։
Քեռի Քորոս թըղ Յոդի մընա։

26. Դավիթն Արմաղանի գործակցությամբ ձեռք ե բերում Մհերի ձին ու սուրն յեվ զինավառվում ե

Արմաղան սիրդ լըցվավ, միդկ երեց.
Թը՝ «Զրթորոս Յոնի կը սպանին,
Զտղեկներ կը սպանին,
Գ'իկան, մըզի լը Յուդա կը սպանին,
Մըր քոք կը բերին, կը կըդրին»։
Եզավ, նստավ Դավթի գլխու վերեվ ու լաց։
Եդոր արտըսունք որ թափավ Դավթի Յերսին,
Դավիթ խըրդավ Յիմցավ, ըսեց.
— Յա՛, նա՛նե, ըսեց, Ասվաձ խե՛ր ենա.
Հըլա յես սա՛զ իմ, դու Յորի՛ գ'իլաս։
— Ա՛յ, ըսեց, Դա՛վիթ, լա՛ո, գրող քըզի խեխդա՛,
Գացիր, Մրսրա Մելիքի Ծովասար քանդիր,
Մրսրա Մելիք հանդա զորք քաշեր ա՛, եգեր ա՛,
Քու քեռին գնացեր ա՛ գեմ։
Ըզքու քեռին, զտղեկներ Յոնի՛ սպանին,
Գան, մըզի լը Յուդա սպանին,

Մըր քոք բըդի բերին, կըդրին...
— Հրբա̈, նա̇նե, ըսավ, յես իմա̇լ մեռնիմ,
Որ իդոնք չիգան ընծի չարչարեն, սպանին։
Նանեն ըսեց.— Գրող խեխդա̇ քըզի,
Որ դու վախեներ, Յորի՞ քանդիր զԾովասար։
— Հըբա̈, նա̇նե, ըսեց, ողորմի քու պաբուն,
Յելի բիր ըռբեգ մի սիսեռ,
Խարկինք, ենենք ազանձ,
Յես վերցում, տաք-տաք ուդիմ,
Իմ աղըքներ վառա, յես մեռնիմ։
Դավիթ կուշդ ազանձ կերավ,
Ըսեց.— Նա̇նե, Ասվաձ քուն տուն ավիրա.
Իմ սիրդ ազանձ դ'ուզեր,
Երեցիր, կուշդ րմ կերա։
Նա̇նե, դնա̇ նախըրգընեն, կլոր քարեր կան,
Երդու-իրեք հագ կլոր քար բի՞ը։
Ըսեց.— Ի՞նչ ենիմ։
Ըսեց. — Թալ կրագի մեչ.
Որ կարմըրավ քարեր, նա̇նե,
Յես իմ բերան կը բանամ,
Դու հըմլա քու ձեռով՝ թալ իմ բերան,
Որ իմ աղըքներ վառա, յես մեռնիմ։
Նանեն որ ձեռ զա̈րդյեց,
Նանեյի ձեռ քամեց քարի վըրեն։
— Նա̇նե, ըսեց, իմ պաբու ի՞նչ կա պահուկ, ըսե,
Թը չե, քու ձեռներ կը վառա։
Ըսեց.— Ասվաձ քու արեվ սպանա,
Զա̈թի իմ ձեռներ վառավ, պրծավ։
Դավիթ թողեց, նանեն ըսեց.
— Լա̇ո, Քուռկի Ջալլադ հա̇նդա մուղարեն կապուկ ա̈.
Գնա̇, թը կռնաս, բռնիս, հա̇ն, հեձի։

Դավիթ գնաց դեմի Քուռկի Ջալլադին։
Որ մդավ ներս՝ Քուռկի Ջալլադին ֆըռռաց,
Զուֆթե մ' զա̈րգյեց, քիսավ պագին, կրագ Յելավ։
Դավիթ աեսավ որ՝ ըսկի չկը՛ռնա մոդգընա,
Զին կը զա̈րգա̈, զԴավիթ հազար կդոր կ'ենա,
Գարցավ, եգավ ուր մամու մոդ, ըսեց.

— Եդ ձին կր զա̈րգա̈, ընծի հազար կդոր կ՚ենա,
Յես ըսկի չըմ կը՛ռնա մոդգընա,
Յա̈ բռնիմ, յա̈ թիմարիմ զՔուռկի Ջալլադին։
Ըսեց.— Քու պաբու հին ֆա̈ս, հա̈նդա փա̈նջարեն ա̈,
Տար, թալ Յառեչ, Յանդըճներ կը կախա, կայնա։
Ըզորթ որ հին ֆա̈ս Գավիթ առավ,
Գնաց, թալեց Քուռկի Ջալլադի Յառեչ.
Ձին քրտինք հոդ երեց, Յանդըճներ կախ երեց, կայնավ։
Գնաց, բռնեց, մեգ ա̈րա̈բի թիմար մի ավեց,
Կոդ մի գարի լցեց Յառեչ.
Քուռկի Ջալլադին կուշդ կերավ.
Յինք եդավ, ըսեց.— Նա̈նե,
Ի՞նչ կա իմ պաբուն, գուրզից, զենքից.
Ա՛խր, իմ պաբուն զենք, գուրզ եղեր ա̈.
Ըսեց.— Լա̈ո, քու պաբու զըրխ, թագ, գուրզ սեվ զնարի տագն ա̈.
Թր կըռնաս եդ զնար վերուս, կը հանիս տըգեն.
Թը չկը՛ռնաս վերցուս, յես ի՞նչ ենիմ, լա̈ո։
Գավիթ Յելավ դուռ, զեդ սեվ քար տեսավ,
Ձինք աեսավ, ըսկի խելք բան մի չկըդրեց,
Թը կըռնա վերու, դարցավ, ըսեց.
— Նա̈նե, եդ իմ պաբ ինչքա̈ն զոռ եղեր ա̈,
Որ զեդ քար շըրճեր, դրեր ա̈ եդ զըրխի վրրեն։
Ըսեց.— Լա̈ո, քու պաբ որ հիվընդցավ,
Յինք գիներ, որ կը մահաներ.
Զուր զրրխ, թագն ու գոգին դըրեր ա̈ եդ քարի տագ։
Ըսեց՝ Թա̈ իմ տղեն Յելավ ընձի՞,
Թըխ հանա, վերու, հաքնի, վայելա̈.
Թա̈ իմ տղեն չելա̈վ ընձի,
Թըխ մնա̈ եդ քարի տագ, փըդի։

Դավիթ դարցավ դեմի ազոթրան, խաչ հանեց Յեըես,
Ուր ուժով, զոռով զա̈րգվավ եդ զընարին.
Մեգ հա̈լա̈բու գո̈րա անջախ բարցըրցուց.
Արմազան քաշեց, զրրխ, թագն ու գուրզ տըգեն հանեց.
Թողեց եդ քար, պլը՛թ, Յընգավ ուր տեխ։
Դավիթ բերեց տուն, հաքավ զրրխ.
Հաքավ, ինչ որ մուկ պադի կարաս։

— Նա՛նե, ըսեց, Ասվաձ ենոր տուն ավիրա,
Եդ ի՞մալ բեդ մարթ ա՛ եղի։
— Լա՛ո, ըսեց, դու քու պաբու հըլա կեսն իս։
Բերեց, երգու խիտր բամպակ կոխեց զըրխի թեվեր, պառեկ,
Խիտր ըմ լը բամպակ գրեց թագի մեչ,
Դրավ ուր գլուխ, փշու մ՛ ուրմըշավ։

Քաշեց Քուռկի Չալլադին դուս,
Եգավ, Արմաղանի ձեռ պաքեց, ըսեց.
— Նա՛նե, քու ծրծի կաթ ընձի հա՛լալ ե՛րա.
Երթալ իմ ձեռ, գալն Աստըձու.
Յես ինչ դինամ, կ՛եղնի՞ որ՝
Ընձնե ուժեղ մարթ եղնի.
Երթանք, կռվինք, սպանվինք։
Նանեն որշնեց, ըսեց.— Գնա՛, լա՛ո,
Իմ ծրծի կաթ գ՛ելնի առ Աստվաձ,
Աստվաձ ձըղի կ՛ոքնա, լա՛ո.
Դու սաղ-սլամաթ տառնիք, գաք։

27. Դավիթը Մարաթուխում աղոթելով յեվ Քնելով՝ դառնում՝ և հզոր

Դավիթ Սասունա Յելավ։
Դավիթ որ Սասունա Յելավ,
Հըմալ մըժ մի, դուման մի դրեց,
Որ Դավթի Յաշք ըսկի ճանփեն չտե՛սավ։
Դավիթ ըսեց.— Չա՛նըմ, եգ լը Աստըձուց ա՛.
Կայնի՞, թողնիմ Քուռկի Չալլադի կամքին.
Յուրվի կ՛երթա, թըխ ե՛րթա։
Քուռկի Չալլադին գնաց, գնա՛ց,
Յելավ մեգ բանցր սարի մ՛ գլուխ։
Որ Յելավ սարի գլուխ, կանգնավ,
Մըժ բացվավ, դուման բացվավ։
Դավիթ տեսավ՝ ետեխ խանգար եկեղեցի մ՛ կար.
Գնաց, քարերու վըրեն գիր կար, կարդըցավ.

«Բանցրիկ Մարաթուխ Ասվարածին»։

Դավիթ ետեխ աղոթք երեց.
Թմրութեն թափավ վըրեն, քնավ։

Մեդ լը Յիմցավ որ՝
Եդ զըրխ հըմալ քամեր ա՛ զեդոր թեվեր,
Որ տարե Յեդեվանց կը կոդրա։
Դավիթ զուր զըրխ հանեց.
Եդ բամպըկներ լը քանդեց, ետեխ դրեց։
Թագ հըմալ եր քամե դուր գլուխ,
Որ Յաչքեր դուրս գ'իկեր։
Քանդեց եդոնց բամպըկներ, ետեխ դրեց։
Դավիթ ելի աղոթք երեց։
Թմրութեն թափավ վըրեն, քնավ։
Հրեշտագ Աստըձուն եգավ,
Ըսեց.— Դա՛վիթ, Դավի՛թ, Յելի՛.
Քու ուխտ ընդունելի եգավ Աստըձու մոդ։
Ասվաձ քըզի տվեր ա՛ մի սուրբ Նշան։
Յելի՛, սուրբ Նշան պաքե, դիր քու աջ ծոց.
Սանդըը լը դիր քու ձախ ծոց.
Յերթում չուդիս սուրբ Նշանի վըրեն։
Յերթում կերա՛ր, Ասվաձ քըզի կը թուլցու։
Յելի դնա՛, քու թուը դուշմընին կը կըդրա.
Դուշմընի թուր քըզի չկըդրա։
Դավիթ եդ բամպըկներ գրեց Յոդա։
Ըսեց.

«Բանցրիկ Մարութախ Ասվարածին,
Իդա բամպըկներ քըզի պադրըքցու.
Բարով-խերով դարցա մըր տուն,
Քըզի խիտր ըմ լը ձեթ կը բերիմ ճրագլուս»։

Յելավ, Քուռկի Ջալլադի խոլըններ զըլեց,
Յելավ, զՔուռկի Ջալլադին հեձավ.
Ինգլիզ չախմախի քիմի եգավ մեչ։
Յելավ դիմեց դե՛մի Մշու դաշտ, գնաց։

28. Դավիթը Մարա Մելիքի բանակում

Գնաց, տեսավ որ՝ բլուրի մ' գլուխ
Քեռին Յերսուն ինն չագըրով զա՛րդեր, նսդեր ա՛։
Դավիթ միգկ երեց, ըսեց. «Ի՞մալ ենիմ.

Թը գնամ քեռու մոդ, կ'ըսե՝
Դավիթ վախեցավ, եգավ, ժընգավ իմ թոռ։
Թը չերթամ քեռու մոդ,
Վա՛յ թը կռվու մեչ իրարու ռաստ գանք,
Զա՛րգի՞նք, իրարու ՉԼասի՞նք։
Դարցավ, ըսեց. «Վալլա՛հ, ինչ գ'ուզե, թըխ եդնի.
Յես պրդի երթամ իմ դուշմընի մեչ»։
Դավիթ քշեց, գնաց Մըսրա Մելիքի ա՛սքըրի մեչ։
Հարցուց զորքին.— Մըսրա Մելիքի չադըր վո՞ը մեգն ա՛։
Եդ զորք ընենց կոպիշտ նշանց տվեց,
Թը.— Զըս տե՞սնի կանանչ չադըր, քո՞ռ իս,
Ոսգի խընձոր գլուխ կը վառվըռի.
Մըսրա Մելիքի չադըր ե՞ն ա՛։
Դավիթ քշեց, գնաց Մըսրա Մելքի չադըրի դուռ։
Դավիթ ըսեց.— Մըսրա՛ Մելիք,
Թը լուսուն կռի՞վ ա՛, ընձի մոդ խոնախ տուր.
Թը լուսուն կռիվ չե, ընձի հեռուն խոնախ տուր։
Մըսրա Մելիք տեսավ որ՝
Յոթ տարի ժինք զորք ա՛ ժողվեր,
Եդմալ մարթ չկա ուր զորքի մեչ,
Յելավ, ըսեց.— Լուսուն կռիվ ա՛.
Տարեք, ե..ե՞ն չադրր խոնախ տվեք։
Դավիթ մե քիչ գնաց, դարցավ ըսեց.
«Յես իմ դուշման չՉըրբի,
Կայնի՞, դառնամ, մեգ լը Ջրբբիմ»։
Դավիթ դարցավ, ըսեց.— Մըսրա՛ Մելիք,
Թը լուսուն կռի՞վ ա՛, ընձի մոդիգ խոնախ տուր.
Թը լուսուն կռի՞վ չե, ընձի հեռուն խոնախ տուր։
Մըսրա Մելիք ըսեց.— Լուսուն կըռի՞վ ա՛.
Ե՞..ե՞ն մոդիգ չադըր խոնախ տվեք։
Հըմա Մելիք թամբեհ երեց,
Թը.— Եդ մարթ ինչ որ գ'ուզա, տվեք։
Ուր մդկի մեչ ըսեց.
«Թը գա՛վուրներուն ժախթա, եդ մարթ պրդի ժախթա»։
Տարան, խոնախ տվեցին։
Դավիթին հարցուցին, թը.— Ի՞նչ գ'ուզիս դու,
Քըզի ուդելիք-խմելիք բերինք,
Զիուն ուդելիք-խմելիք բերինք։

Դավիթ եղոնցմե ուզեց՝
Տիկ մի գինի, ոչխարի մ՚ ջանդաք,
Կոդ ըմ լը գարի ձիուն։

Դավիթ նազեր եր, միս կ՚ուզեր, գինին կը խմեր։
Որ կը սրնչեր, չադրը գ՚ելներ, կը բանցրներ.
Որ կը սրնչփոխվեր, չադրը գ՚իչներ։
Խաբար տվին Մբսրա Մելիքին,
Թը.— Գինամս, Մբսրա Մելիք,
Եղ մարթ կը սրնչա, չադրը գ՚ելնի,
Կը սրնչփոխվի, չադրը գ՚իչնի։
Եղ ինչ խըզըր ուժեզ մարթ ա։
— Հա, բսեց, մուղաթ կեցեք,
Թը գավուրներուն ֆախթա, իդա մարթ գը ֆախթա։

29. Դավիթն իմաց ե տալիս բռնամիների բանակին յնվ հարձակվում, կոտրած անում. մյուս կողմից Պետի Թորոսն ե իր տղեկներով կոտրում

Դավիթ կերավ, խմեց, ըռհաթավ,
Յելավ եգավ ապոթըրընի գեմ,
Յելավ, գ՚Ռուսկի Ջալլադին թամքեց,
Ֆաշեց, հանեց դուս, կանգնավ,
Իրեք անքամ բոռաց, բսեց.

«Վուռը քնուկ ա, արթրնցեք.
Վուռը արթուն ա, ձիան թամքեք.
Վուռը թամքեր ա, գենքեր կաբեք,
Վուռը կաբեր ա, ձիան հնձեք.
Ջավիրիք անուն կըդըրմին»։

Մբսրա Մելիք ֆիմցավ ուր տեխեն,
Ըսեց.— Յելեք, ձիանք թամքեք,
Դուշման լը գուր եգավ վըր մրդի։

Դավիթ իրնգավ եգոր գորքի մեչ,
Ջարգյեց, գարգյեց, բսեց.

«Վազե, Ռուսկիկ, վազե.
Կրդրե, Թրիկ, կըդրե»...

Հազար որ կր թա̈մմեր,
Մեգ ոմբա կը կայներ։
Արնե գետեր ժելավ, բանցրցավ,
Ջա̈նդըքներ կր քըշեր, կը տաներ...
Աղոթըրան որ բացվավ, լուսցավ,
Քեռի Թորոս իշկեց դեմի Մըսրա Մելիքի զորք։
Տեսավ Մըսրա Մելիքի զորքի մեչ
Հըմա̈լ կըդրում ա̈ ժընգեր,
Հըմա̈լ վայնասուն ա̈ ժընգեր,
Զիրար կը ջարդին, կր կըդրին։
Քեռի Թորոս դարցավ, ըսեց.
— Տզեկներ, ժելեք, մըր Ասվաձ մեծ ա̈.
Կըդրում ժընգեր ա̈ Մըսրա Մելիքի զորքի մեչ։
Ժելեք, մենք լը ներքի գըհուց առնենք։
Վերեվեն Դավիթ կըդրեց,
Ներքեվեն Քեռի Թորոս՝ զեդ զորք։

30. Դավթի յեվ Քեռի Թորոսի հանդիպումն յեվ մենամարտը կռվի դաշտում. Դավթի վիրավորվելը. Մսրա Մելիքի պարտությունը յեվ փախուստը

Եգա̈ն, եգան, հասա̈ն իրարու։
Հրմա ընդոք, որ կը կռվեն,
Արուն եգե, լցվե ժաչքեր.
Արուն կը տեսնեն, չկը՛ռնան իրար ճանչնան։
Քեռի Թորոս խանչեց, ըսեց.— Հա̈, տղա̈,
Քո̈ւ դորն ա̈, թր՞ իմ, որ զա̈րդինք։
Դավիթ ըսեց.— Դո̈ւ գինաս. քըզնե ի՞նչ կ՚եղնի։
Քեռի Թորոս ըսեց.— Տղա̈,
Դու քու գո̈ւրզ թա̈լ, ժեդեվ յես կը թալիմ։
Դավիթ որ զգո̈ւրզ բերեց,
Քեռի Թորոս զՎեցոդնե Լա̈գզին քշեց,
Քուոկի Ջալլադի աըգեն ժընցավ.
Դավիթի գո̈ւրզ բոշի գնաց՝
Գիլու պեստ կ՚ոռներ,
Շան պեստ կը կընգըզտեր...
Ոը գո̈ւրզ քիսավ գետին,
Գութնի պեստ շեր շըրճեց։

Դարցավ Քեռի Թորոս, ըսեց.
— Հա՛, տղա՛, քու ավուր հազը՛ր կեցի,
Իգահախ իմ դորն ա՛։
Քեռին որ գ՚ըրգյեց ըզմըզրախ,
Եդոր ճուռ փարչըմեց թամքին։
Որ ըզմըզրախ քաշեց,
Դավիթ ըսկի ո՛ճ չերեց.
Որ Դավիթ ո՛ճ չերեց,
Քեռի Թորոս ըսեց.— Դու բի՛ճ իս.
Ցա՛ տղա՛, քու հոր հերական բա՛ս,
Քու մոր մերական բա՛ս։
Ցես իմ մըզրախ կը գ՚ըրգիմ՝
Ապառաժ քարեր կը ձեվա, թալա,
Դու ըսկի ո՛ճ չերիր։
— Տո՛,— ըսեց,— բի՛ճ դո՛ւ իս։
Իմ հոր հերական Մհեր ա՛,
Իմ մոր մերական Արմաղան ա՛։
— Վա՛յ,— ըսեց,— Դավիթ, լա՛ո,
Իմ յաչքեր քոռնա, դո՛ւ իս։
Ըսեց՝ Դավիթ, շա՛տ բրին եգավ։
Ըսեց.— Քեռի, ինչ որ լու մի խոսա՛,
Քեռին բոռաց, ըսեց.
— Տղա՛, ձիու խուշկի քոմմե՛ք։
Բերին, լցին կողով մի, երգուս,
Անջախ արուն կանգրցուցին.
Թուի մի կդավ փաթեցին վըրեն։
Քեռին ըսեց Դավիթին.
— Դու նսդի, իդահախ իմ դորն ա՛։
Քեռին գ՚ըրգյեց, կրդրեց,
Եդոնց քոռն ի Բաղդադ հանեց։
Մըսրա Մելիք փախավ, ըզինք թալեց Մըսըր։

Ջարդեցին, դարցան Սասուն։
Եդ հողեր բոլոր տիրաբրտեց Դավիթ։
Եգավ, նսդավ Սասուն, հարուստցավ։
Դավիթի անուն ցրվըրավ աշխարք։
Դավիթ ինչ կ՚եներ որ.—
Գ՚ելներ, կը նսդեր ուր ձին,

Կ'երթեր ուրին նեճրութեն,
Յիրկուն գ'իկեր ուրանց տուն։
Եդոնք թըխ մնան ուրանց աուն,
Ուդին, խըմին, ըռրհա̈թին։
Մենք սալըխ տանք Կաղրզվրնու։

Դ

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԽԱՆԴՈՒԹ

31. Խանդութն աշուղ և ուղարկում Սասուն, վոր իր դովքն անի Դավիթի առաջ

Կաղրզվան կար Վաչո-Մարջո անվով մարթ.
Վաչոն մարթն եր, Մարջոն կնիկն եր։
Ենդոնք Կաղրզվրնու իշխան եր.
Ուներ Խանդութ անվոր ախճիկ մի.
Ենխրդրը խորոտիկ եր որ՝
Քառսուն կըդրիճ եգած են,
Եդոր սիրուն կ'ուդին, կը խմին,
Որ բա̈լքի հավներ, մեգին առներ։
Հըմա Խանդութ Դավիթի ծեն լսեր եր։
Ուր մրտքի մեչ կ'ըսեր՝
«Իմն որ կա՝ Դավիթն ա̈.
Իմն որ չկա՝ Դավիթն ա̈։
Եդոնք ի̈նչ մարթ են՝ որ յես եդընցմե առնիմ»։

Մեգ որ նստուկ եր փանջարեն,
Աշըզ մի գ'ընցներ փողոցով։
Խանչեց աշըզին, ըսեց.
— Ա'շուղ, հըլա̈ արի իդա տեխ։
Խանդութ հարցուց եդ աշըզին.
— Ա'շուղ, որական դու ինչ կ'առնիս։
Ըսեց.— Խա̈նում, աշղըթեն ա̈,
Յես ի̈նչ գինամ, որ ըսիմ։
Որ կա, շադ կ'առնիմ, որ կա՝ քիչ.
Որ կա մեգ չարեք, որ կա՝ երդու։—
Են վախտ արծաթ փող ա̈ եղեր,

Թուխտ փող բակի չեղեր ա։—
Խանգութ բսեց.— Ա՛շուղ,
Դու արի գնա Սասուն.
Քանի որ գացիր, եգար,
Որական քրգի արծաթ մի փարա տամ։
Աշըղ շուղ ըմ ելավ, դարցավ,
Դեմի Սասուն կ՚երթա ուրախութենեն։
Խանդութ ըսեց.— Ա՛շուղ, ո՞ւր կ՚երթաս։
Աշուղ բսեց.— Խանում, դու չըսի՞ր՝
Յելի գնա Սասուն, արի։
Ըսեց.— Ասված քու տուն քանդա,
Սասուն որ կ՚երթաս, յես բանի կը ճամփիմ,
Հո, բաբաղի չըս երթա, գա։
— Խանըմ, բսեց, ինչ կ՚ըսիս։
— Ա՛շուղ, բսեց, կ՚երթաս Սասուն,
Գը հարցուս Քեռի Թորոսի յողեն.
Կ՚երթաս, կը նստիս ընդոնց յողեն։
Որ խաղ բըգի ըսիս, ուրիշ խաղ չըսիս ի,
Մինակ իմ սովըրցած խաղ կ՚ըսիս։
— Խանում, քու խաղ իմանլ ա՞։
— Ենտեխ կ՚ըսիս, բսավ.

«Իմ բոյլի Խանդութ ինչ որ բոյըն ծառն ի չինար։
Իմ ճերմակ Խանդութ ինչ որ բամպակ գդիս ու դիգիս։
Իմ կարմիր Խանդութ ինչ որ խընձոր ծառն ի ծիրին։
Իմ խորոտիկ Խանդութ ինչ որ լուսնակ տրանըհինգին»։

Եդ չորս խոսք բսա Դավիթին.
Թը հասկըցավ, հասկըցավ.
Թը չը հասկըցավ, գլուխ քար, յերես պադ,
Են լը ընձի պետք չե։

32. Սասունցի Ձիերի յեվ Քեռի Թորոսի վերաբերմունքը դեպի ասուդը

Աշըղ յելավ, դնաց.
Գնաց դեմի Սասուն։
Հասավ Սասունա գեղի մեչ։
Եդոնց ճրժեր կը խաղեր։

Աշըղ ճրժերուց հարցուց,
Թև.— Քեռի Թորոսի յոդեն վոր մեգն ա։
Ճրժեր մոդիգցան եդոր, ըսին.
— Արի, քըզի տանինք Քեռի Թորոսի յոդեն։
Ճրժեր որ մոդիգցան աշըղին,
Տեսան՝ փեդ մի կա եդոր թեվ թալուկ,
Եդ փեդի վըրեն յանդած կա։
Հասան ճրժեր, ձեռ թալեցին,
Եդ աշըղի սաղ պոնեցին։
Ըսին, Թև.— Եդ իմաձ փեդ ա.
Ձեռ քիսավ սազի թելին,
Եդ սազի միչեն ձեն յելավ։
Վաչ, եդ ճրժեր թափան աշըղի վըրեն,
Որ եդ սազ ձեռնեն առնեն։
Ճրժեր մեգ մեգի կ'ըսեն.
— Տըզա, եդ փեդի միչեն ձեն գ'ելնե,
Հրլա արի, աշենք, տեսնենք՝ եդ ինչ ա։
Քեռի Թորոս տեսավ, եգավ.
Եգավ եդ ճրժերուն հերսոդավ.
— Իմկեն Սասունա ծրոեր,
Եդ աշուղ ա, սաղ ա.
Դու ըսկի բան չաեսեր եք.
Արեք, տանիմ մըր յոդեն,
Եդ սազ կը գաբգա, խաղ կ'ըսա,
Մենք լը յանգած կ'ենինք...
Ա՛խր, եդի աշուղ ա, սազ ա...
Առավ, կնաց ուր յոդեն աշըղին։
Հաց պերել տվեց, աշըղ կերավ.
— Դե, ըսեց, աշուղ, փշու մ' մըղի գամ երա.
Մենք լը մըր ձեռնեն գալած՝ փեշքեշ կ'իդանք,
Գ'ելնիս, կ'երթաս ձըր աուս։
Աշըղ հանեց սազ ուր թեվեն, թելեր գըլցուց,
Ջալեց, չալեց, չալեց...
Դարցավ, Խանդութի խոսքեր ըսեց.

«Իմ բոյլի Խանդութ ինչ որ ծառն ի չինար.
Իմ ճերմակ Խանդութ ինչ որ բամպակ գղիս ու դիզիս.

Իմ կարմիր Խանդութ ինչ որ խընծոր ծառն ի ծիրին.
Իմ խորոտիկ Խանդութ ինչ որ լուսնակ տրսնըհինգին»։

Քեռին հարցուց, ըսեց.
— Ա՛շուղ, եդի վո՞րտեխն ա՞։
Աշըղ ըսեց.— Կազզրվա՛ն ա՞.
Վաչոյ-Մարջոյ ախճիկն ա՞։
Քեռին ըսեց ճըժերուն.
— Տըղա՛, զա՞րգյեք աշուղին.
Եդի եկեր ա՞, որ խափե,
Եդի մրր Ֆըղեն կը տանա...
Քեռին ձեռաց հասկըցավ,
Որ Խանդութ ճանփեր ա՞ զաշուղ,
Որ Դավիթ հասկընա, երթա Կազզրվան,
ԶԽանդութ խանում տոնի։
Հըմա քեռին չուզեր։
Ընչի՞ որ՝ եդ Վաչոն-Մարջոն կըռապաշդ եր։
Զա՞րգյեցին աշըղին, աշուղ փախավ.
Հա՞րի գեղեն Յելավ, զա՞րգին, վիզ ողրավ.
Վիզ ողրավ, եգավ, կըպավ փիջին։

33. Դավիթն աշուղի միջոցով լուր և ուղարկում Խանդութին

Աշըղ լալով կը փախներ.
Եգավ, գեղի տակ, կարմունջ մի կար.
Կարմընջի գլուխ կայնավ, միտք երեց, ըսեց.
«Կ՛եզնի՞ յես Խանդութի բսած չըսի,
Որ ընծի ձեձեցին, զա՞րգեցին։
Զե՛, ջա՛նըմ, Խանդութ ընծի եգմալ սովորցուց.
«Իմ բոյլի՞ Խանդութ ինչ որ ծառն ի չինար,
Իմ ճերմա՛կ Խանդութ ինչ որ բամպակ գրգիս ու գիզիս.
Իմ կարմիր Խանդութ ինչ որ խընծոր ծառն ի ծիրին.
Իմ խորոտիկ Խանդութ ինչ որ լուսնակ տրսնըհինգին»։
Ախպեր, ըբա եդոնք ծո՞ւռ ին,
Ընչի՞ ընծի ձեձեցին, զա՞րգեցին»։

Եդի որ աշըղ կ՛ըսեր,
Դավիթ դարձեր եր նեճրութենից,

Գ'իկեր դեմի ուրենց տուն։
Իրիկուն եր. եդ կարմընջի գլուխ կայներ եր,
Աշըղի ըսուկ ժանգաճ կ'եներ։
Դավիթ մոդիգցավ աշըղին, ըսեց.
— Ա՛շուղ, եդ ի՞նչ ա՞, որ կ'ըսիս.
Ըսեց.— Դե, գացե՛ք, իմկնի՞ Սասունա ծռեր.
Գացի եդմալ ըսի, որ զա՞րգին,
Իմ վիզ ոզրի, կըպի իմ փեջ։
Ա՛նդա, յես կր մեռնի՞մ։
Դավիթ ըսեց.— Ա՛շուղ,
Հըլա մեգ լր եդ խաղ ըսա՛.
Իմ մամ ընձի աղոթք ըմ ա՞ սովրրցուցի,
Են աղոթք ենիմ, քու վիզ կը սաղնա։
Աշուղ ժելավ մեգ լը ըսեց.

«Իմ բոյլի՞ Խանդութ ինչ որ ծառն ի չինար։
Իմ ճերմա՛կ Խանդութ ինչ որ բամպակ գրզիս ու դիզիս.
Իմ կարմի՞ր Խանդութ ինչ որ խընծոր ծառն ի ծիրին.
Իմ խորոտի՞կ Խանդութ ինչ որ լուսնակ տրսնըհինգին»։

Ըսեց.— Ա՛շուղ, եդի վո՞րտեխն ա՞։
Ըսեց.— Կաղզըվա՛ն ա՞, Վաչոյ-Մարջոյ ախճիկն ա՞։
Ըսեց.— Ա՛շուղ, կ'երթաս, կ'ըսիս.
Դավիթ կ'ըսեր՝ վեցն որ կը սպասա,
Յոթն ավուր վրրեն՝ ուրին խոնախ եմ։
Հանեց աշուղին երգու իրեք ոսկի փեշքեշ տվեց.
Պըլընդրուկ մի զա՞րդյեց աշըղի գլխուն՝
Վիզ շիդդավ, սաղցավ։
Աշըղ ըսեց Դավթին.
— Վա՛յ, ողորմի՞ քու պարուն.
Վալլա՛հ, իմ վիզ սաղցավ։

Աշըղ ընգավ ճանփա, եգավ, հասավ Կաղզըվան։
Խանդութ ուր փանջարեն նստուկ եր։
Աշուղ եգավ, հասավ Խանդութին։
Խանդութ հարցուց աշըղին, ըսեց.
— Ա՛շըղ, գացի՞ր Սասուն։
Ըսեց.— Խա՛նում, գացի։
Ասվաձ եդոնց տուն ավիրա.

Եդոնք բմեն ծուռ ին։
Գացի Քեռի Թորոսի յոդեն,
Եղ խաղ որ դու բնձի սովըրցուցիր, ըսի։
Հըմալ բնձի ձեձին, հըմալ ձեձին,
Որ իմ վիզ ոգրավ, կըպավ իմ փեչ։
Եգա գեղի տակ,— ելի Ասված կյանք տա են Դավիթին.
Ենի իմ վիզ սաղցուց, ըսեց.
«Կ'երթաս, Խանդութին կ'ըսիս՝ վեց որ կը բաքլայա,
Յոթն ավուր վըրեն՝ ուրեն խոնախ եմ»։
Խանդութ աշըգի փարեն հաշիվեց,
Քանի որ գացեր, եգեր եր, ուվեց։
Աշուղ Յելավ գնաց ուր աուն։

34. Դավիթն ու կուրիճները

Դավիթ վեցն որ ճնաց։
Քեռի Թորոս ըսեց.
«Վալլահ, աշըգին ոաստ չեգեր ա տղեն։
Դավիթ չերթա կաղգըվանն»։
Ամա քեռին չգինա,
Որ Դավիթ տեսեր ա աշըգին։
Դավիթ վեցն որ կեցավ, քեռուն խափս ուվեց։
Յոթն ավուր վըրա Յելավ հեձավ ուր ձին.
կաղգըվանն, դռր իս... եգա քըզի։
Իրկուն հասավ Խանդութի դուռ։
Որ հասավ Խանդութի գուռ,
Խանդութ տեսավ՝ Դավիթ եգավ։

Գորկիկ անվոր դըրնպան ունեն ենոնք։
Խանդութ ըսեց Գորկիկին.
— Գորգիկ, Դավիթի ձին քաշես ձիանանու մեչ, կապիս.
Դավիթ լը կը տանիս՝ կտրիճներու հետ կեր-խում ենա։
Դավիթ որ դոնեն մտավ,
Եդոնք Յըմեն Յելան, կայնան,
Թր.— Իդըմլա հակա մարթ լը կ'եղնի աշխարք։
Դավիթին տեխ տվին։
Դավիթ լը նստավ ետեխ։
Ձեռքվան կեր ու խում ենել։

Միտք երին եղ մարթիկ,
Թր.— Ջանըմ, մենք լը Խանգուխի տեխ եղնինք,
Դավիթին չընք թողի՝ մըզնե մեզին առնի,
Մեզ վերցուց, ըսեց.— Հըրա ինչ ենինք։
Եզեք, դուք մի ենինք՝ Դավթին սպանինք,
Որ Խանգուխ մեզին առնի։
Յելան, խոսք ուրանց մեզ երին,
Գացին, քառսուն տարվան գինին բերեցին.—
Կազդըվան գինի շատ կա, գինաս,—
Քառսուն հոքին Խանգուխի սիրուն կ'իտեն Դավթին,
Դավիթ մենակ մեզ Թաս կ'իաեր եղ քառսունին։
Դավիթ հըմալ քեֆովցավ, սարխոշցավ,
Եղավ շոխ շաբգան, սըմբուլ գըդական, պադավ։
Հըմա Դավիթ չքը՛ներ. նըսգեր եր, կը նըննջեր.
Գլուխ կը քիաներ գեղին,
Կը շիդգեր մեզ լը կը նըսգեր։
Եզ քառսուն կարիճ ինչ երին.—
Բերին երգու հագ Թաղիք,
Փռեցին Դավիթի յեգեվ.
Եզ քառսուն կտրիճ քաշին Թրեր,
Կայնան Դավիթի յեգեվ.
Որ Դավիթ պադի, քնի,
Դավթին գըրգին, սպանին։
Դավիթ որ չքը՛նի, որ կը շիդգի, կը նըսգի,
Թրեր կը գըրգին երգու Թաղըքի մեչ.
Չեղնի որ Թրեր քիանի իրար,
Չեն յելնի, որ Դավիթ յիմնաւ

35. Քեռի Թորոսը ոգնության է հասնում Դավթին, դանդաղում Դուրիկը, Քեռի Թորոսն ու Դավիթը միասին կռտորում են կարիճներին. Խանգուխի վերաբերմունքը

Եզ սըրին Քեռի Թորոս գնաց,
Քաշեց ուր գուրգ, տեսավ որ՝
Գուրգի բերան երգու դեխով ժանգըռոտեր եր։
Քեռի Թորոս ոամգըր եր.
Վնաս որ յիգեր, ձեռաց կը հասկըներ։
Քեռի Թորոս պոռաց, ըսեց.

— Արմաղանն, վեցոդնեն լաջգին քաշա դուս.
Մըր տղեն նեղ տեխ ա.
Ցա հասնիմ, յա չհասնիմ,
Սարախտան շուդ հեձավ, քշեց,
Իրկուն եր՝ հասավ կազդըվան,

Եգավ, վաչոյ-Մարջոյի դուռ ֆիջավ,
Բոռաց.— Գորկիկ դոբնպահ, դուռ բաց,
Քեռին զաբգվավ, դուռ փադ եր,
— Գորկիկ դոբնպահ, դուռ բաց,
Ցոթ անգամ քեռին բոռաց,
Մաքաբր Գորկիկ դոբնպահ գացեր ա,
Զիանք ջըրա, գարի տա.
Զլսեր ա Քեռի Թորոսի ձեն,
Բիրդան որ լսեց Քեռի Թորոսի ձեն,
Աու դողաց Գորկիկ դոբնպահ,
Ըսաց. «Եդի շուդուց ա ֆիջի,
Ցես դուռ չբացեր իմ.
Իմ գլուխ կը գաբդաց...
Գորկիկ դոբնպահ շուդ ըմ եգավ,
Դուան ֆեդեվ կայնավ, ըսեց.
— Ասսու բարին, Քեռի Թորոս.
Ասսու բարին, Քեռի Թորոս.
Ասսու բարին, Քեռի Թորոս...
Ցոթն անգամ որ նդպևստ ըսեց,
Քեռի Թորոս ըսեց.— Գորկիկ դոբնպահ,
Հացն ու գինին, Տեր կենդանին,
Որ դու յոթն անդամ իմ Ասսու անուն չիտեր,
Ճլոթ մի գաբգենք քըզի,
Քու գլուխ հաբի Արազ կը գլորենք,
Գորկիկ դոբնպահ դուռ բացեց,
Քեռի Թորոս քշեց ուր ձին եղ ֆոդեն,

Դավիթ, կրտրիճներ կեր ու խում կ'ենեն,
Դավիթ հըլա նրստուկ ա,
կը նրնջա, եդոնք թրեր կը հանին.
Որ կը շիդգի, եդոնք թրեր կը գաբգին թագքի մեչ,
Քեռի Թորոսին մեգ բարակ շարուխտե մ' կար ձեռ,
Դավիթ որ նրնջաց, կգավ,

Եգավ, գլուխ կը քիսներ գետին,
Քեռի Թորոս շարուխտե մ՝ զա՞րգեց Դավթի մեչքին։
Որ զա՞րգեց, գինին թափավ Դավթի գլխուց.
Թռավ, կայնավ, դարցավ, որ բռնա զա՞րգողին.
Թը՝ «Եդ ի՞մալ մարթ պրդի եղնի,
Որ հըմլա՛ ընձի կը զա՞րգա՞»...
Տեսավ որ՝ ուր քեռին եր՝
Շաբուխտե մ՝ ուր ձեռք կայնուկ եը.
Ըսեց.— Քե՞ռի, Ասվաձ խե՞րն ենա.
Յես մամուց եղեր իմ հա՞ըի ըսոր
Դու պըլընդրուկ չզա՞րգեր իս ընձի,
Ըսոր դու ընձի վառեցի՞ր։
Քեռին նեղեցավ Դավիթի վրրեն,
Ըսեց.— Իմկնի՞ Սասունա ծուռ,
Դու քու իշութենով պըդի սպանվիս։
Ըսեց.— Յորի՞, քե՞ռի, ի՞նչ եղեր ա՞։
Ըսեց.— Հըլա՛ իդա թաղիք վերո՛ւ։
Դավիթ թաղիք վերուց, տեսավ որ՝
Քառսուն հաղ թուր եդ թաղքի վրրեն կա։
Ըսեց.— Քե՞ռի, եդ ի՞նչ թուր ին։
Քեռին քընծըղդաց, ըսեց.
— Լա՛ո, դու Յընդեր, քներ իս,
Իդա թրեր եդոնք քաշած ա՞,
Որ ըզքըզի զա՞րդա, ըրրթա...
— Ե՛, քե՞ռի, ըսեց, որ եդմալ ա՞,
Քու պառեկ զա՞ըգ դռան։
Քեռին պառեկ զա՞րդեց դռան,
Որ չելնին, փախնին եդոնք։
Դավիթ մեգ-մեգ բռնեց,
Եդ քառսունի գլուխ կդրեց,
Թալեց Խանդութի փա՞նջա՞րի Յառեչ՝
Թա՞՛ ջանդըքներ, թա՞՛ գըլխըտան։

Սաբախտան Խանդութ Յելավ,
Փա՞նջա՞րի խափըղներ պրդի բանա.
Խափըղներ որ կը զա՞րդա,
Յեդ չերթան, որ բանա։
Մեգ լը զա՞րդեց, որ բացվավ,

Եդ ջանդըքներ թափվան փանջարի Յեդեվեն։
Տեսավ որ՝ եդ կըտրիճներն ա՛,
Որ եգե, ուր սիրուն կ'ուաեն, կը խմեն,
Որ ինք եդոնց մեգին առնե։
«Ե՛խ, ...իմ ձըր բերան, – ըսաց.
Ձըր տեխ եդ ա՛, որ կա։
Բա՛, յես թողիմ զըԴավիթ, ձըզի՞ առնիմ։

36. Դավթի յեվ Խանդութի առաջին հանդիպումը. Քեռի Թորոսը հավանում է Խանդութին

Քեռին Յելավ, ջըհար ճամփեց Վաչոյին,
Ըսեց. «Թըխ իմ հարսի վոդ ու ձեռ տեսնի,
Իմ հարս հանի, վերցում, երթամ մըր տուն։
Յես լորճի չիմ, եգեր իմ Յոդա լոր ծախիմ.
Թը չե Կաղզըվան առ ու գերի կ'առնիմ, կ'երթամ»։
Վաչոն Յելավ, եդավ Քեռի Թորոսի մոդ, ըսեց.
— Քեռի՞ Թորոս, իմ ախճիկ նշալու յա՛.
Յերեվան Շաբու Յերգա՛նի տղի նշալուն ա՛։
Ձըր որենքով լը նշանեցին ախճիկ,
Նշան ել Յեդ չդա՛ռնա...
Գնա՛, թը են մարթուն Յախթեցի՞ր,
ԶըԽանդութ կ'իտամ Դավիթին.
Թը են մարթուն չախթեցի՞ր,
Զաթի են մարթու նշալուն ա՛։
Քեռին ըսեց.— Որ եդմա՛լ ա՛,
Խանդութ ճամփա Խաս բախչեն,
Թրխ իմ տղեն ու Խանդութ իրար տեսնին։
Բա՛լքի քու ախճիկ չհաՉնավ իմ տղին,
Յա իմ տղեն չհաՉնավ քու ախճըկան։
Յորի՞ երթամ, խըլղի մեխկ ու արնի տակ մտնիմ։

Խանդութ որ լըսեց եդ խոսք,
Յելավ հաքավ ուը շորեր,
Քառսուն հադ ախճրկերք ուր Յառեչ,
Քառսուն լը Յեդեվ Յընդրցուց,
Յինք որթալախ կը քելեր։

Դազ մի աջմու գազով եդոր բոլ
Եդ ախճըկներու բոյեն յերգեն եր։
Քեռի Թորոս առավ Դավիթին,
Եգավ եդ Խաս բախչի գուռ։
Ըսեց.— Դաւիթ, լաւո, կայնիք յուդա,
Դուան մեչ Խանգութին տես ի տես.
Թը կը հաշնի՞ք իրարու, թը չը՞ք հաշնի,
Յինք թողեց, գնաց Խաս բախչեն.
Հըմա դարցավ, գոխտու եգավ,
Մոգիկ ծառի տակ, տապավ։
Խանգութ որ եգավ, գ'ընցներ դուան միչեն,
Դավիթ ձեռ թալեց Խանգութի վրդով, մեգ պաքեց.
Որ մեգ պաքեց, Խանգութ դարցավ, ըսեց.
— Դաւիթ, իդա քու ճամփու խաթեր։
Մեգ լը պաքեց, դարցավ, ըսեց.
— Իդա Քեռի Թորոսի խաթեր։
Մեգ լը պաքեց, Խանգութ ըսեց.
— Իդա լը քու Աստու խաթեր։
Դաւիթ, ել գաւազութեն մ' ենի.
Ել չըմ թողի՝ դու պաքիս։
Դավիթ յանգաճ չերեց, մեգ լը պաքեց։
Մեգ լը որ Դավիթ պաքեց,
Խանգութ ձեռ գաւրգեց Դավիթի սիրտ,
Զը Դավիթի պառեկ գաւրգեց դուան դրընդուն.
Գաւրգեց, արուն Դավիթի պրնչներուց թալեց։
Դավիթ քաշեց ուր գուրզն,
Որ գուրզն գաւրգա Խանգութին։
Դավիթ որ գուրզ քաշեց, որ գաւրգեր,
Քեռի Թորոս հասավ, ուր թեվ բոնեց,
Ըսեց.— Դաւիթ, լաւո, ինչ կ'ենիս։
Ըսեց.— Քեռի Թորոս,
Հացն ու գինին, Տեր կենդանին,
Գուրզ մի պըղի գաւրգիմ Խանգութին.
Յա Աստած կ'իտա ենոր, յա ընձի։
Ետեխ որ Դավիթ յերթում կերավ,
Քեռին հերսոդավ Դավիթի վրըն։
— Դաւիթ, լաւո, ըսեց, դու յընչի՞ յերթվար.

Շեր շեր ա՛, չը ժը՛ն ա՛ չը մեր ա՛։*
Բա՛, Դա՛վիթ, քըզնե ու Խանդութից իմա՛լ տղա կ՚եղնի.
Դու դատիս, իմ տուն ավիրի՛ս։—
Ա՛խ, իմ բնութեն ու Քեռի Թորոսի նման ին,
Յես լը գ՚ուզիմ, որ իմ տուն զոչաղ կնիկ եղնի.
Մանր-մունր կնիկ բա՛ն մը չե.
Կովուց ել հորթ կ՚եղնի։
Առավ Դավիթին, Յիջավ Արազա վրրեն։
Արազա ջուր զա՛րդեց պընչին,
Անճախ Դավիթի քիթ ու մռութ իստըգեց։
Խիդըր մի բամպակ զա՛րդեց Դավիթի քիթ.
Անճախ արուն կայնավ։
Քեռին առավ զԴավիթ, եգավ։

37. Քեռի Թորոսի պատվերը Խանդութին

Եդ որ մացին Յոդի հա՛րի սարախտան.
Սարախտան քեռին Յելավ, խանչեց Խանդութին,
Ոսիաթ երեց, դարցավ, ըսեց.
— Խանդո՛ւթ, լա՛ո, երթալ իմ ձեռ, զալ Ասսուն.
Յես ի՛նչ գինամ՝ իմալ կ՚եզնի.
Բա՛լքի են մարդիկ զոռ եզնին,
Զըմըզի զա՛րգին, սպանին,
Մեխկ քու վիզ եղնի՛...
Յոթն որ որ թըմմավ՝ եգանք, չեգանք,
Գ՚իկաս ջանդըքներու մեչ դաշիս...
Մըր մեչքի վրրեն Մսե խաչ կա,
Առնիս մըզի, մըր տերտերով, քահանով թաղիս։
Խանդութ ըսեց.— Քեռի՛, հուս ունիմ Ասսու,
Որ ձրզի Յախթող դուշման չեզնի.
Կ՚երթաք, ըզգուշման գ՚ախթիք,
Բարո՛վ, խերո՛վ գ՚իկաք։
Քեռի Թո՛րոս առավ Դավիթին,
Յելավ իդա Յերեվնու վրրեն կռիվ։

---

* Քրդերեն՝ Առյուծն առյուծ ե, թե կին, թե մարդ, այսինքն՝ եգ, թե վորձ։ Կ. Մ.-Ո.

38. Քեռի Թորոսն ու Դավիթը հագթում են Շաթու Ցերգանի տղին. Դավիթը հարձակվում և խանգութի վրա յեվ կատարում իր յերդումը

Եգավ եղ Արագի բերան,
Ջրհար երեց Շաթու Ցերգանի աղին,
Թր.— Դու քանի գլխու տեր իս,
Որ դու գաս, իմ հարս ուզիս
Քու ավուր հազրը կեցի,
Որ իմ կռիվ կռիվ ա վըր քրգի
Շաթու Ցերգանի տղեն քոմմեց ուր զորք,
Յելավ, գնաց Քեռի Թորոսի յառեչ
Կռվեն, վեց որ կռվեն...
Քեռին ու Դավիթ հրմալ կտրեցին, ջարդեցին,
Տարան, գեղոնք լցին Սեվանա ծով,
Պըլըսցուցին, դարցան, յեղ եգան

Յոթն որ թամբմեր եր
Որ չեգան, խանդութ ըսեց.
«Հեյ-վաթս, չեղնի՞, սպանվան քեռին ու Դավիթ»
Յելավ, ալափաչա ձի մի կար վաչոյին,
Են լը ագեկ ձի յեր.
Խանդութ քաշեց, հեձավ,
Որ իկա Դավիթի ջանդաքն ու քեռու տանե,
Տանե, հորել տա տերտերով, քահանով
Քեռին, Դավիթ լը գ'իկան
Կազդրվընուն մոդիգցած են
Դավիթ տեսավ որ՝ խանդութ գ'իկա
Դավիթ ուր ձին քշեց,
Որ երթա խանդութին զարգա
Քեռին ուր ձին քշեց,
Դավիթի ձիու յառեչ կտրեց,
Դարցավ, բռռաց, ըսեց.
— Խանդութ, լաո, դարցի՛, փախի՛...
Խանդութ գիցավ որ՝ Դավիթ յերթում երեր ա,
Յերթում յերթում ա, պրդի զարգա,
Դարցավ, ուր ձիով փախավ
Դավիթ քեռու ձեռնեն պրծավ,

Յընգավ Խանդութի Յեդեվ։
Հրմալ տեխ մի հասավ, որ մեծ խայեք կար ետեխ։
Դավիթ ուր գուրզ բերելուն՝
Խանդութ զինք թալեց զնարի տակ։
Որ եդոր գուրզ քիսավ զնարին,
Զնարից կտոր մի կտրեց, թալեց.
Յոթ ջուխտ գրմեշ լձեն,
Չկր՛ռնեն քաշեն, տանեն։
Դավիթի Յերթում տեխն եգավ։
Քեռին հասավ, Դավիթին պռնեց.
Յելան, ուրարու հետ եգան Կաղզըվան։

39. Դավթի ու Խանդութի հարսանիքը

Են որ մացին ետեխ։
Սաբախտան քեռին ջրհաբ ճամփեց,
Վաչոյ-Մարջոյին ըսեց.
«Յես լորճի չիմ, եգեր իմ լոր ծախիմ.
Իմ հարսի վոդ ու ձեռ կը տեսնիս,
Որ առնիմ, երթամ մրը տուն.
Թը չե՝ Կաղզըվան առ ու գերի կ'ենիմ,
Յեդ կ'առնիմ, կ'երթամ Սասուն»։
Ել Վաչոն չկր՛րցավ ճանփա գտներ.
Յելավ, Խանդութին թա՛դա՛րուք տեսավ։
Քեռին հեձրցուց Խանդութին,
Առավ, գնաց Սասուն։
Բերեց յոթ ձեռք դհոլ ու զուռնա,
Յոթ որ, յոթ գիշեր Դավիթի հարսնիք երեց,
ԶրԴավիթ պսակե՛ց...
Դավիթ հասավ ուր մուրազին,
Դուք լր հասնիք ձրր մուրազին։
Իրեք խնձոր Յիչավ Յերկնուց,
Մեգ՝ հեքա՛թ ըսողին,
Մեգ՝ շադ խոսողին,
Մեգ լր ընձի։

40. Խանդութի դարձը հերանց. Նորածին Մհերի ափի արյունը յեվ Դավթի գուշակությունը

Յոթ-ութ ամիս որ մացին,
Մեծ զատկի որերն եր։—
Մըր դրութեն կար, որ ախճիկ տարան,
Մեծ զատկին դարց կը բերեն պաբու տուն։—
Վաչոն ճանփեց, առավ Խանդութին,
Եգավ ուր տուն՝ Կաղզըվան։
Խանդութ են վախտ երեխով եր.
Եգավ ուր պաբու տուն,
Պառգավ, բերեց տղե մ'։—
Դեհ, Դավիթից ու Խանդութից
Մանդր աղա խո՛ չեղներ...
Տեսան որ՝ Աղնանցորդի՛ յա։
Հըմա տղեն որ կը լողկըցուցեն,
Տեսան որ՝ մեգ ձեռ խուփ ա՛։
Ինչ իլաջ երին չերին,
Տղի ձեռ չբացվավ։
Վաչոն Յելավ ուր աուն,
Դավիթին նամակ մի գրեց.
«Դա՛վիթ, Յաշքդ լո՛ւս եղնի.
Քըզի տղե մ' եղեր ա՛,
Մենակ մեգ ձեռ սա՛խա՛թ ա՛»։
Դավիթ որ եդ նամակ կարդըցավ,
Յելավ հեձավ, եգավ Կաղզըվան։
Եգավ Վաչոյի տուն, ըսեց.
— Հըլը տղի ղոնդախ տվեք,
Տեսնիմ՝ իմա՛լ տղա յա։
Դավիթ առավ տղեն, տեսավ.
Ձեռ մաժեց, մատներ բացվավ։
Տդի ձեռն որ բացվավ,
Ես ափոնց մեչ արուն գոլ կայնուկ եր։
Դավիթ ետեխ ծիծղաց.
Որ ծիծղաց, Վաչոն հարցուց.
— Դա՛վիթ, ընչի՞ ծիծղացիր։
Ըսեց.— Իդա տղեն յոթ դաթ վըր ընձի արունխում ա՛։

Մնաց երգու-իրեք որ,
Դավիթ աղեն տվեց կնքել,
Տղի անուն դրեց Մհեր։

41. Դավթի յերդումը յեվ Վաչոյի դավադրությունը. Խանդութը պաշտպանում և Դավթին յեվ միասին վերադառնում են Սասուն

Դավիթ որ Վաչոյին ըսեց՝
Իդա տղեն յոթ զաթ վրը ընձի արունխում ա՛,
Վաչո-Մարջոն ըսեց.
— Դա՛վիթ, եդքան արուն երիր,
Ի՞նչ հասկըցար, որ եդ հասկընա։
Ա՛խր, մեխկ եք, խեղճ եք.
Ջրը որենքով լը մեղավոր եք։
Վաչոն-Մարջոն կպան Դավթի հոգուց,
Թը.— Դա՛վիթ, արի՛ Յերթում երա,
Որ ել արունք չե՛նիս,
Ինչ Յուզիս, կ՚իտամ քըզի։
Դավիթ ըսեց.— Արունք չմե՛նի։
Վաղ չեգան, ըսեցին.
— Իլահի, քու սուփ Նրշանի վըրեն Յերթում երա,
Որ մենք հավագանք՝ ել արուն չե՛նիս։
Դավիթ ինչ երեց, յախա չազադեց։
Դավիթ Յելավ դուս, ուր [սուփ Նիշան] փոխեց,
Բերեց, դրեց ձախ ծոց,
Սանդը լը դրեց Յաչ ծոց,
Եգավ, Յերթում երեց։
Ձեռ զա՛րգեց Յաչ ծոց, ըսեց.
— Ես սուփ Նիշան ընձի խոով եղնի,
Որ յես ել արունք ենիմ։
Հըմա սուփ Նիշան ձախ ծոց չկայներ եր,
Ալացեր եր, եգեր, ուր տեխ կայներ եր։
Դավիթ որ ձեռ զա՛րգեց սուփ Նիշանին,
Յերթում երեց սուփ Նիշանին,
Դավիթ շադ թուլցավ։
Դավիթ որ թուլցավ, շադ մնաց Յողի,
Յոթ-ութ ամիս մնաց։

Վաչոն ի՞նչ երեց.—
Վաչոն Յելավ ուր ժողովուրդին խանչեց,
Ըսեց.— Դավիթ թուլցեր ա՞.
Դավիթ որ կ'երթա Սասուն,
Կռնա՞ք Դավթի Յառեչ կտրիք,
Զա՞րգիք զըԴավիթ սպաննիք,
Խանգութ գարցունք, բերինք։
Խանդութ հասկըցավ որ՝
Ուր պար զ'ուզա Դավթին տա սպաննել։
Խանդութ տղեն թողեց ուր մամու մոդ,
Յելավ, Դավթի զրրխ առավ, հաքավ,
Գո՞րզ կապեց ուր վըրեն, զըԴավիթ հեծրցուց,
Յընգավ հըտ կըշտին ու գացին։
Որ Յելան Կաղզըվանու տակ,
Տեսան որ՝ ճամփեն կտրած են։
Եդոնք լր տեսան որ՝
Դավիթ չկըռնա խըլվըլա վըր ձիուն.
Քշեցին Դավիթի վըրեն,
Որ զա՞րգին Դավիթին, սպաննին։
Խանգութ գո՞րզ քաշեց,
Ուր դուշմընին զա՞րգեց.
Հա՞րի Կաղզրվրնու ձորեն Յելավ,
Հինգ հազար մարթ կտրեց,
ԶըԴավիթ պըրձըցուց, ազատավ,
Սալամաթ առավ, գնաց Սասուն։
Դավիթն որ եգավ, հասավ Սասուն,
Քեռի Թորոս տեսավ, որ Դավիթ թուլցեր ա՞,
Ըսեց.— Դա՞վիթ, լա՞ո, իմ Յաչքեր քոռնա,
Կ'եղնի՞ որ դու Յերթում ես կերե սուփ Նշանի վրրեն։
Դավիթ ըսեց.— Քե՞ռի, ինչ երեցի,
Չկրրցանք պըրձնի Վաչոյի ձեռնեն ու Մարջոյի։
Յելա, իմ սուփ Նիշանի տեխ փոխի, եգա։
Յես ըսի՝ դարդակ ա՞ ուր տեխ.
Սուփ Նիշան եգեր եր ուր տեխ։
Չեռ զա՞րգի սուփ Նիշանին,
Յերթվա, թուլցա յես, քե՞ռի։
Ել Դավիթ չկըռներ ուրիշ տեխ երթեր.
Եզեր եր իմալ մարթ մի հիվանդ եղնի։

Որ* անգամ մի գ'իչներ Սասունա ցած,
Գ'իկեր Մեղրագետ, կը լողկըներ,
Կր գառներ, կ'երթեր ուրանց տուն։

42. Ջիմջիմի Սուլթանը Դավթին մահացու վերք և հասցնում. Քեռի Թորոսն ու տղեկներն ոգնության են հասնում. Դավիթն սպանում և իրեն վիրավորողին

Եդ կռապաշտութեն տեսան,
Որ Դավիթ գ'իկա եդ Մեղրագետ,
Կր լողկընա, կ'երթա ուրանց տուն.
Ջիմջիմի Սուլթանին խապար տվին,
Թը. «Դավիթ որ գ'իկա,
Են վախտ որ կը տրկլողնա, կը լողկնա,
Թր զա̈րգիս, գու կըռնաս զա̈րգի.
Մենք չկրռնանք զա̈րգի Դավիթին»։
Ջիմջիմի Սուլթան սազլըղի մեչ կը մներ։
Դավիթն որ կր տրկլողնա, կը մգնի ջուր,
Ջիմջիմի Սուլթան կը զա̈րգա Դավթին։
Ջիմջիմի Սուլթան որ զա̈րգեց,
Դավիթ բոռաց, ձեն գնաց Սասուն։
Քեռի Թորոս լսեց Դավիթի ձեն,
Ըսեց.— Տղա́, լա́ո, ժելե՛ք,
Ջիմջիմի Սուլթան Դավիթին զա̈րգեց։
Հեձան, եգան, հասան Դավիթի մոդ։
Քեռին հարցուց Դավթին.
— Տղա́, լա́ո, քըզի վո՛ւոր զա̈րգեց։
Ըսեց.— Քեռի Թորոս,
Ընձի զա̈րգեց Ջիմջիմի Սուլթան.
Հըլա ես ջիմգեքու մեչն ա̈։
Գաշեցին ջիմգեքու մեչ, գտան,
Բռնեցին, առան, եգան։
Դավիթ ըսեց.— Տղա́, լա́ո, բերեք եստեխ,
Իմ ձեռնով զեդոր գլուխ լը կդրիմ,
Հըմին յես պըդի մեռնիմ։

---

* Որ—որը, որական։ Կ. Մ.-Ռ.

Բերին, տվին ենոր։
Դավիթ եդոր գլուխ լը ոլըրեց, կգրեց.
Ու Յինք լը ետեխ մեռավ։

43. Դավթից հետո Խանդութն ինքնառպան և լինում

Քեռի Թորոս միտք երեց.
«Որ ղԴավիթ մեռուկ տանիմ,
Վա՛յ թե Խանդութ ուրին տանքեն թալա, սպանա»։
Ըսեց.— Տղեկներ, բերեք զըԴավիթ,
Քոթաք կապինք ձիու վրրեն,
Յելնինք, ջրինդ խաղալով երթանք,
Բալքի Խանդութ չգինա, որ Դավիթ մեռեր ա՛։
Հըմա Խանդութ Յելած տանիք,—
Բանցր եր ուրենց տանիք,
Քարերու վրրա յեր շինուկ,—
Յըմեն կողմ կ'իշկեր, տեսներ՝
Դավիթ սա՞ղ գ'իկա, թա՞ մեռուկ։
Խանդութ իշկեց, տեսավ որ՝
Ջրինդ խաղալով գ'իկան եդոնք։
Դավիթ հեձուկ ա՛ ուր ձին,
Սկի չի խըլվըլա ուր տեխեն։
Խանդութ հասկըցավ, որ Դավիթ մեռուկ ա՛.
Ըսեց.

«Վո՛ւոր աժեց, եգավ,
Վո՛ւոր չաժեց, եգավ,
Իմ շայ-բալաբան Դավիթ չեգավ»։

Են քոփակ Ցռան Վեքոն
Յոգի տանքի վրրեն կայնուկ եր,
Վերցուց, ըսեց Խանդութին.
— Կը պակսի շայ-բալարան Դավիթ,
Քըզի չպա՛կսի պարոն իրիկ։
Դարցավ Խանդութ ըսեց.
— Յես ...իմ քու բերան,
Դավիթի պեսա մարթ մեռնի,
Յես դամ, քըզի պեստ մա՞րթ առնիմ։

Ուրին տանքից վըր գլխուն թալեց ցած.
Գլուխ զա՛րգյեց քարին։
Քար հըմալ գըբցավ որ՝
Կոգ մի ցորեն գ՛ըլնեն մեչ,
Գ՛ելնին, սանդ կը ձեձեն։
Քեռի Թորոս հա՛րի հասավ,
Խանդութ զինք թալեց ցած, սպանեց։
Զերգուս լր տարավ, թազեց.
Որ թազեց, Յելավ, եգավ Կազզըվան։

44. Քեռի Թորոսը գնում և Կազզվան Մհերին Սասուն դարձնելու, բայց չի գտնում նրան

Յելավ եգավ Կազզըվան։
Եգավ Կազզըվան Վաչոյի տուն.
Ըսեց.— Վա՛չո, իմ Մհեր ո՞ւր ա՛,
Տո՛ւր, տանիմ մրր տուն։
Վաչոն ըսեց.— Քու տուն քանդվի,
Քու ազեն մեռեր ա՛, իդա շաբաթ մ՛ երգուս։
Ըսեց.— Վա՛չո, իմ ազեն սաղ ա՛.
Իմ ազեն տուր, տանիմ Սասուն։
Վաչոն ըսեց.— Զրս ա՞վդնա,
Հանդա թա՛ժա՛ գերեզման հորեր իմ,
Զըր տերտերով լր թազեր իմ տրվե։
Քեռին ըսեց.— Վա՛չո, Յելի՛ երթանք,
Յես իմ ազի գերեզման կր ճանչընամ։
Յելան, դացին դերեզմըներ։
Քեռի Թորոս ուր շենքերով
Յելավ չափեց յոթ շենք։
Տեսավ որ՝ մեգ շենք եր գերեզման.
Զեռքերով գերեզման քանդեց։
Վաչոն ըսեց.— Զա՛նըմ, տերտերով ա՛ թազուկ.
Ա՛խր մեխկ ա՛, Յո՞րի կը քանդիս.
Ա՛խր գերեզման խաչակընքուկ ա՛...
Քեռի Թորոս ըսեց.
— Զեն խաչ յես զարուլ չըմ ե՛նի.
Զեդ գերեզման յես կը քանդիմ։

Քանդեց, տեսավ որ՝ ոսկոր ա՛.
Աման-չաման հադ-կդոը բերե,
Լցե, երե տղի գերեզման։
Քեռին ըսեց.— Վա՛չո, իմ տղեն տուր.
Ո՞ւր ա՛, կ'ըսես՝ տղեն թաղեր իմ։
Վաչոն ըսեց Քեռի Թորոսին.
— Տղա չկա իմ մոգ, ուր կ'երթաս, գնա՛։
Քեռի Թորոս տեսավ որ՝ ուր ուժեն գուս ա՛,
Չկըռներ զրտղեն զոռով առներ,
Յելավ թողեց, եգավ Սասուն։

45. Քեռի Թորոսը յերկրորդ անգամ Ձենով Հովանի հետ գնում և Կաղզվան. Մհերը Ձենով Հովանի կանչով յելնում, գնում և նրանց մոտ. Քեռի Թորոսը փորձում և նրան

Իդահախ մացին մեգ վախտ մի.
Եդոնց վըրեն զոռ կ'ենին կռապաշդներ։
Քեռի Թորոս տեսավ որ՝ «Ձե՛, բո՛շ ա՛,
Խարխըռներ եգած են, ուրանց Յաչքեր կը հանին»։
Տասը-տըսնըհինզ տարի թըմմավ։
Քեռի Թորոս միտք երեց,
Ըսեց.— Ձինո՛վ Ոհան, Յելի՛,
Լա՛ո, Յելի, երթանք Կաղզըվան,
Բա՛լքի Դավթի տզա Մհեր առնինք, դանք։
Լա՛ո, խարխըռներ լը եգած ին,
Մըր Յաչքեր գ'ուզին, կը հանին.
Ել մըր ապրուստ չե՛ղնի։—
Ձինով Ոհանի ձեն շադ եր,
Հրմա Յինք ուժով չեր։
Ենիկ մըզ նման մարթ եր,
Ենոր ուժ ուր ձեն եր։—

Յելավ առավ Ձինով Ոհան,
Յոթ հադ լը գըմշու կաշի,
Յընցավ, դնաց Կաղզըվան։
Կաղզըվընու վերեվ սար ա՛։
Որ եդ սարից գ'իչնիս,

Կաղզըվընու մոդիկ բլուր ա՛։
Կայնան եդ բլուրի վըրեն։
Բերեց յոթ գըմշու կաշին,
Փաթըթեց Զինով Ոհանին։
Ֆեռի Թորոս ըսեց.
— Զինո՛վ Ոհան, բոռա՛ իրեք անգամ։
Թը Դավիթի աղեն ա՛ Մհեր, գ'իկա.
Թը Դավիթի աղեն չե, մըզի պետք չե։
Իրեք անգամ բոռաց Զինով Ոհան։
Յառչի անգամ որ բոռաց,
Տղեն հրմլա Յոդի մեչ նստուկ եր։
Որ տղեն լսեց իդա ձեն,
Թռավ, կայնավ ուր տեխեն։
Վաչո-Մարջոն փաթըթան վիզ.
— Զա՛նրմ, ի՞նչ եղավ քրզի։
— Զա՛նրմ, ընձի խանչեցին։
Վաչո-Մաըջոն ըսեց.
— Լա՛ո, քու հեդ չին։
Ի՞նչ ա՛, գու մինա՛կ իս Մհեր.
Իդա քաղաք Մհեր շա՛դ...
Մեգ լը բոռաց, ըսեց.
«Դավթի տղա Մհե՛ր,
Թը դու սա՛ղ իս, արի՛»։
Մհեր որ իդա ձեն լսեց,
Զա՛րգյեց շուշա-մուշա,
Կոտրեց Յոդի փանջարեն,
Տեսավ որ՝ երգու մարթ Յելած են,
Կայնուկ ին են դարի վրեն։
Մեգ լը որ բոռաց, ըսեց.
«Դավթի տղա Մհե՛ր,
Թը դու սա՛ղ իս, ա՛րի՛»...
Տեսավ որ՝ եդ մարթիկն են,
Որ ուրին կը բոռան,
Յելավ մտավ թավլեն,
Զրվաչոյի ձին քաշեց, հեձավ,
Վաչոյի գո՛ւրզ լը կապեց վըր ուրին,
Դիմեց դեմ ի եդ երգու մարթ.
Յելավ բլուրի գլուխ, կայնավ։

Որ հասավ Քեռի Թորոսի մոդ,
Քեռի Թորոս ըսեց.
— Զինո՛վ Ոհան, կայնի՛ ջըրբիմ.
Թը Դավթի տղե՛ն ա՛, կը տանիմ.
Թը Դավթի տղե՛ն չի, կը զա՛րգիմ,
Թոզնինք, երթանք Սասուն։
Որ հասավ Քեռի Թորոսի մոդ,
Քեռի Թորոս մըհանա կը գաշա։
Ըսեց.— Տղա՛, լա՛ո, եդ ո՛ւր կ՚երթաս.
Կ՚երթաս եդմալ հրբա՛րտ, հրբա՛րտ։
Ըսեց.— Ընձի երդու մարթ կը խանչեն.
Ենգոնք դո՛րվի գացին։
Ըսեց.— Դու ի՞նչ մարթ իս, որ քըզի խանչեն.
Դու ճի՛ժ իս, տղե՛ մ՚ իս։
Ըսեց.— Ի՞մալ, դու մա՛րթ իս, հրբա յես մարթ չի՞մ։
Քեռի Թորոս ըսեց.
— Տղա՛, լա՛ո, քըզի գո՛ւրզ մի կը թալեմ,
Հըմա դու ճիժ իս, Յառեչ դո՛ւ քու գո՛ւրզ թալ,
Յետեվ յես կը թալեմ գիմ գո՛ւրզ։
Տղեն որ ուր գո՛ւրզ բերեց,
Քեռի Թորոս քշեց Վեցոգնեն Լա՛զզին,
Մհերի ձիու դոշի տըգով Յընցավ։
Մհերի գո՛ւրզ բոշի գնաց։
Քեռի Թորոս ոլըրավ, կայնավ, ըսեց.
— Տղա՛, լա՛ո, քըզի հազըր պահա,
Որ քըզի իմ մրզրախ զարգիմ։
Մրզրախն որ զա՛րգեց քեռին,
Մհերի ճուռ փարչըմեց թամքին։
Որ քաշեց, Մհեր ըսկի ո՛ֆ չերեց։
Մհերն որ ո՛ֆ չերեց, ըսեց.
— Յա՛, տղա՛, քու հոր հերական ըսա՛,
Քու մոր մերական ըսա.
Յա յես գինամ՝ դու բիճ՛ իս։
Յես իմ մրզրախ կը զա՛րգիմ,
Ապառաժ քարեր կը ձեվա, կը թալա,
Դու ըսկի ո՛ֆ չերիր...
Մհեր ըսեց.— Բիճ՛ դո՛ւ իս.
Իմ հոր հերական Վաչոն ա՛.

Իմ մոր մերական Մարջոն ա։
— Վաթս, ըսեց, իմ յաչքեր քոռնա...
Գադավ, ուշք յընցավ ուր կրսկրծուն։
Մհեր մոլըրավ, կայնավ, ըսեց.
— Եդ հայ ծուռ ա, յընգնավոր ա.
Յինք զարգյեց, ընձի բրինդար երեց,
Յինք լը պադավ, մեռավ.
Եդ ինչ բան ա. եդ իմալ եղավ։
Զինով Ոհան հասավ, ջուր ըերեց,
Լցեց Քեռի Թորոսի յերսին։
Քեռի Թորոս յիմցավ, կայնավ։

46. Մհերը կռապաշտներից ատելում է հոր մահվան վրեժը

Մհեր ըսեց.— Քեռի, եդ ինչ բան ա.
Դու ընձի գարգիր, բրինգար երիր,
Դու լը պադար, մեռար...
Եդ ինչ բան ա, քեռի։
Ըսեց.— Տի, տղա, լաո,
Հըրա յես չմեռնիմ, վրուր մեռնի.
Քու հոր հերական Դավիթ եղնի,
Քու մոր մերական Յանդուխտ եղնի,
Դու ըսոր յելնիս, ըսիս՝
Վաչոն՝ իմ հոր հերականն,
Մարջոն՝ իմ մոր մերականն։
— Հըրա, քեռի, ըսեց,
Որ իմ հոր հերական Դավիթն ա
Հըրա յուր ա իմ պար։
Ըսեց.— Լաո, սպանվեր ա քու պար։
Ըսեց.— Քեռի, վրուրն ա սպանե իմ պար։
Ըսեց.— Լաո, կռապաշտներ սպանին քու պար։
Ըսեց.— Վրտեխի կռապաշտներ։
Ըսեց.— Լաո, իդա կադըվրնու բռնա,
Հարի, երթանք, յելնինք Սասուն,
Հըմեն գուշման ին մըգի։
Ետեխ Մհեր յերթում երեց, ըսեց.

«Հացն ու գինին, Տեր կենդանին.
Կազզըվընու կը կտրիմ,
Եըթամ, Յելնիմ հաՐի Սասուն»։—

Եդ Յառչի Յերթումն ա՛ Մհերի։—

Քեռին Մհերի բրին կապեց,
Մհեր հեձավ ուր ձին,
Քեռու հեդ Յիջավ Կազզըվան։
Յառեչ զՎաչոն-Մարջոն բռնեց,
Զա՛րգյեց, մորթեց Մհեր։
Յոնքըցի ձեռքվավ կդրեց,
Հա՛րի դնաց, Յելավ Սասուն։
Քեռին ու Մհեր որ հասան Սասուն,
Վա՛խտ մի մացին ուրանց տուն։
Քեռին զՔուռկի Զալլաղ տվեց Մհերին։
Դավիթի զըրխ, թագն ու գո՛ւրզ ավեց Մհերին։
Մհեր կը հեձներ ուր ձին, կ'երթեր,
Ուրեն նեճրութեն կ'եներ, գ'իկեր։

Վախտ մի ուրանց եղպեստ ապրան։
Մհեր իդահախ կը հեձներ, կ'երթեր,
Զորս կողմ կռապաշդութեն կը զա՛րդեր
Զեդոնց կը ջարդեր ու կը լարեր։
Լարեց կռապաշդութեն, լարե՛ց,
Ուրանց սինոռներուց հեռեցուց։

47. Մհերը Զենով Հովանի համար բերում և Դեղձուն Ծամին

Զինով Ոհան Յիմցեր եր Դեղձուն Ծամի անուն։
Զինով Ոհան որ մի Մհերին խանչեց, ըսեց.
— Մհե՛ր, կ'ըսին՝ Դեղձուն Ծամ շատ խորոտ ողլուշաղ ա՛։
Իմա՛լ ենինք, որ եդոր տեսնինք։
Մհեր ըսեց Զինով Ոհանին.
— Քու տուն շինվի՛, դու տեխ ըսա,
Յես Յիրիկվորե լուս կը բերիմ։
Ըսավ.— Աստղու Ցոլածնի նշանածն ա՛։

Մհեր ըսավ.— Դու մի վախենա,
Լուսուն իդահախ Դեղձուն Ծամ բերիմ քըզի։
Աստղու Ցոլածին կ'ապրեր մեշեքու մեչ։
Մհեր սալըխ երեց եդոր տեխ,
Հեծավ Քուռկի Ջալլադ, գնաց։

Հըմալ Յաջողվեր եր ենոր,
Աստղու Ցոլածին տուն չեղեր եր։
Մհեր կը վերցու Դեղձուն Ծամ,
Կը թալա ուր թարք, կ'առնա, գ'իկա Սասուն։
Բերեց, տվեց Զինով Ոհանին։

48. Մհերը գնում և Բաղդադ իր համար Գոհարին բերելու. Հանապարհին նրան հրապուրում և մի վորբևայրի կին. Նա իր դավակի համար ապարանջան և տալիս սիրականին

Գեղձուն Ծամ գիներ, թա՛ ուր համար ա՛ Մհեր բերե։
Որ տվեց Զինով Ոհանին, Դեղձուն Ծամ ըսեց.
— Մհեր, մա՛դա՛մ եդմալ քըզի արժան,
Մեգ տեխ ըմ աղճիկ մի կա,
Բաղդըգու Խալիֆի աղճիկն ա՛.
Ենոր անուն Գոհար ա՛։
Աստղու Ցոլածին ինչ խըդըր գնաց,
Չկըռցավ բերե ղԳոհար։
Թը տղամարթ իս, կ'երթաս, կը բերիս։
Մհեր որ եդոր սալըխ առավ,
Յելավ հեձավ ուր ձին...
Բաղդադ դո՛ր իս.— եգա՛ քըզի։

Մեղ որ ճանփա գնաց.
Գեղ մի խոնախ եղավ,
Գնաց որբեվերի կնգա մի տուն։
Կնիգ լը Յինք խորոդ եր.
Տեսավ, որ Մհերի պեստ տղա
Աշխարք յա՛ եգեր ա՛, յա պըգի գա,
Եդ կնիգ Յելավ Մհերին խափեց,
Մհերի հեդ մեգ տեխ մեգնվավ։
Մհեր վախտ մի ճնաց Յոգի։

Յելավ միտք երեց, ըսեց.
— Ջանրմ, յես տեխ կ'երթամ.
Յես Յուդա ապրող չիմ։
Կնիգ հարցուց.— Մհեր Յո՞ւր կ'երթաս։
Ըսեց.— Յես կ'երթամ Բաղդագ,
Խալիֆի աղճիկ՝ Գոհար բերիմ ընձի։
Ըսեց.— Մհեր, դու կ'երթաս.
Իմ հալ ի՞մալ կ'եղնի, յես ընչո՞վ ապրիմ։
Վերցուց ուր թիվի բազրանդ, տվեց եդ կընգան։
Եդ բազրանդ թանգարժուկ եր,
Որ կապուկ եր Մհերի թեվ։
Մհեր վերցուց ըսեց եդ կընգան.
— Թը ընձի աղե՞ մ' եղավ,
Կ'եղնի տրսնրհինգ տարեգան,
Յես ուր որ եղնիմ, սալրխ կ'առնիս,
Կը կապիս բազրանդ ուր թիվի վրեն,
Կը ճամփիս, գա մըր դեմ։
Թը աղճի՞կ եղավ, գ'ելնիս բազրանդ կը ծախիս,
Կ'ոգտա քըղի լը, քու աղճկան լը,
Հա՞ըի կ'ապրիս դու լը, աղճիկ լը։

49. Մհերի կռիվը Բաղդագի Խալիֆայի յեվ Մորա Մելիքի զորքի հետ. Գոհարը ծպտված յերեք անգամ փորձում և նրան

Իդահախ Մհեր Յելավ գնաց.
Գնաց, հասավ Բաղդագ.
Ջըհաբ ճամփցուց Բաղդրդու Խալիֆին,
Թը. «Յես եգեր իմ եստեխ,
Ուր աղճիկԳոհար գ'ուզիմ.
Խաթրով կ'իտա, թըղ տա.
Չի՞տա, Բաղդադ առ ու գերի կ'ենիմ,
Կ'առնիմ, կ'երթամ դեմի Սասուն»։
Խալիֆեն Ջըհաբ երեց Մհերին,
Թը. «Իմ աղճիկ նշանլու յա՞.
Յոթ որ ընձի վախթ իմ տուր,
Յոթ որ Յեդեվ՝ քըզի պատասխան կ'իտամ»։
Յոթ որ՝ որ ժամանակ Յուզեց,

Յինք Յելավ, գորք ժողվեց,
Աաբար երեց Մըսրա Մելիքին,
Թր. «Մհեր Սասունա եգեր ա,
Գ'ուգա, իմ աղճիկ գոռով տանի»։
Էն խըդըր ասքա՛ր ժողվեց,
Որ չափ ու սայման Յրնցավ։—
Ա՛խր, բովանդակ աշխարք կոտպաշդութեն եր։—
Զորք որ ժողվեց, Յելավ Մհերի հեդ կոխվ։
Սաբախտան որ եդոնք գ'ելնին,
կը կովին հա՛րի Յիրկուն։
Ինչ խըդըը որ գորք բերեց,
Մհեր գրմեն ջարդեց, կտրեց։
Մհեր կը գառներ եդոնց սինոռի մեչ,
Ուր չադըր կը գա՛րգեր,
կը ոհաթեր ուր չադըրի մեչ։

Գոհար Մհերի ձեն Յիմցեր եր։
Գոհար ի՞նչ երեց։—
Գոհար Յառչի որ Յելավ,
Հեձավ քուռեետ ձի մի,
Յինք հաքավ կարմիր շորեր,
Ջենք կապեց վրր ուրին,
Յելավ, Յիրկուն դիմեց,
Եգավ դեմի Մհերի չադըր։
Եգավ դոնեն բոռաց, ըսեց.
— Դավթի տղա Մհեր դա՛ն իս։
Մհեր բսեց.— Յես իմ։
Ըսեց.— Իմ քուր Գոհար դա՛ն իս եգի, կ'առնիս։
Ըսեց.— Չա՛, յես իմ եգի, կ'առնիմ, առնիմ։
Ըսեց.— Դ'ելի, իմ հեդ կըռվինք։
Թա՛ դու ընձի Յախթիր,
Լուսուն գիմ քուր Գոհար կ'իտամ,
կ'առնիս, կ'երթաս Սասուն։
Թա՛ դու ընձի չախթիր,
Յես քու գլուխ կը գա՛րգիմ։
Մհեր հեձավ, Յելավ մեյդան։
Գոհար լը Յելավ մեյդան, կայնավ։
Մհեր որ գա՛րգ թալեց, Գոհար վերուց.

Գոհար որ թալեց, Մհեր վերուց,
Մեզ մեզի չկրոցան, յախթեցին։
Գոհար ըսեց.— Մհեր, հերիք ա,
Իդա հայվրններ սպանեցինք,
Գե, գնա, յիջի քու տեխ, որհաթի.
Յես քրգի հաց ու ջուր կը ճամփիմ,
Կ'ուտիս, կը խմիս, հրմա չքնիս.
Թա քնար, կը ձնասվիս, գինուա։
Գոհար յելավ գնաց։
Գոհար գիներ եննդոր ուդելու չափ։
Յելավ, ոչխար մի կարմըրցուց,
Տիգ մի գինի, հաց լը հեդ տվեց,
Ուր յաոչեվի խըզմատչի առավ,
Գնաց Մհերի չագրրի դուռ։
Մհեր հաց կերավ, գինին խմեց,
Զքնավ, յիմաց ճնաց, հաբրի լուա...
Ջե որ թամրեհ ա երե Գոհար։

Լուս բացվավ, գորք յելավ մեյդան։
Մհեր հեձավ Քուռկի Ջալլադ,
Յրնգավ մեչ, զաբրգեց, ջարդեց,
Հաբրի յիրկուն խըլացուց գրմեն։
Յիրկուն դարցավ, եգավ,
Ուր չագրր, նստավ բոհաթավ։
Գոհար լը հաքավ ճերմակ շոր,
Ուր գենք կապեց, վրր ուրին,
Յելավ հեձավ բոզ ձի մի,
Եգավ, գՄհերի չադրի դուռ կտրեց,
— Հա, ըսեց, Դավթի տղա Մհեր դուն իս։
Մհեր ըսեց.— Հա, յես իմ։
— Իմ քուր Գոհար որ եգեր իս տանիս, դուն իս։
Մհեր ըսեց.— Հա, յես իմ։
Ըսեց.— Դ'ելի, հեդ բնձի գուլաշ կըպինք.
Թա բնձի զաբդիր գետին,
Լուսուն իմ քուր Գոհար կ'իդամ քրգի, տանիս.
Զաբդիր բնձի գետին,
Քու գլուխ, քու գաբդով կը կտրիմ։
Յելան Գոհար ու Մհեր՝

Ինչ որ երգու գըմշու առան իրար,
Իրեք սրհաթ տարան, բերան.
Նա ենի ընդոր զարգեց գետին.
Նա ենի ընդոր զարգեց գետին,
Գոհար ըսեց.— Մհեր, հերիք ա.
Ցես կ'երթամ հաց կը ճամփիմ,
Կ'ուտիս, կը խմիս, հրմա չքնիս.
Ինար քր չե, կը ֆնասվիս,
Ելի հաց ճամփեց, եգավ Մհերին,
Մհեր հաց կերավ, գինին խրմավ,
Մնաց հարի սարախտան,

Սարախտան Յելավ, կուվան,
Ինչխրդըր որ գորք եգեր եր,
Ջարդեց, գարդյեց, կտրեց,
Լարեց, Բաղդրդու հանեց,
Դարցավ, եգավ, ուր չադըր Յիջավ,
Եդ Յիրկուն Գոհար հաքավ սեվ շոր,
Ջուր գենքեր կապեց վըր ուրին,
Յելավ, սեվ ծի մի կար, քաշեց,
Հեձավ, եգավ, դեմի Մհերին,
Եգավ, Մհերի չադըրի դուռ կտրեց,
Ըսեց.— Դավթի տղա Մհեր դուն իս,
Մհեր ըսեց.— Հա, յես իմ,
— Իմ քուր Գոհար որ եգեր իս, կ'առնիս, դուն իս,
Մհեր ըսեց.— Հա, յես իմ,
— Դ'ելի, հարդ քրգի շարթ մի կտրիմ,
Թա դու տարար, ըսեց,
Իմ քուր Գոհար կ'իդամ քըգի,
Սարախտան կ'առնիս, կ'երթաս.
Թա յես տարա քըգի,
Ցես գքու գլուխ կըտրիմ,
Ըսեց.— Ի՞նչ ա քու շարթ,
Ըսեց.— Քու մադնիք դնինք, գարգինք,
Նետն ու անեզ միչեն Յընցունք,
Վճուր որ չկոցավ, ենի տարվուկ ա,—
Մհերի մադնիք հըմլե մ' եր.

Պստիկ մադնիք չեր, որ չրնցնե։
Մհերի մադնիք դրեցին։
Յառեչ Գոհար զա՛րգյեց.
Գոհար մադնիքի միչեն Յընցուց.
Մադնիք ըսկի չխըլվըլաց։
Իդահախ դոր եգավ Մհերին։
Մհեր որ զա՛րգելու երեց,
Գոհար Յելավ եգավ,
Խըստու կայնավ Մհերի Յառեչ։
Մհեր հըմլա իշկեց Գոհարի Յերես,
Գոհար են խրդըր խորոտ եր,
Որ Յաչք մի մնաց Գոհարի Յերես,
Յաչքով մի զա՛րգյեց մադնիքին։
Որ զա՛րգյեց մադնիքին, մադնիք թըռուց։
Որ չկոցավ միչեն Յընցուցեր,
Նետ ու անեղ մադնիքեն Յընցուցեր,
Գոհար գո՛ւրզ քաշեց, ըսեց.
— Խոսք խոսք ա՛, յես զքու գլուխ պըդի զա՛րգիմ։
Մհեր վերուց, ըսեց.
— Չե՛, դու իմ Յաչք խափիր.
Դու կայնար իմ Յառեչ,
Որ իշկեցի քու Յերես, ըսի՝
Գա՛լո՛, որ եդի իդա խըդըր խորոտ ա՛,
Հրբա քուր ի՞նչ խըդրր խորոտ կ'եղնի։
Բերեց, մեդ լր դրեց, ըսեց.
— Մհե՛ր, իդահախ Յընցուցի՞ր մադնիքի միչեն,
Իմ խոսք խոսք ա՛, իմ քուր Գոհար կ'իդամ քըզի։
Չընցուցիր, քու գլուխ կը զա՛րգիմ։
Դրեցին. Մհեր նշնեց, զա՛րգյեց,
Մադնիքի միչեն Յընցուց նետ ու անեղ։
Գոհար Յելավ ելի ըսեց.
— Մհե՛ր, կ'երթամ քըզի հաց ու ջուր կը ճամփիմ.
Կ'ուտիս, կը խմիս, հըմա չքնի՞ս,
Քըզի շադ մուզաթ կեցի՞,
Որ քնիս, կը վնասվի՞ս։
Գոհար հաց ճամփեց.
Մհեր կերավ, նստավ հա՛րի լուս։

Սաբախտան Յելավ, հեձավ ուը ձին,
Եդավ, Յիչավ կռվու դաշտ։
Մհեր կռվավ, կտրեց, զա՞րգյեց,
Յրմեն ջարդեց հա՞րի կեսորին։

50. Մհերին բռնում, ձգում են հորի մեջ

Կեսավուր եդոր դուրսդեն զոռեց վըր ուրին։
Քշեց, զորքից հեռեցավ,
Ձիու վըրեչեն Յիջավ,
Ուր սուփ Նիշան ու գո՞ւըզ հանեց,
Կախեց ձիու խարփուզից։
Յոթ շենք ենդոնք կր համրեն,
Կը հեռենան սրփ Նիշանից, որ մեխկ չենեն։
Յոթ շենք չափեց, հեռեցավ,
Նոր դուրսդեն Յելավ Մհեր։
Որ հեռեցավ Քուռկու Ջալլադից,
Եդ զորք մաավ եդոր մեչն ու Քուռկու Ջալլադին։
Եդոնք ձիու մեչն ու Մհերին կտրեցին։
Մհեր մնաց ձեռըցդարդակ։
Քա՞մանդ թալեցին, զՄհեր բռնին։
Բռնին զՄհեր, տարան,
Թալեցին զՄհեր քառսուն կանգուն հոր մի,
Դարցան, խաբար տվին Բազդըդու Խալիֆին,
Թա՞. «Թագավոր, Մհեր բռներ ինք,
Թալեր ինք քառսուն կանգուն հոր մի»։
Բազդըդու խալիֆեն ըսեց.
— Յոթ որ Մհեր թըխ մնա Յոդա,
Յոթ որեն Յեգեվ երթանք, քարկոծինք զենի։

51. Ջոհարի մայրը խնամում և Մհերին հորի մեջ, վորպեսզի նա իր աղջկան առնի

Հըմա կնիգ մի կար որբեվերի.
Աղճիկ մ' ուներ՝ անուն Ջոհար։
Եդ կնիդ գնաց Մհերի հորու վըրեն, ըսեց.
— Մհեր, որ քըզի ետեխեն ազատիմ,

Կ'առնի՞ս իմ ազճիկ Ջոհար։
Մհեր բոռաց, ըսեց կնգան.
— Ջա՛նըմ, չեղնի Գոհար, թըզ եզնի Ջոհար.
Դու իդա տեխեն ընձի ազատա,
Չըմ ա՛ռնի Գոհար, կ'առնիմ Ջոհար։

Եդ կնիգ որն երգու անգամ հաց կը տաներ,
Հորու մեչ Մհերին կ'իգեր։
Յոթն որ որ թա՛մըմավ,
Պըդի երթան, Մհերին քարկոծին,—
Կնիգ եդ բան Յիմցեր եր,—
Կնիգ եգավ, Մհերին ըսեց.
— Մհե՛ր, Յըսոր գ'իկան, քրզի կը քարկոծին։
Ա՛ռ ես խանջրլի կտոր,
Եգ հոր ծակե, Յընցի մեգել հոր.
Երկու խիգր անլըվա բուրթ կը բերիմ,
Որ ենոնք քրզի ձեն կ'իդան՝
Դավթի տղա Մհե՛ր, սա՛ղ իս.
Դու գ'ելնիս, ենոնց ձեն կ'իդաս։
Որ ենոնք քարկոծին քրզի,
Կը փախնիս, գ'ընցնիս են մեգել հոր։
Կնիգ բուրթ տվեց Մհերին։
Մի ժամ Յընցավ, եգան, որ զըՄհեր քարկոծին։
Եգան հորու վրրեն, բոռացին.
— Դավթի տղա Մհե՛ր, դու սա՛ղ իս։
Մհեր բոռաց, ըսեց.
— Յառաչ Ասված յես կամ, իմ դուշման չկա։
Մհեր փախավ, Յընցավ են դըհու հոր,
Բուրթ զա՛րգյեց եդ ծագի բերան։
Եդոնք քարկոծեցին, քար լցրին եդ հոր.
Քար եգավ, հասավ հորու բերան։
Բերեցին, արջիջ հալին, լցրին եդ հոր,
Յելավ, հորու բերան մորվավ.
Յելան, թողին, եգան։

Թրխ Մհեր քառսուն որ մնա եգ հորու մեչ։

52. Քեռի Թորոսը ողեկներով միասին գնում և Բաղդադ Մհերին ոգնելու

Են վախտ քեռին ռա̈մ կը թալա, կ'ըսա.
— Ա'րմաղան, Վեցոգնե Լա̈գզին քաշա̈.
Մհեր յա գըտնիմ, յա չգըտնիմ։
Քեռին գ'ելնի, կը խանչա ուր աղեկներ՝

— Հոթոթ-Մոթոթ,
Անուշ Քոթոթ,
Զինով Ոհան,
Ցըռան Վեճո,
Խոր Մանուկ,
Յելեք երթանք,
Մհեր կորե՛ր ա̈,
Որ կորեր ա̈։

Յելավ, ուր թա̈դա̈րուք երեց,
Ուրանց հաց-պաշար վերցին,
Բարցան ձիանուն, Յընգան ճամփա։
Եգա̈վ, եգա̈վ, հասա̈վ Բաղդադ։
Զադըրներ դա̈րգլեց Բաղդըդու դուրան։
Դես կը հարցու, դեն կը հարցու,
Բա̈լքի Մհերի սալըխ ենա։
Մարթ սալըխ տվող չիկա Մհերին։
Վա̈լլա, վո̈ւոր լը որ սալըխ կ'իդա,
Կ'ըսա՝ Մհերին քարկոծեր ինք։
Քեռի Թորոս թրխ մնա Յոդի։

53. Մհերը Զոհարի յեվ սրա մոր ոգնությամբ դուրս և գալիս հորից

Մհեր քառսուն որ որ կը մնա հորու մեչ,
Եդ կնիգ գ'իմնա քեռու դալ ետեխ.
Թը քեռին եգեր ա̈, Մհեր կը գաշա։
Զունքի կնիգ Յրմնոր հաց կը տաներ Մհերին.
Կնիգ չեղներ, Մհեր կը մեռներ անոթի։
Կնիգ եգավ, Մհերին ըսեց.

— Մհեր, լա՛ո, քու քեռին եդեր ա՛,
Յըմեն տեխ քըզի կը գաշա։
Մհեր ըսեց.— Որ հըմալ ա՛,
Արի՛, ընձի հորեն հա՛ն։
Ըսեց.— Յես ի՞մալ հանեմ, իմ ուս չա՛խթա։
Ըսեց.— Գնա, քու աղճիկ Ջոհար լը բիր։
Բերեց չրվան մի, տվեց Մհերին։
Մհեր կապեց չրվան ուր մեչք,
Խանչըլով լը ուր Յոդաց աեխ կը փորեր,
Որ Ջոհար ու ուր մամ, որ քաշեն,
Յինք չբրլեր, պադեր ցած։
Խ՛ուլասա, ի՞նչ գլուխ ցավցունք,
Մեծ չարչարանքով մի Մհեր Յելավ դուս։
Մհեր իշկեց կնգան ու աղճկան,
Ըսեց. «Յես իմա՛լ ենիմ.
Եդ աղճիկ որ չառա,
Եդ կնիգ պըդի մագնա ընձի.
Ըսե, թը Մհեր կենդանի յա՛։
Լավն են ա՛, որ աղճիկ լը, մամ լը՝
Կրտրիմ ուրանց վիգ, թալիմ հոր»։
Կըտրեց, թալեց հոր, Յինք Յելավ, գնաց։

54. Մհերն սպանում է Ավդալին յեվ իբրեվ Ավդալ ծպսված գնում է Գոհարի յեվ Քեռի Թորոսի մոս

Մհեր տեսավ են դհեն՝
Ավդալ անվոր մարթ ըմ կեր՝
Շալգեր ա՛ մի մեծ քար մի, գ՛իկա։
Մհեր հարցուց.— Ավդա՛լ, եդ ի՞նչ քար ա՛։
Ավդալ ըսեց.— Իմ Յաչքեր քոռնա,
Դավթի աղա Մհեր քարկոծած ա՛,
Կը տանիմ, թալիմ ենոր հոբու վըրեն,
Որ նշանգա եղնի եդոր։
Հըմա Ավդալն ել հսկա, բեդ մարթ մ՛ եր։
Մհեր միաք երեց, ըսեց.
— Վա՛լլահ, Ա՛վդալ, եդ քար իմ փորու խարճ չե.
Եդ քար քու փորու խարճն ա՛, Ավդա՛լ։

Քար բռնեց, Յիջուց Ավդալի շալգից,
Ավդալի վիզ բռնեց, կըտրեց.
Դրեց զբի մի մեչ,
Հող տվեց Ավդալի վրեն,
Եդ քար լը դրեց Ավդալի վրեն.
Դարցավ իշկեց, ըսեց.
«Տեսա՞ր՝ իմալ ուրմըշավ»։
Յելավ, հաքավ Ավդալի շորեր,—
Գե՛, Մհեր ուժեղ մարթ մ՛ եր,
Ուրեն մազ շատ գ՛իկեր.
Քառսուն որ մացեր եր հորու մեչ,
Ուր ռա՞նգ կորցուցեր եր,—
Եգավ, մտավ զորքի մեչ։
Զորք հարցուց.— Ավդա՛լ, ի՞նչ խեր խաբար։
Մհեր ըսեց.— Յառեչ հաց, Յեգեվ հարց։
Ըսին.— Բերե՛ք, Ավդալին հաց տվեք.
Թըխ կուշտ ուտա, խմա,
Բա՞լքի մըզի խաբար մի տա։
Մհեր հաց կո՛ւշտ կերավ,
Յելավ կայնավ, ըսեց.
— Հացն ու գինի՞ն, Տեր կենգանի՞ն,
Իդա ձեռնով քար դրեր իմ Մհերի փորուն,
Դարցեր իմ, եգեր իմ եստեխ.
Ետեխեն Մհեր Յելավ, փախավ,
Գնաց, Յելավ Գոհարի մոտ։
Տեսավ որ՝ Գոհար նիաթ կախած՝
Նստեր ա՞ ու միաք կ՛ենա։
Ըսեց.— Քու Ասսու սեր եգնի,
Մհերից ի՞նչ խաբար կա։
Մհեր ըսեց.— Յառեչ հաց, Յեդեվ հարց։
Գոհար գնաց, հաց բերեց,
Ավդալին կուշտ կերցուց, խմցուց.
Կուշտ ուաելեն Յեդեվ ըսեց.
— Հացն ու գինի՞ն, Տեր կենդանի՞ն,
Իդա ձեռով հաց դրեր իմ Մհերի բերան,
Դարցեր իմ, եգեր իմ Յուդա։
Ավդալ եդի որ ըսեց,
Գոհարի սիրտ եպեյի խայմցավ։

Ավդալ Յելավ Յոնքցի թալեց, գնաց։
Ըսեց. «Մեդ երթամ դեմ իմ քեռին»։
Գնաց, հասավ քեռու չադրներ։
Քեռին եգավ, ըսեց.
— Ավդալ, քու Ասսու սեր եղնի,
Մհերից ի՞նչ խեր խարար։—
Մըկա լը մեգն որ գ'իկա, կ'ըսենք՝
Ավդալ քաղքից ի՞նչ խեր խարար։
Եդի խոսք ա՞ դարցե։—
Ըսեց.— Յառեչ հաց, Յեդեվ հարց։—
Հրրա Մհեր քառսուն որ անոթի մացեր եր.
Պստիկ մարթ մի չեր, որ կշտաներ։
Մհերի աուն ավրի, մարթ հո՛ չեր, Յամբրո՞ց եր։
Քեռին բերեց, հաց դրեց,
Մհեր կուշտ-կուշտ կերավ, ըսեց.
— Հացն ու գինի՞ն, Տեր կենդանի՞ն.
Ես ձեռով բրրդուճ դրեր իմ Մհերի բերան,
Դարցեր իմ, եգեր իմ Յուգա։
Ի՞նչ նոր գլուխ ցավցում,
Յոթն որ Մհեր զրվրոնեց Յրմեն տեխ.
Հաց կերավ, անջախ եգավ ուր համդին։

ՃՃ. Մհերը նորից գնում և Քեռի Թորոսի մոտ. նա խմում և մի լիքը պղինձ գինի յեվ տղեկներին բարդակուտոց անելուց հետո՝ հայտնում և իր ով լինելը

Յոթն որ որ թա՞մըմավ,
Մհեր Յելավ, գնաց քեռու չադրը։
Հրմա քեռին շրկի ընգեր ա՞,
Թր. «Եդի ուր Մհերն ա՞,
Յընչի՞ եդոր լիրաս դարցե՞ր ա՞»...
Ու չկը՛ռնա տեխ բերա՞։
Մհեր որ գնաց ետեխ,
Եդ որ քեռին բերեց,
Կեր ու խում երեց, ուրախցավ։
Մհեր հա՞դ զեդոնց նստեր եր,
Հաց կ'ուտեր, գինի կր խմեր։
Մհեր քեռուն Յելավ ըսեց.

— Քեռի, գա՛լո, կըռնա՞ մարթ մեգ շընչով՝
Իդա պզընձով լիք գինին խմա։
Ըսեց.— Ավդա՛լ, մեգ խմեց Մեծ Մհեր,
Մեգ լը խմեր ա՛ մըր Դավիթ,
Նոր եր եգի Մհերի խմելու վախտ,
Իմ Յաչքեր քոռնա՞,
Շտե Մհեր կորցուցեր իմ։
Ըսեց.— Քեռի, են քու Մհերի արեվ որ կը սիրիս,
Եդ պղինձ լիք գինի Յըլնաս,
Յես կուշտ-կուշտ գինի խմիմ։
Որ ըսեց՝ Մհերի սադաղեն,
Քեռին Յելավ, տըգեր պղինձ լիք լցեց։
Մհեր վերուց դրեց բերնին,
Խըմե՞ց, խըմե՞ց, թողեց,
Պղինձ պադավ գետին, վոռ ծակվավ։
Ցռան Վեճոն ըսեց քեռուն,
— Ջա՛նըմ, ուր վոր ծուռ մի կա,
Մըր իդարեն կըտրիր, խմցուցիր ընդոր.
Տեսնինք՝ լուսով ինչո՞վ պըդի կըռիվ ենինք։
Ցռան Վեճոն որ եդ խոսք ըսեց,
Մհեր ծեռ թալեց Ցռան Վեճոյին.
Բռնեց ենոր թեվ, քաշեց գետին։
Մհեր ղՑռան Վեճոն պառկըցուց,
Բռնեց մեգ-մեգ տղեկներուն՝
Ձինով Ոհան,
Խոր Մանուկ,
Հոթոթ-Մոթոթ,
Անուշ Քոթոթ,
Բռնեց դրեց վիրարու,
Վերուց Քեռի Թորոսն ել,
Դրեց Յըմընու վըրեն,
Երեց բարթակուգոց.
Մեգ լը հա՛րի քանդեց, Յիջուց,
Ցռան Վեճոն շըլվար լցուց։
Մհեր ըսեց Ցռան Վեճոյին.
— Յըմեն հաղ քու գա՛վա՛զութեն կա.
Դու իս եղի սաբիբ, որ իմ մամ Խանդութ
Ձինք թալե, զուրան սպաններ ա՛։

Ես անգամ Քեռի Թորոս տեսավ,
Որ եգի Դավթի տղա Մհերն ա՛։
Նոր ճանչրցվավ, գրկվավ Մհերին,
Փաթըթվավ վիզ, պաքեց Յերսրներ։
— Մհեր, լա՛ո, ըսեց, իմ Յաչքեր քոռնա,
Եդ դու ի՞նչ որի յես Յընգի,
Որ յես ըսկի չճանչրցա քրզի։

56. Մհերը գտնում և իր Քուռկիկ Ջալլադին յեվ այցելում և Գոհարին

Իդահախ Մհեր ըսեց քեռուն.
— Քեռի, հրբը Քուռկի Ջալլադ Յո՛ւր կ՚եղնի։
Քեռին ըսեց.— Լա՛ո, Մհեր,
Ըսկի չըմ տեսեր ի Քուռկի Ջալլադ։
Ըսեց.— Քեռի, որ հըմա՛լ ա՛,
Յես ԵԵՆ դուրան զա՛րգեր ինք իմ չադրը։
Որ եղնի, ենտեխ կ՚եղնի։
Յելավ Մհեր, գնաց դեմի ենգեն.
Գնաց, տեսավ, որ դարի մի տակ,
Եդ անասուն փորեր ա՛, մտեր ա՛ մեչ։
Գտավ Քուռկի Ջալլադ,
Բռնեց, առավ, եգավ։
Տեսավ՝ խոլներու տեխրան եզեր ա՛ բրին։
Քեռի Թորոս բերեց լողկրցուց,—
Քեռին Յինք բայթար եր,—
Երգու ավուր մեչ սաղցուց։

Մհեր կընդվավ, մաքրրվավ,
Յելավ, գնաց Գոհարի մոտ։
Գնաց տեսավ. ի՞նչ տեսավ.—
Գոհար նստուկ ա՛ փանջարեն, կը նընջա։*
Պըլընդրուկ մի զա՛րգյեց Գոհարի քթին,
Գոհար խըրգավ, ելավ, նստավ,
Իշկեց, տեսավ որ՝ Մհերն ա՛։

---

* «Խանդութ ու Դավիթ քաղցր են, քանց թե Գոհար ու Մհեր», ավելացրեց ասացողը։ Կ. Մ.-Ռ.

Ըսեց.— Մհեր, դու բարով, հազար բարին։
Ցես չավդընեննք՝ իմ յաշք քիաներ քրգի։
Ջե, որ սաղ-սալամաթ քրգի տեսա,
Ինչ գ'ուզի, թրխ եղնի։
Մհեր ու Գոհար իրար տեսան։

37. Միերք մեհեամարտում է Գոհարի եւսաճած Մարա-Մելիքի հետ յեվ առճում է Գոհարին

Մհեր յելավ, թողեց գնաց։
Եգավ, հասավ Քեռի Թորոսի չադըր։
Քեռի Թորոս խարար երեց Բաղդրդու խալիֆին,
Ըսեց. Ցես լորճի չիմ,
Որ եգեր իմ, լոր կը ծախիմ։
Թրխ իմ հարսի վոդ-ձեռ տեսնի,
Առնիմ, երթամ մըր տուն։
Թա չե, Բաղդադ առ ու գերի կ'ենիմ,
Հեդ կ'առնիմ, կ'երթամ Սասուն։
Բաղդրդու խալիֆեն ըսեց.
— Իմ աղճիկ Մըսրա Մելիքի նշալուն ա։
Մըսրա Մելիք լուսուն գ'իկա։
Մըսրա Մելիքի պադասխան տվեցիք,
կ'առնիս աղճիկ, տանիս Մհերին։
Ջտվեցիք՝ գաթի են մարթու հախլուն ա։
Մըսրա Մելիք լը եդ որ Մըսրա գ'իկա Բաղդադ։
Որ գ'իկա, կը հասնի Բաղդադ,
Քեռի Թորոս կը դիմա Մըսրա Մելիքին։
— Մըսրա Մելիք, կ'րսե, իմ կռիվ կռիվ ա։
Կ'րսե.— Դու ինչ հախ ունիս, որ Մըսրա գ'իկաս,
Բաղդրդու խալիֆի աղճիկ կ'առնիս, կը տանիս։
Մըսրա Մելիք երկու-իրեք հարուր հազար զորքով եր եգիր
Եդ որ կռվան հնրի յիրկուն։
Ել անհաշիվ զորք ջարդեցին։

Մըսրա Մելիք յելավ եգավ՝ Քեռի Թորոսի մոտ,
Ըսեց.— Հերիք ա, ուրըշի արինքի տակ մըդնինք,
Ձըլդի տղեկներ տանք սպանել։
Արի, զորք կանգըցունք,

Ցես ու Մհեր կը կռվինք,
Ցես Խախթեցի, Գոհար չես կ'առնիմ,
Մհեր Խախթեց, քրխ Մհեր առնի, տանի,
Եգան եդ պալման հրեցին,
Մհերն ու Մրսրա Մելիք եգան,
Մեյդրնի մեչ Հելան կայնան,
Մհերն բսեց.— Մրսրա Մելիք,
Քոռ դորն ա, քա իմ,
Մրսրա Մելիք բսեց.
— Իմ դորն ա գաղթելու,
Մհեր կայնավ մեյդնի մեչ.
Ուր սրփ Նիշան հանեց, պաքեց,
Դրեց վրր ուր գլխուն,
Մրսրա Մելիք դաղրն որ կր գաղրգեր. քուր չկրտրեր.
Չամա գաղրից Մհերի վոդներ գ'իջներ հողի մեչ,
Մրսրա Մելիք լր ուժեղ եր, չե,
Գնաց, եգավ, իրեք գաղրգ գաղրգեց.
Մհեր Իջավ հարի չոքեր հողի մեչ,
Չամա բսկի բրինդար չեղավ,
Մհեր քոթվեց, Հելավ, կայնավ հողի Հերես,
Ըսեց.— Մրսրա Մելիք, քու ավուր պատրաստ կնցի.
Իդահախ իմ դորն ա եգե,
Մրսրա Մելիքի մամ հեգն եր, գինաս.
Մրսրա Մելիքի մամ գինք Բալեց քեռու վոդներուն—
Քը.— Քեռի Քորոս,
Ցես քու բախտն ու Աստուն եմ Իրնգե.
Դու խնայա րնձի.
Մր քոդի Մհեր գաղրգա Մելիքին.
Ցես ամագ ունիմ Մեծ Մհերի վրրնն.
Մհեր վերցուց, բսեց.
— Գաղրդ մի կ'իդամ իմ քեռու հաքեր.
Գաղրդ ա' ել կ'իդամ իմ Աստղծու խաքեր.
Հրմա գաղրդ ա' ել Մելիքին կր Քալիմ.
Ցա Աստված կ'իդա Մրսրա Մելիքին,
Ցա Աստված կ'իդա Սասնա Մհերին,
Եգիք որ բսեց Մհեր,
Մելիքի մամ բերնց,
Ինչ խրդեր չադրր, ձիու քամք կար.

Յըմեն լցեց Մրսրա Մելիքի վրրեն,
Որ Մհեր զա՞րգա, թուր չկրտրա։
Մհեր հեձավ Քուռկի Ջալլադ,
Յելավ, քշեց, զարրով եգավ.
Գա՞րզն ուր որ զա՞րգյեց,
Ինչ խըղըր չադըր, թամք կար, կըտրեց,
ԶըՄըսրա Մելիքի գլուխ լր կըտրեց,
Զըգլուխ տվեց Քեռի Թորոսին,
Զրճուճ-պլոր վերցուց, թալեց ուր մամուն,
Ըսեց.— Ա՛ռ քու տրզա Մելիք։
Ետեխ որ զՄըսրա Մելիք սպանեց,
Զորք դարցան բոլոր եղան,
Քեռի Թորոսի ձեռ պաքին,
Թոզին, գացին դեմի Մըսըր։

Քեռի Թորոս դարձավ Բաղդըդու խալիֆին.
— Յես լորճի չիմ՝ եգիր իմ, լոր ծախիմ,
Իմ հարսի ձեռ ու վոդ տես,
Առնիմ, տանիմ Սասուն.
Թր չե՝ Բաղդադ առ ու գերի կ՚ենիմ,
Կ՚առնիմ հեդ, կ՚երթամ մրր տուն։
Բաղդըդու խալիֆեն ուրիշ մրհանա չգըտավ,
Յելավ, աղճըկա թա՞դա՞րուք երեց,
Շորից, ջհեզից երեց, դրեց ուր հեդ՝
Առավ, եգավ Սասուն։

58. Մհերը մենամարտում և Աստղու Ցոլածնի հետ, սպանում և նրան յեվ յերդվում և կռապաշտությունն արմատախիլ անել

Որ Յելավ եգավ Սասուն,
Աստղու Ցոլածին եդոր ճամփեն կը պահեր.
Ուխտ եր երի, որ զՄհեր սպանա,
Մհեր չհասնի ուր մուրազին,
Մեգ գիշեր լր չքընի Գոհարի ծոց։
Սաբախտան շուդ Մհեր Յելավ դուս։
Աստղու Ցոլածին հավադան եգեր եր.
Եգավ, բռնեց Մհերի վրրեն։

Քարե կարկուտի պեստ վերեվեն
Նետ ու տնեղով կը զա՞րգեր։
Մհեր հըմլտ խալխան բռներ եր,
Կըծկեր եր խալխընի տագ։

Շընգշընգուն որ եգավ դուռ,
Գոհար ելավ դուռ, տեսավ՝
Մհեր կըծկեր ա՞ մարդըլի տագ,
Աստղու Ցոլածին վերեվեն կը զա՞րգա՞։
Եգ Գոհար բոռաց, բսեց.
— Ա՛ստղո՞ւ Ցոլածին, իմ Մհերին մը զա՞րգի,
Ինչ որ գ՛ուզիս, տամ քըզի։
Աստղու Ցոլածին որ Յանգաճ չերեց,—
Ա՛խր, ենդոր Յաչք սպանե՞լն ա՞,—
Մեգ լը լավեց, ըսեց.
— Ա՛ստղո՞ւ Ցոլածին, իմ Մհերին մը զա՞րգի,
Իմ կյանք գ՛ուզի՞ս, տամ քըզի։
Որ բսեց՝ իմ կյանք լը Յուզիս, տամ քըզի,
Մհեր եաեխ շադ հերսոդավ,
Ըսեց.— Ջա՞նրմ, յես կ՛ըսիմ՝
Դեմի իմ Ասծուն իմ դըրբ չթա՞լիմ,
Թը չե՝ Աստղու Ցոլածնի սպանել չաթին ա՞։
Ջնեդ ու անեղ դեղեց Մհեր,
Ջա՞րգյեց, զԱստղու Ցոլածնին բերեց ցած։

Որ զԱստղու Ցոլածնին սպանեց,
Եդ Գոհարի խոսքն որ բսեր եր՝
Իմ կյանք գ՛ուզիս, քըզի կ՛իդամ,
Եդ խոսքն եղեր ա՞ ա՞ֆքա՞ր։
Ըսեց.— Թըխ ուխտ եղնի ընձի.
Հա՞րի յես կռապաշդութեն
Աշխըրքեն չջարդիմ, վերջացում,
Իմ դոշակ՝ Գոհարի մոդ չերթամ։
Յելավ, հեձավ զուր Քուռկի Ջալլագ ու գնաց։

59. Կռապաշտների վրա գնալիս Մհերը նորից այցելում և իր սիրեկանին. նա պատվիրում և վորդուն ուղարկել իր մոտ

Եդ կռապաշդներու կռոցտուն կար։
Պըգի երթա զեդոնց հեդ կռիվ տա,
Զեդոնց ջարդա, վերջացու,
Նոր իգա, երթա ուր դոշակ։
Մհեր գնաց են կընգա տուն,
Որ Յառչի երթըլու վախտ,
Գնաց, նստավ, կալնավ հեդ։
Եդոր տղե մ՛ եր եղի։
Որ մի թը երգու խոնախ մրնաց,
Յելավ, Յրնգավ ճամփա։
Ըսեց.— Կնիգ, յես կ՛երթամ,
Կռապաշդներու քոք կը կըտրիմ,
Յես ի՞նչ գինամ՝ յոթ տարի գամ,
Թը տըսնըյոթ տարի գամ.
Մըր աղեն, որ կը մեծնա,
Բաղբանդ կը կապիս ուր թեվ,
Կը ճամփիս, գա դեմ՛ ինձի։
Մհեր Յելավ Յրնգավ ուր ճանփան։

Յոթ տարի կռվով գնաց։
Մհեր կռոցտուն առավ։

60. Մհերի վորդու մանկական չարությունները. նա ճանապարհ և ընկնում հորը վորոնելու

Տղեն եդավ վեց-յոթ տարեգան։
Տղեն կ՛երթեր, ճժերու հեդ կը խաղեր։
Դե՛, ճժերու հեդ որ կը խաղեր,
Վորին ձեռ կը բըռներ, կը քամեր,
Հըմլա ձեռ կը կոդրեր։
Վորին որ կը զա՞րգեր,
Ենոր գլուխ կը կոգրեր, Յաչք կը քոռցուցեր...
Խուլասա, եդ ճժեր չկըռնան,
Եդոր ուժի դեմ չդիմա՞նեն։

Իդահախ կը ձեռքվին եղոր կը քըրվին.
— Ախր, բիճ իս, կ'ըսին,
Բիճ խըսմի անիձուկ կ'եզնի։
Որ խըլդի ճժեր Յերես կ'իդեն,
Թը՝ Դու բիճ իս, անիձուկ իս,
Իդահախ տզեն խելք կը հասներ։
Են մեգ որ որ զա՞րգյեց,
Տղի մի վոդք կոտրավ.
Տղեն ըսեց.— Բիճ շան որդի,
Դու ղըմեն կը սպանիս,
Ի՞նչ կ'ըսիս, ա՛խր, ի՞նչ գ'ուղիս։
Տղեն Յելավ, եգավ տուն,
Բռնեց ուր մամու յախեն,
Ըսեց.— Նա՛նե, սա՛ղն ըսա.
Յես Յընչի պըդի բիճ եղնիմ,
Որ Յըմեն ընձի բիճ կ'ըսին։
Ըսա՝ իմ պար վո՞ւորն ա՞։
Մամ ըսեց.— Լա՛ո, դու Յընչի՞ բիճ իս.
Քու պաբ Սասնա Մհերն ա՞.
Իդա տասը տարի յա՞,
Գացեր ա՞ կռապաշդներու վրբեն կռիվ,
Որ կռապաշգության քոք կըտրա,
Կռոցտուն ավիրա, Յելնի գա։
— Ե՛, նա՛նե, որ հըմալ ա՞, ըսեց,
Յես կ'երթամ դեմի իմ պաբ։

Յելավ ինչ կար-չկար մամուն,
Ծախեց, ձի մի առավ, հեձավ,
Գո՞ւրզ մի գըտավ, կապեց վըր ուրին։
Երթըլու վախա մամ բերեց,
Մհերի աված բազբանդ կապեց տղի թեվին,
Ըսեց.— Լա՛ո, իդա բազբանդ Մհերին նշանց կ'իղաս,
Մհեր քրզի կը ճանչնա, որ ուր տղեն իս։
Տղեն Յելավ, Յընգավ ճանփա։

61. Մհերի յեվ իր վորդու կռիվը. Մհերն սպանում ե իր վորդուն

Մհեր լը կռապաշդութեն կըտրեր եր,
Կռոցտուն ավիրեր եր,
Դարցեր եր, գ'իկեր դեմի Սասուն։
Չոլի մի մեչ տղեն ու Մհեր ռաստ եգան։
Տղեն որ ռաստ եգավ Մհերին,
Մհեր հարցուց.— Հա՛, տղա՛, լա՛ո,
Դու ի՞նչ տղա յիս, Յո՞ւր կ'երթաս։
Ե՛հ, ջահել մի տղա յեր, ըսեց.
— Ե՛, դու իմ աղե՞ն իս, ռե՞սն իս,
Կը հարցուս, թը Յո՞ւր կ'երթաս.
Յուր կ'երթամ, կ'երթամ...
Ըսեց.— Տղա՛, լա՛ո.
Քա՞ր մի պադավ երկնքուց,
Որ քըզի հարցուցի, բան ըսի։
Դու եդ ի՞նչ կոպիշտ տղա յիս։
Խո՛ւլասա, Մհերն ու տղեն կռվան։
Մհեր տղին ըսեց.
— Տղա՛, լա՛ո, թալ քու գո՞ւրզ Յառեչ.
Յեգեվ յես զիմ գո՞ւրզ կը թալիմ։
Տղեն զա՞րգյեց ուր գո՞ւրզ Մհերին։
Մհերին քա՞ֆա՞րաթ չերեց եդոր գո՞ւրզ։
Մհեր դտրցտվ, գո՞ւրզ մի զա՞րգյեց տղին,
Տզի փիջից հըմլա կըտրեց, թալեց։
Տղեկ որ պադավ, ետեխ նոր ըսեց.
— Հա՛յ, դու որ ընձի սպանիր,
Իմ պաբու պատասխան իմա՞լ պըդի տաս։
Ըսեց.— Տղա՛, լա՛ո, քու պաբ վո՞ւորն ա՞։
Ըսեց.— Իմ պաբ Սասունա Մհերն ա՞։
— Տղա՛, ըսեց, իմ Յաչքեր քոռնա։
Հըբա ընձի մի նշան կար քու մտմու մոդ,
Ըսեց, Յո՞ւր ա՞ եդ նշան։
Ըսեց.— Հա՛նդա, բազբանդ մի կապուկ,
Իմ աջ թեվի վրրեն ա՞։
Մհեր զտղի թեվ բացեց,
Իշկեց, որ ուր բազբանդն ա՞։

— Հախիլա՛, եդ իմ տղեն ա՛։
Տղեն մահացավ ետեխ։
Յելավ, տղին հորեց ետեխ.
Հորեց, Յելավ, եգավ։

62. Ամմահ Մհերը փակվում և իր փեղկած քարի մեջ Քեռի Թորոսը մեռնում և կսկծու

Մհեր Յընգեր եր մտածմունքի.
Կը մտածեր, թե. «Յես մեղավորցա՛։
Մարթ մ' ուր տղեն իմա՛լ պըդի սպանա,
Որ Յինք չմեղավորնա»։
Մհեր միտք ենելով դ'իկեր։
Եգավ, հասավ սարի մի տագ։
Մեգ սեվ քար ըմ ռաստ եգավ եգոր։
Ըսեց. «Կանի, իմ գո՛ւրղ թալիմ իդա քարին։
Թա՛ կըտրե՛ց, յես չմեղավորցեր իմ.
Թա՛ չը կըտրե՛ց, ղաթի մեղավորցեր իմ»։
Գո՛ւրզն որ զա՛րգյեց քարին,
Քար երգու դհու փեղկավ,
Յինք, ուր ձին գացին քարի մեչ.
Քար եգավ, իրար կպավ։
Մհեր պրրձա՛վ, աղագա՛վ...
Մհերի ջինս վերջացա՛վ...

Քեռի Թորոս կսկըձու մեռավ.
Որ լսեց Մհերի մեռնել։

Մնացողներու Յըմընու ջինս հըլա կա։
Մըկա որ Սասունցոց մեջ կտրիճ գ'ելնին,
Կ'ըսեն՝ Ձինով Ոհանի, Խոր Մանուկի ջընսեն ին—
Աղնանցորդիք Մհերի ցեղեն ին.
Եդոնք գացին, վերջացա՛ն։

63. Վերջաբան

Կ'ըսեն՝ Մե դարուց Յեղեվ,
Հովիվ կ'երթա եգ քարի Յառեչ,
Քար իրարուց կը բացվի։
Հովիվ ներս կը մտնի, կը տեսնի,
Որ հսկա մի մարթ ետեխ նստուկ ա՛։
Եգ մարթ հովվին կ'ըսա.
— Հըլը գարու տոպրակ եծկե ձիու գլուխ։
Հովիվ կայնավ, տեսավ որ՝
Ուր ձեռք ձիու գլուխ չհասնի,
Ձեռ զա՛բգլեց դարուն, խըշպըրցուց,
Ձին գլուխ կախեց գարու վրբեն,
Վերցուց զտոպրակ, եծկեց ձիու գլուխ։
Իդահախ Մհեր տեսավ որ՝
Աշխարք դարցեր ա՛ սագանա։
Ըսեց.— Աշխարք որ փոխվեր ա՛,
Իսան հըմլա մանդըրցեր ա՛,
Յես որ Յելնիմ, դուս Յիգամ,
Եգ հող ընձի չվերու.
Յորի որ հող խալպրցեր ա՛.
Աղեկ ա՛՝ յես մեամ իմ տեխ,
Մեգ լը չելնիմ աշխարք։
Հովիվ որ դուրս եգավ,
Քարն եգավ, հասավ իրար։

Ուրբաթե ուրբաթ կ'ըսեն՝
Ջուր գ'իկա, կաթա եդ քարեն։

Երկնքուց իրեք խնձոր Յիջավ.
Մեգ հեքա՛թ ըսողին,
Մեգ շատ զրուցողին,
Մեգ լը ընձի։

Ասացող՝ Մանուկ Թորոյանը մանկության հասակում իրենց գյուղում, Խաստուրում, հոտաղ ե՞ յեղել։

Հոտաղության ժամանակ ընկերներով շատ հաճախ կռվի ելին բռնվելիս յեղել քուրդ հոտաղների հետ։

Մըր ուժ չպատեր քրդերուն,
Մենք լը կ'ըսինք.
— Ծոզը՛լ Մհեր յիգեր աշխարք,
Մհերի տղե մի եղներ,
Ագնանցորգի, որ բերինք,
Եդ քրդերու հախեն յիգենք։
Ծոզը՛լ Մհեր գուա յիգեր,
Մըզի քրդերու ձեռնեն ազատեր։

Կ'եզնի վախթ ըմ, Մհեր գուա կ'իգա,
Մըզի կ'ազատա դժշմընի ձեռնեն։



Սասունի Ծռեր

պատմեց

Վաշկերտցի Կարապետ Թամոյեն

գրի առավ 1932 թ

Կարապետ Մելիք-Ոհանջանյան



ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՍԽՀ Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի գիտարշավը 1932 թվի հուլիսի 21-22-ին գրի յե առել «Սասունա Դավիթի հեքյաթի» այս պատումը Թալինի շրջանի Արալըղ գյուղում։ Ասացողն Ալաշկերտի Խաստուր գյուղի բնակիչ Կտրապետ Հարությունի Թամոյան — Քեռի Կարոն ե։

Կարապետ Թամոյանը ծնվել ե 1877 թ. Ալաշկերտի Խաստուր գյուղում։ Նրա հայրը՝ Հարությունը գյուղում զբաղվել ե հողագործությամբ։ Հարությունը «շատ խելոք ու ճարտար և շատ խոչաղ մարդ ե յեղած։ Ինքն (Հարությունը) անգրագետ եղնելով մեկտեղ Խաստուրա Միացյալ Բարեգործական Ընկերության դպրոցն ե հիմներ». նրա շնորհիվ Խաստուրից շատ կրթված մարդիկ են դուրս յեկել։ Հարությունը մեռել ե 1906 թ. Խաստուրում։

Կարապետը գրագետ ե։ Նա հաճախել ե Խաստուրի դպրոցը, բայց չի ավարտել և դուրս ե յեկել յերրորդ խմբից։

1899 թ. Խաստուր ե գալիս Խանի խումբը։ Գյուղը շրջապատվում ե թուրք զորքի կողմից. սկսվում ե կռիվը. գյուղը կոտորվում ե և ավերվում... Շատերը փախչում են Ռուսասան։ Դրանց թվումն ե լինում նաև Կարապետը։

Այսրկովկասում մնում ե 9 տարի։ Նա յեղել ե Թիֆլիսում, Բագվում, Յերեվանում, Ալեքսանդրապոլում, Ղարսում, Սարիղամիշում, Իգդիրում և այլն։ Այսրկովկասում յեղել ե «զորուղչի»։ (1899—1901/2 թ. թ.), ապա վարձու բանվոր։

Թյուրքիայի սահմանադրությունից հետո վերադառնում ե հայրենի գյուղը—Խաստուր։ Նրանց տնտեսությունը քայքայված ե լինում։ «Ախպրտիքս ու յես (Աբրահամ, Կարապետ, Պողոս, Տիգրան) թեվ թեվի տված հագիվ կարողացանք մի ճոթ հաց ձեռք բերել, վրա հասավ համաշխարհային պատերազմը»։

Կարապետի փոքր յեղբայրը՝ Տիգրանը Թոփրախկալեյի մոտ սպանվում ե, իսկ ինքը մյուս յեղբայրների հետ գաղթում ե Յերեվան։ Մեծ յեղբայրը՝ Աբրահամը մեռնում ե Աշտարակում։

1921 թվին Կարապետն ու Պողոսը խաստուրցի համագյուղացիների հետ տեղափոխվում են Թալինի շրջանի Արալըղ գյուղը և հաստատվելով այդտեղ՝ զբաղվում են հողագործությամբ։

Կարապետն ամուսնացած ե։

Նրա տնտեսությունը համարվում ե թույլ—միջակ։ Կոլտնտեսական չե՝ (գյուղում կոլտնտեսություն չկար)։

«Մասունա Դավիթի հեքյաթը» նա լսել է հայրենական գյուղում—Քասաուրում, համագյուղացի՝ գյուղի ռես Գասպոյից (Գասպար Մելքոնյան), որը հռչակված պատմող է յեղել։ «Ռես Գասպն գիտեր բոլոր ճյուղերը և շատ ուրիշ հեքյաթներ», ավելացնում է նա։ «Ռես Գասպն կը պատմեր շատ գրուցներ. «Գասկեվիչի կոիվները», «Քասաուրի յեկեղեցու հրաշքները», «Հասան Քանի արշավանքները» և այլն։

«Ռես Գասպն պապական լեզվով կ'ըսեր։—Կ'ըսեր բերան արած, «հայր մեր»-ի պես սովրած»։

Ռես Գասպն «Մասունա Դավիթի հեքյաթը» սովորել է,— ասում է նա,— Կարապետի հոր պապից—Թրմեյից, որը շատ հռչակված պատմող է յեղել Ալաշկերտում։ Որա պատմելն առակ է դարձած։ «Հիմա էլ կ'ըսեն՝ Թրմեյի պես քու ճրագ-լուա կը տանես ուրիշի ժոգեն, հեքյաթ կ'ըսիս»։

Կարապետը քացի «Մասունա ծռերից» դիտե բազմաթիվ յերգեր՝ ալաշկերտցիների ու յեզդական (տեղական), խաղեր, պարերգեր, հեքյաթներ, առակներ, առածներ, հանելուկներ, շուտասելուկներ և այլն։

Նա չի սիրում հեքյաթներ պատմել... «Ինչ էլ պատահավ, ըսիր»։

Կարապետը— Քեռի Կարոն, ինչպես կանչում են համագյուղացիները, արտակարգ շնորհքի տեր մարդ է, աշխարհ տեսած, սրամիտ և առնականոտ։ Նա իր գրույցը համեմում է բազմաթիվ, մեկը մյուսից հաջող, դիպուկ սրամտություններով, առակներով և առածներով։

Այն հանգամանքը, որ նա՝ համագյուղացիների համեմատությամբ՝ շատ բան է տեսել, դիտել, սովորել, շատ և շրջագայել, շատ արհեստներ բանեցրել, որ, անկասկած, դրական է, հենց այդ հանգամանքը բարբառագիտության տեսակետից ունեցել է նաև բացասական հետեվանքներ։ Նրա «լեզուն» կորցրել է հայրենական բարբառի յերանգը, յուրահատկությունները և յենթարկվել է այլ և այլ բարբառների ուժեղ ազդեցության։ Քեռի Կարոյի պատմելու ժամանակ խաստուրցի համագյուղացիները հաճախ ուղղում էին նրա լեզվական «սխալները» և կշտամբում, որ «մայրենի լեզուն» մոռացել է։ Համագյուղացիների լեզվական ուղղումներին ու այլ և այլ նկատողություններին նա պատասխանում էր կատակով. «Ջանըմ, ինչ է քնացել մեր տուն ու տեղն՝ մեր նիստ ու կացն, մեր հալ ու ահվալն, որ էդ պապական լեզուն քնար։ Մեր լեզուն գարցեր ա բոշի քուլակ (փայտե դուլլ)»։

Քեռի Կարոն դեռ աշխույժ է և ժիր։ պարում է ու յերգում։ Հարսանիքների և հանդեսների կենսարոնական անձնավորությունն է։

Գիտարշավի ժամանակ Քեռի Կարոյից մի շարք յերգեր և պարերգեր են գրի առել՝ վաստակավոր յերաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը (յերաժշտությունն), որն ինձ ոգնել է նաև «Մասունա Դավիթի հեքյաթի» այս պատումը գրանցելիս, պարագետ Սրբուհի Լիսիցյանը (պար-շարժուձևեր) և յես (խոսքեր)։

Կ. ՄԵԼԻՔ-ՈՀԱՆՋԱՆՅԱՆ

Բանահավաքի տոգաստումը վերանայել ենք։

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՆԱՍԱՐ ՅԵՎ ԱԴՐԱՄԵԼԻՔ

1. Ասորեստանի Սենեքերիմ թագավորն առնում է Փամբակի ձորի Հայոց նաչիկ թագավորի աղջիկ Արմաղանին։ Սենեքերիմը պատռվում է յեվ խոստանում, իր Սանասար յեվ Ադրամելիք վոդիներին մատաղ անել կռիներին

Ժամանակով Ասորեստանին մե թագավոր կ'եղնի,
Անուն Սենեքերիմ.
Եդ թագավոր ուժեղ կ'եղնի, կու դա Հայաստան։
Են ժամանակ Հայոց թագավոր կեր,
Անուն Նաչիկ.
Փամբախու ձոր կ'ապրեր։
Նաչիկ թագավոր ուներ մե սիրուն աղջիկ,
Անուն Արմաղան։
Եդ տված Սենեքերիմ թագավորին թագուհի.
Սենեքերիմ առավ, բերեց իրեն թագուհի։
Աղջկա մոտեն եղավ երկու հատ տղա՝
Մեկի անուն Սանասար, մեկին՝ Ադրամելիք։

Մե որ, մի ժամանակ Սենեքերիմ թագավոր
Գոսպաշտներու հետ կոիվ կ'ելնի։
Կ'առնի, մեծ զորքով կ'ելնի,
Կ'երթա եդ մարդու վրեն կոիվ։
Գովու ժամանակ Սենեքերիմ թագավոր կը հաղթվի.

Կ'ելնի, կը կանչէ իրեն կոքերուն,
Որ գան իրեն ազատեն եղ դուշմանի ձեռքից։
Կոքեր ոգնութեյան չեն հասնի։
Մեկ անգամ ել կ'ըսա, ելի չեն հասնի։
Մեկ անգամ ել կ'ըսա.— Ո՛վ կոքեր,
Հագյա դու ինձի ես Թշնամու ձեռքից ազատեք,
Իմ երկու աղեն ձեզի մատաղ կ'իտամ։
Են վախտ սատանեն կու գա, եգ մարգ կ'ազատի։

2. Սաճառուրճ ու Ադրամելիճ Ուրմազանի խոռհրդով ապտեում են Սենեհերիմին յեվ նրա հետ փախչում են Փամբուկի ձորը։ Հայրը չի ընդունում նրանց

Յերբոր կ'ազատի, կու գա իր տուն, կ'ասա.
— Կնիկ, իմ տղեկներ կոքերուն մատաղ եմ բսեր.
Պետք ա իմ տղեկներ տանիմ, մատղիմ,
Որ ինձ Թշնամուց ազատեր են։
Կնիկ ըսավ.— Թաքավոր, գու գինաս.
Իմալ գինաս, եմալ երա։
Գողտու լե Յինք քրիստոնյա եր,
Ուր տղեք լե քրիստոնութեն սովրեցրեր եր։
Գողտու երկու գուրզ շինել տվեց,
Իրեն տղեկներուն սովորեցուց.
— Լաո, ձեր հեր կը տանի ձրգի, կոքերուն մատղա։
Ինչ որ կ'ըսիմ, դու պետք ա ընձի լսեք։
Ձեր հեր կ'ըսա՝ Արեք պաոկեք, մատղիմ։
Դու ել ըսեք՝ Չերիկ,
Գու պաոկի, քու կոքերուն աղոթք երա,
Որ քու մատաղ դարուլ եղնի։
Յերբոր կը կգի, գրգով կը զարկեք.
Կը զարկեք, ձեր հեր կը սպանեք,
Շուտ կը փախնեք, կ'իգաք ընձի մոտ։

Յեվ ըզորթ որ, եգ բան եղավ։
Տղեք ելան գնացին կոքատուն.
Հեր բերեց, որ տղեք մատղե։
Տղեք ըսին, ուրանց հեր պաոկավ.
Գուրզով զարկին, սպանին գհեր,

Ու փախան, եկան դեպ ուրանց մեր։
Մերն ել երկու ձի պատրաստեր եր.
Զենով Ոհան լե ուր հետ վերուցին,
Փախան Փամրխու ձոր, ուր հոր տուն։

Եկան ուրենց հոր տուն՝ Խաչիկի մոտ։
Խաչիկ իշխան հարցուց, ըսավ.
— Ա՛ղջի, լա՛ո, եդ ո՞ւր եկար ես վախթ։
Աղջիկ ըսավ.— Զեր փեսեն՝ թաքավոր՝
Իմ տղեք կռքերուն մատաղ տվավ.
Իմ տղեք թաքուն առեր իմ, եկեր իմ։
Հեր ըսավ.— Հա՛յ, քու աչքեր քոռնա.
Դուն որ եդ երիր՝ ասորիք կ՚իգան,
Հայաստան կը կոտորին, կ՚առնին, կ՚երթան.
Յես քըզի չեմ կը՛ռնա պախա։
Աղջիկ ըսավ.— Հե՛ր, բաս ի՞մալ ենիմ։
— Իմալ դինաս, երա՛, լա՛ո,
Ուր գ՚ուզիս, փախի՛, գնա՛։
Յես քրզի իմ տան չրմ կր՛ռնա պախա։

3. Յեղբայրներն իրենց մոր, Քեռի Թորոսի, Զենով Ոհանի յեվ ուրիշ ազգականների հետ գնում, իջնում են Մեղրագետի վրա. նրանք լեռներից իջնող բարակ ուժեղ ջրի ակի վրա իրենց համար տուն են շինում յեվ տնունը դնում Ստսուն

Արմաղանի ումուդ կտրավ հոր մոտից։
Առավ ուր երկու տղեն,
Զենով Ոհան, Քեռի Թորոս,
Ու մի քանի ազգականներ,
Հայասաանից փախան, գնացին։
Շատ գնացին քիչ, Ասված գինա.—
Քեռի Թորոս խելոք մարդ եր,
Վճռեց՝ ուր վոր լավ տեղ եղնի, ենտեղ տուն շինա։
Որերուց մեկ որ հասան Մշու դաշտ.
Ու սարի մոտ Մեղրագետի քով աշկեց,
Որ մեկ ուրիշ բարակ ջուր սարեն գ՚իկա,
Կը զարկա զՄեղրագետ, կ՚ընցնի,
Մեկ ել կը դառնա Մեղրագետ, նոր կ՚երթա։

Իսկ Քեռի Թորոս ուր մեջ կը մեզա.
«Ես ջուր խըմող ազրայել մարդ կը դառնա»։
Ենոնք խոսքեր մեկ երեցին.
— Ես ջրի գլուխ վորտեղ եղնի,
Ենտեղ մեր տուն շինինք, նստինք։
Ելան, եդ սարի գլուխ աշեցին.
Գնացին, եղ աղբրի ակ գտան.
Ու բերեցին, քար վըր քարի դրեցին,
Սուն վըր սան շինեցին,
Անուն Սասուն դրեցին։

Բ

ՄՀԵՐ

4. Ադրամելիքի վորդի Մհերը. Մհերի վորսորդությունն ու առյուծ սպանելը. Ճա իր քեռուց նվեր և սոանում Քուռկիկ Ջալլադը

Մի ժամանակ եդտեղ ուրանց ավ ու ղուշով ապրան։
Ադրամելիք բերեցին, կարքեցին.
Մշու Խաս գեղուց մեկ աղջիկ բերեցին։
Եդ աղջկուց մեկ հատ տղա եղավ։
Տղան թաժա որ եղավ,
Եդոր գլուխ երկու կոտ ցորեն կը տաներ։
Եդ աղի անուն դրին Մհեր։
Դե, ուրիշի ճժեր տարով կը մեծաներ,
Եդ Սասունա Մհեր որով կը մեծաներ։
Մհեր որ եղավ տասնուհինգ տարեկան,
Կը պրտըտեր Մշու դաշտ, Սասուն,
Վան, Խլաթ, Արճեշ ավ ու ղուշ կ'ներ։
Մեկ որ ել եկավ եդ Մհեր, Քեռի Թորոսին ըսավ.
— Ա՛խ, քեռի, իմալ կը դադրիմ։
Եդոր մեր վերցուց ըսավ.— Մհեր ջան,
Յելի գնա Խաս գեղ, քու քեռու տուն,
Բալքի քըզի մե ձի տան, հեծնիս։
Մհերն ել ծառ մի քաշեց, դրեց ուր փիջին,—

Մշո՛ւ դաշտ, դու դո՞ր իս, հա՛յդե, եկա քըզի։
Գնաց, իջավ Մառնըկա դուրան.
Տեսավ որ՝ մի առյուծ Յելավ ուր առեջ։
Եդ դազան Յելավ, որ Մհերին կլուցեր,
Ամա Մհեր բռնեց երկու չանգից,
Քաշից, ճզից, պատռից ու թալից մեկ գեհ,
Ու ընցավ, գնաց զուր քեռու տուն։
Յերբոր մեծ քեռին տեսավ Մհերին,
Հասավ, գրկվավ վիզ, բսավ.
— Մեռնիմ քըզի, Մհե՛ր ջան, զոջա մարդ իս եզի։
Տարավ, նստուց Յոդեն, բսավ.
— Յորի իս եկե, Մհե՛ր ջան։
Ըսավ.— Քե՛ռի, եկեր իմ քըզի մոտ,
Որ դու ընձի լավ ձի մի տաս.
Կ'իտա՛ս, ա՛ուր. չիտա՛ս, գ'ելլիմ, կ'երթամ։
Քեռին դարձավ, ըսավ.
— Մհե՛ր ան, գլխուդ-արեվուդ մեռնիմ.
Ուզածդ ձի մի չե՞, զուրբա՛ն եղնի քըզի։
Ու կանչեց իրեն մշկուն, ըսավ.
— Մշա՛կ, կը տանիս իմ խարզեն, ձիաններու մեջ.
Վրոր մեկ ձին Մհեր կը հավ՛նի,
Ենի կ'իտաս, թըզ տանա ուր տուն, Սասուն։

Մհերն ել մշկու հետ գնաց ձիաններու թավլեն.
Տեսավ, ի՞նչ տեսնի.—
Քսան ձի մեկ թարաֆ կապուկ,
Քսան ձի մեկել թարաֆ կապուկ։
Մշակ բսավ.— Մհե՛ր ջան, զուրբան քըզի,
Վրո՛ր մեկ ձին կը հավ՛նիս, քաշա՛, տա՛ր։
Մհերն ել ընկավ ձիաններու ջերգին.
Վրո՛ր մեկ ձիու պառեկին ձեռ տվից,
Փորն առավ գետին, կզավ։
Մհեր ըսավ.— Եսոնք ինձի ձեռ չիտա։
Մեկ լե տեսավ պզտի, փրչոտ, կլոր քուռակ մի,
Ըսավ.— Վրո՛ր ձիու պառեկին ձեռ դրեցի,
Փոր իջավ գետին, կզավ.
Կանի, մի գոմփ մ' ել զարկիմ ես քուռկան, փիծում.
Եդ ել կ'եղնի մեկ անուն։

Ըսավ, դոմփ ըմ գարկից քուռկու մեջքին։
Քուռակ ջուխտ ըմ ճուֆքա գարկից պատին։
Թե կը հասնեք, կ'առներ Մհերին,
Ջըմհեր կը քալեր Սասուն։
Ու գնաց քեռու մոտ։
Քեռին ըսավ.— Մհեր ջան, վըռը մեկ ձին հաքնար։
Ըսավ.— Քեռի, քու ձիաններ քըզի փեշքեշ,
Քու ձիաններու տեղ չխոռիմ.
կ'իտաս, են թավլի միջի վրչոտ քուռակ տուր.
Ջըս իտա, կը թողնիմ, կ'երթամ մըր տուն։
Ըսավ.— Մհեր ջան, գլխուգ-արեվուդ մեռնիմ,
Եդ քառսուն ձիու միջեն եկար, հաքնար եդ քուռկին.
Քուռակ քըզի դուրբան եղնի, վերգուր, տար։
Մշակն եր, գնաց, յուլար դրից քուռկու վիզ,
Քաշից դուրս, տվից Մհերին։
Մհեր քաշեց քուռակ, տեսնի՝ քուռակ չերթա։
Տեսավ որ՝ քուռակ չերթա,
կապեց քուռկու վոտքեր.
Ետ եցկեց քուռկու վոտքեր,
Դրեց ուր փիջին, ճամփա ընկավ.
«Սասուն, դու դըր ես, եկա քըզի»։
Եդ քուռակ Մհեր առավ, տարավ,
Անուն դրեց Քուռկի Ջալադին։

5. Մհերը Մսրա Մելիքի տանը. Մելիքը հյուրասիրում է Մհերին յեվ պատերազմում նրա հետ

Գայեց մի երկու տարի։
Մհեր որ եդավ ձիավոր,
Ամբողջ երկրներ վոտքի տակ տվեց.
Ու բոլոր վախեցան Մհերից։

Դու մի ըսիր, եդա Սասուն՝
Որ եկած են, շինած են,
Եդի Մըսրա Մելիքի հողն ա։
Եդ Մհերի ձեն կ'ելնի, կ'երթա,
կը հասնի Մըսրա Մելիքին։
Մըսրա Մելիք մարդ կը խըրկա,

Մհերին կը խանչա ուր մոտ.
Թը.— Մհեր ջան, եգ տեղն որ կա,
Եդ Սասուն որ կա, եդի իմ հողն ա.
Եդ հող քրզի փեշքեշ կ'իտամ.
Մինակ կռվու ժամանակ որ եղնի,
Դու իմ պառիկ եղնիս։
Ես Մըսրա Մելիք սաղ սրտով չըսա.
Կը վախնա Մհերից, կը կեղծավորնա։
Մըսրա Մելիք կը աեսնի Մհերին,
Որ ինք հաստատ մարդ, ազնահուր մարդ ա։
Կը նստին Յինք, ուր կնիկ գողտուկ կը զրուցին.
Կ'ըսի.— Կնիկ, թե Մհերից, թե ուր ձիուց ջինս չվերցունք,
Ես մարզու ջինս մեր քոք կը կտրա։
Իմալ երեցին, չերեցին ենոնք,
Մի գիշեր Մհեր գնաց Մելիքի կնկա մոտ պառկավ.
Քուռկու Ջալադին ել գողտուկ տարան,
Քաշեցին ուրենց խըսրբխու վրեն։
Կնափոխ երին զերկուս լե։

Ու Մհերի հետ պայման գրին.
Մելիք ըսեց.— Մհեր ջան,
Ես թուղթ կը գրինք եդոր համար,
Որ յես Յառեջ մեռնիմ,
Իմ կնիկ ու ճիժ դու պայիս.
Որ դու Յառեջ մեռնիս,
Յես պայիմ քու կնիկ ու ճիժ։
Պահման երին, ու Մհեր թողից, գնաց Սասուն։

Գ

ԴԱՎԹԻ ԿՌԻՎԸ ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ՀԵՏ

Ճ. Մհերի յեվ Դոհարի վորդիներ Դավիթն ու Մանուկը. Մհերի վորդի Մսրա Մելիք. Մհերք օինում ե Մարաքուխն ու Ծովասարը, ապա օպանվում ե

Են վախտ Մհերին եզավ երկու տղա.
Մեկի անուն գրին Դավիթ,
Մեկելին ել՝ Մանուկ։

Մելիքի կնիկ տարին թըմմավ,
Պառկավ տղա մի բերեց.
Մելիքի խրսրախ լե ծնավ,
Մի վորձ քուռակ բերեց։

Ընցավ երկու իրեք տարի.
Մհեր ելավ գնաց Սասունա սար,
Մի լավ բաղ մի տնկից, անուն դրից Ծովասար։
Եդ Ծովասարի մոտ շինեց վանք մի.
Վանքի անուն՝ Բարձր Մարաթուխ Աստվածածին։
Եդ բան որ պրծավ, իջավ, գնաց Հայաստան։
Հայաստան հասնելուն Սիփանա սարի մոտ
Նստավ քիչ ըմ ըռհաթի։
Դու մ՝ ը՛սի, ետեղ գաղի տակ մարգ՝ մի տապեր ա՛.
Կր նշնա ուր նետ ու անեղ,
Ու կը զարկա Մհերի սրտի մեչ.
Ու Մհեր կը մեռնի։
Ու եգ գեղի անուն կը դնեն Գազոխ.
Հիմի ել կա եդ գեղ։

7. Մհերի վորդիները Մսրա Մելիքի տանը. Դավիթը բռնում, քաշում և Մելիքի միրուքը. Մելիքի վախը նրանից։ Դավթի մանկական չարությունները

Զեն կը հասնի Մըսրա Մելիքին,
Թե. «Քու տխպեր Մհեր մեռավ»։
Ուր դրած պահմանի համար՝
Մըսրա Մելիք մարգիկ խըրկեց,
Մհերի կնիկ, ճիժ բերել տա իր մոտ։
Ամա Զենով Ոհան ու Քեռի Թորոս
Զուրանց հարս չտվին.
Երկու տղեն տվին, տարան Մըսրա Մելիքին։
Մըսրա Մելիք տղեկներուց շատ հա՛զ կ՛եներ.
Ըմմընոր կը դներ ուր չոքերուն, կը խաղցուցեր։
Մեկ որ լե գրեր եր ուր չոքերուն կը խաղցուցեր,
Դավիթ ձեռ թալից Մելիքի մուրուք։
Թե Մելիք ուր չանգին չբռներ, կը քաշեր, կը ճղեր։
Մըսրա Մելիք ըսավ.— Կնիկ,

Իմ գլխուն ինչ փորձանք իգա, իդա տղուց կ'իգա.
Յես պըդի իդա տղեկ կորցում։
Կնիկ դարձավ ըսավ.— Ա՜յ մարդ,
Հըլա ճիժ ին, խելք ուրանց ճուր ա՜, բան չկըտրին։
Ընցավ տարի մ՜, երկուս։

Եդ Դավիթ ճժերու հետ կ'երթեր, կը խաղեր ուրին։
Մեկ որ լե Դավիթ ճժերուն ըսեց.
— Ճժե՛ր, Յարի՛ք, իդա ծառ ենիմ ձի, հեծեք։
Քաշեց ծառ մը կըզըցուց.
Քաղքի ճժեր Յըմեն հանեց ծառ, հեծըցուց.
Ու Դավիթ ծառի գլուխ որ չթո՛ղից,
Անմեկ ճիժ մի մեկ թարաֆ գացին,
Հալա հարի մըկա ճժեր երկնքուց կ'իգան,
Մեկ-մեկ կը պադին տակ։
Ճժերու տիրվըտան եկան,
Մըսրա Մելիքին գանգըտվան,
Թե.— Իդա Սասունա ծուռ մեր ճժերու քոք բերից։

8. Մսրա Մելիքը փորձում և Դավթին յեվ Մանուկին վոսկով յեվ կրակով

Մելիք ուր մեծամեծներ խանչեց ուր մոտ, կ'ըսի.
— Արե՛ք, ձեր հետ բան մի ենինք։
Յես իգա ճժեր պըդի կորցում.
Ա՜յ մարդեր, դու ի՞նչ կ'ըսիք։
Կես ըսին.— Սպանի՞նք։
Կեսն ել ըսին.— Ճիժ են խելք չհա՛սնի։
Մըսրա Մելիք ըսավ.
— Թե ճիժ են, բերինք, մի փորձ մ' ենինք.
Տեսնինք՝ հըլա ճի՞ժ են, թե՞ ղաստի կ'ենեն։

Բերին սինի մի ոսկի, մեկ ել կաղնու կրակի քոզ,
Դրեցին Յոդի ներքեվ, նստան։
Մելիք Մանուկին բաց թողից.
— Տեսնինք՝ կրակի՞ կ'երթա, թե՞ ոսկու։
Մանուկ վազով հապկեց, գնաց դեմի կրակ.
Կրակ վերցուց, դրեց ուր մռթին.
Մռութ իրիցավ։

Սրեն եկավ Դավիթին։
Դավիթին որ Թողեցին,
Դավիթ գնաց դեմի ոսկին։
Ատրծու հրեշտակ Յիշավ,
Դարցուց Դավիթին դեմի կրակ։
Են վախտ խղճով մարդ շատ կար։
ՉԹողեցին՝ Դավիթ հասներ կրակին.
Թե.— Հարիֆի տղեն մեկ երեցիք այիրլու,
Մեկ ել մ՚ ենիք, ամոթ ա՜։
Ու Դավիթին չԹորգեցին։

9. Քեռի Թորոսը Մսրա Մելիքի կճոջ իմաց տալով՝ գնում է Մսր յեվ յերեխաներին բերում Սասուն

Մելիքի կնիկ Մհերի խաթըր համար՝
Գողտու մարդ խրկեց Սասուն Քեռի Թորոսին.
«Քու տուն ավիրի, Քեռի Թորոս,
Արի, քու տղեկներ ա՛ռ, տար,
Թե չե Մրսրա Մելիք կը կորցու»։
Յերբոր մարդ գնաց, հասավ Սասուն,
Քեռի Թորոսին եդ խաբար տվից,
Քեռի Թորոս հեծավ վեցոտնեն Լա՜գին,
Մեկ ժամվա մեջ ուրին հասուց Մրսրր։
Քեռի Թորոս եկավ Մրսրա Մելիքի մոտ.
Ըսավ.— Եկեր իմ՝ ճժեր տանիմ,
Մեր շաս գ՚իլա, ա՜ոքի աչքեր քոռցեր ա՜։
Ու մեկտակ տղեք առավ ու գնաց։

10. Դավիթը հարթարած. Քեռի Թորոսի այցելությունը նրան

Յերբ տղեք տարավ Սասուն,
Դավիթ եղեր եր տաս-տասմեկ տարեկան։
Սովք են տերին ընկեր եր.
Մշու դաշտ ու Սասուն հաց չիկեր եր։
Մեկ որ Դավիթ բսավ Քեռի Թորոսին.
— Ինձ տար, մի տեղ հռաստղ տուր,

Բայլքի քանի մը կոտ կորնկ բերինք, ապրինք։
Քեռի Թորոս ըսավ.— Իմկնի՛ լակոտ,
Դու երթաս, եղնիս մշակ, կորեկ բերիս,
Տանիս ջաղաց, աղաս, բերիս,
Քու մեր Արմաղան թխա, բերի.
Քու ձեռքով տաս, թը՝ Քեռի Թորոս, կիր,—
Յետ չըմ հանվտրնա, յետ չըմ հանվտրնա։
Դավիթ շատ լաց, թը.— Քեռի ջան,
Տար ինձ, մի տեղ վարձա։
Քեռին տարավ Դավթին Մշու դաշտ,
Մառնիկ գեղ տվից հորթարած,
Ու ինք թողից, եկավ Սասուն։

Յերբոր Դավիթ հորթեր տարավ դաշտ,
Իրիկուն դաշտից հորթեր ժողվելոց՝
Ինչքան աղվես, գել, լապրստրակ, գազաններ կար՝
Հավաքեց, հորթերու հետ բերեց, լցըրեց գեղ։
Գեղացիք տեսան ջանավրրներ, վախից դռներ փակին։
Դավիթ տեսավ որ՝ մարդ չեկավ դուրս,
Բոոաց.

— Ա՛յ գեղացիք,
Դռներ բացեք, ձրր հորթեր ներս արեք։
Վրորն որ երկուս ա, արեր իմ չորս,
Վրորն որ իրեք ա, արեր իմ վեց,
Վրորն որ չորս ա, արեր իմ ութ,
Վրորն որ ութ ա, արեր իմ տըսնըվեց։

Տեսավ որ՝ մարդ դուռ չբանա.
Ինք լե ինքան ա վազն գազաններու յեդեվ՝
Դագրեր, ջարդվեր, ճնացեր ներ,
Քաշվավ պատի տակ ու քնավ։
Գազաններ փախան, գացին սարեր,
Հորթեր մացին գեղ մինչեվ սաբահտան, որ լուսցավ,
Աշկեցին, տեսան մինակ հորթերն ին,
Քաշեցին, Դավթին ձեձեցին։
Դավիթ գեղից դուս մի տեխ մի քնավ։

Քեռի Թորոս ըսավ.— Կնիկ,
Երթամ են տղի խաստալին։

Դավիթ մոտիկ կեղի նախրորդի հետ ախպեր ին եղած.
Էնի Յրմեն բան խրատ կ'իտեր Դավիթին,
Մենկ որ ուր ախպեր նախրորդ մալ Յանրգան քերեց,
Դավիթ բսավ ուր ախպոր.
— Եղ Յորի հրմալ մալ Յանդըցուցիր։
Էն ել բսաց.— Դավիթ ջան,
Քո գլխուն-արեվուն մեռնիմ,
Մեր կեղ խերու հըրիսա չեն գրած.
Կայնա, որ բ՚ելքի քիչ մի ուտինք.
Է՛ն ել չեղավ. ժամեն Յանրգան գ՚ելնին,
Փու վախու շուտ Յելա եկա,
Դավիթ բսավ.— Ախպեր ջան,
Դու մալին մուղայթ կեցի,
Ցես կ՚երթամ, քրդի հրրիսա կը բերիմ,
Բսավ.— Լավ, յես կը կենամ, դու գնա,
Ու Դավիթ Յելավ գնաց եղ նախրչու կեղ,
Հարց ու փորձ երավ եսոր-ենոր,
Թե՝ Հրրիսեն վրոր տուն ա գրած,
Ըսեցին.— Է՛ն տունն ա։
Ու մտավ Դավիթ եղ տուն,
Տեսավ հրրիսեն թրնդիը,
Մե կնիկ լե կայնուկ ա։
Բսեց.— Նանե ջան, Նանե,
Ինձ մի խելի հրրիսա տուր,
Առնինք, տանինք, քոմինք, ուտինք։
Բսավ.— Դե կ՚որի, Սասունա ծուռ,
Չի գիննաս, որ ժամեն դրո չելած ին։
կեցի, ժամեն Յելլեն,
Տերտեր ժամեն իգա, հրրիսեն որչնա,
Ներ հրրիսեն կ՚ուտին, դու լե կ՚ուտիս։
Դավիթ բսավ.— Նանե ջան,
Մալին մոտ մարդ չկա, մալեր կը կորին։
Որ բսավ, Նանեն քրվեց։
Դավիթ լե հերս Յելավ,
Ձեռ տարավ, կարաս թունդրեն հանեց,
Կաղ թալեց կարսին, շալկեց,
Տաշտ լե դրեց գլխուն,
Յեղի փարխաջ առավ ձեռ,

Քեռի Թորոս եկավ գեղ, հարցուց,
Թե.— Մեր տղեն, Դավիթ, յո՞ւր ա։
Ինչքան մարդ կար՝ քրվեց,
Ինչքան կնիկ կար՝ անիծեց։
Քեռին գնաց տղին գաշելու.
Տեսավ որ՝ մեկ տեղ քներ ա.
Ենպես մի լանգա գարկեց որ՝
Թե Դավիթ չեղնեը, ուրիշ եղներ,
Ցոթ դաթ գետնի տակ կ'երթեր։
Դավիթ քնից յելավ,
Տեսավ, որ Քեռի Թորոսն ա.
Ըսեց.— Քեռի ջան, ընչի՞ կը գարկես ընձի։
Քեռին ըսեց.— Իմկնի շանորդի,
Ցես քըզի չըսեցի, որ դու յելնիս,
Քո ձեռքով հաց բերիս, տաս ընձիկ,—
Ցես չըմ հավարնա, յես չըմ հավարնա։
Դավիթ ըսավ.— Քեռի, ներողուքեն,
Էն լրոք հորթեր ընձի շատ չարչըրեցին,
Եդոր համար գեղացիք ել ընձի ձեձին, դուրս երին։
Ըսավ.— Անխելք Սասունա ծուռ,
Ե՛ն որ շատ կը փախնի, ենի մը բեր.
Ե՛ն որ շատ չփախնի, ենի տուր յառեչ ու բեր։

11. Դավիթը ճախարդ. բնկեր ճախարդը, մամի հարիսան յնվ ավազակները

Ես անգամ քեռին առավ Դավիթին,
Տարավ ուրիշ գեղ, երեց նախրորդ։
Ու յըմեն բան ենոր ըսեց, խրատ տվեց,
Թե.— Լա՛ւ, ես տեսակ մալ կը պայինւ
Դավիթ ըսեց.— Լա՛վ, գնա՛.
Քո ըսածի պես կը պայիմ, մը վախենա։
Քեռի Թորոս գնաց Սասուն։

Դավիթն ուր փեդ վերցուց, նախիր տարավ։
Ըստահ Դավիթ լավ մալ պայից։
Գեղացիք կ'որհնեին Դավիթին.
«Հարի մըկա իդամլա նախրորդ մըզի ոաստ չեկեր ա»։

Ինչքան որ հաց թխած ին, դրեց յունդ,
Ինչքան գդել, շերեփ կար,
ժողվեց, առավ, գնաց գաշտ։
Կնիկ վազեց, հավար տվեց ժամ.
— Ջրր տուն ավերի, ա՛յ գեղացիք,
Սասունա ծուռ Դավիթ եկավ,
Հըրիսեն ու հացեր գըմեն, հավաքեց, տարավ։
Գեղի ջհելներ ընկան յեդեվ.
Բայց խելոք մարդիկ կար,
Դարձուցին ջհելներ, ասին,
Թր.— Զըգի կը ջարդա, թըղ տանա։

Դավիթ լե յերր հասավ ուր ընկերի մոտ,
Ընկեր նիլաթ կախած՝ նստեր եր։
Դավիթ լե հըրիսեն ու հացեր դրից,
Հարցուց.— յոր եդմալ նիյաթ կախեր իս։
Նախրորդ բսավ.— Դավիթ ջան,
Յես նիյաթ չկամխիմ, հըրա վըռը կախա։
Դու որ գացիր, քըզնե յեդեվ,
Քառսուն հարամի եկան, զարկին,
Ըու նախրից քառսուն մալ տարան։
Կ'բսա.— Բան չկա, ախպեր ջան,
Դու հըրիսեն կեր, յես կ'երթամ, կը բերիմ։
Ու ընկավ հարամու յեդեվ։
Շատ գնաց, քիչ, Աստված գինա,
Գնաց, հասավ մի սարի գոշ.
Տեսավ որ, եդ սարի գնարներու միջից մուխ կ'իգա.
Բռնեց մուխ, գնաց մուղարեն,
Տեսավ որ՝ քառսուն հարամին քսան կովեր մոթած ին,
Քսան մալ դրո սալամաթ ին։
Դուռ կրտրից, մտավ ներս,
Հարամեստանու քառսունի գլուխ լև կտրից,
Վերցուց, տարավ, թալից դուռ։
Մտավ եդոնց մաղարեն, գաշեց,
Տեսավ որ՝ մեկ տեղ լիք ոսկի յա.
Ուր հաբան լիք լցրից ոսկին,
Մորթած մալերու կաշին ու գլխներ
Լցրից ենոնց պղրնձի մեջ,

Քսան մալ ել տվից Յառեչ,
Պղինձ լե շալկից, եկավ գեղ։
Մնացած մալեր լե, նախրորդ թոփ երեց,
Բերեց, տվավ տիրվրտաններուն։
Ըսավ.— Ես ձեր մալերու կաշին ու գլոխ,
Եսա պղինձ լե կը ծախիք,
Շատ վնաս ենողին կը տաք,
Ել յես նախրորդ չըմ եղնի, կ'երթամ։
Ու Յելավ, գնաց Սասուն։

12. Դավիթը Քեռի Թորոսի յավ տանեցիների հետ տուն են կրում ավազակների մեծ գանձը

Գնաց, Արմազանին ըսավ.—
Արմազան Թորոսի քուրն ա՛,—
— Նա՛նե, մի տեղ թալ, յես կը քնիմ։
Ըսավ.— Կը քնիս, դժոխք քնի. ինչի՞ եկար։
Դավիթ պառկավ, քնավ։
Իրեք որ, իրեք գիշեր Դավիթ քնուկ մնաց։
Են վախտ Քեռի Թորոս տուն չեր։
Քեռի Թորոս յերը եկավ տուն,
Տեսավ որ՝ Դավիթ քներ ա՛,
Հըմալ լանգե մ' իջավ Դավիթի գլխուն,
Որ կ'ըսես՝ թոփ ա՛ զարկե։
Դավիթ քնուց Յելավ, ըսավ.
— Յորի՞ կը զարկիս ընձի։
Ըսավ.— Շա՛ն լակոտ,
Յես քրզի ըսիցի՝
Երթաս, նախրորդ եղնիս,
Քու հախ կորեկ առնիս,
Տանիս ջաղաչ, ագաս, բերիս,
Քու մեր Արմազան թխա,
Քու ձեռքով հաց բերիս,
Տաս ընձի, որ ուտիմ,
Չըմ հա՛վտընա, չըմ հա՛վտընա։
Դավիթի խելք ընկավ գլուխ։
Նստուկ տեղ հարցուց.— Քեռի՞ Թորոս,
Մենք քանի՞ տղամարդ ինք։

Ըսավ.— Աստված արեվըդ չիտա,
Քեզնով մենք քառսուն մարդ ինք։
— Լավ, բսավ, մենք քանի՞ ջվալ ունինք։
Ըսավ.— Աստված քու արեվ սպանա,
Քու ջրվլով քառսուն ջվալ ունինք։
Դավիթ բսավ.— Քեռի ջան. մը նեղրնա.
Յելի, մեր մարդոց խաբար արա,
Ջվըլներ առնին, երթանք, ոսկի բերինք։
— Դե, սո՛ւս, շանորդի ծո՛ւռ,
Կորեկ չբերա, ոսկի կը բերա։
Են վախա Դավիթ ուր մեջքեն Ժարձկեց հարան.
Ոսկին դառըրկեց Քեռի Թորոսի Յառէչ։
Քեռի Թորոս ոսկին որ տեսավ՝
— Վաչ, Դավիթ ջան, բսավ,
Քու գլխուն-արեվուն մեռնիմ...
Բռնեց Դավիթի Յերեսներ պաքեց։

Յրմեն Յիլան քառսուն հոգով՝
Առան ուրենց ջվրլներ ու չրվներ, գացին։
Դավիթ լե ընկավ ուրենց Յառէչ,
Տարավ եդոնց եդ մըղարեն։
Քեռիք որ տեսան եդ հարամեստանու գլուխ, ջանդքներ,
Ըսկըսեցին ուրար Յեղեվից փախնել.
Դավիթ գարցավ ու բոռաց.— Քեռի Թորոս,
Յո՞ւր կը փախնիք, բսպաննե՛ր իմ։
Դու մեռլից կը փախնիք.
Հըրա սաղերուց իմաձ պրդի եղնիք։
Ու սաղ գարձան, եկան, մտան մուդաղեն,
Ոսկիք լցեցին ուրանց ջրվրլներ,
Շալկեցին ու ընկան ճանապախ։
Յերբ ոսկին բերեցին Սասուն,
Քեռի Թորոս գնաց Մշու քաղաք.
Իըղբներ, ուստեք բերնց,
Սկսեցին ուրենց լավ տներ շինեցին։

12. Վորսորդություն յեվ խրատատու Պառավը-Դավիթն ու գոմեշը

Են վախտ Դավիթ եղավ տան ազիզ.
Վերցուց ուր գուրզ ու քաման, նետ ու անեղ,
Ընկավ ուրեն ավջրթենի։
Ուրենց գեղի Պառվու կորեկի արտու մեջ
Յրմեն որ ճընճղուկ կը զարկեր։—
Ոսկին բերեց, ել ընչի՞ դարդ կ՚ենի։—
Մեկ որ լե Պառավ տեսավ որ՝
Դավիթ ուր կորեկ կը տրորա,
Ըսավ.— Դա՛վի՛թ, Դավի՛թ՝
Չարբս քրզի տանա, գրոխ քրզի խեխտա,
Դու են հոր տզե՞ն իս.
Աստված ողորմի՛ Առուծ Մհերի հոքուն.
Ենի որ կար, խեղճերու պապ ու մամ եր։
Իմ գուման եդ փշու մ՚ կորեկն ա՛,
Դուն լե եկար տրորեցիր։
Որ տղամա՞րդ իս, են հոր տզե՞ն իս,
Յո՞րի չերթաս Ծովասար։
Մըսրա Մելիք եկեր ա՛,
Քու հոր սար զավթեր ա՛,
Բազ-բաղչա տնկեր ա՛.
Ընդոր մեջ Յրմեն բան կա.
Չըս երթա ենտեխ հորս ենես,
Կ՚իգաս, իմ կորեկ կը տրորիս։
Ըսավ.— Նա՛նե ջան, գլխուդ մեռնիմ,
Եդ վըո՞ր տեխն ա՛ Մըսրա Մելիքի Ծովասար։
Պառավ ըսավ.— Գնա՛, Քեռի Թորոսին ըսա՛,
Ենի Ծովասարի տեխ գինա։

Դավիթ եկավ տուն, հարցուց Քեռի Թորոսին.
— Իմ հոր Ծովասարի տեխ կ՚ըսիս, ըսա՛,
Չըսիս՝ Հացն ու գինին, Տեր կենդանին,
Մի գուրզ մի քրզի կը զարկիմ։
Քեռի Թորոս տեսավ որ՝
Դավիթի ծռութեն բռներ ա՛,
Ըսաց.— Լա՛ռ, մը հե՞բսոտի,
Արի՛, տանիմ, քրզի նշանց կ՚իտամ։

Ընոր տարավ պտըտցուց ուրիշ տեխ։
Են սար լե մեծ մեչա լեը.
Ըսավ.— Իդա յա քու պապու Մովսասար։
Դավիթ լե մե քանի հատ գել. արջ, ագվես զարկեց,
Շարեց ուր փեդի ճրաք, եգավ տուն։
Քեռի Թորոս ըսավ.— Դավիթ ջան,
Գլխուդ-արեվուդ մեռնիմ, իմ թամբեն կը պայիս.
Ես իրեք կողմ կ'երթաս,
Ամա արեվմտյան կողմ չըս երթա,
Ջունքի ենտեխ կոտշով բոլոջ կա, քըզի կ'ուտա։
Դավիթ ըսաց.— Քեռի ջան,
Եդ կոտշով բոլոջ հեռեվաննց մարդու կը կլու.
Թե՞ կը մոտիկնա, յեդեվ կը կլու։
Քեռին ըսավ.— Հեռեվաննց։
Դավիթ ըսավ.— Որ հրմալ ա, յես չըմ երթա դենի.
Ըսկսավ իրեք թարաֆ մաև գալ. բան մը չթողից։

Մե որ ել ենքան զվրռնեց, զվրռնեց,
Ջեռ բան չընգավ, ըսավ. «Վաչլահ,
Կ'երթամ եդ կոտշով բոլոջի թարաֆը»։
Ըսավ ու գնաց դեպի դենի։
Քիչ մի գնաց, ինչ տեսավ.—
Տեսավ՝ մի հոտաղ ընկեր ա մեկ գըմշու յեդեվ։
Գըմեշ կը փախնի, ինք լե կը լարե։
Դավիթ քաշեց ուր գուրզ, ըսավ.
«Քեռի Թորոսի բսած կոտշով բոլոջ ըղորթ ա»...
Ըսավ, որ զարկեր գըմշուն, հոտաղ բոռաց.
— Ե՛, ըսավ, իմկնի Սասունա ծուռ,
Ըդ գըմեշն ա, մըր ըմուդն ա։
Դավիթ ըսավ.— Ի՞մալ,
Եդի կոտշով բոլոջ չե՞։
Հոտաղ ըսավ.— Ա՛յ մարդ, յաշկա վերեվ,
Տես, քու հոր սարն ա, Մովսասարն ա.
Ախշարք եդ գըմշուց լծած վար կ'ենեն։
Դավիթ շնորհակալ եղավ հոտաղուց.
Յելավ գնաց դեպի Մովսասար։

14. Դավիթն ավերում և Ծովասարը

Յելավ սարի գլուխ, տեսավ՝ չորս թարաֆ պատ ա.
Դորվի զրվըռնեց, դուռ չկար, չեղավ։
Կանչեց Գավիթ.
«Յա՛ Բանձրիկ Մարաթուխ Աստվածածին»,
Ու գուրզ զարկեց, պատր ըլավ։
Մտավ ներս, ի՞նչ տեսավ.—
Յըմեն չեշիդ ջանավըրներ լիքն ա՛ մեջ։
Մե քանի հատ ջանավար զարկեց,
Շարեց ուր փեդին, դրեց ուր փիջին,
Մացածներուն դարձավ, ըսավ.
— Գնացեք, ձըզի համար ապրեք։
Դարձավ, եդ պատեր զըմեն քանդեց.
Ծառներ քոքեն հանեց,
Երեց Դավիթի ավեր,
Ուր ջանավըրներ զըմեն շալգեց,
Եկավ տուն՝ Քեռի Թորոսի մոտ։
Ըսավ.— Քեռի՛ Թորոս,
Հըմալ տեխ մի դտեր իմ,
Որ լիքն ա՛ եդա ջանավըրներուց։
Ըսավ.— Քու արեվ մեռնի, լա՛ո,
Գացեր իս, Մըսրա Մելիքի Ծովասարն իս քանդե.
Լուսուն կ՚իգա, մենք ի՞նչ ջուհար տանք.
Կ՚իգա, ամբողջ Սասուն կը ջարդա։
Դավիթ ըսավ — Քեռի՛,
Մըսրա Մելիք ի՞նչ իրավունք ունի,
Իգա, մեր ախպին ուրին բան շինա.
Ըսավ ու հեռեցավ, գնաց։
Մենք խաբար տանք Մըսրա Մելիքից։

15. Մսրա Մելիքը պահանջում և Քեռի Թորոսից Դավթի գլուխը յեվ հարկ. հարկահաններին ծաղրող կանայք

Խաբար տված ին Մըսրա Մելիքին,
Թե.— Քու ախպոր տղեկն, որ դու պայեցիր,

Են Դավիթ Յելեր ա՛, գացեր ա՛,
Քու Ծովասար քար ու քանդ արեր ա՛։
Մելիք՝ յերբոր լսեց իդա բան, ըսավ.
— Իմ հոր խոսք կատարվավ։
Չունքի եդ Մելիք մեռեր եր.
Մհերից Յելած Մելիքի տղեն
Յելեր եր Մրսրա թաքավոր։
Են ել Դավիթից պակաս չեր ուժից։
Մելիք կր խանչա իրեն մարդիք ուր մոտ.
Կը խանչա զորքի մեծին՝ Կոզբադինին ու կ'բսա.

«Գ'ելնիս, կ'երթաս Սասուն.
Կր բերիս ոխար տարվա խարաջ՝
Քառսուն երգան կընկըտիք՝ մըզի ուղտեր բառնան.
Քառսուն կարճ կընկըտիք՝ մրգի երկանք աղան.
Քառսուն կ'ուս աղջիկ՝ մըզի արմազան.
Ու Մանուկի աջ բազուկ,
Ու Դավիթի գլուխ»։

Եդպես ըսելով Կոզբադին, Սուդին,
Չարխադին ու Բադին քառսուն ձիավոր՝
Ընկան ճանպախ դեպի Սասուն։
Յերբոր հասան մեկ գեղ,
Եդ գեղի կընկրտիք որ տեսան՝
Սկսեցին ըսել ու պարել.

«Բարո՛վ Բադին, Չարխադին,
Յո՛ւր կ'երթաք եդպես վազան,
Կոզբադին ու Սուդին,
Դարձած եդպես գազան»։

Կոզբադին վերուց, կընկըտոց ըսավ.

«Քաքոտ կա, քաքոտ պապեր,
Մտեք տուն, արեք շիվան,
Յելեք դուրս, արեք դիվան։
Կ'երթանք Սասուն առ ու թալան.
Մուղալ յեզներ բերենք լծան,
Սիրուն կովեր բերենք կտան,
Քառսուն երգեն կընկրտիք՝ ուզտեր բառնան.

Քառասուն կարճ կընկլտիք՝ երկանք ադան.
Քառասուն կուս աղջիկ՝ մըզի արմադանդ։*
Դարձավ մի կնիկ, ըսավ.

«Սասունա ծռեր, Քե յես պիտեմ,
Ձեր յոդած Քե տան, Քե տանդ։

Ու ըսեցին, ու գնացին։
Հասան Սասուն ու կանչին Քևռի Թորոսին.
Մելիքի հրաման ավեցին ենդոր, ըսին.
— Ե՛յ Քևռի Թորոս, Մելիք գ'ուգա՝
«Ոխտը տարվա խարջ ու խարաջ.
Քառասուն երգան կնիկ՝ ուղտեր բառնան.
Քառասուն կարճ կնիկ՝ երկանք ադան.
Քառասուն կուս աղջիկ՝ մըզի արմադան.
Ու Մանուկի աչ բադուկ,
Ու Դավիթի գլուխ։
Քևռի Թորոս** չվարած՝
Ըսկըսավ գեղից կընկլտիք հավաքել։
Կուս աղջիկներ հավաքել.
Ժողվեց, լցեց մեկ մարաք,
Գնաց տուն, առավ կոտ, նստեց,
Դավիթի բերած ոսկին չափեց։

16. Դարձյալ խրատատու Պառավը. Դավիթը հարկ չի տալիս յևվ պատուհասում ե հարկահանցներին

Են վախտ լի Դավիթ գացեր եր,
Պառվու բոստան շախգամ կ'ուտեր։
Պառավ տեսավ Դավիթին ու անիծեց.
— Դավիթ, բ՚ալքի դու մեռնիս.
Եգեր իս, մտեր իս իմ բոստան, կ'ավիրիս,
Մեկ աղջիկ ըմ լե ունինք,
Մըսրա Մելիք եգեր ա ու կը տանա.
Տիյա Քևռի Թորոսն ել գացեր ա,

* Յերգ ե. ձենով չգիտեն։ Կ. Մ.-Ո.
** «Տան խեկավոր Քևռի Թորոսն ա». ձանոթ. ասացողին։ Կ. Մ.-Ո.

Քառասուն կոտ ոսկի կը չափա՝
Դավիթ մոտեցավ Պառավուն ու ըսավ.
— Ա՛յ Պառավ, եդ ինչ ա՝ կը ղըրցիս.
Եդ ինչ աղջիկ ա՝, եդ ինչ ոսկի չա՝
Ըսավ.— Դավիթ, գրող քըզի տանի.
Դու Ժելեր իս գացեր իս,
Մըսրա Մելիքի Ծովասար քանդեր իս.
Մըսրա Մելիքէ հերսոտել ա՝,
Քառասուն ձիավոր ղրկեր ա՝,
Քառասուն հազ հարս, քառասուն կնիկ, քառասուն աղջիկ.
Քառասուն կոտ ոսկի գ՛ուղա՝
Աղջիկներ ու կրնկրտիք լցած մարաք՝
Քեռի Թորոսն էլ հանդա ոսկին կը չափա՝
Պառավ ըսեց, Դավիթ լե գնաց՝
Դավիթ գնաց, տեսավ, որ Քեռի Թորոս
Նստեր, քըրտներ, ոսկին կը համրա՝
Կոտ ձեռքից խլեց, ըսավ.
— Քեռի, տուր չես չափիմ՝
Կոտն առավ ոսկու մեչ մտուց վըռուս թափեց.
Լցեց ոսկին կոտի վրտին ու սիլաջախ գարկեց՝
Մի հազ ոսկի չմնաց կոտի վըռտին.
Դարտակ կոտ դարտըկեց չըվլի մեչ,
Ու ըսավ.— Մե՛կ...
Կողբադին հերսոդավ, ըսավ.
— Ի՞նչ տղաութեն կ՛ենիս,
Մարդու պես դործ երա,
Մենք հո տղա չինք...
Ըսավ ու մի սիլա Դավիթի վրին տվեց՝
Դավիթ լե հերսոդավ, Ժելավ կանգնավ,
Կոտ վերցուց, Կողբադնին գարկեց՝
Թե Կողբադին գլուխ չտաներ մեկ դին,
Վիզ կը կտրեր, գլուխ կ՛երթեր՝
Ու բոնեց Դավիթ եդ մենձվորներին,
Ագռեք քաշեց, գարկեց ճակատ,
Քառասունից մինակ չորսին թողեց,
Իսկ մնացած սպաննեց, ըսավ.
— Գացեք, ձեր Մելիքին խաբար տվեք,

Թե են Մհերի տղա Դավիթ երեց.
Տղամարդ ա՞, թող գա։
Եդ մարդիք Յելան,
Հեծան ուրենց ձիեր
Ու... հա՞յդե Մըսըր։

17. Դարձյալ հարկահաններին ծաղրող կանայք

Յերբ հասան են գեղ, տեսան՝
Կընկըտիք դուռ նորից կայնուկ են.
Սկսեցին կընկըտիք եդոնց ծաղրել։

«Դու գնացիք եդպես վազան,
Ինչըխ հերսոտ գել ու գազան,
Ընչի՞ եկաք, ինչըխ շունը վազան»։

Կոզրադին դարձավ հերսոտ բսեց.

«Քաքոտ կա, քաքոտ պապեր,
Մտեք տուն, երեք շիվան,
Յելեք դուրս, երեք դիվան.
Մենք կ՚երթինք Սասուն առ ու թալան.
Մուղալ յեզներ բերինք լծան,
Կեռիկ կովեր բերինք կթան,
Երկան կընկըտիք՝ ուղտեր բառնան,
Կարճ կընկըտիք՝ երկանք աղան,
Կուս աղջիկներ՝ մըգի արմաղան,
Քառսուն բեռ ոսկի շողշողան,
Աշխարք Մըսրա ձեռ կը դողան։
Մենք չգիտինք Սասուն քար ու կապան,
Մարդու գլոխ կը դարձուն պատուհան»։

Ու անցան, գնացին Մըսըր։

18. Մսրա Մելիքի զորահավաքն ու տրավանքը Սասունի վրա. նրա բանակը Մուս գաւառում

Յերբ հասան, պալատին մոտեցան,
Մըսրա Մելիք Յաշկեց, տեսավ,
Որ իրեն մարդիք եկան՝ բերաններ բաց։
Մելիք ըսավ.— Իմ ըսածներ բերած են.
Խաբար տվողներ ծիծղալով կ'իգան։
Յերբ եկան Մելիքի մոտ,
Տեսավ՝ Կոզբադին, Սուդին, Զարխագին ու Բադին՝
Յակռեք քաշուկ, ճակատ զարկած,
Հերսոտավ, ըսավ.— Եդ ի՞նչ եղի ձըզի։
Կոզբադին ըսավ.— Թաքավո՛ր, սա՛ղ մնաս.
Սասունա մեչ մի մարդ ա՛ դուս եկի,
Քու հրաման չլսեց, մեր զորք ըսպանեց.
Մեղի լե եսպես երեց ու ըսավ՝
Գացեք, ձեր թաքավորին ըսեք՝
Թե տղամարգ ա՛, թող գա՛։
Մըսրա Մելիք հերսից պըդի ճղեր.
Մտավ ներս, դանակ զարկեց, ուր սիրտ ճղեց,
Թուխտ առավ ու գրեց.

«Թըխտիկ մի գրեմ Հարաֆային,
Թըխտիկ մի գրեմ Հուսիսային,
Թըխտիկ մի գրեմ Արեվելյան,
Թըխտիկ մի գրեմ Արեվմբտյան,
Իմ բոլոր զորքին ու զորապետին.
Եկե՛ք, եկե՛ք,
Խաչ Պարոններ,
Սակռի Գլխներ,
Լեն ճակատներ,
Թիակ լեզվըներ.
Եկե՛ք վրը գա՛վուրին.
Սաֆա՛ր ե, որ սաֆա՛ր ե»...

Մի շաբթվա մեջ Մըսրա Մելիքի հրաման կատարվավ,
Քառսուն տարեկանից չուրի բռնա տրսնըհինգ տարեկան՝
Յրմեն տղամարդիկ ժողվան, եկան։

Մելիք իրեն զորքով պատրաստվեց։
— Հայդա՛, Սասուն, դու դո՛ր ես.—եգա՛ քըզի։
Եգավ Մշու դուրան, չադրներ զարկեց։

19. Քեռի Թորոսը հարբեցնում և Դավթին յավ ինքը մնացած տղեկների եեռ գնում, վրաններ են զարկում սարի լանջին Մսրա Մելիքի բանակի դեմ հանգիման

Քեռի Թորոս յերբոր լսեց՝
Մըսրա Մելիք շատ ասկըրով եկե,
Մշու գաշտ դրեր, նստեր ա՛,
Կանչեց Ձենով Ոհանին, ըսավ.
— Բերեք մենք քառսուն հոգին՝
Դավիթն ել հետ՝ նստինք, քեֆ մի ենինք,
Խաբինք Դավիթին, խմցունք,
Յելնինք տանինք եդ աղջիկներ,
Ոսկի-բաներ տանք Մելիքին,
Մենք ել անցնինք ընդոր թրի տկով,
Բա՛լքի Մելիք խզճա մըզի։
Ըսեց ու եդպես երեցին։
Բերին ոխտ տարվա գինին,
Քասեք դրին, խմեցին։
Քառսուն հոգին տվին Դավիթին։
Դավիթին խմցուցին, դարձո·ցին՝
Շող շաղական, սմբուլ գդական։*
Դավիթ քնավ ու քնա՛վ։

Քեռի Թորոս քառսուն չադըր վերցուց,
Յելավ Յիջավ Մշու դաշտ, տեսավ որ՝
Երկնքի աստղերու հրսաբ կա,
Չադըրներու հրսաբ չկա։
Քեռի Թորոս լե սարի մի դոշ՝
Քառսուն չադըր զարկին ու նստան։

---

* Իմ հարցին, թե ինչ և նշանակում դա. ասացողը պատասխանեց «Երեցին կինտո, հարբացրին»։ Կ. Մ.-Ո.

20. Դավիթն Արմազանից տեղեկանալով՝ ձեռք և բերում Մհերի ձին ու սարքը յեվ դիմավառվում և

Դավիթ շատ եր պառկի, քիչ, Աստված գինա։
Են ժամանակ Արմազան ուր մտքի մեչ ըսավ.
«Մըսրա Մելիք ենտեղ կը սպանա ուրենց տղեք,
Կ'իգա, եստեղն ել Դավիթին կը սպանա»։
Եդպես միտք երեց ու լաց։
Արմազանի աչքերուն արտըսունք,
Թափավ Դավիթի Յերեսին։
Դավիթ քնուց շիտկավ, Յելավ նստավ ու ըսավ.
— Նանե՛ ջան, յես մեռեր չիմ,
Յորի՞ գ'իլաս. հըպա ի՞նչ ա՛ եղի։
Արմազան դարձավ, ըսավ.
— Դավի՛թ ջան, յես չիլամ, վրո՞ր լա։
Մըսրա Մելիք եկե շատ զորքով,
Մշու դաշտ դրեր ա՛, նստեր.
Քեռի Թորոս, տղեք գնացեր ին,
Չգիտեմ՝ իմա՛լ եղավ.
Եդոր համար գ'իլամ.
Դարձավ Դավիթ, ըսավ.
— Նանե՛ ջան, որ Յըմալ ա՛,
Յելի, երկու կոտ գըլգըլ բիր.
Խարկա՛, երա՛ ազանձ, տաք-տաք ուտիմ,
Բա՛լքի մեռնիմ, Մելիքի Յերես չտեսնիմ։
Դե՛, Արմազանի խելք լե կնկա խելք ա՛.
Յելավ, երկու կոտ գըլգըլ խարկեց։
— Դե՛, լից տաք-տաք իմ բերան, որ մեռնիմ։
Երկու կոտ դըլդըլ որ կերավ,
Ըսավ.— Նանե՛, եդրրմով չմեռա.
Յելի՛, նախըրգրնից նուկանոց քարեր բիր,
Թալ վառ կրակի մեչ,
Ուտիմ, մեռնիմ, ազատիմ։
Արմազանի խելք լե կըտրեց.
Բերից քարեր, տաքցուց.
— Դե, ըսավ, Դավի՛թ ջան, դե կե՛ր։
Դավիթ ըսավ.— Նանե՛ ջան,

Մինչեվ գեղոնք վերցում, կը պազի.
Դու քու ձեռքով վերցու, թալ իմ բերան։
Արմաղան էլ երկու ձեռով վերցուց քար,
Որ պըղի թալեր Դավիթի բերան,
Դավիթ երկու ձեռով սխմեց,
Ըսավ. — Նանե, հորս ինչ կա, ըսա,
Թե չե ձեռներդ կը վառեմ։
Արմաղան ըսավ.— Վաչ, լաո, թող, կ'ըսիմ։
Դավիթ րաց թողեց Արմաղանի ձեռներ։
Արմաղան պատմեց, ըսավ.— Լաո,
Ինչպեան որ քու հեր մեռեր եր,
Քուռկե Ջալլադին, թագր Գլխին,
Քամարը մեջքին, Խաչը պատարագին,
Պահված ին քու հոր յոդեն, քու հոր ախոռ,
Վոչոք ձեռ չտվեր ա եղոնց։
Թե կըոնաս, գնա, առ, բիր։

Դավիթն եր մտավ հոր ախոռ.
Երկըթե դուռ փակված եր.
Խանչեց Բարցրիկ Մարաթուխ Աստվածածին.
Գուռը վերցուց, մեկ դին դրավ։
Ջինը քաշից, թամքից, պռմից։
Մտավ հոր յոդեն, շորեր հանից.
Վերցուց Թուր կայծակին,
կապան, գոտին առավ, եգավ։
Թուր կայծակին կախից կշռնից,—
Իրեք գաղ բաժից ավելցավ.
Քամարը մեջքին կապից,—
Յոթ փաթ մեջքին եկավ.
Թագը Գլխին դրավ գլուխ,—
Ինչպես մուկ պատի կարաս։
Բերից քառասուն լիդր պամբակ սխմից,
Թաղ նոր տեղավորվավ ուր գլուխ։
Յելավ, ձիու վրեն նստավ։

21. Քեռի Թորոսի տփոոստմին ու պատվերը

Քեռի Թորոս մեկեն եկավ, ըսավ.

«Հազա՛ր ափսոս, գնաց Խաչը Պատարագին.
Հազա՛ր ափսոս, գնաց Թուրը Կայծակին.
Հազա՛ր ափսոս, գնաց Գոտին Մեջքին.
Հազա՛ր ափսոս, գնաց Թագը Գլխին.
Հազա՛ր ափսոս, գնաց Քուռկի Ջալլադին»։

Դավիթ որ տեսավ՝ իրեն համար բան չկա,
Դարցավ Քեռի Թորոսին, որ պըդի զա՛ըկեր,
Քեռի Թորոս միտք հասկրցավ, ըսավ.

«Ափսո՛ս, հազա՛ր ափսոս, մեր սիրուն Դավիթին»։

Որ ըսավ, Դավիթ դարցավ Քեռի Թորոսին.
— Քու վիզ կոտրեր, հետի խոսք չըսեր։
Հացն ու գինին, Տեր կենդանին,
Քըզի գուրզ մի պըդի զա՛րկենք։
Քեռի Թորոս տեսավ, որ Դավիթ վճռեց,
Պըդի երթա, ափսոսաց Դավիթին։
Ըսավ.— Դա՛վիթ ջան, կա՛յնի,
Ենոր որ դու պըգի երթաս,
Աստված քու խետ եղնի.
Մի բան թա՛մբի կ՚ենիմ, լսի՛ր.
Վորտեղ որ Քուռկի Ջալլադին կայնի,
Ենտեղ կը կայնիս, կը մնաս, ռա՛հաթիս։
Ու Դավիթ ել քեռու ձեռ պագեց՝
— Դե՛, մնացի բարով, քե՛ռի, մնացի բարո՛վ...
Ու ձին քշեց, գնա՛ց։

22. Դավիթը Մարաթուխում բնելով՝ դառնում և եզոր յեվ կտրում և Պողպատի սյունը

Դավիթ ձին քշեց խելի տեղ.
Մեգ ել ձին կայնավ, մնաց։
Դավիթ սկսեց ձիուն ծեծել.
Զանգվով ձիուն ենպե՛ս զա՛րկեց.

Որ ձիու երկու կող կոտրավ։
Ձին չոքավ, չգնաց։
Նոր միտք ընկավ հոբոխպոր ըսած խոսք։
Իջավ ձիուց, ետեխ ձին թորկեց՝ արածա.
Ինք ել պառկավ, քնավ։
Շատ քնավ, թե քիչ,
Մեգ ել յերազի մեջ տեսավ՝
Մեկ մի բերեց Մսե Խաչ,
Դրավ Դավիթի աջ ծրծին
Ու կանչեց, բսավ. «Դավիթ,
Քանի որ ես խաչ չսեվցեր ա,
Դու Քշնամուն կը յախթիս։
Մուղաթ կեցի, սուտ տեղ եդ խաչ չերթվիս։
Ինչ բանի որ կ'երթաս, եդ խաչ միտքդ ի բեր»։
Ըսավ ու գնաց։
Դավիթ շիտկավ, տեսավ որ՝
Ուզորթ խաչ ուր աջ ծրծին ա։
Մեգ լե պառկավ, քնավ,
Մեգ մի կայնավ ուր գլխու վերեվ, բսաց.
«Դավիթ, Դավիթ
Ձին կը նստիս, կը քշիս, կ'երթաս.
Ճամպու վրեն մի Պողպատի սուն կա.
Թուր կը քաշիս, կը զարկիս.
Թե կտրեց, քու բան յաչոգ ա.
Թե չկտրեց, յեդ դարցիր, տուն գնա։
Ետեզն որ պառկեր իս, սուրբ ա,
Բարցրիկ Մարաթուխ Աստվածածին ա»։
Ըսավ ու անհետացավ։
Մեգ լե քնից շիտկվավ, տեսավ որ՝
Թագը Գլխին յըմալ ա քամեր,
Որ յաչքեր գուրս կ'իգա.
Գոտին Մեջքին յըմալ ա քամեր,
Որ, կ'ըսես, թե մեջք կը կտրի։
Դավիթ յելավ, թագի միջից հանեց,
Քառսուն ղիդը բամբակ հանեց,
Դրավ ետեղ, ըսավ.

«Յա՛ Բարցրիկ Մարաթուխ Ասվածածին
Թըղ եսի եղնի քըզի պագըուկ»։

Գոտին մեջքով, թուրը բաժով, Յոտնամանը Յոտքերով,
Ինչ որ չափիս, ձեվիս, շինիս։
Յելավ, լվացվավ, կանչեց ուր Աստված՝
Մարաթուխա սուրբ Աստվածածին,
Խաչ Պադարագին, որ ուր աջ կողին,
Ծին քշից, գնաց մի քիչ,
Տեսավ Պողպատի մի սուն ետեխ՝
Կայնած ա՛ ճամպու մեջտեղ։
Քաշից Թուր Կայծակին, կանչից.

«Յա՛ Մարաթուխ Սուրբ Աստվածածին,
Հացն ու գինին, Տեր կենդանին,
Խաչ Պադարագին, որ իմ աջ կողքին»։

Թուրը զա՛րկավ սանը.
Ենպես անցավ որ՝ սունը մնաց ելի կայնած։
Դավիթ հուսահատվավ, ըսավ.

«Թեվի՛կ, դու թուլնա՛ս,
Թըրի՛կ, դու գուլնա՛ս.
Ընձիկ չթողեր անմուրա՛ս»...

Են վախտ Քուռկի Ջալլադին լեզու ելավ.
Ըսավ.— Դա՛վիթ ջան
Մի հուսահատվի՛ր, փչե՛ սան։
Դավիթ մոտեցավ սան, փչեց.
Սունը կտրած տեզից վար Յընգավ։
Դավիթ սկսեց ուր Աստրծուն աղոթել։
Ու Յընգավ ճանապար։

23. Դավիթը Մարա Մելիքի բանակում

Գնա՛ց, գնա՛ց, հասավ սարի գլոխ.
Տեսավ եդ Մշու դաշտ.
Տեսա՛վ, ի՞նչ տեսավ.—
Երկընքի ասաղերուն, ծովու ավազներուն հաշիվ կա.

Մըսրա Մելիքի չագրրներուն հաշիվ չկա։
Դավիթ ուր ձին քշեց.
Գնաց շատ չադըրներու մեչ, հարցուց,
Թե.— Մելիքի չադըր վրո՞ր մեգն ա՞։
Են մարդ դարձավ, ըսավ.
— Քո՞ռ իս, տիյա՞ կանաչ չադըր՝
Ոսկի խնձոր վրեն կը վառվըռի,
Ե՛ն ե Մելիքի չադըր։
Դավիթ ձին քշեց, գնաց,
Մելիքի չադըրի մոա կայնավ։
Են վախտ Մելիք քներ եր։
Դավիթ ըսեց, թե.— Ե՛յ, ձեն տվե՞ք,
Թե վաղ կռի՞վ ա՞,
Ընձի մոտիկ տեղ խոնաղ տվեք.
Թե վաղ կռի՞վ չե,
Հեռու տեղ խոնաղ տվեք։
Ըսին, թե.— Մելիք քնա՞ծ ա՞.
Ենոր ժամանակ ոխտն որ ա՞՝
Զորս որ քներ ա՞, Յիրեք որ կա։
Դավիթին կը տանին, հեռու տեղ մի խոնաղ կը տան։
Դավիթ Յիրեք որ կը մնա ետեղ։
Դավիթ Քուռկի Ջալլադին լավ կը թիմարեր, կը պայեր։

24. Դավիթն իմաց ե տալիս թանամիներին յեվ հարձակվում ու կոտորած ե անում

Լուս դեռ չբացված, ձին կը թամքի, կը հեծնի.
Ու ձենով կը բոռա.

«Ո՛վ քնուկ ա՞, շուտ զարթնեցե՞ք,
Ո՛վ զարթնած ա՞, ձիանք թամքեցե՞ք.
Ո՛վ թամքած ա՞, ձիանք հեծե՞ք,
Ո՛վ հեծած ա՞, սուր քաշեցե՞ք,
Զըսե՞ք՝ Դավիթ գող եկավ, գող գնաց»։

Եդպես ըսելուն, ձին լըկնեցուց.
Սուրը քաշեց, Յընգավ զորքի մեջ.

Աջու ծորեց, ձախու ծորթրփեց.
Արուն ժելավ, ջանդակ գլորեց։
Թե ժինք տասը կը ջարգեր,
Հարուր լե ձիու ժոտքեր կը ջարգեր։
Ենպես ջարդ տվեց Մելիքի զորքին,
Որ մեգ, ըսավ, կա, հազար չկա։*

25. Ծերունու խրատը

Ինչպես եգավ մի քառսուն տարեկան ծերունի
Դուրս եկավ առանց զենքի, գլոխրաց,
Եկավ, Դավիթի առաջին կանգնեց,
Աղաչեց.— Դա՛վիթ ջան,
Գլխուդ, արեվուդ մեռնիմ.
Խնայիր եդ խեղճ զորքին.
Վըո՛ր մեգուճար ա՛,
Վըո՛ր նոր պսակված ա՛,
Վըո՛ր մի տա՛ն սուն ա՛,
Վըորին զոռով ա՛ բերի։
Մրզի ի՞նչ սուջ կա.
Մըզի զոռով բերող թաքավորն ա՛.
Գնա՛ ու նրա հյեդ զրուցա։
Ու Դավիթ խղճավորվավ,
Ջարդը վերջացուց զորքի։

26. Դավթի յեվ Մարա Մելիքի մենամարտը. Դավիթն սպանում է Մելիքին

Դավիթ քշից, գնաց ուր ձին,
Մելիքի չադրի դուռ կայնավ։
Մելիք են վախտ ժիմցեր եր։
Չադրի դուռ կայնավ, ըսավ.
— Մրսրա՛ թաքավոր, դո՛ւրս արի.
Թե մահ չունիս, մա՛հ իմ բերեր.
Թե գրող չունիս, գրո՛ղ իմ դառեր։

* Այսինքն՝ հազարից մեկը ճնաց։ Խ մ բ.

Մելիք տեսավ Դավիթին.
Դավիթի ձեռն Դավիթի գուրզին,
Ահից դողաց ու ըսավ.— Դավիթ ջան,
Համեցեք, եկեք, հանգստացեք.*
Հապա Յելնինք, մեր գործ ենինք։
Մելիք ըսեց ու ուժով փչեց՝
Դավիթ քամու հյեդ տաներ, կորցներ։
Տեսավ՝ Դավիթ ուրեն տեղ կայնած ա.
Մրսրա Մելիք հրաման Յարձկեց,
Որ իրեն Քահել ձին բերին։
Ձին բերեցին ալբահալ։
Հաքավ շորեր, կապեց զենքեր,
Նստավ ուր ձին, գնաց մեյդան։
Սկսեցին մեյդանի մեջ երկու մարգիկ երթալ ու գալ։
Դավիթ ըսավ.— Հիմի հերթ ի՞մն ա, թե՞ քումն ա։
Մելիք ըսավ.— Յես մեծ եմ, հերթ ի՞մն ա։
Ամենք իրեք գուրզ իրար կը թալենք,
Յա Աստված ընձի կ'իգա, յա՛ քըզի։
Մելիք գնաց, եկավ, գնաց, եկավ,
Գուրզ մի զա՞րգից Դավիթին,—
Ի՞նչըխ շուն ոռնա, գետին պոռթեց.
Ի՞նչըխ քառսուն ջուխա գրմեշ լըծես,
Գութան վարես, գետին պոռթա,
Թոզ ու դուման Յերգինք բռնեց։
Բոռաց Մելիք.— Դավի՞թ, դեռ կա՞ս։
Դավիթ ըսավ.— Աստըծով դեռ կամ։
Մրսրա Մելիք գնաց, եկավ,
Մեգ գուրզ ըմ ել զա՞րգեց Դավթին։
Նորից դեռ կա Դավիթ։
Մըսրա Մելիք ձին մեգ ել քշեց
Ենտեղից մինչեվ հինգ վերստի չափ.
Գնաց, եկավ, գուրզը զա՞րգեց։
Նորից Դավիթ մնաց ուր տեղ։

Հիմի հերթն եկավ Դավիթին։

---

* «Դավիթին հոր Յիջնելը նորերը կ'ըսին, հինը չկար». ծանոթություն ասացողի։ Կ. Մ.-Ռ.

Յերբոր Դավիթ գնաց, եկավ,
Որ պըդի զա̈րգա Մըսրա Մելքին,
Մելիքի քուր մեջ մտավ.
— Դա̈վիթ ջան, եդ մեդ զա̈րգ ընձի բաշխի.
Զունքի քըզի քուրութեն իմ երե։
Դավիթ ըսավ.— Մեգ զա̈րգ բաշխեցի իմ քուրոջ։
Մեգ լե գնաց, շուտով դարձավ։
Մելիքի մեր մեջտեխ եկավ.
— Դա̈վիթ ջան, ես մեգ զա̈րգ ել ինձի բաշխի,
Քըզի շա̈տ իմ մերութեն երե, շա̈տ իմ պայե։
Եդ ել բաշխեց ուր են մորը։
Ու Դավիթ ըսավ.
«Հացն ու գինին, Տեր կենդանին,
Եդ մեգ զա̈րգ ըմ մնաց, մեգ Աստված.
Ոչոքին ել չեմ բաշխի, չեմ իտա»։
Մելիքի մեր մեգ ել եկավ, աղաչեց.
— Դա̈վիթ ջան, կը խնդրինք,
Քառսուն գազանոց հոր մի փորինք,
Մելիք իջունք մեջ, բերան սարկինք,
Նոր դու քու դուրզ զա̈րգիս։
Եգպես ել երեցին։
Հոր փորեցին քառսուն գազանոց,
Մելիք ժիջուցին հորու մեջ։
Հորու բերան դրեցին երկու հատ ջաղչի քար։
Դավիթ գնաց, եգավ, քաշեց ուր գուրզ,
Հիշեց Բանցրիկ Մարաթուխ Աստվածածին,
Խա̈չ Պատարագին, որ ուր աջ կողքին,
Գուրզ ենպես զա̈րգեց հորու բերան,
Երկու ջաղչի քար ծակեց,
Ժիջավ Մելիքի գլխուն, Ժոտքերից դուս տվեց։
Մելիք բոռաց.— Դեռ կենդանի՛ յեմ։
Դավիթ ըսավ.— Քիչ մի քըզի ժաժ տուր։
Մելիք ուրեն ժաժ տվեց, Ժելավ երկու կտոր։

Մենք խաբար տանք Քեռի Թորոսից։

27. Քեռի Թորոսն ու Դավիթը հանդիպում են իրար կռվի դաշտում. Դավիթը վիրավորվում և Դավիթն առնում է Մսրա Մելիքի զորքն ու տիրում նրա հոգին

Քեռի Թորոս լսրբոր տեսավ՝
Զորքի մեջ մարդ ա մտած, կը ջարդին իրար,
Թմրուկ զարգեց, կանչեց, բսավ.
— Տղե՛ք, Աստված մըզի ոգնեց,
Հելե՛ք, մե կողմից ել մենք զարգենք։
Ու Քեռի Թորոս մե կողմից, Դավիթ ել մյուս,
Զորք հրմալ ջարդեցին, որ սթար չթողեցին։
Ջարդելով եկան, դիպան իրար։
Քեռի Թորոս ու Դավիթ՝
Երգուսն ել արնի մեջ կորուկ,
Հարց տվին իրարու, բսին.
— Սրեն ի՞նչ ա, թե քո՞ւմն ա։
Դավիթ բսավ.— Քո՛ւմն ա սրեն։
Քեռի Թորոս դնաց, եդավ,
Ենպես գուրզ մի թալեց Դավիթին,
Գուրզ չրկավ Դավիթի ձոտք։
Քեռի Թորոս տեսավ որ՝
Դավիթ սաղ ճնաց, կայնավ, բսավ.
— Շանորդի, դու բիճ իս.
Քու հերական, մերական բսա.
Թե չե մեզել գուրզին, մեզել զարգին,
Քըզ շրնսատակ կ'անեմ։
Դավիթ բսավ.— Իմ հեր Մհերն ա,
Իմ մեր լե Գոհարն ա։
— Վաչ, իմ ձաշքեր քոռնա, Դավիթ ջան, դու լիս.
Ձես իմ ձեռքով իմ ձաշք պըզի հանի։
Քեռի Թորոս փութրթվավ,
Դավիթի ձերևներ պաքլեց։
Զորք բոլոր հավաքեց Դավիթ,
Ամբողջ զորքին ազատեց,
Ըսավ.— Գնացե՛ք ձըր տներ։
Ու զորքի ճնացած ապրանքներ,

Զենքեր, եղած-չեղած տարավ Սասուն։
Են ժամանակ Դավիթ տիրեց Մըսրա հողին։
Դավիթ եղավ տասնրվեց տարեկան։

Դ

ԴԱՎԻԹ ՅԵՎ ԽԱՆԴՈՒԹ

28. Խանդութի ուզեկանները. Խանդութն աշուղ և ուղարկում Սասուն, վոր իր գովքն անի Դավթի առաջ

Դավիթի քաջութեն՝ որ Մըսրա Մելիքին Յաղթեց,
Զեն ի ձեն հասավ Կաղզրվան,
Վաչո-Մարջո աղջկան Խանդութ խանումին։
Ինչպես որ Դավիթ քաջ ու Յաղթ մարդ եր,
Դհա՛ ավելի Խանդութ հա՛մ խորոտ եր, հա՛մ քաջ եր։
Խանդութի սիրունութեն ամբողջ աշխարհ բռներ եր։

Շապուհ արքա լսեր եր Խանդութի սիրունութեն.
Շապուհ արքա մարդ խրկեց, Խանդութին ուզեց։
Ուրիշ քաջ մարդիկ ուրանց դվաթին գոհամիշ,
Քառսուն քաջ մարդիկ՝ եկած են Խանդութին ուզելու։
Խանդութ ել Դավիթին ձեն լսեր եր.
Ամա չկրռներ խաբար եներ։

Որերուց մեգ որ Խանդութ խաթուն կը տեսնի,
Մեգ հատ աշրղ կը պըտրաա։
Մարդ կը խրկա, բերա ուրեն մոտ,
Կ'ըսա.— Աշը՛ղ ջան, ի՞նչ տամ,
Երթաս Սասուն, իրեք խոսք Դավիթին ըսես ու գաս.
Կ'ըսա.— Խանդո՛ւթ խանում,
Ինչ որ կ'իտաս, դո՛ւ գինաս,
Կ'երթամ քու խաթեր համար։
Մի բուռ ոսկի կ'իաա աշըղին ու կը գնա ճամբու.
Կ'ըսա.— Իրեք խոսք կ'ըսեմ՝ սովրի,
Ենտեղ Դավիթին ըսես.
Եսպես կ'ըսիս, ա՛շըղ.

«Իմ բոյով Խանդութ ինչպես ծառն ի չինարին.
Իմ սիրուն Խանդութ ինչպես խնձորն ի ծառի ծիրին.
Իմ ճերմակ Խանդութ ինչպես բամբակ գզին ու դիզին»։

Ես իրեք խոսք կ'ըսիս ու կը դառնաս.
Աստված քըզի հետ, աշըղ։

29. Սասունի ճժերի յով Քեռի Թորոսի վերաբերմունքը դեպի աշուղը

Աշըղ կ'երթա շատ, քիչ, Աստված դինա։
Որերուց մեգ որ կը հասնի Սասուն։
Սասունա ճժեր Յելան տեսան՝
Մարդ մի եգավ բեղերով,
Բան մի կա փիջից կախուկ,
Ըսկսեցին քարով զարգել։
Աշըղ ըսավ.— Հե՞յ, իմկնի՞ շանորդիներ,
Մարդ չտեսե՞ր իք. մարդ իմ, աշը՛ղ իմ,
Խեղճ մարդ իմ, եկեր իմ, խազ կ'ըսիմ,
Ողորմութեն կր հավաքիմ։
Եդոնց մեջ Ձենով Ոհան խելքով մարդ եր։
Ուրանց ճժերու վրեն հերսոդավ,
Բռնեց աշըգի ձեռ, տարավ ուր տուն։
Աշըզին ըսավ.— Ընձի խաղ ըմ ըսա։
Աշըղ լե գիներ՝ Դավիթ եդոնց մեչն ա.
Ըսավ.

«Իմ բոյով Խանդութ ինչպես ծառն ի չինարին.
Իմ սիրուն Խանդութ ինչպես խնձորն ի ծառի ծիրին.
Իմ ճերմակ Խանդութ ինչպես բամբակ գզին ու դիզին»։

Աշըղ եդպես որ ըսավ՝
Քեռի Թորոս մի ճլոտ իդոր Յերեսին զարկավ,
Ըսավ.— Շանորդին եկեր ա, տղեն խափա, տանա։
Աշըզի վիզ ոզրավ, ու գնաց։

30. Դավիթն աշուղի միջոցով յուր և ուղարկում Խանդութին նրա մոտ գնալու մասին

Աշրղ գեղից դուրս Յելնելով՝
Դավիթին կ'անիծա, կը քվրա ու կ'երթա։
Դավիթ լե՛ եդ վախտ ձիով ուրիշ տեղից կ'իգա։
Կ'աշկա մեգն ուրեն կը քվրա.
Չին կը քշա, կ'իգա, կ'ըսա.
— Ա՛յ մարդ, եդ ի՞նչ ա՛ եղի քըղի, որ կը քվրիս,
Դավիթին կ'անիծիս ու կ'իգաս։
Կ'ըսա.— Եկանք Սասուն, Դավիթին խոսք ըմ ըսինք,
Զա՛րգեցին՝ իմ վիզ ողրավ։
Դավիթ կ'ըսա.— Ա՛շրղ,
Են Դավիթ որ կա, յես իմ, ըսա՛ ընձի.
Իմ մամ ընձի մեգ աղոթք ըմ ա՛ սովրեցրե,
Աղոթք կ'ըսիմ՝ քու վիզ կը սազնա։
Դե՛, աշուղ որ կը լսա՝ իգա Դավիթն ա՛,
Սազ կ'իջու ուր փիջից, կ'երգի, կ'ըսի.

«Իմ բոյով Խանդութ ինչպես ծառն ի չինարին.
Իմ սիրուն Խանդութ ինչպես խնձորն ի ծառի ծիրին.
Իմ ճերմակ Խանդութ ինչպես բամբակ գզին ու դիզին»։

Եդ խաղն որ աշուղ կ'ըսա,
Դավիթ ձիուց կ'իջնի,
Չեռ կը դընա են մեգել թարաֆ,
Ոզոր թարաֆ պլընգրուկով կը զա՛րգա
Ու աշրղին կը հարցու.
— Եդ Խանդութ Յուստե՛ն ա՛։
Կ'ըսա.— Կաղզրվանի Վաչո-Մարջո ազջիկն ա՛։
— Դե՛, գնա՛, կ'ըսա, եսոր չորեքշաբթի յա՛,
Կիրակի Յիրիկուն յես Կաղզրվան եմ։

31. Դավիթը գութան և անում

Կ'անցնի եդ որեր։
Դավիթ կ'երթա գեպի Կաղզրվան։
Յերբոր կ'իջնի Մշու դաշտ,

Կը տեսնի՝ մե տեղ գուբիան կա,
Ձին կը քշա, բարեվ կ՚իդա, կ՚ըսա.
— Տղեք ջան, անոթի յեմ,
Քիչ մի հաց տաք ուտեմ։
Մաչկալ կ՚ըսա.— Հացը սելի մոտն ա.
Գնա, կիր ու գնա գործիդ։
Դավիթ լե կ՚երթա հացի մոտ, որ հաց ուտա։
Դու մ՚ըսի, եգ գուբիան յոթն ավուր հաց ին բերած,
Որ յոթն որ դուս ծնան, գուբիան աննեն։
Դավիթ լե նդ հացեր ամբողջ կ՚ուտա։
Գ՚իկան կը տեսնին, որ հաց չի կա.
Կը հերսոտեն, կ՚ըսեն.— վաչ, քու տուն ավրի,
Մենք յոթն ավուր հաց ենք բերի,
Դու յորի կերա՞ր. մենք ծնանք անոթի։
Դավիթ կ՚ըսա.— Բան չկա.
Գ՚ելիմ, ձրը արտ կը վարիմ, կ՚երթամ.
Դուք լե գացեք ձրր տուն։
Եգ բսելուն գըմբշտան յարձկել տվեց.
Հեձավ ուր ձին, բռնեց բնաաից,
Ու քաշեց գուբիան, քաշե՛ց,
Մեկ տաս փութ գնաց, եգավ։
Ըսին.— եգ քու շնորք չե, քու ձիու շնորքն ա։
Են ժամանակ Դավիթ յիջավ ձիուց,
Ու յինք վարեց, վարե՛ց, արտ խըրտցուց,
Գուբիան հոգից պրձուց, հանեց.
Մարմնդեց ու թալեց գեպի յերկինք։—
Մըկա կ՚բսեն՝ սամու կտորտան յերկնքից կ՚իգա։—

32. Դավիթն ու կարիճները

Ու ձին քշեց, յելավ ճամբա, գնաց.
Գնաց, հասավ Խանդութ խանըմի պալատի յառնջ։
Ձին քաշեցին ներս, ու յինք գնաց գիվան։
Խանդութ խաթուն լե փանջարից սեյր կ՚ենե։
Տեսավ որ Դավիթ՝ իմալ որ կը պատմին,
Հալա յոթն անգամ եվել եր,

Խանդութի խելք Յընցավ,
Իրեք տեղով խոնջան կտրավ։
Յերբոր մտավ Դավիթ Յոդեն, պալատ,
Տեսավ՝ քառսուն հատ ազրահել մարդ նստած ին։
Եդ մարդիկ որ Դավիթին տեսան,
Ահու դողացին, վախեցան։
Բերեցին գինի, քեֆ սարքեցին,
Քառսուն տարվա գինին դրին որթալախ։
Քառսուն հոգի կը լնան, կ՚իտան Դավիթին,
Դավիթ լե մեննակ կ՚իտա ենդոց։
Իրենց թրերն ել տկլոզցած՝
Գողտու դրած ին քեչեստանու տակ։
Յերբոր Դավիթ կը ննջա,
Թրեր կը քաշին, որ զա՞րգին.
Յերբոր Դավիթ Յաշքեր կը բանա,
Ել Յետ թրեր կը դնեն ուրենց տեղ, կը պայեն։

33. Քեռի Թորոսն ոգնության և հասնում Դավթին. դռնապան Գորկիկ։ Քեռի Թորոսն ու Դավիթը միասին կոտորում են կտրիճներին

Եդ ժամանակին Քեռի Թորոս ռրմ թալեց.
Տեսավ որ՝ Դավիթ նեղ դրութենի մեջ ա՞.
Մտավ թավլեն, ձին քաշեց,
Թռավ, հեծավ Վեցոդնեն Լակզին։
Տասր ավուր ճամբա մի ժամվա հասցուց։
Եգավ, Յիջավ Խանդութ խաթունի պալատի Յառեջ։
Գորգիկ գուռ կանգնած եր։
Քեռի Թորոս բոռաց, ըսավ.
— Գորկի՛կ գռնբաց, գուռ բա՞ց։
Մեգ ել.— Գորկի՛կ դռնբաց, գուռ բա՞ց...
Մեգ ել.— Գորկի՛կ դռնբաց, գուռ բա՞ց...
Գորկիկ Յանգան Յիմցավ,
Թե Քեռի Թորոսն եր,
Շուտ րմ վազեց, եգավ, ըսեց.
— Ասսո՛ւ բարին, Քեռի՛ Թորոս,
Ասսո՛ւ բարին, Քեռի՛ Թորոս,
Ասսո՛ւ բարին, Քեռի՛ Թորոս։

Իրեք անգամ բսեց։
Քեռի Թորոս ըսավ.— Գորկիկ դռնրաց,
Հացն ու գինին, Տեր կենդանին,
Խաչ Պատարագին՝ որ իմ աջ կողքին,
Յեթե իրեք անգամ Աստրծու անուն չտայիր,
Մե գուրզ մի քըզի կը զա՞րգինք...
Ու Քեռի Թորոս մտավ ներս են ժամանակ,
Որ եգոնք տկլոզ թրեր քաշած ին, նստած։
Քեռի Թորոս ենպես զա՞րգեց Դավթին,
Որ Դավիթ թիզ մի գետնեն կրտրվավ։
Դավիթ Յաշքեր բացեց.
— Յա՜, ըսավ, քեռի՛, խե՞ր ա՞։
Ըսավ.— Իմկնի՛ Սասունա ծուռ,
Դու եգեր իս եստեղ, ճա՞ն կը խաղաս.
Մկա Յաշկա, տես, թե ես մարդիկ
Ի՞նչ ոյին կը խաղան քո գլոխ։
Մեգ քեչեք բանցրցո՛ւ, տե՛ս՝ տակը ի՞նչ կա։
Դավիթ Յելավ, կայնավ Յոտքին,
Քեչեք բանցրցուց, տեսավ ի՞նչ,—
Տեսավ տկլոզ թրեր քեչեքի տակ։
Նոր Յիմցավ, թե ուր գլխուն եդ մարդիկ՝
Ի՛նչ ոյին կը խաղան։
Ըսավ.— Քե՛ռի, քու պառեկ զար դռան։
Քեռի Թորոս դուռր բռնեց։
Դավիթ մեգ-մեգ բռնեց, վիզեր կտրեց,
Գլուխներ թալեց Խանդութի փանջըրի Յառեջ.
Թրեր գրեց ոտքի տակ, ոզրեց,
Ժոզվեց, տվեց Քեռի Թորոսին,
Ըսավ.— Վերցո՛ւ, գիր խուրջին,
Կը տանինք մըր ձիերուն նալ ու մեխ։

34. Դավթի յեվ Խանդութի առաջին հանդիպումը. Քեռի Թորոսը հավանում և Խանդութին

Յերբ դուրս Յելան, Քեռի Թորոս ըսավ.
— Դա՜վիթ ջան, եսքան մարդ սպանվավ.
Գու եդ աղջիկ տեսե՞ր իս.

Լավ աղջիկ ա, թե գեշ աղջիկ ա։
Քսավ.— Քեռի, չըմ տեսի։
Ըսավ.— Դե, գնա ու տես.
Թե լավ աղջիկ եղավ, երթանք, ուզինք։
Դավիթ գնաց, Խանդութ խանումին տեսնի։
Խանդութ լե կայնած եր ճամբաս,
կը սպասեր Դավիթի գալուն։
Երկուսն ել սրախի մեջ հանդիպան իրարու։
Դավիթ բարեվ տվեց Խանդութին.
Խանդութն ել բարեվ առավ։
Թեվ թալեց վրով, մեգ պաքնց։
Խանդութ խանում ըսավ.
— Եսի Աստծու խաթր։
Մեգ լի պաքեց, ըսավ.
— Քու ճանապարի խաթր։
Մեզ լե ձեռ թալեց, որ պաքի,
Խանդութ ըսավ.— Դավիթ չափից յընցար.
Եդ եղավ լրմուքեն...
Ըսավ, ձեռ թալեց Դավիթին, գերկեց գետին։
Դավիթի քիթ քիսավ քարին,
Հեղեղի պես արուն պրծավ,
Ու Խանդութ փախավ, մտավ ներս, դուռ փակեց։
Դավիթ յելավ գերկելու, արդեն ուշ եր։
Ու յերդում կերավ, ըսավ.

«Հացն ու դինին, Տեր կենդանին,
Մի հատ գուրզ պրտի գերգիմ»։

Յերդում կերավ, վերջացավ, պրտի գերգա։
Քեռի Թորոս դուս կը սպասեր,
Տեսավ որ՝ Դավիթի քիեն արուն կ'իզա,
Դավիթ լե վազավ, որ ազկան գերգեր,
Բռնեց Քեռի Թորոս ու ըսավ.— Տղա, լաո,
Շեր շեր ա, չը ժեն ա չը մեր ա,—
Առուծն առուծ ա, եղնի եգ, թե վորձ։—
Քեռի Թորոս ըսավ.— Դավիթ,
Մհերից ու Գոհարից դու եղար.
Հըպա քըղնե ու Խանդութից ինչ պըդի եղնի։

Ու բերեց, շորեց, քրճեց, պլուլեց,
Զա՛րգեց Դավիթի պրնչներ.
Տարավ, Արազի մեջ լվաց, արներ մաքրեց։

35. Դավթի պատվերը Խանդութին

Քեռի Թորոս գնաց իշխան Վաչոյ-Մարջոյ մոտ.
Գնաց՝ Խանդութին ուզի։
Իշխան Վաչո-Մարջոն ըսավ.
— Իմ աղջիկ նշանած ա՛ Շապուհ արքայի հեգ։
Թե գնացիք, նրան հաղթեցի՛ք, ձըր հարսն ա՛.
Թե չե, Խանդութ ենոր հարսն ա՛։
Եդ ըսելուն՝ Քեռի Թորոս դուրս Յելավ, եգավ,
Դավիթին պատմեց Յըմեն բան։
Դավիթ ըսավ.— Լա՛վ, քե՛ռի,
Դու գնա մեր Սասուն, յես կ՚երթամ։
Դավիթ անցավ, գնաց Խանդութի Յոդեն.
Պահման դրեց Խանդութի հեդ.
— Յես կ՚երթամ Պարսկաստան,
Քառսուն որ ժամանակ՝ եկա՛, լա՛վ.
Չե՛կա, հասկըցիր, որ սպանվեր իմ.
Կու գաս, ջանդրքներու մեջեն կ՚աշկես,
Իմ աջ կողքին Մսե խաչ կա,
Կր ճանչընաս ընձի ու կը խորիս։
Ու ըսեց, ուր ձին քաշեց,
Մնացի բարո՛վ ըսավ Խանդութին.
— Յալլա՛հ, Պարսկաստա՛ն, դու գո՞ր իս,— եգա՛ քըզի։

36. Դավիթը հաղթում և Շապուհ արքային. նա հարձակվում և Խանդութի վրա յավ կատարում և իր յերդումը. նրանց ամուռնությունը

Դավիթն եր, շատ գնաց, քիչ, Աստված գինա,
Մե որ հասավ Թեհրան քազաք։
Գնաց ձիով Շապուհ արքայի պալատի Յառեջ,
Կայնավ ու խանչեց.— Շապո՛ւ, դուրս Յա՛րի։
Շապու՚ն դուրս Յելավ, տեսավ՝

Մի աժդահա մարդ պալատի յառէջ՝
Ձիու վրա կայնած, չիջնի։
Դավիթ բսավ.— Հէլ Շապուհ,
Դու Խանդութ խանումի նշանածն իս.
Ցես եգել եմ քրգի հեդ կռիվ.
Ցա Աստված կ'իտա ընձի, յա քրդի։
Վով որ յաղթեց Խանդութ ենոր կնիկն ա։

Շապուհ արքան՝ Խանդութ խանումի անուն որ լսեց,
Գիլու պես կատղավ, կ'ոռներ։
Ձին քաշեց, ուր գորքին հրամայեց,
Թե.— Յելէք պատրաստվէք, հազիր կայնէք։
Յելտն մելդան, սկսեցին կռվել։
Դավիթ դուրզով գնրգեց Շապուհին, դրեց՝գետին,
Կայծակի քրով գլուխը կտրեց,
Դարցավ, քշեց դեպի կաղզրվան։
Զորք վախից ել տեղից չխըլվըլաց։

Ֆառսուն որ թրմմավ։
Խանդութ խանում տեսավ, որ Դավիթ չեկավ,
Յելավ, տղամարդու շոր հագավ,
Գուրզը վերցուց, հեծավ ուր ձին,
Ֆշեց, գնաց Դավիթի հավարին։
Խանդութ տեսավ՝ մե ձիավոր կ'իգա.
Դավիթ լե Խանդութին տեսավ.
Խանդութ սկսեց փախնել։—
Են ավուր յերդում միտքն ընկավ։—
Խանդութ փախավ, Դավիթ լե յեաեվ։
Ցերոր եկավ, հասըրհաս եղավ,
Խանդութ ուրեն թալեց ջոջ գնարի տակ։
Դավիթ մե գուրզ թալեց Խանդութ խանումին.
Ջնարից մե կտոր պոկ եկավ,
Որ քառսուն ջուխա գոմեշ չկարնար քաշեր։
Խանդութ գնարի տակից յելավ.
Դավիթի յերդում տեղն եկավ։
Ետեղ իրար հեդ ձի քշելով՝
Յետ դարցան, եկան կաղզրվան։
Եկան, տեսան՝ Քեռի Թորոս ենտեղն ա.

Շապուհ արքայի գլուխ տարան, տվին իշխանին,
Որ հավատա՝ ողորթ որ սպաններ ա՛։
Խանդութ խանումին ուզեցին,
Քառսուն ձիաբեռ ջհեզ տվին,
Զարդարանքով Սասուն հարս տարան։

37. Խանդութի դարձը հերանց. Դավիթը օինում և Մարաթուխի յեկեղեցին

Անցավ մե ժամանակ մի.
Եկան իշխանի մարդիկ,
Առան Խանդութին, դարց տարան։
Խանդութին դարց տանելուց վերջ՝
Դավիթ պարտք դրավ քեռու վրա, ըսավ.
— Քեզնե չորս հարիր ուսթա գ'ուզիմ,
Քեզնե ութ հարիր իրղաթ գ'ուղիմ,
Որ Յելնիմ երկու շաբաթվա մեջ՝
Մարաթուխա Բանցր Աստվածածին շինիմ։

Քեռի Թորոս Յընցավ Մուշ,
Մարդիկ բերեց, ուստեք բերեց։
Յելավ երկու շաբաթվա մեջ,
Մարաթուխա Բանցր Աստվածածին շինեց.
Քառսուն եպիսկոպոս, քառսուն վարդապետ բերեց,
Ոծել տվավ եկեղեցին։
Յեդեվ մի քանի ձիավոր առավ,
Գնաց Կաղզըվան՝ ուրեն աներոջ տեսնի։
Մինչեվ հասավ ետեղ, տեսավ՝
Խանդութ խանում պառկեր ա՛.
Պառկեր ա՛, մե տղա յա՛ բերեր։

38. Ճիմճիմի Սուլթանը Դավթին մահացու վերք և հասցնում. Խանդութն ինքնասպան և լինում

Մի քանի որ Յեդեվ՝
Դավիթ կ'երթա Արազի մեջ լողկընա.
Ամա լողկընալու վախտին՝
Ճիմճիմի Սուլթան անունով մի մարդ,

Որ են լե գ'ուգի՝ Խանդութ խանումին առնի.
Գոգտու կը գ՚երգի, Դավիթին կը պադու։
են ժամանակ Ծոան Վեգոն,—
Դավիթի ազգականներից ա,—
կր հասնի ձիմճիմի Սուլթանին,
կը բոնի, կը բերի Դավիթին։
Դավիթ եդոր վիզ կը քաշա. կը կըտրա,
յինք կը պաոկի, հոքին կ'իտա։
Դավիթին շորեր կը հագուն,
կ'առնին, կը դնին ձիու վրրա.
կ'առնին, հնպես կը բերին,
Որ Խանդութ խանում իրեն չիճանա։
Խանդութ խանում լե եդ ժամանակ՝
Իրենց տանիքի վրա սեյր կ'ենա։
Զիավորտան ջրիդ խաղալով՝ կ'իդան,
Յանի թե Դավիթ սաղ ա, քեֆ կ'անա.
կու գան, պալատին որ կը մոտիկնան,
Ծոան Վեգոն ձին խաղցընելով կ'երթա,
կը մոտիկնա Խանդութ խանումին։
Խանդութ խանում կը հասկընա,
Որ մե հանելուկ կա ետեղ։
Ու հարց կ'իտա, կանչա, կ'րսա.

«Ձիժող եկավ, չաժող եկավ,
Իմ շահ բալաբան Դավիթ յոլի չեկավ»։

Ու պալատի երդիկից գլխիվեր գինք կը թալա.
Գլխուն վրա պագելուն՝ կ'ընկնի մե քարի վրա.
Ու Խանդութ խանում կը մեռնի...
Գլուխ քարին մնջ մտնելուն՝ քար կը փրչի։
Եդ գլխի փրչած տեղ, կ'րսեն,
Երկու կոս ցորեն կը տանա։
Ու երկուս լե մեռան, տարան պերեզմանոց.
Երկուս լե մի տապանի մնջ տարան, հորին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԱԽԱԲԱՆ—բարբառային քերականական դիտելիքներ—Խրմբագրություն . . . . . .

2. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ ԿԱՄ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ, պատմեց Տարոնցի Կրպոն. գրի առավ Գարեգին Սրվանձտյանց 1

3. ԱԱՍՄԱ ԾՌԵՐ, պատմեց Ապարանցի Մուրադ. գրի առավ Գարեգին Հովսեփյան 45

4. ԴԱՎԻԹ և ՄՀԵՐ, պատմեց Դասկու Մոնկոնց գյուղացի Ավեսիս Մարտիրոսյան. գրի առավ Հայրապետ Համամնյան 103

5. ՍԱՍՆՈՒ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ, պատմեց Քավառցի Դանիել Ղազարյան, գրի առավ Վահան Ի. Տեր-Գրիգորյան 130

6. ՍԱՍՆԱ ՏՈՒՆ, պատմեց Սասունցի Թամո Դավթյան, գրի առավ Կարապետ Մելիք-Ոհանջանյան 153

7. ՍԱՍՆՈՒ ԴԱՎԻԹ, պատմեց Առաքել Սարուխանյան. գրի առավ Կարապետ Մելիք-Ոհանջանյան 199

8. ՍԱՍՈՒՆԱ ԴԱՎԻԹ, պատմողն անհայտ. գրի առնողն անհայտ 225

9. ՍԱՍՈՒՆԱ ԾՌԵՐ, պատմեց Ալաշկերտցի Մանուկ Թորոյան. գրի առավ Կարապետ Մելիք-Ոհանջանյան 247

10. ՍԱՍՈՒՆԱ ԾՌԵՐ, պատմեց Ալաշկերտցի Կարապետ Թամոյան գրի առավ Կարապետ Մելիք-Ոհանջանյան 355

Նկարներ

1. Ակադեմիկոս Մանուկ Աբեղյան—Ներգիր
2. Գարեգին Սրվանձտյան (էջ ԻԳ 23)

Վերջ Բ հատորի
Ա մասի

М. АБЕГЯН И
К. МЕЛИК-ОГАНДЖАНЯН

САСНА ЦЫРЕР

Том II, часть I

(На армянском языке)

Армгиз, Ереван



ՀՏ 00829։ Պատվեր 790։ Տիրաժ 5000։

Հայպետհրատի տպարան, Երևան, 1941 թ.